



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ

ԳՐՈՑ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁ

ԳՐՈՑ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ

ՏՆ. ՅՈՎՀԱՆՆՈՒ Վ. ԶՈՂԲԱՊԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻՈՑ

ՉՈՐՈՐԿ ՏԳԱԳՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1854

200-406-559-4-1-2

200
704
1854
1

ON 28027



Ամենայն զիբք աստուածաշունչք և օգտակարք՝ ՚ի փար
դապետութիւն ևն և ՚ի յանդիմանութիւն և յազգրութիւն, և
՚ի իբրևստ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն
Աստուծոյ յամենայն գործս շարութեան նաստատեալ :
Բ. Տիմ. Գ. 16 :

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Աստուածաշունչի պատմութիւնը՝ ինչպէս իր անունը կը յուշընէ, ամէն պատմութիւններէն աւելի պատուական ըլլալով մարդուս, ու մանաւանդ հաւատացելոց խիստ հարկաւոր ըլլալով, որովհետեւ քրիստոնեական հաւատքին հիմը (այս ինքն թիմկէն) է աստուածաշունչ սուրբ գիրքը. շատոնցմեանն ըլլով որ այսպիսի շահաւոր բանը մեր ազգին մէջ կը սպասուի, որպէս զայնք որ անոնք ՚ի տեղը ընդարձակ աստուր պատմութիւնները մեր սովորական գրքի լէզուով շարագրած ապենք ՚ի լուսաւորութիւն ազգիս: Բայց ետքը աս մտաւայլով որ այնպիսի գրաբան շարագրած մեծ գիրք մը այնչա՛ն օգտակար չկրնար ըլլալ՝ մեր ազգին հիմնաւորութեանը նայելով, որ համարձակ գրաբանը հասկըցողը քիչ է. ու ան քիչն շատն հասկըցողն ալ ուղէնէ բուն աստուածաշունչն իր փոփոքը կրնայ առնել:


Անոր համար գործուցինք համառօտակերպով աշխարհարան ուժով ըրինք, որ գրաբան գիտցողն ալ սակէ կարօտ չմնար, որ շատ ակը լայս կու տայ աստուածաշունչը աւելի լաւ հասկընալու. ու չգիտցողը՝ որ կամ ամենին չէր լսեր աստուածաշունչի պատմութիւնները, կամ մէկ քանի նահապետներուն գործքերը վեր ՚ի վերանց միայն լսած էր՝ սակեց կատարեալը կ'իմանայ: Նաև այնպիսին որ շատ պիտանացու գրաբան գրքերէն զրկուեր էր, աս մէկս կարդալով ու հասկընալով, կը յուսանք որ ըստ կարելութեան կրնայ շատին տեղը լեցընել, ոչ միայն հոգևորի կողմանէն որ բոլոր քրիստոնեական ճշմարիտ ուսումը աստուածաշունչին ըսածներուն վրայ հաստատուած է, հասցա նաև բնական և քաղաքական ուսման գիւն, որ ան պատմութիւններով խեղքը կը բացուի կը լուսաւորուի, ու անկէջ ալ ուրիշ շատ բան կ'իմանայ:

Իսկ աշխարհաբառ շարագրութիւնն որ ըսինք, նայեցանք որ զուս հայերէն ըլլայ՝ առանց այլազգի բառեր մէջը խառնելու՝ տաճիկերէն, կամ պարսկերէն, կամ ֆրանկերէն, (ինչպէս որ հիմակու ժամանակս մեր ցիրուցան եղած ազգը ինչ ազգի հետ որ բնակեր է նե՛ կամաց կամաց անոր լեզուէն առեր խառներ է իր հայերէնին մէջը), որ ասով շատ աւերեր է աշխարհաբառ լեզունիս, ու անանկ փոխուեր է որ՝ մեկ տեղացին մեկային ըսածը գծուարաւ կը հասկընայ: Անոր համար մենք Զանազինք որ այսպէս չըլլայ, հապա որչափ կարելի է ամէնքը հասկընանուստի ոճն ալ Ստամբուլցիի հայերէնի կերպով բանեցնինք, որ բուն Հայաստանցոց ալ աւելի մտա է, ու Պարսկահայոց ալ կը հասկընան. միայն թէ՛ ուր տեղ որ խօսքը այսօրիս աշխարհաբառէն կը պակտեր՝ ան տեղը դրարառէն առած բանեցուցնինք, և տեղ տեղ ալ՝ այսինքնով մեկնելով, զստ տաճիկերէնը գրինք, որ ասով կարգացողներուն քիչ դրարառի ալ գուռ բացուի:

Աս համառօտ ծանուցումս ընելէն ետե՛ ալ աւելորդ կը համարինք սա գրքիս օգտակարութեանը վրայ երկայն դովասանք ընել, ու յորդորել որ անեն կարգան. որովհետեւ կը յուսանք որ միայն անունը լսելով՝ ետեւ իյնան որ ունենան, ու կարգալով ձեռքէ չթողուն, մանաւանդ պարզամիտները ու նորավարժ տղաքը, որ գլխաւորաբար իրենց համար՝ ինչպէս ըսինք, շարագրութեցաւ սա գիրքս. որով մեր փոքր աշխատանքն ալ պարագլ չեն հաներ, որ սիրով յանձն առինք, ՚ի փառս Աստուծոյ, և ՚ի յօգուտ ազգիս:

Այս դործոյս երկրորդ տարագրութեան մէջը շատ տեղ աշխարհաբառ շարագրութեան ոճը աւելի յարմարցընելէն ՚ի զատ, նաև իւրաքանչիւր պատմութեան սկիզբը աստուածաշունչին գլխավը նշանեցնինք, և ժամանակագրական թուական ալ աւելցուցնինք, սկսեալ ՚ի ստեղծմանէ աշխարհի: Բայց որովհետեւ աստուածաշունչի ժամանակագրութեան վրայ կերպ կերպ կարծիք կան, (անանկ որ՝ սկսեալ 3740էն ինչուան 6984 տարին Քրիստոսէ առաջ՝ աշխարհքիս տեղծումը գրին), մենք հիմակու հիմա առանց մասնաւոր քննութեամբ մեր կարծիքը որոշելու, ասոր մէջը այն սովորականին հետեւեցանք, որ աշխարհքի ստեղծումը Քրիստոսի թուականէն 4000 տարի առաջ կը դնեն:





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆ Զ ԳՐՈՑ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾՆՆԴՈՅ ԳՐԲԻՆ • ՍՏԵՂԾՄԱՆԷ
ԱՇԽԱՐՀ-ՔԻՍ ՄԻՆՉԵՒ ՅՈՎԱԵՓԱՅ ՄԱՏՐ

ԳԼՈՒԽ Ա.

Իսկո՞ծաւր աշխարհիս՝ և առաջին մարդուն :

Ա՛մ աշխարհի 0 : (Ծճնդոց . գԼ . Ա . Բ :

ԱՄԵՆԱԿԱԼՆ Բնառած երբոր կամեցաւ
աս աշխարհքս ստեղծել, սկինա առաջ հրամայեց
որ ոչնչէն երկինքը ու երկիրս ըլլայ՝ իր ամէն մէ-
ջի բաներովը, անպատրաստ (այսինքն խառնա-
փնդոր, կամ թատլախ) : Աւ անոր ստեղծումը
վեց օրուան մէջ ուզեց որ աս կարգովս կատարէ :
Բ՛աջի օրը՝ լոյսը ստեղծեց : Արկորդ օրը՝ հաւ-
տատութիւնը բրաւ, որ երկինք բառեցաւ : Ար-
բորդ օրը՝ երկրիս դունաւր որ բոլոր ջրով սրատած
էր՝ ջուրը անկէց բաժնեց, որով ցամաքը՝ երկիր
բառեցաւ, ու մէկ տեղ կեցած ջուրը՝ ծով . և
ասկէ ՚ի զատ՝ հողուն մէջը ամէն բաներուն

սերմը (այսինքն թօխումը) դնելով՝ հրամայեց որ ամէն կերպ խտտեր ու ծառեր բուսնին : Երբորդ օրը երկնքի բոլոր աստղերը ստեղծեց . և սահմանեց որ արևը՝ ցորեկը լուսաւորէ , ու լուսընկան՝ գիշերը . և ասոնց պարտելով ըլլայ՝ տարի , ամիս , ու օր : Զինդերորդ օրը հրամայեց որ ջրերէն ամէն ցեղ ձկներ և թրուռուներ (այսինքն խուշեր) ըլլան՝ մեծ ու սզտիկ , և ասոնք ամէնքը աճին ու շատնան : Ա եցերորդ օրը հրամայեց որ երկրէն՝ այսինքն հողէն ամէն ցեղ չորքոտանիներ ու անասուններ (այսինքն հայվաններ) ըլլան : Այս ան օրը աս ամէն կենդանիները ստեղծելէն ետև՝ ուղեց որ ասոնց մէկ տիրապետող մը դնէ . անոր համար հողէն առաջինեց առջին մարդը՝ Ադամ , հասարակ անբան կենդանիներէն վեր՝ բանական հողի տալով իրեն , որ ասով ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ ըսուեցաւ մարդը : Ատքը ուղեւով Աստուած որ Ադամայ մէկ իրեն նման օգնական մըն ալ հետը տայ , Ադամայ քնացած ատենը՝ անոր մէկ կողը առաւ՝ ու անկէց շինեց Աւան՝ կնիկ մարդ : Այսպէս՝ Աստուած բոլոր աշխարհքս իր մէջը եղած ամէն բաներովը վեց օրուան մէջ ստեղծելէն ետև՝ եօթներորդ օրը դադարեցաւ ՚ի ստեղծագործութենէն . և օրհնելով այն օրը ուղեց որ սուրբ պահուի ՚ի յիշատակ հանգստեան իւրոյ :

Գ. Լ. ՈՒԽ Բ .

Նախանարց մեղքը ու պատիժը :

ԱՄ աշխարհի 0 : (Մանգ . 7 .)

Մտուած Մշամ ու Աւան ստեղծելուն պէս զիրենք դրախտը դրաւ , որ հոն բանին՝ ան տեղը պահէն : Մը դրախտ ըտածս՝ մէկ աղուոր ու զըւարձալի պարտեզ (այսինքն պախձա) մըն էր՝ ամէն բարիքներով լեցուած զարդարած . և ուրիշ գեղեցիկ և պտղատու ծառերէն ՚ի զատ՝ ան դրախտին մէջ տեղը երկու ծառ ալ կային , որ ասանց մէկը կ'ըսուէր՝ Նաա կենաց , և մէկայլ՝ Նաա դիտութեան բարւոյ և չարի : Հոն Մտուած Մշամայ ապսպրեց ըսաւ որ՝ « Բոլոր դրախտին ծառերուն պտուղներէն կրնաք ուտել , միայն պտղէն դիտութեան բարւոյ և չարի ծառին չըլլայ թէ ուտէք , գիտնաք որ անկէց ուտելուդ պէս կը մեռնիք » : Բայց խորամանկ սատանան օձու կերպարանք մտնելով՝ երեցաւ Աւային ու խաբեց զինքը , ըսաւ որ՝ « Այ՛ թէ ան ծառէն ուտէք նէ կը մեռնիք դուք , հասրա՛ գիտնալով Մտուած որ ան ծառին պտղէն ուտելուդ պէս՝ ձեր աչքը կը բացուի ու դուք ալ Մտուած կ'ըլլաք՝ բարին ու չարը կը ձանձնաք , անոր համար ձեզի ապրսպրեց Մտուած որ ան ծառին չմտնաք » : Աւայ երբոր աս բանս լսեց , ու մէկալ դիէն ալ տեսնելով ան արգելած պտղին աղուորութիւնը՝ չգիմնացաւ՝ գնաց ծառէն փրցուց ու կերաւ . և անկէց իր էրկանն ալ տուաւ , որ ան ալ առաւ կերաւ : Ուստի ասանկ ուտելուն պէս՝

իրաւի աշուրնին բացուեցաւ, որ առաջ երկուքն ալ մերկ (այսինքն չքաղախ) էին, և իրենց մերկութիւնը չէին տեսներ, ան ատենը մերկութիւնն իմացան, ու ամբշնարով շուտ մը թզենուց տերևով (այսինքն ինձիրի ետքրախներով) գոցեցին պարտրկեցին իրենց մերկութիւնը. և երբոր Մտուածոյ դրախտը գալը իմացան նէ՛ փախան ծառերուն մէջը պահուրտեցան: Ատրբ Մտուած որ կանչեց՝ «Ղամ ո՛ւր ես», Ղամ պատասխան տուաւ թէ՛՝ «Ղու դրախտը գալդ իմացայ նէ՛ վախցայ ու մերկ ըլլալուս համար գացի պահուեցայ», Մտուած ալ ըսաւ. «Ո՛վ ըսաւ քեզի որ՛ դուն մերկ ես. չքլայ թէ ան պրտուղն որ քեզի ապսպրեցի՛ որ չուտես, անկէց կերած ըլլաս», Ղամ ալ պատասխանեց. «Մտիկս որ ինձի ընկեր տուիր նէ, անիկայ ինձի տուաւ որ ուտեմ», Մտուած նորէն դարձաւ կնկանը հարցուց. «Հապա դուն ինչու առ բանդ ըրիր», ան ալ պատասխանեց թէ՛՝ «()ձը իս խաբեց», Մտուտենը օձին դարձաւ ըսաւ Մտուած. «Մտ չարութեանդ համար՛ բոլոր կենդանեաց մէջ անի՞ծեալ ըլլաս դուն. բերենքս՝ ի վար փորուդ վրայ քալես, ու քու կերակուրդ հողը ըլլայ. քու մէջդ ու առ կնկանը մէջը ձեր զակրներովը թշնամութիւն ըլլայ, որ ան քու ետեւէդ իյնայ գլուխդ ջախ ջախելու, ու դուն անոր գարշապարը (այսինքն էզրձէն) խածնելու», Ատրբ կնկանն ալ ըսաւ. «Ղու վիշտդ ու տառապանքդ շատնայ, տղաբերքդ տրտմութեամբ ու ցաւով ըլլայ. կրկանըդ իշխանութեան տակը ըլլաս, որ ինքը քու վրադ տիրապետէ», Մտիկ ետեւ Ղամայ ալ ըսաւ. «Ղուն ալ որովհետեւ կնկանդ մտիկ ըրիր՝ իմ արգելած պողէս կերար, առ քու մեղքիդ

Համար՝ անիծեալ ըլլայ երկիրը, փուշ և տա-
տասկ քեզի բուսցրնէ. որ երեսիդ քրտինքովը
հացդ ուտես՝ ինչուան որ նորէն հող դառնաս
ուսկից որ ստեղծուեցար. ։ Այսպէս որ եղաւ,
Աստուած կաշիէ լաթեր հագցուց Աքամայ ու
Ալայի, անանկ դրախտէն դուրս ըրաւ. Իրենք
ալ ան ատենէն սկսան բնակիլ աս թշուառու-
թեան երկիրս, ու զաւակ բերելով՝ օրէ օր
չաւտցան ։

Գ. Լ. ՈՒ Խ Գ .

Կայենի և Արենի պատմութիւնը ։

ԱՄ աշխարհի 128 . 130 . (Ծանօգ . Գ .)

Աքամայ ու Ալայի առջինեկ զաւակը Կայե-
նը եղաւ, և անկեց ետըը՝ Աբէլ ։ Կայէն եր-
կրագործութիւն (այսինքն էրինճիութիւն) կ'ը-
նէր, ու իր եղբայրը Աբէլ ոչխարներ ունէր՝ ինքն
ալ հովուութիւն (այսինքն չօսանութիւն) կ'ը-
նէր ։ Ասոնք երկուքն ալ ուզեցին իրենց ունեցած-
ներէն Աստուծոյ պատարագ (այսինքն փէշկէշ)
մատուցանել ։ Կայէն նայեցաւ որ իր երկրին բեր-
քերու անշահները տայ . բայց Աբէլ անոր ներ-
հակը՝ իր ոչխարներուն առաջինները ու աղէկները
զատեց Աստուծոյ տուաւ ։ Անոր համար Աստուած
ալ սիրեց Աբէլը՝ ու իր ըրած պատարագը ըն-
դունեցաւ, ու Կայէնը ատեց՝ իր տուածէն երեսը
զարձուց ։ Աս բանիս համար խիստ արտմեցաւ
Կայէն՝ երեսը կախեց . ետըը Աստուծմէ ալ
յանդիմանութիւն լսեց թէ՛ . « Ինչու երեսդ կա-
խեր արտմեր ես՝ ու կը նախանձիս եղբօրդ վրայ .

մեզքը քուկդ է, [Թող դուն ալ աղէկները ինձի պատարագ ընէիր, :] Ետև [Թէպէտ Մատուած աս ալ ըսաւ որ՝ կը ներեմ [Թողու [Թիւն կու տամ քեզի՝ ու անդրանկու [Թենէդ քեզ չեմ զրկեր, բայց այսու ամենայնիւ Վայենի սրտին նախանձուն կրակը չմարեցաւ . հապա մէկ օր մը խաբելով Մ. Բէլը՝ [Թէ զբօսանքի երթամնք, մինաւոր հետը առաւ մէկ անսպաստ տեղ մը տարաւ, ու հոն վրան ելաւ սպաննեց զինքը :

Ետքը երբոր Մատուած հանդիպեցաւ Վայենի հարցուց [Թէ՝ «Ո՛ր է քու Մ. Բէլ եղբայրդ, : » Վայեն սուտ պատասխան տուաւ [Թէ, « Ես ինչ գիտնամ, էս եղբօրս պահապանն եմ մի, : » Մնա տենը Մատուած ալ ըսաւ իրեն . « Դուն ատ ինչ ըրիր, եղբօրդ արիւնը գետնէն ինձի կը բողբէ (այսինքն տատֆիրեա [Թ կը կանչէ) . անոր համար՝ անիծեալ ըլլաս դուն ան գետնին վրայ՝ որ քու ձեռքովդ եղբօրդ արիւնը խմեց, ու քու աշխատանքիդ պտուղը անկէց չառնես . և բարբարական ըլլաս աս աշխարհքիս վրայ, : » Մյուս կերպիւ Վայենը Մատուծոյ երեսէն ընկած, բոլոր իր կենացը մէջ յուսահատած բարբարական կը պտրտէր, ինչուան օր անգամ մը Վամէք իր [Թուր յանկարծ ճաննալով [Թէ ո՞վ է՝ սպաննեց զինքը : Ետքը՝ աս Վայենի ցեղն ալ իրենց հօրը պէս աստուածապաշտու [Թենէ պաղած, ինչպէս կ'ըսեն՝ կամաց կամաց կուսապաշտու [Թիւն սկսան մէջերնին մտցընել :

Բայց Մատուած՝ Մգամայ նախահօրը ուրիշ զաւկըներէն՝ ի զատ՝ անմեղ Մ. Բէլին տեղը բարի օրդի մը տուաւ՝ Սէ [Թ անունով, որ ան խիստ սիրելի եղաւ Մատուծոյ . Սէ [Թայ բարի զաւկըները և [Թուները՝ Որդիք Մատուծոյ ըսուեցան :

Ըստնց մէջէն ալ զլիաւորը՝ մէկ մը Նսովս նա-
 հապետը եղաւ, որ աստուածսաշտութիւնը շատ
 ծաղկեցուց. մէկալը Նսովք նահապետը, որ չը-
 մեռած՝ մարմնով երկինքը վերացաւ. ու մէկ
 մ'ալ՝ Սթուսաղա ըսուած, որ ամէն մարդէն
 աւելի ասպրեցաւ, այսինքն՝ ինը հարիւր վաթ-
 սուներ ինը տարի :

Գ. Լ. ՈՒ Խ Գ .

Աստուած մարդոց յարտաբխեր շննդեղով կը պատժէ :

Մտախոհ 1656 . 1657 . (Ծննդ . 2 . Ե . Ը . Բ .)

Ստեղծմանէ աշխարհքիս (ըստ եօթանասնից)
 երկու հազար երկու հարիւր տարիի չափ անցնե-
 լէն ետքը, երբոր ալ մարդիկ շատնալով լեցուցեր
 էին բոլոր աշխարհքս, անոնց մեղքը ու անօրէ-
 նութիւնն ալ այնչափ շատցաւ որ՝ չափը անցուց .
 անոր համար Մտուած սաստիկ սրդողելով վրա-
 նին ուզեց որ աշխարհքէս ջնջէ վերջնէ մարդի-
 կը՝ բոլոր կենդանիներն ալ հետը՝ որ անոնց ծա-
 ոայութեան համար ստեղծեր էր : Բայց աս
 բխրաւոր մարդիկներուն մէջէն մէկ մարդ մը կար
 Սեթայ օրհնեալ ցեղէն՝ Բոյ նահապետը, որ ին-
 քը միայն իր անմեղութեամբը և կատարեալ ար-
 դարութեամբը Մտուածոյ սիրելի եղեր էր . ուս-
 տի ասոր յայտնեց Մտուած որ բոլոր աշխարհքս
 ջրհեղեղով պիտի պատժէ, կորսնցնէ, ու միայն
 զինքը իր տղոցմովը պիտոր խալըսէ, որ անկէ
 ետև միայն անոր ցեղէն ելլան աշխարհքս լեցը-
 նեն : Ընոր համար հրամայեց Մտուած Բոյ
 նահապետին որ մէկ մեծ տասան մը (այսինքն

կէմիի պէս) շինուածք մը շինէ, իրեք հարիւր կան-
գուն երկայնքը, յիսուն լայնքը, ու երսուն՝ բար-
ձրութիւնը . մէջը՝ խորշ խորշ (այսինքն պէօլմէ-
ներով) բաժնած . և ասոր ներսը դուրսը բոլոր
ձիւթով (այսինքն զիֆտով) աղէկ մը ծեփէ, որ
մէջը ջուր չանցնի : Այդ նահապետը երբոր խա-
լըսեցաւ աս տապանը շինելը, Մատուծոյ հրամա-
նովը անոր մէջը մտաւ ինքը իր կնիկովը ու ի-
րեն իրեք տղոցմովը, որ կ'ըսուէին՝ Աւմ, Վամ,
Հարեթ, անոնք ալ իրենց կնիկներովը . և աչ-
խարհքիս ցամաքի ամէն կենդանիներէն ու թռ-
չուններէն երկու երկու արու և էգ, խկ սուրբ
կամ ուտելու կենդանիներէն՝ եօթը եօթը : Աւ-
ասոնք ամէնքը հոն մտնելէն ետեւ՝ Մատուած ալ
գրսէն տապանին դուռը վրանին գոցեց . ու սկը-
սաւ ջրհեղեղը, որ քառսուն օր քառսուն զիշեր
անդադար սաստիկ անձրևով ու ծովը բարձրա-
նայով՝ բոլոր աշխարհիս ցամաքը ջրով ծածկուե-
ցաւ, անանկ որ նաև պինտ բարձր լեռներուն
ծայրէն տասնըհինկ կանգուն ալ վեր ելաւ ջուրը .
որով տապանէն դուրս մնացած բոլոր կենդանի
ստեղծուածները խղզուեցան մեռան . ու միայն
Այդ նահապետը իր հետը եղածներովը ողջ մնա-
ցին ան տապանին մէջը, որ ջրին երեսը կը սը-
տրտէր : Ատքը հարիւր յիսուն օրն որ եղաւ,
Մատուած մէկ հով մը հանեց, որ կամաց կամաց
ան ջուրը սկսաւ աշխարհքիս երեսէն պահսիլ .
ուստի՝ Այի տապանն ալ ան ատենը հայաստանի
կողմերը գտնուելով՝ Մրարատ կամ Սասիս ը-
սուած լեռան վրայ նստաւ : Ինչ ատենը՝ Այդ նա-
հապետը տապանի պզտի պատուհանը (այսինքն
փէնձիբէն) բացաւ, ու երկրին ցամաքութիւնը
փորձելու համար առաջ ազաւ մը (այսինքն խառ-

դա մը) դուրս թող տուաւ . երբոր տեսաւ որ ան ազուաւր ետ չգարձաւ՝ անոր ետեւէն մէկ աղաւնի (այսինքն կիւսկերճին) մը թողուց . բայց աս աղաւնիս ոտը դնելու տեղ չգտնելով՝ շուտ մը դարձաւ : Ըսոր վրայ՝ Աոյ եօթն օր ալ սարսեց , նորէն թողուց աղաւնին , որ գնաց ուշացաւ , ու իրիկուան դէմ բերանը ձիթենիի (այսինքն զէթինի ծառի) կանանչ ճիւղիկ մը առած տապանը դարձաւ : Ընկէ եօթն օրէն ետե նորէն մէկ մ'ալ թողուց աղաւնին . երբոր տեսաւ որ ալ ետ չգարձաւ աղաւնին , ու չորս դին նայեցաւ տեսաւ որ ջուրը բոլորովին ցամքեր է , (ինչուան ան ատենը լման տարի մը տապանին մէջը կենալէն ետե) , Ըստուծոյ հրամանովը ինքն ալ դուրս ցամաքը ելաւ իր բոլոր ընտանիքովը , ու հետը դուրս հանեց ան բովանդակ կենդանիներն ու թռչունները . և ՚ի շնորհակալութիւն Ըստուծոյ ըրած բարեբարութեանը՝ սեղան մը շինեց՝ անոր վրայ ողջակէզ մատուց այն սուրբ կենդանիներէն : Ըստուած ալ սիրով ընդունեց՝ Աոյի սատարագը , օրհնեց զինքը իր աղաքներովը՝ որ նորէն աճին շափնան աշխարհքիս վրայ , ու բոլոր կենդանիները իրենց տերութեան ներքեւը ձգեց , որ անոնցմէ կարող ըլլան մորթելու ուտելու . նաև հետերնին ուխտ ու դաշինք ըրաւ որ մէյմ'ալ երկիրս անիծելով ջրհեղեղ չընէ . և աս բանիս նշան՝ ծիրանի դօտին , ըսաւ , կը դնեմ երկինքը ամպերուն մէջը :

Ընկէ ետքը՝ Աոյ նահապետը՝ առջինին պէս նորէն երկրագործութիւն ընելով՝ էգի սնկեց , անոր խաղողովը զինի շինեց . ու մէկ հեղ մը ան գինիէն քիչ մը եւեղիկէկ փախցընելով՝ անանկ գինովցաւ որ վրայի լաթերը հանած մերկ ըր-

ուած ընկաւ պառկեցաւ : Ըսանկ խայտառակ
կերպով պառկած տեսնելով իր Վրամ ըսուած որ
դին՝ վազեց մէկալ եղբայրներուն՝ ծաղր ընելով
պատմել զբուցել իրենց հօրը խայտառակութիւ-
նը : Սեմու Յարեթ եղբայրներն ալ երբոր աս ընե-
ցին՝ սաստիկ ամհնարով սրդողեցան վրան , ու շուտ
մը լաթեր առին կանրկնին վրայ՝ անանկ ետ ետ
երթալով առանց տեսնելու գացին ծածկեցին
իրենց հայրը : Ընոր համար ետքը երբոր արթն-
ցաւ զգատացաւ Վոյ նահապետը՝ ու բանը ի-
մացաւ նէ , անիծեց ան Վրամ տղան իր բոլոր
զաւկներովը , ու օրհնեց Սեմը և Յարեթը :
Ետե Զրհեղեղին վրայ իրեք հարիւր յիսուն
տարի ալ ապրեցաւ Վոյ նահապետը , ու ինը հա-
րիւր յիսուն տարուան մեռաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Բարիլոնի աշտարակը :

Մտ աշխարհի 1770 : (Ծննդ . ժԵ .)

Վոյ նահապետին տղոցմէն օրէ օր նորէն
մարդիկը սկսան շատնալ . և ասոնք ամէնքը աշ-
խարհի մէկ կողմը բնակած՝ մէկ լեզու կը խօ-
սէին մէջերնին : Ետքը՝ ալ այնչափ շատնալէն
խիտ դժուար ըլլալով իրենց մէկ տեղ կենալը՝
մտածեցին որ մէյմէկէ բաժնուին երթան աս-
դիս անդին բնակին : Ըն առեւնը ասոնց միտքը
հարտութեան և յանդգնութեան խորհուրդ
մը ինկաւ , որ առաջ բանի որ մէկտեղ են նէ՝
մէկ աշտարակի (այսինքն խուլի) ձեռով քաղաք
մը շինեն , անանկ մեծ ու բարձր՝ որ անոր ծայրը
ինչուան երկինքը հասնի ըսին , որ անով իրենց

յաւիտենական անուն մը աշխարհքիս վրայ թո-
 ղուն . ու մէկ մ'ալ ինչպէս որ կ'ըսեն, անկէ ետքը
 ջրհեղեղէն ազատ ըլլան՝ թէ որ Մտուած նորէն
 մարդիկը պատժել ուզէ նէ : Բայց աս ամբար-
 տաւանական գործքս այնչափ անհաճոյ եղաւ Մ-
 տուծոյ , և յիմարական երևցաւ աստուածային
 իմաստութեան առջևը , որ ուզեց հիմնայատակ
 ընել ոչնչացրնել զանիկայ . և ան՝ այսպիսի կեր-
 պով աստուածաշունչը կը ձևացուցանէ . « Մ-
 տուած , կ'ըսէ , երբոր ինչաւ տեսաւ աս որդւոց
 մարդկան շինած աշտարակը , դարձաւ ըսաւ թէ՛
 Մ բոլոր մարդիկ մէկ ազգ ըլլալով և մէկ լեզու
 խօսելով՝ առ բանը շինեցին , և ոչինչ կողմանէ
 պակասութիւն քաշելով ինչ որ ուզեն նէ կ'ը-
 նեն . (ատանկ չըլլար) , հասցա եկէք ասոնց լեզուն
 խառնենք շփոթենք , որ մէկը մէկալին զրուցա-
 ծը չհասկրնայ . » : Աստի կ'ըսեն թէ՛ այս կերպովս
 ան աշտարակին շինուածքը խափանեց Մտուած ,
 որ երբոր այնչափ հազարաւոր մարդիկ , Վերբովթ-
 ըսուած մէկը Վամայ թոր՝ իրենց վրայ գլուխ ա-
 ռաջնորդ կեցուցած աս շինուածքիս վրան թափեր
 կը շինէին , Մտուած յանկարծակի իրենց գիտցած
 լեզունին մոռցրնելով խառնելով նոր կերպ կերպ
 արտաբերութեամբ իրենց խօսել տուաւ . և այն-
 պէս մէկմէկու ըսածը շիմանալով աշտարակին
 շինուածքը մնաց՝ առաջ չգնաց : Մոր վրայ նաև
 արտաբին պատմութիւններն ալ կ'ըսեն թէ՛ Մ-
 տուած մէկ սաստիկ փոթորիկ մը (կամ խայ մը)
 հանեց որ ան Բաբելոնի աշտարակը հիմնայա-
 տակ կործանեց : Աշտարակին բանը ասանկ որ
 եղաւ , այն միաբանած մարդիկն ալ անկէց ջրուե-
 ցան , ու խումբ խումբ բաժնուած սկսան աս-
 դիս անդին երթալ , աշխարհքիս չորս կողմը բնա-

կիւլ : Մաև ան լեզուներուն խառնուելուն պատ-
ճառովը՝ աշտարակին տեղին անունը որ առաջ
Սենաար կ'ըսուէր , անկէ ետև Ռարէլ կամ Ռա-
բիլոն՝ ըսուեցաւ , որ Խառնակութիւն ըսել է :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Հայր Արքայապետ հոլումը , ու իրեն ուրիշ գործերը :

Մտ աշխարհի 2083 . 2092 : (Եննդ . ժԲ . ժԳ . ժԴ .)

Մշտարակին բաժանումէն ետև աշխարհքիս
մարդիկը եւելօք շատնալով՝ ու աստուածապաշ-
տութենէն նորէն կուսապաշտութիւն դառնալով ,
Մտուած ասոնց մէջէն իրեն հաւատարիմ ծա-
ռայ ընտրեց Հայր Մբրահամը , որ Սեմայ՝ Մոյնա
հապեաին օրհնեալ տղին ցեղէն էր , որ Սիջա-
դետաց երկիրը՝ Խառան ըսուած քաղաքը կը բնա-
կէր իր հօրը հետ՝ որ Թարայ կ'ըսուէր : Ուստի
Մտուած անկէց կանչեց զինքը ու ըսաւ . “ Մտ
քու երկրէդ և քու ազգիդ մէջէն ու հայրենա-
կան տնէդ ելիր , հոն եկոր բնակէ՝ ուր որ քե-
զի կը ցուցնեմ . որ քեզ օրհնեմ աճեցնեմ ,
քեզ անուանի ընեմ աշխարհքիս . և քեզմով օրհ-
նուին բոլոր աշխարհքիս մարդիկը . : Մբրահամ
ալ շուտ մը հնազանդեցաւ Մտուծոյ , ելաւ՝
հետը առաւ իր Սառայ ըսուած կնիկը , ու Վ ուլար
իր եղբօրորդին , Մտուծոյ ցուցուցածին պէս ե-
կաւ Վանանացոյ երկիրը բնակեցաւ , որ Պա-
ղեսաին ալ կ'ըսուի : Հոս տեղս նորէն Մտուած
երեցաւ Մբրահամու՝ ու ըսաւ . “ Ռու զաւկիդ
պիտոր տամ աս երկիրներս . : Մբրահամ ալ հոն
իր առջի սեղանը շինեց ՚ի պատիւ Մտուծոյ ,
ու համարձակ սկսաւ Մտուած պաշտել : Մն

ատենները առ Վրանանացոց երկիրը սով մը (այսինքն խրթլըխ մը) ինկառ, և ան պատճառով Վերահամ իր անով տեղովը ելաւ անկէ Լիսիպոս փախաւ: Ետքը նորէն Վրանանացոց երկիրն որ դարձաւ՝ տեսնելով որ խիստ շատուոր կ'ըլլան Վոլտայ հետ մէկտեղ բնակելով, և ձեռուրնին եղած երկիրն ալ քիչ ըլլալով՝ չօգտէր իրենց անասունները արծելու, անոր համար ուզեց որ Վոլտը իր քովէն զատէ. ու խրկեց՝ որ իր բաներովը երթայ Յորդանան գետին կողմերը բնակի՝ որ աղէկ պարարտ երկիր էր. և հոն տեղուանքը կ'ըլլար Սոգոմ ու Վոմոր ըսուած քաղաքները, որ անոր մարդիկը խիստ չար ու մեղաւոր էին:

Երբոր Սոգոմ քաղաքը կը բնակէր՝ ան ատենները քովի եղած տերութիւններէն չորսը մէկ տեղ միաբանած՝ մէկ պատճառով մը Սոգոմացոց ու Վոմորացոց՝ և անոնց հետ միաբանած թագաւորներուն վրայ պատերազմ բացին, և յաղթելով անոնց՝ Սոգոմացիքն ալ գերի բռնեցին. և ան գերիներուն հետ Վոլտն ալ իր բոլոր ունեցածներովը քշեցին տարին: Եւ բանս երբոր լսեց Վերահամ, շուտ մը կանչեց մէկ տեղ ժողովեց իր հաւատարիմ կորիճ ծառաները՝ բոլորը իրեք տանուտէրներ իր հետը միաբանած՝ ան չորս թագաւորներուն վրան վազեց, ու իրենց աղէկ ջարդ մը տալով՝ մնացածը փախցնելով, Վոլտը ուրիշ բռնուած գերիներուն հետ ազատեց, ու թալլած բաներնին ձեռուրնէն առաւ: Եւ անկ որ յաղթութեամբ փառաւորապէս դարձաւ Վերահամ, Սոգոմացոց թագաւորը շնորհակալութեամբ առջևը ելաւ դիմաւորեց ինքը, և հոն Սելքիսեգեկ թագաւորը Սաղիմայ՝

որ քահանայ ալ էր Մատուծոյ՝ իրեն հաց ու գինի հանեց տուաւ, ու Մատուծոյ կողմանէ օրհնեց ըզինք: Մբրահամ ալ անոր տասանորդ, այսինքն իր ունեցածներուն տասներորդ բաժինը հանեց իրեն տուաւ: Սողոմայ թագաւորը ան ատենը ուզեց Մբրահամու պարգև տալ ան թագաւորներուն իրմէ թալլած բաները՝ դերիներէն ՚ի զատ. բայց Մբրահամ երգում ընելով՝ «Վաւ լիցի, ըսաւ, ամենեւին քու բաներէդ բան մը չեմ առներ, որ ետքը վրաս չպարծենաս ըսես թէ՛ Մբրահամը ես հարըստցուցի մեծցուցի»:

Գ Լ Ո Ւ Խ Է .

Արրանամու նետ Աստուած ոխտ ու դաշինք կ'ընէ, և իրեն իսմայել գառակ կու տայ:

ԱՄ աշխարհի 2094 • 2107: (Ծննդ. ժն. ժՁ. ժԵ:)

Երբոր ան պատերազմէն դարձաւ Մբրահամ, Մատուած նորէն իրեն երեւցաւ, ու սիրտ տալով մխիթարեց որ ամենեւին բանէ մը չը վախնայ, ինքը կեցեր է պաշտպանելու: Մն ատենը Մբրահամ ալ դարձաւ զանդրտեցաւ Մատուծոյ իր ամուլթեանը համար, որ ինչուան ան ծերութեան ատենը ինքն զաւկի մը տէր չէ եղեր: Մոր՝ Մատուած ալ իրեն ցուցնելով երկընքի աստղերը՝ ըսաւ թէ՛ «Վնչպէս որ ասոնք համբանքի տակ չեն իյնար, այսպէս քու զաւակդ անթիւ անհամար պիտոր ըլլայ»: Եւ աս ըսածը հաստատելու համար՝ Մատուած մէկ տեսիլք մը ցուցուց Մբրահամու, ու անով յայտնեց թէ՛ իրմէ առաջ եկած ցեղը ատենով Արդիսպատացուոյ ձեռքէն պիտի տանջուին. և ետքը ան բոլոր այ-

լազզիններուն երկիրները իրենց պիտոր տիրապե-
տել տայ :

Բայց առ Մ.բրահամու խոստացած բուն ժա-
ռանդ որդին ծնանելէն առաջ, Սառայ Մ.բրա-
համու հարազատ ընկերը՝ (ինչպէս որ կ'ըսեն՝ առ
տուածային յայտնութեամբ), իր Մ.քար ըսուած
աղախինը Մ.բրահամու նուիրեց՝ որ անկէց զա-
ւակ ունենայ : Մ.ս որ եղաւ՝ Մ.քար երբոր տեսաւ
Թէ ինքը ալ յղի է, հպարտացաւ ու սկսաւ Սա-
ռայի վրայ ծուռ նայիլ՝ անիկայ բանի տեղ չտե-
պել. անոր համար Սառայ ալ Մ.բրահամու հրա-
մանովը որ մը Մ.քարը ծեծելով տնէն դուրս վաճն-
տեց : Մ.քար անանկ տրտմած գլուխը կախած
ձամբան երթալնինի՝ հրեշտակ մը հանդրպեցաւ
դէմը, ու խրատ տալով յորդորեց զինքը որ տուն
դառնայ՝ իրեն տիկնոջը (այսինքն խաթունին)
հնազանդ ըլլայ. և առ ալ ըսաւ Թէ՝ «Վեզմէ տը-
ղայ մը պիտոր ըլլայ Իսմայէլ անունով. անոր զա-
կրները Մ.ստուած պիտի աձեցրնէ ու շատցրնէ :»
Երբոր տուն դարձաւ Մ.քար ու ժամանակը հա-
սաւ տղան որ բերաւ, Մ.բրահամ հրեշտակին ը-
տածին պէս անոր անունը Իսմայէլ դրաւ :

Մնիկ ետև մէկ մ'ալ երեցաւ Մ.ստուած Մ.բ-
րահամու՝ նորէն օրհնեց զինքը, և առ բանխ
նշան՝ Թէ շատ ազգերու նահապետ պիտոր ըլլայ՝
անունը որ առաջ Մ.բրամ կ'ըսուէր, փոխեց՝ Մ-
բրամ կամ Մ.բրահամ դրաւ. ու հետը ուխտ
ու դաշինք ընելով՝ հրամայեց որ ինքը իր բոլոր
մանջ զաւակներովը որդւոց որդի թրխատուի, որ
ան՝ ուրիշ անհաւատ ազգերէն բաժնուելու նշան
ըլլայ : Ետքը ընկերոջը Սարային անունն ալ Սար-
րա կամ Սառա՝ կանչուի ըսաւ. ինչու որ՝ պիտի
ան ալ օրհնեմ, որ անկէց հարազատ որդի մը

ունենաս, և անանկ շատցնեմ անոր զաւկըները՝
որ թագաւորներ ըլլան իրեն ցեղէն : Արբոր աս
բանս լսեց Վերահամ՝ երեսի վրայ ընկաւ սկսաւ
խնտալ, և մտքին մէջը զարմանալով ըսել՝ թէ
« Ինչպէս կարելի է որ ես՝ ալ հարիւր տարուան
ծեր մը՝ նորէն զաւկի տէր ըլլամ, և Սառա իմ ըն-
կերս՝ որ ինքն ալ իննսուն տարուան է՝ տղայ բե-
րէ » : Հասցա դարձաւ՝ « Տէր, ըսաւ, թող Իս-
մայէլս ողջ մնայ, ատ ըսած բարիքներդ անոր ը-
րէ » : Ետուած ալ իրեն պատասխան տուաւ .
« Ըէ, ատանկ չէ . հասցա ինտոր ըսի նէ՝ Սառա
քեզի զաւակ պիտի բերէ, ան ըլլայ քու հա-
րազատ ժառանգդ . բայց քու աղաչանքիդ հա-
մար Իսմայէլն ալ երեսէ չեմ ձգեր . ան ալ կ'որհ-
նեմ՝ ու շատցնելով մեծ ազգ կ'ընեմ զինքն
ալ » : Ատքը Վատուծոյ հրամայածին պէս շուտ
մը Վերահամ բոլոր իր տանը մարդիկը մէկտեղ
ժողովեց թլփատեց, ու ինքն ալ իր ան ծերու-
թեանս ատենը թլփատուեցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Արրանաւոր և Ղոխոսայ հիւրասիրութիւնը, ու Սոքոնացոյ պատիժը :

Սժ աշխարհի 2107 : (Ծմնդ . 3Ը . 3Գ .)

Բսկէ ետեւ մէկ օր մը Վերահամ իր տանը
դրան առջևը կէս օրուան դէմ նստած հանդէլ-
նինի՝ յանկարծ տեսաւ որ անդիէն ՚ի դաս իրեք
կարիճ դէպի ինքը կու գան, (որ հրեշտակներ
էին մարդկային կերպարանքով) : Ինքն ալ շուտ
մը ելաւ վազեց՝ բարեւելով առջևնին գնաց ըն-
կաւ, ու աղաչեց՝ սիրով առաւ իր տունը բերաւ,

և ան ատենի սովորութեանը պէս՝ ջուր բերաւ
 ոտուրնին լուաց, ու մէկ ծառի մը շուքի տակ
 հանդէպուցնստեցուց՝ առջևնին սեղան պատրաս-
 տեց դրաւ, և ինքը ամենայն յօժարութեամբ
 կեցեր կը ծառայէր իրենց: Աերակուրն որ խա-
 լրսեցան, անոնցմէ մէկը Մ. Բրազամու ըսաւ թէ՛
 “Վալ տարի աս ատեն նորէն քու քովդ դալու
 ըլլամ նէ՛ պիտի տեսնեմ որ Սառայ քու ընկերդ
 զաւակ մը ունի”, : Սառայ՝ որ անգին դրանը ե-
 տեւէն մտիկ կ’ընէր, աս խօսքիս վրայ սկսաւ ինք
 իրեն քթին տակէն ինտալ, իբր թէ անկարե-
 լի բան է ըսածը. ան ատենը հրեշտակն ալ յան-
 դիմանեց անոր թերեհաւատութիւնը՝ որ Մ. Բ-
 տուծոյ կարողութեանը վրայ կը տարակուսի:
 Ատքը երբոր ելան ասոնք երթալու եղան՝ յայտ-
 նեցին Մ. Բրազամու՝ թէ “Ա’երթամք որ Սողոմ
 ու Վ’ոմը քաղաքները կործանենք, ինչու որ մեզ
 քերնին ալ չափը անցուցին”, : Մ. Բրազամու աս բա-
 նը լսելով՝ տաստիկ ցաւեցաւ խղճաց վրանին. ուս-
 տի Մ. Բտուծոյ առջևը ընկաւ շատ աղաչանք պա-
 ղատանք ըրաւ որ իրենց մեղացը թողութիւն
 տայ չարատէ չկործանէ ան քաղաքները: Ա-
 ասոր վրայ Մ. Բտուծոյ հետ խոնարհութեամբ եր-
 կայն խօսելով բանը հոն հասաւ որ՝ Մ. Բտուած ալ
 խօսք տուաւ ըսաւ. “Թէ որ միայն տասը արդար
 մարդ զտնուելու ըլլայ ան քաղքըներուն մէջը,
 անոնց խնայելով չեմ պատժեր մէկիսնոնք ալ”, :
 Մ. Բ որ լսեց Մ. Բրազամու՝ ալ բան մը չըսաւ կե-
 ցաւ մնաց:

Ատքը աս հրեշտակներուն երկուքը իրիկուան
 դէմ երբոր եկան որ Սողոմ քաղաքը մտնեն,
 Վ’ ուլոր տեսնելով զասոնք աղու որ կտրիճի կերպաւ
 բանքով, ու մեղքընալով վրանին որ չըլլայ թէ

անօրէն Սողոմոնցիքը ասոնց չարութիւն մ'ընեն ,
 զնաց աղաչելով առաւ իր տունը բերաւ , ու սե-
 զան դրած առջևնին մեծարեց իրենք : Սողոմոն-
 ցիները որ խնացան թէ ասանկ մարդիկ եկեր են
 Վ ուլտայ քովը , գիշերանց ելան եկան չորս դիէն
 տունը պատեցին , ու զեցին որ Վ ուլտ ան մարդիկը
 հանէ իրենց ձեռքը տայ . աս բանիս Վ ուլտ շատ
 գէմ կեցաւ , բայց ճար չեղաւ որ անոնք ետ կե-
 նան , անանկ որ Վ ուլտը կը ծեծէին ու տանը դու-
 ուր կը կտորէին , թէ որ ան հրեշտակները զինքը
 ներս չքաշէին՝ ու դուռը վրանին գոցելով ան
 տեղը ան բոլոր մարդիկը չկուրացրնէին նէ : Ըս
 որ եղաւ՝ ան ատենը հրեշտակները բանը բացին
 Վ ուլտայ ըսին թէ՛ « Գիտնաս որ Ըստուած
 մեզ խրկեց որ աս քաղաքս պատժենք կործա-
 նենք , ու քեզ խալըսենք . ուստի թէ որ փեսայ՝
 տղաք , կամ ուրիշ ազգական ունիս նէ՝ շուտով
 ասկէ հանէ : Վ ուլտն ալ ելաւ իր աղջիկներուն
 նշանածներուն զուրցեց աս բանս . բայց անոնք
 չհաւատալով իրեն՝ ու ծաղր ընելով տեղերնէն
 ջարժեցան : Աւստի առտուանց կանուխ ելան
 հրեշտակները , ու արտորցրնելով Վ ուլտայ և կրն
 կանը ու իր երկու աղջկանը ձեռուրնէն բրա-
 նած Սողոմ քաղաքէն դուրս հանեցին , ասլըս-
 պրեցին իրենց որ շուտ քալեն երթան՝ չրլայ որ
 կանկ առնեն ետևնին դառնան նային : Արբոր
 ասանկ արտորնօք կ'երթային , Վ ուլտ աղաչեց ը-
 սաւ որ զոնէ Աեգոր քաղաքը երթան խալըսին
 հոն հանգչին . ու անանկ եղաւ որ ասոնք Աեգոր
 հասնելու եղան , Ըստուած սկսաւ ստակալի պա-
 տիժը Սողոմայ ու Գոմորայ վրայ թափել , կրա-
 կէ անձրև երկինքէն ինջեցուց , որ բոլոր ան քաղ-
 քները իրենց դաշտերովը երեց մրկեց մոխի

դարձուց, Մն ատենը Վ ուլտայ կնիկը՝ ինչպէս ե-
 դաւ որ, զարձաւ ետեւը նայելու, (ինչպէս կ'ը-
 սեն՝ հետաքրքրութեամբ կամ ցաւակցելով՝ Սո-
 գոմսացոց ողորմելութիւնը տեսնելու համար),
 ու ան տեղը պատժուեցաւ՝ արձան աղի կամ աղէ-
 քար կտրեցաւ :

Գ. Լ. ՈՒԽ Թ .

Խառնակ ծնանկէն ետե՛ Սրբա՛նա՛մ Խա՛նայէ՛ր քո՛վե՛ն
 կը՛ ասե՛րք :

Աժ աշխարհի 2108 . 2115 . (Ծձնգ . ԻԾ .)

Մտուծոյ ըսածին պէս՝ երբոր ատենը եկաւ ,
 Սառայ՝ որ իննսուն տարուան պառաւ էր՝ մանչ զաւ-
 շակ մը բերաւ . Մբրահամ ալ ինչպէս Մտուած
 իրեն հրամայէր էր՝ անոր անունը Իսահակ դը-
 բաւ և ութերորդ օրը թլփատեց զինքը : Ասոր
 երբոր ատենը հասաւ որ տղան կաթէն կտրե-
 ցին , Մբրահամ փառաւոր կոչունք ուրախու-
 թիւն ըրաւ անոր համար : Տղան որ սիսաւ օրէ
 օր մեծնալ առաջ գալ , Սառայ մէկ կողմանէ որ-
 չափ կ'ուրախանար իր մէկ հաօրի սիրելի զաւկին
 վրայ , մէկալ զիէն տեսնելով որ Իսահայէլ Մգա-
 բայ որդին Իսահակը բանի տեղ չեկեր՝ ու
 վրան նախանձելով ինքը կ'ուզէ որ Մբրահամու
 ժառանգութիւնը յափշտակէ , խիստ կը ցաւեր
 կը տանջուէր , և կը մտածէր որ մօրը հետ տը-
 նէն դուրս վճռակ զանի : Մբրահամ առջի բե-
 ըանը խղճալով տղին վրայ , որովհետեւ ան ալ իր
 զաւակն էր , առ բանիս դէմ կեցաւ . բայց ետքը
 Մտուծմէ ալ որ լսեց թէ՛ Սառայի ըսածը մօրիկ
 ըրէ՛ ինչու որ Իսահակէն պիտոր ըլլայ քու հա-

բազատ ցեղք, ան ատենը հնազանդեցաւ Սա-
ռայի. ուստի մէկ օր մը առտուանց կանուխ ե-
լաւ քիչ մը հաց ու տիկով (այսինքն թուլումով)
Ջուր Ղաբարայ կոնակը տուաւ, անանկ Սամայէլ
տղան հեար՝ ճամբեց զիրենք օր ելլեն երթան,
Լսոնք երբօր ելան դէպ'ի անասպատը կ'երթային՝
ճամբան մողորեցան, և աստին անդին իյնալով՝
Ջրերնին ալ հատաւ, ու տղան սկսաւ սաստիկ ծա-
րաւէն փրփրալ ու լալով վնկվնկալով՝ Ջուր ուզել-
անանկ օր մօրը ճարը հատաւ տարաւ տղան մէկ
ծառի մը շուքին տակը ձգեց, ու ինքն ալ քիչ
մը հեռու մէկ դին քաշուեցաւ ընկաւ, օր աչաց
առջևը չտեսնէ տղին մեռնիլը: Լսն ատենը Լս-
տուած ողորմեցաւ տղին, հոն տեղուանքը մէկ աղ-
բիւր մը ցուցուց Ղաբարայ, օր գնաց տիկը Ջրով
լեցուց՝ բերաւ տղին տուաւ. ու այնպէս ոյժ ա-
ռին, ելան Փառան ըտուած անասպատը գացին
բնակեցան օր ետքը Լստուծոյ ըսածին պէս աս
Սամայէլի ցեղը ան տեղուանքը շատնալով՝ մեծ-
ցաւ բռնեց:

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Աստուած կը հրամայէ Արրաւանու՝ որ Խաանակը իրեն
ողջակեց ընէ:

Ամ աշխարհի 2133: (Ծանգ. ԻԲ.)

Խաահակ երբօր ալ մեծցաւ կտրիճ՝ եղաւ, ու
Լբրահամ բոլոր յոյսը անոր վրայ դրեր կը սի-
րէր, Լստուած Լբրահամու կատարեալ հա-
ւատքը և հնազանդութիւնը փորձով յայանելու
համար՝ իրեն հրամայեց օր Խաահակը առնէ մէկ
բարձր լեռ մը տանի, ու հոն տեղը մորթէ Լս-

տուժոյ ողջակէզ ընէ : Ըս որ լսեց Ըբրահամ՝ շուտ մը առտուանց կանուխ ելաւ էջը պատրաստեց, ողջակիզին համար փայտ ջարդեց վրան բեռցուց, Խառահին ալ մէկտեղ՝ հետը երկու ծառայ ալ առաւ, անանկ ձամբայ ելաւ՝ եկաւ հոն հասաւ որ Ըստուած իրեն ըսեր էր : Իրեք օրէն ետեւ Ըստուած Ըբրահամու ցուցուց ան տեղը՝ ուր որ աս ողջակէզս պիտոր ըլլար . ուստի ինքն ալ ծառաներուն ապրտպրեց որ իշուն հետ հոն կենան սպասեն՝ ինչուան որ ինքը տղին հետը անդին մէկ տեղ մը երթայ որ քիչ մը աղօթք ընեն, ու դառնան քովերնին : Ըստնկ ըսելով՝ ան բերած փայտերը Խառահայ կոնակը առաւ, ու իր ձեռքն ալ թուրը ու կրակը առած՝ սկսան մէկտեղ երթալ . ձամբան երթալնինի՝ Խառահայ զարմանալով հարցուց հօրը . « Հայր, կրակը ու փայտը ունինք հետերնիս, հապա ողջակէզ ընելու ոչխարը ուր է », : Ըբրահամ ալ իրեն պատասխան տուաւ . « Արդի, Ըստուած կը պատրաստէ իրեն ողջակէզ ընելու ոչխարը », : Երբոր եկան հասան Ըստուծոյ ցուցուցած տեղը, Ըբրահամ հոն մէկ սեղան մը շինեց, վրան ան բերած փայտերը դիզեց, ու Խառահին ալ կապած անոր վրայ հանեց : Ետքը թուրը վերցուցածին պէս որ ալ տղան մորթէ, ան վայրկեանը մէկէն հրեշտակ Ըստուծոյ երկնքէն կանչեց իրեն . « Ըբրահամ Ըբրահամ, ձեռքդ քեզի քաշէ՝ տղին մի մօտենար . հիմա աղէկ գիտցայ որ աստուածաբախ մարդ մըն էս դուն, որ Ըստուծոյ հնազանդելու համար՝ քու սիրելի զաւակիդ ալ չես խնայեր : Ըս որ լսեց Ըբրահամ՝ մէկէն աչքը անդին դարձրնէ տեսնէ որ մէկ ոչխար մը եղջիւրներէն (այսինքն պուչնուզներէն) կախուէր կեցեր էր Սարեկայ ըսուած

ճառէն 'ի վար . ինքն ալ իմացաւ բանը , ու գնաց
անկէց առաւ քերաւ , ան ոչխարը սղջակէզ ըրաւ .
Իսահակայ տեղը : Ետքը նորէն հրեշտակ Մ. Ե.
տուծոյ երկնքէն կանչեց ըսաւ . « Մտուած կ'ը-
սէ որ ' իմ վրաս երդում կ'ընեմ , որ քեզ առ ը-
րած գործքիդ համար ձյմարտապէս կ'օրհնեմ ու
կ'օրհնեմ . ուստի երկնքին ասողերուն՝ ու ծովու
աւազի (այսինքն խումի) չափ կը բազմացնեմ կը
չատցընեմ քու զաւակդ , անանկ որ ' իր [Թնա-
միներուն քաղաքները երթայ ինքը առնէ նստի .
և բոլոր աշխարհքիս մարդիկը քու զաւակդ օրհ-
նուին » : Մ. Ե. տքի ըսածովս Մ. Ե. տուած խոստա-
ցաւ Մ. Ե. բրահամու՝ որ Վ. Ե. իստոս Մ. Ե. սիան իր զա-
ւակէն պիտոր ըլլայ , ինչպէս կը ցուցունէ Պօղոս
առաքեալը (Վաղատ . Գ . 16) : Մ. Ե. կեան ե-
լաւ եկաւ Մ. Ե. բրահամ իսահակայ հետ իր ծա-
ռաներուն քովը , ու անանկ մէկտեղ նորէն տուն
դարձան :

Գ. Լ. ՈՒԽ Ժ. Ա.

Արբանյակ իսանակը կը կոչուի , և այնպէս կը վախճանի :

Ըմ աշխարհի 2145 . 2184 . (Ծննդ . ԻԳ :)

Սառայ հարիւր քսանըկօթը տարի ապրելէն
ետքը երբոր մեռաւ , Մ. Ե. բրահամ անոր սուգը կա-
տարելէն ու [Թաղելէն ետե՝ ինքն ալ աւելի ծե-
րացած , պատրաստու. թիւն տեսաւ որ իր սիրա-
կան իսահակ որդին կարգէ : Ուստի կանչեց Ս-
ղիազարը իր հաւատարիմ ծառան , որ բոլոր տա-
նը կառավարու. թիւնը՝ անոր ձեռքն էր , ու եր-
դուընցընելով ապրսպրեց իրեն՝ որ ելլէ Ս. Ե. ջազե-

տաց երկիրը երթայ, անկէց իրեն ազգականներէն մէկ կոյս աղջիկ մը առնէ, բերէ՝ որ Իսահակայ հետ կարգէ . ու արգելէց որ՝ հասա թէ աղջիկը գալու չըլլայ նէ, իր մեռնելէն ետքը ամենեւին չըլլայ որ Իսահակը առնէ հոն կարգելու տանի : Աղիազար ալ ճամբուն պիտանաւ որով թիւնը տեսաւ, տասը ուղտ առաւ հետը՝ գնաց . երբոր Սիջադեաքը հասաւ՝ իրիկուան դէմ Աստան ըսուած քաղքէն դուրս մէկ հորու մը քով կանկ առաւ . ու Մուսուծմէ խնդրեց որ ան քաղքին աղջիկներն որ պիտոր գային ջուր առնելու, ան ատենը շուտով իր բանը աջողէ : Այլ ըսածին պէս ինքը աս բանիս ինչ նշան որ դրաւ նէ՝ անանկ կատարուեցաւ . եկաւ սափորով ջուր առնելու Սեբեկա ըսուած Մաթուէլի աղջիկը խիստ աղուոր՝ որ Մարահամու եղբօրը թուն էր . Աղիազար իրմէ խմելու ջուր ուզեց . ան ալ չէ թէ միայն իրեն՝ հասա իր ուղտերուն ալ ջուր խնցուց նէ, ան ատենը Աղիազար իրեն հարցուց . ու երբոր խնցաւ թէ ինքը ո՛վ է, ուրախութեամբ փառք տալով Մուսուծոյ՝ հետը բերած ոսկի օղերը անոր ականջները դրաւ, ու ասորանջանները (այսինքն պիլէղիկները) թևերը անցուց : Սեբեկան ալ շուտ մը դարձաւ տուն վաղեց, աս բանս խնցուց հօրը, և իր եղբօրը՝ որ Աբբան կ'ըսուէր : Աբբանն ալ եկաւ առաւ Աղիազարը տուն տարաւ . աղկանը հայրը մնայրը երբոր խնցան՝ թէ Մարահամ խրիկը է զինքը որ իրենց աղջիկը իր աղին ընկեր առնէ, Մուսուծմէ է ըսելով աս բանիս ամենեւին դէմ չկեցան, խօսք տուին որ աղջիկինն տան : Աղիազար ան ատենը նորէն ուրիշ ոսկիէ ու արծը թէ ընծաներ հանեց տուաւ Սեբեկայի ու իրեն մօրը և եղբայրներուն . և ան գիշերը հոն ուրա-

խուժեամբ անցրնելէն ետե՛ կատուանց կա-
նուխ ելաւ կ'աղաչէր որ շուտով զինքը թողուն՝
որ Սեբեկան հետը առած ձամբայ ելլէ երթայ :
Ըջիկան ծնողքը և եղբայրները տասն օր ալ կ'ու-
ղէին բռնել՝ հարսնիքի պատճառով . Եղիազար
կ'արտօրար՝ չէր ուզէր մնալ . ինչուան որ խօսքը
Սեբեկայի ձգեցին՝ իրեն հարցուցին . երբոր ան
ալ ըսաւ թէ շուտով հետը կ'երթամ . հապա
վրան օրհնենքներ կարգալով , իր ամէն բաներու
վր ու նաժիշտներովը (այսինքն խաղայէիներովը)
Եղիազարի հետ ձամբայ դրին : Երբոր ասոնք
եկան հասան Ըբրահամու բնակած տեղը մօտե-
ցան՝ իրիկուան դէմ ըլլալով , ան ատենը Իսահակ
զաշար ելեր կը պարտէր . ու դէպ ՚ի ասոնք որ
կու գար , Սեբեկա զինքը տեսածին պէս՝ ուզտէն
վար իջաւ՝ Եղիազարի հարցուց թէ ան մարդը
ո՞վ է . ու իմանալուն պէս որ Իսահակն է՝ լռչակը
վրան առաւ . ու անանկ մէկ մէկու հանդիպե-
ցան : Ետքը աս բոլոր ձամբօրդուժեան բանը
Եղիազար տեղն ՚ի տեղը Իսահակայ պատմեց .
ան ալ սիրով Սեբեկան իրեն ընկեր առաւ , ու
անով միսիթարուեցաւ իր մօրը Սառային մա-
հուանը վրայ :

Հայր Ըբրահամ այսպիսի կերպով աստուա-
ծային օրհնութեամբը՝ Իսահակ իր սիրական
որդին կարգելէն ետե՛ խել մ'ալ ապրեցաւ . ու
ետքը սրբութեամբ և աստուածապաշտութեամբ
վախճանեցաւ հարիւր եօթանասունըհինգ տա-
րուան . որ Իսահակ ու Իսմայէլ իր տղաքը եկան
պատուով թաղեցին իրեն գնած գերեզմանատե-
ղը Սառային քովը :

ուտէ : Սէկ օր մը Յակոբ սպէ ապուր շիներ էր որ ուտէ . Ասաւ սաստիկ անօթի դաշտէն եկած ասոր վրայ հասաւ , աղաչեց որ անկէց իրեն ալ տայ : Յակոբ ալ ըսաւ . « Թէ որ ասոր տեղը քու անդրանկութիւնդ՝ այսինքն առջինեկու թեանդ իրաւունքը ինձի կը ծախես նէ՛ կու տամ , » : Ասաւ ալ իրեն ըսաւ . « Այս մէկ օր մը պիտի մեռնիմ՝ ինձի ինչ շահ ունի ան անդրանկութիւնս , » : Յակոբ երդում ուզեց աս բանիս վրայ . ան ալ որ երդուրնցաւ , ան ատենը Յակոբ ալ Ասաւայ տուաւ որ ուտէ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

Յակոբ հօրը օրհնորիւնը եղբորը ձեռքէ կը յափշտա կէ իւրը կ'առնու :

Ըմ աշխարհի 2245 : (Ծանոգ . Ի է .)

Ասահակ երբոր ալ ծերացաւ հարիւր տարին անցաւ , աչուրնէրը անանկ տկարացան որ դժուար կը տեսնէր : Այս մէկ օր մը կանչեց Ասաւը՝ իրեն ասլըսպրեց որ երթայ դաշտէն մէկ աղէկ բան մը որտայ՝ ինչպէս առաջուց կ'ընէր , ու բերէ իր սրբտինս ուղածին պէս լաւ կերակուր մը շինէ որ « Աւտեմ , ըսաւ , և մեռնելէս առաջ աղօթք ընեմ վրայդ՝ քեզի օրհնէնքս տամ , » : Աւերեկա աս բանս իմանալուն պէս՝ շուտ մը դաղտուկ Յակոբը կանչեց՝ անոր սատմեց , ու խրատ տուաւ որ եղբոր մէն առաջ ինքը վազէ երթայ դաշտէն երկու գիրուկ ուլ (այսինքն քէշի եաւրու) առնէ իրեն բերէ՝ որ անով Ասահակայ սիրած կերակուրը շինէ , ու Յակոբ տանի կերցընէ , որ ինքը առնէ

օրհնութիւնը : Յակոբ դարձաւ մօրը ըսաւ թէ՛
 “ Ըստ ինչպէս կ'ըլլայ որ՝ Ասաւ եղբայրս մազոտ
 է , ու իմ մարմինս լերկ . հապա թէ հայրս յան-
 կարծ ինձի դպչելու ըլլայ եւ բանը իմանայ նէ ,
 ան ատենը ես խաբող ու ծաղր ընող մը կ'երեւամ
 հօրս առջևը , ու այնպէս՝ օրհնութեան տեղը՝
 անոր անկէճքը վրաս կ'առնեմ ” : Սայրն ալ ը-
 տաւ . “ Թող իմ վրաս ըլլայ ատ անկէճքը , միայն
 թէ որդի՛ դու իմ ըսածս ըլլէ ” : Ըն ալ շուտ մը
 դնաց ուլերը բերաւ . ու Սերեկիան ըսածին պէս
 առաւ ան ինչպէս որ պէտք էր եփեց պատրաս-
 տեց . ետքը Ասաւայ աղէկ պահէստէն լաթերը
 առաւ Յակոբայ վրան հագցուց , ու ուլերուն
 մորթն ալ անոր վիզը ու թևերը անցուց , անանկ՝
 շինած կերակուրը ձեռքը տուաւ որ հօրը տանի :
 Արբոր տարաւ Յակոբ , Իսահակ զարմանալով
 իրեն հարցուց թէ “ Ի՞նչն ո՞վ ես ” : Յակոբ ալ
 ըսաւ . “ Աս քու Ասաւ անդրանիկ օրդիդ եմ , ա
 հա ըսածիդ պէս ըրի . ելի՛ , հայր իմ , նստէ՛ ու
 հրամայէ՛ կեր իմ ըրած որսս , որ իս օրհնես ” : Ի-
 տահակ իրեն ըսաւ . “ Արդի , ատ ինչպէս շուտով
 դտար ” : Ըն ալ պատասխան տուաւ . “ Ըստուած
 ասանկ աջողեց ” : Իսահակ նորէն վրան տա-
 րակուսելով ըսաւ . “ Սօտ եկոր որ քեզ բռնեմ՝
 անանկ ձանձնամ որ դու իմ Ասաւ օրդիս ես
 մի ” : Ըն ալ երբոր մօտեցաւ , Իսահակ զինքը
 բռնեց ու ըսաւ . “ Չայնդ Յակոբայ ձայնն է ,
 ու ձեռքդ Ասաւայ ձեռքն է ” : Ըն ըսելով Ի-
 տահակ առաւ ատորժելով (այսինքն իշաահով)
 կերաւ Յակոբայ բերած կերակուրը , ու զինի
 ալ խմեց վրայէն . ետեւ զինքը պապնէնինի եր-
 բոր Յակոբայ վրայի լաթերէն անոյշ հոտեր
 առաւ , ան ժամանակը օրհնելով ըսաւ . “ Իմ

որդւոյս անուշահոտութիւնը լ'ստուծմէ օրհնած դաշտի հոտերուն կը նմանի . լ'ստուած երկնքէն եկած շաղով և երկրիս պարարտութեամբը առատացրնէ քու ցորենդ ու գինիդ . քեզի շատ ազգեր պիտի ծառայեն , ու իշխաններ երկրպագութիւն ընեն . եղբօրդ տէր ըլլաս , և քեզի երկրպագութիւն ընեն քու հօրդ զաւկընէրը . քեզ անիծողը անիծած ըլլայ՝ ու քեզ օրհնողը օրհնած ըլլայ , : Արբօր լինցաւ , ու Յակոբ աս օրհնութիւնները առած Իսահակայ քովէն որ զատուեցաւ , ան ատենը Ասաւ վրայ հասաւ . և բանը չգիտցած՝ ինքն ալ իրեն ապրուած կերակուրը Իսահակայ որ բերաւ , Իսահակ հարցուց իրեն թէ՝ «Վա՛ն ո՞վ ես , » ան ալ սրտաստիան տուաւ . «Այս քու Ասաւ անդրա նիկ որդիդ եմ , » : Իսահակ զարմանալով ըսաւ . «Նապա ան ո՞վ էր որ քեզմէ առաջ բերաւ , ու ես կերայ՝ օրհնեցի զինքը , և օրհնեալ ըլլայ , » : Լ'ս որ լսեց Ասաւ՝ կտողեցաւ՝ ու սկսաւ պոռալով ըսել . «Նայր՝ իս ալ օրհնէ , » : Լ'ն ատենը բանը իմացաւ Իսահակ . «Լ'նանի է նէ քու եղբայրդ էր , ըսաւ , որ եկաւ քու օրհնութիւնդ առաւ , » : Ասաւ ալ ըսաւ . «Իրաւի անօր անունը Յակոբ ըսուեցաւ որ՝ աս երկու հեղ կ'ըլլայ որ խի կը խաբէ . մէկ հեղ մը՝ իմ անդրանկութիւնս առաւ , հիմայ ալ՝ իմ օրհնութիւնս կ'առնէ , » . ու զարձաւ նորէն աղաչեց . «Վո՛նեա , ըսաւ , հայր , մէկ օրհնութիւն մըն ալ ինձի համար չպահեցիր մի , » : Իսահակ ալ սրտաստիան տուաւ . «Արովհետեւ անիկայ քու վրադ տէր ըրի՝ և օրհնեցի զինքը , ալ քեզի ինչ ընեմ , որդի , » : Ասաւ նորէն ըսաւ . «Միայն մէկ օրհնութիւն մը ունիս դուն . իս

ալ օրհնէ, հայր, : Իսահակ անկէ ետե ալ չդիմանալով Լսաւայ ձեռքէն, մէկ հարեանցի օրհնութիւն մըն ալ անոր վրայ կարդաց, այնպէս ձեռքէն խալըսեցաւ : Իայց աս բանիս համար սաստիկ ոխ պահեց Լսաւ Յակոբայ վրայ, անանկ որ՝ միտք դրաւ թէ հօրը վախճանելէն ետե Յակոբը մեռցընէ : Ընոր համար Ռեբեկան ալ Լսաւայ չար միտքը դիմնալով Յակոբայ խրատ տուաւ՝ որ անկէց բաժնուի ելլէ Միջագետքը Լաբանայ իր եղբօրը քովը երթայ, հոն կենայ ինչուան որ Լսաւ աս բաներս մոռնայ՝ որը անցնի . « Զըլլայ թէ, ըսաւ, ձեզ երկուքդ ալ մէկէն մէկ օրը կորսնցընեմ », : Լսքը Ռեբեկա առանց աս բանիս պատճառը յայտնելու՝ զնաց Իսահակայ հետ ալ խօսք անցուց որ Յակոբը Միջագետքը խրկէ, որ՝ « Ընկէց, ըսաւ, իրեն ցեղէն երթայ աղջիկ առնէ », որովհետեւ երկուքն ալ խիստ նեղացեր էին Լսաւայ առած հարսերուն ձեռքէն՝ որ Վանանացի էին :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յակոբ Միջագետք երբայնիկ տեսիլք կը տեսնէ . ու հոն կ'երբայ կը կարգուի տուն տեղ կ'ըլլայ :

Աժ տշխարհի 2246 : (Ծճնդ . ԻԸ . ԻԲ :

Յակոբ Իսահակայ օրհնութիւնը նորէն առնելով ճամբայ ելաւ որ Խառան քաղաքը իր մօրենական տունը երթայ : Ըս ճամբորդութեանս մէջը մէկ օր մը իրիկուան դէմ որ տեղ մը հասաւ, ան գիշերը հոն մնաց որ հանգչի, և ան

տեղումնքէն մէկ քար մը առաւ իրեն բարձ ը-
բաւ զլուխը վրան դրաւ քնացաւ : Վնոյն մէջը
տեսիլք տեսաւ որ՝ մէկ սանդուխք (այսինքն վեր-
տիվէն) մը առջևը տնկած կեցեր էր՝ որ ծայրը
ինչուան երկինքը կը հասնէր , անոր վրան հրեշ-
տակները կ'ելլէին ու կ'իջնէին . և անոր ծայրը
տեսաւ որ Մտուած կեցեր իրեն կ'ըսէր . « Աս
եմ տէր Մտուած քու հօրդ Մբրահայիմու և
Մտուած Իսահակայ . մի վախնար , ատ եր-
կիրդ որ դուն պառկեր ես՝ քեզի և քու զաւկը-
ներուդ կու տամ , որ աւազի (այսինքն՝ խոււսի)
պէս շատուոր պիտի ըլլան , որ աշխարհքիս չորս
դին տարածուին . ու քեզմով և քու զաւկովդ
բոլոր աշխարհքիս մարդիկը պիտոր օրհնուին .
եւ ալ միշտ քու հետդ եմ՝ որ քեզ ամէն տեղ
պահեմ , և ձեռքէ չեմ թողուր՝ ինչուան որ աս
ըսածներս կատարեմ . » : Մոր վրայ երբոր ար-
թնցաւ Յակոբ՝ սահմրակելով բաւ . « Մ
Մտուծոյ տեղ և երկնքի դուռ է եղեր , որ ես
չեմ գիտցեր . » : Ատե շուտ մը առտուանց ել-
լելուն պէս՝ ան իրեն բարձ ըրած քարը՝ աս տե-
սիլքիս յիշատակի համար՝ ան տեղը կայնեցուց ,
ու եղով օձեց . և ան տեղին անունը Բեթէլ
այսինքն Տուն Մտուծոյ դրաւ . և Մտուծոյ
ուխտ ըրաւ որ՝ թէ իր բանը յաջողած դառնայ
նէ՝ ան տեղը իրեն տուն Մտուծոյ , այսինքն՝
Ժամու պէս աղօթատեղի ընէ , և ամէն Մ-
տուծոյ իրեն տուածէն՝ անոր տասանորդ հանէ
տայ :

Ատքը անկէց ելաւ Յակոբ , ու ճամբան ա-
ռաջ երթալով երբոր Միջագետաց երկիրը գնաց
հասաւ , հոն մէկ դաշտի մը մէջ տեսաւ որ մէկ
մեծ հոր մը կար , ու անոր չորս դին հովիւները

իրենց ոչխարներովը կեցեր կը սպասէին , որ ամէնքը գան մէյտեղին , ու ան հորուն վրայի քարը վերցընեն՝ ամէն մարդ իրեն անասուններուն ջուր տայ : Յակօբ ասոնց քովը գնաց մծտեցաւ , և հարցուց խնացաւ որ ասոնք Խառան քաղաքէն են եղեր . ու ըսին թէ Լարան՝ (որ իրեն մօրը եղբայրն էր) , ան ալ ողջ է . և անոր Սաբէլ ըսած աղջիկն ալ ահա իր ոչխարներովը կու գայ կոր : Լորբօր Յակօբ Սաբէլը տեսաւ , ալ համբերեց՝ գնաց շուտ մը ան հորուն վրայի քարը խնքը մէկ գիտաւ , ու պինտ առաջ անոր ոչխարները խմցուց , և սաստիկ ուրախութենէն սկսաւ լալ . ու իրեն ճանչցուց զինքը թէ Սեբեկայի անոր հօրը քրոջը որդին է . երբօր աս խնացաւ Սաբէլ շուտ մը տուն վազեց հօրը ըսաւ : Լարանն ալ ուրախութեամբ եկաւ գրկեց պագաւ Յակօբը՝ առաւ իր տունը տարաւ , և ամիս մը ատեն քովը պահէին ետե՛ Յակօբայ ըսաւ որ՝ « Չեմ ուզեր որ գուն ինծի ձրի (այսինքն ճապա) ծառայութիւն ընես , ըսէ՛ ինչ վարձք կ'ուզես » : Յակօբ ալ ըսաւ . « Լօթը տարի կը ծառայեմ քեզի , որ անոր տեղը ինծի Սաբէլ աղջիկդ տաս » : Լարան ան ատենը իրեն խօսք տուաւ հաւնեցաւ ասոր : Բայց եօթէ տարին լմնալէն ետեւ երբօր Յակօբ իր կնիկը ուզեց , Լարան խաբեց զինքը՝ Սաբէլին տեղը Լիա անունով մէկ ուրիշ մեծ աղջիկ մ'ալ ունէր՝ անիկայ հանեց Յակօբայ տուաւ , Յակօբայ անանկ հասկըցընելով թէ մեր երկիրը օրէնք կայ որ՝ առաջ մեծը կը կարգեն՝ ու հապա պղտիկը . « Աւտի , ըսաւ , թէ որ Սաբէլն ալ առնել կ'ուզես նէ , անոր համար ալ նորէն կօթը տարի ինծի ծառայու-

Թիւն ըրէ, որ ան ալ տամ, : Ան ատենը Յակոբայ ճարը հասնելով, (ինչու որ՝ տաստիկ սիրով կասուեր էր Սարգելի հետը) ըսածին պէս եօթը տարի ալ նորէն ծառայեց Աբանայ՝ ու անանկ ետքը Սարգէն ալ առաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Յակոբ կ'եղէ իր երկիրը դասնայու :

Եւ աշխարհի 2265 : (Եննդ . 13 .)

Երբոր Յակոբայ ծառայութեան տասնըջորս տարին ընցաւ, ու աստուածային օրհնութեամբը տասուերիօ զաւկի տէր որ եղաւ, Աբանէն հրաման ուղեց որ ալ անով տեղովը իր երկիրը դառնայ երթայ : Աբան ալ ըսաւ թէ՛ «Արտեւ նեմ որ Աստուծոյ օրհնութիւնը քու հետդ իմ տունս բերիր . ուրեմն ինչ վարձք կ'ուզես որ քեզի տամ, : Յակոբ իրմէն աս միայն ուղեց՝ որ նորէն անոր ոչխարները այծերը առջինին պէս ինքը պահէ հոգայ, և անոնցմէ բոլոր ձերմահները Աբանայ ըլլան, ու խատուաիկ (այսինքն ալաճա) եղածները իրեն վարձքը ըլլայ : Աս բանիս խօսք որ տուաւ Աբան, Աստուծոյ օրհնութեամբը Յակոբայ բաժինը եւելօք շատցաւ, և քիչ մը ատենի մէջ անանկ հարուստցաւ անասուններով ու ծառաներով, որ սկսաւ Աբան անոր վրայ նախանձիկ ու ծուռ նայիլ . և անկէ ետե ալ չէր ուզեր որ Յակոբ քովէն զատուի երթայ : Բայց երբոր ատենը եկաւ՝ Յակոբ Աստուծոյ հրամանովը Աբանէ զաղտուկ ժողովեց ժողովրտեց իր բոլոր ունեցած բարիքը, ու կնիկները տղաքները

մէկտեղ առած՝ ճամբայ ելաւ որ իր երկիրը դառնայ : Իրեք օրէն ետև աս բանս որ խնացաւ Լարան՝ սաստիկ կատաղեցաւ վրան , ուստի ինքն ալ իր մարդիկներովը եօթն օրուան ճամբայ՝ ետևէն վազեց զնաց Յակոբայ հասաւ Վաղարշապատ լեաներուն վրայ . և Լարանայ միտքը չար էր , շատ զէն կ'ուզէր Յակոբայ հասցընել , թէ որ Վատուած իրեն շերենտար զինքը չարգելէր նէ . աւոր համար քիչ մը աւելի պակաս Յակոբայ զրուցելէն ետև , Յակոբ ալ իր անանկ գաղտուկ ելլելուն պատճառները անոր առջևը գնելով , հաշտութիւն ըրին մէկտեղ . ու մէջերնին ուխտ ու դաշինք զրին՝ որ մէյ մ'ալ ան կեցած տեղերնէն իրարու սահմանը (այսինքն սինսօք) չանցնին : Եւստիս Լարան թողուց՝ որ Յակոբ իր ճամբան առաջ երթայ , ու ինքն ալ իր տեղը դարձաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Յակոբայ ճամբորդութեան մէջ որիչ հանդիպած բաները :

ԱՄ աշխարհի 2266 . 2273 . 2288 : (Ծննդ . 18 . 19 . 17 . 18 .)

Յակոբ Լարանայ ձեռքէն խալըսելէն ետև , անձրրիկեր էր թէ Վասայ իր եղբօրը ձեռքէն ալ ինչպէս պիտի ազատի , որ ճամբուն վրայ ան տեղուանքը կ'ըլլար . ուստի մտածեց որ իրմէ առաջ մարդիկ խրիկէ՝ որ երթան իր կողմանէ քաղաքավարութեամբ բարևեն Վասաւր : Բայց երբոր աս մարդիկս ետ դարձան պատմեցին թէ՛ Վասաւ չորս հարիւր հողի հետը առած՝ անանկ

զիմացին հու գայ կոր, ան ատենը Յակոբ շատ վախ քաշեց, և Մատուծոյ ապաւինելով որ զինքը աս փորձանքէս ալ խալբուէ՝ ինչպէս որ իրեն խոստացեր էր, բոլոր հետը եղածը երկու բանակ (այսինքն պէօլիւկ) բաժնեց՝ մէկմէկէ ՚ի զատ, որ թէ մէկը զարնուի նէ՝ գոնէ մէկայը խալբուի. ու ամէն ունեցած անասուններէն խել մըն ալ ընծայ հանեց տուաւ որ Ասաւայ տանին, որ ասով անոր սիրտը առնէ՝ հետը հաշտուի: Մ. յապէս որ բանը կարգաւորեց, ան զիշերը Մատուած ալ ցուցնելու համար՝ թէ Յակոբայ աղօթքը լսեր է՝ և միշտ զինքը կը պահպանէ, Յակոբայ քով մէկ հրեշտակ մը խրկեց մարդկային կերպարանքով, որ ինչուան առտու հետը (կիւլէշ բռնած), ձեծկուիլ ցուցուց. ու ետքը իբր Յակոբէն յաղթուած՝ ալ կ'ուզէր որ զինքը թողու որ ելլէ երթայ, Յակոբ չթողուց ինչուան որ ինքը չօրհնեց. ան ալ ան ատենը Յակոբայ անունը փոխեց՝ Խորայէլ դրաւ, որ կը նշանակէ՝ Յաղթօղ Մատուծոյ, կամ Մատուածատես. «Արովհետեւ, ըսաւ, Մատուած դէմ զիմացար նէ՝ մարդիկներէն ալ ամենեւին պիտի չվախնաս», Մնիէ ետքը առտուանց երբոր ելաւ՝ Յակոբ տեսաւ որ Ասաւ չորս հարիւր մարդով զիմացը եկեր մօտեցեր է, կնիկները ու տղաքը ետ թողուց, ինքը մինաւոր քալեց զնաց՝ Ասաւայ առջևը եօթը անգամ իյնալով բարեկեց երկրորդագութիւն ըրաւ: Մ. որ տեսաւ Ասաւ, բոլորովին սիրտը կակզցաւ, ու դեռ Յակոբ իրեն չմօտեցած, ինքը վազեց Յակոբը բռնեց զրկեց, անանկ լալով մէկտեղ սրագտուեցան: Ատքը տեսնելով Ասաւ Յակոբայ ընտանիքը զաւկրները՝ սիրով ու բախակից եղաւ իրեն. ու քաղա-

քաղաքութեամբ ընդունելով Յակոբայ տուած ընծաները, ուզեց որ Յակոբայ ծառայութիւն ընելով հետը մէկտեղ առնէ զինքը, և անանկ ընկերութեամբ տանի իրենց երկիրը. բայց Յակոբ չնորհակալ ըլլալով “ Չեմ ուզեր, ըսաւ, քեզի ծանրութիւն տալ. մանաւանդ պէտք է ալ, ըսաւ, որ կամաց կամաց շարժիմ երթամ” աս մանր տղոցը և անասուններուն պատճառովը: Արքոր ասանկ Ասաւ իրմէ բաժնուեցաւ՝ երա տեղը դարձաւ, Յակոբ ալ ետևէն Քանանացւոց երկիրը եկաւ հասաւ, և հոն Սիկիմացւոց քաղաքին քով տեղ մը դնեց առաւ՝ քիչ մը ատեն հոն բնակեցաւ:

Ըս Սիկիմացւոց քաղաքը Յակոբայ որդիքը կ'երթային հու գային. և մէկ օր մըն ալ Ղինա ըսուած Յակոբայ մէկ հատիկ աղջիկը զբօսանքի (այսինքն սէյրի) համար երբոր ինքն ալ գնաց աս քաղաքս, հոն ան տեղին իշխանը Սիբէմ անունով Ամովրայ որդին, աչք ձգեց աս Ղինայի վրայ, ու առաւ պղծեց. և ետքը իր հօրը աղաչեց որ՝ երթայ Յակոբայ հետ խօսի որ Ղինան իրեն կնիկ առնէ: Ամովր ալ Յակոբայ քով եկաւ որ աս բանիս վրայ խօսք անցընէ. ու կը յորդորէր կ'ըսէր որ՝ “ Ըսկէ ետև մէկտեղ ինսամութիւն ալ ընենք՝ մէկմէկու աղջիկ տանք առնենք. նաև ալ ասկէց մի երթաք, ըսաւ, հոս կեցէք՝ առուտունիդ հոս բրէք:” Սիբէմն ալ կ'ըսէր թէ՛ “ Միայն թէ աղջիկը սուէք, ինչ օժիտ (այսինքն ճէհէզ) որ կ'ուզէք նէ կու տամ:” Ըսոնց ըսածին պատասխան տուին Յակոբայ տղաքը՝ (մանաւանդ Շմաւոն ու Ղևի, որ մէկ մօրէ հարազատ քորերնին ըլլալով Ղինան՝ աւելի սրտերնին երած էր

ան խոյտառակու (Թեանը Համար), ու խարէ, ու
 Թեամբ ըսին թէ. «Մտ չըլլալու բան է՝ որ մեր
 քոյրը մէկ անթլփատի մը տանք. հասցա առանկ
 կ'ըլլայ, որ ձեր բոլոր էրիկ մարդիկը թլփատին՝
 մեզի պէս ըլլան, ու անկէ ետև մէկմէկու աղջիկ
 կու տանք կ'առնենք, ու մէյտեղ կը կենանք մէկ
 ազգ կ'ըլլանք.», խիստ հաւնեցան ասոր՝ Վամլր
 ու Սիւքէմ. ուստի շուտ մը դացին միամտու
 Թեամբ ան քաղաքի մարդիկներուն ալ խելուը-
 նին մտուցին որ իրենց հեա բոլոր էրիկ մարդիկը
 թլփատուեցան: Արրորդ օրն որ եղաւ, երբոր
 աս թլփատածները աւելի ցաւի մէջ էին, և կա-
 բողութիւն չունէին ոտք ելլելու, Շ մաւնն ու
 Վ ևին (Հակոբայ բան չըսած՝ իրենց զլխուն թու-
 ըր ձեռուրնին առած մտան քաղաքը, ու բոլոր
 ան էրիկ մարդիկը ջարդեցին՝ Վամլր ու Սիւքէմ
 ալ մէկտեղ. ու Վինա քուրերնին առին տուն
 բերին, և բոլոր անոնց կնիկները ու անասունները
 և ամէն բաներնին կողոպտեցին: Հակոբ աս
 բանիս համար շատ սրդողեցաւ տղոյը վրայ, որ
 ալ վրէժխնդրութեան (այսինքն էօճ՝ առնելուն)
 չափը անցուցեր էին. և ինքն ալ վախի մէջ էր,
 որ աս պատճառով ան երկրին մարդիկը թշնա-
 մութեամբ իր վրայ հանէ:

Մտոր համար Մտուած հրամայեց Հակոբայ
 որ անկէց ելլէ Ռեթէլ երթայ, և հոն 'ի պա-
 տիւ Մտուծոյ մէկ սեղան մը շինէ. (աս ան տեղն
 է՝ որ ինքը Վսաւայ ձեռքէն փախչելու ատենը
 ան սանդուխրին տեսիլքը տեսաւ): Հակոբ ալ
 առաջ պատրաստութիւն տեսնելով՝ սրբեց մար-
 քեց իր ընտանիքը ան կռապաշտական բաներէն՝
 որ խառանէ առած հետերնին բերեր էին. ու հոն
 հասածին պէս ան ըսած սեղանը շինեց 'ի շտոր-

Հակալուծիւն Մատուծոյ իրեն ըրած բարերարու
 թեանցը, ինչպէս առաջ ինքն ալ ուխտ ըրեր
 էր : Ան ան տեղը մէյ մ'ալ երեցաւ Մատուծ
 Յակոբայ, նորէն ըսաւ որ "Քու անունդ այսու
 հեռե՛ Սարայէլ ըսուի", ու օրհնեց զինքը որ ա-
 ճի շատնայ, և խոստացաւ որ ան երկիրները ի-
 րեն և իր զաւակներուն տայ՝ ինչպէս ըսեր էր
 Աբրահամու և Իսահակայ : Ատքը երբօր Մե-
 թելէն ելաւ Յակոբ դէպ'ի Քերբոն հու գար
 Իսահակայ իր հօրը քով, ճամբուն վրայ Ռաբէլ
 Մենիամին ըսած որդին ծնաւ, որ Յակոբայ վեր-
 ջին զաւակը եղաւ . բայց դժուարածին ըլլալով
 տղաբերքէն մեռաւ Ռաբէլ, ու հոն Ափրաթայի
 ճամբուն վրայ թաղուեցաւ, որ ետքը ան տեղը
 Մեթղեհէմ ըսուեցաւ : Այնչափ ատենէն ետե
 ողջ առողջ Մատուծոյ տուած հազար բարիքնե-
 րով երբօր Յակոբ եկաւ Քերբոն հասաւ՝ ալ
 խիտ ծերացած գտաւ իր Իսահակ հայրը, որ
 քիչ մ'ալ սպրեւէն ետքը հարիւր ութսուն տա-
 րուան վախճանեցաւ, և իր երկու որդիքը Յա-
 կոբ ու Ասաւ թաղեցին զինքը :

Գ Լ ՈՒԽ ԺԷ .

Յակոբայ մեկայ տղոցը նախանձր և դատածանօրիներ
 Յովսէր գեղեցիկին վրայ :

Աժ աշխարհի 2276 : (Ծճճգ . ԼԷ :

Յակոբ նահապետը բոլոր տասուերկու մանչ
 զաւակ ունեցաւ, ու մէկ աղջիկ մը . և ան տղո-
 ցը անուններն են Ռուբէն, Շմուոն, Գևի,
 Յուդայ, Իսաքար, Օարուղոն, Գան, Մեփ-
 թաղիմ, Գադ, Լւեր, Յովսէփ, Մենիամին,

որ ասոնք Սարայէլացւոց տասուերկու ցեղին նա-
 հապեաները եղան : Ասոնց մէջէն Հակոբ Հով-
 սեփը որ Սարելի առջինեկն էր , մէկաշներէն ա-
 ւելի կը սիրէր իր անմեղութեանը համար , ու
 մէյ մ'ալ որ' անիկայ որդի ծերութեան էր . ա-
 նոր հատար իրեն ծաղկեայ պատմութեան (այսինքն
 չիէկլի կապայ) մին ալ շիներ էր , որ Հովսեփ
 հագնելով իր բնական գեղեցկութեանը վրայ
 աւելի աղուոր և շնորհալի կ'երևար : Աս պատ-
 ճառաւս մէկալ եղբայրները խիստ կը նախանձէին
 Հովսեփայ վրան , ու սուտ ամբաստանութիւն-
 ներով (այսինքն շէրվաներով իՖաիրայով) կը
 քանային որ հօրերնուն առջև անոր անունը ա-
 բեն . բայց Հակոբ բանը դիտնալով անոնց մտիկ
 չէր բներ : Աղաւ որ երազ մը տեսաւ Հովսեփ ,
 ու ելաւ ուրիշներուն ալ պատմեց . իբր թէ՛ մէկ
 դաշտի մը մէջ ինքը եղբայրներուն հետ մէկ-
 տեղ ցորենի որայ (այսինքն տէմէթ) կը կա-
 պէին . և իր կապած որան ելաւ շիտակ կայնե-
 ցաւ , ու եղբայրներուն կապածները երկրպա-
 գութիւն տալու պէս իրենին առջևը կը ծռէին :
 Այն ուրիշ երազ մըն ալ տեսաւ որ' արևը ու
 լուսրնական և տասնըմէկ աստղ՝ իրեն երկրպագու-
 թիւն կ'ընէին : Աս երազներս լսելով իր եղ-
 բայրները , ու հասկընալով որ ասոնք ատենով
 Հովսեփայ գալու մեծութիւնը և իշխանութիւ-
 նը կը ցուցնեն , անոր համար սկսան եւելօք
 վրան նախանձիլ՝ սաստիկ ատել զինքը , անանկ
 որ արիւնը կ'ուզէին խմել , ինչպէս գործքով ալ
 յայտնեցին իրենց անողորմութիւնը , որ ասանկ
 եղաւ : Վիչ մը ատենէն ետե՛ մէկ որ մը երբոր
 աս Հակոբայ տղաքը մէկ հեռու տեղ մը իրենց
 ոչխարները արծելու գացին ու հոն շատ ուշա-

ցան, Յակօբայ սիրտը աս բանիս համար ան-
հանգիստ ըլլալով, Յովսէփը անոնց ետեւէն
խրկեց որ՝ երթայ տեսնէ իր եղբայրները նայի
թէ ուր են՝ ինչ կ'ընեն կոր, որ գայ իրեն զը-
րուցէ: Յովսէփ ալ հնազանդեցաւ հօրը, ելաւ
գնաց և ասդիս անդին փնտռտեւէն ետքը Վով-
թայիմ ըսուած դաշտը գտաւ զիրենք:

Ինչ տեղը երբոր եղբայրները հեռուանց տե-
սան ասիկայ որ դէպ ՚ի իրենց կու գար կոր, մէկ-
մէկու ծաղր ընելով սկսան ըսել. «Վայէ՛ նայէ՛,
երազ տեսնողը կու գայ կոր», ու ան ատենը մէջեր
նին խօսք զրին՝ որ զինքը բռնեն սպաննեն, իր
մարմինը ան տեղուանքի հօրերուն մէկին մէջը
նետեն, ու անանկ ձայն հանեն որ մէկ գազան
մը (այսինքն ձանալար մը) Յովսէփը բզբբտեր
կերեր է. «Աւ ան ժամանակը, ըսին, տեսնենք
թէ՛ ինչ կ'ըլլայ իրեն երազները», Սուբէն մեծ
եղբայրնին աս բանիս դէմ կեցաւ. «Զէ՛, ըսաւ,
տղին արիւնը չմտնենք, հապա աս տեղուանքներս
մէկ պարսպ հօրու մը մէջ ձգենք որ ինքիբն
երթայ կորսուի», աս ձամբովս Սուբէն ուղեց
որ տղան մեռցրնելէն խալլատէ՛ ու ողջ իր հօրը
ձեռքը հասցրնէ: Սէկախոնք ալ ասոր ըսածին
պէս՝ բռնեցին վրայէն ծաղիկայ պատմուձանը
հանեցին, տարին մէկ պարսպ ցամաք հոր մը
ձգեցին, ու եկան նստան հացերնին ուտելու:
Ինչ ատենը մէյ մըն ալ դառնան նային որ՝ ան-
դիւն Սամայելացի վաճառականներ իրենց ուղ-
տերով ու ասպրանքով դէպ ՚ի Վդիպատոս կ'երթան
կոր. աս որ տեսաւ Յուդայ՝ միտքը ինկաւ ըսաւ.
«Սեզի ինչ շահ կ'ըլլայ որ եղբայրնիս սպան-
նենք. հապա՛ ձեռուրնիս մեր եղբօրը արիւնը
չթաթխած՝ եկէ՛ք աս Սամայելացիներուն ծա-

խենք երթայ . . . Սէկալնոնց միտքն ալ աս բանիս վրայ պատկեցաւ . ուստի շուտ մը գացին անհօրէն Յովսէփը հանեցին , բերին անանկ աս Իսմայելացիներուն քսան դահեկանով (կամ խուռուշով) ծախեցին որ անոնք ալ հետերնին առին անմեղ Յովսէփը Ազխպոս տարին : Ատքը ասոնք իրենց ըրած չարութիւնը հօրերնուն առջևը գոցելու համար՝ Յովսէփայ ծաղկեաց պատմութեանը առին՝ մէկ այժ մը մտրթեցին անոր արիւնտը թաթխեցին , անանկ Յակոբայ իրկեցին ըսին թէ « Սէնք ատ լաթը գտանք՝ նայէ՛քու տղիդ պատմութեանն է մի . . . Արքոր Յակոբ ան տեսաւ . ու ճանչցաւ , սկսաւ լալով ըսել . « Իմ տղիս է աս պատմութեանը . չար գազանի հանդիպեցաւ իմ Յովսէփ որդիս՝ որ զինքը բզբքտեց կերաւ . . . և անանկ սաստիկ կսկիծէն իր վրայի լաթերը պատրուտեց ձգեց , սգաւորի պէս քուրձ մը (այսինքն խարար մը) հագաւ , ու շատ ժամանակ ասանկ լալով՝ սուգը սրտէն չէր երթար , չէր մխիթարուեր , հապա՛ . . . Թողուցէ՛ք , կ'ըսէր , որ ես ալ մեռնիմ իմ սիրական տղիս քովը երթամ . . . »

Գ Լ Ո Ւ Խ Թ Ժ Ը .

Թովսէփի Եզխպոսի մէջ կը ծախուի , ու հոն գրպարտութեանը բանտ կը մտնէ :

Սմ աշխարհի 2277 : (Ծանօգ . ԼԹ . Խ .)

Յովսէփ տանընթացը կամ տանընթացը տարուան էր երբոր իր եղբայրները զինքը Իսմայելացուց ծախեցին . անոնք ալ Ազխպոս որ տարին , հոն տեղը Պետափրէս ըսած մէկ իշխանի մը , որ

Փարաւոն թագաւորին դաճապետ (այսինքն ճէլլատ պաշի կամ սիլիհատար) էր, անոր ծախեցին: Աւ Մատուծոյ շնորհքը միշտ Յովսէփայ վրան ըլլալով, իր խոհեմութեամբը և հաւատարմութեամբը խիտ սիրելի եղաւ իրեն տիրոջը, անանկ որ տանը ամէն բանը ու կառավարութիւնը անոր ձեռքը հաւտացեր տուեր էր. և անոր հստար Մատուծոյ օրհնենքն ալ ան մարդուն տընէն անպակաս էր: Բայց Յովսէփ տեսքով ազուոր կտրիճ մը ըլլալով իր տիրոջը կնիկը վրան սկսաւ աչք ձգել, ու շատ անգամ ետեւէն ընկաւ որ իր հեարը մեղանչէ: Յովսէփ ալ քովէն հեռանալով իրեն պատասխան կու տար. «Վուն ալ դիտես որ իմ տէրս բոլոր իր ունեցածները իմ ձեռքս տուեր հաւտացեր է, քեզ միայն իրեն պահեր է՝ որ իր կնիկն էս. հապա ինտոր կարելի է որ էս անոր աս անհաւատարմութիւնը ընեմ, և ասով Մատուծոյ դէմ ալ մեղանչեմ. բաւ լիցի, բաւ, որ սա չարութիւնը ընեմ»: Կնիկը այսու ամենայնիւ ետ չէր կենար՝ իր չար բաղձանքը կ'ուզէր որ առաջ տանի. ուստի մէկ օր մը որ Յովսէփ հարկաւոր բանի համար տունը մինաւոր հեարը մնացեր էր, անատենը աս կնիկս սկսաւ եւելօք բռնարարել (զօռ ընել) Յովսէփայ, անանկ որ՝ վրայի լաթը բռներ կը քաշէր. Յովսէփ ալ ձարը հատած՝ շուտ մը լաթը (կամ պինչը) հանեց ձեռքը թողոց՝ այնպէս վազեց տնէն դուրս ելաւ: Մանկ որ ըրաւ Յովսէփ՝ ալ ան ժամանակը վրան սաստիկ սրըգողելով կատղեցաւ կնիկը, ու պոռալով տանը մարդիկը սկսաւ կանչել թէ՛ «Վկէք տեսէք որ կրիկս աս Աբրայեցի մանչը տունս բերաւ որ մեղտորի տակ առնէ՛ խայտառակ ընէ.», ու անոնց

սուտ պատմեց թէ՛ «Միկայ քոյս եկաւ որ հետս մեզանէ . և երբոր ես զինքը քովէս վարնտելով կանչուր տեցի , շուտ մը ան ալ արտօրալէն իր լաթը քոյս թողուց՝ փախաւ դնաց » : Ատքը երբոր էրիկը տունը եկաւ՝ անոր ալ ասանկ սուտ զրուցեց . ան ալ հաւտարով կնկանը՝ Հովսէփը բռնել տուաւ բանտը դրաւ : Բայց ան բանտին մէջն ալ Հովսէփ իր անմեղութեամբը և առաքինութեամբը այնչափ սիրելի եղաւ բանտապետին , որ կամաց կամաց բանտին պահպանութիւնը և վրակեցութիւնը իրենն ձեռքը տուաւ . և հոն ալ Մատուած իր բանը կ'աջողէր :

Մն առնաները Պարաւոն Ազիպտացւոց թագաորը՝ մէկ յանցանքի մը (այսինքն սուչի մը) համար իր տակառապետը (այսինքն խատէհքեար պաշին), ու մատակարարը (այսինքն աշճի պաշին) Հովսէփայ կեցած բանտը դրաւ : Մէկ քանի օրէն ետև ասոնք երկուքն ալ մէկ զիշեր մը երազ տեսան . ու առտուանց երբոր Հովսէփ քովերնին գնաց որ նայի իրենց պիտանաւորութիւնը հողայ , տեսաւ որ երկուքն ալ երեսնին կախած շփոթեր էին . Հովսէփ հարցուց իրենց ասոր պատճառը : Մոնք ալ պատասխան տուին թէ՛ « Արկուքս ալ մէյմէկ երազ տեսանք , ու մարդ չունինք որ մեզի մեկնէ ըսէ թէ ինչ պիտոր ըլլայ » : Հովսէփ ալ իրենց ըսաւ . « Մտուածով ես կը մեկնեմ , թէ որ տեսածնիդ ինծի պատմէք » :

Մն տոներ տակառապետը առաջ ցածիկեց սկսաւ պատմել . « Արադս , ըսաւ , տեսայ որ՝ առջևս մէկ որթ մը (այսինքն ատնայի քիւթիւկ մը) կար , ու անոր վրայ իրեք կանաչ ձիւղ բուսած էին , իրեքն ալ վրանին մէյմէկ ողկոյզ հասած խաղող

ունէին, ես ալ Փարաւոնի գաւաթը ձեռքս բռնած՝ ան խաղողը կը փրցընէին՝ կը ձգմէի գաւաթին մէջը, ու Փարաւոնի կու տայի որ խմէ : Հօլմէփ ալ իրեն պատասխանեց . « Քու երազիդ մեկնութիւնն աս է . ան իրեք ձիւղը՝ իրեք օր կը ցուցնէ, որ իրեք օրէն ետեւ Փարաւոն զբեզ պիտի յիշէ, նորէն քեզ առջի պաշտօնդ (այսինքն մանսուպդ) պիտոր հանէ, որ քու սովորութեանդ պէս գաւաթը Փարաւոնի ձեռքը տաս . միայն թէ՛ ըսաւ՝ քեզի կ'աղաչեմ՝ որ՝ ան ատենը իս յիշես Փարաւոնի առջևը՝ ու աս բան տէս խաղրսես, որ ես յանցանք մը չըրած՝ իս հոս բերեր դեր կէն . » : Ատքը մատակարարն ալ տեսնելով որ Հօլմէփ յաջող մեկնեց տակառապետին երազը, ինքն ալ իրենը պատմեց . « Աս ալ, ըսաւ, տեսայ որ՝ իրեք բարակ ալիւրի աման գլխուս վրայ դրած ունէի . և պինտ վրայի ամանին մէջը որ Փարաւոնի ազնիւ կերակուրները կային՝ թրուչունները կու գային անկէց կ'ուտէին . » : Ասոր մեկնութիւնն ալ այսպէս տուաւ Հօլմէփ . « Իրեք ամանները, ըսաւ՝ իրեք օր կը ցրցունէ, որ իրեք օրէն ետեւ քու գլուխդ Փարաւոն պիտի կտրէ, ու քեզ կախէ . և անկէց թռչունները պիտոր գան մարմինդ ուտեն . » : Արքոր իրեք օրը եղաւ՝ ամէն բան Հօլմէփայ ըսածին պէս կատարուեցաւ . ինչու որ՝ Փարաւոն ան օրը իր ծննդեան տարեդարձին սեղան ըրաւ, և ան ուրախութեան մէջը աս երկուքս ալ յիշեց . տակառապետը նորէն իր պաշտօնին վրայ հանեց, ու մատակարարը կախել տուաւ : Բայց տակառապետը Հօլմէփը չի յիշեց՝ Հօլմէփայ ըսածը ան ատենը մոռցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Յովսէփի փարաւոնի կրագները մեկնելով բանտէն կը խալըսի , և խիտեւորեալ կը նստնի :

Աժ աշխարհի 2289 : (Եփեսոս . ԻԵՆ 1)

Անկէց երկու տարիէն ետև Փարաւոն թազաւորը ասանկ երազ տեսաւ որ՝ իբր թէ ինքը գետին (այսինքն չային) քովը կեցեր էր , ու գետէն եօթը դէր աղուոր մատղաշ կովեր ելեր՝ ան տեղուանքը կ'արծէին . ետքը անոնց ետևէն նորէն եօթը կով ալ ելան ան գետէն՝ խիտ անշնորհք քաշուած վատուժ , և ասոնք ալ հոն արծէնինի՝ դացին ան առջի եօթը աղէկ կովերը կերան : Այսոր վրայ արթնցաւ Փարաւոն՝ ու մէյ մ'ալ քնացաւ տեսաւ որ մէկ ցորենի բունէն եօթը լեցուն աղուոր ցորենի գլուխներ բուսան . ու անոր քովէն մէյ մ'ալ նորէն եօթը ցորենի գլուխներ ելան՝ չոր ու ցամաք . և աս ետքինները՝ ան առջի աղէկները կ'լեցին : Այսքոր առտու եղաւ՝ Փարաւոն աս երազներուս վրայ շիտեւելով տակնուվրայ եղած՝ շուտ մը հրամայեց առջևը կանչել տուաւ բոլոր Ազգապետսի կարգացողները՝ որ աս բանս իրեն մեկնէն ըսէն : Անոնցմէ երբոր մարդ մը չդտնուեցաւ որ կարող ըլլար Փարաւոնի երազը մեկնել , ան առտենը յանկարծակի տակաւապետին միտքը ինկաւ : Յովսէփը , ուստի սկսաւ Փարաւոնի պատմել թէ՛ անիկայ ինչպէս ատենով իրեն ու մատակարարին բանտին մէջը տեսած երազները աղէկ մեկներ էր . ան առտենը Փարաւոն ալ հրամայեց որ Յովսէփը բանտէն հանեն իր քովը

բերեն : Անանկ Յովսէփ վրան գլուխը մար-
 բած՝ նոր լաթեր հագած Փարաւոնի առջևը
 ելաւ , (որ ան առենը ալ երեւուն տարուան
 կտրիճ էր եղեր) , ու տեղն ՚ի տեղը սխաւ իրեն
 մեկնել ան երազները . « Աստուած , ըսաւ , ինչ
 որ ետքը առենով ընելու է նե՛՛ առ երազնե-
 ըովը քեզի յայտնեց , որ երկուքն ալ մէկ բանի
 վրայ են . ան եօթը աղուոր մատղաշ կովերը ,
 և եօթը լեցուն ցորենի գլուխները՝ եօթը ա-
 ուատուածեան (այսինքն պոլլուխի) տարիներ կը
 ցուցունեն , և մէկալ եօթը քաշուած կովերը
 ու ցամաք ցորենները՝ եօթը սովի (այսինքն խրթ-
 լլիսի) տարիներ են , որ առջի առատուածեան ե-
 տեւն պիտի դան : Աւստի , ըսաւ , քեզի մէկ ի-
 մաստուն խելացի մարդ մը գտի՛ր՝ որ աս բանիս
 վերահեցու զնես , որ ան եօթը առատուածեան
 տարիներուն բարիքը ժողովէ՛ ետեւէ եկած սովին
 առենին պահէ , որ ժողովուրդը անօթուածենէն
 ջարդուի , : Ետ հաւնեցաւ Փարաւոն աս
 Յովսէփայ տուած մեկնութեանը , ու միտքը
 աղէկ պառկեցաւ ըսածին . ուստի ինքն ալ Յով-
 սէփայ դարձաւ ըսաւ որ՝ քեզմէ ուրիշ ո՞վ կայ
 աւելի խոհեմ և իմաստուն , որ աս Աստուծոյ
 քեզի յայտնած բանը կատարէ . անոր համար
 ես ալ հինն քեզ իշխան և վերահեցու կը դը-
 նեմ իմ տանս և իմ երկրիս վրայ , որ բոլոր Աշ-
 դիպատացւոյ ժողովուրդը քու բերանդ նային՝
 քեզի հնազանդին , անանկ որ՝ ես միայն ակն-
 ոսկս (կամ թախտովս) քեզմէ վեր նստիմ , : Ա-
 սանկ ըսելով Փարաւոն՝ իր մատեն հանեց թա-
 դաւորական մատնին Յովսէփայ մատը դրաւ ,
 ու իրեն իշխանական կապայ հագցուց , ոսկիէ
 շղթայ վիզը ձգեց և իր երկրորդ կտրքը (այս-

ինքն գոչին) նստեցուցած, հրամայեց որ այն պէս փառաւորութեամբ բոլոր քաղաքը պարտցունեն՝ առջևէն կանչելով՝ որ ամէնք զինքը Ազխատոսի տէր ճանչնան : Եւսկէ ՚ի զատ՝ Յովսէփայ անունն ալ փոխեց՝ եզխատացիերէն՝ Փրստմթումփանէ դրաւ, որ կը նշանակէ՝ Փրկիչ աշխարհի . ու ետքը մէկ մեծ իշխանի մը աղջիկ ալ Եսանէթ անունով՝ Յովսէփայ տուաւ հետը կարգեց, որ անկէ երկու տղայ եղաւ՝ մէկին աւունը Սանասէ՝ ու մէկալինը Ափրեմ : Եւսպէս որ եղաւ, ան առատութեան տարիները Յովսէփ ելաւ բոլոր Ազխատացուոց երկիրները պարտեցաւ շատ ցորեն զիզեց պահեց, այնչափ որ՝ երբոր ետևէն սովի տարիները եկաւ նէ՝ անով չէ թէ միայն բոլոր Ազխատացիները՝ հապա նաև ուրիշ մծտաւոր երկիրներուն մարդիկն ալ կշտացուց, որ չորս դիէն Ազխատոս կը թափէին կերակուր գանսելու : Եւսև ասով եւեթը շատ շահ ըրաւ Յովսէփի Փարաւոնի և թագաւորական գանձին (այսինքն խազնէին) . ինչու որ ալ ստատիկ սովէն ժողովուրդը չկրնալով հացի ստակ հասցունել, ինչ որ ունէին՝ դետին ըլլայ անասուն ըլլայ, և ետքը նաև իրենց անձերնին՝ գերիի պէս ստրկի տեղ թագաւորին ծախեցին, որ ցորեն առնեն՝ անով ապրին :

Գ Լ Ո Խ Խ Ի .

Յովսէփայ եղբայրները սոյիև պատճառովը իրեն որ
կը դիմեն , Յովսէփ գանուեր կը փորձէ :

ՄՏ աշխարհի 2297 : (Նճնգ . ԽԲ . ԽԳ :)

Ազխատուի սովը ինչուան Վանանացուոց եր-
կիրը հասնելով , Յակոբ նահապետը որ իր զաւ-
կըներովը հոն կը բնակէր , ինքն ալ սկսաւ նեղու-
թիւն քաշել . և լսելով որ Ազխատացուոց եր-
կիրը ցորեն կը ծախուի , իրեն տասը տղաքը մէ-
կէն Ազխատու խրկեց , որ անկէց երթան ցորեն
բերեն . միայն պինտ պղտի տղան Վենիամինը՝
որ Յովսէփայ մէկ մօրէ եղբայրն էր , Յակոբ
քովը պահեց հետերնին չթողուց , որ չլլայ թէ
երթայ նէ՝ ըսաւ , անոր ալ փորձանք մը հան-
դըպի : Արքոր ասոնք Ազխատու եկան և Յով-
սէփայ առջևը ելան երկրպագութիւն ըրին՝ որ
իրմէ ցորեն ուզեն , չճանչցան զինքը . բայց Յով-
սէփ զանոնք տեսնելուն պէս շուտ մը ճանչցաւ և
միտքը ինկաւ իր երագները . և առջի բերանը ա-
ռանց նշան մը ցոյց տարու՝ օտար մարդու պէս
սկսաւ խտուծեամբ (այսինքն սերթ սերթ)
հետերնին երթալ . “ Կուք , ըսաւ , ուսկից կու
գաք . կ'երևայ թէ դուք լրտես (այսինքն չաշուտ)
էք՝ որ եկեր էք աս տեղուանքս նայիլ տեսնել , ” :
Անոնք ալ “ Վա՛սա լիցի , տէր , ըսին . մենք քու
ծառաղ ենք՝ որ Վանանացուոց երկրէն եկանք
ցորեն գներու . մենք ամէնս մէկ մարդու զտակ
ենք , տասուերկու եղբայր ենք , պինտ պղտիկը
հօրերնուս քոյն է , ու մէկան ալ կորսուած
է , ” : Յովսէփ նորէն սիրտը ամուր բռնելով

իրենց սրտատախտան տուաւ . “ Ահա ատ խօսքերնէդ կ'երեցնէք որ դուք լրտես էք . ուստի ես ձեր ըսածին ճշմարտութիւնը փորձելու համար ձեզ չեմ' թողուր որ երթաք, ինչուան որ ան ձեր ըսած պզտի եղբայրնիդ ալ առջևս չգայ նէ ” : Մտանկ ըսելով՝ բռնեց ամէնը բանտը դրաւ . և իրեք օրէն ետե՛ իբր թէ վրանին խղճալով բանտէն հանեց զիրենք , ու հրամայեց որ միայն մէկերնին մնայ , մէկալոննք երթան ցորեննին տանին . և մէյ մ'ալ դառնալու որ ըլլան նէ ան պզտի եղբայրնին ալ առնեն հետ բերեն , չէ նէ , ըսաւ , զիտնաք որ ձեզ կը սպաննենմ : Մնա տակնը տասը եղբայրներն ալ սկսան մէջերնին մէկմէկու ըսել . “ Իրաւ որ արժանապէս մենք աս նեղութիւնը կը բաշենք ան մեր եղբօրը ըրածնուս հատար , երբոր ան ողորմելին կ'աղաչէր մեզի՝ որ իրեն խնայենք , ու մենք մտիկ չէինք ըներ ” : Ուրբէնն ալ դարձաւ ըսաւ . “ Այս ձեզի չէի ըսեր որ տղին արիւնը մի մանէք , ու դուք ինծի մտիկ չըրիք . ահա հիմա անոր արիւնը մեզմէ կ'ուզուի կոր ” : Մն բաներս կը խօսէին մէջերնին՝ ու չէին գիտեր որ Հօլսէփ կը հասկընայ կ'իմանայ . ինչու որ ինքը իր հայրենական Երբայեցուց լեզուն անոնցմէ պահելով՝ միշտ թարգմանով (այսինքն թէրձիմանով) կը խօսէր հետերնին : Հօլսէփ երբոր աս բաներս լսեց , ալ սիրտը լեցուեղն չղիմացաւ , ու անոնց քովէն զատուեցաւ որ երթայ մինաւոր լայ . ետքը նորէն քովերնին եկաւ հրամայեց որ անոնցմէ Շմաւոն ըսածը բռնեն կապեն , որ հոն մնայ ինչուան մէկալոննք դառնան . և իրենց ամանները ցորենով լեցրնեղն ետե , զաղտուկ ապրսպրեց իր ծառաներուն որ՝ անոնց տուած ցորենին

զինք ստակը ամէն մէկունը իրենց ամանին մէջը
 դնեն՝ անանկ կապեն . անկէ՛ ՚ի զատ ուրիշ ճամ-
 բու համար կերակուր ալ տուաւ իրենց՝ ու ա-
 նանկ ճամբեց : Ընծիք ալ միամտութեամբ ան
 ցորենը իրենց իշերուն վրայ բեռցուցած՝ երբոր
 եկան մէկ իջևան մը (այսինքն խանախ մը) հա-
 սան , մէկերնին արձրկեց իր քուրձը (այսինքն
 չուվալը) որ իշուն կերակուր տայ , ու տեսնելով
 որ իր բերած ստակը քուրձին բերանը դրած է՝
 զարմացաւ . և ան որ տեսան՝ ամէնքն ալ շիտ
 թեցան՝ ու կ'ըսէին թէ Ըս Ըստուծոյ բանն է :
 Ետքը երբոր իրենց տունը հասան՝ սկսան
 տեղն ՚ի տեղը Եզխպտոս իրենց գլխէն անցած-
 ները հօրերնուն պատմել . և հոն մէկապէս ալ
 իրենց ցօրենները պարպելու ատենը երբոր տե-
 սան որ ամէն մէկուն տարած ստակը ծրարած
 իր քուրձին մէջը դրած էր , ան տեղը ամենուն
 սիրտը սաստիկ վախ մը ինկաւ՝ չէին գիտեր ինչ
 ըսեն : Ըն ժամանակը Յակոբ ծերունին ալ աս
 բաներս լսելով ու տեսնելով , սկսաւ երած սրբ-
 տով ախ ընելով անոնց ըսել . « Իս զաւկընեքէս
 զրկեցիք . Յովսէփը չկայ , Ե մաւսնը չկայ , ու
 հիմա Բենիամինս ալ կ'ուզէք խամէ առնել . աս
 ամէն խեղձութիւնները իմ վրաս մի կու գան » :
 Ուրբեքնը դարձաւ իրեն ըսաւ . « Իմ երկու տը-
 զաս սպաննէ՛ թէ որ Բենիամինը քեզի չդարձը-
 նեմ բերեմ նէ , դուն միայն թէ իմ ձեռքս
 տաս » : « Ըն , ըսաւ Յակոբ՝ չըլլար , իմ որդիս
 ձեզի հետ գալու չէ . ասոր եղբայրը մեռած է ,
 աս միայն մնացեր է Ուաբելի բերած տղոցմէ .
 թէ որ աս ալ մէկ փորձանքի մը հանգրուի նէ ,
 անատենը իմ ծերութիւնս անմխիթար տրտ-
 մութեամբ գերեզմանը կը գնէք » : Բանը ա-

ասանկ մնաց ինչուան որ հատցընելու եղան ան
 բերած ցորեննին . ետքը սովը օրէ օր աւելի որ
 կոխեց, Յակօբայ ձարը հատաւ՝ տղոցը ըսաւ որ
 նորէն երթան Ազխատու ցորեն բերեն : Յու-
 դայ ալ դարձաւ, «Վիտնաս, ըսաւ, որ ան տեղի
 իշխանը մեր հետ ասանկ խօսք դրեր ըսեր է՝ որ
 մէյ մ՝ալ իմ երեսս չէք տեսներ ինչուան որ ձեր
 պզտի եղբայրը հետերնիդ չբերէք . ուստի թէ
 որ անիկայ հետերնիս չտաս նէ՝ մենք չենք եր-
 թար » : Յակօբ նորէն ըսաց . «Այ ինչ վայ
 բերիք վրաս . ինչո՞ւ անոր զուրցէք որ դուք ուրիշ
 եղբայր ալ ունիք » : Անոնք ալ պատասխան
 տուին թէ՝ «Հապա ինչ ընէինք՝ որ մեզի մէկիկ
 մէկիկ մեր ազգը սկսաւ հարցընել, ըսել թէ՝
 հարերնիդ ո՞ղջ է մի, ուրիշ եղբայր ալ ունիք
 մի . մենք ալ ինչ ընենք՝ իրեն պատմեցինք . ի՞վ
 գիտէր որ մեզի պիտոր ըսեր թէ՝ ան ձեր եղ-
 բայրը բերէք » : Ատքը Յուդա նորէն մէջ մը-
 տաւ, ու ինքը երաշխաւոր (այսինքն քէֆիլ)
 ըլլալով խորով Յակօբայ ձեռքէն տղան փրցուց
 որ հետը տանի . և անիէ՛ ի դատ Յակօբ ըսաց
 որ՝ աս իրենց երկրի բերքերէն ընծայ ալ առնեն
 տանին ան իշխանին . և ան էտ դարձած ցորենի
 ստակն ալ հետերնին առնեն . անանկ Յակօբ
 վրանին օրհնէնք կարդալով՝ ձամբայ դբաւ որ
 երթան :

Գ Լ Ո Ի Խ Ի Ա .

Յովսէփ իր եղբայրները քիչ մըն ալ փորձեցին կռու-
 զիները անոնց կը յայտնէ :

ԱՄ աշխարհի 2237 : (Ծանօգ . ԻԴ . ԻԵ .)

Երբոր աւ Յակոբայ որդիքը Մենիամինը հե-
 տերնին առած Ազխպտոս հասան , Յովսէփ հրա-
 մայեց իր տանը վերահեցուին՝ (այսինքն վէրիլ
 խարձին) որ առնէ անոնք իր տունը տարի , ու
 սեղան պատրաստէ՝ որ ետքը ինքն ալ դայ մէկ-
 տեղ հաց ուտեն : Մայց եղբայրները ան ատենը
 կարծիք երթալով թէ ան ստրկին համար տու-
 նը կը տանի՝ որ դատաստաննին կտրէ , սկսան
 ան մարդուն սրտովը թէ՛ ինչպէս ան ստանի-
 քը իրենք առանց գիտնալու ամէն մարդ իրեն
 տմանին մէջը գտաւ , “ Աւ հիմա , ըսին , անկէ
 ՚ի զատ ուրիշ ստակ ալ բերեր ենք որ նորէն ցո-
 րեն առնենք տանինք , ” : Սարդը սիրտ տուաւ ի-
 րենց ըսաւ թէ՛ “ Ըստ Մատուծոյ բանն է որ ձեր
 տուած ստակը ձեզի դարձուց , ատոր վրայ հոգ
 մ՛ընէք , ես առնելիքս առեր եմ , ” . ու ասանկ
 ըսելով տուն տարաւ հանգչեցուց զիրենք , նա և
 Շմառն եղբայրնին ալ արձրիկեց քովերնին բե-
 ըաւ : Ետքը Յովսէփ տուն եկաւ , սիրով ըն-
 դունեց իրենց բերած ընծաները , հարցուց իմա-
 ցաւ հօրերնուն որպիսութիւնը , ու ըսաւ թէ
 Մատուծմէ օրհնած մարդ մըն է ան . ետեւ Մե-
 նիամինի վրան նայելով , որ իր հարազատ եղ-
 բայրն էր , հարցուց թէ՛ “ Ըս է մի ձեր ըսած
 պզտի եղբայրը . Մատուած քեզի ողորմի , որդի , ”
 ըսաւ . և ան տեղը Յովսէփայ սիրտը անանկ լե-

ցուեցաւ, աղիբը կտրտեցան, որ ալ արցունքը
 չկրցաւ բռնել, ձգեց զիրենք՝ անդին մինաւոր
 տեղ մը գնաց որ լայ: Ատե կերակուրին ատենն
 որ եկաւ՝ ամէնը մէկտեղ կարգով իր հետը հաց
 նստեցուց, ու սեղանին վրայ աւելի պատիւ ցու-
 ցուց Վենիամինի: Ասանկ ուրախ սրտով ուտել
 խմելէն ետեւ՝ Հովսէփ վերակեցուն ապսպրեց
 որ իրենց ցորենին ամանները աղէկ մը լեցընէ,
 ու նորէն իրեն տուած ցորենին ստակը ամէն
 մէկուն քուրձին բերանը դնէ կապէ. նաև աս
 ալ ըսաւ որ իր արծրթէ գաւաթը (կամ թասը)
 Վենիամինին ամանին մէջը անոր ստրկին հետը
 դնէ: Այսու կերպով առտուանց կանուխ ա-
 մէնքը իրենց բեռներովն որ ճամբեց՝ ու ելան
 գացին, քիչ մը անցնելէն ետքը՝ որ քաղքէն շատ
 չէին հեռացեր՝ Հովսէփ ան վերակեցուն իրենց
 ետեւէն խրկեց՝ որ երթայ բռնէ անոնք ու երես
 նին տայ. «Վուր ատանկ չար մի կը հատուցա-
 նէք ձեր բարերարին գէմ, որ իմ տիրոջ արծը-
 թէ գաւաթը գողցեր էք»:

Այ բանս երբոր լսեցին անոնք, տակնուվրայ
 եղան՝ «Քան լիցի, ըսին, մենք այդպէս բան
 չենք բրած ու չենք գիտեր. Բնչպէս կարելի է
 որ մենք արծաթ կամ ոսկի գողնանք քու տիրոջ
 մէջ որ մեր ամանին մէջը գտած ստակնիս ալ նո-
 բէն ձեզի գարձուցինք բերինք»: Այ աս գողու-
 թեանս վրայ ամենեւին կարծիք չունենալով աս ալ
 համարձակ իրեն ըսին թէ՝ «Մեր մէջը որուն
 քովէն որ ելլէ ան գաւաթը՝ զինքը սպաննեցէք,
 և մենք ամենքս գերի ըլլանք ան իշխանին», և
 տանկ ըսելով շուտ մը բեռերնին վար ինջեցուցին
 արձրկեցին: Վերակեցուն ալ կարգով մէկիկ մէ-
 կիկ նայիլ բնատուրնին ան գաւաթը՝ եկաւ Վե-

Նիսիամինին ամանին մէջէն որ հանեց, ան տեղը ա-
մենքը պաղեցան մնացին, ու սաստիկ յուսահա-
տու թեւէն վրայի լաթերնին սկսան պատրուտել,
և անանկ գլուխնին կախած՝ հետը քաղաքը դար-
ձան :

Արքոր ասոնք եկան Յովսէփայ առջևը ելան,
ու ան ալ սկսաւ իրենց ըսել թէ՛ Մտ ինչ է
ձեր ըրածը, Յուդայ շուտ մը գնաց ոտքը ինկաւ
ու ըսաւ. «Մենք ալ պատասխան չունինք տա-
լու՝ խօսքերնիս հատաւ, ինչ ըսենք որ խալը-
սինք, Մտուած մեղքերնիս երեսնիս տուաւ .
ահա ամենքս հրամանացդ գերին ենք. » : Յովսէփ
ալ « Չէ, ասանկ չէ, ըսաւ, հապա որուն քովէն
որ գաւաթը ելաւ՝ ան պիտոր իմ գերիս ըլլայ .
ու դուք ազատ եղիք՝ ձեր հօրը քով գացէք. » :
Մն ատենը աս խօսքիս վրայ քիչ մը սիրտ առաւ,
ու իրմէ թողութիւն ուզելով սկսաւ կարգով
պատմել թէ՛ ինչպէ՛ս իրենց հօրը ծերու թեան
սիրական զաւակն է Մենիամինը, և ինքը որչափ
գթուարութիւն քաշեր է՝ ինչուան որ տղան ան
ծերուն ձեռքէն փրցուցեր բերեր է, որ ըսաւ՝
չէր թողուր կ'ըսէր թէ՛ Սաքէլ կնիկս ինձի
միայն երկու զաւակ բերաւ . մէկը քովէս բաժ-
նուեցաւ, որ դուք ըսիք թէ անիկայ զազանը
բզրբտեց կերաւ, որ ինչուան հիմայ մէյ մ'ալ
անիկայ չտեսայ . հիմայ թէ որ աս ալ քովէս առ-
նէք՝ երթայ ճամբան հիւրնգնայ՝ իրեն փորձանք
մը հանդիպելու ըլլայ նէ՛ իս կը մեռցնէք. « Մ-
նոր համար, ըսաւ Յուդայ, ես հօրս առջևը աս
տղին երաշխաւոր (այսինքն քէֆիլ) եղայ, ուս-
տի անոր տեղը ես գերի կ'ըլլամ հրամանացդ, որ
ինքը ազատուի հօրը քով երթայ . թէ չէ՛ ինչ
երեսով ես հօրս առջևը պիտի ելլեմ, ու անոր
կսկիծը տեսնեմ. » :

Ըն առե՛նք Յովսէփ ալ չկրցաւ համբերել ինքր զինքը բռնել . ուստի օտար մարդիկը քովէն դուրս հանել տուաւ , և միայն իր տասնըմէկ եղբարցը հետ մնալով՝ մէկէն լալով կանչեց ըսաւ . “ Ես Յովսէփն եմ , իրաւցընէ իմ հայրս ո՞ղջ է մի ” : Եղբայրներն որ աս լսեցին՝ ան տեղը պաղեցան մնացին , բերաննին չէր բացուեր : Յովսէփ նորէն զիրենք քովը մօտ կանչեց ու ըսաւ . “ Ես Յովսէփ ձեր եղբայրն եմ , որ դուք իս ան վաճառականներուն ծախեցիք՝ որ անոնք ալ առին հոս Եգիպտոս բերին . բայց մի վախնաք ան ձեր ըրածին համար . Ըստուած ասանկ կարգաւորեց որ ես աս ճամբովս հոս դամ , իշխանն ու տէր ըլլամ Եգիպտոսի , և աս սովիս ատենը ձեզ կերակրեմ , որ մեր ազգը աշխարհքիս վրայէն չհատնի . և հիմա սովին երկրորդ տարին է , հինգ տարի ալ կ’ուզէ որ եօթը տարի ըլլայ ” : Ընանկ սիրով հետերնին դրկուեւէն պազտուեւէն ետքը՝ ապսպրեց որ շուտով երթան իր հօրը գրուցեն , որ Ըստուած՝ Յովսէփը իր որդին Եգիպտացւոց վրայ իշխան է ըրեր . ու պատմեն իրեն փառքը , մեծութիւն , և բսեն որ չուշանայ՝ ինքն ալ իր տնով տեղովը ելլէ Եգիպտոս դայ , որ զինքը աս սովիս ատենը կերակրեմ : Ըս Յովսէփայ եղբայրներուն յայտնուիլը Փարաւոն թագաւորն ալ երբոր իմացաւ՝ շատ ուրախացաւ . ու ինքն ալ Յովսէփայ ապսպրեց որ՝ անոնց սայլեր (այտինքն առապաներ) , և ուրիշ ճամբու պաշարներ տայ , որ երթան հայրերնին բոլոր տնով տեղովը Եգիպտոս բերեն . Յովսէփ ալ Փարաւոնի ըսածին պէս անոնց պիտանաւորութիւնը ազէկ մը հողալով , ու սիրտ տալով իրենց ճամբայ դրաւ , որ Քանանացւոց երկիրը դացին :

Գ Լ Ո Ի Խ Ի Ք .

Յակոբ բոլոր ընտանիքովը կ'երկէ Եղիպտոսացոց երկիրը
կ'երթայ . և նոն իր զակիրները օրհնելով բարի
ձերարեամբ կը վախճանի :

ԱՄ աշխարհի 2298 . 2315 . (Մանգ . ԽԶ . ԽԷ . ԽԸ . ԽԹ .)

Յակոբայ տանըմէկ օրդերը մէկէն կըբոր
ուրախութեամբ եկան իրեն ըսին թէ՛ Յովսէփ
տղադ ողջ է եղեր , և ինքն է Ազգիպտոսի իշ-
խանը , Յակոբ սաստիկ շփոթեցաւ պաղեցաւ
մնաց . առջի բերանը չհաւտաց , ինչուան որ տեղն
ի տեղը նորէն պատմեցին , ցուցուցին սայլերը և
ուրիշ ճամբու պատրաստութիւնները , որ զինքը
տանելու համար Յովսէփ անդիէն հետերնին
խրկեր էր : Ըն ժամանակը Յակոբայ սիրան ալ
վառուեցաւ ու ըսաւ . « Ըսկէց աւելի ալ ինչ
մեծ բարիք կրնամ ունենալ՝ որ գիտնամ թէ իմ
Յովսէփս ողջ է . անանկ է նէ՛ սիրով կ'երթամ
որ չմեռած՝ տեսնեմ զինքը » . ուստի ամէն բա-
ները պատրաստեց , ու իր աղաքներովն ու թոռ-
ներովը բոլորը եօթանասուներհինգ հոգի ճամ-
բայ ելաւ : Ըայց աս երթալուս վրայ Յակոբ
քիչ մը տարակուսանքի մէջ էր . ինչու որ՝ ան
իրեն կեցած Քանանացւոց երկիրը՝ Ըստուած
Ըբրահամ , Իսահակայ և իրեն ալ միշտ խոս-
տացեր էր որ իրենց աղգին տայ , ու հոն մնան
չափնան . ուստի կըբոր եկաւ Սքհոր երգման ը-
սած տեղը հասաւ , Ըստուծոյ ուխտ ըրաւ զոհ
մատուց որ զինքը լուսաւորէ : Ըստուած ալ ան
գիշերը երեցաւ իրեն , ըսաւ որ՝ չվախնայ Ա-
զգիպտոս երթայ , որ Յովսէփ մահուան ատենը

իր աշուրները դոցէ . նաև աս ալ խոստացաւ որ
 հոն իր ազգը աճեցընէ շատցընէ , ու ետքը նո-
 ընէն զիրենք Ազգիպատուէն հանէ : Ասկէ՛ աւելի
 սիրտ առաւ Հակօբ , ու ճամբան առաջ երթա-
 լով երբոր Ազգիպատուի մօտ Վեսեմ ըսած երկի-
 րը հասաւ , ան տեղը Հովսէփ ալ գէ՛մը եկաւ .
 ու իր հայրը տեսնելուն պէս՝ դնայ լալով վիզը
 սրբլուեցաւ . հայրն ալ զինքը գրկելով ըսաւ .
 “ Այսուհետև մեռնիմ երթամ , որդի , որ քեզ
 մէյ մ՛ալ ողջ տեսայ ” : Ատքը Հովսէփ տուն
 տուաւ սորվեցուց իր հօրը և եղբայրներուն՝ թէ
 Փարաւոնի առջևը ինչ պիտոր ըսեն , որ Ազգիպ-
 տացիներէն զատ իրենք ան Վեսեմ երկիրը
 բնակին , որ իրենց խիստ յարմար տեղ էր . ու
 հետը մէյտեղ առաւ իր Հակօբ հայրը՝ հինգ
 հօգի ալ եղբայրներէն , անանկ Փարաւոնի առ-
 ջևը հանեց : Փարաւոն ալ շատ ուրախացաւ
 վրանին , և սիրով Հակօբ ծերունիին որպիսու-
 թիւնը հարցընելէն ետե՛ կըբոր խմացաւ որ ա-
 նոր տղոցը արուեստը հովուութիւն է , Հովսէ-
 փայ ուզածին պէս՝ իրեն ապսպրեց որ՝ Վեսեմ
 երկիրը անոնց տայ հոն բնակին , (որ ան Ազգիպ-
 տացւոց երկրին աւելի պարարտ կողմն էր) .
 նաև ըսաւ որ թագաւորական ոչխարներուն վրայ
 ալ անոնցմէ վերակեցու դնէ : Հովսէփ ալ Վե-
 սեմի երկիրը տեղաւորեց զանոնք . և ան սովին
 մնացած հինգ տարին ալ իր հօրը տունը ինքը
 հօգաց կերակրեց՝ որ պակասութիւն մը չքաշե-
 ցին :

Այ տեղս Հակօբ նահապետը տասներօթը
 տարի ալ ապրելէն ետքը երբոր ալ խիստ ծերա-
 ցաւ , Հովսէփը քովը կանչեց , ու երգուրնցընե-
 լով ապրսպրեց որ զինքը հոն Ազգիպտացւոց եր-

կիրը չթաղէ, հասրա առնէ Վանանացւոց երկիրը տանի իրեն հայրենական գերեզմանը դնէ : Ընկէ ետե մէկ հեղ մըն ալ Յովսէփ իր երկու որդիքը Սանասէ, ու Լփրեմ առաւ ծերունի հօրը քով բերաւ, որ իր վերջի օրհնութիւնը տայ իրենց : Յակօբ ալ գիրկը առաւ պագաւաս տղաքը, ու եւելօք վրանին մխիթարուելով՝ « Փառք Եստուծոյ, ըսաւ Յովսէփայ, որ իս չէ թէ միայն քու տեսոյդ կարօտ չթողուց, հասպա քու զաւակդ ալ ինձի ցուցուց, » : Լտքը Յովսէփ սաս տղաքը կարգով Յակօբայ առջևն որ չօքեցուց, այսինքն աջ ձեռքին դիէն Սանասէն՝ որ անդրանիկ զաւակն էր, ու ձախը՝ Լփրեմը որ պղտիկն էր, որ անանկ ձեռուքները վրանին դրած օրհնէ զիրենք, Յակօբ աստուածային կարգաւորութեամբ՝ աջ ձեռքը երկնցուց Լփրեմի վրայ դրաւ, ու ձախը Սանասէին վրայ՝ այնպէս իր օրհնէնքները տուաւ : Լաւ ան ատենը Յովսէփ ալ զաս գիպուածով (կամ թէ վէքէլի) բան մը կարծելով թէպէտ փոխել շտկել ուզեց, բայց Յակօբ մտիկ չբրաւ, հասրա անանկ Լփրեմը Սանասէէն վեր դասելով, Յովսէփայ սիրոյն՝ երկուքն ալ իր հարազատ որդւոցը կարգին մէջը դրաւ, որ անոնց հետը մէյտեղ իրենք ալ առանձին բաժին առնեն իր թողած ժառանգութենէն. ու Սիկիմը մէկալ եղբայրներէն ՚ի զատ՝ մասնաւորապէս Յովսէփայ տուաւ :

Լաւ ասկէ ետքը Յակօբ նահապետը ալ բուն իր վախճանելուն ատենը տասուերկու որդիքն ալ մէկէն առջևը կանչել տուաւ, ու Սուբէն անդրանիկէն սկսած ամէն մէկուն ցեղին վրայ զատ մարգարէութիւններ խօսեցաւ, որ ատենով պիտի կատարուէին : Ըր ըսած մարգարէու-

Թիւններու մէջը Յուդայինը շատ երևելի է, որ յայտնի կը գուշակէ թէ ատենով անոր ցեղին մէջը պիտոր հաստատուի Խորայեւացոց թագաւորութիւնը, և ինչուան Արեւիային գաղութար պիտի դիմանայ, ինչպէս որ եղաւ: Ետե իր վերջի հայրական օրհնութիւնը իրենց տալով, և նորէն կտակ ընելով որ մարմինը Վանանացոց երկիրը իր հայրենական գերեզմանը տանին թաղէն, այնպէս բարի ծերութեամբ հարիւր քառասունութը տարուան վախճանեցաւ:

Գ. Լ. ՈՒԽ Ի Գ.

Յովսէփ իր նայրը կը բացէ, և եղբայրներուն բողոքին տակէն ետե ինքն ալ կը վախճանի:

Աճ աշխարհի 2315 • 2369 : (Ծննդ. Ծ.)

Երբոր Յակոբ վախճանեցաւ, Յովսէփ Ազգիպտացոց սովորութեանը պէս՝ զմրուել տուաւ անոր մարմինը, (ինչպէս որ մեծամեծ մարդիկը սրատուելու համար կ'ընէին), ու եօթանասուն օր անոր սուգը կատարելէն ետե՝ Փարաոն թագաւորին հրամանովը՝ իր բոլոր եղբայրները մէյտեղ, ու շատ մարդիկ ալ Ազգիպտոսի իշխաններէն հետերնին՝ կառքերով և ձիաւորներով փառաւոր հանդէսով առաւ Վանանացոց երկիրը տարաւ, իրեն հայրենական գերեզմանը թաղեց, ինչպէս Յակոբ իրեն կտակ ըրեր էր: Այս փառաւոր թաղումն որ ըրնցաւ, և ամէնքը նորէն Ազգիպտոս տներնին դարձան, ան ատենը Յովսէփայ եղբայրները վախցան որ՝ չըլլայ թէ Յովսէփ ան անցած բաներուն համար վրանին ռիս պահելով՝ հօրը մեռնելէն ետե ի-

րենցմէ վրէժը (այսինքն էօձը) առնէ . ուստի
 եկան Յովսէփայ ըսին թէ՛ « Հայրերնիս մեռնե-
 լէն առաջ մեզի ապսպրեց որ՝ իր կողմանէ հրա-
 մանոցդ ըսենք , որ քեզի դէմ ըրած մեղքերնուս
 թողու թիւն տաս . ուստի մենք ալ որ Մտուծոյ
 ծառայքն ենք , կը խնդրենք որ մեր չարութեա-
 նը ներումն շնորհես » . և անանկ դացին Յով-
 սէփայ ոտքը ինկան , « Մտուծոյ մենք ամէնա քու
 ծառայդ ենք » , ըսին : Մտուծոյ Յովսէփայ սիր-
 տըն ալ լեցուեցաւ՝ սկսաւ լալ . ու մխիթարելով
 իրենց ըսաւ . « Մի վախնաք , ես ալ Մտուծոյ
 ծառան եմ . իրաւ որ դուք ինձի չար ընել ու-
 զեցիք , բայց Մտուծոյ ան չարը՝ ի բարին դար-
 ձուց , ինչպէս դուք ալ տեսաք , որ անհամար
 մարդիկ կերակրեցի . ուստի մի վախնաք , ասկէ
 ետե ալ ձեզ կը հոգստ ինչպէս որ մինչև հիմայ
 ըրի » : Մտուծոյ անյիշաչարութեամբ թողու-
 թիւն տալով և սրտերնին առնելով՝ ճամբեց զի-
 րենք . ու անանկ հոն ինչուան ետքը խաղաղու-
 թեամբ հանգիստ ապրեցան :

Բայց Յովսէփ հարիւրտասը տարին որ հա-
 սաւ , վախճանելու մօտ առնէնք՝ մնացած եղբայր-
 ները քովը կանչեց՝ ինքն ալ աս կտակս անոնց ը-
 րաւ , որ երբոր Մտուծոյ Իսրայելացիները՝ (ինչ-
 պէս ըսեր էր) , Ազխատուէ հանէ , ու Մտու-
 ծոյ , Իսահակայ և Յակոբայ խոստացած եր-
 կիրը տանի նէ , ան ժամանակը իր ոսկորներն ալ
 Ազխատուէ վերցընեն հետերնին մէյտեղ առնեն
 հոն տանին :





ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԼԻՅ ԵՒ ԹՈՒՈՅ ԳՐԻԵՐՈՒՆ .
ԽՐԱՅԵԼԱՅԻՈՅ ՀԱՆԴԻՊԱԾՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍ ՈՒ
ԱՆԱՊԱՏԻՆ ՃԱՄԲԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Խորայերացոց հարածուսն ու նեղուրիւնը Եգիպտացոց
ձեռքէն :

ԱՄ աշխարհի 2428 : (Ելից . Ե .)

ՅՈՒՍԻՓ նահապետին մեռնելէն ետքը՝ վաթ-
սուն տարիի չափ ալ Խորայերացիք հանդիտաւ և
խաղաղ անցընելով, օրէ օր այնչափ աճեցան շատ
ցան, որ իրենց բնակած Գեսեմ երկիրը մար-
դով լեցուեցաւ : Բայց ետեւէ ետեւ Եգիպտա-
ցոց նոր թագաւորներ նստելով՝ մէկն ալ եկաւ,
որ ինքն ալ Փարաւոն կ'ըսուէր, ասիկայ ազէկ
մը չգիտնալով և բանի տեղ չընելով Յովսեփայ
Եգիպտացոց ըրած բարիքները, երբոր տեսաւ
որ Խորայերացիք այսպէս եւելօք կը շատնան կ'ա-
ժոյնան կոր՝ վախցաւ թէ ասոնք մէկ օր մը իրեն
թշնամիներուն հետ մէկ եղած՝ իրենց զէն կը
հասցընեն . ուստի խորհուրդ ըրաւ որ Խորայե-
րացիքը շինուածքներու աշխատացընելով, և ծանր
պարտքեր վրանին հեծցուցած՝ զիրենք նեղէ ու
չարչարէ, որ ասով այնչափ շատնան չուժոյնան :

Այլ թէպէտ անանկ խիստ ու անտանելի չարչարանքով Իսրայելացիքը իրեք քաղաք շինեցին, այսինքն Փիզուֆն, Սամեսէ ու Սֆն բառաւ, բայց Փարաւոն իր միտքը դրածին չհասաւ. ինչու որ որքան Ազխատացիները Իսրայելացիքը կը տանջէին՝ անոնք աստուածային օրհնութեամբք այնչափ աւելի կը շատնային ու կը զօրանային: Ենոր համար մէկ ուրիշ բանի մ'ալ ձեռք զարկաւ Փարաւոն. երկու վարպետ դայեկներ կային որ կ'երթային Իսրայելացւոց դայեկութիւն կ'ընէին. ասոնց գաղտուկ հրամայեց որ՝ երբոր Իսրայելացւոց տղայ առնելու ըլլան՝ մանչ ծնածները շուտ մը խղզեն, և աղջիկները միայն ողջ թողուն: 'Իայեկները՝ Եստուծոյ ասը սրտերնին ըլլալով՝ չկատարեցին թագաւորին տուած հրամանը. անոր համար Եստուած ալ օրհնեց զիրենք՝ որ բաներնին կ'աջողէր, կը հարուստնային: Ատրը երբոր թագաւորը քոյր կանչեց, վրանին սրդողեցաւ, անոնք ալ ատանկ պատասխան տուին թէ՛ «. Ենչ ընենք, Աբրայեցւոց կնիկները Ազխատացւոց պէս չեն, հատրս դայեկը քոյլերնին չհասած՝ տղան կը բերեն », : Փարաւոն թագաւորը երբոր տեսաւ որ աս ճամբով ալ իր ուղածը չեղաւ, անկէ ետև յայանի հրաման հանեց որ բոլոր Իսրայելացւոց կամ Աբրայեցւոց մանչ ծնած տղաքը գետը ձգեն որ խղզուին, ու միայն աղջիկները խալըսին:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Փարսաւոնի աղջիկը՝ Մոսիսէսը գետեկէ կը խառըսէ՝ իրեն
որդեցիկը կ'տանէ :

Աժ աշխարհի 2433 : (Ելից . Բ 1)

Այս տեսններս Իսրայելացւոց աղգէն Վ Լ ին
ցեղէն՝ Ամրամ ըսուած մէկ մարդու մը մանչ
զաւակ մը եղաւ . զասիկայ տեսնելով ծնողքը
որ աղուոր տղեկ մըն է՝ մեղքընցան գետը ձգել .
բայց անանկ՝ Թագաւորական հրամանին գէմ
իւրէք ամիս զաղտուկ պահէլէն ետե՝ վախնալով
որ մէկ օր մը յանկարծ բանը դուրս ելլայ ու ի-
րենք պատիժը քաշեն , անոր համար մէկ պըր-
տուէ (այսինքն խտրէ հիւսած) սնտուկ մը առին ,
կարածիւթով (այսինքն զիֆտով) ձեփեցին ,
ու տղան մէջը դրած գոցած՝ անանկ գետին քո-
վի կողմը ձգեցին . ու տղին քոյրն ալ սիրտը
չդիմանալով քովէն չէր զատուեր՝ որ տեսնէ
Թէ ինչ կ'ըլլայ : Այն ժամանակն ալ Փարսաւոն
Թագաւորին աղջիկը իր նաժիշտներովը (այս-
ինքն խաղայեխներովը) անդին գետին քովերը
էլեր ժուռ գալնինի՝ երբոր տեսաւ աս սնտուկը ,
շուտ մը խրկեց հանել տուաւ , ու բանայ նայի
որ մէջը մէկ տղեկ մը դրած կու լայ կոր . անոր
վրայ խիստ գուժը շարժեցաւ , կուս հնաց որ
աս Աբրայեցւոց բանը ըլլայ : Տղին քոյրը ան ա-
տենը քովը մտակցաւ , « Աուզէս , ըսաւ , որ մէկ
երբայեցի կաթ տուող կնիկ մը կանչեմ որ ա-
տիկայ առնէ պահէ » . ան ալ՝ Հա՛ ըսաւ . աղ-
ջիկն ալ հնաց տղին մայրը բերաւ . ու Փարսաւոնի
աղջիկը անոր ձեռքը յանձնեց տղան , որ իր

Ճախքովը (այսինքն խարձովը) պահէ մեծցրնէ տղան : Սայրն ալ սիրով քովը առաւ պահէց, ու մեծցրնելէն ետեւ՝ նորէն տարաւ Փարաւոնի աղջկան ձեռքը տուաւ : Ինչ ալ, ինչպէս կ'ըսեն, ուրիշ զաւակ չունենալով՝ աս տղան առաւ իրեն որդեգիր (այսինքն օգուլլուխ) շինեց, և անունը Սովսէս դրաւ, որ Սքէ հանաժ ըսել է. և ան կէ ետքը վարպեաններու քով դրաւ որ Աշխատացւոյ ուսումներն ու խմաստութիւնները կարգայ սորվի :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Մովսէս ազգասիրոյրեան պատճառով Մադիանացոց կը փախչի, և մորենիին հրաշքը կը տեսնէ :

ԱՄ Երեւան 2474 . 2513 : (Երկր . Գ . Գ .)

Սովսէս երբոր մեծցաւ քառասուն տարուան մարդ եղաւ, աստուածային շնորհքով զօրանալով՝ թողուց ձգեց անհաւատ թագուհին որ դեզրութիւնը՝ և թագաւորական տունը տեղը, ու գնաց իր Իսրայելացւոց ազգին հետ կեցաւ : Ինչկէց ետեւ մէկ հեղ մը Սովսէս տեսաւ որ եգիպտացի մարդ մը մէկ երբայեցի մը բռնէր կը ծեծէր ու կը չարչարէր. աս բանիս չգիտացաւ Սովսէս, ասդիս անդին նայեցաւ որ մարդ չտեսնէ, շուտ մը վրան վազեց սպաննեց ան եգիպտացին, ու ան տեղը աւազին մէջը թաղեց : Ատքը անոր մէկալ օրը նորէն տեսաւ որ՝ երկու երբայեցի մէկմէկու հետ կռիւ կ'ընէին, Սովսէս ալ մէջ մտաւ որ հաշտեցրնէ զանոնք . «Մարդիկ ըսաւ, դուք մէյտեղ եղբայր էք, ինչո՞ւ մէկզմէկ կ'ուզէք զրկել. . . ան ատենը զրկողը Սովսէսի

երեսը վազեց ու ըսաւ . « Վեզ ո՞վ մեր վրայ
 իշխան կամ դատաւոր դրաւ . իս ալ սպաննե՞լ
 մի կ'ուզես՝ ինչպէս որ երէկ ան եզիպտացին
 սպաննեցիր » : Ըս որ լսեց Ս'ովսէս՝ զարմացաւ
 մնաց թէ ինչպէս բանը յայտնուեր է , ու ետքը
 խմանալով որ Փարաւոնի ականջն ալ հասեր է ,
 ու անոր համար զինքը կը փնտռէ որ բռնէ մեռ-
 ցնէ , Լզիպտոսէ ելաւ Ս'աղիանացւոց երկիրը
 փախաւ դնաց՝ որ Արամիւր ծովուն մէկալ զին
 կ'ըլլար՝ Սինա լեռանը մտա : Հոն մնաց , կար-
 գուեցաւ՝ Սեպտովրայ ըսուած Ս'աղիանացւոց
 իշխանին կամ քահանայապետին աղջիկը առաւ ,
 որ անկէց իրեն երկու որդի եղաւ՝ Վերսամ ու
 Լզիպազար . և քառսուն տարիի չափ ասանկ ա-
 ներոջը քով կեցած , որ Հոագուէլ կամ Հո-
 թոր կ'ըսուէր , անոր ոչխարները կ'արծէր : Ըս
 առններս թէպէտ Լզիպտոս՝ ան վերի ըսած
 Փարաւոն թագաւորը մեռաւ , բայց ետեւէն ու-
 թիշ Փարաւոն մը տեղը նստաւ՝ որ Իսրայելացւոց
 հալածանքը աւելի սաստկացուց , հոգինին բե-
 րաննին բերաւ , անանկ որ՝ ալ ճարերնին հա-
 տած՝ ան վնիս ընելով Ըստուծոյ սկսան զխեղ
 որ յիշէ իրեն ըրած խոստմունքները՝ իրենց նա-
 հապետացը Ըբրահամու , Իսահակոյ և Հակո-
 բայ , ու իտլլսէ ան ծանր դերութենէն : Լստ-
 քը Ըստուծոյ սահմանած չափն որ հասաւ՝ իր
 անհուն ողորմութեամբը Իսրայելացւոց հառա-
 չանքը լսելով՝ կամեցաւ որ Ս'ովսէսի ձեռքովը
 զանոնը Լզիպտացւոց անողորմ ծառայութենէն
 ազատէ . այսու կերպով Ս'ովսէսի երեւալով՝ և
 հետը խօսելով :

Ս'էկ որ մը Ս'ովսէս ոչխարները առած ար-
 ծելու որ հանեց , ու ելաւ ինչուան Վորբեբ լեռը

գնաց, ան տեղը յանկարծ դիմացը նայի որ՝ մէկ
 մորենի մը (այսինքն մորմենիի ծառ մը) կրակ
 կտրած կը վառէր, ու ամենեւին չէր երեր հաս-
 ներ: Ս'ովսէս երբոր քիչ մը առաջ գնաց մօտե-
 ցաւ՝ որ աս զարմանալի հրաշքս աղէկ մը տես-
 նէ, ան ատենը մորենիէն այսպիսի ձայն եկաւ
 իրեն. « Ս'ովսէս Ս'ովսէս, հոս մի գար մօտե-
 նար, կօշիկներդ ոտքէդ հանէ, ինչու որ՝ կայ-
 նած տեղդ սուրբ զեալին է, »: Ս'ովսէս ալ
 զարհուրած չէր կրնար վրան նայիլ: Ետքը աս
 ալ ըսաւ. « Ես եմ Ղստուած Ղսրրահանու,
 Իսահակայ և Յակոբայ. տեսայ իմ ժողովրդոցս
 չարչարանքը, ու ըսեցի անոնց հառաչանքը Ե-
 գիսպտացոց ձեռքէն, անոր համար եկայ որ զի-
 րենք Եգիպտոսէ խալըսեմ, ու իմ անոնց նա-
 հապեաներուն խոտացած երկիրս տանիմ զի-
 րենք, որ անանկ աղէկ է՝ որ կաթ ու մեղր կը
 բխէ. ուստի եկուր, ըսաւ, քեզ Փարաւոնի թա-
 դաւորին քովը խրկեմ՝ որ դուն իմ ժողովուրդս
 Եգիպտոսէ հանես, »: Ս'ովսէս ալ պատասխան
 տուաւ. « Տէր, ես ո՞վ եմ որ Փարաւոնի առ-
 ջըը ելլեմ, ու Իսրայելացիքը Եգիպտոսէ հա-
 նեմ, »: Ղստուած ալ ըսաւ. « Ես քու հետք
 կ'ըլլամ որ քեզի օգնեմ, »: Ս'ովսէս նորէն գար.
 ձաւ Ղստուծոյ հարցուց. « Հապա թէ ես եր-
 թամ Իսրայելացոց ըսեմ որ՝ ձեր նահապեա-
 ներուն Ղստուածը իս ձեզի խրկեց, և անոնք ալ
 հարցընէրու ըլլան թէ՛ անոր անունը ինչ է, ես
 ինչ ըսեմ, »: Ղստուած ալ իրեն պատասխան
 տուաւ. « Ես եմ Ղստուած որ էն, իմ յաւիտե-
 նական անունս աս է. ուստի այսպէս ըսէ անոնց.
 Ար էնը՝ որ ձեր նահապեաներուն Ղստուածն է
 իս ձեզի խրկեց. ասանկ գնա բանը հասկըց՝

իրեն . և անոնց խօսքի տէր մարդիկներէն հետոյ
 ան մէյտեղ Փարաւոնի առջևը ելիք ու ըսէ .
 Սէր տէր Աստուածը մեզ կը կանչէ որ իրեք օ-
 ղուան հեռու ձամբայ դէպ ՚ի անապատը եր-
 թանք , որ իրեն զոհ մատուցանենք : Վիտեմ,
 ըսաւ Աստուած , որ Փարաւոն ձեզ պիտի չթո-
 ղու , ինչուան որ չարաչար պատժեմ բոլոր Ա-
 դիպտացիները , անանկ որ՝ ետքը ակամայ թողու
 որ անկէց ելլէք . : Սոլսեսի սիրտը ասով ալ
 չհանդէսեցաւ նորէն հարցուց . “ Հապա , ըսաւ ,
 Իտրայելացիները չհաւտան թէ Աստուած ին-
 ծի աս բաներս յայտներ է , ես ան ատենը ինչ
 պիտոր ընեմ . : Աստուած ալ ըսաւ իրեն . “ Հի-
 մայ՝ ատ ձեռքդ բռնած դաւազանդ (այսինքն
 տէյնէկդ) գետինը ձգէ . : ան ալ ձգելուն պէս՝
 դաւազանը օձ մը դարձաւ . ու Սոլսէս վախնաւ
 լով՝ սկսաւ քովէն փախչիլ . Աստուած հրամայեց
 որ պոլէն բռնէ վերջնէ . և անանկ ձեռքը որ
 առաւ՝ ան օձը նորէն դաւազան եղաւ : Ատե
 մէյ մ՝ ալ իրեն հրամայեց Աստուած՝ որ ձեռքը
 ծոցը խոթէ . և Սոլսէս ալ անանկ ըրաւ , ու
 ետքը հանեց տեսաւ որ ան ձեռքը բոլոր բորո-
 տած էր . Աստուած “ Աորէն ծոցդ զիբ . : ըսաւ .
 ու դնելուն պէս՝ բորը վրայէն դնաց : “ Թէ որ ,
 ըսաւ Աստուած , ատ երկու հրաշքը առջևնին
 ընես , ու չհաւտաննէ , ետեւէն աս ալ ըրէ . գե-
 տէն ջուր ան՝ գետինը լեցուր , որ ան ջուրը տես-
 նան որ արիւն կը դառնայ . : Սոլսէս նորէն ետ
 կեցաւ , աս դործքիս մէջ չուզեց որ մասնէ .
 “ Աղաչեմ , տէր , ըսաւ , ես մէկ խօսող մարդ
 մը չեմ , ատ բանը չեմ կրնար պաշարել . : Ա-
 ստուած ալ իրեն ըսաւ . “ Աջ բու բերանդ կը
 բանամ ու տուն կու տամ որ պէտք եղածը զրու-

ցես , , Մովսէս նորէն ըսաւ . “ Տէր , կ'աղաչեմ որ իս Թողուս , ու մէկ ուրիշ զօրաւոր մարդ մը ատ բանիդ վրայ դնես , , : Ըն ատենը ալ Ըստուած վրան սրդողեցաւ , ու ըսաւ . “ Ըհա քեզի Ըհարոնը քու եղբայրդ , անոր բերանը խօսք կայ . երբոր երթաս նէ , անիկայ ուրախու թեամբ առջևդ կ'ելլէ քեզ կ'ընդունի . իմ ըսածներս դուն անոր բերանը զիր , ինքը քու զիեդ ըսէ ժողովրդոցը , և ատ դաւազանդ ալ Տեադ առ որ անով աս հրաշքները ընես , , :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Մովսէս կ'զիպտոս կը դասնայ , որ Խորայեղացիքը կ'զիպտացոց ձեռքէ խալրուք :

Ստ' աշխարհի 2513 : (Ելեց . Դ . Ե .)

Մովսէս պինտ ետքը Ըստուծոյ հնազանդելով երբոր Վորեք լեռնէն տուն դարձաւ , աներջը կեցիք բարով ըրաւ , և իր կնիկը տղաքը Տեաք , ան իր դաւազանն ալ ձեռքը առած ճամբայ ելաւ Ըզիպտոս դնայ : Ըստուած հնն նորէն երեցաւ իրեն՝ ու հրամայեց որ երթաց ան հրաշքները Փարաւոնի առջևը ընելով՝ ըսէ թէ՝ “ Ըստուած կը հրամայէ որ իմ Ըսրայեղացի ժողովուրդս անդրանիկ որդիս Թողուս՝ որ դան իս պաշտեն , հապա թէ չէ՝ ես իրեն անդրանիկ որդին կը սպաննեմ , , . ու մէկալ զիեն Ըհարոնի ալ երեցաւ Ըստուած , հրամայեց որ ելլէ Մովսէսի զիմացը երթայ : Աւտի աս երկու եղբայր մէկզմէկ որ տեսան՝ սիրով պագաուեցան մէկտեղ , ու անանկ դացին , ան Ըստուծոյ նշան տուած հրաշքները Ըսրայեղացոց առջև ընելով

Հաւտացուցին՝ թէ Մատուած իրենց աղաչանքը
 լսե՛ր՝ կ'ուզէ որ զիրենք Ազգիպտացւոց ձեռքէն
 խալլուէ : Ատորը՝ երկուքն ալ մէկտեղ Փարաւոնի
 առջևը ելան ըսին թէ՛ « Իսրայելացւոց տէր
 Մատուածը կ'ըսէ որ թող տաս իր ժողովուր-
 դը որ անապատը երթան իրեն տօնախմբու-
 թիւնը ընեն » : Փարաւոն ալ իրենց պատաս-
 խան տուաւ թէ՛ « Ո՛վ է ատ որ ես անոր խօս-
 քը մնեմ Իսրայելացիքը թողում . ես ատ ձեր
 ըսած տէրը չեմ ձանձնար՝ ու Իսրայելացիքն ալ
 չեմ թողուր որ երթան » : Այս և աս բանիս վրայ
 աւելի սրդողելով Փարաւոն՝ երկուքն ալ քովէն
 վաճնտեց՝ թէ՛ « Դուք ժողովուրդը գլխէ կը
 հանէք որ բաներնէն կը մնան » . և անկէց ետե
 հրաման հանեց որ Իսրայելացւոց նեղութիւնը
 չարչարանքը եւեկցընեն՝ չարաչար աշխատցընեն
 զիրենք ան շինուածքներուն վրայ . « Ինչու որ՝ պա-
 րապ են , ըստ , բան ու գործ չունին , անոր հա-
 մար այսպիսի փուճ բաներու ետեւէ են ինկեր » :
 Իսրայելացիք երբոր իմացան թէ աս հալածան-
 քիս աւելի զրգուտելուն պատճառը Ո՛վսէս ու
 Մհարոն եղեր են . և երբոր անոնք Փարաւոնէն
 ելած գիմացնին որ հանգիպեցան , ան ատենը
 երած սրտով ասոնք երեսնին վազեցին ըսին
 թէ՛ « Մատուած ձեր դատաստանը կտրէ , որ
 մեզ այսպէս ատելի ըրիք Փարաւոնի և Ազգիպ-
 տացւոց առջևը . դուք թուրը անոր ձեռքը կու
 տաք որ մեզ ամէնա ջարդէ » : Ան ատենը Ո՛վ-
 սէս ալ դարձաւ աս բանս գանգրտեցաւ Մատու-
 ծոյ առջևը . բայց Մատուած նորէն սիրտ տուաւ
 իրեն , որ երթայ իր կողմննէ ազէկ մը բանը Իս-
 րայելացւոց հասկըցընէ . ու Մհարոնի հետ նս-
 րէն Փարաւոնի երթան զրուցեն որ Իսրայելա-

ցիները [Թողու, չէ՛ նէ, ըսաւ, իրենց անանկ ստա-
 հալի պատիժներ կու տամ, որ ան ատենը ինքը
 ուզէ չուզէ՛ իմ զօրութեամբս իմ ժողովուրդս
 անկէց կը հանեմ. և սա ալ ապրտպրեց որ է-
 թէ Փարաւոն հրաշք տեսնել ուզէ՛ նէ՛ ան գա-
 ւազանին օձ դառնալու հրաշքը անոր առջևը ը-
 նեն : Ընոնք ալ Փարաւոնի առջևը ելան, և ան
 բաները ըսելէն ետև՝ Ըհարոն Սոլսեսի գաւա-
 զանը առաւ դետինը ձգելուն պէս՝ մէկ մեծ օձ
 մը դարձաւ գաւազանը . ան ատենը Փարաւոն
 սա կախարդական բան կարծելով՝ ինքն ալ իր
 կախարդները հոն բերել տուաւ, որ անոնք ալ
 իրենց գաւազանները օձ դարձուցին : Ըս որ է-
 դաւ՝ Փարաւոն ան հրաշքը բանի տեղ չսեպեց,
 ու սիրտը խստացաւ Ըստուծոյ ըսածին մտիկ
 չդրաւ . թէպէտ ետքը ան ալ տեսաւ որ Սոլ-
 սեսի օձ դարձած գաւազանը շուտ մը դնաց ան
 մէկախներունը կլլեց :

Ընոր համար Ըստուած ինչպէս որ ըսեր էր,
 տասը կերպ չարաչար հարուածներով պատժել
 սկսաւ Փարաւոնի և Լզիպտացւոց խստասրտու-
 թիւնը (այսինքն ինատր), ինչուան որ ետքի
 պատիժովը ալ հողինին բերաննին եկած՝ անանկ
 Թող տուին Իսրայելացիները որ ելլեն երթան :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Եզիպտացոց տասը հարուածները կամ պատիժները :

ԱՄ աշխարհի 2513 : (Ելից . Ե . Ը . Թ . Ժ . 1)

Ա . Մօլթին հարուածը աս եղաւ որ՝ Մօլթեսու Մհարոն գաւազանով դետին ջուրը զարնելուն պէս՝ ան՝ Աեղոս դետը և բոլոր Ազիպտոսի լիճերը (այսինքն կէօլերը, հորերը), և ուր տեղին, ամանի մէջ ջուր կար նէ՝ ամէնը արիւն դարձան ու հոտեցան, և մէջը եղած ձկները սատկեցան . անանկ որ՝ ալ Ազիպտացիները խմելու ջուր չէին գտներ : Մս պատիժս եօթը օր դիմանալէն ետքը, Փարաւոն տեսնելով որ իր կախարհներն ալ ուրիշ տեղաց ջուր բերին՝ իրենք ալ անանկ արիւն դարձուցին, աս հրաշքովս չարժեցաւ որ Իսրայելացիները թողու :

Բ . Մնոր համար երկրորդ հարուածը եկաւ . որ երբոր Մհարոն Մօլթեսի գաւազանը երկրնցուց գէպ ՚ի Ազիպտոսի ջրերուն ու լճերուն վրայ, այնչափ գորտ (այսինքն խուրպաղի) բխեց ելաւ անոնցմէ՝ որ բոլոր Ազիպտացոց աները եկան լեցուեցան, և բոլոր անոնց պառկելու մահահանգներուն վրայ, թոնիրներուն ու կերակուրներուն վրայ կը վխտային ան գորտերը : Մս ցուցանքս թէպէտ Ազիպտացոց կախարհներն ալ ըրին՝ անոնք ալ գորտ հանեցին, բայց այսու ամենայնիւ Փարաւոն կանչեց աղաչեց Մօլթեսի ու Մհարոնի, որ աղօթք ընեն Մսաուծոյ՝ աս պատիժս վերցընեն . և ինքն ալ Փարաւոնի ցուցընելով թէ ինքը աս բաներս կախարդութեամբ

չնէր, իրեն թողուց որ աս պատիժիս դադրելու
ատենը ինքը ըսէ. Փարաւոն ալ Սաղը թող
ըլլայ, ըսաւ. Սոլսէս աղօթք ընելուն պէս, ա-
նանկ եղաւ, մէկալ օրը մէկէն սատկեցան ան
գորտերը, որ բոլոր Ազխատացոց երկիրը հա-
տեցուցին :

Գ. Արբոր Փարաւոն աս հարուածէս խաղը-
սելէն ետե տուած խօսքէն որ ետ դարձաւ, Աս-
տուած ետեւէն երրորդ հարուածը տուաւ. հրա-
մայեց Սոլսէսի՝ որ Ահարոն գաւազանովը գեա-
նի հողը զարնէ : Անանկ որ ըրաւ՝ բոլոր Ազխա-
տաի մարդիկն ու անասունները մօշուով (այսինքն
սիւրբիսինէկով) ծածկուեցան : Փարաւոնի կա-
խարդներն ալ աս բանս ընել ուզեցին՝ ինչպէս
մէկալ երկու առջինը ըրին, որ խախը ընեն
Սոլսէսը ու Ահարոնը. բայց երբոր չկրցան ը-
նել, դարձան Փարաւոնի ըսին թէ՛ Աստուծոյ
ձեռքը կայ աս բանիդ մէջը. և անով ալ Փա-
րաւոնի սիրտը չկահուղցաւ, որ Խորայեւացիներ
ըր թողու :

Դ. Սատի չորրորդ հարուածը եղաւ շանա-
ձանձ՝ ըսուած կենդանին՝ որ լեցուեցաւ բոլոր
Ազխատացոց երկիրը, ու կձեւով՝ շատ մարդ և
անասուն մեռցուց. բայց հոն մօտիկ Վեսեմ
երկիրը՝ որ Խորայեւացիները կը կենային՝ Աս-
տուած միշտ ազատ պահեց աս պատուհասնե-
րէս : Փարաւոն աս շանաձանձէն չզիմանալով
Սոլսէս ու Ահարոնը կանցեց՝ ըսաւ որ Վեցեկ
ձեր աստուծոյն զոհ ըրէք իմ երկրիս մէջը : Սոլ-
սէս ալ ըսաւ թէ՛. « Աս ըլլալու բան չէ, որ մենք
Ազխատացոց առջևը ան կենդանիները զոհ թ-
նենք, որ անոնք մօրթելը պղծութիւն կը սե-
պեն, որ տեսնեն նէ՛ մեզ կը քարկոծեն. հասո՞

պէտք է որ իրեք օրուան ճամբայ հեռու անապատը երթանք՝ հոն զոհերնիս ընենք .» : Փարաւոն ալ ըսաւ « Գացէք՝ միայն թէ շատ չհեռանաք , և ինձի համար ալ աղօթք ըրէք .» : Սոլսէս քովէն ելաւ , ու աղօթք ընելուն պէս՝ բոլորովին շանաձանձը դնաց փարատեցաւ իրենց վրայէն :

Ե . Քայց Փարաւոնի սիրտը նորէն խտացաւ , ու խօսքին վրայ չկեցաւ , ուստի Ղստուած շուտ մը հինգերորդ հարուածը Սոլսէսի ձեռքովը խրկեց անոնց անասուններուն վրայ , որ Ազիպտացւոց կենդանիներէն՝ անհամար ձիեր , էջեր , ուղտեր , կովեր ու ոչխարներ ջարդեց . բայց երբոր իմացաւ Փարաւոն թէ Սարայելացւոց կենդանիներուն ամենեւին զէն մը չէ եղեր , աւելի դժարը դալով՝ պինտ կեցաւ Սարայելացիները չթողուց :

Զ . Նոր համար Ղստուած նորէն հրամայեց Սոլսէսի ու Ղհարոնի , որ Փարաւոնի առջևը ելլեն , ու ափով տաք մոխիր առած զէպ 'ի երկինքը ցանեն : Այլբոր անանկ ըրաւ Սոլսէս՝ վեցերորդ հարուածը եղաւ , որ մարդիկներուն և մնացած անասուններուն վրայ անանկ խոցեր (այսինքն եարաներ) ու բշտած ուռեցքներ ելան , որ չէին կրնար դիմանալ : Ղստուած խոցերս Փարաւոնի կախարհներուն վրայ ալ եղաւ . և անով իրենք ալ սաստիկ չարչարուելով չկրցան Սոլսէսի դիմացը ելլել , որ կախարհութեամբ իրենք ալ աս բանը փորձէին :

Է . Ղստուած տեսնելով որ աս պատիժովն ալ Փարաւոնի սիրտը չկակուղցաւ , նորէն Սոլսէսը իրեն խրկեց , որ ըսէ թէ « Գիտնաս որ վաղուան օրը անանկ սաստիկ կարկուտ պիտի վրա-

նիդ թափեմ, որ Ազխատու քանի եղած է նէ՛
անանկ բան տեսած չէ՛, ու Սոխէս աս բանս
որ զրուցեց՝ ետեւէն ան ալ ըսաւ որ՝ «ով որ դուրս
տեղը մարդիկ կամ կենդանիներ ունի նէ՛ ներս
տանէ, որ աս կարկուտս իրենք չմեռցնէ: Աւ
ասանկ ըսածին սէս՝ մէկալ օրը երբոր ատենը
եկաւ, ու Մատուծոյ հրամանովը Սոխէս ձեռ-
քը դէպ ՚ի երկինքը վերցուց՝ սկսաւ սոսկալի
կարկուտը՝ գոռալով ու կայծակներով այնպէս
խոշոր ու սաստիկ իջնալ, որ բոլոր կանանչները
ծառերը ջարդեց մոխիր դարձուց. և ով որ
Սոխէսի խրատը չմտեց դաշտերը թողուց իրեն
մարդիկը ու անասունները՝ անոնք ամէնը կար-
կուտը սպաննեց: Մս պատուհասէս Փարաւոն
սոսկալով թէպէտ շուտ մը քովը կանչել տուաւ
Սոխէս ու Մհարոն, և մեղայ գօչելով իրենց
աղաչեց որ՝ Մատուծոյ աղօթք ընեն դադրեցը-
նեն, և Իսրայելացիներն ալ թող կու տամ ը-
սաւ. բայց ետքը անոնց աղօթքովը աս պատիժս
որ դադրեցաւ, ինքն ալ խօսքէն կտ դարձաւ՝
թող չտուաւ:

Ը. Ուստի նորէն Մատուծոյ հրամանովը Սոխ-
սէս ու Մհարոն Փարաւոնի գացին ըսին թէ,
«Աբրայեցւոց Մատուածը կ'ըսէ թէ աս ինչ ա-
ներեսութիւն է քու ըրածդ՝ որ ինձմէ չես ա-
մչնար, իմ ժողովուրդս չես թողուր՝ որ իս զան
պաշտեն. չէ նէ զիտնաս որ՝ վաղը աս ատեն բո-
լոր քու երկրիդ վրայ անանկ սաստիկ մարտի
(այսինքն չէքիրկէ) սլիտի բերեմ, որ ոչ ձեք
հարքը և ոչ անոնց պապերը տեսեր են, որ թէ
կարկուտէն բան մըն ալ մնացեր է նէ՛ ան ուտե-
սրքէ,»: Մսանկ ըսին Փարաւոնի՝ ու ձգեցին ելան
քովէն: Աայց աս բանս որ ըսեցին Փարաւոնի

քովը եղած Ազխատացիները, սկսան դանդաղե-
 լով իրեն ըսել թէ՛ « Եւ ինչուան երբ մենք աս
 պատուհասներս պիտի քաշենք . թող տուր առ
 մարդիկը որ երթան իրենց Եստուածը պաշտեն .
 չես տեսներ որ Ազխատսը ատոնց պատճա-
 րովը բողբոլին կը կորսուի կոր . , : Են ատենը
 երկուքն ալ նորէն քովը դարձուցին , ու Փարա-
 ւոն իրենց ըսաւ որ՝ « Չեզի հրամանն կու տամ
 որ երթաք ձեր Եստուածը պաշտէք . բայց կ'ու-
 զեմ գիտնալ թէ՛ ո՞վ ո՞վ պիտոր երթայ , : Եով
 սէս ալ պատասխան տուաւ թէ՛ « Ենք ամէնս՝
 ծեր ու տղայ , մանչ ու աղջիկ , մեր կովերովը և
 ոչխարներովը պիտի երթանք , որ մեր Եստուծոյ
 տօնախմբու թիւնը կատարենք . , : « Գուք բա-
 րով երթաք , ըսաւ Փարաւոն , ձեզ կը թողում ,
 բայց առ ձեր ամէն բաներն ալ հետ տանիլը՝
 կ'երևցունէ , թէ սրտերնիդ չարութիւն կայ .
 ատանկ չէ , հասա միայն էրիկ մարդիկը երթան՝
 ինչպէս որ առաջ դուք եկաք ինձմէ խնդրեցիք . , :
 այսպէս ըսելով Փարաւոնի առջևէն վերնաեցին
 զիրենք : Եովսէս ալ երբոր դուրս ելաւ՝ ան ա-
 տենը Եստուծոյ հրամանովը ձեռքը դէպ 'ի եր-
 կինքը երկնցընելուն պէս՝ հարաւային կողմէն մէկ
 տաստիկ հով մը ելաւ , ու մէկ օր մը և գիշեր մը
 փչելով այնչափ մարախ բերաւ որ՝ բողբոլին Ա-
 զխատացոց երկիրը ծածկեց , ու կերաւ չորցուց
 ինչ որ կարկուտէն մնացեր էր : Ես պատուհասիս
 համար ալ Փարաւոն Եովսէսը քովը կանչեց՝
 մեղայ ըսաւ , աղաչեց որ աղօթք ընէ՝ վերցընէ :
 Եովսէս ալ Եստուծոյ աղաչելով մէկալ դիէն
 հով մը հանեց , որ ան մարախը բողբ տարաւ
 կարմիր ծովը թափեց . բայց այսու ամենայնիւ
 Եսրայելացիքը չթողուց Փարաւոն :

Թ. Վար Տամար շատ չանցաւ որ՝ ետեւէն ին-
 ներորդ Տարուածը եկաւ, որ երբոր Սոլսէս նո-
 րէն Վատուծոյ Տրամանալը ձեռքը դէպ ՚ի երկին-
 քը երկնցուց, մէկ անանկ սոսկալի թանձր մութ-
 ու խաւար մը պատեց բոլոր Ազխպտացուոց երկի-
 րը, որ իրեք օր ամենեւին մարդ զմարդ չէր կըր-
 նար տեսնել. ու ինչպէս կ'ըսեն՝ օդին սաստիկ
 թանձրութենէն ճրագ վտելլով ալ բան չէր ե-
 րևար. ուստի ան իրեք օրը ամէն մարդ պառկած
 տեղը մնաց՝ չէլաւ. և միայն Եսրայելացուոց բնա-
 կած Վեոեմ երկիրը աս պատիժէս աղատ մնաց,
 ինչպէս բոլոր մէկալ պատիժներէն ալ, Վս մութ-
 թուն ատենը Փարաւոն ձար մը դտաւ որ նորէն
 Սոլսէս ու ՎՏարոնը քովը կանչեց, և ալ Տրա-
 ման տուաւ իրենց որ երթան, միայն թէ կովեր-
 նին և ոչխարնին հոն թողուն՝ հետ չտանին: Սոլ-
 սէս ալ իրեն պատասխան տուաւ. թէ՛ «Սէնք չե-
 թէ միայն մեր բոլոր կենդանիները պիտի տանինք՝
 և անոնցմէ մէկ սոկոր մըն ալ չենք թողուր, հա-
 պա դուն ալ պէտք է որ մեզի ողջակէզ ընելու
 բան տաս, որ տեսնենք թէ ասոնց մէջէն որ
 Վատուած կ'ուզէ որ իրեն ողջակէզ մատուցա-
 նենք», և Վս ատենը Փարաւոնի սիրտ նորէն
 խստացաւ, ու սրդողլելով Սոլսէսի բտաւ. «Վնա
 քովէս, կորիք, մէյ մ'ալ առջևս չերևաս, հապա
 թէ չե՛ք եզ կը սպաննեմ», և Սոլսէս ալ անոր՝
 «Վսածիդ պէս կ'ըլլայ, բտաւ, մէկ մըն ալ քո
 առջևդ չեմ երևար», ու քովէն ելաւ զնայ՝
 Վսպէս որ եղաւ, Վատուած Սոլսէսի բտաւ
 որ՝ «Սէկ Տարուած մըն ալ մնաց Ազխպտացուոց
 տալու, ան ատենը Փարաւոն ալ ձեզ թող կո-
 տայ որ Ազխպտոսէ ելլէք», և

Գ Լ Ո Ի Խ Զ .

Եզիպտացոց տասներորդ հարուածը , ու Խորայեւրացոց
Եզիպտոսէկ ելլելը :

Ըմ աշխարհի 2513 : (Եւր . ԺԵ . ԺԲ . ԺԳ .)

Ըստուած տասներորդ մեծ հարուածը չբրած՝
օրերով առաջ Սոլսեւի ազրսպրեց որ երթայ
գաղտուկ Խորայեւրացոց հասկըցընէ , որ՝ իրենց
բարեկամ և դրացի Ազիպտացիներէն ոսկիէ , ար-
ծըթէ բաներ և ուրիշ ալ կնկան սուղ հագուս-
ներ զարդարանքներ՝ փոխ ուզեն քովերնին պա-
հեն , որ Ազիպտոսէ կլլելու առենը՝ առնեն մէյ-
տեղ հետերնին տանին : (Ըսով , ինչպէս կ'ըսեն ,
կամեցաւ Ըստուած վճարել՝ կամ փոխարկնել
ողորմելի Խորայեւրացոց չարաչար աշխատանքը ,
որ այնչափ տարի Ազիպտացիները չարչարելով
իրենց ծառայեցուցին) : Ատքը նորէն Սոլսեւի
ձեռքովը հրամայեց Ըստուած որ՝ Խորայեւրացիքը
ամէն տան գլուխ մէկմէկ ոչխար առնեն պատ-
րաստ պահեն , ու աս ոչխարս արու (այսինքն էր-
քէկ) պիտոր ըլլայ՝ ու մէկ տարուան . և անիկաց
իրենցնիսան ամսուն տասնըչորսին իրիկուան դէմ
ամէն մարդ իր տունը մորթէ . ու առանց ջար-
դելու անանկ ամբողջ խորված (այսինքն քէպասպ
ըրած) ան դիչերը սեղան դնեն , ու արտորնօք
ձամբորդի պէս՝ կօշիկնին հագած մէյմէկ գա-
ւաղան ալ ձեռուրնին բռնած՝ անանկ բաղարջով
(այսինքն խամուրսուզով) , ու եղէգով (կամ լե-
զի սալաթայով) ուտեն : Աւ աս բանս՝ (որ իրենց
լեզուովը Պասքա կամ Պասէք կոչեցաւ , ու մեր
մէջը հայերէն՝ Օտտիկ ըսուեցաւ , իբր թէ

Խորայեւացւոց Ազխատոսէ զատուելուն կամ եւ
 լելուն բաժնուելուն արարողութիւնը ըսաւ որ
 անկէ ետեւ ալ միշտ Խորայեւացւոց օրէնք ըլլայ,
 որ որդւոց որդի ամէն տարի ան օրը սա սեղանս
 ընեն : Կաւ ուրիշ օրէնքներ ալ տալէն ՚ի զատ՝
 Մտուած ան առեներ զգուշութեան համար սա
 ալ ապրստրեց որ՝ ան մորթած ոչխարին արիւ-
 նէն առնեն ամեննը իրենց տանը զբան վերի սե-
 մին վրայ քսեն, որ Ազխատացիները պատժող
 հրեշտակը ան արիւնին նշանը տեսնելով զիրենք
 թողու չպատժէ :

Արքոր եկաւ ան ըսած օրը՝ որ սլ Խորայե-
 վացիք Մտուծոյ հրամայածին պէս զատիկնին
 պատրաստեր կ'ուտէին, յանկարծ կէս գիշե-
 ղուն սկսաւ տաններօրդ հարուածը, որ բոլոր
 Ազխատացւոց անդրանիկները, այսինքն առջի-
 նեկ տղաքը մեծ ու պզտիկ՝ Փարաւոնի տղէն
 ինչուան ետքի աղքատին տղան ինկան մեռան,
 ու նաև անբան կենդանիներուն ալ անդրանիկ-
 ները ջարդուեցան. անանկ որ՝ ան գիշերը Ազխա-
 տոս տուն չմնաց որ մէջը մեռել չըլլայ : Մսկեց
 շատ իրարանցում և գոռում գոչում եղաւ բոլոր
 Ազխատոսի մէջը, որ Փարաւոն ալ սաստիկ շփո-
 թած ելաւ գիշերանց արտօրնօք կանչել տուաւ
 Սովսէս ու Մհարոնը, իրենց ըսաւ որ՝ Այլք
 գացէք ստիկց ձեր ամէն բաներովը՝ ինչպէս որ
 կ'ուզէիք նէ, և բոլոր Ազխատացիներն ալ ետե-
 նին ինկած՝ կ'արտօրցընէին որ շուտով ելլեն եր-
 թան. կը վախնային թէ՛ չըլլայ որ մեռնելու
 կարգը մնացածներուն վրայ գայ : Աւտի Խա-
 ըայեւացիք ալ այնպէս արտօրնօք պատառը բե-
 բաննին ճամբայ ելան, որ թրած ալիւրնին ալ
 չխմորած (այսինքն մայան ճատած), լաթի մէջ

փաթթած՝ անանկ կռնակնին զարկին կ'երթային . և իրենց մէկալ բաներուն հետ ան Ազգիպտացիներէն փոխ առած ոսկիէ ու արծրթէ բաներն ալ մէյտեղ առին տարին :

Աւանատենը վերը ըսած զատկին օրէնքէն 'ի զատ՝ Աստուած աս օրէնքս ալ հրամայեց Ասրայելացւոց, որ՝ ան Ազգիպտացւոց անդրանիկներուն ջարդուելուն յիշատակ, անկէ ետե միշտ և հանապաղ բոլոր Ասրայելացւոց արու անդրանիկները այսինքն առջինեկ ծնածը՝ Աստուծոյ ընծայուի . անանկ որ ան առջինեկին համար ամէն մարդ իր կարողութեան չափովը մէկ կով մը կամ ոչխար մը, կամ թէ երկու տատրակ (այսինքն խումբի), կամ երկու աղաւնի, տանին Աստուծոյ զոհ ընեն . և աս հրամանս նաև Ասրայելացւոց անբան անասուններուն վրայ ալ էր, որ անոնց սուրբ ըսած կենդանիներուն առջինեկներն ալ պիտի Աստուծոյ զոհ մատուցուին, ու անսուրբներուն ակզը՝ սուրբերէն պիտոր առնեն ընեն :

Ասրայելացիք երբոր Ազգիպտոսէ ելան՝ միայն իրենց էրիկ մարդիկը վեց հարիւր հազար էին՝ մանր տղոցմէ ու կնիկներէն 'ի զատ . թողունք ուրիշ ազգէ ալ շատ մարդիկ որ հետերնին խառնուած մէկտեղ ելան : Աւ Ասրայելացւոց այսպիսի մեծ բանակին (կամ օռտուին) առջեկն՝ Աստուած ճամբայ ցուցնող տուաւ, բարձր օղուն (այսինքն հաւային) մէջը կեցած, ցորեկը մէկ սեան պէս (այսինքն՝ տիրեկի պէս) ամպ մը, ու գիշերը՝ կրակէ լուսաւոր սիւն մը . անանկ որ՝ գիշեր ու ցորեկ ասոնք դէպ 'ի ուր որ կը շարժէին կ'երթային՝ բանակն ալ անոնց ետեկն կ'երթար :

Գ Լ Ո Ւ Խ Է .

Խորայեւացիք Կարմիր ծովէն կ'անցնին , ու փարատն իր
զօրքովը հոն կը խղղտի :

ԱՄ տշխարհի 2513 : (Ելեց . ծ Գ . ծ Ե 1)

Մէկ քանի օրէն ետև երբոր Խորայեւացւոց
բանակը աստուածային կարգաւորութեամբ
Կարմիր ծովուն քովերը հասեր էր , ան ատենը
անդին Փարաւոնի և Լգիպտացւոց միտքը փո-
խուեցաւ , “ Սին , ըսին , մենք ինչու ասոնք
թող տուինք որ երթան , որ մեզի աղէկ կը ծա-
ռայեն . ” ուստի շուտ մը Փարաւոն պատրաստել
տուաւ բոլոր զօրքը երկու հարիւր յիսուն հազա-
րի չափ՝ ու վեց հարիւր ալ պատերազմական
կառքեր իրենց ձիերով և ամէն զէնքերովը , ու
ելաւ դէպ 'ի Կարմիր ծովը Խորայեւացւոց վրայ
գնաց : Երբոր հեռուանց տեսան Խորայեւացիքը
աս սոսկալի Լգիպտացւոց բանակը , սաստիկ
վախուն իրար անցած սկսան աղաղակել Մատ-
ծոյ , ու Սովսեսի դէմ գանգրտելով կ'ըսէին .
“ Լգիպտոս զերեզման մի կը պակսէր , որ մեզ
աս անապատ տեղս բերես սպաննես . մենք հոն
քեզի չէինք ըսեր որ՝ թող տուր մեզի՝ մենք Լ-
գիպտացիներուն կը ծառայենք . շատ աղէկ էր
որ Լգիպտացւոց ծառայութեան տակը ըլլայինք .
քան թէ աս անապատ տեղս գանք մեռնինք . ”
Սովսես իրենց սիրտ կու տար որ չվախնան .
“ Հիմա , կ'ըսէր , կը տեսնէք որ ինչպէս պիտի
մեզ Մատուած աղատէ , ինքը մեր տեղը անոնց
հետ պատերազմ կ'ընէ . աս ետքի անդամն է՝ որ
մէյսըն ալ Լգիպտացիները պիտի չտեսնէք . ”

Արքայ ալ սկսան Ազխատացիները մտննալ, ու
 իրիկունն ալ վրայ հասնելու էր, Սոլսէս Աս-
 տուծոյ հրամանովը ժողովուրդը առաջ քշեց ծո-
 վուն քովը տարաւ. և իրեն դաւազանը ջրին
 զարնելուն պէս՝ շուտ մը ծովը ան տեղէն սրտ-
 ոեցաւ երկուք բաժնուեցաւ, և երկու դիէն
 սարիսպի (այսինքն հիտարի) պէս ան ջուրը դի-
 զուած՝ մէջ տեղը լայն ու արձակ չոր ճամբայ ե-
 դաւ, որ Խորայելացւոց բանակը ան ճամբուն մէջ
 մտած՝ առանց թըջելու բոլոր գիշերը քալեցին
 ծովին մէկալ դին անցան: Ատրը երբոր Ազխա-
 տացիք ալ Խորայելացւոց ետեւէն ան ծովին մէ-
 ջը բացուած ճամբան իրենք ալ մտան, ու բոլոր
 բանակնին ցամաքէն կտրուած ալ ծովին մէջն
 էին, և անդիէն բոլոր Խորայելացիները ցամաքը
 ելեր էին, ան ատենը Աստուած Ազխատացւոց
 սիրտը մէկ վախ մը ձգեց թէ՛ մենք աս մութ-
 գիշերը ինչպիսի տեղ կը քալենք կոր, ու սաստիկ
 շիթեկով հոն ծովին մէջը կապուեցան մնացին,
 ոչ առաջ կրնային երթալ՝ ոչ ետ դառնալ: Աս-
 որ եղաւ, առտուան դէմ Աստուած Սոլսէսի
 հրամայեց՝ որ դառնայ ձեռքը ծովուն վրայ եր-
 կնցրնէ. ու անանկ բրածին պէս՝ ան երկու դի
 բաժնուած բոլոր ծովին ջուրը քովէ քով եկաւ,
 ան տեղը բովանդակ Ազխատացւոց բանակը Փա-
 րառն ալ հետը այնպէս ծածկեց որ՝ մարդ մը
 չխալըսեցաւ: Աս մեծ հրաշքս երբոր Խորայե-
 լացիքը տեսան՝ Աստուծոյ ահը սրտերնին մէջը
 աւելի հաստատուեցաւ, ու աղէկ իմացան թէ
 Սոլսէս մարդարէն մեծ ծառայ Աստուծոյ է:
 Անատենը երիկ մարդիկը և կնիկ մարդիկը զատ
 զատ երկու դաս եղած, մէկուն դասադուխը՝
 Սոլսէս, ու մէկալինը Սոլսէսի քոյրը Սա-

ըիամ մարդարէն , սկսան ուրախութեամբ Մստուծոյ դովութիւն տալ , և նուագարանով (այսինքն չաղըններով) սար բռնած կ'երգէին անօրհնութիւնը որ կ'ըսէ . () Բնեւոյսոս զսէր , զի
 † առօր է † առաւորեալ . և այլն :

Գ. Լ. ՈՒԽ Ը .

Անապատը Աստուած Խորայեղացոց չրիկ պակասութիւնը կը հոգայ , և մանանահ իրենց կերակոր կու տայ :

Ամ աշխարհի 2514 : (Եղեց . ժՁ . ժէ : Թուոց . ժԵ .)

Խորայեղացոց բանակը Կարմիր ծովէն ելած գէպ 'ի Սուր ըսուած անապատն որ գնաց , հոն իրեք օր ճամբայ ընելով ալ խմելու ջրերնին պակսեցաւ , ու ան անապատը ջուր չէին գտներ . ետքը երբոր Սեռա ըսած տեղ մը հասան , և հոն ալ եղած ջուրը տեսան որ անանկ լեղի է՝ որ չէր խմուեր , սկսաւ ժողովուրդը Սովսէսի գէմ' արը . արնջալ՝ թէ ինչ պիտոր խմենք : Սովսէս ալ անատենը Մստուծոյ որ դիմեց , Մստուած իրեն մէկ կերպ մը փայտ ցուցուց՝ որ անիկայ ջրին մէջը գնելով կ'անուշնար , ու անանկ խմելով ծարաւնին անցուցին . և ասով խրատեց Մստուած ժողովուրդը որ՝ թէ իրեն տուած պատուիրանքները պահեն նէ՝ ամէն փորձանքներէն զիրենք կը պահպանէ՝ ու կը հոգայ : Մնկէ ելան Խորայեղացիքը Աղիմ ըսուած տեղը եկան , որ հոն տասուերիու անուշ ջրի աղբիւր կար , ու եօթանասուն արմաւենի (այսինքն խուրմայի ծառ) ան տեղն ալ ըիչ մը ատեն կենալէն ետքը , նորէն ճամբայ ելան գացին գէպ 'ի Սին անապատ .

տը : Ըն առննը երբոր ալ ուտելիքնին սկսաւ պահսիլ, ամէնքը մէկ բերան տրանջալով Սոլ սեսի ու Բճարոնի վրայ՝ կ'ըսէին . « Երանի թէ Եղիպտոս ան Բստուծոյ խրկած պատուհասներովը մենք ալ մեռած ըլլայինք . երբոր մին պըտուկներուն քովը նստած՝ կուշտ մեր հացը կ'ուտէինք , քան թէ մեզ աս անապատ տեղս հանեցիք բերիք՝ որ հոս ամէնքս սովը սպաննէ , » : Սոլ սէս ու Բճարոն ալ իրենց ըսին թէ՝ « Ընչ կ'ընէք , աս ձեր տրտունջը մեզի չէ՝ հապա Բստուծոյ վրայ կ'երթայ՝ որ ինքը ձեզ Եղիպտոսէ հաներ է , » : Ետե Բստուծոյ դիէն իրենց խօսք տուին՝ որ ան իրիկունը ուտելու միս գտնեն , ու մէկալ առտուանց հաց ալ ունենան . և աս Սոլ սեսի խօսքը Բստուած Խորայեւացւոյ հաւտացընելու համար՝ ան իրենց առաջնորդող Սին ամպոյ ըսածը աւելի լուտաւոր ու փառաւոր երեցուց ան առննը : Ետքը Սոլսեսի ըսածին պէս՝ իրիկուան դէմ՝ անհուն անհամար լորամարդի (այսինքն պրլարձին) եկաւ ինջաւ իրենց բանակին վրայ ու մէկալ օրը առտուանց կանուխ ելլեն տեսնեն որ բանակին չորս դին գեանին երեսը գինձի (այսինքն քիշնիչի) պէս մանտրաիկ կըր ձերմակ բան մը ինջեր է . ուստի Խորայեւացիք զարմանալով սկսան մէյմէկու եբրայեցերէն հարցընել ըսել՝ Սին հո , որ ըսել թէ՝ Ըն Բնչ է : և ասով անոր անունը՝ Սանանա մնաց : Սոլ սէս ալ ըսաւ . « Բճա ան է հացը որ Բստուած ձեզի կու տայ որ ուտէք , » : Ետքը Բստուծոյ դիէն Սոլսէս անոնց ապրտպրեց՝ որ ամէն առտու ելլեն իրենց մէկ օրուան պէտք եղածին չափ անկէց ժողովեն , որ ան օրը ուտեն՝ մէկալ օրուան չթողուն . ու ուրբաթ օրերը երկու չափ

Ժողովին, որ շարած օրուան ալ բաւական ըլլայ :
 Ինչու որ՝ շարժու մէջը միայն վեց օր կ'իջնար
 առ մանանաս՝ շարժած օրերը չէր 'ի զար . և թէ
 առտուանց ուշանային՝ կանուխ չժողովէին նէ , ա-
 ըրը վրան ցա՛ծածին պէս կը հալէր բան չէր մը-
 նար . և թէ շարժած օրէն 'ի զատ՝ ուրիշ օրուան
 համար պահէին նէ՝ կ'աւրէր կ'որգնտտէր : Ըս-
 մանանաս անանկ բան մըն էր՝ որ առաջ կը ծե-
 ծէին ալիւրի պէս կ'ընէին , ետքը շաղուելով հա-
 ցի խմորի պէս կը շինէին , և այնպէս կ'եփէին
 կ'ուտէին , որ շատ անոյշ ու համով բան կ'ըլլար ,
 և մարդը աղէկ կը կշտացընէր . անանկ որ՝ բոլոր
 Իսրայելացիքը առ մանանայովս սպրեցան ան-
 քառսուն տարի ճամբորդութեան ատեննին , ին-
 չուան որ տեղերնին հասան : Ետե առ ալ հրա-
 մայեց Ըստուած Իսրայելացւոց՝ որ ան մանա-
 նայէն մէկ ամանով մը սաննէն զատ պահէն , որ
 աստուածային բարերարութեանը յաւիտեանս
 կան յիշատակ մնաց իրենց ազգին մէջը , օրով ա-
 նասպար իրենք կերակրեց Ըստուած . և ան ա-
 մանով մանանանս ետքը տապանակին մէջը դը-
 րուեցաւ պահուեցաւ : Ըս Սին ըսուած անս-
 պատէն երբոր ելան Բաբելոն ըսած տեղը է-
 կան՝ հոն ալ խմելու ջուր չգտան . ուստի նո-
 րէն ժողովուրդը սկսաւ արանջալ ու բամբասել
 Սովսեսի դէմ . « Ինչու , ըսին , մեզ Եգիպտոս
 սէ հանեցիր առ անսպաս տեղս բերիլ՝ որ մեզ
 ամենքս ծարաւէն ջարդես » . և առ բանիս հս-
 մար քիչ մնաց որ Սովսէսը բարկոծէին : Սով-
 սէս ալ զանդրտելով Ըստուծոյ դիմեց՝ որ ասոյ
 ճարը տեսնէ . ան ատենը Ըստուած ալ հրա-
 մայեց որ՝ մէկ քանի հոգի մը անոնց ծերերէն
 հետը առած երթայ դիմացը Բորեք լեռ ,

Հոն իր գաւազանովը ապառաժ քարին զարնէ , որ անկէց բխած ջուրը ժողովուրդը խմէ : Սովսէս ալ անանկ ջուրերնին խմցուց . և ան տեղին անունը՝ Փորձութիւն դրաւ , ինչու որ՝ Խորայելացիքը ասով Լստուած փորձել ուզեցին :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Անաղեկացիքը կը չարդոյին Խորայելացիներէն : Յորոր կու գայ Մովսէսը բարեկէտ :

Ա՛՛՛՛ աշխարհի 2814 : (Եւրց . ԺԵ . ԺԸ :)

Լս տեղուանքս Լճաղեկացի ըսուած ազգը պինտ առջինը եղաւ որ Խորայելացւոց դէմ կեցաւ , հետերնին պատերազմ ուզեց ընել : Սովսէս ալ զօրապետ դրաւ Յեսու որդին Աաւեայ Ափրեմայ ցեղէն , և իրեն հրամայեց որ ժողովրդոց մէջէն կտրիճ՝ ուժով մարդիկ ընտրէ հետը առնէ , Լճաղեկացւոց դէմ պատերազմ ելլէ . ու ան ատենը ինքն ալ գաւազանը ձեռքը՝ Լճաւրոնի ու Սվրի հետ լեռան վրայ ելաւ , որ անկէց պատերազմը տեսնէ , ու աղօթք ընէ վրանին : Լսն պատերազմին ատենը Սովսէս թւերը վեր բռնած աղօթք որ կ'ընէր՝ Խորայելացիները կը յաղթէին , երբոր հոգնելէն Սովսէսի թւերը վար կ'ինջնար՝ Լճաղեկացիները վրայ կ'ելլէին : Լսն որ տեսան Լճաւրոն ու Սվր՝ առին Սովսէսը մէկ քարի մը վրայ հանդիսա՛նստեցուցին , ու մէկը աս դիէն՝ մէկալը ան դիէն թւերուն ներքեր մտան վեր բռնեցին . և անանկ ինչուան իրիկուն Սովսէս բազկատարած աղօթք ընելով , Յեսու բոլոր Լճաղեկացիները տակ առաւ ջարդեց : Ատքը Սովսէսի հրամայեց Լստուած՝ որ աս յաղ-

Թուժեանս յիշատակարանը գրէ՝ ու Յետուայ
տայ, և ըսէ որ՝ Մատուած բողոքովին Մճաղեկա-
ցւոց յիշատակը աշխարհքէս պիտի վերցընէ:
Սովսէս ալ ՚ի չնորհակալութիւն աս յաղթու-
թեանս ան տեղը Մատուծոյ մէկ սեղան մը շի-
նեց, ու անունը դրաւ՝ Տէր ապաւէն իմ:

Մատեններս Յոթոր Սովսեսի աները ան
տեղուանքը մօտ բնակած ըլլալով ինքն ալ հետը
առած Սովսէսի կնիկը և երկու տղաքը՝ (որ ինչ
պէս կ'ըսեն՝ նորէն Սովսէս Ազխատոսէ հոն
խրկեր էր), ելաւ եկաւ որ Սովսէսը բարեւէ, և
Խորայեւացւոց ուրախակից ըլլայ Ազխատացւոց
ձեռքէն ազատութեանը համար: Սովսէս ալ
չատ սիրով մեծարանքով ընդունեց իր աները,
ու առաւ տեղն ՚ի տեղը անոր պատմեց Փարա-
ւոնի ձեռքէն իրենց գլխէն անցածները, և Մ-
տուծոյ Խորայեւացւոց վրայ ըրած բարիքը և նա-
խախնամութիւնը. որ Յոթոր ալ ըսելով՝ փառք
և գոհութիւն կու տար Մատուծոյ: Ատքը անոր
մէկալ օրը Յոթոր տեսնելով որ առտուանց ին-
չուան իրիկուն ժողովուրդը Սովսեսի գլուխը
թափեր են, ու Սովսէս միս մինաւոր անոնց ա-
մէն մէկուն դատաստանը (այսինքն շէրահածը)
կտրելու իրաւունքը ցուցընելու կը տանջուի կոր,
աս բանիս չհաւնեցաւ Յոթոր, դարձաւ Սովսե-
սի ըսաւ. «Մտ աղէկ չէս ըներ, որ դուն ալ ժո-
ղովուրդն ալ հետդ մէյտեղ չափէ դուրս կը տան-
ջուիք. ատ մինաւոր ընելու բան չէ՞»: Ատն
Սովսեսի աս խրատս առաւ որ՝ ան բողոք ժողո-
վուրդին մէջէն՝ ինքը խելացի, արդար, աստուա-
ծաւախ ու խոնարհ մարդիկ ընարէ. և ասոնք ի-
րեն ներքեւը դատաւորներ դնէ, հազար մարդու
վրայ՝ մէկը, հարիւրին՝ մէկ ուրիշ մը, յիտունին՝

ուրիշ մը, տասնին ալ մէկ մը, որ մանր բաներուն դատաստանը անոնք տեսնեն. ու մեծ բան մը որ հանդըպի նէ՛ իրեն բերեն՝ որ ինքը կտրէ՛ իրաւունքը ցուցունէ: Ըս Յոթորայ տուած խրատը՝ Սոլսէս իբրև Ըստուծմէ իրեն յայտնուած՝ անանկ սիրով մուեց, ու ըսածին պէս ընելով՝ անկէ ետև ալ շատ աշխատանք չէր քաշեր այնչափ ժողովուրդը կառավարելու:

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Աստուած Սինա շերտ տասնաբանեայ սրատոյիրանքները կու տայ Խորայեղացոց :

Մտ աշխարհի 2514 : (Ելից . ԺԹ . Ի :)

Խորայեղացիք Ուափիդիմէն ելած՝ Սինա լեռան տակը եկան հասան նէ՛ լման իրեք ամիս եղաւ Եգիպտոսէ ելլելէն. և հոն լեռանը դիմացը երբոր Ըստուծոյ հրամանովը բանակնին դրին կանկ առին, Սոլսէս մինաւոր Սինա լեռան գլուխը ելաւ, ու Ըստուած՝ Խորայեղացոց ազգին ըրած բարերարութիւնները Սոլսեսի առջևը դնելով, հրամայեց որ երթայ իրենց ըսէ թէ՛ Ըստուած հետերնին ուխտ ու դաշինք կ'ուզէ դնել, որ Երբայեցոց ազգը ուրիշ ազգերուն մէջէն ընտրած՝ իրեն մէկ հատիկ սիրելի ժողովուրդ ընէ: Սոլսէս ալ լեռնէն իջաւ՝ աս բաներս բոլոր ժողովրդոց առջևը դրաւ: Ընոնք ալ ամէնը մէկ բերան հաւնեցան խօսք տուին թէ՛ ինչ որ Ըստուած մեզի կը հրամայէ նէ՛ կը հնազանդինք անանկ կ'ընենք: Սոլսէս նորէն լեռը ելաւ որ աս ժողովուրդին սրատասխանը Ըստուծոյ տանի. և ան ատենը Ըստուած Սոլսեսի

րսաւ . “ Ինչուան աս օրս հետոյ առանձին կը
խօսէի , հիմն ամպերու մէջէն պիտի քու հետոյ
յայանի զուրցեմ , որ ժողովուրդն ալ իրեն ա-
կանջովը լսեն , և այսուհետե կատարեալ հաւ-
տան քեզի ” : Ատրը հրամայեց որ նորէն եր-
թայ անոնց ասպարէ՛ որ լաթերնին լուանան
սրբութիւն մաքրութիւն , ու այսպիսի պատրաստու-
թեամբ իրեն օրէնքները առնեն՝ որ անկէց ե-
րեք օրէն ետե պիտի տայ . նաև աս ալ ըսաւ որ՝
լեռանը չորս դին սահման (այսինքն սինօս) դը-
նեն , ու չըլլայ թէ մարդ կամ ուրիշ կենդանի
անկէց ասդին անցնի , որ ան տեղը չբառժուի
չարաչար մեռնի : Ըս բողոք բաներս Ս՛ովսէս Ս-
րայեւացւոց դալէն ըսելէն ետե , երբոր օրն որ
եղաւ՝ առտուանց կանուխ ժողովուրդը ելաւ տե-
սաւ որ՝ Սինա լեռան գլուխը ամպերով ծածկած
ստիպի կայծակներ ցաթկըցընելով կ'երէր կը
մխար , ու զուարով զարհուրելի փողերու ձայներ
անկէց կու գար : Արբոր անանկ լեռան չորս դին
ժողովուրդն որ սարտափած կեցեր էր , ան ատե-
նը Ըստուած ահաւոր ձայնով՝ ան ամպերուն մէ-
ջէն իր տասնաբանեայ սրատու իրանքները սկսաւ
աս կարգովս ըսել :

Ա . “ Այս եմ քու Տէր Ըստուածդ , որ քեզ
Ազխպտացւոց ծառայութենէ ազատեցի : Իսմէ
ալ ուրիշ աստուածներ չունենաս . ամենեւին մէկ
կերպարանքով մը չըլլայ որ քեզի կուռք շինես՝
ոչ երկինք տեսածներուդ նմանութիւնով , ու
երկրի վրայ եղածներուն , կամ ջրի մէջ գըտ-
նուածներուն . ու չըլլայ թէ ասոնց երկրպագու-
թիւն ընես , ասոնք պաշտես . թէ չէ՛ գիտնաս որ
ես քու տէր Ըստուածդ՝ անանկ նախանձուս Ըս-
տուած եմ , որ իս ատող հայրերուն մեղաց մնա .

ցած պատիժը՝ կը հատուցանեմ իրենց որդւոցը
ինչուան իրեք ու չորս պորտը . ու իս սիրողներուն
կ'ողորմիմ՝ ինչուան անոնց հազար պորտը :

Բ . “ Բու տէր Մատուծոյդ անունը՝ բերան
առած պարագայ տեղ մի բանեցրնէր . զի անաս որ
Մատուծ ան մարդը անմեղ չտեսեր , որ իր ա-
նունը անհարկի տեղուանք կը բանեցրնէ :

Գ . “ Զիչէ՛ որ սուրբ պահես շաբաթ օրը :
Սեց օրուան մէջ բանէ , ինչ զործք ունիս նէ-
րընէ . եօթներորդ օրը շաբաթ՝ քու տէր Մա-
տուծոյդ նուիրած է . ան օրը ամենակին բան մի
բանիր , ո՛չ դուն , ո՛չ քու տղադ , ո՛չ քու աղ-
ջիկդ , ո՛չ ծառադ , և ո՛չ աղախինդ . ո՛չ էշդ , ո՛չ
եզդ , և ո՛չ ուրիշ անասուններդ . նաև ո՛չ քեզի
հետ կեցող օտար մարդիկը : Արովհետև՝ վեց
օրը ըրաւ տէր Մատուծ երկինքը ու երկիրս ու
ծովը՝ և ամէն բաները որ անոնց մէջ են , ու
եօթներորդ օրը հանգչեցաւ . անոր համար ինքը
օրհնեց աս օրս ու սրբացուց :

Դ . “ Պատիւ տուր մեծարէ քու հայրդ ու
քու մայրդ , որ քեզի աղէկ ըլլայ և շատ ապրիս
ան բարի երկրին վրայ՝ որ քու տէր Մատուծդ
պիտի քեզի տայ :

Ե . “ Սպանութիւն մի ընէր :

Զ . “ Շ նութիւն մի ընէր :

Է . “ Վճողութիւն մի ընէր :

Ը . “ Սուտ վկայութիւն մի ընէր քու ըն-
կերիդ վրայ :

Թ . Ժ . “ Մի ցանկար , այսինքն աչք մի տրն-
կեր ուրիշի տանը , կամ անոր արախն (այսինքն
Թառային) : Մի ցանկար ուրիշի կնկանը , ո՛չ
անոր ծառային , ո՛չ աղախնին , ո՛չ եզանը , ո՛չ ի-
շուն , և ո՛չ ալ ինչ որ ուրիշը ունի նէ .” :

Ինստանը ժողովուրդը երբոր աս աստուածային սոսկալի տեսիլքս տեսաւ ու ահագին ձայներն որ լսեց՝ սաստիկ զարհուրելով ետ քաշուած աղաչեցին Սոլսեսի՝ որ անկէ ետքը ինքը երթայ Բստուծոյ հետ մինաւոր խօսի, ու անանկ գայ իրենց հասկըցնէ Բստուծոյ հրամանները, որ չըլլայ թէ ըսին՝ մէյ մ'ալ որ ասանկ հանդրպի նէ՝ վախերնէս մեռնինք։ Սոլսէս ալ իրենց սիրտ տուաւ մսիթարեց. և երբոր նորէն Բստուած ինքը կանչեց, Սինա լեռը ելաւ՝ ու ամպով ծածկուած հոն Բստուծոյ հետ կեցաւ քառսուն օր՝ քառսուն գիշեր։ Եւ ան ատենին մէջը Բստուած ուրիշ ալ շատ օրէնքներ և աստուածպաշտութեան ծէսեր Սոլսեսի ըսաւ որ Խորայեւրացոց տայ սորվեցընէ. ետքը ան տանաքանեայ պատուիրանքներն ալ երկու քարի վրայ գրած՝ Բստուած իրեն տուաւ որ Խորայեւրացոց տանի։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

Խորայեւրացիք Աստուած կը բողոքն՝ նորք կը պաշտեն։

Ամ տշխարհի 2514 : (Եղեց . ԼԲ . ԼԳ . ԼԴ .)

Ինչ քառսուն օրուան մէջը Խորայեւրացիքը տեսնելով որ Սոլսէս ուշացաւ՝ չերեւար կոր, շատ դժարնին եկաւ. ուստի գացին Մհարոնի վրայ թափեցան ըսին. «Վուն մեզի աստուածներ շինէ՝ որ անոնք մեզի առաջնորդութիւն ընեն տանին. ան Սոլսէսը որ մեզ Եգիպտոսէ հանեց՝ չենք գիտեր ինչ եղաւ որ չերեւար»,։ Մհարոն ալ հրամայեց որ՝ երթան իրենց կնիկներուն ու զաւկրներուն ոսկի օղերը ականջներէն հա-

նեն իրեն ըերեն . և անոնք Մհարոն առաւ հա-
 լեցուց , անով մէկ սակիէ հորթ մը թափեց : Լք-
 բոր աս տեսան Խորայեւացիքը՝ խիստ ուրախացան ,
 ու (ինչպէս կ'ըսեն) հրաշք սեպելով աս բանս
 որ Լազիստացուոց պաշտած Մատուծոյն կերպա-
 բանքը ելաւ . անոր համար սկսան ըսել՝ թէ Մս-
 է մեր Մատուածը որ մեզ Լազիստուէն հանեց :
 Մհարոն ալ դրաւ՝ անոր առջև սեղան շինել
 տուաւ , ու ամենուն ծանուցում ըրաւ որ վաղը
 գան անոր տօնախմբութիւնը կատարեն . ժողո-
 վուրդն ալ մէկալ օրը եկան զոհ մատուցին անոր
 առջև . և ամէնքը ուրախութեամբ նստան կե-
 րան խմեցին , ու ետքը երան սկսան խաղալ պար
 ցաթիկէլ ան հորթուն առջևը : Մս Խորայեւա-
 ցուոց ըրած կռապաշտութիւնը՝ Մատուած Սինա-
 լերան վրայ Սոլսեսի խմացուց . և վրանին սաս-
 տիկ սրդողելով ըսաւ որ բողբոլին ջարդէ ջնջէ
 բոլոր Խորայեւացիքը , ու Սոլսեսը միայն պա-
 հէ՛ մեծ ազգ ընէ : Բայց Սոլսէս մէջ մտաւ ,
 հազար աղաչանքով պաղատանքով ձորով դա-
 դրեցուց Մատուծոյ բարկութիւնը որ աս բանս
 չընէ : Ետքը Սոլսէս ան Մատուծոյ դրած տաս-
 նաբանեայ պատուիրանքը ձեռքը բռնած՝ Յե-
 սուի հետ որ լեռնէն իջած կու գար կօր , Յե-
 սուն հեռուանց ժողովրդոց կանչուրատելու ձայնն
 որ լսեց , բանը չգիտնալով Սոլսեսի ըսաւ թէ՛
 « Բանակէն պատերազմ ընելու ձայն կու գայ
 կօր » : Սոլսէս ալ ըսաւ . « Մս՝ յաղթութիւն
 ընողներու կամ յաղթուողներու ձայն չէ , հա-
 պա ես թմրած գինովներու ձայն կը լսեմ » : Ե-
 տե երբոր Սոլսէս Խորայեւացուոց բանակին մօ-
 տեցաւ , և ան հորթը՝ ու առջևը պար բռնող-
 ներն որ տեսաւ՝ սաստիկ բարկութենէն ներքև

վրայ եղած՝ ան իր ձեռքի տասնաբանեայ պա-
տուիրանքին քարերը ան տեղը դետինը զարկաւ
Զարդեց, Մարտան են, ըսելով, աս փոփոխամիտ
ժողովուրդս այսպիսի աստուածային սուրբ օրի-
նաց : Ատքը շուտ մը գնաց կործանեց ան ոսկի
հորթը, որ կրակը դրաւ երեց, խարտոցով (այս-
ինքն էլէտ) մանրեց, և ան մանրուքը ջրին մէ-
ջը ցանեց՝ թերեհաւատ ժողովրդոյը խնցուց, որ
խմանան թէ ան ինտոր ոչինչ բան է, որ իրենք
Մատուծոյ տեղ դրած կը պաշտէին : Ասե ՄՏա-
րանի վրայ ալ սաստիկ սրդողելով երեսը վար-
տուաւ՝ որ աս կուսպաշտութեանս ինքն ալ պատ-
ճառ եղեր է՝ դէմ չէ կեցեր : Ասե աս կերպով
ուզեց Սոլսէս որ Մատուծոյ բարկութիւնը Սա-
րայեւացոց վրայէն վերցընէ . ինքը մէկդի բա-
նակին դուռը կեցաւ՝ ու ժողովրդոց ըսաւ . « Ո՛վ
որ Մատուծոյ դիէն է նէ՝ քովս դայ », Ս որ
լսեցին՝ Վ և եայ ցեղին մարդիկը՝ բոլորը բոլր
ժողովուեցան . ան առենը Սոլսէս Մատուծոյ
կողմանէ իրենց հրամայեց որ թուրերնին առնեն
բանակը մանեն, ու չնային՝ ոչ ազգական ոչ բա-
րեկամ, առանց խնայելու սպաննեն ան կուսպա-
տութիւն ընողները : Մանկ՝ իրեք հազարի չափ
մարդ ջարդուեցաւ . և Վ և տացիները աս սուրբ
վրէժինդրութեանս համար մասնաւորապէս Մ-
տուծոյ սիրելի եղան՝ իր օրհնութիւնը աւել-
որ ետքը Սարայեւացոց քահանայութիւնը Մ-
տուած իրենց ցեղին տուաւ :

Մնիկ ետե նորէն մէջ մտաւ Սոլսէս, ու
չատ աղաչանքով Մատուծոյ սիրտը առաւ, որ աս
ապերախտութեանս համար ջնջել վերցընէ
կուզեր Սարայեւացոց ժողովուրդը . ու անանկ
ըրաւ որ՝ Մտուած հրամայեց իրեն որ առջինը

պէս՝ նորէն երկու քար շինէ Սինա լեռը եր-
թայ, Սոլսէս ալ շինեց՝ առաւ տարաւ. ու հոն
մէյ մ'ալ Մատուծոյ հետ քառսուն օր քառսուն
գիշեր կեցաւ, որ Մատուած ան առջի տուած
օրէնքները նորէն յիշելով՝ ան քարերուն վրայ
Սոլսէսի գրել տուաւ տասնաբանեայ պատուի-
րանքը: Աւ անկէ ետեւ երբոր աս պատուիրանք-
ներս առած Սոլսէս եկաւ Իարայեւացոց երե-
ցաւ, Սոլսէսի երեսը անանկ փառաւոր ճառա-
գայթով կը վառուէր՝ որ ժողովուրդը վախէն քո-
վը չէին կրնար մօտենալ. անոր համար՝ ալ անկէ
ետքը Սոլսէս սովորութիւն ըրաւ՝ որ ժողովրդ-
դին հետ զրուցելու որ կ'ըլլար՝ երեսը մէկ քօ-
ղով մը կը ծածկէր, և երբոր կ'երթար Մատու-
ծոյ հետ խօսելու՝ ան քօղը երեսէն կը վերցընէր:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Խորակիւ ու տապանակիւ շիկէր, և ուրիշ աստուած-
պաշտօնքեան ձեւերը:

Աժ աշխարհի 2514: (Եւեց. ԼԵ. ԼԶ. ԼԷ:)

Սոլսէս երկրորդ անգամը տասը պատուիրա-
նաց քարերը բերելէն ետեւ՝ բոլոր ժողովուրդը
մէյտեղ ժողովեց, ու յորդորեց որ ան քառսուն
օրուան Մատուծոյ իրեն յայտնած աստուած-
պաշտութեան բաներուն ձեռք զարնեն՝ կատա-
րեն:

Մտնք ալ սիրով խօսք տուին որ ընեն. ուստի
սկսան ընծայ տալ Մատուծոյ իրենց ազէկ հա-
գուստները և զարդարանքները, նաև սկիի: ու
արծրթէ ամանները, ազնիւ քարեր, և ուրիշ ալ
այսպիսի սուղ բաներ: Մտնք Սոլսէս առաւ

ու Մատուցոյ հրամանովը կանչեց Ռեսէլիէլը սուած մէկ մարդ մը (Յուդայի ցեղէն, ու Վդիար՝ Ղանայ ցեղէն՝ իրենց յանձնեց. որ երկուքն ալ (այսպիսի բարակ արհեստներէն հասկընալէն ՚ի զատ՝ հողուով սրբով ալ լուսաւորուած ըլլալով), Սոլսեօսի տուն տալովը՝ առաջ Սորան վկայութեան ըսուածը շինեցին, որ մէկ սզտիկ ժամ մը կամ աղօթարան մըն էր, վրանի (այսինքն չատրսի) պէս շինած. և ճամբան՝ ուր որ Սորայեւացիք բանախնին կը դնէին՝ անոր մէջ տեղը ասխորան վկայութեանը կը կայնեցընէին կը յարմարցընէին: Ատքը Տապանակ կտակարանաց ըսուածը շինեցին, (որ ան խորանին մէջը կը պահուէր). և աս ալ մէկ սնտուկ մըն էր անփուօ (կամ ապանօղ) փայտէ՝ ներսէն դրսէն ոսկիէ թիթեղով (այսինքն թէնէքէով) սլատած. ու վրայի խուփը (կամ խափախը) բոլոր մէկ կտոր թափծու ոսկիէ՝ որ ասիկայ ալ Վաւութիւն կը սուէր: Մտր վրայ երկու ոսկիէ թափծու քերթ հրեշտակ դրած էր՝ մէկը ասդիէն և մէկալը անդիէն, որ թեւերնին (այսինքն խանաանին) բացած կը ծածկէին տապանակը. և աս տապանակիս մէջը կը պահուէր տասնաբանեայ պատուիրանայ դրած քարերը, և մէկ ոսկիէ սափրով (այսինքն տէստիով) մը մանանան. ու ետքնակ Վհարոնի գաւազանը որ հրաշքով կանանցեալ. աս իրէք բանս: Մսկէ ՚ի զատ վկայութեան խորանին մէջը երկու սեղան ալ շինուեցաւ ու կիտով սլատած. ասոնց մէկը կը ըսուէր՝ Սեղան ու աղաղբութեան, որ միշտ տասուերկու բաղալի հաց վրան կը դրուէր. և մէկալը Սեղան խնկոյ ուր Մատուցոյ ընծայուած բաները կը դրուէին ու խորանին դրսի դին գաւիթը՝ ուրիշ սեղ

մին ալ վրան ողջակեզ զո՛հ ընելու համար , զո-
հին ամէն գործիքներովր :

Կաև մէկ մեծ ոսկիէ թափծու աշտանակ
(այսինքն ճրագկալ կամ շամտան) մին ալ բա-
րակ բանուածքներով զարդարած , որ վերի գին
եօթը ճեղ կը բաժնուէր , և ամէն մէկին ծայրը
մէյմէկ կանթեղ , որ բոլոր գիշերը ան վկայու-
թեան խորանին մէջը պիտի վառէր : Կաև եր-
բոր բոլոր Վ և եայ ցեղը՝ (որ Վ և տացի ըսուե-
ցան) , Լստուած իր ծառայութեան համար որ
առաւ , ու անոնց մէջէն Սոլսեօի եղբայրը Լ-
հարոնը՝ իր զակրներովր որդւոց որդի քահանայ
ու քահանայապետ սահմանեց որ ըլլան , անոնց
աստուածպաշտութեան ատենի հագուստներն
ալ շինուեցան . և աս բոլոր ըսածներս՝ Սոլսէս
սուրբ եղով օժեց որ Լստուծոյ նուիրուեցան :
Ս կայութեան խորանը երբոր ասանկ իր ամէն
պիտանաւորութեամբ որ լմնցաւ , ան ատենը Լս-
տուած ալ ամպով ծածկեց զանիկայ , ու բոլոր
գիշերը մէկ ճառագայթով լոյս մը անոր վրան
կ'երևար : Շահբայ ըրած ատեննին որ խորանը
կը ժողվէին՝ ան ամպը անյայտ կ'ըլլար . ու տեղէ
տեղ ուր որ բանակ կը դնէին՝ խորանը կը հաս-
տատէին , նորէն ան ամպը կու գար խորանը կը
պատէր , ու միշտ գիշերը ան լոյսը վրան կ'ե-
րևար :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Նարայ ու Արիտոյ, և ուրիշ յանցաւորները կը
պատժուին :

Յանտոյց ամի : (Ղևա . Ժ . ԻԴ : Բուսց . ԺԵ :

Աստուած ուրիշ օրէնքներէն 'ի զատ աս ալ
հրամայեր էր՝ որ քահանաները զիշեր ու ցորեկ
կրակը միշտ վառ պահեն ողջակիզաց սեղանին
վրայ, որ այն սուրբ կրակէն բանեցընեն բուր-
վառին մէջը՝ երբոր խորանը խնկարկել պէտք
լլայ :

Սէկ անգամ մը հանդրպէցաւ որ՝ Վարդ
կամ Վարդառ ու Աբիուդ՝ Նարոնի մեծ որդի-
քը՝ (որ իրենք ալ քահանայ էին), անհոգու-
թեամբ իրենց բուրվառներուն մէջը դրսէն ու-
րիշ կրակ դրած՝ անանկ խորանը խունկ կը
ծխէին նէ՝ յանկարծ սեղանէն կրակ մը ելաւ՝ ու
հոն խորանին մէջը երեց մեռցուց զիրենք : Ան
որ տեսան՝ ամէնքը սոսկացին զարհուրեցան . ու
մէկալ քահանաներուն խրատ եղաւ որ՝ ինչպէս
զգուշութեամբ պիտի կատարեն ան Աստուծոյ
հրամանովը դրած ծէսերը :

Ասիկէ ետքը մէկ անգամ մը երկու հօգի մէկ
մէկու հետ կռիւ ընենին՝ ասոնցմէ մէկը (որ
հայրը եզիպտացի ու մայրը իսրայելացի էր)
ան բարկութեան մէջը՝ մէկալին (որ իսրայելա-
ցի էր) անունը հայհոյեց . աս որ լսեցին քովի ե.
զողները զինքը բանեցին Սովսեսի բերին : Սով-
սէս ալ Աստուծոյ հարցուց, ու հրամայեց որ ան
հայհոյիչը բանակէն դուրս հանեն, և ըրած հայ-
հոյանքը լսողները՝ երթան ձեռու ընին անոր զըն-

խուն վրան դնեն՝ նշան թէ իրենք վկայ են, և բոլոր ժողովուրդը զանհիկայ քարկոծեն. ու ա- նանկ ան մարդը սպաննեցին:

Արիչ հեղ մըն ալ մէկ խորայելացի մը գտան՝ որ շաբաթ օրը լեռը ելեր փայտ կը ժողվէր. ա- ռիկայ բանեցին Սովսեսի և Մհարմի առջևը բերին՝ որ անոր դատաստանը կտրեն: Մտնք ալ երբօր տարակուսելով մարդը բանտը դրին՝ ու հարցուցին Մատուծոյ, Մատուած հրամայեց որ անհիկայ բանակէն դուրս հանեն՝ ու այնպէս քար- կոծելով մեռցրնեն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Խորայելացիք Սատուծոյ դէմ կը տրտնջան, ու կը պատ- ժային:

Աժ աշխարհի 2515: (Թուոց. ՃԵ.)

Խորայելացւոց բանակը մէկ տարիի չափ Սինա լեռան տակը կենալէն ետեւ՝ երբոր ելաւ անկէց իրէք օր ճամբայ ըրաւ դէպ ՚ի Փառանու անա- պատը, ան առենը ժողովուրդը Մատուծոյ դէմ սկսաւ տրտնջալ՝ թէ աս ինչ չարչարանք է մեր քաշածը: Մտնք համար սրդողեցաւ Մատուած՝ ստեղծի կրակ մը ձգեց վրանին, որ երեց լափեց բանակին մէկ կողմը՝ ուր որ ան տրտնջողները կ'ըլլային. անանկ որ՝ Սովսեսի աղօթքովը ճո- ըով դադրեցաւ աս պատիժս. և աս պատճա- ռովս ան տեղւոյն անուէր՝ Հրայրեաց (այսինքն եանդրն) ըսուեցաւ: Մսկէ ետքը հասարակ վա- ըրի ժողովուրդին մէկ փափաք մը եկաւ միս ուտե- լու. և անոնց հետ մէկ եղած մէկալներն ալ՝ ա- նանկ նստեր լսով կ'ըսէին. « Մխ թէ մեզի

միս ըլլար որ ուտէինք . դեռ մտուրնէս չելլար ան
 ձկները՝ որ Ազիպտոս ձրի կ'ուտէինք . ուր է ան
 սեխն ու ձմերուկը , ու սրասը , սոխն ու սխտորը ,
 որ անօթեցեր ենք՝ և մանանայի՛ն 'ի զատ ա-
 չուրնիս ան ուրիշ բան չտեսնար ,, : Սովսէս ալ
 աս բանս լսելով՝ տակն ու վրայ եղաւ , սկսաւ
 գանգըտելով Մատուծոյ ըսել , թէ « Այս մինա-
 ւոր կարողութիւն չունիմ այսչափ ժողովուրդը
 հոգալ ու կառավարել . ես ասոնց ուսկից պիտոր
 միս տամ , որ չորս դիս առեր կու լան ու կ'ըսեն
 թէ՛ մեզի ուտելու միս տուր . աս բանս ես մի-
 նակ որ գլուխ չեմ կրնար տանիլ . հասցա թէ չէ՛
 ինծի մեծ շնորհք կ'ընէիր որ իս մեռցընէիր՝ քան
 թէ աս թշուառութիւնները տեսնամ ,, :

Ան ատենը Մատուած ալ Սարայեւացւոց մէջէն
 եօթանասուն հոգի հասուն մարդիկ ընտրել
 տուաւ , ու Սովսէսի շնորհքէն անոնց ալ տալով
 օգնական դրաւ իրեն , որ հետը մէյտեղ ժողո-
 վուրդին պիտանաւորութիւնը հոգան : Աւ ետ-
 քը բարկութեամբ հրամայեց որ՝ ան ժողովուր-
 դը պատրաստուի որ վաղուան օրէն սկսած միս
 ուտէ . չէ թէ մէկ քանի օր մը , հասցա մէկ ամիս
 մը ատեն , ինչուան որ , ըսաւ , ան յափրանալնէն
 (այսինքն պրիսմիչ ըլլալէն) քիթերնէն դուրս
 գայ : Մը ըսածիս վրայ Սովսէս ալ զարմանա-
 լով դարձաւ ըսաւ Մատուծոյ . « Մը ժողովուր-
 դիս մէջը միայն կտրիճները վեցհարիւր հազար
 հոգի են , ինչպէս պիտոր ըլլայ՝ որ ասոնց ամիս
 մը միս բաւէ . որչափ կով ու ոչխար պիտոր մօր-
 թուին ,, : Մատուած ալ իրեն պատասխան տուաւ
 թէ՛ շիմն կ'իմանաս Մատուծոյ կարողութիւնը ,
 որ ան ինչպէս պիտոր ըլլայ : Ան ատենը ծովու դիւն
 մէկ սաստիկ հով մը ելաւ , և դէպ 'ի Սարայեւա-

ցւոց բանակը այնչափ լորամարզի (այսինքն պըլ-
տըրձին) բերաւ ձգեց, որ բոլոր բանակը լեցը-
նեւին ետև, բանակին չորս դին օրով ճամբայ՝
երկու կանգուն բարձր գետինը դիզուած կեցաւ,
անանկ որ՝ երկու օր մէկ գիշեր ժողովուրդը վրան
Թափեցան, ժողովելէն չէին կշտանար, որ մէջեր-
նին պինտ քիչ ժողովողը՝ տասը քու (կամ 400
հոխայի չափ) բան դիզեց. անոր համար շատն
ալ սպիտեցին ու անանկ պահեցին: Մայց շատ
չանցաւ՝ և աս միսս դեռ ժողովրդոց բերանն էր,
ուտելով չէին հատուցած, որ Մատուած իր բար-
կուծիւնը Թափեց. ան տժգոհացող որկրամոյնե-
րուն վրայ որ չարաչար սպաննեց զիրենք: Եւ աս
պատճառովս ալ ան տեղը ըսուեցաւ՝ Ղերեզ-
մանը ցանկուծեան. ինչու որ՝ հոն Թաղուեցան
ան մահն ցանկացողները:

Գ Լ Ո Ի Խ Ժ Ե .

Սևարոն ու Մարիամ կը պատժուին :

ԱՄ աշխարհի 2515 : (Թուոց . ԺԲ :

Մնկէց որ ելաւ Իսրայելացւոց բանակը Մսե-
րովթ եկաւ, Մարիամ Մովսէսի քոյրը (ինչ-
պէս կ'ըսեն) Մովսէսի կնիկանը հետ կուրտե-
ցաւ. ինչու որ՝ աս կնիկը տեսնելով որ Մովսէս
իր էրիկը անանկ Մատուծոյ սիրելի եղաւ՝ առաջ
ելաւ, իրեն քիծն ալ մեծցաւ, ու անով կը պար-
ծենար: Աւտի աս բանիս չդիմանալով Մա-
րիամ՝ որ մէկ եթովպացի կամ մադիանացի
կնիկ մը ասանկ գլուխ վերցընէ հպարտանայ, իր
Մհարոն եղբայրը հետը առած, սկսան Մովսե-
սի դէմ՝ վար զարնելով ըսել թէ՝ « Միծէ Մս-

տուած միայն Մովսէսի հետ կը խօսի, հասցա մեզի հետ ալ խօսեր զբուցեր է, : Մովսէս ալ բնութեամբ խիտա հեղ (այսինքն մաղլում) ու անուշ մարդ մը ըլլալով՝ ամենեւին անոր վրայ շարդողեցաւ, դէմ չգրուցեց, Բայց Եստուած ի բնն տէր ելած՝ սաստիկ բարեկացաւ վրանին, հրամայեց որ երկուքն ալ խորանը դան. և հոն տեղը դրանք առջևը ամպին մէջէն խօսեցաւ յան դիմանեց զիրենք, ու ըսաւ. « Եսանկ զիանաք որ՝ ուրիշ մարդարէներու հետ խօսելու որ կ'ըլլամ՝ տեսիլքով անոնց երազին մէջը կ'երևամ՝ այնպէս հետերնին կը խօսիմ. բայց Մովսէսի հետ՝ որ իմ տանս հաւատարիմ ծառան է՝ անանկ չեմ ըներ, հասցա յայտնի բերնէ բերան կը զրուցեմ. ուր մնաց որ ինքը իմ աստուածային փառքս ալ տեսեր է. անանկ է նէ դուք ինչպէս չվախոցաք՝ որ աս իմ Մովսէս ծառաս բանահրեցիք, : Երբոր երկուքն ալ ասանկ չեխ կերած Եստուծոյ առջևէն ելան որ երթան, շուտ մը պատիժը առաջ Մարիամու վրայ եկաւ, որ բոլոր մարմինը բոր դուրս տուաւ՝ ձիւնի պէս վրան ձիւնաբանակ կտրեցաւ : Են որ տեսաւ Եհարոն՝ գնաց Մովսէսի մեղայ ըսաւ, ու իրմէ թողութիւն խնդրելով աղաչեց որ ան պատիժը իրենց վրայէն վերցընէ : Մովսէս ալ անոնց համար Եստուծոյ աղօթք որ ըրաւ, ան ատենը Եստուած հրամայեց որ Մարիամը եօթը որ բանակէն զատուի դուրս ելլէ կենայ՝ ինչուան որ բորոտութիւնը բժշկուի, ու անանկ նորէն բանակը դառնայ :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Մովսէս յրաններ կը խրկէ Աւետեաց երկիրը . և
Խորայեւացիք նորէն կը սրտածախն :

Աժ աշխարհի 2515 : (Թուոյ . ԺԳ . ԺԳ :

Երբոր Խորայեւացւոց բանակը կազէս Ռաւ-
նէայ եկաւ հասաւ , (որ Փառանու անապատին
մէջն էր) , Մովսէս իրենց ծանուցումը բաւ թէ՛
ալ Մէտեակաց երկիրը մտնելը մօտեցան՝ որ Մս-
տուած խոստացեր էր որ իրենց տայ . բայց ժո-
ղովուրդը վախցաւ՝ սիրտ չբրաւ առաջ երթա-
լու . ուստի ազաչեցին Մովսէսի՝ որ առաջ՝ մէկ
քանի հոգի մը խրկէ ան երկիրները որ տեսնեն
թէ ինտոր է : Մովսէս ալ Մստուծմէ հրաման
առաւ , և այնպէս տասուերկու Խորայեւացւոց
ցեղէն մէյմէկ մարդ ընտրեց որ երթան , ու ի-
րենց ապրտաբեց որ աղէկ մը նային տեսնեն ան
երկիրներուն որպիսութիւնը և մարդիկը . նաև
ան տեղի բուսած պտուղներէն ալ հետերնին
առնեն բերեն : Վարնան ատեններն էր , երբոր
աս տասուերկու լրտեսները ճամբայ ելան դա-
ցին . ու հոն քառասուն որ ուշանալէն ետև՝ դար-
ձան Խորայեւացւոց բանակը եկան , և իրենց ցո-
ցընելու համար՝ անկէց փրցուցեր հետերնին բե-
րեր էին սրտուական նուռեր ու թուզեր , և մէկ
խաղողի ողկոյզ մը , որ այնչափ մեծ ու ծանր էր ,
որ մէջէն փայտ մը անցուցած՝ անանկ երկու հո-
գի կը վերցընէին : Արտեսները աս պտուղներս
ցուցընելով՝ բոլոր ժողովրդոց առջևը սկսան Մով-
սէսի ու Մհարոնի պատմել թէ՛ « Իբաւ ան
երկիրները պարարտ և բարեբեր տեղուանք են՝

որ այսպիսի պտուղ հու տան , բայց շատ զօրա-
 ւոր և ուժով են անոնց մարդիկը , քաղաքնին
 խոշոր պարիսպներով պատած ամրացած , : Սու-
 ղովուրդը աս բաներս որ լսեցին՝ սրտերնին սաս-
 տիկ վախ ինկաւ , մէջերնին մէկ շընկոց մը
 մտաւ , ու սկսան Սովսեսի դէմ մամուլ : Վա-
 դէք Յուդայի ցեղէն՝ որ ան տասուերկուքէն
 մէկն էր՝ ինքը մէկալներուն ներհակ ժողովրդոցը
 սիրտ հու տար թէ Սի վախնաք՝ կ'երթանք տակ
 կ'առնենք զանոնք . մէկալ տասը հոգին նորէն
 դէմ կը դնէին , ու ժողովրդոց սիրտը աւելի վախ
 կը ձգէին . “ Ըն մեր տեսած տեղը , կ'ըսէին ,
 մարգածախ (այսինքն մարդ կերող կամ մարդ
 զայ ընող) երկիր մըն է . անոր մարդիկը խոշոր
 մէյմէկ հսկայ են , անանկ որ՝ անոնց քովը մենք
 մարախ (այսինքն պզտի չէքիրկէ) կը նմանէինք , :
 Ընոր համար ժողովրդոց մէջը շատ մեծցաւ խռ-
 վութիւնը , ու բոլոր ան գիշերը իրար անցած՝
 հու լային կը տժգոհային Սովսեսի ու Մհարոնի
 դէմ . “ Ը ատ աղէկ էր , կ'ըսէին , որ մենք Նգիպ-
 տոս մեռած ըլլայինք՝ կամ աս անասպատ տեղս
 մեռնէինք , քան թէ մեզ Մարգած հոն տանի՝
 որ պատերազմով ջարդուինք՝ ու մեր կնիկները
 տղաքը թալլուին , : Նաքը ելան “ Ըսանկ չըլլար ,
 ըսին , մենք Նգիպտոս կը դառնանք կ'երթանք , :
 ու սկսան խորհուրդ ընել որ մէջերնին մէկը ա-
 ռաջնորդ դնեն՝ որ անկէց ելլեն դառնան : Ըն
 ատենը Սովսէս ու Մհարոն ժողովրդոց առջևը
 երեսի վրայ գետինը ինկան կ'աղաչէին որ աս
 բանս չընեն . անոնց հետ նաև Յեսու որդի
 Նաւեայ ու Վաղէք որդի Յեփոնեայ , (որ ան
 տասուերկու լրտեսներէն էին) , իրենք ալ ասոր
 վրայ սաստիկ ցաւելով լաթերնին պատուած՝ ժո

զովուրդը կը յորդորէին որ ամենեւին չվախնան
 հոգ չընեն, միայն թէ Մատուած հետերնին ըլ-
 լայ, ան կը պատերազմի՝ կ'ըսէին՝ իրենց տեղը :
 Բայց ժողովուրդը մտիկ չըրաւ, հապա կատղած
 սկսան վրանին վազել, և հոն տեղը ան չորսն ալ
 կը քարկոծէին, թէ որ ան ժամանակը յանկար-
 ծակի Մատուծոյ փառքը՝ վկայութեան խորսնին
 վրայ չերևնար, որ ամէնքը յայտնի տեսան. ու
 կանչեց Սովսէսը ըսաւ. « Մը քանի մէկ է որ ատ
 ժողովուրդը զիս կը սրդողցընէ. այսչափ հրաշք-
 ներ ըրի ատոնց աչաց առջևը, ու դեռ ինծի չեն
 հաւտար. թող տուր, կ'ըսեմ, ինծի՝ որ սպաննեմ
 կորսնցընեմ զատոնք, և քեզ քու ազգովդ ատոնց-
 մէ աւելի մեծցընեմ շատցընեմ. » : Սովսէս ալ
 շուտ մը սկսաւ նորէն աղաչել Մատուծոյ, որ իր
 երկայնամտութեամբը աս անգամ ալ իր ժողովրդ-
 դոցը մեղաց թողութիւն տայ, որ « Չըլլայ թէ,
 ըսաւ, Լքիպտացոց և ուրիշ անհաւատ ազգե-
 րուն բերանը իյնայ Մատուած, ու ըսեն թէ՝
 Խորայեւացոց Մատուածը այնչափ բաներ ընելէն
 ետև չկրցաւ իր ժողովուրդը իրեն խոստացած
 երկիրը տանիլ, անոր համար տարաւ անսպա-
 տին մէջը ձգեց մեռցուց զանոնք. » : Սովսէս այս-
 պիտի բաներ զուրցելով՝ ճորով քիչ մը Մատուծոյ
 սիրտը առաւ՝ որ բարբառիին ջընջէ ժողովուրդը :
 Բայց այսու ամենայնիւ երդում ընելով ըսաւ
 Մատուած՝ թէ « Մն Լքիպտոսէ ելլող մարդիկը՝
 քսան տարիէն վեր մէկը ան աւետեաց երկիրը
 պիտի չմտնէ՝ ինչպէս որ իրենք ուզեցին, » : Յե-
 սուէն և Վաղեբէն ՚ի զատ. հապա ամէնքը ան
 անսպատի ճամբան ոսկորնին պիտոր թողուն, » :
 Ուստի անկէց ետև հրամայեց Մատուած որ ճամ-
 բանին դարձընեն նորէն դէպ ՚ի Վարմիր ծովը

երթան, ու անապատներուն մէջը ասդիս անդին մտորած պտրտին, ինչուան որ քառսուն տարին ընն կատարուի, ետքը Մէտեաց երկիրը հասնին, փոխանակ ան քառսուն օրուան՝ որ լրտեսները հոն ուշացան: Մը Մստուծոյ սպառնալիքը և պատիժներն որ Խորայեւրացիք լեցին, մտքերնին դարձաւ՝ սկսան ցաւիլ ու զզջալ իրենց ըրածներուն վրայ. և մէկալ օրը առտուանց կանուխ ելան Սոլսեսի եկան ըսին թէ՛, «Սենք Մստուծոյ գէմ՝ ըրած թերեհաւատութեան մեղքերնիս կ'ուզենք սրբել. ուստի հիմա դիմացի լերան գլուխը կ'ելլենք, ու անկէց պատերազմելով ալ առաջ կ'երթանք», Սոլսէս տեղէն չշարժեցաւ, և իրենց ալ ըսաւ թէ՛, «Սի ընէք ատ բանը, Մստուած հետերնիդ շէ, ձեր թշնամիները ձեզ տակ կ'առնեն կը կոտորեն», Մստուծոյ մտիկ չըրին՝ իրենք իրենց գլխուն ելան գացին. Սոլսեսի ըսածին պէս Մմաղեկացիքն ու Քանանացիքը գէմերնին ելան՝ խել մը կոտրեցին ասոնցմէ, մնացածները խախք եղած՝ փախան բանակը դարձան:

Մը Խորայեւրացոց պատժէս ետքը՝ որով երսունըութը տարիի չափ ալ երկնցաւ իրենց ձաճ բորդութիւնը, Մստուած ան ատենները Սոլսեսի ձեռքով ուրիշ ալ շատ խտրական ծէսեր և դատաստանական օրէնքներ տուաւ Խորայեւրացոց, որ Վատացոց և Արկորդ (Սրիսոց) զրբերուն մէջը տեղն ՚ի տեղը գրած են. նան ան ժամանակները՝ ինչպէս կ'ըսեն, հանդիպեցաւ Արխայ պատիժը, որ հիմա պիտի պատմենք:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Կորինթ , Դարսանը և Աբիյոսեր կը պատժուին . ու
Անարոնիս զատագանը կը ժաղկի :

ԱՄ՝ աշխարհի 2520 : (Թուոց . ԺԶ . ԺԷ :

Կորին Գ և եայ ցեղէն՝ Մհարոնի հօրեղբօրը
որդին , որ քահանայութեան ետևէ էր , ու Գա-
թան և Մքիրոն , (որ Ռուբենի ցեղէն մեծ մար-
դիկ էին) , աս իրեքս մէկ եղած , և ուրիշ երկու
հարիւր յիսուն հոգի ալ Խարայեւացոց խօսքի
տէր մարդիկներէն հետերնին առած՝ Սոլսեսի
ու Մհարոնի դէմ գլուխ քաշեցին , յանդդնու-
թեամբ վրանին ելան ըսին թէ , “ Մս բաւական
է որ Խարայեւացոց ժողովօրդը սուրբ է , ու
զՄստուած իրենց մէջերնին ունին . ալ ձեզի ինչ՝
որ յափշտակեր էք Մստուծոյ ժողովօրդը , ու
տակերնիդ առեր կ'իջխէք վրանին ” : Մն ատենը
Սոլսէս անոնց առջևը երեսի վրայ ինկաւ՝ ա-
սանկ պատասխան տուաւ թէ՝ “ Մստուած որն որ
ուզեց նէ՝ ան ընտրեց իրեն առաւ , ու չուզած-
ները թողուց . ուստի , Կորինայ ըսաւ , աս բա-
նիս վրայ մէկալ ցեղերուն մարդոցը պիտի դժարը
գար , չէ թէ Գ և եայ ցեղին , որով Մստուած քեզ
ալ քու զաւկրներովդ իրեն առեր մօտեցուցեր է .
և աս բաւական չէ՝ քահանայ ալ կ'ուզես որ ըլ-
լաս ” : Ետքը Սոլսէս աս նշանս դրաւ Կորինայ ,
որ վաղը իր մարդիկներովը ամէնը բուրվառնին
ձեռուրնին առած խորանը դան , որ հոն Մս-
տուած իր կամբը յայտնէ . ետքը մարդ խրիկեց
որ Գաթան ու Մքիրոնն ալ իրեն դան : Մնոնք
ալ պատասխան տուին թէ՝ “ Զենք ՚ի դար .

աս հերիք չէ՞, ըսին, որ մեզ ան սրատուական
 Ազգիապապուոց երկրէն հանեցիր՝ որ կաթ ու
 մեղր կը բխէր, և աս անսպաստ տեղս բերիր
 որ ամէնքս սպաննես . նայէ՛ սըւոր, որ իշ-
 խան եղեր է հետերնիս սաստելով (այսինքն
 սէրթ) ալ կը զուրցէ . թէ որ, ըսին, մեր աչուը-
 ներն ալ փորեա հանես նէ՛ մենք քու ոտքդ գա-
 լու չենք . ։

Սովսէս աս բանս որ լսեց՝ սաստիկ տակնու-
 վրայ եղաւ, ու դարձաւ Մատուծոյ ըսաւ . «Տէր
 աս ապերախտներուն աղօթքը մի ընդունիր . ես
 ատոնցմէ ամենեւին բան մը չեմ ուզեր առեր, ու
 մէկուն զրկանք մը չեմ ըրած, որ վրաս ասանկ
 կը խօսին . ։ Մատուանց Սովսէսի ըսածին պէս
 Կորխը՝ իրեն երկու հարիւր յիսուն հետևողնե-
 ըովը բուրվառնին ձեռուընին՝ մէջը խունկ դրած՝
 խորանին դուռն որ եկան, Սովսէս ալ Մհարոնի
 հետը իրեն բուրվառը ձեռքը բռնած հոն կեցեր
 էին նէ, յանկարծակի ան տեղը Մատուծոյ փառքը
 ամպով երևցաւ բոլոր ժողովրդոցը, և Մատուած
 բարկութեամբ հրամայեց Սովսէսի ու Մհարո-
 նի՝ որ ան ժողովրդեան մէջէն մէկդի կենան, որ
 ինքը ան բոլորը մէկէն ջարդէ կորսնցընէ : Ս
 ժամանակը շուտ մը երկուքն ալ Մատուծոյ աս-
 ջևը երեսի վրայ ինկան, ու աղաչելով ըսին .
 «Մատուած Մատուած հոգւոց և ամենայն մար-
 մնոց, մէկ մարդու մը մեղաց համար բոլոր ժ-
 ղովուրդին վրայ մի պիտի գայ քու բարկու-
 թիւնդ . ։ Ատքը Մատուած նորէն Սովսէսի հրա-
 մայեց որ ժողովուրդը աս իրեք աստատանքներու
 քովէն զատուին հեռու կենան . ուստի Սովսէս
 ալ աս բանս ժողովրդոց ապրսպրեց՝ ու ըսաւ .
 «Թէ որ ատոնք ուրիշ մարդոց պէս մեռնին նէ՛

Նշան ըլլայ որ Մատուած զիս ձեր վրայ չէ խրկեր .
 հապա թէ կարգէ դուրս ցուցանելով ողջ ողջ գե-
 տինը անցնելու որ ըլլան , գիտնաք որ ատ մար-
 դիկը զՄատուած սաստիկ սրդողցուցեր են ,
 Լըբբոր աս բանս կ'ըսէր՝ մէկ մ'ալ յանկարծակի
 գողալով գետինը ձեղքուեցաւ բացուեցաւ , ու
 Կորխը , Կաթանը և Մբիրոնը ողջ ողջ իրենց
 տնով տեղովը ամէն բաներով մէջը առաւ՝ ծած-
 կուեցան անյայտ եղան . ու անկէց ժողովուրդը
 սոսկալով անանկ մէկզմէկ անցան շիոթեցան՝ որ
 կարծես թէ բոլոր Կորայելացւոց բանակը գե-
 տինը կ'անցնի կոր : Մտնց ետեւէն ան երկու
 հարիւր յիսուն հոգին ալ , որ գլուխ քաշեր ան-
 դին խորանին առջևը խունկ կը մատուցանէին՝
 անոնց վրայ ալ կրակ ինջաւ , երեց մոխիր դար-
 ձուց զիրենք : Ետքը հրամայեց Մատուած որ
 ան երած մարդիկներուն ձեռքի պղնձէ բուրվառ-
 ները մէյտեղ բերեն հալեն , ու տափկը ցուցած
 ողջակեզի սեղանին վրան անցընեն , որ յաւի-
 տենական յիշատակ ըլլայ աստուածային պատու-
 հասին , որ մէյ մըն ալ Մհարոնի զաւկըներէն
 դուրս՝ ուրիշ օտար ցեղէ կամ ազգէ մարդ՝ Մ-
 տուծոյ առջևը խունկ չծխէ :

Մ սոսկալի պատուհասներէն ետե շուտ մը
 անոր մէկալ օրը ժողովուրդը նորէն սկսաւ մրո-
 մրուալ Սոփսեսի ու Մհարոնի դէմ , և վրանին
 վազելով կ'ըսէին թէ Կուք պատճառ եղաք որ
 երէկ այնչափ հոգի ջարդուեցան : Մտնք ալ ձո-
 րով ձեռուրնէն խալըսած խորանն որ փախան՝
 ամալը ինջաւ ծածկեց զիրենք . և ան ժամանակը
 Մատուած ալ սաստիկ բարկանալով նորէն աս
 երկուքին հրամայեց որ ժողովուրդին մէջէն զա-
 տուին ելեն , որ ալ մէկէն ան Կորայելացիքը

աշխարհքէս ջնջէ : Իրենք ալ երբոր Մատուծոյ առջև ինկան աղաչելու որ թողութիւն տայ իրենց , ան առենք ժողովուրդին մէջը ջարդը ալ սկսեր էր . ուստի Սովսէս շուտ մը Մհարոնի բարձր որ բուրվաւոր առնէ երթայ մէջերնին միտնէ , և այնպէս անոնց մեղքը քաւելով դադրեցընէ Մատուծոյ սրատուհաօր . բայց Մհարոն ինչուան դնայ որ դադրեցընէ՝ տասնըչորս հազար եօթը հարիւր հոգի ալ մեռած էին :

Ետքը Մատուած աս Իսրայելացւոց տրտունջները բողոքովին վերցընելու համար՝ Մհարոնի քահանայութիւնը նոր հրաչքով մը ուղեց հաստատել . հրամայեց որ՝ Իսրայելացւոց տասուերկու ցեղն ալ զատ զատ մէկ մէկ դաւազանի վրայ իր ցեղին անունը դրէ , ու Մհարոնի դաւազանին վրայ ալ զատ իր անունը դրուի , և աս բոլոր դաւազանները մէկտեղ վկայութեան խորանը դրնեն . « Ետքը ասոնց մէջէն , ըսաւ , որուն դաւազանն որ ծաղկի նէ՝ նշան ըլլայ որ Մատուած զանիկայ իրեն քահանայութեան համար զատեր առեր է » : Երբոր անանկ ըրին՝ վկայութեան խորանին մէջ տապանակին առջևը դրին աս դաւազանները , մէկալ օրը Սովսէս ու Մհարոն խորանը մտան տեսան որ՝ անոնց մէջը միայն Մհարոնի դաւազանը կանանչցեր ծլեր ծաղկեր է , ու վրան ընկոյզ (այսինքն ճէվիզ) պտուղ ալ բուսեր է . զասոնք դուրս հանեց Սովսէս՝ որ բոլոր ժողովուրդն ալ ան հրաչքը տեսան : Ետքը Մատուած հրամայեց որ ան Մհարոնի հրաչալի դաւազանը առնեն տապանակին մէջը դնեն՝ որ մէկալ բաներուն հետ պահուի , յիշատակ ըլլայ Իսրայելացւոց անհնազանդութեանը , որ մէկ մ'ալ չտրանջան՝ ու ջարդուին մեռնին :

Բայց Խորայեւացիքը աս մէկմէկու ետև վրանին եկած պատիժներէն ալ զարհուրած՝ և խիստ սրտելնին կտրած՝ եկան Սոլսեսի ըսին թէ՛
 “Սենք ալ որէ որ կը ջարդուինք կը հասնինք կը կորսուինք կոր, ով որ վկայութեան խորանը կը մտախնայ նէ՛ կը մեռնի. ասոր մէկ ճար մը տէս. մեզի ըսէ՛ ինչ ընենք, : Սոլսես ալ Մատուծոյ հրամանովը գիրենք նորէն կարգաւորեց, որ խորանին մէջի պէտք եղածը՝ միայն Մհարոն իր տղաքներուն հետ ինքը ընէ. ու Վատացիները Մատուծոյ ծառայութեան մէջ ինչ գործք իրենց գրուած է նէ՛ ան ընեն, անկէց աւելի բանի ձեռք չգարնեն, և մէկալ մնացած բոլոր ժողովուրդը խորանին հետ ամենևին բան չունենան, դրսէն միայն մէկալնոնց ծառայեն :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

Խորայեւացոց անբարոյութեան վերջի տարին հանդիպած բաները :

ՍՄ աշխարհի 2552 : (Թուոյ . Ի . ԻԵ .)

Շատ տարիներէն ետև երբոր Խորայեւացիք նորէն Սին անապատը եկան՝ և կազէս ըսուած տեղը բանակնին որ դրին, հոն Սարիամ Սոլսեսի ու Մհարոնի քոյրը մեռաւ՝ և ան տեղը թաղուեցաւ : Բայց աս տեղս ժողովուրդը նորէն ջրի պահասութիւն քաշելով՝ սկսան տրանջալով նորէն Սոլսես Մհարոն ափ առնել, թէ
 “Մս ինչ է որ մեզ աս անապատս բերեր էք՝ որ ծարաւէն ջարդէք . երանի թէ, կ'ըսէին, մենք ալ ան Մատուծոյ տուած պատիժներովը մեր եղբայրներուն հետը մեռած ըլլայինք, և աս նե-

զուժիւնները ճրաշէինք ,, : Սովսէս ու Մշա-
 բոն ալ խորանը գացին Մատուծոյ դիմեցին . Մ-
 տուած ալ Սովսեսի հրամայեց որ գաւազանը
 ձեռքը առնէ , ու Մշարոնի հետ բոլոր ժողո-
 վուրդն ալ մէյտեղ երթան ան դիմացի լեռը ,
 հոն աօրառած քարէն ջուր հանեն՝ որ ժողո-
 վուրդը խմէ : Սովսէս ալ անանկ զնաց ելաւ
 ան աօրառածին վրայ , ու ինչպէս կ'ըսեն՝ տարա-
 կուսած խելքը չկտրելով որ անկէ ջուր ելլէ
 այնպիսի թերեհաւատներուն համար՝ « Մ քա-
 րէս , ըսաւ , ձեզի ջուր մի պիտի հանենք ,, . և ա-
 բանս ըսելուն պէս՝ ձեռքը երկու հեղ որ քարին
 զարկաւ՝ սկսաւ անկէց առատ ջուր բխել , որ ժո-
 ղովուրդը իրենց անասուններուլը խմեցին : Բայց
 աս բանիս մէջ Մտուած քարկացաւ Սովսեսի
 ու Մշարոնի , որ ինչպէս կ'ըսեն՝ իրենց աս գործ-
 քըս ընելնինի Մատուծոյ ըսածին վրայ տարակու-
 սուժիւն մը ցուցնելով չար օրինակ տուին ժո-
 ղովրդոցը . անոր համար երկուքին ալ աս պա-
 տիժս տուաւ Մտուած՝ որ Մէտեաց երկիրը
 չմտնէ . և ան պատճառովը աս ջրիս անունը՝
 Չուր բամբասանաց կամ հակառակուժեան ը-
 սուեցաւ :

Ետքը երբոր Կաղեսէ ելան Իսրայելացիք՝
 հովր լեռան տակը եկան , (որ ալ իրենց Եգիպ-
 տոսէ ելլելուն քառսուն տարին մտան) , Մտուած
 Սովսեսի իմացուց թէ Մշարոնի ալ ատենը հա-
 տաւ՝ որ իրեն ան թերեհաւատութեանը պա-
 տիժ՝ Մէտեաց երկիրը չտեսած մեռնի , ու ինչ-
 պէս պիտոր ընէր նէ՝ Սովսեսի ապրապրեց՝
 Սովսէս ալ Մտուծոյ ըսածին պէս առաւ Մշա-
 բոնը ան հովր ըսուած լեռը տարաւ , հոն քա-
 հանայապետական զգեստները վրայէն հանեց՝

անոր Աղիազար տղին հագուեցուց, որ հօրը տեղը ինքը քահանայատեւ ըլլայ. և ան լերանը վրայ մեռաւ Մհարոն հարիւր քսանուիրեք տարուան, ու հոն թաղուեցաւ. Իսրայելացիք ալ երսուն օր անոր մահուանը սուգը կատարեցին ան տեղը: Հոյքը լեռնէն որ ելան Սելմնա եկան, ժողովուրդըր ալ աս ճամբու նեղութիւններէն ձանձրացած՝ նորէն սկսան Մատուծոյ դէմ տժգոհալ ու Սոլսեսի ըսել՝ թէ՛ «Սեզ Ազիպտոսէ ինչու հանեցիր, և անօթի ծարաւ մեզ աս անապատներուս մէջը կը ջարդես, որ ալ գաներ ենք ան անշահ մանանայէն՝ որ հացի տեղ կ'ուտենք», ըստուած ալ աս մեղացս պատիժ՝ չար թունաւոր (այսինքն դէհիրլի) օձեր վրանին խրկեց՝ որ շատ մարդ զարկին սպաննեցին, ինչուան որ խեղուրնին գլուխնին եկաւ՝ Սոլսեսի դիմեցին՝ որ Մատուծոյ աղօթք ընէ աս պատուհասս վերջընէ: Սոլսես ալ Մատուծոյ հրամանովը մէկ պղնձէ օձ մը շինեց՝ ձողի (այսինքն սրուրգի) վրայ բարձր կայնեցուց, որ ան օձերէն զարնուողները աս պղնձէ օձը նայելով կը բժըկուէին. ու ասանկ ընելով՝ դադրեցաւ աս պատիժս:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Բարդաստեռ պատմութիւնք:

Մժ աշխարհի 2559 : (Թուոց . ԻԲ . ԻԳ . ԻԴ .)

Իսրայելացիքը ճամբանին առաջ երթալով երբոր Մովսրացոց երկիրը հասան, և անոնց չղպած խաղաղութեամբ անկէց անցնիլ որ կ'ուզէին, Սեհոն Մովսրացոց թագաւորը դէմեր-

նին ելաւ՝ չէր թողուր որ անյնին . ուստի Մա-
 րայեղացիք ալ հետերնին պատերազմ ընելով՝ զա-
 նոնք տակ առին՝ ու տիրապետեցին Մովսէսացւոց
 երկիրը : Մնկէց ետև եկան Մասան , և հոն ալ
 անոնց Սվգ ըսած թագաւորը յաղթելով՝ որ ան
 ալ զէմ կը դնէր , անոր երկիրն ալ առին : Մ^ջ
 Սարայեղացւոց յաղթութիւններն որ լսեց Մա-
 ղակ Սովաբացւոց թագաւորը՝ վախցաւ որ իր
 երկիրն ալ առնեն . անոր համար խորհուրդ ը-
 ռաւ՝ ուզեց քովը կանչել Մաղաամ որդի Մեու-
 ըայ ըսած մէկ մարդարէ մը , որ զայ Սարայեղա-
 ցիները անիծէ , որ չըլլայ թէ իրեն վրան ելլեն՝
 զինքն ալ յաղթեն . բայց երբոր խրկած մարդի-
 կը Մաղաամու գացին , ու ան ալ Մատուծոյ հար-
 ցուց , Մատուած արգիլեց որ չերթայ : Մաղակ
 թագաւորը ետևէն մէյ մ'ալ խրկեց իր իշխան-
 ները աւելի ընծաներով , որ չէ չըսէ զայ՝ իրեն
 խնդիրըր կատարէ : Մաղաամն ալ առջի բերա-
 նը ան բերած ընծաներուն երեսը չնայեցաւ , ու
 « թէ որ , ըսաւ , բոլոր իր տանը արծաթն ու
 ոսկին Մաղակ ինծի տայ՝ ես Մատուծոյ խօսքէն
 դուրս չեմ ելլեր , անոր ինծի տուն տուածէն՝ ա-
 վելի պահաս բան չեմ ըսեր » : Ատքը ան զիչե-
 րը քովը բռնեց ան մարդիկը՝ որ Մատուծոյ մէյ
 մ'ալ նորէն հարցրնէ , ու անանկ իրենց պատառ-
 խան տայ : Մատուած ալ երեցաւ Մաղաամու ,
 ու իրեն թող տուաւ որ ելլէ հետերնին երթայ ,
 միայն թէ ըսածէն դուրս չելլէ՝ անէծք չկարգոյ
 Սարայեղացւոց վրայ : Արբոր առտուանց ասանկ
 ելաւ Մաղաամը՝ իր էջը հեծաւ ու անոնց ետևէն
 կ'երթար , Մատուած՝ գիտնալով որ Մաղաամու
 սիրար ստրկին վրայ դնաց , ու միտքը փոխուե-
 ցաւ՝ որ երթայ թագաւորին կամբը ընէ , բար-

կացաւ վրան, զխմացէն հրեշտակ մը խրկեց՝ ձեռքը թուր բռնած վերցուցած՝ որ ճամբուն վրայ կեցած Ռադաամը արգիլէ որ առաջ չերթայ ։ Այն որ աս հրեշտակը անանկ զխմացը ելած տեսաւ, (որ Ռադաամ չէր տեսներ), վախէն սկըսաւ ճամբէն դուրս մէկ դի երթալ ։ Ռադաամ ալ բանը չգիտնալով՝ դաւազանուովը զարկաւ էջը որ շիտակ քալէ ։ Քիչ մը որ առաջ դացին՝ էջը նորէն ան հրեշտակը տեսաւ առջևը կայնած, ու մէյ մ'ալ մէկդի քաշուիլնինի՝ ան տեղը այգիին պատին քովէն անանկ քսուելով դնաց՝ որ Ռադաամու ոտքը ձիկեց ցաւցուց ։ ան ալ սրդողելով իշուն կը զարնէր՝ որ աղէկ քալէ ։ Ատքը դնաց հրեշտակը մէկ նեղ ճամբու մը վրայ կեցաւ, որ քովէն ամենեւին անցնելու տեղ չկար ։ Հոն առջևն որ հասաւ էջը՝ ալ ճարը հատած՝ ան տեղը գետինը նստաւ ։ Այն ատենը՝ որ Ռադաամ ալ չարաչար կը ծեծէր էջը, Աստուած յանկարծակի իշուն բերանը բացաւ, որ դարձաւ մարդու պէս Ռադաամու ըսաւ ։ « Այս քեզի ինչ ըրի՝ որ աս իրեք անգամ կ'ըլլայ որ զիս կը ծեծես », ։ Ռադաամ ալ ըսաւ ։ « Այսոր համար որ՝ զիս ծաղր կ'ընես կոր, անանկ որ ձեռքս մէկ դանակ մը ունենայի նէ՝ հիմա քեզ անով կը զարնէի ալ », ։ Այլ նորէն իրեն դարձաւ ըսաւ ։ « Այս ան քու էջդ չեմ որ պզտիկուցմէ՝ ի վեր ինչուան հիմա վրաս կը հեծնէիր, երբ ծուլացայ, քեզի ասանկ բան ըրի », ։ Ռադաամ երբոր խօսքը բերանը անոր պատասխան կու տար՝ թէ չէ, յանկարծ Աստուած աչքը բացաւ՝ որ ինքն ալ տեսաւ ան ահա որ հրեշտակը, ու շուտ մը վար ինջաւ երկրպագութիւն իրեն ըրաւ ։ Հրեշտակը ան ատենը չէխեց զինքը որ անանկ անգթութեամբ

անբան անասունը կը ծեծէր, որ « Ես, ըսաւ, քու դէմդ ելեր էի քեզ բռնելու արգիլելու որ ծուռ ճամբայ կ'երթայիր. ու թէ որ էշը առ ջնէս չփախչարտէր՝ քեզ պիտոր սպաննէի՝ ու ան մեզ անասունը թող տայի որ երթար », 1 Մատթայի առ զաւր 11 : « Եղայ, ըսաւ, թէ որ կամենաս նէ՛ ետ կը դառնամ », 2 Նրեշտակը նորէն թող տըւաւ որ երթայ, « Միայն թէ ըսաւ՝ ինչ որ քեզի Մատուած տուն տալու ըլլայ նէ ան զուրցես », 3

Երբոր եկաւ հասաւ Մատուած, Մատուած թաղաւորը իր առջևը ելաւ, ու շատ մեծարանքով քովը առաւ բերաւ իրեն փառաւոր սեղան մը ըրաւ՝ բոլոր իշխաններն ալ մէյտեղ. և ետքը մէկ բարձր տեղ մը հանեց զինքը, որ անկէց Եսայի լացւոց բանակը աղէկ մը տեսնելով անէծք կարգայ վրանին : Մատուած ալ կախարդական բաներ ապրասպրեց թաղաւորին՝ որ ան ատենը ընելով իրեն ճար մը ըլլայ Մատուածէ հրաման առնելու որ անիծէ զանոնք : Մայց Մատուած թաղաւորը աս ամէն բաները ընելէն ետե՛ չէ թէ միայն ուղածին հասաւ, հապա անոր ներհալը՝ անիծելու տեղը Մատուած Մատուածնու բերանը դրաւ որ Եսայի լացւոց վրայ օրհնէնք կարգայ : ու անոնց ընելու յաղթութիւնները զուրցէ : նաև Եսայի լացւոց ազգէն գալու մեծիային վրայ փառաւոր մարգարէութիւններ ընէ : Մնոր համար Մատուածնու վրան սրդողելով Մատուածնու ետքը առ ըսաւ . « Բեզ իմ թշնամիներս անիծելու կան չեցի, ու դու անոնց օրհնէնք տալէն չես դարձիր . ինձի ալ պէտքը չես, ուսկից եկար նէ դարձիր տեղդ գնա՛ . ես միտքս դրեր էի որ քեզ եւ ետքը պարգևներով մեծարեմ. բայց կը տեսնեմ որ Մատուած զքեզ աս բարիքներէն զրկեց » :

Քաղաամ ալ պատասխան տուաւ թէ՛ « Քեզի չքսի որ տունդ լեցուն օսկի ու արծաթ ալ ինձի տալու ըլլաս նէ՛ Բստուծոյ իմ բերանս դրածէն աւելի կամ պակաս բան չեմ կրնար զուրցել » :

Իրաւ որ թէպէտ Քաղաամ չար մարդ մըն էր , և ինչպէս կ'երեւայ նաև կախարդ ալ էր , որ աստի՛ անարժան էր մարդարեւ թեան , բայց Բստուած իր մեծագործութիւնը ցուցունելու համար չգարչեցաւ իր սուրբ պատգամը այսպիսի մարդու բերանը դնել . ինչպէս անոր տալու խրատը և յանդիմանութիւնն ալ արժանապէս իր անբան իշուն բերանը դրաւ . որ երկուքն ալ իրենց բերնովը ըսածը չէին հասկընար : Բնոր համար Քաղաամ ան մարդարեւութիւնները բսելէն ետև , Քաղակ թագաւորին ճամբայ ցուցուց որ՝ ինչպէս Խորայեւացիները մեղաց մէջ ձգէ , որ անով Բստուծմէ պատժուին ու ջարդուին : Եւ բանը ասանկ եղաւ որ , Սոլաբացուոց ու Սագիանացուոց երկիրը Խորայեւացիքը երբոր բանակինն դրին , սկսան անոնց աղջիկներուն հետ պտնըկութիւն ընել . և անոնք ալ զիրենք գլխէ հանեցին՝ որ հետերնին երթան կուսքերու զոհած կերակուրներ ուտեն , ու Քելիկեգովը ըսուած կուսքերնին պաշտեն :

Բստուածուովս Բստուած Խորայեւացուոց վրայ սաստիկ բարկացաւ , ու հրամայեց Սոլսեսի՛ որ մարդ մարդու չմնայէ՛ բոլոր աս կուսպաշտութիւն ընողները թրէ անցընեն . որ անանկ՝ քսանըչորս հազար հոգի ինկան : Եւ աս ջարդիս ատենը Փենեհէս Բհարոնի թագը՝ Եղիազար քահանայապետին որդին՝ Բստուծոյ կողմանէ կեցած մասնաւոր վրէժխնդրութիւն ցուցունելով , Բստուած նորէն հաստատեց որ քահանայութիւնը

խնչուան ետքը որդւոց որդի իրենց ազգին մնայ, Քայց աս բաներս ըլլալէն ետև Մատուած Քարայեւացւոց հրամայեց որ ան Սաղիանացւոց վրան ելլեն՝ առանց խնայելու ջարդեն զանոնք, որ ասանկ խաբելով մեղաց տէր ըրին Քարայեւացիքը . և աս պատերազմիս մէջը Քաղաամն ալ հետերնին ինկաւ մեռաւ : Կաև ասոնցմէ ձեռք ձգած կողոպուտը՝ Սոլսէս Քարայեւացւոց մէջը ամենուն արդարութեամբ բաժնեց . և ինչուան ան տեղը Յորդանանի քով առած երկիրները՝ Մատուծոց հրամանովը Սուբենի, Վաղայ՝ ու Սանասէի կէս ցեղին տուաւ :

Գ. Լ. ՈՒԽ Ի .

Սոլսէս մարգարէն կը փոխմանի, Յետոք որդի Նաեակ տանր տեղը կ'անցնի :

Ըմ աշխարհի 2553 : (Բ . Օրի . ԼԲ . ԼԳ .)

Մատուած որովհետև Սոլսէսի արդիւլեր կը որ Քարայեւացիքը աւետեաց երկիրը ինքը շտանի, և հոն չիօխէ, անոր համար Քարայեւացւոց բանակը երբոր Յորդանան գետին քովերը հասաւ, որ Քանանացւոց կամ աւետեաց երկրին տահմանն էր, Մատուած Սոլսէսի հրամայեց որ Յետև որդին՝ Վաւեայ՝ (որ իր աշակերտն էր) իր տեղը Քարայեւացւոց վրայ գլուխ կամ առաջնորդ դնէ, և ինքը մեռնելու պատրաստութիւնը տեսնէ : Սոլսէս ալ Քարայեւացւոց ամէն բանը կարգի դնելէն ետև՝ Յետուն կանչեց, և ամենտառջևը աս Մատուծոց տուած հրամանը իրեն յայտնեց, ու սիրտ տուաւ որ զօրանայ, չվախնայ թշնամիներէն, Քարայեւացւոց ժողովուրդը

քաջութեամբ տանի հասցընէ Մատուծոյ խոստացած երկիրները :

Մսկէ ՚ի զատ շատ խրատներ և յորդորանքներ ըրաւ Սոլսէս Խորայեւացոց՝ որ Մատուծոյ տուած օրէնքները և սպառութեանքները աղէկ պահէն . որ բոլորը հինգ զբքի մէջ գրած իրենց թողուց , այսինքն ()ննդոց , Ալից , Վ և տացոց , Սուուց , և Արկորոզ ()րինաց : Վաւ ան վերջի ատենը մէկ օրհնութիւն մըն ալ շինեց Մատուծոյ , որ կը սկսի՝ Վայեցարուս երկինս , ու սորվեցուց Խորայեւացոց՝ որ ըսեն , և անով շնորհակալ ըլլան աստուածային անբաւ երախտեացը՝ որ իրենց վրայ ցուցուցեր է , ու սխտոր ցուցունէ՝ թէ որ հաւատարմութեամբ Մատուծոյ ծառայեն : Մսկէ ետև Հակոբ նահապետին պէս մարդարէական հոգւով ամէն Խորայեւացոց ցեղերուն վրայ զատ օրհնեցներ կարգալով Մատուծոյ հրատանովը Մարիմ կամ Վարաւ ըսուած լերանը գլուխը ելաւ , որ անկէց բարձրէն Մատուծ իրեն ցուցուց բոլոր Խորայեւացոց տալու երկիրները , և հոն տեղը առանձին վախճանեցաւ ու թաղուեցաւ , անանկ որ ամենեւին մարդ չգիտցաւ իր գերեզմանը՝ թէ ան լերանը որ կողմը թաղուած է :

Սոլսէս մարդարէն երբոր վախճանեցաւ նէ թէպէտ հարիւր քսան տարուան էր , բայց ինչուան ետքի ատենը՝ ծերութեան նշան վրան չէր երևար , հասցաւ անանկ թիւ ու կայտառ էր՝ որ երեսը կանձմտունք մը չկար , ու աչուրները առողջ աղէկ կը տեսնէին : Վաւ աս սուրբ մարդարէիս պէս՝ ինչպէս աստուածաշունչը կը գրէ՝ ուրիշ մարդարէ մը չէ եղած , որ զՄատուծ գիւմաղէմ տեսնէ , հետը բարեկամի պէս բերնէ

բերան խօսի, և այնչափ մեծամեծ հրաշքներ
գործէ :

Իսրայելացւոց ժողովուրդն ալ երօուն օր Մով-
սեսի վախճանելուն սուգը կատարելէն ետև՝ Յե-
սու որդին՝ Կաւեայ Մովսեսին տեղը առաջնորդ
և գլուխ ճանչցան . որ ան տարաւ մտցուց զիրենց
աւետեաց երկիրը . ինչպէս ետևի մասին մէջը
պիտի սրատմենք :



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Յ

Յոր երանելիին պատուոչքիւնը :

Ժամանակին կարգը անանկ կը բերէ , որ աստեղս՝ Մովսէս մարգարէին վախճանելէն ետև՝ Յոր երանելիին մասնաւոր պատմութիւնը դընենք , որ ինչպէս Յունաց և մեր աստուածաշունչը կ'ըսէ՝ Յորն ալ Աբրահամ նահապետէն առաջ եկած՝ Ասաւայ ցեղէն Տինգերորդ կը սեպուի , ինտոր Մովսէս ալ Յակօր նահապետին ցեղէն անանկ կու գայ . որ այնպէս Յոր երանելին և Մովսէս մարգարէն՝ երկու եղբօր թուան զուկրներ կ'ըլլան :

Այ Յոր երանելիս՝ որ Յօբաբ ալ կ'ըսուէր , Ազովմայեցւոց երկիրը Ասիդ ըսուած դաւառը կ'ըլլար . և ինքը իշխանի մը պէս էր , ու անոնց մէջը ունեորներէն մէկն էր , որ եօթը հազար ոչխար ունէր , իրեք հազար ուղտ , հինգ հարիւր չուխտ եղ , ու հինգ հարիւր մատակ էշ . նաև ասոնցմէ ՚ի զատ ուրիշ ալ աշխարհքիս բարիքներէն աւելի հարուստ էր առաքինութեամբ , անմեղութեամբ , և կատարեալ աստուածպաշտութեամբ : Աստուած իրեն տասը զուակ տուեր էր , եօթը մանչ՝ իրեքը աղջիկ . և Յօբայ աչքը միշտ ասոնց վրայ էր՝ որ չըլլայ թէ Աստուծմէ հեռանան՝ չար ձամբայ երթան . անոր համար երբոր անոնք մէյտեղ կու գային որ ուտեն խմեն

ուրախութիւն ընեն, շուտ մը Զոր անոնց ամէն
մէկին համար մէյմէկ զոհ կը մատուցանէր Մս-
տուծոյ, որ թէ մեղք մը ըրեր են նէ՛ Մստուած
իրենց Թողութիւն տայ: Մասնկ աստուածա-
վախ, արդար, ու սիրելի Մստուծոյ ըլլալով Զոր,
չար սատանան միշտ բարւոյն հակառակ շատ կը
նախանձէր վրան, և ետեւէ էր որ զինքը փորձու-
թեան մեղաց մէջ ձգելով Մստուծոյ աչքէն հա-
նէ: Եւ սո բանս այսպիսի առակով կը պատմէ
աստուածաշունչը:

Մէկ օր մը հրեշտակները Մստուծոյ առջև
կեցած որ կը պաշտէին, սատանան ալ աշխարհ-
քիս վրայ պարտելէն ետե՛ ինքն ալ հոն եկաւ.
Մստուած դարձաւ ըսաւ իրեն. « Կը տեսնաս,
սատանայ, իմ Զոր ծառաս, որ աշխարհքիս վրայ
անոր պէս սուբբ, արդար, աստուածապաշտ և
անմեղ մարդ չկայ »: Սատանան ալ Մստուծոյ
պատասխան տուաւ. « Ի՞նչ, ըսաւ. ճրի մի (այս
ինքն ճապա՛ մի) Զորը զՄստուած կը պաշտէ կոր.
հասրա դուն ձեռքդ վրան դրեր՝ ամէն զիէն սրահ
պաներ ես՝ ու օրհնելով հարսացուցեր ես զին-
քը. անոր համար տասնկ անմեղ է. Թող քիչ
մը դպիր իրեն բաներուն, ան ժամանակը կը տես
նես որ՝ ինչպէս անոր ըրածը սրտանց չէ՛ հասրա
կեղծաւորութիւն է »: Մստուած ալ սատանային ըսաւ. « Ե՛ս քու ձեռքդ կը
տամ անոր բոլոր ունեցածները, որ ինչ կ'ուզես
նէ ընես, միայն թէ իրեն անձին մի մօտենար »:
Սատանան ալ ելաւ գնաց՝ որ Զորը փորձէ. և
ասանկ եղաւ: Տեսնես որ՝ մէկ օր մը Զորաց
զաւկերները (ինչպէս որ սովորութիւն ըրեր էին)
երբոր մէյակեղ ժողված իրենց մեծ եղբօրը բով
կ'ուտէին կը խմէին, յանկարծ մէկ մարդ մը ե.

հաւ Յորայ պատմեց որ՝ «Քու եզներդ երբոր կը
 հերկէին կը բանէին, ու անոնց քովը էշերդ ալ
 որ կ'արծէին, մէկէն գերեզմարներ (այսինքն թիւ
 թիւտիւներ) վրայ հասան՝ բոլորը քաշեցին տա-
 րին, ու պահապաններն ալ սպաննեցին. անոնցմէ
 էս մինակ խալըսեցայ եկայ որ քեզի ըսեմ, : Մի-
 կայ որ աս բանը Յորայ կը պատմէր, ան ատենը
 մէկ ուրիշ մարդ մըն ալ վրայ հասաւ, և ան ալ
 սկսաւ ըսել թէ՝ «Արհնքէն կրակ ինջաւ քու ոչ-
 խարներուդ վրայ՝ ամէնը երեց մոխիր դարձուց՝
 իրենց հովիւներն ալ մէյտեղ. անոնցմէ էս մի-
 նակ փախայ խալըսեցայ եկայ որ քեզի պատմեմ, :
 Արբոր աս կ'ըսէր՝ ուրիշ մըն ալ ետեւէն եկաւ,
 սկսաւ ըսել. «Արեք խումբ ասպատակաւորներ
 (այսինքն ձէլալիներ) վրանիս եկան ուղտերդ ա-
 ուն տարին՝ ու վրայի եղած պահապանները մե-
 ռուցին, որ էս միայն փախայ ազատեցայ՝ եկայ
 որ քեզի պատմեմ, : Մը ալ իր խօսքը չմըն-
 ցած՝ մէկ ուրիշ մարդ մըն ալ եկաւ ետեւէն ու
 ըսաւ. «Արբոր տղաւդ և տղջիկներդ իրենց
 մեծ եղբորը քով կ'ուտէին կը խմէին՝ յանկար-
 ծակի մէկ փոթորիկ մը (այսինքն դոյ մը) ելաւ՝
 տունը զաւկրներուդ վրայ կործանեց՝ ամէնքը
 մեռցուց ինծմէ՝ ի զատ, որ էս մինակ խալըսեցայ
 եկայ որ քեզի պատմեմ, : Արբոր աս ետքինս
 ալ լսեց Յոր, ան ատենը ելաւ վրայի հազած
 լաթը պատռեց ու գլխուն մազը կտրեց, (որ աս
 բաներս ան ժամանակի սգոյ նշանն էր), այնպէս
 գեախնը փռուեցաւ՝ Մտուծոյ երկրպագութիւն
 ըրաւ, ու ըսաւ. «Այս իմ մօրս փորէն մերկ ե-
 կայ, և նորէն մերկ պիտի դառնամ. աս բաներս
 ինծի Մտուած տուաւ, և հիմա ինքը ետ ա-
 ոաւ. ինչպէս որ Մտուած կամեցաւ նէ՝ անանկ

եղաւ . Մտաւ ծոյ անուանը օրհնեալ ըլլայ . : Մ. յւ
 պիտի սիրով Հոր երանելին համբերելով աս փոր-
 ձանքներուս , ամենեւին Մտաւ ծոյ դէմ չոժդո-
 հաց : Սատանան աս բաները ընելէն ետե՛ կրբոր
 նորէն Մտաւ ծոյ առջևը ելաւ , Մտաւ ած իրեն
 հարցուց . “ Հիմա , ըսաւ , փորձելով ինացա՞ր մի
 իմ Հոր ծառայ , որ ինչպէս ըսի նէ աշխարհքին
 վրայ անոր նմանը ձշմարիտ արդար ու աստուա-
 ծապաշտ մարդ չկայ , որ աս փորձանքներն ալ
 գլուխը գալով ինքը իր անմեղութեան մէջը մը-
 նաց . : Սատանան ալ Մտաւ ծոյ պատասխան տը-
 ւաւ . “ Մտ մեծ բան մը չէ , ըսաւ , որ մէկը իր
 վրայի կաշին պահելու համար՝ անոր տեղը իրեն
 ունեցածներուն կաշին տայ . մարդ ամէն բանը
 կու տայ կը կորսնցընէ՝ որ միայն թէ իր անձը
 խալըսէ . անանկ չըլլար , ըսաւ , հասաք քիչ մը
 դպիր իրեն օսկորներուն ու մսին . ան ատենը
 տեսնես թէ ինտոր երեսդ կը վազէ քեզ կ'անի-
 ծէ . : Մտաւ ած ալ ան ժամանակը սատանային
 ըսաւ . “ Մհա բողոքովին Հորը քու ձեռքդ կու
 տամ , որ ինչ որ ուզես նէ ընես , միայն թէ հօ-
 գին չհանես՝ չմեռցընես զինքը . : Արբոր աս
 հրամանս առաւ սատանան , շուտ մը դնաց անանկ
 հիւանդութիւն մը ձգեց Հորայ վրան՝ որ ոտքէն
 ինչուան գլուխը ողջ տեղ մը չմնաց . բողոք մօր-
 մինը խոցերով լցուած (այսինքն ետրա փէրէ է.
 դած) գարշելի թարախները վրայէն կը վազէին .
 ու անանկ՝ իրեն մարդիկներն ալ իրմէ գանկելով ,
 քաղքէն դուրս հանած աղբիւսը (այսինքն չէօֆ-
 լիւկին մէջը) ձգած էր . որ հոն օրերով նստած
 խեցիով (այսինքն թուղայի կտորուանքով) ան
 որդնտո թարախները մարմնոյն վրայէն կը քե-
 րէր : Մայց այսչափ անտանելի տառապանաց և

Թշուառութեան մէջը՝ երանելին է Յոր ամենեւին չափոհասց ու համբերութիւնը չկորսնցուց, հասարակ միշտ փառք կու տար Մատուծոյ : Ան ասոր դէմ, Յորայ կնիկը երկանը այսպիսի խեղճութիւնները տեսնելով՝ ալ ձանձրացած, սատանային դրդամամբը երբոր Յորայ ըսաւ թէ՛ « Ինչուան երբ ատ տառապանքը պիտի քաշես . պարտապ տեղը կը յուսաս որ ասկէց խալըսիս , ու ես ալ քու սրտածառովդ անէ տուն թափառական եղեր եմ . մէկէն Մատուծոյ դէմ անէ՞՞ք մը կարգա , որ հողիդ առնէ շուտով ազատիս » : Յոր վրան սրդողած ծուռ ծուռ նայեցաւ , ու ասանկ իրեն պատասխան տուաւ . « Իրաւընէ որ , ըսաւ , մէկ խենթ կնիկան մը պէս բան զուրցեցիր . մենք որ Մատուծոյ ձեռքէն այսչափ բարիքներ առինք , հիմա աս չարիքներուս պիտի չհամբերե՞նք մի » :

Ատքը աս Յորայ վրան եկած բոլոր փորձանքները լսելով իրեք հողի իր բարեկամներէն ղինքը տեսնելու և մտիթարելու եկան . մէկը Աղիփաղ թեմնացի ըսուած , մէկալը՝ Քաղզատ սաւքեցի , երրորդը Սովիար մինեցի , ու ասոնց ետեւէն մէկ մ'ալ եկաւ՝ Աղիուս բուզացի . որ ամէնքը Աղումայեցուց երկրին իշխաններէն էին , որ թագաւոր ալ կ'ըսուէին : Երբ Յոր երանելին ան խեղճութեան մէջը տեսնելով՝ առջի բերանը չկրցան ղինքը ձանձնալ . ու ետքն որ իմացան՝ սաստիկ ցաւելով սկսան լալով վայ տալ իրենց , վրայի լաթերնին պատուտեցին , զլուխնին հող ցանեցին , ու խել մը ատեն բերաննին կապուած՝ Յորայ առջևը իրենք ալ գետինը նստան , և անտանկ պաղած վրան կը նայէին . ինչուան որ Յոր՝ առաջ ինքը բերանը բացաւ , և

իր գրուիցը եկած փորձանքները սկսաւ իրենց ըսել: Բայց աս բաներս գրուցենինի՛ խօսքը զանգրտելու պէս որ ձգեց, ան ատենը անոնք ըսածը ծուռ խմանալով՝ տժգոհանքի կերպ առնելով, Յոր երանելին մխիթարելու տեղը՝ սկսան չեխելով իրեն խրատ տալ: Թէ՛ Վու ըրած մեղքերուդ համար Մատուած քեզի աս պատիժներս խրկեց: Յոր ալ անոնց դէմ իր անմեղութիւնը ցուցանելով՝ կ'ըսէր որ Մատուած արդարներուն ալ վիշտ նեղութիւն կու տայ, որ իրենց համբերութիւնը փորձէ, և վարձքերնին եւեցընէ. անոնք ալ մէկ բերան ասոր դէմ կենալով՝ իրենց կարծիքը կ'ուզէին հաստատել Թէ՛ Մատուած անմեղ մարդուն պատիժ չխրկեր: Եւ բաներուս վրայ շատ երկայն կերպ կերպ պատձառնելով մէյմէկու հետ տարցած հակաձառութիւն ընելէն ետե՛ Մատուած ամպին մէջէն հետերնին խօսեցաւ, ու Յորայ ըսածները ցուցուց Թէ ճմարիտ է, և անոր բարեկամները չեխեց, որ ծուռ բան հաստատելով՝ Յորայ դէմ անանկ սիրտ ծակելու խօսքեր ըսին: Եւ որ համար ետքը իրենց հրամայեց որ եօթը հորթ և եօթը ուխար բերեն Յորայ տան, որ իրենց համար զո՛ մատուցանելով աղօթք ընէ՛ որ ան իրենց ըրած մեղացը Թողութիւն ըլլայ:

Յոր երանելին աս փորձութիւններուս քաջարտութեամբ համբերելէն ետե՛, նորէն Մատուած իր առջի առողջութիւնը դարձուց, և առջի ունեցած բարիքներուն երկու այնչափը իրեն տուաւ, և նորէն ալ եօթը մանչ զաւակ, ու իրէք աղջիկ ունեցաւ. հարիւր եօթանասուն տարի ալ ապրեցաւ. և բոլորը՝ երկու հարիւր քառասունութը տարի աշխարհքիս վրայ ապրելէն ետե՛ բարի մահուամբ վախճանեցաւ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԵՍՈՒԱՅ ԵՒ ԴԱՏԱՌՈՐԱՅ
ԳՐԲԵՐՈՒՆ . ԻՍՐԱՅԵԼԱՅԻՈՅ ԱՒԵՏԵԱՅ ԵՐԳԻՐԸ,
ՄՏՆԵԼՏԻՐԱՊԵՏԵԼԸ . ԵՒ ԻՐԵՆՅ ԴԱՏԱՌՈՐՆԵՐՈՒՆ
ԱՏԵՆԸ, ՀԱՆԴԸՊԱԾՆԵՐԸ :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Յետև կ'առաջնորդէ Խորայեւացոց՝ որ Յորդանան զետր
կ'անցնին :

ԱՄ աշխարհի 2553 : (Յես . Բ . Գ . Ե .)

Մ Ո Վ Ս Է Ս մարդարէին վախճանելէն ետքը ,
Յետև որդին Վաւեայ Բատուծոյ հրամանովը
զօրանալով՝ ապրապրեց Խորայեւացոց որ պատ-
րաստուին Յորդանան զետր անցնելու , որ ալ
սկսին Վանանացիքը ջարդել՝ անոնց երկիրները
տիրապետել . և աս բանիս համար՝ առաջ երկու
կարիճ՝ լրտես (այսինքն չաշուտ) խրկեց Արիքով
ըսուած Վանանացոց մայրաքաղաքը , որ ան տե-
ղերուն որպիսու թիւնը երթան իմանան :

Բայ լրտեսները երբօր ելան զացին , ու հոն
Ուախարը ըսուած մէկ կնիան մը տունը ինջան , Ա-
րիքովի թագաւորը իմանալով որ ասանկ մար-
դիկ իր երկիրը եկեր են լրտեսու թիւն ընելու՝
ետեանին մարդ խրկեց որ երթան Ուախարին անէն
բունեն զիրենք : Բայց Ուախարը զանոնք տարաւ

գաղտուկ տեղ մը պահեց, ու եկողներուն խա-
 բեց ըսաւ թէ՛ «Մտանկ մարդիկ իրիկունը ինձի
 եկան՝ և առտուանց կանուխ ելան չեմ գիտեր
 ո՛ր գացին, նայեցէ՛ք որ ետեւնէն հասնիք» : Այ-
 զանոնք այսպէս ձամբելէն ետեւ՝ գնաց լրտեսնե-
 րուն ըսաւ թէ՛ «Վիտեմ որ Մտուած՝ մեր եր-
 կիրը ձեր ձեռքը պիտի տայ . ինչու որ՝ ձեր ահը
 տիրեր է, աս մեր մարդոցը վրայ, լրելով ձեր Վար-
 միր ծովէն հրաշքով անցնելնիդ, ու Մմտւոցոց
 թագաւորներուն տուած ջարդերնիդ՝ ձեր Մ-
 տուծոյն օգնականութեամբ . որ ես ալ կ'ըսեմ
 թէ՛ ան է ճմարիտ Մտուածը . անոր համար
 կ'աղաչեմ որ՝ երգում ընէք խօսք տաք ինձի, որ
 ինչպէս ես ձեզի աս բարիքս ըրի՝ ձեզ պահեցի,
 դուք ալ ինձի և իմ տանս ինչպէք ողորմիք՝ եր-
 բոր աս քաղաքը մտնելու ըլլաք» : Մնոնք ալ
 խօսք տուին երգունցան որ զինքը խալլտեն,
 «Վիտայն թէ, ըսին ան ատենը հայրդ մայրդ
 եղբայրներդ քու տունդ ժողվես, ու նշանով
 ձանչուելու համար՝ տանդ պատուհանը մէկ
 կարմիր չուան մը կապես, որ ան տեսնելով քե-
 ղի չգտնիք» : Մտանկ մէջերնին խօսք գնելէն
 ետեւ՝ կնիկը զիրենք տանը պատուհանէն՝ (որ
 քաղքին սարսափն վրայ կ'ըլլար) չուանով վաք
 ինջեցուց, ու անանկ գաղտուկ ելան գացին :
 Մրտեսները երբոր դարձան պատմեցին թէ ինչ-
 պէս Մտուած անոնց սիրտը վախ ձգեր է, Յե-
 տու աւելի սիրտ առաւ՝ Մարայեւոցոց բանալի
 առաջ բերաւ ինչուան Յորդանան գետին քովը .
 ու ժողովրդոց խնացուց որ՝ հրաշքով ան Յորդա-
 նան գետէն անդին պիտոր անցնին . և ինչպէս
 որ պիտի ընէին՝ տեղն 'ի տեղը իրենց ապրա-
 պրեց :

• Աստի իրեք օրէն ետև Մատուծոյ հրամանաւոր
 քահանաները առջևէն տապանակը ուխտին
 կոնակնին առած երբոր եկան ալ ոտուրնին
 Յորդանանի ջրին դպրնելու եղան, յանկար-
 ծակի ան տեղէն Յորդանան գետը երկուք ճղ-
 քուեցաւ . վերէն եկած ջրերը կեցան մէկմէկու
 վրայ դիզուեցան, ու վարի եղածները անցան
 ծովը դացին . և ան տեղը ցամաք ճամբայ որ մը-
 նաց, քահանաները տապանակը վերուցած գա-
 ցին մէջ տեղը կեցան՝ ինչուան որ բոլոր Խորայե-
 լացոց բանակը ամենեւին առանց թըջելու մէջէն
 անցաւ մէկալ դին գնաց, Մն առենը որ տապա-
 նակը դեռ Յորդանանի մէջն էր՝ Մատուած հրա-
 մայեց Յեսուայ որ՝ ամէն ցեղէն մէյմէկ հոգի՝
 մէկ մէկ քար Յորդանանի մէջէն առնեն վերցը-
 նեն, ու անանկ տատուերկու քար՝ տանին իրենց
 առջի բանակ դրած տեղը անկեն, որ աս հրաշ-
 քիս յաւիտենական յիշատակը մնայ . նաև աս-
 կէ՝ ի զատ ուրիշ տատուերկու քար ալ անկեց
 Յեսու Յորդանանի մէջը տապանակին կեցած
 տեղը, Մենէն ետև երբոր տապանակն ալ
 Յորդանան գետին մէջէն ելաւ, ան ժամանակը
 նորէն ջուրը եկաւ առջինին պէս սկսաւ վազել,
 Խորայեւրացիք Յորդանանէն ելլալէն ետքը՝ Յե-
 սու Մատուծոյ հրամանաւոր գայլախաղէ (այսինքն
 չաթմախի քարէ) դանակ շինեց, և անով բոլոր
 անապատը ծնած Խորայեւրացոց էրիկ մնորդիկը
 թըլիատեց, որ չէին թըլիատուած . և աս պատ-
 ճառովս ան առջի բանակ դրած տեղին անունը՝
 Վազգաղա ըսուեցաւ, Մն տեղս՝ ալ երկնքէն
 մանանայ իջաւր դադրեցաւ, Խորայեւրացիք ցո-
 րենէ հաց սկսան ուտել . որ առջի զատիկնին ալ
 հոս ընելով ցորենէ շինած բաղարջ կերան :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Երկրով ու Գոյի ըստած քաղքրներուն ստուր :

ՍՏ աշխարհի 2553 : (Յեւ . 2 . Ե . Ը . 1)

Լըրիբով քաղքին մարդիկը , որ խիստ վախ
ցեր էին Իսրայելացւոցմէ , երբոր խնայան լծէ
Յորդանան գետը անցան՝ իրենց մօտեցան ,
քաղքին դռները դոցած՝ անանկ ներսը կեցեր
էին :

Բայց Աստուած կամեցաւ որ նոր կերպով մը
Իսրայելացիք աս քաղաքս առնեն . հրամայեց
Յեսուայ որ՝ վեց օր մէյմէկու ետեւէն մէկ ան-
գամ Իսրայելացւոց զօրքը ելլէ՝ քահանաներն
ալ մէկտեղ տասպանակը ուխտին հետերնին ա-
ռած , ժողովուրդը առանց ձայն ձուն հանելու՝
եօթը քահանայ միայն փողեր չալելով անանկ
Թափօրի պէս Լըրիբովի պարսպին չորս դին պտը-
տին , ու եօթներորդ օրը եօթը հեղ աս պտոյ-
արս ընեն , և վերջին անգամը փողերը չալելուն
պէս բոլոր ժողովուրդը մէկէն սիօին կանչուա-
տել : Այ որ ասանկ ըրին Իսրայելացիքը , ան ա-
տենը Լըրիբովի պարիսպները մէկէն չորս դիէն
բոլոր կործանեցան գետինը ինկան . իրենք ալ
Աստուծոյ հրամայածին պէս վազեցին մէջը մը-
տան . և ինչպէս որ Յեսու Աստուծոյ ուխտ ըրել
էր որ բան մը չապրի չխալըօի , անանկ առանց
խնայելու բոլոր բովանդակ մարդ ու անասուն
ինչ որ կար նէ՝ Չարդեցին լծրէ անցուցին , ու
քաղքին կրակ տուին մոխիր դարձուցին : Լը
մէջէն միայն Ուախաբը իր մարդիկներովը՝ ինչ

պէս խօսք տուեր էին նէ՛ խալըսեցին , որ եկա-
 ինքն ալ Իսրայելացւոց հետ մէկ եղաւ , ու ետ-
 քը Յուդայի ցեղէն Սաղմոն ըսուած մէկու մը
 հետ կարգուեցաւ , (որ Վրիստոսի ազգահա-
 մարին մէջը կը յիշուի) : Ետև Յեսու հերիք
 չսեպելով Արիքովի ասանկ չարաչար հիմնայա-
 ւանկ ըլլալը , անկէք ալ կարգաց ան մարդուն
 վրայ՝ որ Արիքով քաղաքը նորէն շինելու ըլլայ .
 անանկ որ , ըսաւ , առջինեկ զաւկովը անոր հիմը
 դնէ , և պինտ ետքինովը սպարսպին դուռը շինէ ,
 (այսինքն ան մարդուն բոլոր զաւկրները մէկմէ-
 կու ետևէ մեռնին) . ու ըսածին պէս հինգ հա-
 ըիւր տարիէն ետև՝ Թագաւորաց ատենը կատա-
 ըուեցաւ , երբոր Ղջան կամ Ղքիէլ ըսուած բե-
 թեւացի մէկ մարդ մը՝ նորէն որ Արիքովը շինեց :

Արիքովը կործանելէն ետև՝ Յեսու ուղեց որ
 Վայի ըսուած քաղքին վրայ երթայ . և ան վերի
 ըսած լրտեսներէն իմանալով որ աս անանկ ու-
 ժով մը չէ , միայն իրեք հազարի չափ մարդ խոր-
 կեց վրան որ երթան զան ալ առնեն : Վայց
 բանը չյաջողեցաւ . ասոնցմէ յաղթուեցան Իս-
 րայելացիք , որ երսուներվեց հոգի ջարդուած այն-
 պէս փախան բանակը դարձան : Ղոր վրայ Յե-
 սու խիստ շփոթեցաւ , ու սաստիկ տրամուլթե-
 նէն վրայի լաթերը պատուեց , գանդըտելով Ղս-
 տուծոյ առջը ինկաւ , չէր դիտեր ինչ ընէ , որ
 Ժողովրդին սիրան ալ անով կտորեցաւ : Ղն ա-
 տենը Ղստուած իրէն պատասխան տուաւ թէ՛
 “ Ղնոր համար աս եղաւ որ՝ Իսրայելացիք մե-
 ղայ մէջ ինկան . ինչու որ՝ Արիքովի կործանելու
 ատենը՝ անոր նշոված արգիլած բաներէն գող-
 ցեր սրահեր են . ուստի թէ որ կ'ուղէք , ըսաւ ,
 որ աս պատիժէս խալըսիք , ու ես ձեզի ձեռք

բաներով թշնամիները յաղթէք, վիճակ ձգէ-
ցէք՝ առ մարդը գտէք, ու զինքը իր ամէն բա-
ներով երեցէք, որ ասով նզովքը մէջերնէդ վեր-
ցուի : Յետև ալ անանկ ըրաւ տասուերկու
ցեղին մէջը կարգով վիճակ ձգեց. ու երբոր պինտ
ետքը վիճակը Մ.բար ըսուած՝ Յուդայի ցեղէն
մէկ զինուորի մը վրայ որ ելաւ, Յետև զասիկայ
առջևը կանչեց՝ հարցուց իմացաւ որ ան Արիբո-
վի թալլած կողպուտներէն՝ որ Մատուծոյ խո-
րանին համար մէկդի դրեր էին՝ անկէց մէկ ա-
ղուոր բանած վերարկու մը, ու երկու հարիւր
արծաթէ երկդրամեան (կամ զուռուշ), և մէկ
լեզու մը (այսինքն սիւպիւբէ մը) յիսուն ոսկի՛
առեր էր, ու տեղն ալ ըսաւ ուր որ զասոնք պա-
հեր էր : Մն առենը մարդ խրկեց Յետև, որ
զացին անկէց բաները առին, և ան Մ.բարը իր
զակերներովը՝ անասուններովը՝ և բոլոր տնով
տեղովը մէկ ձոր մը (այսինքն չոր տէրէի մը մէջ)
տարին. ու հոն բոլոր ժողովուրդը վրան թափե-
ցան քարկոծեցին զասոնք, և ան իր բաներուն
ալ կրակ տուին երեցին, ու վրանին խոշոր քա-
րերով ծածկած մէկ պղտի լեռ մը շինեցին, որ
յաւիտենական յիշատակ մնայ առ պատուհա-
սիս. անոր համար ան տեղին անունն ալ՝ Ամակ
կամ Չոր Մ.բովրայ ըսուեցաւ :

Ատքը Մատուած Յետուայ հրամայեց որ՝ բոլոր
զօրքով ելլէ նորէն Վայի քաղքին վրայ երթայ,
ու Արիբովի պէս զան ալ հիմնայատակ ընէ :
Յետև ալ գիշերանց երսուն հազար զօրք տարա-
քաղքին ետեւները պահուրացուց, ու ինքը առ-
տուանց ըլլէ մը զօրքով քաղքին առջևը ելաւ ե-
րեցաւ : Վայի մարդիկն որ զասոնք դիմացնին
տեսան՝ ամէնքը իրենց թաղաւորին հետ քաղ-

քէն դուրս ելան որ Իսրայելացւոց դէմ պատե-
 րազմ ընեն . Յետու սուտ վախ ցուցունելով՝ ետ
 ետ քաշեց զօրքը՝ ինչուան անոնք աղէկ մը իրենց
 քաղքէն հեռացան : Ըն ատենը Յետու ան պա-
 հուրտածներուն նշան տալուն պէս՝ ամէնը տե-
 դերնէն ելան քաղաքը մտան , մէջը մնացած մար-
 դիկը ջարդեցին՝ ու քաղքին կրակ տուին . ետև
 իրենք ասդիէն և մէկալ բանակը անդիէն՝ ան
 քաղքէն դուրս ելած թշնամիները մէջերնին ա-
 ուին , առանց խնայելու բոլորը ջարդեցին , որ ա-
 մէնը տասուերկու հազար հոգի էին՝ էրիկ մարդ
 կնիկ մարդ՝ որ Վայիի մէջը կը բնակէին : Այս
 իրենց թագաւորը ողջ բռնած , Յետու՝ երկձիղ
 (այսինքն երկու բաժնած չաթալ) փայտի վրայ
 կախել տուաւ՝ որ ինչուան իրիկուն կախած կե-
 ցաւ . ետքը ինջեցուցին մէկ փոս մը ձգեցին՝
 վրան քարեր դիզեցին , որ աս յաղթութեանս
 յիշատակ ըլլայ : Ըս երկու քաղաքները աւնուե-
 լէն ետև՝ Յետու Սաւեան Իսրայելացւոց ժողո-
 վուրդը առաւ Վեբաղ ու Վարիզին ըսուած
 լեռները տարաւ՝ որ մէկմէկու մօտ էին . հոն
 քարերով ըստուծոյ սեղան մը շինեց՝ վրան զոհ
 ըրաւ , և աստուածային պատուիրանքներուն
 խօսքերը անոր վրայ նորէն գրելով՝ դաս առ դաս
 երկու լեռնէն ան օրհնութիւններն ու անէծք-
 ները կարդալ տուաւ . որ Սուլեւս Արկորդ ()-
 ըինաց գրքին մէջը գրեր՝ Իսրայելացւոց սպրս-
 սպրեր էր , որ երբոր աւետեաց երկիրը մտնելու
 ըլլան նէ՝ աս բանը ընեն :

Գ Լ Ո Ի Խ Գ

Պարստանացոց խարերայութիւնը, և ֆանսանացոց հինգ քաղաքներուն շարդութիւնը :

Մտ աշխարհի 2554 : (Յեռ . Թ . Ժ . 1)

Խորայեւացոց այսպիսի յաղթութիւնները և առաջ գալը երբոր լեցին ան կողմերու Վանանացոց ազգերը՝ սրտերնին սաստիկ վախ ինկաւ, ու մէյտեղ եկան խօսք դրին որ Խորայեւացոց դէմ ելլեն : Բայց ասոնցմէ Պարստանացիք ըստաճները՝ աղէկ հասկընալով որ իրենց ուժովը Խորայեւացոց դէմ բան չեն կրնար տեսնել, մտածեցին որ խաբելով բարեկամութիւն ընեն հետերնին, ու անանկ իրենք անոնց ձեռքէն խալըսին : Ուստի հին պատրուած ճամբորդի լաթեր առին հազան վրանին, ու կտրրտած մաշած կօշիկներ ստրերնին, և գինիի կարկրտած օրիկեր՝ ու քուրձեր կանակնին զարկած՝ մէջը չորցած որդնտած հացի կտորուանք՝ իբր ճամբու պիտանաւորութեան համար . ասանկ եկան Յեսուայ առջևը ելան՝ այնպէս ցուցունելով թէ հեռաւոր աշխարհքէ գետպան խրկուած եկեր են . որ ըսին թէ Սեր կառավարները լսելով Խորայեւացոց մեծ անունը՝ մեզ խրկեցին որ հետերնիդ ուխտ ու դաշինք ընենք : Յետու ալ աս բանիս վրայ Բստուծոյ ջարդուցած՝ հաւտաց անոնց ըսածին, և խօսք տուաւ որ հետերնին միջոք բարեկամութիւն սրահէ . Խորայեւացոց իշխաններն ալ երգումով աս դաշինքը հաստատեցին : Իրեք օրէն ետև երբոր Խորայեւացոց ժողովուր-

Գր խմացաւ որ՝ աս Վաբաւոնացիները հօն քո-
 վերնին մօտ Վանանացւոց ազգերէն են եղեր՝
 սկսան տրանջալ մամլուալ իրենց իշխաններուն
 գէմ որ ասանկ խաբուեցան, ու սաստիկ սրգո-
 զած ուզեցին Վաբաւոնացիները ջարդել. բայց
 իշխանները զանոնք բռնեցին լծողուցին, որ Մ-
 տուծոյ անուանը վրայ ըրած երգումնին գէմ
 չգործեն, ու պատժուին: Մտոր համար Յետե-
 ետքը կանչեց Վաբաւոնացիները, և աս խաբե-
 բայու լծեանս համար բարկանալով վրանին՝ ի-
 րենց պատիժ դրաւ, որ գերիի պէս միշտ և հա-
 նապազ Խորայելացւոց ազգին և Մտուծոյ խո-
 ընին փայտ կոտորող՝ ջուր կրող ըլլան. անոնք
 ալ սիրով խօսք տուին որ ընեն:

Մշտնիբեզեկ Լըրուսաղեմայ լծագաւորը եր-
 բոր լեց լծէ Վաբաւոնացիները իրենցմէ զա-
 տուած գացին Խորայելացւոց տակը գիրենք ձգե-
 ցին՝ շատ զարմացաւ, ու սիրտը աւելի վախ ին-
 կաւ Խորայելացիներէն, ինչու որ՝ Վաբաւոնա-
 ցիքը Վանանացւոց մէջը զօրաւորներէն էին:
 Բայց այսու ամենայնիւ ինքը ուրիշ չորս Վա-
 նանացւոց լծագաւորներու հետ միաբանած, ա-
 նանկ հինգ լծագաւոր մէկէն Վաբաւոնացւոց
 վրան պատերազմ բացին: Մ պատճառովս Վա-
 բաւոնացիներն ալ Խորայելացւոց որ գիմեցին,
 որ իրենց տէր կենան ազատեն անոնց ձեռքէն,
 ան ատենը Յետե Մտուծոյ հրամանովը քաջ
 զօրքեր հետը առած՝ գիշերանց ճամբայ ելաւ,
 ու լուսնալու ատենը յանկարծակի մէկէն Վա-
 բաւոն քաղքին քովերը ասոնց վրայ վազեց. ու
 չարաչար կոտորելով գիրենք, երբոր ալ փախող-
 ներուն ետեէն ինկաւ՝ ան ժամանակը Մտուած
 ալ վերէն օգնեց Խորայելացւոց, որ խոշոր քա-

քերու պէս կարկուտ ան թշնամիներուն վրան
 թափեց . անանկ որ՝ ասով մեռնողները աւելի
 եղան քան թէ թրով ջարդուածները :

Եստու վախնալով որ չլլայ թէ թշնամիները բոլոր
 ջարդուած՝ գիշերը վրայ հասնի՝ ու ձեռքերնէն
 ազատին , Եստու խնայեց որ քիչ մը արևը
 ու լուսընկան տեղերնին կայնին : Եստու ալ,
 ինչպէս կ'ըսէ աստուածաշունչը , Եստուայ խն-
 դիլքը կատարեց , որ մէկ օրուան ատենի չափ
 արևն ու լուսընկան ուր որ հասեր էին նէ՝ հրաշ-
 քով տեղերնին կանկ առնել տուաւ , որով ան
 մէկ ցորեկուան օրը երկուք եղաւ . ինչուան Ես-
 տուայեցիքը զանոնք բոլորովին ջարդեցին հատ-
 ցուցին . և անոնց երկիրները բոլոր տիրապետե-
 լէն ետե՛ւ ելան Վաղգաղա իրենց բանակը դար-
 ձան : Եստու աս պատերազմիս ատենը խմանալով
 Եստու որ ան հինգ թագաւորները փախեր՝ Մա-
 կեդա ըսուած տեղը մէկ այրի (այսինքն մաղա-
 րայի մը) մէջ մտեր պահուեր են՝ հրամայեց որ
 ան այրին բերանը քարերով գոցեն՝ ինչուան որ
 պատերազմը խալըսին : Ետքը բանալ տուաւ՝ ան
 հինգն ալ հանեց պառկեցուց , ու Եստուայեցուց
 զօրագլուխներուն ըսաւ որ՝ ելլեն ոտքով անոնց
 վզերուն վրան կոխեն , և ասով սիրտ առնեն
 չլախնան անոնցմէ , որ Եստուած բոլոր Եստուայե-
 ցուց թշնամիները ասանկ պիտօր ընէ : Ետե՛ւ
 սպաննել տուաւ ան թագաւորները . և ինչուան
 իրիկուն անոնց մարմինները կոխելէն ետե՛ւ՝ վար
 առին նորէն այրին մէջը ձգեցին՝ խոշոր քարե-
 րով այրը գոցեցին :

Գ. Լ. ՈՒԽ Գ.

Յետոյ քոյոք աւետեաց երկիրք տիրացեալոյ՝ զանկեաց
 Խարայեացոց կը բաժնէ, ու աւետեակ կը
 փախսանի :

ԱՄ աշխարհի 2560 - 2570 : (Յեւ. ժ. ժ. ժ. ԻԳ. ԻԴ.)

Լըբոր Խարայեացիք աս հինգ Վանանացոց
 Թագաւորները ջարդեցին և երկիրնին տիրա-
 պետեցին, ան ատենը անդիէն հիւսիսային կող-
 մէն՝ Յարին ըսուած Սուրայ Թագաւորը՝ որ
 ինքն ալ մեծերէն էր, չորս դին մարդ խրկեց
 մէկալ մնացած Վանանացոց Թագաւորներուն՝
 Մովսէսացոց, Վետացոց, Փերեզացոց, Յե-
 բուսացոց, Աւեացոց, և զանոնք ալ զրդեց ոտք
 հանեց, որ ամէնը մէկէն անհամար զօրք Թա-
 փէն, անանկ բոլորովին իրենց երկրէն Խարայե-
 ացիքը ջնջէն վերջնեն : Այսպիսի մեծ պատ-
 րաստութեամբ երբոր ասոնք անչափ բազմա-
 թեամբ իրենց ձիերովն ու պատերազմական կառ-
 քերով եկան Ժողովեցան Սառն ըսած ջրին քո-
 վը, ան ատենը Մտուած յորդորեց սիրտ տուաւ
 Յեսուայ՝ որ ամենեկին չվախնայ. հասար «Սա-
 զը, ըսաւ, աս ատեն ան ամէնը ձեր ձեռքը պիտի
 տամ, որ զանոնք տակ առնէք, իրենց ձիերուն
 ջղերը ջարդէք և կառքերը երէք » : Յետո ալ
 քաջութեամբ իր զօրքովը ելաւ՝ լերան գիէն
 յանկարծակի ասոնց վրայ ինջաւ, ու Մտուծոյ
 ըսածին պէս չարաչար կոտորեց զիրենք. ետքը
 փախչողներուն ետեւէն ինկաւ այնչափ ջարդեց՝
 որ մարդ չխալրսեցաւ. ու գնաց անոնց երկիր-

ներն ալ քաղաքներն ալ առաւ : Ասանկ յաղ-
թու թիւններ ընելով ան ամէն դէմ կեցող թա-
գաւորներուն և ազգերուն վրայ, հինգ վեց տա-
րուան մէջ բոլոր Վանանացւոց երկիրը Խորայե-
լացիք տակերնին առին տիրապետեցին . անանկ
որ՝ ան երկիրները ալ բանի եկող թագաւոր մը
չմնաց, հասա մէկ քանի այլազգի տերութիւն-
ներ կամ նախարարութիւններ թողուց Աս-
տուած՝ Խորայելացւոց զգաստութեան և զգու-
շութեան համար, որ պարտապ կենալով չթու-
նան . նաև պէտք եղած ատենը՝ անոնց ձեռքովը
պատժէ խրատէ զիրենք՝ որ խելուքնին զուխնին
ժողովն :

Անկէ ետև Աստուած հրամայեց Յեսուայ՝ որ
Յորդանան գետէն ասդին առած երկիրները՝
մէկալ իննուկէս Խորայելացւոց ցեղերուն բաժ-
նէ . որ երկու ցեղ ու կէսը Յորդանանէն անդին
արդէն Սոլսեսի ատենը առեր էին իրենց բա-
ժինը : Յետև ալ Աղիազար քահանայապետին
և Խորայելացւոց ցեղապետներուն հետ մէյտեղ
եկած՝ Սոլսեսի սահմանած կարգին պէս ամէն
մէկ ցեղին տեղուանքը զատ զատ որոշեցին ցու-
ցուցին :

Աւ անոնցմէ՝ Վ և տացւոց ցեղը, որովհետև
Աստուած ըսեր էր որ մասնաւոր տեղ չունենան,
ան ալ առին աս բոլոր Խորայելացւոց ցեղերուն
երկիրներուն մէջը ցրուեցին . քառասունութը
քաղաք տուին իրենց, և անոնցմէ ալ վեցը՝ քա-
ղաք ապաստանի ըրին, որ հոն ահամայ մտրդ
մեռցընողը փախչէր նէ՝ կը խալլսէր՝ չէին ըր-
ներ, ինչպէս որ Աստուած ապրսպրէր էր Սոլ-
սեսի : Ասկէ ՚ի զատ Վաղեբայ ալ, որ ան
Սոլսեսի խրկած տասուերկու լրտեսներէն մէկն

կր, իր բարի վկայութեանը վարձ՝ (ինչպէս Սովսեսի ձեռքով Ղաթուած իրեն խոստացեր էր) մասնաւոր տեղ առին. նաև Յեսու ալ Ղաթուածոյ հրամանովը իրեն զատ տեղ առաւ իր Լափրեմի ցեղին երկրին լերան մը վրայ՝ Թաւմնաթասրա ըսուած. ան տեղը քաղաք շինեց, ու ինչուան ետքը ինքն ալ հոն կը բնակէր: Ղաթուած ղերուս բաժանմունքներուն վրայ՝ ան ատենը Թէպէտ Խորայեւացոց ցեղերուն մէջը շատ վէճեր եղան, բայց Յեսու խաղաղեցուց զիրենք՝ և ամէնքը որչափ կարելի էր գոհ ըրաւ: Լաթը երբոր ամէն մարդ ալ սկսան իրենց տեղուանքը շինել որ բնակին, վկայութեան խորանն ալ տասպանակովը և իր ամէն բաներովը Վաղգաղային վերուցին՝ Սելով ըսուած քաղաքը տարին, որ Լափրեմի ցեղին երկրին մէջը կ'ըլլար: Աւետե Թէպէտ անկէ ալ Խորայեւացիք առին տեղէ տեղ տարին, բայց իր հաստատ տեղը հոն եղաւ՝ ինչուան Սամուէլ մարդարէին ատենը:

Ղաթուած կերպով Յեսու աս ամէն ցեղերը օրհնելով իրենց տեղը ձամբելէն ետև, մէկ բան մը հանդրակեցաւ՝ որ Խորայեւացոց մէջը շատ շփոթութիւն ձգեց: Ղաթուած ցեղ ու կէսը՝ ինչպէս ըսինք, որ Յորդանան գետէն անդին իրենց բաժինը առեր էին, երբոր ալ տեղերնին գացին տեղաւորուեցան՝ հոն Յորդանան գետին քովը մէկ մեծ սեղանի պէս շինուածք մը շինեցին: Ահալ տասը ցեղը ասդիէն աս բանս որ խնայան՝ ծուռ միտք գացին վրանին, իրր Թէ իրենցմէ զատուած՝ նոր հաւատք կ'ուզեն սահմանել. անոր համար մէյտեղ եկան խորհուրդ ըրին որ անոնց վրայ պատերազմի ելլեն: Բայց նորէն բանը աղէկ մը խմնալու համար՝ Փենեհէս քա-

Հանան ուրիշ խօսքի տէր մարդիկներու հետ
 մէկտեղ անոնց խրկեցին՝ որ զնայ յանդիմանեց
 զիրենք թէ՛ «Մարգարէս բան ընելով՝ կ'երեւցնէք
 որ՝ դուք մէկալ Խորայեւացւոց ցեղերէն զա-
 տուած՝ աստուածս պաշտու թիւնը թողուցեր՝ կու-
 պաշտու թիւն կը սկսիք կոր ընել . որով բոլոր
 Խորայեւացւոց ազգին վրայ Մատուծոյ բարկու-
 թիւնը կը շարժէք՝ որ նորէն մեզ ամէնս պատ-
 ժէ , ինչպէս ատեն ատեն Հանդրալեցաւ » : Մ-
 նոնք ալ զարձան պատասխան տուին թէ՛ «Քան
 լիցի որ մենք ատ պատճառով շինած ըլլանք աս
 սեղանը՝ որ զատ Մատուած պաշտենք՝ կամ վրան
 գործ մատուցանենք . ինչպէս աս բանիս մեր տէր
 Մատուածն ալ վկայ է . հապա մենք ասոր հա-
 մար շինեցինք որ՝ մեր մէջը և ձեր մէջը՝ որ դուք
 մեր եղբայրն էք՝ միաբանութեան յիշատակ մը
 ըլլայ ասիկայ՝ մեր ետեւէն եկող տղաքներուն » :
 Փենեհէսի սիրան ալ աս լեւելով հանգչեցաւ՝
 հաւնեցաւ անոնց ըրածը , և անանկ եկան հաս-
 կրցուցին մէկախոնց . ու անոնք ալ փառք տուին
 Մատուծոյ՝ որ աս մեղքէս ազատ են եղեր : Մտոյ
 համար Յեսու ալ ան սեղանին անունը դրաւ
 Սկայութիւն կամ յիշատակ՝ որ ան ցեղերն ալ
 մէկախոնց հետ մէկ Մատուած կը պաշտեն :

Մ ամէն բաներէն ետե Յեսու երբոր ալ
 ծերացաւ , բոլոր Խորայեւացւոց մեծերը բոլոր
 կանչեց , ու անոնց առջևը դնելով Մատուծոյ խ-
 րենց վրայ ըրած անհամար բարերարութիւննե-
 ըր՝ բարի խրատներով յորդորեց զիրենք , որ ըլ-
 լայ թէ ան քովերնին մնացած կուսպաշտ ազգի-
 բուն նայելով՝ կամաց կամաց թուին ան աս-
 տուածս պաշտու թիւնը թողուն՝ անոնց կուսքե-
 բուն ետեւէն երթան . որ ան ատենը Մատուած

ալ վրանին բարկանայ զիրենք երեսէ ձգէ, ու նորէն երթան ան ազգերուն տակը գերի ըլլան՝ չարչարուն հողինին ելլէ։ Այս ասոր վրայ Աւրայեւացոց բերնէն երդումով հաստատ խօսք առաւ՝ որ յաւիտեանս յաւիտենից իրենց տէր Աստուածը պաշտեն, անկէց ալ ուրիշ Աստուած չճանչնան. և աս բանիս յիշատակ՝ խորանին քովը մէկ մեծ քար մը անկէց, որ որդւոց որդի աս նորէն Աստուծոյ հետ ըրած ուխտն ու դաշինքը յիշեն։ Անկէ ետքը բարի ծերութեամբ հարիւրտասը տարուան մեռաւ Յեսուս Աւուսան՝ իր թամնաթասարս ըսուած քաղաքը, ու հոն իրեն քարէ շինած դանակը հետը մէյտեղ դրած՝ անանկ թաղուեցաւ։

Յեսուայ ետեւէն շատ չանցաւ որ Աղիազար քահանայապետն ալ մեռաւ, և անոր տեղը քահանայապետ եղաւ Փենեւէհէս իրեն որդին։

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յեսուայ ետեւ՝ դատաւորաց ոտննի խորայեւացոց որպիստրիւնը։

Մ՛ աշխարհի 2585 . 2591 . 2602 : (Գատ . Ե . Բ . Գ .)

Յեսուայ մեռնելէն ետեւ՝ առջի տարիները քանի որ ան հին ծերերէն մնացած կային՝ Աւրայեւացիք աստուածապաշտութիւնը չթողուցին. բայց երբոր անոնք ալ մեռան հատան, կամաց կամաց ժողովուրդը իրենց քովը եղած այլազգիներուն հետ բարեկամութիւն ընելով՝ հետերնին խառնուեցան, ու անոնց նայելով իրենք ալ

սկասն կատարչաութիւն ընել: Եւ ժամանակ
ները Եստուած Իսրայելացւոց հրեշտակ մը խոր-
կեց, որ եկաւ մեզքերնին երեւնին տուաւ խրա-
տեց զիրենք. որ թէ չդատնան նէ, ըսաւ, Ես-
տուած պատիժնին հու տայ, Իսրայելացիք ա-
լելով ան ատենը զղջում ցուցին լացին. և
այստ ամենայնիւ իրենց բռնած չար ճամբէն որ
եա չկեցան, Եստուած վրանին բարկանալով շատ
անգամ թողուց որ երթան դերի ըլլան ան այ-
լազգիներուն, որ անոնց տակը տանջուելով խե-
լուրնին վրանին դայ: Եւ անի երբոր կը զգաստա-
նային նորէն Եստուծոյ կը դիմէին, Եստուած ալ
իրենց ողորմելով ատեն ատեն մէյմէկ ուժով
մարդ կը հաներ մէջերնին, որ ան թնամիսե-
րուն ձեռքէն խալրտէ, և պէտք եղած ատենը
զիրենք կառավարէ. որ ասոնք Ղատաւօր կը
սուէին:

Աստի պինտ առաջ երբոր Իսրայելացիք այ-
լազգիներուն ձեռքէն չարչարուած Եստուծոյ ին-
կան՝ ու իրենց առաջնորդ մը խնդրեցին, Ես-
տուած Զուգայի ցեղը ցուցուց, որ ան ալ
Շմաւոնի ցեղը հետը սուած Փերեզացիներուն
դէմը ելան՝ տասը հազար հոգի ջարդեցին, և
անոնց Եղոնիբեզեկ ըսուած թագաւորը բռնե-
ցին, ու ձեռուրներուն ոտուրներուն ծայրերը
կտրեցին: Եւ ան ալ ան ատենը դարձաւ ըստ
թէ՛ « Իմ ըրածիս հաստուցումը Եստուծոյ զե-
տայ, որ ես ալ եօթանասուն թագաւորներ ու
բռնեցի, անոնց ձեռուրներուն և ոտուրներուն
ծայրերը կտրած՝ սեղանիս ներքեւ կը դնէին՝
որ շան պէս վար ինկած փշրանքներս բերնով
առնեն ուտեն »:

Իսրայելացիք ասանկ քիչ մը քաջութիւններ

ընելէն ետե՛ նորէն աստուած պաշտուած ենէ թուլցան , կռապաշտներուն հետ խառնուեցան , մէջերնին աղջիկ տուին առին , ու անոնց Ռա-
հաղ ըստած կուռքն ալ պաշտեցին . անոր հա-
մար Մատուած սրդողեցաւ վրանին , Վուսարա-
թեմ Մտրուոց թագաւորին ձեռքը տուաւ զիրենք :
Ռայց ութը տարի անոր տակը չարաչար ծառայե-
լէն ետե՛ երբոր խելուքնին վրանին եկաւ՝ նորէն
Մատուծոյ դիմեցին , Մատուած ալ ան ատենը
իրենց առաջնորդ տուաւ Վոթոնիել Վաղեբայ
սղախ եղբայրը , (կամ ինչպէս կ'ըսեն՝ եղբորը
որդին) , որ քաջութեամբ ելաւ յաղթեց զանի-
կայ , ու Ստրայեւացիքը ազատեց անոր ձեռքէն .
որ ասանկ քառսուն տարի Ստրայեւացիք ազատ
ինքնազուխ մնացին :

Վոթոնիելի մեռնելէն ետե՛ նորէն Ստրայե-
ւացիք սկսան մեղանչել՝ զՄատուած թողալ . ուս-
տի Մատուած զիրենք նորէն մասնեց Նգղոմ
ըստած Սոլաբացուոց թագաւորին ձեռքը , որ
վրանին ելաւ օիրապետեց , ու տասնութը տա-
րի տակը առած կը չարչարէր Ստրայեւացիքը , ին-
չուան որ ալ չդիմացան Մատուծոյ ինկան՝ որ զի-
րենք անոր ձեռքէն խալըսէ : Մն ժամանակը Մա-
տուած ալ ողորմեցաւ վրանին՝ Մուլղ ըստած
մէկ մարդ մը Ռենիամինի ցեղէն իրենց առաջ-
նորդ ցուցուց , որ անանկ քաջ մարդ մըն էր որ՝ եր-
կու ձեռքն ալ հաւատար կը բանեցընէր : Պէտք
եղաւ որ աս Մուլղը Ստրայեւացուոց ընծան կամ
տուրքը՝ Նգղոմ թագաւորին տանի . ան ատենը
ինքն ալ մէկ թիզ մը երկայն երկայրի (այսինքն
երկու բերնէ) դանակ մը՝ աջ մէջքը վերարկուին
ներքեւէն առաւ սահեց , ու անանկ ելաւ Նգ-
ղոմ թագաւորին դնաց . և անոր ընծաները տա-

լին ետքը՝ իր հետի մարդիկը քովին դուրս ձառ
 բեց, ու Ազգումի ըսաւ որ՝ «Քեզի հետ գաղ
 տուկ խօսք մը ունիմ», Ազգումն ալ քովի մար
 դիկը դուրս հանել տուաւ՝ որ ըսածը մտիկ ընէ,
 Արքօր երկուքը մինաւոր մնացին, Աշովզ նորին
 իրեն «Թագաւոր, ըսաւ, ես Աստուծոյ կող
 մանէ եկած քեզի բան մը պիտի գրուցեմ», Ազ
 գում ալ, որ խիստ գէր մարդ մին էր, նստած աե
 ղէն ելաւ քովն որ մօտեցաւ՝ ան ատենը Աշովզ
 շուտ մը ձախ ձեռքովը իր աջ մէջքէն դանակը
 քաշեց՝ Ազգումի կուշտը անանկ ուժով մը խօ
 թեց որ՝ դանակին կոթն ալ ձեռքէն սկրդեցաւ
 հետը ներս մտաւ, որ գիրուցը վրան եկաւ բը
 նեց՝ որ ալ չկրցաւ դանակը դուրս հանել, ու ա
 նանկ Աշովզ արտօրնօք մարդ չաւսած դուրս ե
 լաւ դուռը վրայէն գոցեց, սրատու հանէն դուրս
 ցատքեց փախաւ գնաց: Թագաւորին ծառաները
 անդին դուրսը կեցած, կարծելով թէ ինքը ներ
 սը հարկի համար կ'ուշանայ կոր, խել մը սպա
 սելէն ետե՛ բանալիք բերին՝ դուռը բացին աե
 սան որ՝ Ազգումը մեռած գետնինը փռուեր էր:
 Արքօր Սովարացիքը աս բանիս վրայ շիտեմ
 իրար անցեր էին, Աշովզ ան ատենը գնաց ըս
 տով Իսրայելացիքը ժողովեց՝ ասանց վրայ եկա
 տասը հազար հողի մէկ օրուան մէջը Չարդե
 և անանկ Իսրայելացիները Սովարացւոց գե
 ռութենէն խաղրակեց. որ ութսուն տարիի շտ
 աղատ մնացին. ու ինքը Աշովզ ինչուան մեռա
 նէ անոնց դատարարութիւն կ'ընէր: — Ատենէ
 մէկ քով մարդ մը ելաւ Սամեզար ըստած որդ
 Անաթայ, որ աս ալ շատ օղնութիւն ըրաւ Ի
 սրայելացւոց. անանկ որ՝ մէկ հեղ մը գետն
 հերկելու արօրովը (այսինքն սաստանով) վեց հա

ըիւր այլազգի մեռուց, ու անոնց անասուններէն՝ կով, ոչխար, հորթ, շատ բան կողոպտեց ասդին առաւ :

Գ. Լ. ՈՒ Խ Զ .

Դերոյայի, Բարախայ, Սիսարայի և Յայելի պատմութիւնը :

ԱՄ աշխարհի 2700 : (Դսա . 7 . Ե :)

Սամեղարի մեռնելէն ետև՝ Իսրայելացիք նորէն ձամբանին որ փոխեցին, Լստուած բարկացաւ վրանին՝ զիրենք մատնեց Յաբին ըսուած Քանանացւոց թագաւորին ձեռքը, որ քսան տարի տակը առած չարչարեց : Լստուաները Իսրայելացւոց մէջը մէկ բարեպաշտ մարդարէ կնիկ մը կար Ղեբորա անունով Լսիրեմի երկիրը նըստած . որ Իսրայելացիք մէջերնին վէճ՝ մը ունենային նէ՝ անոր կ'երթային, ան կը տեսնէր իրենց դատաստանը : Լսիկայ քովը կանչեց Բարակ ըսուած մէկ մարդ մը՝ Եփթաղիմի ցեղէն, իրեն ըսաւ թէ՝ « Լստուած քեզի կը հրամայէ որ թափոր լեռը երթաս, ու Եփթաղիմի՝ Օւբուզոնի ցեղերէն տասը հազար հողի ժողկես հետդ առնես երթաս Միսնի հեղեղաօր (այսօրնքն չայր) Սիսարա ըսուած Յաբին թագաւորին զօրապետին դէմ, որ ես հոն անոր բոլոր զօրքը քու ձեռքդ պիտի մատնեմ » : Բարակ վախցաւ սիրտ չըբաւ որ ինքը մինաւոր աս բանիս ձեռք զարնէ . ուստի դարձաւ Ղեբորային ըսաւ . « Թէ որ դուն ալ հետս կու գաս նէ՝ կ'երթամ, որ ինձի առնալը իմացընես թէ Լստուած

տուած էրբ բանս կ'աջողէ . չէ նէ՛ չեմ երթ
 թար , : Վերջորան ալ խօսք տուաւ թէ՛ . Սու
 դամ . բայց գիտնաս , ըսաւ , որ ան ատենը յաղ
 թու թիւնը քուկդ ջրլար , . ու անանկ մէյ
 տեղ ելան տասը հազար մարդ ժողովեցին լիա
 փոր լեռը դացին : Ըս էրբոր խմացաւ Սիսարթ
 զօրապետը , ինքն ալ բոլոր իր զօրքերը առաւ՝
 ինըհարիւր սպատերազմական երկր թէ կառքե
 բով՝ եկաւ Ախանի հեղեղատը սպարաստուած
 կեցաւ Իսրայէլացոց դէմ : Այրբոր ատենը հա
 սաւ՝ և Վերջորայի ըսածին պէս Բարակը լիա
 փոր լեռնէն ինջաւ՝ որ թշնամիներուն դէմ պա
 տերազմ սիսի , ան ժամանակը Ըստուած անանկ
 վախ մը ձգեց Սիսարայի սիրտը , և մէկ իրար
 անցում մը թշնամիներուն բանակին մէջը , որ
 սաստիկ շփոթած՝ փախչող փախչողի եղան , ու
 Բարակը իր զօրքովը ետեւնին ինկած զամէնքը
 ջարդեց սրբեց : Սիսարան ան խռովութեան մէ
 ջը շուտով փախչել ուզելով իր կառքէն դուրս
 ցառքեց , ու ոտքով վազելով դէպ ՚ի Անե
 ցոց կողմը գնաց ինկաւ : (Ըս Անեցիք ըսու
 ծը պզտիկ ազգ մըն էին որ եկեր վրանով ան
 տեղուանքը կը բնակէին . և ինչպէս կ'ըսեն՝
 Սովսեսի կնիանը զիէն Իսրայէլացոց ինտո՞
 ըլլալով հետերնին բարեկամ էին . բայց այլոց
 գիտներուն հետ ալ աւրուած չէին) : Ըն ատենը
 Հայէլ ըսուած՝ Վաբեր կիսնեցիին կնիկը Սիս
 արայի դէմը հանդրապեցաւ , ու մեծարելով կած
 չեց իր վրանը առաւ տարաւ Սիսարան՝ որ հանդ
 չի . ան ալ անանկ յոգնած տարցած խմելու ջուր
 որ ուզեց , Հայէլը ջրին տեղը իրեն կաթ տուաւ
 որ զէն ջրնէ , ու անանկ ներսը անոր ուզածին
 պէս գաղտուկ տեղ մը սպառկեցուց վրան ծած .

Կէց՝ որ մարդ գալու ըլլայ նէ չիմանայ թէ հոն
 փախեր է : Հայեւը երեսանց սասանկ բարեկա-
 մութիւն ցուցուց Սիսարայի , բայց իր սիրտը
 Խորայեւացւոց հետ մէկ ըլլալով՝ երբոր նորէն
 քովը դարձաւ տեսաւ որ սրտեղան խորունկ քուն
 եղեր է , ան ատենը վրանին ցիցը (այսինքն չա-
 արուն խողըխը) առաւ՝ անով գեղինը դամեց
 Սիսարայի գլուխը , անանկ մեռցուց զինքը : Ատ-
 քը երբոր Քարակը վրայ հասաւ՝ որ Սիսարայի
 ետեւէ ինկեր կը փնտռէր , Հայել առջևը ելաւ
 ըսաւ . « Եկուք որ քու փնտաած մարդդ տես-
 նես » . ինքն ալ ներս գնաց տեսաւ որ Սիսարան
 անանկ ինկած մեռեր է : Ըստ կերպովս Քստուած
 զԽորայեւացիս Քանանացւոց Հարին թագաւո-
 ըին ձեռքէն խալըսեց . որ անկէ ետքը քառսուն
 տարի ազատ հանդիստ մնացին : յերբորս ալ
 Քարակայ հետ՝ այսպիսի հրաշալի յաղթու-
 թեանս վրայ փառք տալով Քստուծոյ՝ շնորհա-
 կալութեան գովասանք մը ըրին մէյտեղ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Գեղեոն գորապետ կրեարտի՝ Խորայեւացիքը Մադիա-
 մացոց ձեռքէն կ'ազատէ :

Մտ աշխարհի 2750 : (Դաս . 2 . Ե . Ը .)

Խորայեւացիք կամաց կամաց նորէն զՔստուած
 բարկացընելով Քստուծոյ երեսէն իյնալով ան-
 տէր անտերունչ Սաղիամացւոց և Քմաղեկացւոց
 ձեռքէն անանկ բան քաշեցին , որ ալ աներնին
 տեղերնին ձգեր՝ սողիս անդին ցիր ու ցան եղած՝
 լեռները այրերուն մէջ անպալարի տեղուանք փա-

խեր՝ հոն կը կենային, Մսանկ եօթը տարի որ չարժարուեցան, և ալ ճարերնին հատած դարձան Մստուծոյ որ ինկան, Մստուած ողորմեցաւ վրանին, առաջ մարգարէ մը խրկեց իրենց, որ ըրած մեղքերնին երեսնին տուաւ՝ խրատեց զիրենք: Ատքը հրեշտակ մը խրկեց Վեդէոն ըսուած մարդու մը, որ Յովասի որդին էր Սանասելի ցեղէն, կըբող ստիկայ Սաղիամնացւոյ ձեռքէն փախած՝ իր հօրը կալը (այսինքն հարմանը) կ'աշխատէր ցորեն կը ծեծէր. ու հրեշտակը եկաւ իրեն ըսաւ թէ՝ « Մստուած քեզ ընտրեք է որ երթաս Խորայելացւոյ ժողովուրդը իրենց թշնամիներուն ձեռքէն խալըսես », Վեդէոն սա բանիս վրայ զարմանալով ետ քաշուեցաւ, ըսաւ թէ՝ « Աս ո՞վ եմ, մէկ ողորմելի հասարակ մարդ մը, որ Խորայելացիքը ազատեմ », հրեշտակն ալ ստատախան տուաւ թէ՝ « Մստուած հետդ որ ըլլայ՝ ըստ Սաղիամնացիները մէկէն կը ջարդես », Մստուենը Վեդէոն ալ սա բանիս ճշմարտութեանը համար՝ որ ինքը Մստուծոյ խրկուած է, իրմէ մէկ նշան մը ուզեց. և աղաչեց հրեշտակին որ հոն կենայ՝ ինչուան ինքը երթայ իրեն համար սեղան սպտորաստէ բերի. ու զնայ Վեդէոն շատ մը մէկ ուլ մը խաշեց, ու բազարջ հաց շինեց. առաւ զասոնք հրեշտակին առջևը որ բերաւ, հրեշտակը ըսաւ որ դիմացի քարին վրայ դնէ ան բաները, և ձեռքի դաւազանովը ան մսին ու բազարջին դպածին պէս՝ կրակ մը ելաւ ան քարէն երեց լափեց կերակուրները, ու յանկարծակի հրեշտակը աներևոյթ եղաւ ան տեղէն: Վեդէոն երբոր սա հրաշքս տեսաւ՝ սաստիկ ահեցաւ, խմացաւ որ հրեշտակ Մստուծոյ է եղեր, և ան տեղը Մստուծոյ մէկ սեղան մը շինեց: Լ:

գիշերը Մատուած Վեդէոնի հրամայեց որ՝ եր-
թայ Մահաղ կուռքին սեղանը քակէ կործանէ,
անոր քովը եղած կուսարաշտական ծառերը կըտ-
րէ. և ան կտրած փայտերովը՝ իր հօրը եօթը
տարուան պարարտացուցած եզր առնէ՝ Մատուծոյ
ողջակէզ ընէ ան նոր շինած սեղանին վրայ:
Վեդէոն ալ ցորեկը վախցաւ աս բանս ընելու.
ուստի մէկ գիշեր մը գաղտուկ ելաւ տասը հոգի
իր հօրը ծառաներէն հետը առաւ՝ գնաց անանկ
ան Մատուծոյ հրամայածը կատարեց: Մատուանց
երբոր ելան քաղքի մարդիկը աս բաներս տե-
սան, և փնտռեցին խնացան որ Վեդէոն ըրեր
է՝ կատղած անոր հօրը վրան եկան, ու կ'ուզէին
որ Վեդէոնը հանէ ձեռուրնին տայ՝ որ ստան-
նեն: Հայրն ալ ասով խաղրսեց Վեդէոնը, ա-
նոնց ըսաւ թէ՝ «Չեր ինչ վրանիդ պէտք է.
Մահաղը թէ որ Մատուած է նէ՝ թող ինքը իր
սեղանը կործանողներուն վրէժը առնէ (կամ
հախէն գայ) մեռցընէ», և աս սրտաճառովս
հայրը Վեդէոնի անունը Յերթոռող դրաւ, իբր
թէ ասով Մահաղ կուռքը յաղթեց:

Միկէ ետքը երբոր խնացաւ Վեդէոն որ Սա-
ղիամացիքը և Մմաղեկացիք մէկտեղ նորէն Սա-
րայեւացոց վրայ կու գան, ինքն ալ Մատու-
մէ ուժ առած՝ կանչեց ժողովեց Սարայեւացիքը՝
Մսերի, Օարուղոնի և Վեփթաղիմի ցեղերէն՝
որ անոնց գէմ ելլէ: Մայց նորէն հաստատ գիտ-
նալու համար՝ թէ իրաւ Մատուած զինքը Սա-
րայեւացոց առաջնորդ ընտրեր է՝ որ Սաղիա-
մացոց ձեռքէն զիրենք խալրսէ, Մատուժէ աս
նշանս խնդրեց, որ մէկ գզաթ մը (այսինքն
փէօսատէրի մը) գիշերը դուրս տեղ փռած թռ-
ղու, և բորբ գետինը չոր ցամաք մնայ, ու ան

գզաթին վրայ միայն անձրև գայ . Մտուած ալ
 Վեդէանին խնդիրքը կաատրեց , որ երբոր առ-
 տուանց ելաւ ան գզաթը քամեց նէ՛ վազած
 Զուրը կոնք մը (այսինքն լէյէն մը) լեցուց , Մ
 Տերիք չէ , ետեւէն մէյ մ'ալ Մտուածմէ խնդրեց
 որ ասոր ներհակը՝ ան գզաթը չոր մնայ , ու բոլոր
 գետինը թըջի . Վեդէան երբոր աս երկու հրաչքս
 տեսաւ , ալ սաստիկ սիրտ առաւ . ուստի իր բո-
 լոր զօրքը ժողված թշնամիներուն դէմ որ եր-
 թալու եղաւ՝ ան ատենը Մտուած գարձաւ
 Վեդէանի ըսաւ որ՝ « Մտ զօրքդ շատ են , ես
 ատշափովդ Մազխամացիքը ձեր ձեռքը չեմ 'ի
 տար , որ չելլեն Իսրայէլացիքը ըսեն թէ՛ Մենք
 մեր ուժովը անոնց յաղթեցինք . հասցա իրենց
 ըսէ որ մէջերնին վախկոտները ետ դառնան » :
 Մտ խօսքիս վրայ՝ քսանուերկու հազար հօգի ե-
 լան ետ դարձան , ու միայն տասը հազար մնա-
 ցին : Մտքը աս մնացածին համար ալ Մտուած
 ըսաւ թէ շատ են , ու Վեդէանի հրամայեց որ
 դասոնք առնէ մէկ ջրի մը քով տանի , որ ծա-
 բուեր էին , ու հոն խմելնին՝ նայի թէ անոնցով
 որը Զուրը ափը առած՝ մէջէն շան պէս լափէ նէ
 անիկայ մէկ դի կայնեցրնէ , ու սլ որ ծնկով
 վրայ ինկած խմէ նէ՛ ան ալ մէկալ դին զատ :
 Մտանկ որ ըրաւ Վեդէան՝ տեսաւ որ միայն իր
 հարիւր հօգի շան պէս լափելով խմեցին , ու բո-
 լոր մէկալ մնացածը ծնկան վրայ ինկած Զուրե-
 նին խմեցին . ան ատենը Մտուած Վեդէան
 ըսաւ թէ՛ « Մտ իրեք հարիւրովը Իսրայէլացիք
 պիտի Մազխամացուց ձեռքէն ազատեմ . մէկալ
 բոլորը իրենց տունը ճամբէ որ երթան » : Մտ-
 քը Մտուած իրեն նորէն սիրտ տալու համար
 հրամայեց որ ինքը մինաւոր իր Փարա ըսուած

մանչր հետը առած՝ զիշերանց դաղաուկ թշնա-
միներուն բանակը երթայ, որ լսէ թէ անոնք
մէջերնին ինչ կը դրուցեն: Վեդէոն ըսածին
պէս գնաց՝ մտիկ ըրաւ որ զինուորին մէկը մէկա-
լին կը պատմէր թէ՛ « Այրազ մը տեսայ որ՝ մէկ
գարիէ շինած նկանակ մը (այսինքն առփայէ սո-
մուն մը) անդիէն կըտորելով եկաւ դէպ ՚ի մեզ,
զարկաւ կործանեց բոլոր Սաղխամացոց բանա-
կը », մէկայն ալ անոր ըսաւ թէ՛ « Ետ Վե-
դէոնի Յովասի տղին թուրը պիտոր ըլլայ, կ'ե-
րեայ որ Լստուած մեզ անոր ձեռքը տուեր է », Լս
որ լսեց Վեդէոն՝ Լստուծոյ շնորհակալ ըլ-
լալով շուտ մը իր բանակը դարձաւ, ըսաւ թէ՛
« Լս ելէք երթանք. Լստուած Սաղխամացիքը
մեր ձեռքը տուաւ », ուստի ան իրեք հարիւր հո-
գին իրեք դաս բաժնեց, և անոնց՝ զինքի տեղ, ա-
մենուն մէկ մէկ ձեռուրնին եզջիւրէ փող (այս-
ինքն պոյնուղէ շինած զունա մը) տուաւ, ու
մէկալ ձեռուրնին մէյմէկ վառած ճրագ՝ սափորի
(այսինքն տէտի) մէջ դրած որ չերեայ. և ի-
րենց ապսպրեց որ ինքը ինչ որ ընէ նէ՛ ամէնքն
ալ անանկ ընեն: Լսանկ կէս զիշերուան մօտ
եղան ասոնք յանկարծակի թշնամիներուն բա-
նակը գացին, ու Վեդէոնին ըսածին պէս մէկէն
փողերնին չալելով սափորնին կտարուցին ճրագ-
ները դուրս երեցան, ու ամէնը մէկ բերան սկը-
սան կանչուրտել՝ Սոր Տեառն և Վեդէոնի: Լս
բանովս Լստուած Սաղխամացոց բանակին մէջը
մէկ այնպիսի սոսկում մը ձգեց, որ ան տեղը ի-
րար անցնելով ան մութ զիշեր առեն մէկը զմէ-
կալը իրենց թշնամիներէն կարծելով անխնայ
առջենին եկածը կը ջարդէին. անանկ որ՝ հա-
րիւր քսան հազար հոգի ան տեղը իրենցմէ կո-

տրուեցան, ու տասներհինգ հազար ալ որ աս
 դիտ անդին ցիր ու ցան փախեր էին, անոնց հա-
 մար ալ մարդ խրկեց Վեդէոն մէկալ Խորայե-
 լացւոց, որ էլան դէմերնին առին զանոնք ալ
 Զարդեցին, ու անոնց երկու իշխաններունն ալ
 մէկը Որէք ու մէկալը Օէք ըսուած՝ զլուխնին
 կտրեցին Վեդէոնի բերին: Ատքը Վեդէոն ու
 ըիշ երկու իշխաններ ալ բռնեց՝ Օէքէն ու
 Սաղմանա ըսուած, և զասոնք ալ ինքը իր ձեռ-
 քովը մորթեց:

Վեդէոն երբոր աս քաջութիւնս ըրաւ լմն-
 ցուց, ան ատենը Խորայեղացիք իրեն եկան ըսին
 թէ՝ “ Ըսկէ ետեւ քեզի կը վայլէ որ դուն՝ ու ե-
 տեւդ քու տղաքդ՝ մեզի առաջնորդ իշխան ըլ-
 լան, որ մեզ Սաղմանացւոց ձեռքէն ազատե-
 ցիր ”: Ըն ալ “ Բան լիցի, ըսաւ, ձեր իշխա-
 նը Ստուած է. ես միայն աս մէկ բանս ձեզմէ
 կը խնդրեմ, որ թշնամիներուն կողոպուտներէն
 մարդ զլուխ հանէք ինձի մէյմէկ օղ տաք ”:
 (պատճառն որ՝ ան կտորուածներուն մէջը շատ
 Խամայեղացիներ ալ կային, որ ոսկիէ օղ կը դը-
 նէին): անոնք ալ սիրով հանեցին տուին, որ ա-
 սանկ ընելով բոլորը մէյտեղ՝ Վեդէոն շատ բաժ-
 ձեռք ձգեց, ան Սաղմանացւոց իշխաններուն ու
 կիէ զարդարանքներէն ՚ի զատ: Ատքը ինքն ալ
 առաւ անով աւելորդապաշտական բաներ շինեց
 իր Ափրա ըսուած քաղաքին մէջը, որ ան ետքը
 մեղաց պատճառ եղաւ իրեն՝ ու իր զաւկըներուն՝
 և բոլոր մէկալ Խորայեղացւոց ալ. թէպէտ ին-
 քը իր աստուածապաշտութիւնն ալ ձեռքէ չթո-
 ղուց, և հետը Խորայեղացիք ալ Ստուծոյ ծա-
 ոայելով, քառսուն տարի՝ քանի որ Վեդէոն կտր-
 նէ՝ ազատ մնացին Սաղմանացւոց և ուրիշ պ-
 լազդիներուն ձեռքէն:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Արխիեպիսկոպոս Գրիգորիոս Բարսեղի :

Ստ. աշխարհի 2770 : (Դատ . Թ .)

Անկէ ետեւ Իսրայելացիք զԱրտուած թողուցին , սկսան Ռահազաղ Ռերիթ ըսուած Աիկիմնացւոց կուռքը սպաշտել . և մեծ ապերախտութիւն ցուցուցին Վեդէոնի՝ որ իրենց այնչափ բարիք էր ըրեր . որ ասանկ եղաւ : Վեդէոն որ մեռաւ՝ իրեն առած կնիկներէն եօթանասուն զաւակ թողուցեր էր , ու ասոնցմէ զատ մէկ ուրիշ մ'ալ Աբիմեւէք ըսուած՝ որ սիկիմնացի կնիկէ մը եղեր էր : Ասիկայ ան ատենը իրեն մօրը դիէն ազգականներուն ձեռքովը Աիկիմնացւոց սիրտը իրեն քաշեց՝ որ ան բոլոր մէկալ եօթանասունն ալ թողուն , զինքը հօրը տեղը Իսրայելացւոց վրայ իշխան դնեն . և իր իշխանութիւնը ասորհովցրնելու համար՝ մէկէն առջի բերանը Աիկիմնացիներէն առած ստրկովը՝ սրեկայ (այսինքն հովարտա ու ետրամազ) մարդիկ վրան ժողովեց՝ ու շուտ մը դնաց ան իր եօթանասուն եղբայրները բռնեց՝ վաթսունըինը մէկ քարի մը վրայ մորթեց . որ մէջերնին պինտ պղզափկը միայն՝ Հովաթամ ըսուած՝ փախաւ սահուեցաւ մեռնելէն խալըսեցաւ : Ատքը երբոր Աիկիմնացիները ուրիշ Իսրայելացւոց հետ մէկ տեղ եկած՝ Աբիմեւէքայ թագաւոր դնելուն հանդէսը որ կ'ընէին , ան ատենը Հովաթամ դնաց ասոնց դիմացը Վարիզին ըսուած լերանը վրայ ելաւ , ու հեռուանց կանչելով ըսաւ իրենց .

« Մտիկ ըրէք Սիկիմացիք՝ ինչ որ պիտի ձեզի
 ըսեմ: Օտուերը ուզեցին որ իրենց մէկ թագա-
 ւոր մը դնեն, ու գացին ձիթենիին (այսինքն զէ-
 թինի ծառին) ըսին թէ՛ Մեզի թագաւոր եղիր.
 ան ալ իրենց պատասխան տուաւ թէ՛ Վա ինտօր
 թողում իմ պարարտ եզս, որ անուլ Մտուած
 ու մարդիկ իս կը մեծարեն, ու գամ՝ ձեզի պէս
 ծառերուն իշխան ըլլամ: Ետքը գացին թզենիին
 (այսինքն ինձիլի ծառին) ինկան՝ որ ան գայ ի-
 րենց վրայ թագաւորէ. ան ալ ըսաւ թէ՛ Մնայէս
 թողում իմ անուշ պտուղս, ու երթամ փայտե-
 րուն իշխան ըլլամ: Մն ալ որ չեղաւ՝ գացին որ-
 թին (այսինքն ասմային). որթն ալ պատասխան
 տուաւ թէ՛ Վա ինտօր կ'ըլլայ որ իմ գինիս թո-
 դում որ Մտուծոյ և մարդիկներուն ուրախու-
 թիւնն է, ու գամ ձեզի պէս փայտերուն իշխան
 ըլլամ: Մն ալ որ չէ ըսաւ, ան ատենը երան
 դժնիկին (այսինքն գարա չալքին) ըսին թէ՛ Վուն
 եկուր մեր վրայ թագաւորէ. դժնիկն ալ ուրախա-
 ցաւ՝ ու ըսաւ իրենց. թէ՛ որ իրաւ իս ձեր վրայ
 թագաւոր կը դնէք նէ՛ եկէ՛ք իմ շուքիս տակը
 պարտըկուեցէք, չէ նէ՛ դժնիկէն կրակ կ'ելլէ
 ու ձեզի պէս եղևնափայտները (այսինքն չամիծա-
 սերը) կ'երէ կ'ուտէ: Մն ատակիս ետեւէն ը-
 սաւ Յուլաթամ. « Վայեցէ՛ք, ատ արդարո՞-
 թիւն էր մի՛ որ Վեդէսնի ձեր բարերարին ա-
 տանկ հատուցում ըրիք, որ անոր եօթամասած
 զաւակը մէկէն ջարդել ուզեցիք, որ Մբիմեղէք
 անոր աղախինին որդին՝ ձեզի թագաւոր դնէք.
 Եթէ աս բանս չիտակ է նէ՛ բարով կը վայելէ
 մէկզմէկ. հազա թէ չէ՛ պիտի կրակ ելլէ ան
 Մբիմեղէքէն՝ որ ձեզ երէ ու լափէ, կամ թէ՛
 ձեզմէ ելած կրակը զանիկայ կ'ուտէ: »

• Յովաթամ ասանկ ըսելով՝ ելաւ փախաւ գնաց
 երեսը ծածկեց . և անոր ըսածը ճշմարիտ ելաւ .
 ինչու որ՝ Մ.բիմելէք իրեք տարիի չափ անկար-
 գութեամբ Սորայեւացւոց տիրապետելէն ետքը ,
 ալ չդիմացան Սիկիմացիները անոր բռնակալու-
 թեանը , ուստի Վասաղ ըսուած իշխանի մը հետ
 մէկ եղան անկէ գլուխ քաշեցին , ու ետեւէ էին
 որ զինքը բռնեն մեռցնեն : Մ.ս որ եղաւ , Մ.բի-
 մելէք իր զօրքովը Սիկիմացւոց վրայ գնաց , ու
 ջարդելով զիրենք՝ բերդին կրակ տուաւ՝ հազար
 հոգիի չափ ալ հոն երեց : Մ.նկէց ելաւ (մեքէս
 ըսուած քաղքին վրայ գնաց , որ ասոնք ալ իրմէ
 գլուխ քաշեր էին . ան քաղքին մէջ տեղը մէկ
 ամուր բերդ մը կար , քաղքին մեծամեծներէն
 խել մը անոր մէջը մտան պահուեցան : Այբոր
 Մ.բիմելէք բերդին տակը գնաց մօտեցաւ որ
 դրանը կրակ տայ , ան ատենը վերէն մէկ կնիկ
 մը երկանի (այսինքն տէյիրմէնի) քարի կտոր մը
 ձգեց վրան , որ եկաւ Մ.բիմելէքի գլխուն գա-
 գաթը ջարդուբուրդ ըրաւ . ան ալ շուտ մը կան-
 չեց իր կապարձակիլը (այսինքն սիլիհտարը) ը-
 սաւ որ թուրը հանէ զինքը սպաննէ , որ չըսուի
 թէ մէկ կնիկ մը զինքը մեռուցեր է : Այլ անանկ
 անտեղը չարաչար մեռաւ Մ.բիմելէք , Մ.սուծ-
 մէ առնելով իր անողորմութեան և չարութեան
 պատիժը՝ Սիկիմացւոց հետ , ինչպէս որ ան ա-
 ռակը բերելով զիրենք անիծեր էր Յովաթամ :

Գ. Լ. ՈՒԽԹԻՍ

Յեկիրայեի պատմությունը :

ԱՄ աշխարհի 2800 : (Դ. աս . Ժ . ԺԱ . ԺԲ .)

Ընթացելով այս ետև Խորայեւացւոց դատաւոր եղաւ թաւազա ըստւած մէկ մը Խաւարի ցեղէն , որ քսանութիւնք տարի նստաւ . անոր ետևէն Յայիր գաղայագացին , որ երսուսուերկու որդի ունէր , ու ասոնք երսուսուերկու աւանակ հեծած անանկ կ'երթային , և ամէն մէկը մէյմէկ քաղաք ունէին , որ Ընթաց Յայիրայ ըսուեցան ,

Յայիր քսանութիւնք տարի դատաւորութիւն ընեւին ետքն որ մեռաւ , Խորայեւացիք նորէն կուսապաշտութեան ետևէ ինկան , սկսան Ըստրուոց , Ստրուացւոց և Ըմնացւոց կուսքերը պաշտել . անոր համար Ըստուած ալ սրդողեցաւ զիրենք երեսէ ձգեց , թող տուաւ որ տասնութ թը տարի ան ազգերը ասդին անդին իրենց երկիրները մոնեն տակն ու վրայ ընեն : Ըստայ երբոր ալ Ըմնացիք բանակով առաջ եկան Վաղայագ ըստւած դաւառին մտիկցան , որ անկէջ ալ երթան կարգով բոլոր Խորայեւացւոց երկիրները աղէկ մը տիրեն , ան ատենը Խորայեւացիք ալ խելուրնին գլուխնին ժողվեցին , ան կուսքեր մէջերնէն վերցուցին , մեղայ ըսին Ըստուծոյ դիմեցին : Եւ աս Ըմնացւոց դէմ Վաղայագու մեծերը ասանկ խօսք զրին մէջերնին , թէ ով որ առաջ իշնայ պատերազմ ելլէ , զանիկայ իրենց իշխան նստեցնեն . բայց ետքը տեսնելով որ մարդ սիրտ չըներ կոր աս բանիս , մտմտացին որ

Յեփթայէն կանչեն բերեն՝ անիկայ աս պատե-
 րազմիս ճարը հոգայ : Ըս Յեփթայէ ըսածս՝
 մէկ ուժով քաջ գաղայադացի մարդ մըն էր , որ
 անիկէց իրեն եղբայրները հայրենական ժառան-
 գութենէն զրկելով անէն դուրս վտընտեր էին՝
 Ղուն մեր հօրը խորթ զաւակն ես ըսելով . ու
 ինքն ալ գացեր մէկ դի գլուխը քաշեր՝ քովը
 սրիկայ մարդիկ ժողված՝ անանկ քաջութեամբ
 ինքնագլուխ կը կենար : Առտի երբօր ասոնք ե-
 կան իրեն աղաչեցին որ ելլէ գայ՝ ինքը աս պա-
 տերազմն առաջ տանի , Յեփթայէն առջի բե-
 րանը ծանրէն քաշեց , երեսնին տուաւ Ղաղայաւ
 դացւոց իրեն դէմ ըրած անիրաւութիւնը : Ատ-
 քը անոնցմէ երդումով խօսք առաւ՝ որ եթէ Ըս
 տուած յաջողէ պատերազմը յաղթէ նէ՝ ինքը
 իրենց վրայ իշխան ըլլայ , անանկ ելաւ հետեր-
 նին եկաւ Սասեփա ըսուած տեղը , ուր որ Իս-
 րայելացիք մէյակեղ ժողովեր էին . ու մէկէն դես-
 պան խրկեց Ղմոնացւոց թագաւորին՝ թէ « Ղուն
 ինչու իմ երկիրս եկեր պատերազմ կ'ընես » : Ըս
 մոնացւոց թագաւորը իրեն պատասխան տուաւ
 թէ « Ըս տեղուանքս իմ երկիրներս էին , որ Իս-
 րայելացիք Աղիպտոսէ ելան եկան տիրապետե-
 ցին » : Յեփթայէն ալ նորէն իրեն խրկեց ըսաւ
 թէ՝ « Ըն առենը երբօր աս տեղի մարդիկը մե-
 զի չուզեցին ճամբայ տալ՝ հետերնիս պատե-
 րազմ քացին , մենք ալ զանոնք յաղթելով մեր
 Ըստուծոյ օգնութեամբը՝ պատերազմական ի-
 րաւունքով աս երկիրները մեզի առինք , որ ի-
 րեքհարիւր տարի կ'ըլլայ ձեռուրնիս է . ու դուն
 հիմա ելեր կ'ուզես որ մեր ձեռքէն յափշտա-
 կես . աս քու ըրած անիրաւութեանդ դատաս-
 տանը , ըսաւ , Ըստուած ինքը տեսնէ » : Ատքը

երբոր տեսաւ Յեփթայէն որ ան իր խօսքին վրայ կեցեր՝ կ'ուզէ կոր առաջ գալ, ան ատենը ինքն ալ Մատուծմէ շարժած՝ շուտ մը ելաւ նորէն զօրք ժողկեց . և դէմը սրատերազմ երթալու ժամանակը՝ Մատուծոյ ասանկ ուխտ ըրաւ որ՝ ան Մմնացիքը յաղթելէն ետե խաղաղութեամբ իր տունը դառնալու ըլլայ նէ, ով որ սկինտ առաջ տանը դռնէն դուրս ելլէ իրեն դիմացը գալու՝ զանիկայ Մատուծոյ տղջակէզ ընէ, Մյսպիտի կերպով գնաց Յեփթայէ, և Մատուծոյ օգնութեամբը թշնամիները շարաշար կտարելով՝ քսան քաղաք ալ ձեռուրնէն ետ առաւ, ու մնացածները փախցընելով ցիրուցան ըրաւ . ետքը Սասեփա քաղաքը իր տունն որ կը դառնար՝ տեսաւ որ իր մէկ հատիկ սիրական կոյս աղջիկը սքար բռնած ուրիշ աղջիկներու հետ ուրախութեամբ թմբուկ զարնելով զխնացը ելաւ : Մն ատենը Յեփթայէն ալ տակնուվրայ եղաւ, սաստիկ տրտմութենէն վրայի լսմը պատուեց՝ « Այն ինձի, ըսաւ, իմ աղջիկ, ինչ ձիւն բերիր գլուխ . որ ես չզխանալով քեզի համար Մատուծոյ ուխտ եմ ըրեր . » հիմա խօսքէս չեմ կրնար ետ դառնալ, : Մջջիկն ալ քաջասրտութեամբ վրայ տուաւ ըստ թէ՝ « Ինձի համար ինչ որ ուխտեր ես նէ՝ պէտք է որ կատարես, որ անով Մատուծ քեզի յաղթութիւնս տուաւ . միայն թէ, ըսաւ, ՝ կը ինզրեմ որ՝ երկու ամիս ինձի ատեն տաս, որ աս իմ ընկերներուս հետ լեռները երթամ ստրտիմ, ու իմ կուսութիւնս լամ ողբամ, » Յեփթայէն ալ ըսածին պէս անանկ թող տուաւ . և երկու ամսէն ետե որ դարձաւ՝ կատարեց Մատուծոյ ըրած իր ուխտը : Եւ ան Ե.

տենէն սովորութիւն մտաւ Եւրոպայեւացւոց մէջը՝ որ ամէն տարի չորս օր աղջիկ տղաքը մէյտեղ եկած Յեփթայէի աղջրկանը վրայ ողբ կ'ընէին :

Ընկէ ետքը Եփրեմի ցեղը Յեփթայէի վրայ նախանձեւով Յորդանան գետը անցան իրեն եկան սրդողելով ըսին թէ՛ « Ընչու մեզ մարդու տեղ չգրիր՝ Տեազ պատերազմ չկանչեցիր » . և աս բանիս համար վախ կու տային իրեն թէ՛ Տունդ տեղդ վրայ կ'երենք : Յեփթայէն ալ անոնց պատասխան տուաւ որ՝ « Ես ձեզ կանչեցի . բայց երբոր տեսայ թէ՛ մարդ չեկաւ , ես իս վտանգի մէջ գրի , ու Եստուած ալ բանս աջողեց » : Ետքը երբոր Յեփթայէ տեսաւ որ անոնք նորէն հանդարտ չեն կենար՝ բան կը գրգռեն կոր՝ Վաղայադայւոց սիրտը ծակելու խօսքեր կ'ըսեն , շուտ մը վրանին զօրք հանեց ետեւէ եկողները ջարդեց , ու անոնցմէ փախուողները որ Յորդանանի մէկ նեղուցի մը պիտոր անցնէին իրենց տեղը երթալու՝ բռնել կու տար , ու զիրենք փորձելու համար թէ Եփրեմի ցեղէն են մի՛ իրենց ըսել կու տար աս Եւրոպայեւոց բառը՝ շիւպուէթ , որ կը նշանակէ հասկ կամ ցորենի դուխ . ու ով որ շիտակ չէր կրնար ըսել , հապա (ինչպէս կ'ըսեն) շիւպուէթ կ'ըսէր , ան Եփրեմի մարդոցը նշանը կ'ըլլար՝ զանիկայ կը մեռցընէին . և ասով ալ բոլոր քառսունուերկու հազար հօգի կոտորուեցան անոնցմէ աս պատերազմիս մէջը : — Յեփթայէ ատանկ վեց տարի դատաւորութիւն ընելէն ետքն որ մեռաւ , ետենէն դատաւոր եղաւ Եսեբոն բեթղէհեմացին , որ վաթսու զուակ ունէր՝ երսունը մանչ , երսունը աղջիկ , և աս ամէնն ալ ինքը իր ձեռքովը կարգեց . ու եօթը տարի Եւրոպայեւացւոց

դատաւորութիւն ըրաւ : Ընտր ետեւէն նստաւ
 Լչոն զարուղոնացի՝ տասը տարի : Ետքը Լք-
 զոն փարաթոնացի Եփրեմի ցեղէն, որ քառասուն
 տղաք ունէր, անոնցմէ ալ երսուն եղած՝ բոլորը
 մէկէն եօթանասուն աւանակ կը հեծնէին . և աս
 ալ ութը տարի դատաւորութիւն ըրաւ, ու մեռաւ :

Գ Լ Ո Ի Խ Ժ .

Սաւիտեի պատմութիւնք :

ԱՄ աշխարհի 2850 : (Դաս . ԺԳ . ԺԴ . ԺԵ . ԺԶ .)

Ս երի ըսուած դատաւորներէն ետեւ Ետրայե-
 լացիք աստուածպաշտութենէ թուրալով՝ և
 քառասուն տարիի չափ անտէր մնալով՝ նորէն այ-
 լաղցիներուն տակը ինկան : Ընտր ատենները Ետ-
 ըայեղացւոց մէջը՝ Եանայ ցեղէն մէկ մը կար՝
 Սանուլէ անունով, որ ասոր կնիկը ամուլ էր
 տղայ չէր բերեր : Սէկ որ մը հրեշտակ Ստու-
 ծոյ՝ մարդու կերպարանքով աս կնկանը երեցո-
 ըսաւ թէ՝ « Եուն տղայ պիտի բերես, որ ան
 ուխտաւոր, այսինքն Ստուծոյ նուիրեալ պիտոր
 ըլլայ . անոր համար պիտի զգուշանաս որ բե-
 րանդ զինի, կամ օղի (այսինքն ռախի) և ուրիշ
 պիղծ կերակուրներ չգնես . որ երբոր տղան ը-
 լայ՝ ամենակն անոր գլխու մազերուն պիտի չղ-
 չուի չկտրուի . ան պիտոր Ետրայեղացիները այլազ-
 զիներուն ձեռքէն ազատէ : » Սանուլէ որ աս բան
 չէր գիտեր, երբոր իր ընկերոջմէն լսեց՝ աղաչեց
 Ստուծոյ որ ան սուրբ մարդը մէյ մըն ալ խորիւ
 իրենց, որ նորէն աղէկ մը խմանան թէ՛ ինչ պի-
 տոր ընեն աս տղիս : Ըստուած ալ հրեշտակ

Տորէն կնիանը երեցուց, որ ան ալ շուտ մը վազեց էրիկը կանչեց անոր քովը բերաւ . հրեշտակն ալ ինչ որ առաջ կնիանը ըսեր էր՝ ան բաները նորէն իրենց ապրտապրեց . ետքը Սանտուէ հրեշտակը մարդ սեպելով իրենց եփած ուլ մը բերաւ որ ուտէ . ան ալ որ չկերաւ՝ հապա Մատուծոյ նուիրէ, ըսաւ, ան ատենը Սանտուէ ան ուլը Մատուծոյ զոհ ընելինի՛ հրեշտակը ան կրակին բոցովը դէպ ՚ի երկինքը ելաւ անցայտ եղաւ, և ան տեղը՝ էրիկ կնիկ աս հրաշքս որ տեսան՝ սատտիկ վախցան, ու խնացան որ հրեշտակ Մատուծոյ է եղեր անիկայ : Ատե ատենն որ եկաւ, կնիկը մանչ տղայ մը բերաւ, որ անունը Սամիսոն գրին . և Մատուծոյ օրհնութիւնը միշտ անոր վրան ըլլալով՝ մեծցաւ նէ խիստ ուժով մարդ մը եղաւ, որ իր ծնողացը հետ մէյտեղ Սարաա և Ասթաուլ ըսուած քաղքընէրուն մէջ տեղը կը կենար :

Սամիսոն մէկ անգամ մը Մատուծոյ նախախնամութեամբը (Սամնաթա ըսուած այլազգինէրուն քաղաքը դնայ, ու հին մէկ այլազգի աղջրկան մը հետը սիրտը կապուեցաւ . եկաւ իր ծնողացը ըսաւ որ ան աղջիկը իրեն առնեն . ծնողքն ալ չգիտնալով որ աս բանս Մատուծին է, (որ ան սրտաճառով Սամիսոն այլազգինէրուն մէջը մտնելով անոնց ըրած անիրաւութիւններուն հատուցումը տայ), առջի բերանը իրեն դէմ կեցան, կ'ըսէին թէ « Քու աղջեդ աղջիկ մի կը սրահօի, որ երթաս այլազգի մը առնես », . ետքը երբոր տեսան որ ճար չըլլար՝ իրենք ալ Սամիսոնի հետ մէյտեղ ելան Սամնաթա երթալու որ աղջիկը առնեն : Նամբան որ կ'երթային՝ Սամիսոն զուխը քաշեց մինաւօր դէպ

ի այգիներուն մէջէն երթալնինի՝ յանկարծակի
 մէկ առիւծի (այսինքն ասլանի) ձաղ մը իրեն դի-
 մացը վազեց . Սամփոնն ալ ձեռքը զէնք մը չու-
 նէր . անանկ Մատուծմէ ուժ առած՝ զասիկայ
 բռնեց բերանը բացաւ երկուք ձիւքեց մեռցուց .
 ու նորէն դարձաւ եկաւ ծնողացը քովը՝ բան մը
 չըսաւ իրենց . անանկ եկան աղջրկանը հետ խօս-
 քը կապեցին : Քիչ մը ատենէն ետեւ նորէն որ
 թաւանաթա դառնալու եղաւ Սամփոնն՝ որ ալ
 հարսնիքը ընեն , գնաց ան մեռցուցած առիւծը
 նայելու , ու տեսնէ որ՝ մեղուները մէջը մեղր
 շինեք են . ինքն ալ առաւ ձամբան սկսաւ ուտե-
 լով երթալ , հօրը մօրն ալ տուաւ որ ուտեն .
 Արքօր ալ հարսնիքը սկսան ընել , որ եօթը օր
 կը քշէր , այլաղջիքը վախցան իրմէն , անոր հա-
 մար հետը երսուն կարիճ մարդիկ դրին՝ որ Սամ-
 փոնն ասոնց հետ ընկերութիւն ընէ ու բախա-
 նայ : Ան հարսնիքի ու բախութեան ատենը Սամ-
 փոնն մէկ հանելուկ մը (այսինքն պիլմէճէ մը)
 ըսաւ ասոնց , որ ան եօթն օրուան մէջը պիտա-
 լու որ ըլլան նէ՝ իրենց երսուն կտոր (կամ թօփ)
 բարակ կտաւ տայ , ու երսուն ալ հագնելու լու-
 թեր . հապա որ չկրնան գիտնալ , անոնք աս բա-
 ներս իրեն տան . և հանելուկը աս էր . Արքայ
 էրակուր ելաւ , ու առիւծէն անառ իլաւ : Մտոր վրայ
 իրեք օր շարչրբուեցան ան կարիճները , ու ետք
 երբօր տեսան որ չեն կրնար մեկնել՝ եկան զառ-
 տուկ Սամփոնի հարսին ինկան , որ երիկը խո-
 բելով բերնէն առնէ իրենց զրուցէ . « Ե՛նե՛կ ,
 ըսին , գիտնաս որ՝ քեզ քու անալդ կ'երեկնք , որ
 մեզ աղքատցընելու համար հոս կանչեցիր » :
 Անիկն ալ Սամփոնի աղաչելով լալով այնպիսի
 բան ըրաւ՝ որ եօթներորդ օրը ալ ձար չեղաւ

բերնէն առաւ, ու զնաց զբուցեց անոնց. որ ետ-
 քը անոնք ալ դարձան Սամիսոնի ասանկ ըսին .
 Սեղբէն ալ անոնք ինչ էա, առի-ծէն ու-ժ-ձ-ձ էա,
 ինչ ատենը Սամիսոն անոնց խաբեբայութիւնը
 խնայաւ, և ինքն ալ աս կերպով իրենց պատաս-
 խան տուաւ . Սե Բ, ըսաւ, ի՞նչ երէնչս (այսինքն
 էնչ՞ էնչ-էնչ) Եւրջ լիծէիք՝ ի՞նչ հանելու-էն լիծէի
 Գորիք . ու սրդողելով շուտ մը անկէ ելաւ Մսկա-
 ղն քաղաքը զնաց, Մտուծոյ օգնութեամբը
 Հոն երսուն այլազգի սպաննեց, անոնց վրայի լա-
 թերը հանեց բերաւ ասոնց տուաւ . ետքը կնիկն
 ալ հոն տեղը ձգեց՝ ինքը սրդողած իր հօրը
 տունը դարձաւ . Ստե ատենով Սամիսոնի բար-
 կութիւնն որ անցաւ, մէկ ուլ մը հետը պարգև
 առած՝ նորէն ուզեց որ կնիկներ քով երթայ . և
 երբոր եկաւ տեսաւ որ աները իր կնիկը առեր
 ուրիշի մը հետ կարգեր է, աս բանս պատճառ
 առաւ Սամիսոն՝ որ այլազգիներէն աղէկ մը իր
 սիրը հանէ . ուստի զնաց իրեքհարիւր աղուէս
 (այսինքն թիւրի) բռնեց, (որ ան երկիրները շատ
 կար կ'ըսեն) . զասոնք երկու երկու պոչերնին
 մէյմէկու կապեց, և մէջ տեղը մէկմէկ ջահ
 կամ ճրագ գրաւ կապեց, ու անանկ այլազգիներ
 բուն ցորենի արտերը թող տուաւ, որ զացին
 կրակ ձգելով երեցին մոխիր դարձուցին անոնց
 բոլոր ցորենները, այգիները ու ձիթենիները,
 որ բան մը չմնաց . Մտնց տերերը երբոր խնայան
 թէ աս բանս Սամիսոնն է ըրեր, ու պատճառը
 իր աները եղեր է՝ որ կնիկը հաներ ուրիշի է
 տուեր, եկան անոր տանը կրակ տուին, որ իր
 աղջիկն ալ հետը տնով տեղով երեցաւ . բայց
 աս բաներս Սամիսոն հերիք չտեպելով՝ նորէն
 ուրիշ շատ այլազգիներ ալ սպաննեց, ու ետքը

գնաց Յուդայի ցեղին մէջը՝ Ատեմ ըսուած մէկ
 այր մը՝ հոն կը կենար : Այլազգիներն որ ա
 լեցին , զօրք ժողվեցին՝ անանկ բանակով Յու
 դայի ցեղին վրան գացին , ու անոնցմէ ուզեցին
 որ Սամիսոնը կապած իրենց ձեռքը տան : Յու
 դայի մարդիկն ալ վախցան՝ իրեք հազար հողի
 մէկէն ելան Սամիսոնի եկան , ըսին թէ՛ « Ը
 ինչ է քու ըրածդ , լե՛ս դիտեր որ մենք այլազ
 գիներուն տէրութեան ներքէն ենք . ուստի հի
 մա եկանք որ քեզ կապենք անոնց ձեռքը տանք » :
 Սամիսոն ալ առաջ երդուրնցուց զիրենք՝ որ
 չբռնեն սպաննեն , ու անանկ թող տուաւ որ ի
 րեք նոր հաստ ամուր չուաններով կապեն զինքը՝
 որ այլազգիներուն տան խալըսին : Արբոր Սամի
 սոնն ասանկ կապած այլազգիներուն բանակին ե
 կաւ մօտեցաւ , ու անոնք ալ սկսան ուրախա
 թեամբ կանչուրուտելով վրան վազել որ բռնեն ,
 ան տեղը Մատուծոյ զօրութիւնը Սամիսոնին
 հասաւ , որ մէկէն թօթվեց կտորտեց ան չուան
 ները , ու հոն գետինը մէկ իշու ծնօտ մը (այ
 ինքն շէնեէի ոսկոր մը) գտաւ , ան ձեռքը առ
 վազեց այլազգիներուն վրան , ու անով հարս
 հողի մեռցուց : Ըս աշխատանքէս ետե Սամի
 սոնն սաստիկ ծարուեցաւ՝ Մատուծմէ ջուր խն
 դրեց . Մատուած ալ ան ծնօտէն ջուր բխեցուց
 որ խմեց՝ ու անով նորէն ուժ առաւ : Ատրքե
 լաւ Սամիսոնն Վազա ըսուած այլազգիներու
 քաղաքը գնաց . ան որ խնացան իր թշնամիներ
 եկան զիշերը քաղքին դռները առին , որ առաւ
 ելեն զինքը բռնեն մեռցրնեն . բայց Սամիսոն
 կէս գիշերանց ելաւ՝ քաղքին դռները իր սեռ
 րովը՝ կղպանքներովը փրցուց կանակը զարկա
 տարաւ լերան գլուխը հանեց ձգեց , ու ան
 ձեռքերնէն խալըսեցաւ :

Ընթացքս ըլլալէն ետե՛ւ՝ այլազգիներուն իշխանները տեսնելով որ Սամիսոն իրենց երկիրը մէկ Գալիլա ըսուած կնկան մը քով շատ անգամ կու գայ, անոր հետ խօսք կապեցին՝ որ եթէ Սամիսոնը խաբելով բերնէն առնէ իմանայ որ՝ անոր ուժը ինչ բանով կը կապուի նէ, մարդ գլուխ իրեն հազար ու հարիւր արծաթի (կամ խուռուշ) ասն. ուստի այնուհետեւ սկսաւ աս կնիկը անուշ անուշ խօսքերով Սամիսոնի ետեւէն իյնալ՝ որ աս բանս ըսէ իրեն : Սամիսոն ալ առջի բերանը ըսաւ . « Թէ որ եթէ ըր նոր ջիւով (այսինքն քիչիւով) իս կապեն նէ՛ ուժս վրայէս կը փախչի, ուրիշ մարդիկներու պէս կ'ըլլամ » : Անիկն ալ անանկ կապեց զինքը ան ջիւերովը, ու ետքը փորձելու համար ետեւէն մէյ մը կանչեց . « Սամիսոն, այլազգիները եկան հիմայ վրաց կը հասնին » . (ու ան ատենը անոնք գաղտուկ պահուրտեր էին, որ եթէ ըսածը իրաւ ըլլայ նէ՛ վրան վաղէն բռնեն) : Սամիսոն աս ձայնս լսածին պէս՝ մէկէն ցատքեց թօթուեց կտրեց ան ջիւերը, ու ելաւ տեսաւ որ մարդ չկար, ինքն ալ ծաղրաբանութիւն (այսինքն շախա) կարծեց . անոր համար նորէն որ ազաչեց կնիկը որ իրաւը ըսէ, Սամիսոն ալ ըսաւ թէ « Ընանկ չէ, հապա թէ որ եթէ ըր նոր ամուր չուաններով կապուելու որ ըլլամ նէ՛ ան ատենը ուժս կը թափի՛ ու կը բռնուիմ » : Ըն ալ փորձեց կնիկը . ու երբոր տեսաւ որ անով ալ չեղաւ, նորէն աղաչեց թախանձեց որ շիտակը ըսէ : Սամիսոն մէյ մըն ալ ծաղրաբանութեամբ ըսաւ . « Թէ որ զլխէս եթէ ըր մազ բռնես՝ ծայրերը դերձանի հետ կապես ու զանոնք պատը գամես նէ՛ ուժս կ'երթայ » : Անիկը աս բանս ալ

րնելէն ետե՛ կրբոր տեսաւ որ անանկ միշտ զին-
 քը կը խաբէ կոր, ալ բողոր ու ծովը սկսաւ Սամփ-
 սոնի ետեւէն իյնալ շողորթով թէլ, ու այնչափ բան-
 ըրաւ որ՝ Սամփսոնի ձարը հատաւ չկրցաւ դիմա-
 նալ, բերնէն փախցուց ըսաւ թէ՛ «Վիանաս ոչ
 ես իմ մօրս փորէն Մատուծոյ նուիրած եմ, որ
 իմ գլուխս պիտի ածելի (այսինքն ուստուռա)
 չգալի, և թէ որ մազս կտրուելու ըլլայ նէ՛ ուժս
 վրայէս կը փախչի՛ ես ալ ուրիշ մարդիկներուն
 պէս կ'ըլլամ», ։ Մն առենը ալ հաւտաց կնիկը՝
 որ իրաւ է զրուցածը. ուստի շուտ մը այլազգի-
 ներուն իշխանները գաղտուկ տունը կանչեց, որ
 անոնք ալ իրեն տալու ստակնին մէյակդ առին
 եկան. ու ինքը Սամփսոնը խաբխրելով գերկը
 առաւ ճնկանը վրայ քնացուց, և ան քնուն մէջը
 գլխուն մազերը ածիլել տալուն պէս՝ սկսաւ
 Սամփսոն թուլնալ ու թմրիլ։ Մն րնելէն ետե-
 կրբոր կանչեց, «Սամփսոն, այլազգիները վրայ
 հասեր են», Սամփսոն արթնցաւ՝ ուզեց մէկն
 ցատքել ելլել, բայց տեսաւ որ ան Մատուծոյ ք-
 բու թիւնը վրայէն գացեր է, որ չկրնար շարժիլ-
 ուստի շուտ մը վրան եկան այլազգիները զինքը
 բռնեցին՝ աչուրները փորեցին հանեցին, ու կը-
 կաթներով կապած Վազա քաղաքը տարին և
 հոն գերիի պէս ջաղացքը (այսինքն տէյիրմէն)
 գրին՝ որ երթայ բանի՛ աղայ։ Վիչ մը առեկէն
 ետքը որ ալ Սամփսոնի մազերը սկսեր էին կ-
 կրննալ, ու անով առջի ուժն ալ վրան գալու պէ-
 էր, այլազգիներուն իշխանները իրենց Վազա
 ըսուած կուռքին մեծ տօնախմբութիւն մը ըր-
 կեր ու խումով ուրախութեամբ, որ իրենց թը-
 նամին Սամփսոնը ձեռուրնին տուեր է։ Այլազ-
 աս ուրախութիւնս կ'ընէին՝ իրենց կնիկներով

տղաքներովը անհամար բազմութիւն մէկ մեծ պալատի մը մէջ՝ վերը վարը լեցուն, ուզեցին որ Սամիսոնն ալ հոն բերել տան, որ առջևնին անանկ կոյր կոյր խաղայ՝ ծաղր ըլլայ, որ սրտերնին վրան աւելի պաղշտրկի: Սամիսոն ալ ասանկ խաղալէն ետև՝ դնաց ան պալատին երկու սիւներուն (այսինքն թէմէլ տիրէկներուն) քովը՝ որ ան բոլոր շինուածքը անոնց վրայ հաստատուած կեցեր էր, ու դէպ ՚ի Մտուած կանչելով ըսաւ. «Տէր, տէր զօրութեանց, յիշէ՛ դիս, և աս մէկ հեղա ալ ինձի ուժ տուր, որ այլազգիներէն իմ երկու աչացո սիր հանեմ», Վս աղօթքը ըրաւ՝ ու երկու ձեռքովը ան երկու սիւները բռնեց, «Վս ալ աս այլազգիներու հետ մեռնիմ», ըսելով անանկ ուժով քաշեց թօթվեց, որ հոնտեղը մէկէն քայքայեցաւ հիմնայատակ եղաւ ան բոլոր շինուածքը, ու իրեն հետ մէյտեղ՝ բովանդակ մէջի եղած այլազգիները մեռցուց, որ մեծ ու պզտիկ իրեք հազար հոգի էին, և ասով Սամիսոն մեռնելովը աւելի մարդ սպաննեց՝ քան ողջութեան ատենը: Վտքը իրեն ազգականները եկան մարմինը անկէց վերուցին, իրենց երկիրը իր հօրը գերեզմանը տարին թաղեցին. որ քսան տարի Սորայելացուց քաշած նեղութիւնը թեթեւաց, և ասով ինքն ալ դատաւորներուն կարգը սեպուեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

Միքայի պատմութիւնը , և Բեկիամիւնի ցեղին
չարդոսիւր :

Ստ աշխարհի 2585 : (Դաստ . ԺԷ . ԺԸ . ԺԹ . Ի .)

Վատաւորաց զբքին մէջը Սամիսոնէն ետե
ուրիշ երկու պատմութիւն ալ կը պատմուի , որ
կ'երևայ թէ Յետուայ մեռնելէն ետքը շատ չան
ցան որ անոնք պատահեցան :

Մըջինը , որ Սիբա ըսուած մէկ մարդ մը Եսի
րեմի ցեղէն աւելորդապաշտութեամբ արծ ըթէ
կուռքի պէս բան մը շինեց՝ իր տունը դրաւ , ու
ղևտացի մը գտաւ՝ քովը բռնեց , որ իրեն քա
հանայութիւն կ'ընէր : Մն առեանն ալ Վանայ
ցեղը՝ տեղերնին իրենց նեղուածք զալով , հինգ
հոգի լրտես խրկեր էին՝ որ երթան պարտին ու
րիշ բնակելու ալ տեղ գտնեն . ասոնք ճամբան
երթանին ան Սիբայի տանը զևտացիին հան
դրպեցան , ու անոր ձեռքով Մտուծոյ հարցո
ցին՝ խնացան իրենց բանին յաջողութիւնը : Այ
բոր գացին բաներնին տեսան , ու վեց հարկ
հոգի մէկ եղած՝ երան որ երթան Սայիսա ը
սուած քաղաքը այլազգիներուն ձեռքէն առնեն
հոն բնակին , նորէն եկան՝ ան զևտացին իր աւ
լորդապաշտական բաներովը Սիբայի տնէն յա
փրշտակեցին վերուցին՝ հետերնին առին Սայի
սա քաղաքը տարին , որ հոն իրենց առանձին քա
հանայութիւն ընէ , ու քաղքին անունն ալ փո
խեցին՝ Վան դրին : Այ ան առեանէն աս աւ
լորդապաշտութիւնը ան տեղը մնաց՝ ինչու

Յերոքովամ Վարայեւացւոց թագաւորին ժամանակը, որ ան ալ իր շինած երկու ոսկի հորթերուն մէկը հոս անկեց, ինչպէս իր տեղը պիտի պատմենք:

Արքիւորդ՝ Վենիամինի ցեղին ջարդը կը պատմուի, որ մէկ ղևտացիի կնիկան մը պատճառով եղաւ: Արքիւոր Վաքառ ըսուած Վենիամինի քաղքին անշահ մարդիկը աս կնիկը խայտառակելով մեռուցին, էրիկը առաւ անոր մեռելը տասուերկու կտոր ըրաւ, ու Վարայեւացւոց ամէն ցեղերուն անկեց մէյմէկ կտորը խրկեց՝ որ երթան տեսնեն, ու անոր դատաստանը իրենք կտրեն: Վարայեւացիք ալ աս անօրէնութեանը վրայ սոսկալով մէյտեղ եկան խորհուրդ ըրին, մարդիկ խրկեցին Վենիամինացոյ՝ որ ան չարութիւնը ընողները երթան բռնեն մեռցրնէն: Բայց Վենիամինցիք տէր կեցան ան չարագործներուն, ու սկսան ասոնց դէմ պատերազմի պատրաստութիւն տեսնել, որ քսանըհինգ հազար եօթը հարիւր կտրիճ պատերազմող մարդիկ ալ հանեցին: Ետք վրայ բանը տաքցաւ, ուստի աս դիէս ալ Վարայեւացւոց բոլոր ցեղերը մէկ եղած՝ իրենք ալ չորս հարիւր հազար զօրք ժողովեցին, ու Եսաուծոյ հարցուցին հրաման առին անանկ Վենիամինացոյ վրան ելան: Եւ ըլի զարնուելուն մէջը՝ քսանուերկու հազար Վարայեւացիներէն ջարդուեցան. անոր վրայ թէպէտ սրտերնին կտտրեցաւ, բայց նորէն Եսաուծոյ հարցուցին, և անանկ մէյ մ'ալ որ զարնուեցան, և ութը հազար հողի ալ կորսնցուցին նէ, ան ատենը ալ պաք պահելով զո՛հ մատուցանելով, տարակուսեցան՝ Եսաուծոյ աղաչեցին որ իրենց յայանէ թէ ինչ ընեն, նորէն ելլան՝ թէ դադրին մի: Եւ-

տուած ալ Փենեհէս քահանայապետին բերնովը
 հրամայեց որ չվախնան ելլեն, որ վաղը զանոնք
 բոլոր իրենց ձեռքը պիտի տայ՝ ըսաւ : Լնանկ ե-
 դաւ . մէկալ որը քսանըհինգ հազար ու հարիւր
 հոգի Լենիամինէն ջարդեցին, ետև Գաբաա
 մայրաքաղաքը՝ և բոլոր իրենց մէկալ քաղաքներն
 ալ մտան առանց խնայելու զամէնը կտորեցին՝
 կնիկ՝ տղայ, իրենց անասուններովը, որ բան չը-
 խալըսեցաւ անոնց մէջը, ու շինուածքներուն ալ
 կրակ տուին մոխիր դարձուցին, անանկ որ՝ բոլոր
 Լենիամինի ցեղէն միայն վեցհարիւր կորիճ՝ ձո-
 րով չոր դլուխ մէկ անատիկ տեղ մը փախան ին-
 կան, որ վէմ Սեմոնայ կ'ըսուէր : Ետքը այս-
 չափովս ալ չկշտացան Խորայեւացիքը, հապա ալ
 գլուխնին տաքցած, ուղելով որ ան ցեղը բոլոր-
 վին աշխարհքէս վերնայ, մէկ եղան՝ Լստուծոյ
 առջև երգումով ուխտ ըրին որ ան մնացած վեց
 հարիւր հոգիին իրենցմէ մարդ աղջիկ չտայ : Լ-
 սանկ որ չափը անցուցին Խորայեւացիք, ետքէն
 խելուրնին վրանին եկաւ, սկսան զղջալ ան ըրած
 երգումին վրայ . և անոր ճարը այսպէս մտմտ-
 ցին որ՝ Յաբիս Գաղայաղին մարդիկը ջարդեն
 իրենց կոյս աղջիկներէն՝ ի զատ, ու զանոնք =
 Լենիամինի մնացած կորիճներուն տան, որ =
 նով ան ցեղը մնայ չկորսուի . ինչու որ՝ բոլոր Լ-
 րայեւացուոց մէջը միայն Յաբիսցիները զու-
 քաշեր՝ չին եկեր ան պատերազմը, որ մէջեր-
 երգումով հաստատուած էր՝ որ ամէնքը գան :
 Ետև երբոր տեսան որ Յաբիսի միայն չորս հա-
 րիւր աղջիկ ելաւ, որ բաւական չէր ըլլար =
 Լենիամինի կորիճներուն, մնացած երկու հա-
 րիւրն ալ Սելով քաղքէն ուրիշ ճամբով մը հա-
 նեցին անոնց տուին . և ասով Լենիամինի ցեղ-
 նորէն ոտքի վրայ կայնեցուցին :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Հատրայ պատմութիւնք :

Աժ աշխարհի 2700 :

Իսրայելացւոց դատաւորներուն ատենը՝ և ինչպէս կ'երևայ՝ սկիզբները, աս Հոութայ բանը եղաւ, որ աստուածաշունչը՝ Վատաւորաց ետեւէն մանաւոր գիրքով կը պատմէ, որ Վաւիթ մարդարէին պապերը կարգով բերէ, մանաւանդ թէ՛ Յիսուսի Վրիստոսի Սեսիային ցեղը ըստ մարմնոց . որով իրեն ազգահամարին մէջը Հընութն ալ կը յիշէ աւետարանիչը :

Իսրայելացւոց երկիրը մէկ սաստիկ սով մը ինչպէս, և ան պատճառով Ալիմեղէք ըսուած մէկ մարդ մը Յուդայի ցեղէն որ Վեթղեհէմ կը կենար, առաւ իր Վոսմին կնիկը ու երկու տղաքը Սովաբացւոց երկիրը գնաց՝ որ հոն նստի ապրի : Շատ չանցաւ աս մարդս մեռաւ . ետքը ան երկու տղաքն ալ հոն կարգուեցան մովաբացի այլազգի հարսեր առին, մէկին անունը Արփա, ու մէկալինը Հոութ : Տասը տարիէն ետեւ աս երկու տղաքն ալ որ առանց զաւկի մեռան, Վոսմին մայրերնին լսելով թէ Իսրայելացւոց երկիրը ալ շտկուեր է, ուզեց որ աս հարսերը իրենց տներնին ձամբէ, ու ինքը զլուխը քաշէ իր երկիրը դառնայ : Բայց մէկը ինչ որ է նէ քովէն գնաց, բայց Հոութը ձար չեղաւ իր կեսուրէն չգատուեցաւ, ու ըսաւ որ՝ « Իս քեզմէ միայն մահը պիտի բաժնէ . դուն ուր որ երթաս՝ ես ալ հետդ եմ . քու ազգդ իմ ազգս է, և քու Բը-

տուածդ խմ Մտուածս ալ է ., Մայրէս որ
 եղաւ , Մտմին Հառւթը հեար առաւ Մեթղե-
 հէմ դարձաւ . հոն Ալիմեւքի ազգական մը կար
 Մոսս ըսուած . ափկայ Մտմինին վրայ ձեռք
 դրաւ , իրենց տեղ տուաւ որ բնակին : Մն առե-
 նը որ արտերը ցորեն կը բազէին՝ Հառւթ Մո-
 մինէն ուզեց որ երթայ ինքն ալ արտերը բանի ,
 որ անով իրենց աղքատութիւնը անցընեն ապ-
 րին . անանկ գնաց Մոսսին արար ցորեն կտրե-
 լու : Մոսս երբոր իմացաւ թէ Հառւթ Մտմի-
 նին հարսն է , վրան մանաւոր հող ցուցուց , և
 իր աղջիկներուն հետ դրաւ որ կերակուրը մէկ
 տեղ ուտէ , ու բանուորներուն ապրասպրեց որ
 զինքը աղէկ նային , և ցորենի հասկերուն մնա-
 ցածը թողուն որ՝ կ'ուզէ նէ ժողովէ տուն տանի :
 Հունձէն երբոր տուն դարձաւ Հառւթ , ու Մո-
 սի իրեն վրայ ըրած հողն որ սպասուեց կեսերո-
 ջը , ան ալ շատ ինտաց վրան , ու Հառւթի ձաճ-
 բայ ցուցուց որ Մոսսի հետը կարգուի , և ասանկ
 կը վայլէ , ըսաւ , ինչու որ՝ ան Ալիմեւքի ազգա-
 կան է : Մանկ որ Մոսս երբոր Հառւթի միտքը
 իմացաւ , չէ չըսաւ . բայց որով հետեւ իրմէ աւե-
 լի մօտ՝ Ալիմեւքի ուրիշ ազգական մըն ալ կար
 որ առաջ անոր կ'իյնար որ Հառւթն առնէ , Մո-
 բանը ասանկ ձգեց՝ որ կարգով ըլլայ : Մազքի
 ծերերը մէկտեղ բերաւ՝ անոնց առջեւ ան թ-
 կալ ազգականին ըսաւ որ . “ Մտմինը Ալիմե-
 վքի որբեւարին՝ իր երկանէն մնացած գետնե-
 ներուն մէկ կտորը ծախել կ'ուզէ . առաջ բեջի
 կ'իյնայ որ առնես , չէ նէ ես կ'առնեմ ” . Մտե-
 աս ալ ըսաւ . “ Վիտնաս որ՝ ան տեղը առնողը
 իրեն հարսը Հառւթն ալ պիտի առնէ , որ անկէջ
 ան մեռնողին ժառանգ թողու ” : Մը որ ըսեց

ան մէկալ մարդը՝ ետ կեցաւ, զուն առ ըսաւ :
 Ըն առե՛նը Մոսս վկայ բռնելով ան ծերերը ու
 բոլոր հոն գանուած ժողովուրդը՝ Հոռութիւն իրեն
 հարազատ կնիկ առաւ, որ ամէնքը ուրախու-
 թեամբ օրհնենը կարդացին վրանին . և Ըս-
 տուած ալ օրհնելով շատ չանցաւ որդի մը տը-
 ւաւ իրենց, որ անունը Սվբեդ դրին, ու անկէց
 եղաւ Յեսսէ՝ Վաւիթ մարգարէին հայրը :

Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

Աննայի սորորով Սամուէլը կը ծնանի՝ ու Աստուծոյ
 կը նուիրուի :

Ըժ աշխարհի 2848 : (Յ . Թագ . Յ . Բ .)

Հեղի երբոր Խարայեւացւոց քահանայապե-
 տութիւն կ'ընէր, որ ետքը դատաւորութիւն
 ալ սկսաւ ընել, ան առե՛նը Լյդկանա անունով
 մէկ զւտացի մը կար Ըրիմնագեմ քաղաքը՝ որ եր-
 կու կնիկ ունէր, մէկին անունը Ըննա, ու մէկա-
 լինը՝ Փեննանա : Ըննան ամուլ էր տղայ չէր
 բերեր, ու Փեննանան զաւակներ ունէր . ուստի
 Ըննա միշտ սրտցաւ էր աս բանիս համար : Լյդ-
 կանան սովորութիւն ըրեր էր, որ տարին հեղ
 մը կնիկները և տղաքը մէկտեղ առած ուխտ
 կ'երթար Սելով քաղաքը՝ տապանակին Ըստուծոյ
 առջևը : Ս'էկ անգամ մ'ալ երբոր տամսկ ուխտ
 գացին, Լյդկանան Ըստուծոյ զոհ ընելէն ետե-
 սեղան որ նստաւ՝ Փեննանայի ու անոր տղոցը
 բաժինները մէկտեղ տուաւ . և Ըննայի ալ զատ
 մէկ բաժին մը որ տուաւ, Ըննան անանկ մինա-
 ւոր նստած ուտելնինի՝ նորէն միտքը ինկաւ աս

իր ամբութիւնը, ու ախ վախ ընելով կը հաշ-
 լէր կը մտաշէր. թէպէտ Աղկանան Մանային վրայ
 աւելի սէր ունենալով սիրտ կու տար իրեն ու
 կ'ըսէր թէ « Ս'ի վախնար, ես քանի որ կամ
 նէ՛ քեզի տասը զաւկի տեղ եմ », բայց ճար չէր
 ըլլար որ Մանան աս բանս մոռնայ : Աւտի եր-
 բոր սեղանը խալըսեցաւ՝ Մանան մինաւոր ելաւ
 գնաց Մատուծոյ տաճարին դրանը առջևը խնկաւ,
 ու սրտանց լալով սկսաւ աղաչել պաղատիլ Մա-
 տուծոյ, որ իրեն ողորմի մէկ զաւակ մը տայ, և
 ուխտ ալ ըրաւ որ ան զաւակը ինքն ալ Մատու-
 ծոյ նուիրէ : Մտ աղօթքս ընելնինի Մանայի բե-
 բանը չէր շարժեր, հասպա սրտանց կ'ըսէր ու կը
 հառաչէր. անոր համար հեզի քահանայապետը
 որ հոն նստած էր՝ բանը չգիտնալով, երբոր տե-
 սաւ որ Մանա շատ երկնցուց հոն անանկ կենա-
 լը, կարծիք գնաց թէ գինուլցեր է. ուստի տը-
 ղան խրկեց որ երթայ չէխէ վառնտէ ան սուրբ
 տեղէն : Մանա ալ խոնարհութեամբ անոր պա-
 տասխան տուաւ թէ՛ « Քաւ լիցի, ես գինուլ
 չեմ, հասպա տրտմութեամբ լցուած կնիկ մը
 եմ, որ Մատուծոյ առջև եկեր եմ իմ սրտիս ցա-
 ւը կը բանամ », հեզի ալ ան ատենը իրեն ը-
 սաւ. « Մանակ է նէ՛ խաղաղութեամբ երթաւ
 Մատուած քու խնդիրքդ լսէ », Մտով խիստ միթ-
 թարուեցաւ Մանա. և երբոր անկէց իրենց տե-
 նը Մարիամութեմ դարձան՝ Մանա յղացաւ մեծ
 զաւակ մը բերաւ, ու անոր անունը Սամուէլ
 դրին, որ ըսել է՝ Մատուծմէ խնդրուած : Մտով
 ետև Մանան ալ երկանը հետ Սելով չգնաց ին-
 չուան որ տղան քիչ մը մեծցաւ ու կաթէն կըս-
 րեց. ան ատենը առաւ ընծաներով Սելով բե-
 բաւ, և հայրը զոհ մատուցանելով անանկ Մա-

Պատժոյ նուիրեցին, ու Մննան՝ տղան Հեղի քահանայապետին ձեռքը տանիննի՝ ըսաւ . « Տէր իմ, ես ան կնիկն եմ, որ ատենով քու աչքիդ առջևը Մատուծոյ աղաչեցի աս տղիս համար, որ Մատուած իմ խնդիրքս կատարեց . հիմա ես ալ ինչպէս որ Մատուծոյ ուխտ ըրի նէ, ասիկայ իրեն փոխ կու տամ կը նուիրեմ », : Ատքը Մննա ան մարդարեական շնորհակալութեան օրհնութիւնը ընելով Մատուծոյ, որ կը սկըսի՝ Հասարակաց տէրք էմ՝ է քէր, հոն թողուց Սամուէլը, ու ինքը Հեղիի օրհնենքը առած՝ երկանը հետ տուն դարձաւ : Մատուած ալ օրհնեց զինքը, ու Սամուէլի տեղը նորէն ուրիշ իրեք մանչ ու իրեք աղջիկ տուաւ իրեն : Բայց ինքը ամէն տարի որ Սելով կ'երթար՝ Սամուէլը չէր մոռնար, միշտ իրեն լաթ կը շինէր կը տանէր : Սամուէլ ալ անանկ սղտիկուց սկսաւ Մատուծոյ տանը ծառայութիւնը ընել, և օրէ օր անմեղութեամբ մեծնալով չէ թէ միայն Մատուծոյ հասցա ժողովրդոց ալ աչքը կը մանար, որ կը սիրէին զինքը :

Գ. Լ. ՈՒ Խ Ժ Գ .

Հեղի իր տղաքներովը կը պատժուի՝ քահանայութենէ կիցնայ, անոր տեղը Սամուէլ կ'ընտրուի :

Մտախոսութի 2860 : (Յ. Թագ. Գ. Գ. Ե.)

Հեղի քահանայապետը երկու որդի ունէր, մէկուն անունը Ուինի կ'ըսուէր, ու մէկալինը՝ Փենեհէս . ասոնք երկուքն ալ իրենց հօրը ներքև՝ Իսրայելացուց քահանայութիւն կ'ընէին

Մտուծոյ տապանակին առջևը, անոնց զոհերը
 կը մատուցանէին, և ուրիշ աստուածաբաշտու-
 թեան ծէսերը կը կատարէին . բայց իրենց չար
 ու գայթակղական գործքերովը ժողովրդին սիր-
 տը կ'երէին, ուստի Մտուած ալ խիստ սրգո-
 ղեր էր վրանին : Հեղի թէպէտ ասոնց անկար-
 գու թիւնները միշտ կը լսէր զիտեր, բայց ինչպէս
 պէտք է նէ աս բաներուս զեղ չէր դնէր՝ չէր
 պատժէր զիրենք, հապա անհոգութեան մէկ
 թող խրատով մը կ'անցընէր . « Արդեք, կ'ը-
 սէր, ձեր վրայ աղէկ չեմ լսեր, ինչու ատանկ
 կ'ընէք », և այլն . և անոնք ալ իրենց գիտցա-
 ծէն չէին անցնէր : Մտոր համար Մտուած Հե-
 ղիի վրայ սաստիկ բարկանալով՝ մէկ հրեշտակ մը
 խրկեց, որ եկաւ չարաչար յանդիմանեց զինքը
 աս իր տղոցը ըրածներուն համար, ու իրեն աս
 տուաւ թէ « Վահանայապետութիւնդ պիտի
 քու տնէդ ջնջեմ վերցընեմ, ուրիշ իմ հաւա-
 տարիմ ծառայիս տամ . որովհետեւ, ըսաւ, դուն
 ապերախտ եղար իմ շնորհքիս . և աս բանիս
 նշանը ան պիտոր ըլլայ՝ որ Որինի ու Փենեհէտը
 մէկ օրուան մէջ պիտի խնան մեռնին » :

Ետքը Մտուած աս բանս Սամուէլի ալ
 յայտնեց, որ երբոր ինքը պզտիկուց տաճարը
 կը սրահէր, մէկ գիշեր մը յանկարծակի ահաճ-
 ջը ձայն մը եկաւ՝ որ զինքը կը կանչէր . « Սա-
 մուէլ Սամուէլ » : Մն ալ կարծելով թէ Հե-
 ղին անդիէն զինքը կը կանչէ՝ ելաւ վազեց քովը
 դնաց . « Մհա եկայ, ըսաւ, ինչ կը հրամանես » :
 Հեղի ալ ըսաւ . « Ես քեզ չկանչեցի, որդի,
 դնա տեղդ սրահէ » : Մանկ իրեք հեղ որ եղաւ
 որ Սամուէլը վազեց քովը եկաւ, ան ատենը
 Հեղի կուս գնաց թէ՛ Մտուած տապանակէն

զինքը կը կանչէ կոր , ուստի երբորդ անգամին՝
 Սամուելի խրատ տուաւ , որ մէյ մ'ալ կանչե-
 լաւ ըլլայ նե՛ ինքն ալ ըսէ . « Տէր , ինչ կը
 հրամարես քու ծառայիդ » : Սամուել ալ հնա-
 զանդեցաւ , ու երբոր չորբորդ անգամը կանչուե-
 լուն անանկ ըսաւ , ան ատենը Մատուած բանը
 իրեն բացաւ , ու զրուցեց թէ՛ ինտոր սաստիկ
 բարկացեր է Հեղիին վրայ՝ իրեն տղոցը պատճա-
 ոտլը , որ անոնք չյանդիմաններ ճամբայ բերեր .
 « Մտոր համար , ըսաւ , ճար չկայ՝ պիտոր զիրենք
 չարաչար պատժեմ , քահանայապետութիւնը ձե-
 ուրնէն առնեմ » : Երբոր առտու եղաւ , Սա-
 մուել վախէն չէր ուզեր Մատուծոյ խօսածները
 Հեղիին պատմել , բայց Հեղի այնչափ ետեւէն
 ինկաւ՝ որ ձորով բերնէն առաւ . ու երբոր լսեց
 Հեղի՝ « Սալը Տեաան օրհնեալ եղիցի » , ըսաւ .
 և այսու ամենայնիւ՝ անով ալ չզգաստացաւ .
 նմանապէս տղաքն ալ իրենց բրածէն ետ չէին
 կենար : Բայց Մատուած ան ատենէն սկսաւ
 Սամուելի հետ ընտանութիւն ընել՝ իր կամքը
 անոր յայտնել . որ ասով օրէ օր Սամուելի ա-
 նունը բողոր Խորայեւացոց մէջ հռչակուեցաւ թէ
 Մատուծոյ սիրելի և հաւատարիմ մարդարէ է
 ինքը : Ետեւ Մատուած ան Հեղիին պատիժն որ
 տարու եղաւ , թող տուաւ որ այլազգիները Խ-
 րայեւացոց վրայ պատերազմ ելլեն . ու երբոր
 առջի զարնուելուն Խորայեւացիք տեսան որ յաղ-
 թուեցան՝ չորս հազար հոգի իրենցմէ կորսնցու-
 ցին , ուզեցին որ Մատուծոյ տապանակը բանակը
 բերեն՝ որ անով Մատուած իրենց օգնութիւն
 հասնի : Եւ այսպէս Սելովէն տապանակը որ
 վերցուցին բանակը բերին՝ Ովնի ու Փենեհէս
 Հեղիին որդիքն ալ հետը , ան ատենը այլազգի-

ները Եւրոպայէրացոց ժողովրդին ձայնէն խմանալով տապանակին դալը՝ սրտերնին սաստիկ վախնկաւ . “ Այն է մեզի , ըսին , ալ բաներնիս բուսաւ , ինչու որ՝ ան Եւրոպայէրացոց Մատուածը մէջերնին եկաւ , որ ինչուան հիմա բոլոր իրենց թշնամիները Զարդեր կորսնցուցեր է , : Աստի մէկմէկու սիրտ տալով՝ անանկ յուսահատու թեամբ սկսան Եւրոպայէրացոց վրան վազել . Մատուած այնպէս կարդաւորեց՝ որ երսուն հազար հողի Եւրոպայէրացիներէն կոտորեցին՝ Ոփնի ու Փենեհէս ալ մէյտեղ , ու մնացածը ցիրուցան փախուցին , և Մատուծոյ տապանակն ալ գերի առին՝ իրենց Մշտնոյ քաղաքը տարին : Մտեղաւ՝ շուտ մը մէկ մարդ մը լաթերը սրատրուտած զլուխը հող ցանած վաղեց Սելով քաղաքը՝ որ աս խեղճութիւններս սրտով . և ան ատենը հեղի ալ ծերացած իննսունըութը տարուան՝ որ աչքին լոյսն ալ կորսնցուցեր էր , տանը դրանը առջևը աթոռով նստէր կը սպասէր , ու սիրտը կ'եփէր տապանակին վրայ : Արբոր աս մարդէս լսեց որ սրատերազմին բանը ձախորդ դացեր է , իր երկու տղաքն ալ մեռեր են , ու Մատուծոյ տապանակը առնուեր է , ան տեղը հեղի սաստիկ ցաւէն աթոռէն կ'անըկին վրայ գետինը ինկաւ ու մէջքը կոտորեցաւ մեռաւ : Մնկէ ետև Փենեհէսի կնիկն ալ , որ ան օրերը տղաքերքի մօտ էր , ան ալ իր պարոնտատին և երկանը մեռնիլը մեկէն լսելով՝ ցաւը բռնեց ու տղաքերքին մէջ խղճաբար մեռաւ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Ե .

Այլազգիները տապանակին պատճառով կը պատժուին
ու զան ետքն Խորայեղացոց կը դարձրենն :

Աժ աշխարհի 2888 : (Յ . Թագ . 2 . Ե . Ը .)

Այլազգիները որ տապանակը գերի բռնեցին
Աջովտու տարին , զանիկայ իրենց 'Վազոն Ը-
սուած կուռքին տաճարը դրին . և երբոր մէկալ
օրը առտուանց կանուխ ելան տաճարը գացին՝
տեսնան որ 'Վազոն կուռքը տապանակին առջևը
երեսին վրայ գետինը փռուած էր . ուստի վեր-
ցուցին նորէն իր տեղը կայնեցուցին : 'Վայց ա-
նոր մէկալ առտուն մէյ մ'ալ գան զտնան որ՝
'Վազոն նորէն գետինը կործանած՝ ողնայարը
(այսինքն կէօվտէ քիւթիւյիւն) միայն ողջ մնա-
ցեր էր , ու զլուխը՝ և երկու ոտուրները տաճա-
րին մէջ տեղը ինկեր ջախջախեր էին , և երկու
թևերը զրանը սեմին վրայ կեցեր էին : 'Սիկէ 'ի
զատ՝ 'Ստուած ուրիշ պատիժ ալ խրկեց այլազ-
գիներուն վրայ , որ նստուկ տեղերնին խոց կ'ել-
լէր՝ սաստիկ կը տանջուէին , և ասով ալ շատ
մարդ կը մեռնէին . նաև իրենց արտերը անհա-
մար մկներ կը վխտային , որ բոլոր վարուցաննին
կ'ուտէին կ'աւրէին : 'Ս պատուհաններն որ 'Է
զովտայիքը տեսան , կարծիք երթալով որ տա-
պանակին պատճառովը կ'ըլլայ՝ խորհուրդ ըրին
մէկալ այլազգի իշխաններուն հետը , ու փորձե-
լու համար տապանակը անկէց վերցուցին 'Վեթ-
ըսուած քաղաքը տարին : 'Վայց այսու ամենայ-
նիւ երբոր հոն ալ տեսան որ ան պատուհանները

կըլլան, անկէջ ալ ուզեցին որ Մսկաղոն տանին, Մսկաղոնացիները ասոր դէմ կեցան, «Սէնք բոլորս ջարդուիլ չենք ուզեր», ըսին: Ուստի ասանկ եօթը ամիս տասպանակը այլազգիներուն քովը կենալէն ետեւ, մամուացին որ նորէն Սարայեւրացոց ետ ձամբեն՝ խալըսին աս պատուհասներէս. և ասոր վրայ իրենց քուրմերը խորհուրդ տուին որ սպարապ չխաւրեն, հասա պաշտպաններուն հինգ իշխաններուն համբարովը՝ հինգ հատ ոսկիէ նստուկ տեղի նմանութիւն շինեն, ու հինգ ալ ոսկիէ մկներ, և ասոնք տասպանակին նուիրեն տան, որ ան պատիժները վրաներնէն վերնայ: Ատրը աս ալ ապրօսըցին որ նորէն աղէկ մը փորձելու համար, որ իմանան թէ աս պատիժներս անկէջ է՝ թէ չէ, տասպանակը ան ըսած ոսկիէ բաներովը առնեն մէկ նոր սայլի (այսինքն առասպոյի մը) վրայ դնեն, ու երկու մատղաշ կովեր որ առջինեկ հորթերնին բերեր են՝ ան սայլին լծեն ու հորթերնին քովերնէն բաժնեն տունը պահեն, անանկ ձամբոց դնեն զանոնք որ երթան. եթէ տեսնեն որ աս կովերը շիտակ դէպ ՚ի Սարայեւրացոց երկիրը կ'երթան նէ, գիտնան որ ան պատիժները տասպանակին պատճառովը եղած է: Մտնք ալ ասանկ որ ըրին, ու ետեւէն դացին նայելու, տեսնոր կովերը առանց մէկ դին մէկալ դին ծռելու՝ շիփշիտակ դացին դէպ ՚ի Սեթսամիւս ըստե՛ն Սարայեւրացոց երկիրը, որ ան ատենը ցարեն կը հնձէին անոնք: Առ հոն հովսեայ բեթսամիւսացիին արտը որ մտան, Սարայեւրացիքը իմացան ինտալով տասպանակին վրան վազեցին սայլէն առին վերուցին, ու սայլը ջարդեցին վառեցին, անոր կրակովը ան երկու կովերը դւտացիները

եկան ողջակէզ ըրին տասպանակին առջևը : Բայց
 աս Խորայեւացոց ուրախութիւնը մեծ տրտու-
 թեամբ վերջացաւ , որ յիսուն հազար ու եօ-
 թանասուն հոգի ան ատենը Մտուծմէ պատ-
 ժուեցան մեռան . ինչու որ՝ կ'ըսեն թէ , երբոր
 տասպանակը ասանկ հոն հասաւ , Խորայեւացիք
 մեծ ու սղտիկ վրան թափեցան , ու առանց ա-
 նոր պատիւը սրահելու՝ սկսան տասպանակին դու-
 չիլ հետաքրքրութեամբ մէջը խառնեցին նայե-
 ցան , որ աս բանս իրենց սաստիկ արգիլէր էր
 Մտուած : Աւտի Բեթսամիւսցիքը ալ տա-
 պանակէն սոսկալով դողալով՝ Վարիսթարիմցոց
 աղաչեցին որ իրենց քաղաքը առնեն տանին . ու
 անանկ Վարիսթարիմ տարին , որ հոն շատ տա-
 րի Միննադար քահանային տունը կեցաւ :

Հեղի քահանայապետէն ետեւ , ինչպէս ը-
 սինք , Սամուէլ մարդարէն որ սկսաւ Խորայեւա-
 ցիքը կառավարել , իր առջի հոգը աս եղաւ՝ որ
 բոլոր կուսքերը և կռապաշտական բաները մէ-
 ջերնէն վերցուց մաքրեց , ու աստուածաբաշտու-
 թիւնը նորոգեց , մանաւանդ տասպանակը դառ-
 նալէն ետքը : Եւ աս ատեններս մէկ հեղ մը
 Սամուէլ բոլոր Խորայեւացիները մէյտեղ Սա-
 սեփաթ ըսուած տեղը ժողոված՝ իրենց քարոզ
 որ կու տար՝ և Մտուծոյ աղօթք որ կ'ընէին ,
 ան ժամանակը այլազգիները յանկարծակի ու-
 զեցին վրանին սրատերազմ ելլել . ան որ իմացան
 Խորայեւացիները՝ սրտերնին դող ինկաւ , ու Սա-
 մուէլի դիմեցին , որ Մտուծոյ աղաչէ՝ որ անոնց
 ձեռքէն խալրսին : Սամուէլ ալ մէկ գառնուկ
 մը առաւ Մտուծոյ ողջակէզ որ ըրաւ , Մտուած
 երկինքէն անանկ սոսկալի գոռալու ձայն մը հա-
 նեց՝ որ բոլոր այլազգիները իրար անցած սկսան

փախչիլ, ու Իսրայելացիները ետևնին ինկած
 զանոնք ջարդեցին, ու իրենց քաղաքներն ալ նո-
 րէն անոնց ձեռքէն առին. և ասով այնպիսի վախ
 ինկաւ այլազգիներուն սիրտը, որ Սամուէլի օրը
 մէյ մ'ալ Իսրայելացւոց վրայ պատերազմ չբա-
 ցին: Եւ ինքը Սամուէլ մարգարէն ալ սովորու-
 թիւն ըրեր էր, որ տարին հեղ մը Իսրայելա-
 ցւոց քաղաքները կը ստըտէր, անոնց պիտանա-
 ւորութիւնը կը հոգար՝ դատաստաննին կը տես-
 ներ. և մէկալ մնացած ժամանակը Արիմաթեմ
 իրեն տունը կը կենար:



ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ
ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐԹԵՐՈՒՆ • ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ
ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԱՏԵՆԸ ԵՂԱԾԸ ՄԻՆՉԵՒ
ԻՐԵՆՑ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Խորայեղացիք իրենց բազաւոր կ'ուզեն ղենել . Աստուած
այ Սատուղը ապի բազաւոր կ'ընտրե խորայեղացոց :

ԸՄ աշխարհի 2908 : (Ե . Թագ . Բ . Ժ .)

ԵՐԹՈՐ ծերացաւ Սամուէլ, կառավարու
թեան բեռը իր վրայէն թեթեւցրնելու համար՝
իրեն երկու որդիքը Յովէլ ու Լ'բիա ըսուած՝ իր
տեղը Խորայեղացոց վրայ դատաւոր դրաւ : Լ'
սոնք իրենց հօրը բարեպաշտութեան և արդա-
բութեան ճամբէն դուրս ելան, որ կաշառքնե-
րով (այսինքն ըռըշված առնելով) և ուրիշ ա-
նիրաւութիւններով ժողովուրդը կը չարչարէին :
Լ'սոր համար ալ չգիտանալով՝ ամէնքը եկան
Սամուէլի ինկան, ու միաբերան ըսին թէ՛
«Մեզի մէկ թագաւոր մը դիր, որ աշխարհքի
ուրիշ ազգերուն պէս մենք ալ մեր թագաւորէն
կառավարուինք .» : Լ'սով ժողովուրդը չուզել մը
ցուցնելով անմիջապէս Լ'ստուծմէ կառավա-
րուիլը՝ իր պաշտօնէից ձեռքով, (ինչպէս ինչուան

ան ատենը եղած էր), Սամուէլ աս բանս որ
 բեց՝ խիստ վշտացաւ ու գանգրտեցաւ Բստու-
 ծոյ հետ : Բստուած ալ հրամայեց որ անոնց ու-
 զածը կատարէ, միայն թէ՛ առաջ իրենց առջևը
 դնէ թագաւորներուն իրաւունքը, որ ինչպէս
 սովորութիւն է՝ ժողովրդոց վրայ բեռ կ'ըլ-
 լան, ու զիրենք գերիի պէս կը բանեցընեն :
 Բայց աս բաներովս ալ Իսրայելացւոց աչքն որ
 չվախցաւ, և իրենց խօսքին վրայ հաստատ կե-
 ցեր էին, ան ատենը Բստուած նորէն հրամայեց
 Սամուէլի որ Սաւուղը Իսրայելացւոց թագաւոր
 օծէ : որ ասանկ եղաւ : Բենիամինի ցեղին մէ-
 ջը մէկ մարդ մը կար՝ Աիս անունով. ասիկայ
 մէկ կտրի՛ճ տղայ մը ունէր խիստ շնորհալի,
 պատուական, ու բարձր հասակով (այսինքն պոյ-
 լու), անանկ որ՝ ինքը մէկ հատիկ մըն էր բոլոր
 Իսրայելացւոց մէջը, որ Սաւուղ կ'ըսուէր՝ Պա-
 տահեցաւ որ աս Աիսը իր էշերը կորսընցուց,
 ուստի Սաւուղը՝ մէկ ծառայի մը հետը զբաւե-
 տեւէն խրկեց որ եթան ան էշերը փնտռեն.
 անոնք ալ աս բանիս համար ելան շատ ան-
 զուանք պտրտեցան. ետքը երբոր չգտան, ու
 յուսահատած պիտոր ալ ետ գառնային ճի-
 յանկարծ ծառային միտքը եկաւ Սամուէլ մտք-
 գարէն՝ որ հոնտեղուանքը կը գտնուէր, ու բու-
 որ երթան իրեն հարցընեն ան կորսուած էշե-
 բուն համար : Բայց օրով առաջ Բստուած Սա-
 մուէլի յայտներ էր թէ՛ Սաւղը աս ատեն բեցի՛
 Բենիամինի երկրէն Սաւուղը պիտոր խրկեմ, որ
 զանիկայ թագաւոր օծես իմ ժողովրդոցս վրայ.
 ուստի երբոր տեսաւ Սամուէլ՝ ճանչցաւ որ Սա-
 ւուղն է. և անոր սիրտը հանգչեցընելէն ըսելէն
 ետե՛ թէ իր հօրը էշերը գտնուած են, բանեց

զինքը ուրախութեամբ հետը առաւ սեղան տա-
 րաւ, ու հոն պատիւ ըրաւ՝ Սաուզը ամենէն
 վեր նստեցուց, ու աղէկ պատառներն ալ իրեն
 առջևը դնել տուաւ։ Սեղանն որ ըմբոյցան՝ չթո-
 ղուց որ երթայ, հասպա ան զիշերը հոն բռնեց,
 ու առտուանց ելաւ գլուխը եղ լեցուց՝ ըսաւ թէ
 «Մտուած քեզ թագաւոր օծեց իր ժողովրդո-
 ցը վրայ, որ թշնամիներուն ձեռքէն զիրենք ա-
 զատես»,։ Այս երբոր ալ իր հօրը տունն որ
 ձամբելու եղաւ, աս թագաւոր ըլլալուն ճշմար-
 տութեանը նշանի համար մէկ քանի բան մը
 մարգարեացաւ Սամուէլ, որ ան երթալինի
 ձամբան իրեն պիտի հանդրպէին. ու հետը
 խօսք դրաւ՝ որ ետքը Վաղգաղա քաղաքը եր-
 թայ իրեն սպասէ, որ եօթը օրէն ետև ինքն
 ալ հոն կու գայ, և ինչ որ պիտօր ընէր նէ՝ Մ-
 տուծոյ կողմանէ հոն տեղը իրեն պիտի յայտնէ։
 Ըն ամէն նշանները Սաուզի վրայ կատարուե-
 լէն ետքը, ինչպէս խօսք կապեր էր նէ, գնաց
 Սամուէլ ու բոլոր ժողովուրդը Սասեփաթ ժո-
 ղովեց, որ հոն իրենց թագաւոր ընտրէ։ Աւտի
 առաջ տասուերկու Իսրայելացւոց ցեղերուն վրայ
 վիճակ ձգել տուաւ, ու երբոր Վենիամիսի ցե-
 ղին վրայ ելաւ վիճակը, ան ատենը Սամուէլ
 աստուածային յայտնութեամբ Սաուզը պա-
 հուրտած տեղէն բռնեց բերաւ ժողովրդոց մէջը
 կայնեցուց՝ ու ըսաւ. «Մհա ան մարդը որ Մ-
 տուած ձեզի թագաւոր դրաւ»,։ Ժողովուրդն
 ալ ուրախութեամբ մէկ բերան կանչեցին. Աեց-
 ցէ արայ. և ան օրէն աստուածային զրգմամբը
 Սաուզի բովը սկսան ժողովուիլ ու ժով ու բանի
 եկող մարդիկը, որ անանկ Իսրայելացւոց նոր
 թագաւորութիւն կայնեցաւ։

Գ. Լ. ՈՒԽ Բ.

Սատուղ մեծ յաղբուրիւն մը բնկեկե ետե՛ կորեկե
բացաւոր կ'օծուի :

Ը՛մ աշխարհի 2909 : (Ս. Թագ. ծԵ. ծԲ.)

Ը՛ն բաներէս մէկ ամսէն ետքը՝ Կաաա ըն-
նացւոց թագաւորը ելաւ Իսրայելացւոց երկրին
մէկ կողմը՝ Յաբիս ըսուած Գաղայաղացւոց
վրայ . անոնք ալ դէմ կենալու ու ժ չունենալով
անոր խրկեցին ըսին թէ՛ « Սէջերնիս ուխտ ու
դաշինք դնենք՝ ու անանկ քու ներքեդ ըլլանք :
Ը՛ն ալ ասանկ սրատասխան տուաւ թէ՛ « Սէ-
ջերնիս դաշինքը աս ըլլայ՝ որ ամէն մէկերնիդ
ձեր աջ կողմի (այսինքն սաղ զի) աջքերնիդ
հանէք . » : Յաբիսցիքը աս որ լսեցին՝ իրենց եօ-
թը որ ատեն ուղեցին , ու սաղին անդին Իս-
րայելացւոց երկիրը խնացուցին աս բանը : Սա-
ւուղ ալ երբոր լսեց ան անիրաւ բանը՝ վառու-
ցաւ աստուածային զօրութեամբ , ու սաստիկ
սրդողելով՝ առաւ իր երկու եզը կտոր կտոր ը-
րաւ , ան կտորուանքը չորս դին Իսրայելացւոց
երկիրը խրկեց ըսաւ թէ՛ « Ս՛վ որ Սաւուղիս
Սամուէլի հետ չգար՝ ասանկ կտոր կտոր կ'ընեն
անոր եզները : Ը՛ն բանովս այնպիսի սոսկում մը
ձգեց ժողովրդոց սիրտը , որ ամէնը ոտք ելան
Սաւուղի քով եկան , բոլորը վեցհարիւր եօթաւ-
նասուն հազար հողի . Է զասոնք Սաւուղ իրեզ
բանակ ըրած՝ անանկ ան ըննացւոց վրան որ
վազեց , աղէկ ջարդ մը տուաւ անոնց՝ մնացածը
ցիրուցան փախցուց կորսնցուց , ու Յաբիսցիքը

ազատեց : Այս ասով Սաուղ ժողովրդոցը շատ
 աչքը մտաւ , ու սրտերնին տաքցաւ վրան , այն-
 չափ որ՝ ոտք ելան բռնել մեռցնել կ'ուզէին ան
 մարդիկը , որ Սաուղը բանի տեղ չսեպելով՝
 զլուխ քաշեր իրեն տուրք չէին 'ի տար . բայց
 Սամուէլ արգիլեց խաղաղցուց զամէնքը : Այս-
 քը Սամուէլ առաւ բոլոր Իսրայելացիքը Վաղ-
 դաղա տարաւ , ու հոն շնորհակալութեան զօհ
 մատուցանելով Մտուծոյ՝ նորէն Սաուղը թա-
 գաւոր օծեց . և հոն ամենուն առջևը Սամուէլ
 իր ինչուան ան ատենը արդար կառավարութեան
 վկայութիւնը ժողովրդոց բերնէն առնելով , և
 Մտուծոյ իրենց վրայ ըրած բարերարութիւն-
 ները առջևնին դնելով՝ խրատեց ու յորդորեց որ
 իրենց թագաւորին հետ միաբան Մտուծոյ
 վախնան , անոր պատուիրանքները պահեն : Բայց
 նորէն աս բանիս նշան թէ Իսրայելացիք Մտու-
 ծոյ մեծ անիրաւութիւն ըրին որ թագաւոր ու-
 զեցին , աղօթք ըրաւ Սամուէլ , ու շուտ մը եր-
 կինքը սկսաւ սատաիկ գոռալով անձրև թափել .
 այնչափ որ ժողովուրդը սոսկալով մեղայ ըսին ,
 աղաչեցին Սամուէլի , որ ան Մտուծոյ պատու-
 հասը դադրեցնէ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Սասունցի երեւոյն սոյնազգիները կը յարթէ , ու տեղեկացան ,
 դուրսեանք համար Սասունցի աչքէն կ'իջնայ : Յովնայրան
 իր ըրած քաջութեանքը մեանէյն կ'ազատի :

ԸՄ աշխարհի 3911 : (Յ . Թագ . ԺԳ . ԺԳ .)

Սէկ տարիէն ետե Վարայեւացոց պատե-
 ռազմ հանդըպեցաւ Փղշտացոց հետ . առ բա-
 նիս համար ամէնքը մէկտեղ Վաղգազա ժող-
 վեցան . և Սամուէլ ալ եօթն օրէն ետքը հոն
 գտնուելու խօսք տուեր էր՝ որ զայ Վասուծոց
 զոհ մատուցանէ , ժողովրդոցը սիրտ տայ պա-
 տերազմ ելլալու . սրտաճառն որ՝ ամէնքը ստ-
 կացեր էին՝ լսելով որ իրենց թշնամիները սա-
 տիկ ուժով երսուն հազար կառքով վեցհազար
 ձիաւորով և անհամար զօրքերով վրանին կու
 գան կոր : Կրքոր եօթը օրը եղաւ՝ ու տեսաւ
 Սաւուղ որ չհասաւ Սամուէլը , և ժողովուրդն
 ալ տրտընջալով կը ցրուէին կոր , ինքը ձեռք
 զարկաւ զոհ մատուցանելու , որ ալ չսպասե-
 թշնամիներուն դէմը ելլէ : Օտհն որ լմբնայ-
 եղաւ՝ ան ատենը հասաւ Սամուէլ , ու սաստիկ
 սրդողելով Սաւուղի անհամբերութեանը և յան-
 դրգնութեանը վրայ՝ ըսաւ թէ՛ « Վասուած քեզ
 առ բանիդ համար երեսէ ձգեց , անանկ որ՝ քեզ
 թագաւորութիւնդ քեզմէ քու տղիդ պիտի չանց-
 նի » . ու այնպէս թողուց ելաւ գնաց : Ըր լսե-
 լով զօրքը՝ աւելի սրտերնին կոտորեցաւ , և Սա-
 ւուղի հետ միայն վեց հարիւր հոգի մնացած
 անանկ սկսան թշնամիներուն դէմ երթալ :

Ըն առեմքն Յովնաթան Սաուղի որդին մար-
 դու բան մը չբաժնի միայն իր կապարձակիրը
 (այսինքն սիլիհտարը) հեռը առած՝ թնամինե-
 րուն բանակը մծտեցաւ, ու գնաց մէկ լեւան մը
 նեղուցի բերան կեցաւ, անոնցմէ գէմը եկածը
 մէկմէկու ետեւէ քսան հողիի չափ մեռցուց. և
 ասով Ըստուած անանկ վախ մը շփոթութիւն
 մը ձգեց թնամիներուն մէջը, որ կարծելով թէ
 ետեւին կեցած է Խորայեւացւոց մեծ բանակը՝
 սկսան ցիր ու ցան ըլլալ փախչիլ: Արբոր աս
 հեռուանց տեսաւ Սաուղ, ու բանը իմացաւ
 թէ ինչպէս եղեր է, ինքն ալ սիրտ առաւ,
 (մանաւանդ երբոր ժողովուրդն ալ աս բանը ի-
 մանալով՝ նորէն տասը հազար մարդու չափ իր
 քովը ժողվեցան). ուստի ուժով ետեւնին ինկաւ
 աղէկ մը ջարդեց, մնացածը փախցուց: Ըս մեծ
 յաղթութեանս մէջը զարմանալին ան էր, որ
 Խորայեւացւոց կողմէն՝ բոլոր այնչափ հողիէն
 միայն երկուքը՝ Սաուղ ու Յովնաթան գեղարդ
 ու թուր ունէին. ինչու որ՝ այլազգիքը Խորայե-
 վացւոց վրայ տիրապետած ատեննին այսպիսի
 պատերազմական զէնքերը արդելէր էին անոնց,
 նաև երկաթագործները անոնցմէ վերցուցեր
 էին. որ Խորայեւացիքը իրենց երկրագործու-
 թեան խոփը՝ մանգաղը ու գերանդին սրելու
 համար՝ այլազգիներուն երկիրը կ'երթային, հոն
 շինել կու տային: Բայց աս փառաւոր յաղթու-
 թեանս ուրախութիւնը մէկէն կտրեց մէկ տըրաւ
 մալի դիպուած մը. պատճառն որ՝ Սաուղ ան
 այլազգիներուն վրայ վազելուն ատենը՝ անխո-
 հեմութեամբ երդումով ուխտ ըրաւ Ըստուծոյ,
 որ ան օրը ինչուան բոլոր թնամիները չկորսուին
 նէ՛ մինչև իրիկուն ծով կենան՝ մարդ բերանը

բան չգնէ : Հոյնաթան չէր գիտեր աս իր հօրը
 երգումը , ուստի մեղուներուն փեթակներուն
 քովէն անցնելին խիստ անօթի ըլլալով ձեռքի
 զաւազանը երկնցուց՝ անկէջ մեղրը առաւ կե-
 ռաւ . և անով աչքը բացուեցաւ ու ժը վրան է-
 կաւ : Արբոր իրիկուն եղաւ՝ զօրքն ալ սաստիկ
 յոգնած ու անօթեցած , թշնամիներէն ինչ որ
 ձեռուրնին ինկեր էր՝ ոչխար , հօրթ , անհաւ-
 բերութեամբ գեանին վրայ սկսան մօրթել , ու
 օրինաց գէմ արիւնթաթախ ուտել : Բնիկայ որ
 իմացաւ Սաւուղ՝ մնացածը իր առջեր բերել
 առաւ , ու մէկ քարի մը վրայ մօրթած՝ անանկ
 միւր արիւնէն մաքրած իրենց առաւ որ ուտեն ,
 Ատքը ան գիշեր ալ Սաւուղ նորէն ուզելով որ
 թշնամիներուն վրայ երթայ՝ քահանային ձեռ-
 քովը հարցուց Բատուծոյ , երբոր տեսաւ որ Բ-
 տուած սխտասխան չառաւ , գիտցաւ որ մի
 մեղք մը պատահած է . անոր համար հրամայեց
 որ ամենուն վրայ վիճակ ձգուի , ու « Ինչ որ
 ըսաւ , Հոյնաթան աղիս վրայ ալ վիճակը ելլե-
 նէ , չեմ ինայեր՝ մեռցնուել կու տամ . » : Վի-
 ճակը որ ձգեցին , ու Հոյնաթանու վրայ եղաւ
 Սաւուղ իրեն հարցուց թէ « Ի՞նչ բերեւ . »
 ալ ըսաւ թէ « Ատոր մը մեղր ուտելու համար
 ես պիտոր մեռնիմ մի . » : Սաւուղ ալ երգով
 ըրաւ թէ « Ի՞նչանկ է , պիտի այսօր մեռնի . »
 Բնատենը ելաւ ժողովուրդը ասոր գէմ կեցաւ .
 « Բաւ լիցի , ըսին , ինչպէս սպաննուի ան մեղ-
 դը , որ սրտածառ եղաւ Իտրայելացուց աղատ-
 թեանը . » . ու անանկ ժողովուրդը առ մեղր
 վրանին առած՝ Բատուծոյ աղօթք ընելով Հոյ-
 նաթանը մեռնելէն խալըսեցին :

Գ. Լ. ՈՒԽ Գ.

Սատույ Ամաղեկացոց խնայելով թորրոյին Աստուծոյ
աչքէն կ'ելլայ :

ԱՄ աշխարհի 2930 : (Յ . Թագ . ԺԵ :

Ամաղեկացոց մեղացը չափն որ լցուեցաւ ,
Աստուծոյ հրամանովը Սամուէլ մարդարէն զնաց
Սաւուղի , ըսաւ որ Ամաղեկացոց վրայ սրատե-
րազմ ելլէ , և չինայէ բոլորը ջարդէ՝ էրիկ մարդ՝
կնիկ մարդ , ինչուան մանր տղաքն ալ , ու անոնց
անասուններն ալ : Սաւուղ ալ զօրք ժողվեց՝
չորս հարիւր երսուն հազարի չափ , ու երաւ կատ-
րեց Ամաղեկացիքը : Բայց Աստուծոյ հրամանը
ըման չկատարեց , ինչու որ ողջ բանեց պահեց
Ագազ ըսուած անոնց թագաւորը , ու իրենց կեն-
դանիներուն և ուրիշ բաներուն աղէկներն ալ
մեղքնցաւ պահեց : Անոր համար սասաթի բար-
կացաւ Աստուած , և աս բաները Սամուէլի
պատմելով՝ հետը դանդբաեցաւ ու ըսաւ թէ
“ Օղջացեր եմ որ Սաւուղը թագաւոր դրի ,
որ սասանի իմ իտօքս չմուկցայ ” : Սամուէլ ալ ան
ղիշերը անանկ տրամեւ՝ Աստուծոյ առջևը ին-
կաւ , ու առտուն զնաց ան ստեղծ վրայ հասաւ՝
որ Սաւուղ Ամաղեկացոց սուած կողոտուաները
Աստուծոյ զոհ՝ կը մատուցանէր . երբոր Սաւուղ
Սամուէլը տեսաւ , առջևը վազեց ու ըսաւ .
“ Ահա Աստուծոյ հրամանը ինչպէս ըսեր էր նե
կատարեցի ” : Ան ժամանակը Սամուէլ ալ իրեն
հարցուց , “ Հապա ինչ է , ըսաւ , ան ոչխարնե-
րուն ու կովերուն ձայնը որ ես կը լսեմ ” :

ան ալ պատասխան տուա թէ՛ « Լ'տոնք Լ'մա
 զեկացոցմէ բերածս է, որ աղէկները թող
 վուրդը ուզեց պահել որ Լ'ստուծոյ զո՛հ ընեն », 1
 Սամուէլ ալ աստուածային նախանձով վառեալ
 հոն տեղը չարաչար յանդիմանեց զինքը . « Լ'ս
 տուծոյ, ըսաւ, աւելի հաճոյ է հնազանդութի
 նը, քան թէ՛ զո՛հ մատուցանելը . անոր համար
 ինչպէս որ դուն զԼ'ստուած բանի տեղ չտեսցիր,
 Լ'ստուած ալ քեզ երեսէ կը ձգէ՛ թագաւորու
 թիւնդ ձեռքէդ կ'աւանտե՛ » : Լ'ս բանէս Սաուլի
 սիրտը դողաց՝ « Ս'եղայ, ըսաւ, թողութիւն
 տուր ինձի, ու եկուր մէյտեղ Լ'ստուծոյ աղօթք
 ընենք որ մեղքս թողու » : Սամուէլ ալ մտիկ
 չբրաւ . ու երբոր երեսը դարձուց որ երթայ,
 Սաուլ ետեւէն վազեց, ու անոր վերաբիւն
 բռնել քաշէնինի որ չթողու որ երթայ՝ կտոր
 մը պատուեցաւ ձեռքը մնաց . ասոր վրայ դարձաւ
 Սամուէլ նորէն իրեն ըսաւ թէ՛ « Լ'ստուած
 պատուեց ու քեզմէ առաւ քու թագա
 ւորութիւնդ, որ քեզմէ աղէկ մարդու մը ձեռք
 տայ . և աս Լ'ստուծոյ ըսած բանը ետ չդա
 նար » : Ետքը Սամուէլ ալ տեսնելով որ Սա
 ւուլի ձեռքէն չխալլսիր՝ հետը դարձաւ եկ
 որ Լ'ստուծոյ աղօթք ընէ . և ուզեց որ Լ'ս
 թագաւորը իր առջևը բերեն . ան ալ երբոր
 զարով առջևը ելաւ նէ, ան ատենը Սամուէլ
 թուր մը առաւ՝ իր ձեռքովը հոն տեղը մեղք
 զինքը, ասանկ ըսելով . « Ինչպէս քու թագ
 այնչափ կնիկները իրենց տղոցմէ զրկեր է, այ
 պէս ալ հիմա քու մայրդ քեզմէ զրկուի » : Լ'
 բաներուս վրայ ալ Սամուէլի սիրտը բողբոջ
 կտորեցաւ, թողուց ելաւ՝ Լ'քիմաթեմ իր ստու
 զնաց, ու անանկ քաշուած նստեցաւ, մէյ
 ալ Սաուլի հետ չտեսնուեցաւ :

չմօխ է մի քու տղաքներդ . . . ան ալ ըստա . . . Սէկ
 սղաթիկ մըն ալ կայ որ ոչխար կ'արածէ . . . որ ան'
 Վաւիթ կ'ըսուէր : Սամուէլը կանչել բերել
 տուաւ զանիկայ ալ, ու տեսաւ որ մէկ շիկուկ
 շնորհալի տղայ մըն էր աս Վաւիթ ըսուածս . և
 ան տեղը աստուածային յայտնութեամբը Սա-
 մուէլ եղը առաւ անոր զլիտուն վրայ լեցուց՝ զին-
 քը թագաւոր օժեց . ու ան ատենէն 'ի վեր' ալ
 Մատուծոյ հողին Սաւուղէն ելաւ հեռացաւ ,
 Վաւիթին վրան եկաւ : Մ. յայէս որ Սաւուղ
 Մատուծոյ երեսէն ինկաւ , ալ դե մտաւ իրեն ,
 որ ատեն ատեն անով չարաչար կը տանջուէր . և
 աս նեղութիւնս քիչ մը թեթեւցնելու համար՝
 մէկ քնար (այսինքն սանթուր) չարող մը փրն-
 տրուէնինի՝ Վաւիթը գտան Սաւուղի քովը
 բերին . որ երբոր անոր խենթութեան ցառը
 կը բռներ նէ՝ Վաւիթ անուշիկ չալելով կը դադ-
 րեցընէր , կը հանդէպընէր զինքը : Աւ անկէ ե-
 տե անանկ սիրելի եղաւ Վաւիթ Սաւուղի՝ որ
 առաւ իրեն կատարձակիր ալ ըրաւ :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Վաւիթ Գողխարը կը սպաննէ և տնով բոլոր
 այլազգիները կը յաղորտին :

Ըմ աշխարհի 1938 : (Ե . Թագ . ԺԷ :)

Մ. յազգիները նորէն ուժովնալով՝ Իսրայէլ
 լացուց վրայ պատերազմ բացին . Սաւուղ ալ էր
 զօրքովը զնաց անոնց դիմացինն բանակը գրաւ
 կեցաւ : Մ. յազգիներուն բանակը մէկ հոփայ
 մարդ մը կար՝ Վողիաթ անունով , որ վեց կան-

գուն ու մէկ թիզ մը երկայն էր՝ (իրը երկու
 մարդու հասակէն երկայն), ու իր վրայի ունե-
 ցած զէնքերն ալ անանկ խաշոր ու ահաւոր էին .
 զլուխը պղընձէ սաղաւարտ դրած, բոլոր մարմի-
 նը երկրթէ զրահով (այսինքն զբրիտով) սպա-
 տած . վահանը (այսինքն խալխանը) վրան ա-
 ռած, և ձեռքը իրեն մեծութեան չափով մէկ
 ծանր տէգ մը (այսինքն մզրախ մը) բռնած .
 (անանկ որ կ'ըսուի թէ բոլոր վրայի զէնքերուն
 ծանրութիւնը՝ իբր հարիւր քսան հոխայէն ա-
 լելի էր) : Երկայ ամէն իժիր իրենց բանակէն
 դուրս կու գար, և դէպ ՚ի Խորայեւացոց բա-
 նակը քամահրելով կը կանչէր թէ «Վաւք ով
 էք որ մեր զխնացը ելէր էք . գոնէ, ըսաւ, ա-
 սանկ ընենք որ սարապ տեղը ջարդուիք . ձեզ
 մէն մէկ մը ընտրեցէք որ զխնացս ելլէ, ես ու
 ան մինակ ծեծկուիմք . թէ որ ան իս յաղթելու
 ըլլայ՝ մենք ձեր ներքեւը ըլլանք, հասցա թէ ես
 զինքը յաղթեմ'նէ՝ դուք մեր ներքեւը ըլլաք, և
 ասով պատերազմը դադրի . » : Սառուղ և բոլոր
 Խորայեւացիքը աս սոսկալի հսկաս ան իրեն զէն-
 քերովը տեսնելով՝ ու անոր ըսածը լսելով՝ սար-
 սափած կեցեր էին քառսուն որ, ու չէին զխտեր
 ինչ ընեն . և ան ատենը թէպէտ խոստացաւ
 Սառուղ թէ՛ ով որ սիրտ ընէ անոր գէմը ելլէ
 սպաննէ նէ, իր աղջիկը անոր կու տայ, ու զին-
 քը իր աղջովը ազատ կը զրէ, բայց մարդ չզրտ-
 նուեցաւ որ աս բանիս սիրտ ընէր : Ինչ օրերը
 հանդրպէցաւ որ՝ Յեսսէն իր պզտի Վաւիթ
 տղան Խորայեւացոց բանակը խրկեց, որ երթայ
 հոն իրեն իրէք եղբայրներուն հաց տանի, ու
 տեսնէ թէ ինչպէս են : Վաւիթ որ եկաւ աս
 Վողխաթին բանը իմացաւ տեսաւ նէ, խիտ

տարցաւ վրան, որ մէկ անհաւատ այլազգի մը
 Մտուծոյ բանակը ասանկ քամահրէ. ու սխա-
 ինքը բանակին մէջը ասդին անդին ձայն հանեց
 թէ՛ « Ինչ կու տան ինձի, ես Մտուծով անոր
 դէմը կ'ելլեմ ու կը յաղթեմ. » : Ազիտը իր մեծ
 եղբայրը աս որ լսեց՝ չեխեց զինքը թէ՛ « Ինչին
 ոչխարները երեսին վրոյ ձգեր՝ հոս ինչ եկեր
 հետարբորութիւն կ'ընես, ու մեծ մեծ կը զրու-
 ցես. » :

Ատրը Սաուդի ականջն ալ որ հասաւ աս
 բանս, ու առջևը կանչել տուաւ, Վաւիթ իրեն
 ըսաւ թէ՛ « Իմենեւին մի վախնար, ես կ'եր-
 թամ զան կը յաղթեմ. » : Սաուդ ալ ըսաւ .
 « Վախնամ թէ չկրնաս, ինչու որ՝ դուն տղայ
 մըն ես, ու անիկայ պզտրկուցմէ սրատերազմի մէջ
 մեծցած մարդ է. » : Վաւիթ ասոր պատասխան
 տուաւ թէ՛ « Դս քու ծառադ՝ իմ հօրս ոչխար-
 ները արածելնինի՝ երբոր առիւծ կամ արջ վրայ
 կու գար կը յափշտակէր, ես ետեւէն կը վազէի
 բերնէն կը փրցընէի կ'առնէի. ու թէ որ վրաս
 ելլեր նէ՛ անոր վիզէն կը բռնէի կը սպաննէի .
 յուսամ որ ասանկ ալ Մտուած աս այլազգիին
 ձեռքէն զիս խալըսէ, որ ան անհաւատին բերնէն
 Խորայեւացուց տուած նախատանքը վերցընեմ. » :
 Սաուդի խելքն ալ պառկեցաւ ան առեւնը աս
 բանիս վրայ. ուստի հրամայեց որ իր պատե-
 րազմական երկրթէ հազուսաները Վաւիթին
 հազցընեն, ու իր զէնքերը անոր տան՝ որ անտե-
 Վողիթին դէմը ելլէ. բայց Վաւիթ սորզած
 ջրլալով այսպիսի ծանր հազուսաներու և զէն-
 քերու՝ մէկդի թողուց զանոնք, ու իր ցուղ
 (այսինքն տէյէնէկը) մէկ ձեռքը առած, և մէ-
 կալ ձեռքը սրստատիկը (այսինքն սափանք), ու

Հինգ քար ալ առաւ իր մախաղին (այսինքն չան-
 թային) մէջը դրաւ, անանկ Վողիաթին առջևը
 ելաւ : Վողիաթն որ տեսաւ զինքը ասանկ մէկ
 շիկուկ ու փափուկ տղայ մը՝ առանց սրտերազ-
 մական զէնքի իր դէմը ելած, « Պահ, ըսաւ,
 ես շուն եմ մի՛ որ ցուսով ու քարով վրաս կու
 գաս կոր » : Վաւիթ ալ իրեն սատասխան
 տուաւ թէ՛ « Շունէն ալ գէշ ես » : ան ալ ը-
 սաւ : « Եկուր եկուր մօտեցիր քոյս՝ որ քու մի-
 սրդ թռչուններուն ու գազաններուն տամ որ ու-
 տեն » : Վաւիթ ալ ըսաւ : « Ղուն քու զէն-
 քերովդ իմ դիմացս ելեր ես, բայց ես Լստուծոյ
 զօրութեանց անունովը քու վրադ կու գամ : և
 յուսամ Լստուած որ քեզ իմ ձեռքս կու տայ
 որ սպաննեմ, ու զլուխդ վրայէդ վերցընեմ, և
 քու ու քեզի հետ եղած բոլոր այլազգիներուն
 մարմինը այսօրս թռչուններուն և գազաններուն
 տամ որ ուտեն : և ասով բոլոր աշխարհքս զիտ
 նայ որ՝ Եսրայելացոց մէջն է ճշմարիտ Լստուա-
 ծը, որ առանց թուրի ու զէնքի երբօր ինքը կը
 կամենայ նէ՛ յազթուածին ընել կու տայ » :
 Լս որ ըսաւ Վաւիթ՝ ու ալ քիչ մը մօտեցան
 մէկմէկու, շուտ մը քար մը հանեց սրտատիկը
 դրաւ, դէպ ՚ի վրան ուժով քաշածին պէս՝ քարը
 դնաց Վողիաթին ճակատին մէջը մտաւ, ու ան
 տեղը մէկէն երեսն ՚ի վար գետինը փռուեցաւ
 ինկաւ : ան ժամանակը շուտ մը վաղեց վրան
 ցատքեց Վաւիթ, ու անոր թուրը մէջքէն հա-
 նեց՝ անով Վողիաթի գլուխը կտրեց փրցուց
 վրայէն : Լս յազգիները աս տեսածնին պէս սկը-
 սան ցիրուցան ըլլալ փախչիլ, ու Եսրայելացիքը
 ետենին իյնելով խել մը ջարդեցին անոնցմէ,
 և բոլոր բանակը կոխեցին առին : Ետքը Վա-

լիթ Վաղիթի զուխը և անոր Թուրն ալ հե-
 տը ձեռքը բռնած՝ Սաւուղի առջևն որ ելաւ,
 ան առեւնը Սաւուղ, ինչպէս ոմանք կ'ըսեն՝ շա-
 տոնց Վաւիթը քովէն հեռանալով, և այնպիսի
 գեղացի հովիւի հազուստով տեսնելով զինքը՝
 չճանչցաւ. ուստի զարմանալով վրան՝ իրեն հար-
 ցուց թէ՛ «Վաւն որուն տղան ես», և Վն ալ
 պատասխան տուաւ թէ՛ «Քու ծառայիդ, որ
 Յեսսէ բեթղէհի կ'ըսուի», և Վն ժամանակը
 Յովնաթան Սաւուղի տղան՝ Վաւիթին առ մեծ
 քաջութիւնը տեսնալով, և իրեն շնորհալի գրու-
 ցուածքը լսելով՝ անանկ սիրտը հետը կապուե-
 ցաւ, որ իր վրայի զինուորական հազուստը և
 զէնքերը հանեց անոր տուաւ, ու հետը խօսք
 կապեց աղբրգիր եղաւ: Սաւուղ ալ անկէց ե-
 տե ալ չթողուց՝ որ Վաւիթ իր հօրը տունը
 դառնայ, հասցա իր քովը առաւ:

Գ Լ Ո Ւ Թ Է .

Սատուղի նախաձեռնութիւնը Գարի վրայ:

Աժ աշխարհի 1942: (Յ. Թաղ. ժԸ. ժԹ.)

Վաւիթ առ քաջութիւնս ընելէն ետեւ, եր-
 քոր ալ Սաւուղի հետ պատերազմէն կը դառ-
 նային, ան առեւնը Խորայեղացուց ժողովուրդը
 քաղաքներէն սկսան շնորհաւորելով զինանցքի
 ելլել, ու ինտուժով առջևնին ինկած, կնիքներ
 ալ սրար բռնելով ծնծղանքը չալելով՝ անանկ ու-
 բախութեամբ կ'երդէին ու կ'ըսէին. «Սաւուղ
 հազար ջարդեց, բայց Վաւիթը տասը հա-
 շար», և սոր վրայ Սաւուղ սաստիկ նախանձե-

զով՝ սկսաւ ըսել թէ՝ «Վայի՛ Ղաւթի տաւր
 հազար տունն, ու ինձի՛ միայն հազար. ալ ինչ
 կը պակսի Ղաւթի, միայն թէ իմ թագաւո-
 րութիւնս՝ որ ան ալ առնէ.», Ն. ան օրէն ե-
 տե սկսաւ ծուռ ծուռ նայիլ Ղաւթի վրայ. ա-
 նանկ որ՝ մէկ օր մը իր սովորական դիւահարու-
 թիւնը բռնած՝ երբոր Ղաւթի առջևը քնար կը
 չալէր, յանկարծ գեղարդը անոր վրայ շտկեց
 նետեց, և հոնտեղը կը սպաննէր, թէ որ Ղա-
 ւթի չժրմնէր անկէց փախչէր նէ: Նտքը աս
 ճամբաս գտաւ Սաւուղ Ղաւթի մեռցրնե-
 լու. ինչպէս որ առաջ ըսինք Սաւուղը իր խօսք
 տուածին պէս Մեղքողը ըսուած իր մեծ աղ-
 ջիկը Ղաւթի պիտոր տար, Ղոզիաթը սպան-
 նելուն համար. բայց անկէ ետե մոռանցրնե-
 լով աս բանս՝ հանեց զանիկայ ուրիշի հեա-
 կարդեց. ետքը իմանալով որ իր մէկալ Մեղ-
 քողը ըսուած աղջիկը Ղաւթի վրայ աչք ձգեր
 էր, մտածեց Սաւուղ որ անով Ղաւթի զոր-
 դայթի մէջ ձգէ որ մեռնի. ուստի խրկեց Ղա-
 թի ըսաւ թէ՝ «Վեզմէ ուրիշ բան չեմ ու-
 ղեր որ Մեղքող աղջիկս քեզի տամ՝ ինձի փե-
 սայ ըլլաս, հոպա ինձի երթաս հարիւր այլազգի
 մեռցրնես.», և անով Սաւուղ կը յուտար որ Ղա-
 ւթի այլազգիներուն ձեռքը իյնայ մեռնի: Ըս
 բանէս թէ՛ պէտ առջի բերանը խոնարհութեամբ
 ետ կեցաւ Ղաւթի, ըսելով թէ՛ «Նս արժանի
 չեմ թագաւորի փեսայ ըլլալ.», բայց ետքը զնայ
 քաջութեամբ Սաւուղի ուզածը կատարեց, ու
 ողջ առողջ դարձաւ, Մեղքողը իրեն կնիկ ա-
 ուաւ:

Ղաւթի անանկ օրէ օր աստուծային չնորհ-
 քովը որչափ առաջ կ'երթար, ու իր խոհեմու-

Թեամբը և քաջութիւններովը սիրելի կ'ըլլար.
 Ժողովրդոցը, այնչափ Սաւուղի նախանձութիւ-
 նը անոր վրայ կ'եւեկնար, որ ալ յայտնի սկսաւ
 ետեւէն իյնալ որ զինքը սարմնէն: Ինչպէս մէկ
 օր մը նորէն իր զիւահարութիւնը բռնած՝ եր-
 բոր առջևը Վաւիթ քնար կը չալէր, ան մէկալ
 հեղուն պէս մէյ մ'ալ գեղարգով ուզեց որ զար-
 նէ մեռցընէ: Վաւիթ ալ առջևէն փախաւ իր
 տունն որ գնաց, Սաւուղ ետեւէն մարդիկ խոր-
 կեց՝ որ երթան զիշերանց տանը դուռը առնեն,
 որ առտուանց դուրս ելածին պէս բռնեն սպան-
 նեն: Սեղբոցը խմացաւ աս բանս, ու ան գի-
 շերը գաղտուկ պատուհանէն Վաւիթը վար ին-
 ջեցուց՝ որ երթայ աղատի. և իրեն փախելու
 ատեն տալու համար մէկ խամաճիկ մը (կամ
 խուխլա մը) շինեց Վաւիթի պառկած տեղը դրա՝
 վրան ծածկեց. ու առտուանց Սաւուղէն խոր-
 կուած մարդիկն որ եկան՝ զանիկայ ցուցուց ըստ
 Թէ՝ « Հիւանդ է չկրնար գալ »: Սաւուղ ալ
 նորէն հրամայեց որ՝ Թող մահիճովը առնեն
 բերեն. ու ետքը երբոր խմացաւ աս Սեղբոցի
 ըրած խաբեբայութիւնը, և ըեց որ Վաւիթ
 ելէր Սամուելի քով՝ Վաւիթ հրամայ ըստած
 տեղը փախեր է, անոր ետեւէն ալ Թէպէտ իրիկ
 հեղ մարդիկ խրկեց, ու ետքը ճարը հատած
 ինքն ալ ելաւ գնաց, բայց Ստուած հոն ալ
 Վաւիթը խալըսեց:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Գաւիթ Սաստի ձեռքէն կը հարածոսի՝ փախստական
կը պտըտի :

ԱՄ աշխարհի 2945 : (Յ . Թագ . Ի . ԻԵ . ԻԲ . ԻԳ . ԻԴ . ԻԶ .)

Սաւուղ որչափ որ թշնամի էր Գաւթի , ա-
նոր ներհակը Յոյնաթան իր որդին՝ սրտանց
սաստիկ բարեկամութիւն ունէր Գաւթի հետ ,
ու կը ջանար որ հօրը սրտէն ալ անոր նախան-
ձութիւնը և թշնամութիւնը հանէ : Բայց ետ-
քը երբոր փորձեց տեսաւ որ աս բանիս ճարը
չկայ , գաղտուկ մէյտեղ խօսք դրած՝ Գաւթի թը
գտաւ , ու լայով հետը պագաուելով իրեն ըսաւ
որ գլուխը քաշէ երթայ՝ մէյ մ'ալ Սաւուղի
առջևը չերևնայ : Ուստի Գաւթի ալ չուշա-
ցաւ , և անանկ առանց պատրաստութեան որ
ճամբայ ելաւ՝ շուտ մը դնաց Լքիմէլէք քահա-
նայտպետին հանդրպէցաւ , ու անոր ասանկ ցու-
ցուց թէ՛ թագաւորական բանի մը համար ինքը
ծածուկ տեղ մը խրկուած է . ու անկէց հինգ
հատ օրհնած հաց ուզեց առաւ , որ իրեն և հե-
տը եղած մարդիկներուն ճամբու պաշար ըլլայ ,
ու նաև Գողիաթի թուրը որ Լքտուծոյ նուի-
րուած՝ հօն կը պահուէր , ան ալ վրան առաւ ,
այնպէս ելաւ Գաւթի ալլաղդիներուն երկիրը
գնաց՝ Լքրուս ըստած Գեթացուոց թագաւորին
քովը : Բայց ան տեղն ալ երբոր բանը խմա-
ցուեցաւ թէ՛ աս ան Գաւթին է որ Խարայելա-
ցուոց մէջէն իրենց գէմ ան յաղթութիւնները
ըրէր է , անկէց Գաւթի սիրտը շատ վախ ին-

կաւ . ուստի սկսաւ անոնց առջև խենթ ու խեղատ բաներ ընելով անանկ ցուցնել թէ ինքը խենթ մըն է , (կամ թու թարբխը) . որ անով թագաւորը քովէն վարնտեց՝ և ինքն ալ առիթ գտաւ անիկեց ելլելու ազատելու : Ատքը զնաց Խորայեւացոց սահմանին մօտ Մովսրացոց երկիրը , ու իր քովը եկան իր հայրը մայրը եղբայրները , նաև ուրիշ Խորայեւացոց երկրէն փախրտական մարդիկ կամաց կամաց հոն ժողկեցան Վաւթի հետ մէկ եղան՝ բոլորը չորս հարիւր հողի չափ , որ ասոնց Վաւթի գլուխ եղաւ իրենց վրայ զօրապետութիւն կ'ընէր :

Ըր բաներս որ լեց Սաւուղ , ու իմացաւ որ Ըրիմէլէք քահանայապետը Վաւթի տէրութիւն է ըրէր , զանիկայ առջև կանչեց՝ բոլոր իրեն ներքեւ եղած քահանաներովը իրէք հարիւր հինգ հողի , ու վրանին չարաչար սրդողելով հոն տեղը իր աչաց առջև քահանայական զգեստովնին զամէնքը ջարդել տուաւ՝ Վաւթի Ըսուած մարդուն ձեռքովը , որ ինքը եկեր աս բանս մասնէր էր Սաւուղի : Ատքը ասով ալ Սաւուղի սիրտը չդաղը շարկեցաւ իրկեց Վաւթս ըսուած քահանաներուն քաղաքը թրէ անցընել տուաւ՝ բոլոր բովանդակ թէ մարդ՝ թէ անասուն կենդանի , անանկ որ՝ միայն Ըրիմէլէք մէկ ազան Ըրիթար ըսուածը՝ խաղըսեցաւ փախաւ Վաւթի քովը զնաց . որ Վաւթի ալ սիրով ընդունեց զինքը՝ քովը առաւ . « Արովէտե , ըսաւ , իմ պատճառովս քու հայրդ բոլոր տնով տեղովը ջարդուեցան » : Ընկէ ետև Սաւուղ ալ զօրքով սկսաւ Վաւթի ետեւէն իյնով որ գտածին պէս սպաննէ զինքը . ան պատճառով Վաւթի ալ իր հետը եղած մարդիկներովը

երեսը սրահելով առջին անդին բարբարական կը ստրտեր, և Մատուած ամէն վտանգներէն զինքը կը խալըսէր:

Եւ չէ թէ միայն աս, հասրա երկու հեղ ալ այնպէս յաջողեց Մատուած՝ որ Սաւուղ Ղաւթի ձեռքը ինկաւ, ու Ղաւթի իր հեղութեամբը և անյիշաչարութեամբը անոր բան չըրաւ. որ ասանկ եղաւ: Մնգամ մը Մնձուկ Ղաղղայ ըստուած այրին (այսինքն մաղարային) մէջը կ'ըլլար Ղաւթի. Սաւուղ որ խնացաւ՝ իրեք հազար զօրքով ետեւէն զնաց որ բռնէ. ու աս այրիս բերանը երբոր հասաւ, աստուածային նախախնամութեամբը՝ առանց ներս մտնելու անտեղուանքը նստաւ հանգչել ուղեց, և հոն ամենուն քունը տարաւ: Մն որ ներսէն Ղաւթի մարդիկը խնացան, եկան իրեն ըսին թէ «Մհա աս օրս է՝ որ Մատուած թնամիդ քու ձեռքդ տուաւ որ անկէց ռիդ առնես», Ղաւթի սիրտ ըրաւ ելաւ Սաւուղի քով եկաւ. ան ատենը շատ վրայ տուին իր հեղը եղած մարդիկը, որ ան տեղը մէկէն Սաւուղը սպաննէ խալըսի ձեռքէն. բայց Ղաւթի «Ղաւ լիցի, ըսաւ, որ ես Մատուծոյ օժած մարդուն ձեռք դայցրնեմ», նաև անոնց ալ չթողուց որ բան մը ընեն. հասրա միայն Սաւուղի հագած վերարկուին ծայրէն կտրեց առաւ, անանկ անոնցմէ մարդ չխնացած իր տեղը դարձաւ. ու ետքը ան վերարկուին կտրելուն համար ալ Ղաւթի խղձմտանքը զարկաւ, որ մէկ քամահրանաց նշան մը կը սեպուի: Երբոր ալ Սաւուղ բան մը չխնացած իր մարդիկներովը անկէց ելաւ կ'երթար, ան ատենը Ղաւթի այրէն դուրս ելաւ՝ Սաւուղի ետեւէն կանչեց, «Տէր իմ արքայ ըսաւ, ինչու անոնց կը հաւ-

տաս որ կ'ըսեն թէ Ղաւիթը քեզ մեռցնել
 կ'ուզէ, և ետքը ան վերաբիւլին կտորը իրեն
 ցուցնելով ըսաւ. « Ըհա տես որ ինչպէս Ըս-
 տուած այսօր քեզ իմ ձեռքս տուաւ, ու ես քե-
 զի բան մը չըրի, բոի թէ օժեալ Տեան է. որ
 ասով դուն իմ անմեղութիւնս կրնաս հասկը-
 նալ. անոր համար Ըստուծոյ կը թողում որ ին-
 քը մեր դատաստանը կտրէ, և Ըս բաներս որ
 լսեց իմացաւ Սաւուղ, ան տեղը սիրտը կակուղ-
 ցաւ, ու դարձաւ լալով Ղաւիթի պատասխան
 տուաւ. « Ըտ քու ձայնդ է, ըսաւ, որդեան իմ
 Ղաւիթ. դուն ինձմէ արդար ես եղեր, որ այս
 պիտի բարիք հատուցիր իմ քեզի ըրած չարո-
 թեանս դէմ, որ ձեռքդ ինկայ, ու դուն զիս ջը-
 մեռցուցիր. անոր համար կը հաւտամ որ Ըս-
 տուած ալ քեզի բարիք պիտի հատուցանէ, իմ
 թագաւորութիւնս հանէ քեզի պիտի տայ. միայն
 թէ, ըսաւ, քեզմէ աս կը ինչպէս որ՝ երդումը
 նես ինձի, որ իմ զաւակներս չսպաննես, և իմ
 անունս աշխարհքէս չջնջես, և Ղաւիթ ալ աս
 բանիս վրայ երդում ըրաւ. ու անանկ մէյմէկէ
 բաժնուեցան:

Բայց այսու ամենայնիւ քիչ մը ատենէն ետե-
 նորէն սկսաւ Սաւուղ Ղաւիթին ետեւէն իջնալ.
 և վերը ըսածիս պէս՝ ուրիշ հեղ մըն ալ Օխ
 փացիներն որ եկան Սաւուղի մատնեցին թէ
 Ղաւիթ իրենց կողմերն է, Սաւուղ շուտ մը ի-
 ըքը հազար զօրքով ելաւ ետեւէն գնաց՝ Լքե-
 ղատի բլուրին վրայ բանակը դրաւ նստաւ: Ղաւ-
 իթ անոր բանակը լրտես խրկեց. ու իմանալով
 թէ ինչպէս տեղաւորուելը նստել էն, մէկ զիւր
 մը որ Սաւուղ և անոր Ըքեններ զօրսպետը ու
 բոլոր զօրքը չորս դին պատած սպառկեր կը ք-

Նային, Ղաւիթ Ղաբեստա ըսուած իր կարիճ մարդուն հետ սիրտ ըրաւ եկաւ Սաւուղի բանակը մտաւ՝ անոր քովը գնաց մօտեցաւ, Ղն աւտենը Ղաբեստան որ Սաւուղի գեղարդը տեսաւ իր քովը գետինը տնկած ցցուած, Ղաւիթի ըսաւ թէ՛ « Ղհա հիմա ժամանակն է որ Ղստուած թշնամիդ քու ձեռքդ տուեր է. թող տուր, ըսաւ, որ աս գեղարդովս մէկէն զինքը գետինը կարեմ, » : Ղաւիթ դարձաւ՝ « Սի, ըսաւ, մի ըներ, ով է որ Ղստուածոյ օժեկոյն ձեռք դպցրնէ՛, ու ետքը թողու թիւն գտնէ. թողունք որ Ղստուած ինքը խրատէ. թող օրը գայ իր օրհասովը (այսինքն է՛ճէլովը) մեռնի. միայն, ըսաւ, գեղարդն ու ջրին բարչը ան՝ երթանք ասիէ, » : Ղստուած մարդ շտետած չիմացած ելան գացին դիմացի լեռն ելան. ու ան ատենը Ղաւիթ գէպ ՚ի Ղաբեններ զօրապետը սկսաւ կանչել թէ՛ « Ղնուն ձայն շես հաներ, Ղաբեններ, » . ան ալ որ ցատքեց նայեցաւ, Ղաւիթ զինքը յանդիմանեց ըսաւ թէ՛ « Ղուն միայն բուրը Ղարայելացւոց մէջ քաջ մարդ մը պիտոր ըլլաս՝ ատանկ կը պահես քու տէր թագաւորդ, որ հիմա մէկ մարդ մը քու բանակդ մտաւ ու թագաւորդ սպաննել կ'ուզէր. ատ աղէկ բան չէ. Ղստուած կենդանի՛ որ դուք մահապարտ էք աս բանիս համար. և թէ որ ըսածիս շես հատար նէ՛ ահա, ըսաւ, թագաւորին գեղարդը ու ջրին բարչը՝ որ անոր քովն էր, » : Սաւուղ երբոր լսեց աս բանս, « Ղտ, ըսաւ, քու ձայնդ է, որդեակ իմ Ղաւիթ, » : Ղաւիթ ալ իրեն պատասխան տուաւ թէ՛ « Ղս քու ծառայ եմ, տէր իմ արքայ. քեզի ինչ կամ ըրեր, ըսաւ, որ ատանկ իմ ետես ես ինկեր. ատ ինչ բան է որ

Երայելացւոց Թագաւորը ազուաւի տէս լեռնէ,
 լեռ կը ստըաւի որ զիս բռնէ, ,, : Սաւուղ ալ նա-
 րէն զղձացաւ՝ ,, : Սեղայ, ըստ, բոլս դարձիք
 քեզի բան չեմ ընէր ,, : Բայց Վաւիթ չգնաց,
 հասա իրմէ մէկը ուղեց որ դայ գեղարդը առ-
 նէ. և նորէն Սաւուղ Վաւիթի վրայ օրհնէնք
 կարդալով անանկ ամէնը իր տեղը դարձան :

Ըստ տեւններս Սամուէլ մարդարէն ալ խիտ
 ծերացած վախճանեցաւ, ու Ըրիմաթեմ իր
 տունը Թագուեցաւ. որ շատ ցաւ տուաւ Սա-
 րայելացւոց :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Նարայի ու Արիցկայի սրտամտքիներ, և դատրի ոտիչ
 դիպումսները :

Ըմ աշխարհի 2947 : (Յ . Թագ . ԻԵ . ԻԵ . Լ .)

Վաւիթ երբոր փախստականութեանը ասե-
 նը հետը վեց հարիւր մարդով Սարմեղոս լեռը
 կ'ըլլար, հոն մէկ հարուստ մարդ մը կար Վա-
 բաղ անունով չար ու ազահ մը, որ կնիկ մը ու-
 նէր Ըրիզեա ըսուած՝ խիտ խմաստուն ու գե-
 ղեցիկ . և աս մարդս հազարաւոր ոչխարներու
 և այծերու տէր էր : Ըսոր հետ Վաւիթ բա-
 րեկամութեամբ կ'երթար, որ գողերէն կը պահ-
 պանէր անոր բաները, և իր մարդիկը չէր թա-
 ղուր որ Վաբաղի գէն մը հասցընեն : Աւտի
 երբոր ոչխարներուն խուզելու օրերը եկա-
 նէ, (որ ուրախութեամբ կ'երուխու մով սովորու-
 թիւն էր որ կ'ընէին), Վաւիթ տասը հօգի
 խրկեց Վաբաղի, որ երթան իրեն զիկն քաղա-
 քաւարութեամբ շատ բարեւ ընեն, ու ըսեն որ

ջիշէ ան իր ըրած պահպանութիւնը, ինչպէս որ
 յարմար տեսնէ՝ զիրենք ալ ան ուրախութենէն
 չզրկէ, իրենց ալ բաժին մը հանէ: Վարազ որ
 աս բանս լսեց, վրանին սրդողելով ըսաւ. «Ո՛վ
 է ատ Վաւիթը՝ մէկ իր տիրոջմէն փախստական
 ծառայ մը, որ ես իմ մարդիկներուս բերնէն
 հացս կտրեմ, իմ չճանչցած մարդիկներուն
 տամ»: Արքոր ասոնք դարձան Վարազի տուած
 պատասխանը Վաւիթի որ պատմեցին, Վաւիթ
 կրակ կտրեցաւ վրան, ու շուտ մը չորս հարիւր
 հողի թրերնին մէջբերնին կապած՝ հետը առաւ
 ճամբայ ելաւ, որ երթայ Վարազը իր բոլոր
 բաներովը Զարդ ու բուրդ ընէ ձգէ հոն տեղը:
 Վայց աս Վարազի ըրած կողտուծիւնն որ ի-
 մացաւ իր Վրիպեա կնիկը, շատ դժարն եկաւ
 չհաննեցաւ ըրածին. և սիրտը վկայելով վախ-
 նալով թէ աս բանիս վրայ մէկ բօթ մը կ'ելլէ,
 ինքն ալ շուտ մը իր էրկրնէն գաղտուկ գնաց եր-
 կու հարիւր հաց ճարեց, երկու աման գինի,
 հինգ եփած ոչխար, և ուրիշ ալ ուտելիքներ.
 ասոնք հետը առաւ ելաւ գնաց Վաւիթը դի-
 մաւորեց. ու խոնարհութեամբ իմաստուն և
 անուշ խօսքերով Վաւիթի սիրտը այնպէս ինջե-
 ցուց, որ ան ալ ընդունելով բերած ընծաները՝
 ճամբէն ետ դարձաւ իր տեղը գնաց: Վրիպեան
 երբոր տուն դարձաւ տեսաւ որ էրիկը գինուցած
 ուրախութեան մէջ է, բան չըսաւ իրեն ան ի-
 րիկունը. ու առտուանց ելաւ տեղն ՚ի տեղը որ
 պատմեց իրեն՝ թէ որպիսի փորձանքէ խալըսեր
 են, Վարազը վախէն սաստիկ սրտադողէն յան-
 կարծակիի եկաւ հիւընդցաւ, ու տասը օրէն
 ետքը մեռաւ: Արքոր լսեց Վաւիթ որ Վա-
 բազը մեռաւ, փառք տուաւ Վստուծոյ որ ար-

դարու թեամբ՝ Եսրայի դատաստանը կտրեց ու խրկեց Մարիգեան բերել տուա իրեն կին առաւ :
 Մնկէ ետե՛ ալ տեսնելով Վաւիթ որ Սաւուդի ձեռքէն ազատու՛ չկայ՝ միշտ և հանապազ իր ետեւէն կը ստորտի կոր, նորէն՝ իրեն հետի վեց հարիւր մարդովը իր կնիկներով տնով տեղովը՝ ելաւ դնաց այլազգիներուն երկիրը՝ Մնքուս ըսուած Վեթացոց թագաւորին քովը :
 Իայց առ անգամ Վաւիթ այնչափ սիրելի եղաւ Մնքուս թագաւորին, որ Սիկելակ ըսուած քաղաքը հանեց իրեն տուաւ, որ իր մարդիկներովը հոն բռնէ նստի : Վաւիթ ալ Մնքուսի առ ծառայութիւնը կ'ընէր, որ ատեն ատեն անոր թընամիներուն վրան կ'ելլէր գերի կը բռնէր՝ և շատ կողոպուտներ ձեռք կը ձգէր . որով Վաւիթ անունը օրէ օր եւելօք կը մեծնար չորս դին կը հռչակուէր :

Մտեղս մէկ ցաւալի դիպուած մը Վաւիթ հանդըպեցաւ, թեպէտ ետքը աջող վերջացաւ . որ ասանկ եղաւ : Իտրայելացոց վրայ այլազգիքն որ պատերազմ բացին՝ ինչպէս ետե սիտի պատմենք, Մնքուս թագաւորն ալ ան այլազգիներուն հետ դաշնակից ըլլալով՝ Վաւիթն ալ իր մարդիկներով հետը ուզեց առաւ որ Իտրայելացոց դէմ երթայ : Մտր վրայ Մնքուսի խիտնները տժգոհալով իրեն հասկըցուցին թէ Վաւիթ իտրայելացի գտնուելով իրենց դին պիտի բռնէ՛ մեզ անոնց մատնէ, և այլն : Մնապէս ետ որ դարձաւ Վաւիթ, իրեք օրէն ետե Սիկելակ գայ տեսնէ որ՝ Մնաղեկացի իր թնամիները եկեր Սիկելակը կոխեր յափշտակեր են, քաղքի կրակ տուեր երեր են, ու մէջի մարդիկը և կնիկները բոլոր կահ կարասիներով քաշեր գերի տա :

դեր են : Ըստ ողորմելու թիւնս բաւական չէ , ան
 ատենը նաև Վաւթի հետ եղած մարդիկն ալ
 իրենց կնիկներուն ու զակերներուն վրայ սրտեր-
 նին երած , Վաւթի վրայ դարձուցին իրենց կա-
 տաղութիւնը , այնչափ որ՝ անտեղը կ'ուզէին բըռ-
 նել քարկոծել , իբր թէ ինքը պատճառ է աս
 բաներուս : Վաւթի ալ ան ատենը սաստիկ նե-
 ղած չէր զիտեր որ զին դառնայ՝ ինչ ընէ : Ար-
 ջը Ըստուծոյ դիմելով հրաման առաւ , անանկ
 չորս հարիւր մարդով ելաւ դնաց ան Ըմաղեկա-
 ցիները գտաւ , ու առտուանց ինչուան իրիկուն
 հետերնին պատերազմ ընելով՝ բոլորը ջարդեց ,
 և բովանդակ յափշտակած բաներնին , կնիկնե-
 րով՝ ողջ առողջ առաւ ետ դարձաւ : Ըստպէս
 աջողութեամբ դառնալէն ետև ալ թէպէտ մէկ
 կուլ մը ծագեցաւ Վաւթի մարդիկներուն մէ-
 ջը , որ ան չորս հարիւր հողի պատերազմ գա-
 ցողները ասդիի մնացած երկու հարիւրին՝ իրենց
 կնիկներէն տղոցմէն ՚ի զատ ուրիշ բան չէին ու-
 ղեր տալ , ըսելով թէ՝ « Սենք զացինք աշխա-
 տեցանք , բոլոր առած կողոպուտնիս մեզի կ'իյ-
 նայ » . բայց Վաւթի մէջ մտաւ յորդորեց զի-
 րենք , որ սիրով ամենուն հաւատար բաժին հա-
 նեն : Եւ աս բանս ալ անկէ ետև օրէնք եղաւ
 Խորայեւրացոց մէջը , որ պատերազմի կողոպու-
 տը՝ քաղաքը մնացող պահողին և պատերազմ
 դացողին մէջը հաւատարապէս բաժնուի :

դու թիւն չբրիր . ու քեզ քու հետդ եղած Իս-
րայելացիներովը այլազգիներուն ձեռքը պիտի
մատնէ , անանկ որ՝ վաղը դուն տղոցդ հետ պի-
տի մեռնիս . : Ըս որ լսեց Սաւուղ՝ սարսափած
հոն գեափնը ինկաւ , որ ետքը ծառաները եկան
ձորով ոտք հանեցին . և կնկանը սրատրաստած
կերակուրէն կերաւ՝ քիչ մը ուժ առաւ , անանկ
գիշերանց նորէն ելաւ իր բանակը դարձաւ :

Երբոր ատենը եկաւ սրատերազմ սկսան , Իս-
րայելացիքը մէկէն յաղթուեցան , սկսան փախ-
չիլ , և շատ մարդ ջարդուեցաւ . անոնց մէջը Սա-
ւուղի իրեք տղաքն ալ զարնուեցան ինկան . և Սա-
ւուղ ալ տեսնելով՝ որ ինքն ալ նետով չարաչար
զարնուեցաւ , յուսահատած՝ ըսաւ իրեն կապար-
ձակիրին որ թուրը հանէ իրեն խոթի մեռցնէ ,
որ չլլայ թէ այլազգիներուն ձեռքովը մեռած ըլ-
լայ : Կապարձակիրն որ ետ քաշուեցաւ չուղեց աս
բանս ընել , ան ատենը Սաւուղ առաւ իր թուրը ,
ու փորուն կրթնցնելով վրան ինկաւ՝ անանկ
մեռաւ : Ետքը իր կապարձակիրն ալ աս տեսնե-
լով , չդիմացաւ՝ ինքն ալ իր թուրին վրայ ինկաւ
զինքը մեռցուց : Ըսանկ որ եղաւ՝ այլազգիները
մեծ խնտոււմով եկան Սաւուղի գլուխը վրայէն
կտրեցին , ու քաղքէ քաղաք իրենց կուռքերուն
տաճարները շնորհակալութեամբ ստանելով պը-
տըտցնելով իր զէնքերուն հետ մէյտեղ , բերին
Վագոնի տաճարը դրին . ու նախատանքի համար՝
իրեն և իր տղոցը մարմինները Վեթսան քաղքին
պարիսպէն վար կախեցին : Ար ետքը գիշերանց
գաղտուկ Յարիս Վաղայաղացոց կտրիճները
եկան անկէց գողցան ան մարմինները , Յարիս
քաղաքը բերին թագեցին . ու քաղաքացիներն
ալ եօթը որ մեռելի սուգ կատարեցին վրանին ,
ինչու որ՝ իրենք ալ Վենիամինի ցեղէն էին :

Բայց Ղաւիթ աս բաներուս վրայ ուրախա
նալու տեղը, որ իրեն թշնամին մեռաւ կորսուե-
ցաւ, եւելօք սրտանց ցաւ ցուցուց ու լացաւ, ա-
նանկ որ մէկ տղորմուկ ողբ մին ալ ըսաւ Սաու-
ղի եւ Յովնաթանի վրայ. եւ Յարխացոյ երախտա
գիտութիւնը շատ գովելով օրհնեց զիրենք, իջ
մանաւանդ աս ետքի գործքովս ալ աւելի յայտ-
նեց իրեն բարի սիրտը Սաուղի վրայ. որ այս
պէս եղաւ: Բայ պատերազմէս երկու օր ետե՛
մէկ ամաղեկացի մը արտորնօք Սիկեւակ եկաւ
Ղաւթի առջևը ելաւ, իբր թէ Խորայեւացոց
բանակէն խալըսած կու գայ: Ղաւիթ հարցուց
իրեն թէ՞ « Ի՞նչպէս եղաւ Խորայեւացոց բանը .
ի՞նչ ո՞վ ինկաւ, Սաուղ ու Յովնաթան ի՞նչ ե-
ղան », անիկայ ալ պատասխան տուաւ թէ՛
« Ես ալ Ղեղբուէ լեռն էի. հոն տեսայ որ Սա-
ուղ իր նիզակին (այսինքն մզբախին) վրայ կրու-
թընած զինքը մեռցրնել կ'ուզէր. երբոր դար-
ձաւ զիս տեսաւ նէ, կանչեց աղաչեց որ վրան
ելլեմ կոխեմ որ շուտով մեռնի. ես ալ այնպէս
ըրի. ու մեռնելէն ետքը ահա անոր գլխու թա-
գաւորական թագը ու թեւի սպարանջանները ու
ով հրամանացդ բերի », Բայ որ լսեց Ղաւիթ
սաստիկ տրտմութեամբ վրայի լաթը պատուե-
ան որ տեսան իր քովի մարդիկն ալ՝ անանկ տրտ-
մութիւն ցուցուցին, եւ ինչուան իրիկուն սոգ
կեցան լացին ծով պահեցին: Ետքը նորէն Ղա-
ւիթ ան մարդը առջևը կանչեց ու իրեն ըսաւ.
« Հապա դուն ինչպէս չվախցար, որ Բայտածմ
օժած մարդուն ձեռք դպցուցիր սպաննեցիր »
եւ շուտ մը հրամայեց որ՝ հոն իր առջևը ան ու
մաղեկացին սպաննեն, ու ըսաւ. « Երբեք ք
զուխդ ըլլայ, որ քու բերնովդ բռնուեցար »:

Գ Լ Ո Ի Խ Ժ Ա .

Սառուղի տունը կը մարի , ու Դարբի քաղաքապետինը
կ'աչոյի :

ԱՄ աշխարհի 2956 : (Բ . Թ ա գ . Բ . Գ . Դ . Ե . — Ե .
Մ ն ա գ . Ժ Ա .)

Սառուղի մեռնելէն ետքը Գաւթի Մատու-
ծոյ հրամանովը՝ իր ամէն մարդիկներով ու
կնիկներովը՝ այլազգիներուն երկրէն Սիկեւակ
քաղքէն ելաւ , Իսրայելացւոց երկիրը դարձաւ ,
Յուդային ցեղին Քերրոն ըսուած քաղաքը ե-
կաւ ընտելեցաւ : Հոն պինտ առաջ Հուդայի ցե-
ղին մեծամեծները եկան զինքը թաղաւոր օժե-
ցին . որ այսպէս եօթը տարի ու կէս թաղաւո-
րեց Գաւթի միայն Հուդայի վրայ : Պատճառն
որ՝ Քրեաներ խօսքի տէր մարդ՝ Իսրայելացւոց
զօրապետը , Սառուղը մեռնելէն ետե՛ անոր Հե-
բուսթէ ըսուած տղան առաւ Իսրայելացւոց
տասնըմէկ ցեղին վրայ հօրը տեղը թաղաւոր
դրաւ . ու անանկ միշտ կռիւր ու պատերազմը
պահաս չէր ըլլար անոնց՝ և Գաւթի մարդիկ-
ներուն մէջը , թէպէտ Գաւթի բանը օրէ օր
Մատուծոյ յաջողութեամբը առաջ կ'երթար ,
ու մէկալներունը ետ կը մնար : Ետքը Քրեաներ
մէկ պատճառով մը Հերուսթէի հետ որ ա-
րուեցաւ , ալ ետեւէ էր որ զանխկայ թաղաւո-
րութենէն ձգէ ու բոլոր Իսրայելացիքը Գաւթի
դարձնէ . բայց աս բանս եփեղու ատենը՝ Յո-
վաբ Գաւթի զօրապետը , որ առաջուց Քրեա-
ների օխ պահէր էր՝ իր Մայել ըսուած եղ-

բայրը սպաննելուն համար, Մբենները խաբէ-
բայութեամբ կանչել տուաւ, ու մէկէն զարկաւ
մեռուց: Մնոր վրայ ալ շատ ցաւեցաւ՝ սուր
մտաւ Ղաւիթ, և մարմինը պատուով թաղել
տուաւ, ու Յովաբայ սաստիկ սրդողելով ա-
նէճք կարգաց վրան:

Միկէ ետեւ շատ չանցաւ, որ Յերուսթէն մէկ
օր մը քնոյն մէջը իրեն երկու զօրապետները
զաղտուկ գացին մորթեցին, և զլուխը առին
Ղաւթի ընծայ բերին՝ իբր իրեն աչքիցս ը-
նելով: Բայց Ղաւիթ իրենց հորհակալ ըլլա-
լուն տեղը, ինչպէս մէկալ Սաւուղի մեռնելուն
աւետիս բերողին ըրաւ՝ սասնց վրայ ալ սաստիկ
բարկացաւ, որ անմեղ մարդը անանկ անողոր-
մութեամբ սպաննել են, ու շուտ մը հրանայեց
որ ան երկու հողին ալ հոնտեղը բռնեն մեռցը-
նեն, և ձեռուրնին ոտուրնին կտրեն՝ օտանին կա-
խեն, ու ան բերած Յերուսթէի զլուխը մեծա-
բանքով գերեզմանը թաղեն: Ըս բաներով
Ղաւիթ Իսրայէլացւոց աւելի աչքը մտաւ. ու
նոր համար՝ ալ տեսնելով անանք որ Սաւուղ
ազգէն ուրիշ թագաւորութեան յարմար մար-
չմնաց՝ մէկ Սեմիիբոսթէէն ՚ի զատ, որ Յիւ-
նաթանի որդին էր, ան ալ սղտի տղայ մը ո-
տուրները կաղ անդամաւոյժ, (որ ետքը Ղաւիթ
իր հօրը սիրուն զինքը քովը առաւ իր սեպտի-
կը կերցընէր), Իսրայէլացւոց տասնըմէկ յիւ-
րուն մեծամեծները ելան Վեբրոն քաղաքը
Ղաւթի քով եկան, և հետը մէյտեղ ուխ-
ու դաշինք ընելով զինքը նորէն թագաւոր
ծեցին բոլոր Իսրայէլացւոց տասուերկու ցեղի
վրայ:

Ղաւիթ երբոր բոլոր Իսրայէլացւոց վրայ

տերութիւնը առաւ, և անով աւելի որ ուժով
 ցաւ, ուղեց որ երթայ առաջ Արուսաղէմը առ-
 նէ՛ իր լերանը վրայի ամրոցովը (այսինքն խա-
 լեովը), որ Ահն կ'ըսուէր. ան ատենը անհա-
 շատ Յեսուսացոց ձեռքն էր: Արբոր վրան
 գնաց սրաշարեց, թնամիները ներսէն ծաղր ը-
 նելով Վաւթի ասանկ սրատասխան խաբեցին
 թէ՛. «Վուն հոս չես մաներ. սրտաճառն որ՝
 կոյրերը ու կաղերը քեզի գէմ ելեր՝ կ'ըսեն թէ՛
 Վաւթի զոս պիտի չմանէ.», (Ինչպէս ոմանք
 կը մեկնեն, որ աս ըսել էր թէ՛ Վարսպ տեղը
 ետեւէ մի իյնար. ինչու որ՝ անանկ անտախի է
 բերդերնիս, որ միայն մեր կոյրերը ու կաղերը
 դնենը զանիկայ սրահելու նէ՛ մարդ չկրնար անոր
 ուժ հասցընել առնել): Բայց աս խօսքը Վա-
 լիթ անոնց վրայ դարձուց, իր զօրապետներուն
 խոստացաւ որ՝ «Ավ որ բերդին վրայ վազէ առ-
 նէ՛ և ան կոյրերը ու կաղերը ջարդէ անիկեց վեր-
 ցրնէ նէ, անիկայ իմ զօրապետս ըլլայ.», Աջ
 քաջութիւնս Յովաք որդի Եարուհեայ ըստա-
 ծը կատարեց, որ վրանին վազեց առաւ: Վաւթի
 ըսածին պէս ըրաւ. և ասով իր զօրապետու-
 թիւնը նորէն հաստատուեցաւ: Վաւթի ալ
 հոն իրեն նորէն քաղաք շինեց, և անոր մէջը իր
 փառաւոր թագաւորահոն սրաշարը ադնիւ փայ-
 տերով, որ Քիրամ Տիրոսի թագաւորը իրեն
 իրկեց: Ասքը այլաղջի Վոզտացիները Երբոր ի-
 մացան որ Վաւթի ասանկ օրէ՛ օր կը մեծնայ
 կ'ուժովնայ, վախնալով թէ՛ օր մը յանկարծ վրա-
 նին ելլէ՛ անոր համար իրենք առանց իմացընե-
 լու մէկէն Իսրայելացոց երկիրը թափեցան,
 ու Բեթղեհեմի և Արուսաղէմի մէջ տեղը բա-
 նակնին դրին: Վաւթի ալ Արտաւձոյ հարցուց՝

ու այնպէս ասոնց վրայ որ եկաւ, ան ատենը սաստիկ տաքուն Վաւիթ ծարուեցաւ, ու ինքիբէն զրուցեց. « Հայ թէ, ըսաւ, մէկը ինծի Ռեթզեհեմի դրան քովի հօրէն ջուր մը բերէր՝ որ խմէի ծարաւս անցնէր. » Եւ որ լսեցին՝ իրեք հօգի իր քաջ զինուորներէն շատ մը վաղեցին գացին թշնամիներուն բանակը ճգրեցին մէջը մտան ու մէկ ամանով մը ան ջրէն քաշեցին ատին Վաւիթ բերին: Վաւիթ երբոր աս բանըս ատաւ՝ սիրտը լեցուեցաւ, « Վաւ լիցի, ըսաւ, որ ատ մարդիկներուն արիւնը ես խմեմ, որ իրենց կեանքը մեռնելու վտանգի մէջ դրած անանկ բերին ինծի. » ու չխմեց Ետուծոյ նախրեց ան ջուրը: Կտե ան թշնամիներուն վրայ քաշելով յաղթեց, և անանկ չարաչար հարսծեց որ՝ իրենց ուրիշ բաներուն հետ կուռքերնին ալ հոն թողուցին անանկ փախան:

Գ. Լ. Ո Ւ Խ Ժ Բ .

Դասիր՝ Աստուծոյ սաստանակը կը վերցրնէ
Երուսաղէմ կը տանի:

Ըմ աշխարհի 2959: (Բ. Թագ. 2: — Ե. Մնաց. 39:)

Ընկէց ետքը աստուածային օգնութեամբ ուրիշ յաղթութիւններ ալ ըրաւ Վաւիթ այլազիններուն դէմ. և ամէն կողմանէ իր բանը աջողերթալով, ուղեց որ ՚ի շնորհակալութիւն Ետուծոյ բարերարութեանցը՝ Ետուծոյ տապանակը Վարիաթարիմէն վերցրնէ՝ իր նօր շինած Երուսաղէմ քաղաքը բերէ հանդէսցրնէ: Ուստի բոլոր Եսրայէլացոյ մեծամեծները և Վ. և.

օացիները մէյտեղ եկած՝ անանկ եօթանասուն
 հազար մարդով Արարիսթարիմ գացին, Վճինա-
 դաբի տնէն տապանակը վերցուցին մէկ նոր սայ-
 լի մը վրայ դրին, և ուրախութեամբ առջևէն
 կերպ կերպ նուագարաններ (այսինքն սաղեր)
 չալելով, և Վստուծոյ գովասանքներ կարդալով,
 ու ինքը Վաւիթ ալ հագուած կապուած մէյ-
 տեղ առջևէն պար ցատքելով՝ անանկ ճամբայ
 ելան տապանակը կը բերէին: Արբոր հասան
 Վեյուն ըստած մէկ տեղ մը, սայլին կովերուն
 մէկը անկարգ քալելով տապանակը ծռեց. ան
 ատենը Ողա զևտացին ալ Վճինադաբի տղան որ
 տապանակին քովէն կ'երթար, (ինչպէս կ'ըսեն՝
 վախնալով որ չըլլայ թէ կործանի) ձեռքը որ
 երկնցուց բռնեց տապանակը, ան տեղը Վս-
 տուած զինքը պատժեց, որ յանկարծակի գետի-
 նը փռուեցաւ մեռաւ: (Վս պատիժս Վստուած
 իրեն տուաւ կ'ըսեն, կամ որ՝ թէպէտ Ողան
 զևտացի էր՝ բայց քահանայ չէր, որ անոնց միայն
 կ'իյնար անմիջապէս ծառայել տապանակին Վս-
 տուծոյ. և կամ որ քահանայքը օրինաց դէմ
 ուսերնին վրայ չէին վերցուցած տապանակը,
 հապա սայլի վրայ դրեր էին): Վս սոսկալի պա-
 տիժս որ հանդրպեցաւ, ամէնքը զարհուրեցան.
 և անկէ ետև Վաւիթ ալ վախցաւ տապանակը
 թագաւորական քաղաքը իր տունը տանելու.
 ուստի մտածեց որ ան տեղուանքը մօտ՝ Վբեդ-
 դար գեթացի ըստած զևտացիին տունը տանին
 դնեն, ինչուան որ տեսնէ բանը ուր կը վերջա-
 նայ: Իրեք ամսէն ետև երբոր լեց իմացաւ
 Վաւիթ, որ տապանակին սրտաձառովը օրհնեց
 Վստուած Վբեդդարի տունը տեղը՝ որ ամէն
 բարիքներով ու յաջողութեամբ լեցուեցաւ, ան

ատենը ինքն ալ սիրտ առաւ, ուղեց որ նորէն անկէց տապանակը վերցընէ առնէ Արուսաղէմ տանի, և հոն մասնաւոր անոր համար շինուած խորանին մէջը դնէ: Ուստի առջինէն աւելի պատրաստութեամբ ու հանդիսաւորութեամբ՝ կարդացմունքներով և ծնծղաներով՝ դնաց անկէց տապանակը վերցուց, ու այնուհետև Վ և տացիներուն և քահանաներուն ուսը դրած բարձած՝ անանկ աւելի մեծարանքով առաւ Արուսաղէմ բերաւ:

Ըս երկրորդ անգամ տապանակը բերելու հանդիսութեանս ատենը՝ Վաւիթ ալ որ բեհեղէ պատմութեանը, (կամ բարակ խումաշէ վերարկուն) հաղած՝ ուրախութեամբ տապանակին առջևը կը չալէր ու պար բռնելով որ կը խաղար, և զան վերէն պատուհանէն տեսնելով Սեղբող Սաւուղի աղջիկը, իրեն անհորհր բան մը երևցաւ Վաւիթ ըրածը. ուստի երբոր հանդէսը լմրնցաւ՝ Վաւիթ տուն դարձաւ նէ, Սեղբող ծաղըր ընելով առջևը ելաւ, « Ըսոր ըսաւ, ինչպէս փառաւոր կ'երևար Վարայեւացոց թագաւորը, որ անանկ սոթտուած իր ծառաներուն և աղախիններուն առջևը՝ մէկ կաքաւչի (կամ չէնկիի մը) պէս կը խաղար ու կը ցատքէր », Վաւիթ ալ իրեն պատասխան տուաւ. « Ընանկ է, ըսաւ, Ըստուծոյ առջևը կը խաղամ. օրհնեալ է տէր Ըստուած, որ մէկդի ձգեց քու հայրդ և եղբայրներդ, ու զիս առաջնորդ ընտրեց դրաւ իրեն Վարայեւացոց ժողովրդոցը վրայ. իրաւ է, կը խաղամ պար կը ցատքեմ Ըստուծոյ առջևը, որ ասանկ քու գինացդ ցած բան մը կ'երևամ, ու աղախիններուն առջևը, ինչպէս ըսիր նէ, կը փառաւորուիմ », Ընոր համար Ըս-

տուած ալ՝ (ինչպէս կը յուշընէ աստուածաշունչը), աս բանիս պատիժ՝ Սեղբողի ամենեւին զաւակ չտուաւ :

Գաւաթ երբոր տապանակը Արուսաղէմ բերաւ՝ ու անոր համար շինած խորանին մէջը որ դրաւ, ետքը սկսաւ խղճմանքը զարնել թէ՛ Վնչպէս կ'ըլլայ որ ես լայն ու արձակ փառաւոր պալատի մէջ բնակիմ, ու Մտուծոյ տապանակը ան պղտի խորանին մէջը անանկ կենայ, անոր համար կանչեց խորհուրդ բրաւ՝ Վաթան մարդարէին հետ, որ ձեռք զարնէ՝ Մտուծոյ մէկ իրեն արժանաւոր մեծ փառաւոր տաճար մը շինէ : Իսայ Մտուած Վաթան մարդարէն նորէն իրեն խրկեց բրաւ որ՝ «Գուն ինձի տաճար մի շիներ . հապա քեզի մէկ որդի մը պիտոր տամ, որ քու մեռնելէդ ետե՛ ան տեղդ կը նըստի, և աս պատիւս անոր պիտի ընեմ, որ իմ տաճարս ինքը շինէ . » :

Գ Լ Ո Ւ Խ Թ Գ .

Գարի ուրիշ յաղորդիւնները, ու իր մեծ մեղքը՝ և սպաշխարարիւնը :

Մժ աշխարհի 2965 : (Բ . Թագ . Ը . Թ . ԺԱ .)

Մտէ ետքը ալ ուրիշ շատ յաղթութիւններ ալ ըրաւ Գաւաթ այլազգի թագաւորներուն դէմ, ու անոնց ձեռքէն շատ տեղուանք առաւ . և իրենք որ Իօրայեւացոցմէ հարկ կ'առնէին, տակը առաւ զանոնք իրեն հարկատու բրաւ, ինչպէս Աղովմայեցիքը, Սովարացիքը, Մանացիքը, ու Մտրիքը . և ասով եւեւըք ոսկի, ար-

ծախ, սղինձ զիղեց Ղաւիթ, որ ետքը տաճա-
րը շինելու ատենը պէտք եղաւ :

Բիշ մը ժամանակ խաղաղանալէն ետև՝ հարկ
եղաւ որ Ղաւիթ նորէն պատերազմ՝ բանայ Ղ
մնացւոց վրայ . և ասոր պատճառը ան էր որ,
Ղասա ըսուած Ղմնացւոց թագաւորը Ղաւի
հետ խիտ սիրելի բարեկամ ըլլալով, երբոր ին-
քը ինկաւ մեռաւ՝ Ղաւիթ անոր Ղնոն ըսուած
տղին, որ հօրը ետևէն նստաւ, երկու դեսպան
խրկեց, որ քաղաքավարութեամբ իր կողմանէ
երթան հօրը մահուանը ցաւակից ըլլան ու միտ-
թարեն : Բայց Ղնոն իրեն իշխաններուն տուած
ծուռ խորհուրդը մտելով, (որ կ'ըսէին թէ Ղա-
ւիթ աս մարդիկը քու երկիրներդ լրտեսութիւն
ընելու խաբեր է), ինքն ալ բռնեց ան դեսպան-
ները՝ խայտառակելու համար մօրուքնին ածիլել
տուաւ, և վրայի լաթերնին մէջքէն՝ ի վար կրտ-
րած՝ անանկ նախատանքով վաընտեց քովէն :
Ղ որ լսեց Ղաւիթ՝ խրկեց իրենց ըսաւ որ Ղ-
րիքովը կենան ինչուան մօրուքնին բուսնի երկրն-
նայ . և ինքը Ղմնացւոց վրան չարաչար սրդո-
ղած՝ ուղեց որ պատերազմով անոնց ըրած քա-
մահրանքին հատուցումը տայ : Աւստի Յովաբ
զօրապետը իր կտրիճ զօրքերովը Ղմնացւոց դէ-
մը խրկեց, որ անոնք ալ առաջուց աս պատե-
րազմիս վրայ կռահ երթալով՝ ասդիէն անդիէն
չատ զօրք իրենց օգնութիւն առեր էին : Յո-
վաբ՝ իր զօրքին կէսը Ղբեսա զօրապետին ձեռ-
քը տուաւ, և կէսը ինքը առած՝ ասոնց դէմ ե-
լան, ու քաջութեամբ եօթը հարիւր պատե-
րազմական կառեր և քառսուն հազար ձիաւոր
ան պատերազմին մէջը կտորեցին, և անոնցմէ
փախչելով ասրածները իրենց տակը առին՝ Ղաւ-

Թի հարկատու ըրին : Ետքը Լ'մոնացիները աս ջարդովս չկշտացած՝ նորէն որ ուզեցին պատե-
րազմ ելլել, Վաւիթ մէյ մ'ալ խրկեց Յովաբ
զօրապետը, որ ալ ան ատենը աղէկ մը ջարդեց
զիրենք. ու առաջ քալեց ինչուան իրենց Ուա-
բաթ ըսուած Թագաւորական քաղաքը որ հա-
տաւ պաշարեց՝ և առնելու մօտ էր, խրկեց կան-
չեց Վաւիթը՝ որ ինքը գայ իր անունովը առ-
նէ : Լ'նանկ քաղաքը որ առին՝ չարաչար տան-
ջանքով սպաննեցին մէջի մարդիկը, ու շատ կօ-
ղոպուտ անկեց վերցուցին. որ ասոնց մէջը
Թագաւորական Թագը կամ ամսհհովանին խիտ
փառաւոր բան էր, տաղանդ մը ոսկի ծանրու-
թիւն ունէր, (որ ինչպէս կ'ըսեն՝ իբր տասնը-
հինգ հօխա կու գար), սուղ քարերով զարդա-
րած. որ անկէ ետեւ զանիկայ Վաւիթ ինքը ա-
ռաւ բանեցուց :

Լ'ս պատերազմիս ատենները Վաւիթ Լ'քրու-
տաղէմ իր տունը հանդիստ որ նստած էր, մէկ
որ մը իրիկուան դէմ Թագաւորական պալատին
տանիքին վրայ Ժուռ գալնինի՝ յանկարծ տե-
սաւ որ մէկ աղուոր կնիկ մը անդին աւազանին
քովը կը լուացուի կօր. Վաւիթ անոր ցանկու-
թեամբը վառուեցաւ, ու իմանալով որ ան Բեր-
սարէն է՝ Արիա քետացիին կնիկը, որ իր զօ-
րապետներէն մէկն էր, խրկեց քովը կանչել
տուաւ : Եւ անոր հետ մեղքը կատարելէն ե-
տեւ՝ երբօր ընց որ կնիկը յղի է, աս խայտառա-
կութիւնս ասանկ զոցել ուզեց. շուտ մը խաւրեց
Յովաբի քովէն Արիա քետացին Լ'քրուտաղէմ
իրեն բերել տուաւ, իբր Թէ անկեց պատերազ-
մին որպիսութիւնը տեղն 'ի տեղը իմանայ : Լ'ք-
րոր Արիան եկաւ Վաւիթի առջևը ելաւ, Վա-

ինչ պատերազմին բաները իրեն հարցրնելէն
 ետե՛ ըսաւ որ իր տունը երթայ լուսացուի սրբուի՝
 քիչ մը հանգչի : Բայց Ուրիան իր տունը չզը-
 նաց , հասցա Վաւթի պալատը ծառաներուն քա-
 վը մնաց՝ հոն պառկեցաւ : Վաւթի մը որ աւ ի-
 մացաւ , կանչեց նորէն իրեն ըսաւ որ « Նամբէ
 եկած ես՝ գնա տունդ հանգչէ » . ան ալ պա-
 տասխան տուաւ թէ՛ « Տապանակը Լստուծոյ
 ու բոլոր ժողովուրդը անգին վրաններուն ներքե-
 են , և Յովար իմ տէրս , ու քու մէկալ ծառա-
 ներդ բաց տեղը կեցեր են . ինչպէս կ'ըլլայ որ
 ես իմ տունս երթամ ուտեմ խմեմ ու կնկանս
 հետ պառկիմ » . քան լիցի որ ես առ բանդ ընեմ » :
 Լսոր մէկալ օրն ալ Վաւթի Վըրուսաղէմ բռ-
 նեց զՈւրիան , ու իր քովը աղէկ մը կերցրնելէն
 խնցրնելէն ետե , տեսաւ որ ան գիշերն ալ ճար-
 չեղաւ՝ Ուրիան իր տունը պառկելու չգնաց , ան
 ստենը Վաւթի ուզեց որ առջի գործած մեղ-
 քը մէկ ուրիշ աւելի մեծ մեղքով մը գոցէ :
 Ուստի առտուանց որ ելաւ Ուրիան իր տեղը
 ճամբելու , Յովարի մէկ դազաուկ թուղթ մը
 գրեց՝ իրեն ձեռքը տուաւ որ տանի , և անոր մէ-
 ջը կը հրամայէր որ՝ Ուրիան առնէ պատերազմին
 վտանգաւոր կողմը դնէ , ու զինքը մինաւոր թու-
 ղուն որ դարնուի մեռնի : Յովար ալ Վաւթի
 ըսածին պէս խեղճ Ուրիան անանկ անիրաւու-
 թեամբ սպաննելէն ետքը՝ երբոր իրեն խրիկց ի-
 մացուց , Վաւթի կեղծաւորութեամբ՝ առջի
 բերանը սաստիկ սրդողել ցուցուց Յովարի ան-
 խոհեմութեանը վրայ , որ առաջ վաղէր զիրենք
 վտանգի մէջ ձգեր են . բայց ետքը դարձուց բա-
 նը՝ թէ « Յովարի ըսէք որ սիրտը չկտորի . պա-
 տերազմին բանը ասանկ է , թուրը երբեմն աս

դիէն կը կտրէ, երբեմն անդիէն. ուստի դուն մի յուսահատիր, ըսաւ, նայէ որ քաղաքը առնես. : Բերսաբէն ալ երբոր խնացաւ որ իր էրիկը Աւրիան մեռեր է՝ սաստիկ սուգ մտաւ. ու սուգը անցնելէն ետեւ Ղաւթի զինքը քովը առաւ, իրեն կնիկ ըրաւ :

Բայց առ բաներուս համար խիտ բարկացաւ Մատուած Ղաւթի վրայ. ուստի այն շնութեան զաւակը աշխարհք գալուն պէս՝ խրկեց Ղաթան մարդարէն, որ դնաց Ղաւթի առջևը ելաւ, ու առ առակովս իրեն ըրած մեղքերը և անօրէնութիւնները երեսը տուաւ. «Սէկ քաղաքի մը մէջ, ըսաւ, մէկ հարուստ մարդ մը՝ ու մէկ աղքատ մը կար. հարուստը շատ ոչխարներու կովերու տէր էր. իսկ ան աղքատը ալ ուրիշ բան չունէր, հապա մինակ մէկ դառնուկ մը՝ որ իր բոլոր ունեցածովը գներ էր, ու անոր վրայ դողալով կը սրահէր. անանկ որ՝ իր զաւակացը հետ մեծցուցեր էր, և իր բերնի հացը ու ջուրը կը կերցընէր, և իր ծոցը կը սրտկեցընէր : Այդու որ մէկ ձամբօրդ մը եկաւ ան հարուստին քովը ինջաւ. ու առ մարդս ազահութեամբ իր ունեցած ոչխարները և կովերը յիմըշելով՝ գնաց քաղեց առաւ ան խեղճ աղքատին մէկ հատիկ դառնուկը, ու մօրթեց իրեն եկած հիւրին (այսինքն միտաֆիրին) առջևը զանիկայ դրաւ որ ուտէ. : Մը որ լսեց Ղաւթի, անանկ սրդողեցաւ կրակ կտրեցաւ որ Ղաթան խօսքը չմընցած՝ ինքը ցատքեց ըսաւ թէ, «Մատուած վիայ որ՝ մեռնելու արժանի է աս բանը ընողը, ու պէտք է որ եօթը հեղ տայ վճարէ ան դառնուկին տիրոջը. : Մն առենը Ղաթան ալ դարձաւ համարձակութեամբ Ղաւթի երեսը զտրկաւ :

«Վա՛ն ես, ըսաւ, ան մարդը, որ աս բանը
 բրիր. տէր Աստուածը Խորայելի քեզի կ'ըսէ որ՝
 Այս քեզ թագաւոր օժեցի բոլոր Խորայելացոց
 վրայ, ու քու տիրոջդ տեղը նստեցուցի. և քեզի
 այսչափ բարիքներ ընելէս ետև՝ դուն իմ օրէնքս
 կոխես, Աւրիա քետացիին կնիկը յափշտակես,
 և աս հերիք չէ՝ զինքն ալ հաւատարիմ ու ան-
 մեղ մարդը անդ թու թեամբ այլազգիներուն ձեռ-
 քը մնանես սպաննես: Աւտի, ըսաւ, չկարծես
 թէ ասոր պատիժը պիտի չբաշես, հասպա ասանկ
 գիտնաս որ՝ թուրը յաւիտեան պիտի քու տնէդ
 չպակսի. ու՝ քու կնիկներդ ալ թողում որ ուրի-
 շը իայտառակէ. դուն աս մեղքերս, ըսաւ, ու-
 ղեցիր որ գաղտուկ ընես, բայց ես յայտնի ամե-
 նուն աչաց առջև պիտի ընեմ աս ըսածներս:»
 Վաւիթ Աստուծոյ կողմանէ աս յանդիմանու-
 թիւնները որ լսեց՝ շուտ մը ըրածին վրայ զգճաց
 ու խոնարհութեամբ մեղայ Տեառն ըսաւ: Վա-
 թան ալ իրեն պատասխան տուաւ թէ՝ «Աս-
 տուած մեղացդ թողութիւն կու տայ՝ որ դուն
 չմեռնիս, բայց մեղացդ պատիժ՝ ան քու Հնու-
 թեամբ ծնած որդիդ մեռնի:» ու ըսածին պէս
 եղաւ, շատ չանցաւ՝ տղան հիւրնդցաւ մեռաւ:
 Ասորը Աստուծոյ օրհնութեամբը Վաւթի հա-
 բազատ կնիկ եղաւ Բերտաբէն, և անկէց ծնաւ
 Սողոմոնը, ու Աստուած Վաթան մարգարէին
 ձեռքովը՝ Յեզեզի կանչել տուաւ անոր անու-
 նը, որ սիրելի Աստուծոյ ըսել է: Թէպէտ ինչ-
 պէս ըսինք՝ աս ըրած մեղքերուն կատարեալ թու-
 դութիւնը առաւ Վաւիթ՝ ճնարիտ զգճումս
 մեղայ որ դուչեց ու ապաշխարեց, բայց մեղացը
 պատիժները մնաց որ քաշէ, ինչպէս կը տեսնենք
 աս ետևի դիտուն մէջը:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Արխոդոսի անբէն Դարի քառած նեղութիւնները իրեն
մեղացր պատիժ :

ԸՄ աշխարհի 2974 . 2980 . 2984 . (Բ . Թագ . ԺԳ . ԺԴ .
ԺԵ . ԺԶ .)

Պաւլիթ՝ իր Մասքա ըսուած կնիկէն երկու
զաւակ ունեցաւ , մէկը մանչ՝ որ Մբխողոմ կ'ը-
սուէր , և մէկալը աղջիկ՝ անունը թամար : ՄԳ
Մբխողոմն մէկ աննման գեղեցկութիւն մը ու-
նէր , որ բոլոր Երբայեւացուց մէջը անոր պէս ա-
զուոր չկար՝ ու լեցուն գեղեցիկ մաղերով . նաև
իրեն թամար ըսուած քրոջը աղուորութիւնն ալ
իրմէ վար չէր մնար . անոր համար Մնն Պաւ-
լի աղաց մէջի անդրանիկը սաստիկ ցանկու-
թեամբ աս թամարիս աչք զարկաւ . և խա-
բէութեամբ որ զանիկայ ձեռք ձգեց սղծեց , ու
կտրը չարաչար ատելութեամբ քովէն վարնտեց ,
Մբխողոմ թամարի համար Մննի վրայ ռիս պա-
հելով՝ ետևէ էր որ մէկ ճամբով մը զինքը սպան-
նէ : Սաստի իրեք տարիէն ետև Մբխողոմ փա-
ռաւոր կոչուեց ուրախութիւն մը ըրաւ Աբուսա-
ղեմէ գուրս իր գեղը . և հոն իր մէկալ եղբայր-
ներուն հետ Մննն ալ չար մտքով ետևէ ինկաւ
որ գայ : Աբբոր ասոնք կերան խմեցին , և Մն-
նի ալ զլուին որ տարցաւ , ան ատենը Մբխողոմ
իր ծառաններուն ձեռքովը Մննը մեռցուց . և աս
պատճառով ամէնքը ցիրուցան եղան , ու ինքը
Մբխողոմ ալ ելաւ Պետուր ըսուած այլազգի-
ներուն երկիրը փախաւ : Մոր վրայ շատ սրտա-

դող քաշեց Վաւիթ, ու սաստիկ բարկացեր էր Վաթիսողոմի վրայ. բայց իրեք տարիէն ետե Յովար զօրապետը մէջ մտաւ, ու վարպետ ճամբով մը Վաւիթէն հրաման առաւ՝ որ երթայ Վաթիսողոմը Արուսաղէմ գարձընէ բերէ. միայն թէ զայ իր տունը նստի՝ պալատը չերթայ Վաւիթի առջևը չերեւայ:

Վաթիսողոմ երկու ամիս անանկ իր տունը կենայէն ետե՝ ըրաւ չըրաւ նորէն Յովարի ձեռքովը զնաց հօրը հետ հաշտուեցաւ. ու անկէ ետքը ալ կամաց կամաց սկսաւ իր հօրը կենացը և անոր թագաւորութեանը որոգայթ լարել, որ զանիկայ վար ձգէ՝ ինքը տեղը նստի: Աստի պինտ առաջ նայեցաւ որ ժողովրդոց սիրտը վատարկի. ամէն օր ձիով ծառաները առջևէն՝ կանուխ կելլէր դուռը կ'երթար, ու ով որ կու գար՝ որ իր վէճը դատաստանը թագաւորին առջևը տեսնէ կտրէ, Վաթիսողոմ ասոր դէմը կ'ելլար՝ սիրով իրեն կը հարցընէր. « Ասկից եկեր ես, ինչ բան ունիս », և անոր դանդատը լսելով՝ սրտացաւ կ'ըլլար իրեն. « Վիսնս, կ'ըսէր, որ թագաւորը մէկ մարդ մը չէ գրեր որ աս բաներս հողայ. ուր էր որ ես ձեզի դատաւոր ըլլայի, ու ամենուն պիտանաւորութիւնը տեսնէի հողայի », և թէ որ մէկը առջևը կ'ելլէր իրեն ծուելու բարեւելու, շուտ մը կը վազէր Վաթիսողոմ կը զրկէր կը պագնէր զանիկայ: Չորս տարիի չափ այսպիսի կեղծաւորութեամբ և խաբէքայութեամբ ժողովուրդին սիրտը իրեն քաշելէն ետե, հօրմէն սուամնէ հրամանն ուզեց որ Վեբրոն քաղաքը երթայ հոն իր ուխտը կատարէ, որ փախըստականութեան ատենը՝ Վստուծոյ ըրեր էր կ'ըսէր: Արքայը ասանկ Վաթիսողոմ երկու հարիւր

Տողի բանի եկող մարդիկներէն հետը առած Վերբոն գնաց, հոն իր թագաւորութեան խորհուրդը դուրս հանեց . և ան որ լսեցին՝ գրեթէ բոլոր Իսրայելացւոց ժողովուրդը հետը մէկ եղան, Վաւիթը թողուցին զինքը թագաւոր ճանչցան . և ասոնց հետ Մ.բիստօփէլ ըսուած Վաւթի խորհրդակիցը՝ որ շատգէտ մարդ մըն էր, ինքն ալ Վաւթէն բաժնուեցաւ Մ.բիստղոմի քովը գնաց, որ իրեն խորհուրդ տայ՝ ճամբայ ցուցնել, երբոր ալ ելեր դէպ ՚ի Արուսազէմ՝ Վաւթի վրայ կը քայլէր :

Մ.բաներս որ լսեց իմացաւ Վաւիթ՝ չորս զին ջուր կտրեցաւ, և աղէկ հասկընալով որ աս Մատուծոյ բանն է՝ ճար չկայ դէմ կենալու, զինքը Մատուծոյ ձեռքը յանձնելով՝ իր քովը դրանուած քիչ մը զօրքը հետը առած ինքն ալ Արուսազէմէ ելաւ որ փախչի, երթայ երեսը պահէ : Մ.բ.ն ատենը Սաղովկ քահանայապետն ալ բոլոր քահանաները մէյտեղ տապանակն որ վերցուցին՝ որ հետ առնեն անանկ երթան, Վաւիթ ետ դարձընել տուաւ . « իմէ որ, ըսաւ, Մատուած զիս արժանի ըրեր է նէ՛ նորէն կը դառնամ իր փառաւորութիւնը կը տեսնամ . չէ՛ նէ՛ ահա իր ձեռքն եմ, ինքը ինչպէս կը կամի նէ անանկ ընէ » : Ատքը Սաղովկայ սպարապետց որ՝ ինքը և իր տղաքը հոն կենան, որ Մ.բիստղոմի ընելիքները գաղտուկ իրեն խրկեն իմացընեն . և ասոնցմէ ՚ի զատ՝ իր Վ.ուսի արաբացի ըսուած բարեկամին ալ՝ Վաւիթ սպարապետց որ Մ.բիստղոմի քովը երթայ, ու անոր հետը երեսէն բարեկամութիւն ցուցընելով՝ Մ.բիստօփէլին տուած խորհուրդը փձացընէ, և ինչ որ Մ.բիստղոմ պիտոր ընէ՛ նէ՛ իմանայ, ու իրեն խրկի

խնայողնէ : Վաւիթ բանը ասանկ կարգի դնելէն
 ետև լալով ու բուսիկ ուրով երբոր ճամբայ ելաւ
 կ'երթար , մէյ մ'ալ անդիկէն իրեն դէմը ելաւ
 Սեմէի ըսուած մէկ մարդ մը Սաուդի ազգական
 ներէն , որ Վաւիթի հազար նախատանք տալով
 վրան քարեր կը նետէր , ու քամահրելով կ'ըսէր .
 « Այլիւ կորիւր , արիւնտէր անօրէն մարդ . հիմա
 ըստուած քու գլուխդ բերաւ թափեց Սաուդի
 տանը արիւնը . դուն անոր թագաւորութիւնը քա
 շեցիր աւիր , անոր համար ըստուած ալ քու ձեռ
 քէդ առաւ ու ըրիտղում տղիդ տուաւ , և ուրիշին
 բրածդ քու գլուխդ դարձուց , , : Ընտանը ը
 բեսաա զօրասէտը (Յովարի եղբայրը ալ չգիտա
 ցաւ ասոր , դարձաւ Վաւիթի ըսաւ . « Ընտան
 է' որ մէկ սատկած շուն մը ասանկ կը հայհոյէ
 իմ տէր թագաւորս . ես' ալ չեմ կրնար համբե
 րել , հիմա կ'երթամ անոր վրայէն գլուխը կ'առ
 նեմ , , : Վաւիթ ալ իրեն սրդողելով « Չեղի
 ինչ , ըսաւ , թող տուէր որ ընէ . ըստուած ա
 նանկ կ'ուզէ' որ անիկայ Վաւիթը անիծէ ու
 հայհոյէ , ով կրնայ իրեն դէմ բան ըսել . ահա
 իմ որդիս որ ինձմէ եղած է' իմ ետևէս ինկեր'
 զիս մեռցնել կ'ուզէ , հապա ինչ պիտոր ընէ
 Սաուդի ազգականը . ուստի մի դպչիք' թողու
 ցէք , ըսաւ , որ զիս ասանկ անիծէ . կարելի է որ
 ըստուած տեսնելով աս իմ քաշած տառապանքս'
 ինձի անոր տեղը բարիք հատուցանէ , , : Վա
 վիթ ասանկ ըսելով խոնարհութեամբ իրեն
 մարդիկներովը կը քալէր առաջ կ'երթար , ու
 Սեմէին ալ ետևնին չէր զատուեր' ան նախա
 տանքները կը զրուցէր ու վրանին հող ու քար
 կը նետէր . ինչուան որ ասոնք ամէնքը յոգնած
 մէկ տեղ մը եկան ինկան' որ հանդիսն :

Եւ Վստենները Վճիտողոմ ալ մէկալ դիէն ե-
 կաւ Լքրուսաղէմ մտաւ տիրապետեց, և պինտ
 առաջ Վճիտոփէլի խորհրդովը՝ Վաւթի հոն
 տունը թողուցած կնիկները խայտառակեց: Եւ
 քը Վճիտոփէլ իրեն ըսաւ թէ՝ «Վտեն չկոր-
 սընցընենք, հապա տասուերկու հազար հողի
 ինծի հերիք է, որ շուտ մը Վաւթի ետեւէն եր-
 թամ՝ քանի որ անոր զօրքը յոգնած է, զինքը
 միայն մեռցընեմ, ու հետի եղածները քու կող-
 մըդ դարձընեմ», : Եւ խորհուրդս որ շատ գէշ
 էր Վաւթի համար՝ Վստուած իր ողորմութեամբ
 բը՝ այսպէս խափանեց, որ Վճիտողոմ աս բանս
 Վուսի արաքացիին ալ՝ (որ Վաւթի հետ, ինչ-
 պէս ըսինք, գաղտուկ սրտանց բարեկամ էր) ու-
 զեց որ հարցընէ : Վուսին ալ ըսաւ թէ՝ «Եւ
 հեղուս Վճիտոփէլ աղէկ խորհուրդ չտուաւ», -
 ինքը սկսաւ Վճիտողոմի աչքը վախցընել թէ՝
 վտանգաւոր բան է ատանկ մէկէն վրանին վա-
 զելը . «Վուսն զխտես, ըսաւ, որ քու հայրդ և
 իր հետը եղածները ինտոր ութով չար մարդիկ
 են . հապա խոհեմութեամբ պէտք է՝ որ առաջ
 զօրքդ շտոցընես՝ ու անանկ վրանին ելլես, որ
 զանոնք բոլորը մէկէն կլլես», : Վուսի ասով
 ուզեց որ Վճիտողոմ ուշանայ ետ մնայ, որ Վա-
 Վիթը փախչելու և պատրաստուելու ատեն ու-
 նենայ . անոր համար շուտ մը գաղտուկ խրկեց
 բանը Վաւթի ականջը հասցուց : Եւ խորհրդ-
 դիս՝ Վստուած կուրացուց, որ խիստ հաւնեցաւ
 Վճիտողոմ . բայց Վճիտոփէլ ասով յայտնի տես-
 նելով Վճիտողոմի կործանումը՝ ինքը գլուխը
 քաշեց ելաւ իր տունը դնայ, ու յուսահատու-
 թեանէն ինքը զինքը կախեց խղզեց :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

Արխտղամ կը ազատենուի, ու դասիր նորէն իր տեղը
կը դասեայ :

Աժ աշխարհի 2985 : (Բ . Թագ . ԺԸ . ԺԲ . Ի . ԻԱ .)

Արխտղամ երբոր ասանկ ուշացաւ, Ղաւթիմ
անդին առնն ունեցաւ որ Յորդանան գետը անց-
նի . ու նորէն զօրք ժողովեց իրէք բանակ բաժ-
նեց . և ասոնց վրան զօրապետ դրաւ Յովարը,
Աբեսանն ու Աթիմի գեթացին . և ինքն ալ
ուղեց որ հետերնին մէյտեղ ելլէ, բայց զօրա-
պետները չթողուցին : Ատքը աս զօրապետները
ճամբայ դնելու առենը՝ սիրտը չդիմացաւ անոնց
սալըսալեց որ՝ Արխտղամին խնայէն չմեռցնեն :
Արբոր Արխտղամ ալ իր զօրքովը եկաւ, (որ
վրանին զօրապետ դրեր էր մէկ քաջ մարդ մը
Ամեսայի ըսուած, որ ան ալ Ղաւթի ազգական
էր), ու Յորդանան գետը անցաւ սկսաւ Ղաւթի
զօրացը հետ պատերազմիլ՝ անտեղը մէկէն քսան
հազար իրմէն ջարդուեցան . և ետքը ցիրուցան
եղած Ափրեմի ըսուած անտառին (այսինքն օռ-
մանին) մէջն որ ինկան, հոն ալ թրով մեռած
ներէն աւելի մարդ փճացաւ կորաւ Արխտղամի
դիէն : Արխտղամ ալ իր ջորին հեծած ան անտա-
ռին մէջէն փախչիլնինի՝ դէտուն մազերը մէկ կաղ-
նի մը ծառին ճիւղերուն սլլուեցաւ, ու ջորին
տակէն ելաւ՝ ինքը անանկ կախուեցաւ մնաց : Ար
բանս մէկ զինուոր մը տեսաւ՝ շուտ մը եկաւ Յո-
վարայ պատմեց . ան ալ իրեն ըսաւ թէ « Ինչու
չապաննեցիր, որ ես քեզի հիմա յիսուն սիկղար-
ծաթ՝ ու մէկ թուր մը կու տայի », : Օ ինուորն

ալ իրեն պատասխան տուաւ թէ՛ « Հազար ալ տայիր նէ՛, ես իմ թագաւորիս տղին վրայ իմ ձեռքս չէի երկնցրներ, որ մեր առջևը ձեզի ապրապրեց որ Ղբխողովի խնայէք » : Են առեմը Յովաբ ալ ըսաւ . « Հիմա կը տեսնես թէ ես ինչպէս կը մեռցրնեմ » , ու գնաց իրեք նետ Ղբխողովի սրտին կողմը զարկաւ . տասը հոգի ալ Յովաբի մարդիկը վրան հասան , հոն տեղը զարնելով մեռցուցին , ու մէկ խորունկ փոսի մը մէջ ձգեցին անոր մարմինը :

Ետքը Յովաբ փող չալելով դադրեցրնել տուաւ պատերազմը . ու երկու հոգի մէկմէկու ետեւէ՛ մէկը Ղբխմաս ըսուած , մէկալը Վուսին վազեցին եկան որ Վաւթի աւետիս տան : Վաւթի երբոր հարցուց՝ անոնցմէ խնայաւ որ Ղբխողովը մեռած է , վրան սաստիկ տրտուցաւ , ու մինաւոր տեղ մը քաշուած՝ սկսաւ լալ ողբալ ու ըսել . « Արդեակ իմ Ղբխողով , Ղբխողով որդեակ իմ , երանի թէ ես քու տեղը մեռած ըլլայի , Ղբխողով որդեակ իմ » :

Ես յաղթուածնէս ետե՛ Յովաբ զօրապետը իր զօրքերովը դարձած երբոր եկաւ խնայաւ որ Վաւթի տանը մէջը առանձին քաշուած Ղբխողովի վրան այսպիսի ողբ ու լաց կ'ընէ կոր , ելաւ քովը գնաց , և ծանր խօսքերով առ բանիս համար յանդիմանելով զինքը՝ առաւ դուռը բերաւ , որ զօրքը զինքը անանկ ուրախ տեսնելով՝ սիրտ առնեն իրեն համար քաշած աշխատանքին վրայ , որ սրտերնին կտարեր էր առ Վաւթի ըրածին պատճառովը : Բայց ասով և առջի ըրած անողորմ և յանդգնական գործքերովը՝ Յովաբ անանկ Վաւթի տէրէն ինկաւ որ , Վաւթի ան Ղմեսայի ըսուած Ղբխողովի զօրապետին

խրկեց՝ իրեն խօսք տուաւ թէ՛ « Քեզ Յովարի տեղը ինձի զօրապետ կ'ընեմ » : Եւ բանս Յովարը որ իմացաւ՝ Լ՛մեսայիին ետեւէն էր որ սպաննէ . ուստի մէկ օր մը կեղծաւորութեամբ Լ՛մեսային բարեւելնին՝ դանակը փօրը խոթեց մեռցուց , ինչպէս ատենով Լ՛բենների Սաւուղի զօրապետին ալ ըրեր էր : Երբոր բանը ասանկ դարձաւ , և բոլոր Իսրայելացւոց ցեղերն ալ Ղաւթի առջևը գացին՝ որ զինքը մեծարանքով առնեն Յորդանան գետէն ասդիս անցընեն՝ նորէն Երուսաղէմ իր աթոռը բերեն նստեցընեն , ան ատենը Սեմէին ալ հազար հօգի Ի՛ենիամի նի ցեղէն հետը առած՝ ինքն ալ արտօրաց Ղաւթի առջևը ելաւ մեծարելու համար , ու զնաց ոտքը ինկաւ՝ մեղայ ըսաւ ան իրեն ըրած նախատանքներուն համար : Լ՛բեսսա զօրապետը ան որ տեսաւ՝ « Ի՛նչ է , ըսաւ , պիտոր Սեմէին չմեռնի մի , որ Լ՛սաուծոյ օժեալը հայհոյեր է » : Ղաւթի թ ալ զանիկայ չեխելով , դարձաւ երդում ըրաւ Սեմէիին թէ՛ « Սի վախնար , քեզ չեմ մեռցընէր » : Ետև Սեմիիբոսթէ Յովնաթանի որդին ալ խոնարհութեամբ եկաւ Ղաւթէն թողութիւն խնդրեց , և պատճառը ըսաւ՝ թէ ինչո՞ւ ինքն ալ Ղաւթի փախչելու ատենը հետը չէ գանուեր , ու բանը հասկըցուց որ՝ իր Սիբա ըսուած ծառան՝ սուտ գացեր իրմէ Ղաւթի անցեր է , և անով բոլոր Սաւուղի ժառանգութիւնը իր վրայ դարձուցեր է : Ղաւթի ալ աս բանս իմանալով՝ Սեմիիբոսթէի հրամայեց որ , ան ժառանգութիւնը Սիբայի հետ մէջերնին կիսուակէս բաժնեն :

Ղաւթի երբոր փառաւորապէս եկաւ նորէն Երուսաղէմ նստաւ , ան ատենը մէկ մարդ մը

Դեհնիամինի ցեղէն Սարէէ անունով՝ Գաւթի դէմ զլուխ քաշեց . ու Յուդայի ցեղէն ՚ի զատ մէկալ Իսրայելացւոց ցեղերէն ալ շատ մարդիկ անոր հետ միաբանեցան : Յովար ու Լքեսան իրենց զօրքերովը Սարէի ետեւէն որ ինկան , անիկայ գնաց Լքէլ ըսուած քաղաքը մտաւ գոցուեցաւ . ասոնք ալ վրան դացին , և քաղաքը պաշարելով՝ պարիսպներն որ սկսան կործանել , վերէն պարիսպէն մէկ կնիկ մը խելացի խօսքերով Յովարը դադրեցուց որ բան չընէ , ու ինքը գնաց մէջ մտաւ խօսք անցուց իր քաղքի մարդիկներուն , որ Յովարի ուղածին պէս ան ապրատամբ Սարէին զլուխը կտրեցին՝ պարիսպէն վար Յովարայ առջևը ձգեցին , որ անանկ պատերազմը վերջացաւ :

Լքէ ետե իրեք տարիի չափ մէկ սով մը ինկաւ Իսրայելացւոց երկիրը . Գաւթ ալ հարցուց Լքսուծոյ , ու խնայաւ որ Սաուդի պատճառովն է եղեր ան սովին սրատիժը . ինչու որ՝ Սաուդ բռներ ջարդեր է Գաբաւոնացիները , Իսրայելացւոց՝ Յեսուայ առենի ըրած երգումին դէմ . ուստի Գաւթ Գաբաւոնացիները կանչեց իրենց հարցուց թէ՝ Լքն հատուցում կ'ուզէք որ ընեմ , : Լքնոնք ալ միայն եօթը հողի ուղեցին Սաուդի մնացած տղաքներէն կամ թոռներէն , որ կախեն մեռցրնեն : Գաւթ ալ առաւ Սաուդի երկու մնացած խորթ տղաքը , ու անոր Սերովը ըսուած աղջրկանը հինգ տղաքը՝ ձեռուրնին տուաւ , որ անանկ ողջ ողջ արևը կախած մեռցուցին . և անով սովը դադրեցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Իսրայելացիք մահաւարածամով կը պատժուին :

Սմ աշխարհէ 2987 : (Բ . Թագ . ԻԳ : — Ա . Մնաց . ԻԱ .)

Իսրայելացւոց վրայ Մտուած իրենց մեղացը համար բարկանալով՝ Ղաւթի թոյլ տուաւ որ հպարտութեամբ անոնց ամենուն համբանքը գիտնալ ուզէ , երբոր ինքը ամէն դիէն հանգրտացած բոլոր Իսրայելացւոց վրայ խաղաղութեամբ նստեր կը տիրապետէր . ուստի իր Յովաբ զօրապետին հրամայեց՝ որ երթայ ծայրէ՛ի ծայր պտրտի , ու բոլոր ժողովրդոց համբանքը իրեն բերէ : Յովաբ աս բանիս դէմ կեցաւ . « Տէր իմ , ըսաւ , ինչ պէտք է համբել . Մտուած տայ որ եղածին վրայ հարիւր այնչափ ալ եւեւնան , » : Բայց այսու ամենայնիւ Ղաւթի ասոր վրայ սատարիկ վառուած՝ խօսքը որ ուզեց քալեցընել , ան ատենը Յովաբ ալ ելաւ ինք ամսէն եւեւ ոտրտեցաւ՝ ժողվեց անոնց համբանքը բերաւ . որ ձերերէն , տղաքներէն և կնիկներէն ՚ի զատ՝ միայն Իսրայելացւոց կտրիճ մարդիկը որ պատերազմ կրնային ընել՝ ու թը հարիւր հազար ելան , ու Յուդային ցեղինը՝ հինգ հարիւր հազար : Բայր Ղաւթի աս բանս ընելէն ետեւ խղճմտանքը զարկաւ՝ թէ Մտուծոյ դէմ ըրի . ուստի շուտ մը մեղայ զօչեց Մտուծոյ թագու թիւն ինդրեց : Մտուած ալ անոր մէկալ օրը Ղադ մարգարէն իրեն խրկեց որ՝ ան մեղացը համար աս իրեք պատիժէս մէկը ընտրէ , այսինքն կամ իրեք տարի սով ըլլայ բոլոր Իս-

Իայելաջւոյ երկիրը, կամ իրէք ամիս պատերազմով ջարդուին՝ ու ինքը բարբարական ըլլայ թըշնամիներուն ձեռքէն, և կամ իրէք օր Ղստուծոյ թրին ներքեր ինկած՝ մահտարածամ ըլլայ իր բոլոր տէրութեանը մէջ, Ղն ատենը Ղաւիթ սաստիկ նեղած՝ պատասխան տուաւ թէ՛ « Որ դին դառնամ նէ՛ գէշ է. բայց ինչ որ է նէ, ըստ, աւելի լաւ է որ Ղստուծոյ ձեռքը իյնամ՝ որոյ ողորմութիւնը շատ է, և մարդու ձեռք չիյնամ », ուստի աս իրէքէս մահտարածամը ընտրեց: Որան շատ չանցաւ՝ շուտ մը մահը սկսաւ, և անանկ սաստիկ կը ջարդէր որ՝ ան առտուրնէ ինչուան կէսօրուան ատենը եօթանասուն հարհար հօգի մեռան: Ղաւիթ երբոր տեսաւ հըրեշտակը Ղստուծոյ՝ Ունա յերուսացի ըսուած մէկ մարդու մը կալին (այսինքն հարմանին) վրայ, որ օդը կեցած սուրը ձեռքը աս պատիժս կու տար ժողովրդոցը, խոնարհութեամբ աղաչելով՝ « Տէր, ըսաւ, ևս հովիւս մեղանչեցի, աս բոլոր չարիքներուս պատճառ ևս եմ, ատ ոչխարները ինչ մեղք ունին. ուստի ատենը թող տուր, ու զիս և իմ տունս պատժէ », Ղն ժամանակը Ղստուած ալ գութ շարժեցաւ վրանին, և նորէն Ղադ մարդարէին ձեռքովը Ղաւիթ հրամայեց որ չուշանայ՝ ան կալին մէջը շուտ մը սեղան մը շինէ՝ վրան Ղստուծոյ զոհ մատուցանէ, որ անով զՂստուած հաշտեցնէ: Ղաւիթ ալ շուտ մը գնաց, ան կալին տեղը՝ իրեն եղներովը և սայլերովը Ունայէն ստրկով գնեց. հին սեղան շինեց՝ ու վրան եղները Ղստուծոյ ողջակէզ բրաւ. որ ասով ան մահուան պատիժը դադրեցուց Ղստուած: Այլ աս ան տեղն է կ'ըսեն՝ ուր որ ետքը Սողոմոնի տաճարը շինուեցաւ:

ԳԼՈՒԽ ԺԷ

Դասիր իր ետեկն Սողոմոնը քաղասոր կը ղեկ, ու
 ինքը կը վախճանի :

Մտնող 2990 : (Գ . Թագ . Ե . Բ .)

Երբոր Գաւիթ ալ ծերանալու եղաւ , Բզո-
 նիա ըսուած իր տղոց մէջը մեծը՝ հայրը չմեռած
 ուզեց որ թագաւորութեան պատրաստութիւն
 տեսնէ , որ հօրը ետեկն ինքը նստի . և Յովար
 զօրասպետն ալ Բքիաթար քահանայապետին
 հետ մէյտեղ անոր դին բռնած՝ աս բանս կը ջա-
 նային որ սուաջ տանին . թէպէտ Գաւիթ ա-
 տենով խօսք տուեր էր որ Սողոմոնը՝ իր Բեր-
 սաբէ կնիկանը որդին իրեն ետեկն թագաւոր
 նստի : Սէկ որ մը Բզոնիան աս իրեն բարե-
 կամներուն և ուրիշ իշխաններուն՝ Երուսաղեմ
 դուրս տեղ մը մէկ մեծ սեղան մը որ ըրաւ , ա-
 ատենը՝ Եթան մարգարէն գնաց աս բանը Բեր-
 սաբէին հասկըցուց , ու ասքսպրեց որ երթայ
 Գաւիթի միտքը ձգէ իր Սողոմոն տղին վրայ ը-
 րած խոստմունքը . “ Գուն գնա , ըսաւ , որ ետ-
 քը ես ալ վրայ կը հասնիմ՝ ու ըսածներդ կը
 հաստատեմ . ” Բերսաբէն ալ գնաց Գաւիթ
 առջևը երկրպագութիւն ըրաւ ու ըսաւ . “ Տէր ,
 հրամանքդ ինձի երգում ընելով խօսք տուիր որ
 Սողոմոն տղաս ետեկդ թագաւոր նստեցընես .
 ու հիմա Բզոնիան առանց քու գիտնալուդ թա-
 գաւորութիւն կ’ընէ . բոլոր Բորայելացիները
 քու բերանդ կը նային՝ որ չմեռած իրենց թա-
 գաւորը ցուցընես . չէ նէ , ըսաւ , ետեկդ Բզո-

սիան կ'ելլէ ու զիս ալ Սողոմոնի հետ թրէ
 կ'անցընէ , : Ըս որ Քերսարէն կը զրուցէր , ան
 ժամանակը Վաթան մարգարէն ալ վրայ եկաւ ,
 ու ինքն ալ երկրպագութիւն ընելով Պաւթի
 սկսաւ հարցընել . “ Տէր թագաւոր , հրամանքդ
 ըսեր ես որ Ըդոնիան ետեւէդ թագաւոր նստի .
 ինչու որ՝ այսօր դացեր մէկ փառաւոր սեղան մը
 ըրեր է , ու բոլոր թագաւորի տղաքը և զօրա-
 պեաները հոն կանչէր է , Ըքիաթար քահանան
 ալ մէյտեղ , ու ամէնքը կերած խմած՝ կէշէ
 արչայ Ըդոնի կ'ըսեն . միայն զիս ու Սաղոմի
 քահանան , ու Քանեա որդի Յովիդեայ զօրա-
 պետը , ու Սողոմոն տղադ՝ թողուց չկանչեց , :
 Ըն ատենը Պաւթի Քերսարէն քոյր կանչեց ,
 ու նորէն իրեն երգուրննալով՝ ըսաւ թէ “ Իմ
 ետեւէս Սողոմոն որդիս պիտի նստի , : Ետքը
 շուտ մը հրամայեց որ Սաղոմի քահանան , Վա-
 թան մարգարէն ու Քանեան առնեն Սողոմոնը
 իր թագաւորական ջորին հեծցընեն , Պեհն ը-
 սուած տեղը տանին , և հոն զինքը թագաւոր օ-
 ճեն բոլոր Իսրայելացւոց վրայ : Այրբոր անանկ
 ըրին , ու փող չալելով չորս դին ինացուեցաւ որ
 Սողոմոն թագաւոր օճուեր է , և բոլոր ժողո-
 վուրդը պար բռնելով ուրախութեամբ՝ կէշէ
 արչայ Սողոմոն կը կանչէին , ան ատենը անդին Ը-
 դոնիայի հետը եղածները ամէնքը սարսափած՝
 վախերնուն ելան փախան ցիրուցան եղան . ու
 Ըդոնիան ալ իր զլուխը դալիքը զիսնալով ինքն
 ալ վազեց Ըստուծոյ խորանը փախաւ արաւի-
 նեցաւ , ու անկէց դուրս չելաւ՝ ինչուան որ Սո-
 ղոմոն իրեն խօսք չտուաւ՝ չըսաւ . “ Թէ որ հան-
 դարտ կենաս՝ քեզ չեմ մեռցընէր , : ու ետքը
 անանկ ելաւ իր տունը դնաց :

Դաւիթ օրէ օր ալ մեռնելու որ մտտեցաւ Սողոմոնը քովը կանչեց, և իրեն բարի խրատներ տուաւ որ Եստուծոյ սատու իրանքները ողէկ պահէ, ու Սալսեսի օրինաց ըսածին պէս արդար դատաստան ընէ, որ Եստուած ալ իր թագաւորութիւնը օրհնէ: Ետքը առ ալ ապրսպրեց որ յիշէ Յովաբի ըրած անիրաւ մարդասպանութիւնները, ու արդարութեամբ իրեն գիտցածին պէս անոնց հատուցումը ընէ՝ զինքը մեռցրնէ: ասանկ ալ Սեմէիին բանը հոգայ, անոր ըրածները իրեն չթողու՝ զան ալ մեռցրնէ: Եսէի՛ ի զատ Եստուծոյ տաճար շինելու համար Սողոմոնի ապրսպրեց յորդորեց, ամէն բաներուն օրինակն ալ ցուցուց տուաւ թէ ինչպէս պիտի ընէ: Կան ալ սոսկի մեծ գործքիս համար իր աւաջուց սրատրաստած ոսկին արծաթը և ուրիշ նիւթերը Սողոմոնի ձեռքը յանձնելով՝ սիրտ տալով՝ և օրհնելով զինքը, բարի ծերութեամբ եօթանասուն տարուան վախճանեցաւ, բոլորք քառսուն տարի թագաւորութիւն ընելէն ետեւ, ու իր շինած զարդարած Լըուսաղէմ քաղաքը թաղուեցաւ:

Դաւիթ մանկութենէն սկսած այնչափ սիրելի եղաւ Եստուծոյ որ՝ թագաւորութենէ՛ ի զատ իրեն մարգարէական շնորհք ալ տուաւ Եստուած, որով շարադրեց ան սքանչելի սաղմոսները յօրհնութիւն և ՚ի փառաբանութիւն Եստուծոյ, որ միշտ և հանապազ աղօթագիրք եղաւ ամենայն սատուածապաշտ ժողովրդոյ: Եւ ասոնք հերթէն, Կան երգումով իրեն խոստացաւ Եստուած որ Սեփայլին մարմնաւոր ծնունդը իր սղգէն ըլլայ, ինչպէս որ կը ցուցրնեն աւետարանիչները:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Սողոմոնի բազառորութիւնը :

ԱՄ աշխարհի 2990 : (Գ . Բազ . Բ . Գ :)

Սողոմոն տասուերկու տարուան էր երբոր թագաւոր օծուեցաւ . ու քիչ մը ատեն հօրը հետ կենալէն ետե՛ կրբոր սկսաւ ինքնազուխ թագաւորութիւն ընել , ան ատենը Ղդոնիա իր մեծ եղբայրը նորէն թագաւորութեան ետե՛ իյնալով զնաց Մերսաբէի աղաչեց որ երթայ Սողոմոնի իր տղին խօսք անցնէ՛ որ Մբխակ սոմնացի ըսուած կոյս աղջիկը (որ Ղաւիթ ծերութեան ատենը քովը առեր էր) իրեն կնիկ առնէ : Այրբոր Մերսաբէն միամտութեամբ աս բանը Սողոմոնի բացաւ՝ որ Մբխակը անոր տայ , Սողոմոն աս բանիս վրայ սաստիկ բարկանալով Մերսաբէի սրտասխան տուաւ թէ “ Ինչո՞ւ Մբխակ սոմնացին կ'ըսես , հապա իմ թագաւորութիւնս ըսէ որ Ղդոնիայի տամ , որ ինքը ինձմէ մեծ ալ է , ու Մբխաթար քահանայապետը և Յովաբ զօրապետը՝ խօսքի տէր մարդիկ՝ իրեն գին են ” : Աւտի շուտ մը վրան վճիտը կտրեց Սողոմոն , ու Քանեա որդի Յովիդեայ ըսուած զօրապետը իրկեց որ երթայ Ղդոնիան սպաննէ . ու Մբխաթարն ալ քահանայապետութենէ ձգեց՝ իր Մնաթովթ գեղը աքսորեց , անոր տեղը Սադովիկը դրաւ : Յովաբ աս բաներս որ լսեց , ինքն ալ իր վրայ վախնալով վազեց Մստուծոյ խորանը մտաւ ապաւինեցաւ՝ որ չբռնեն մեռցնեն . Սողոմոն անոր ալ Քանեա որդի Յո-

վիդեան իրիկեց ըսաւ որ անիկեց կլլէ . ան ալ որ
 “Օ՛րեմ կլլեր, ըսաւ, հոս կը մեռնիմ”, ան ստե-
 նը Սողոմոն Քանեային հրամայեց որ երթայ հոն
 տեղը զինքը սպաննէ, ան երկու անմեղ զօրա-
 պետներուն արիւնը իրմէ ուզելով, որ Յովաբ
 Ղաւթի կամայք դէմ խարէութեամբ սպան-
 ներ էր զանոնք . և անոր տեղը Սողոմոն Քա-
 նեան զօրապետ ըրաւ բոլոր Խորայեւացոց վրայ,
 Լատրը Սեմէին ալ առջևը կանչեց Սողոմոն, և
 իրեն վրայ աս պարտքս դրաւ որ՝ զայ Լըուսա-
 դէմ բնակի, հապա թէ անիկեց զօրս կլլելու
 ըլլայ նէ՝ սպաննուի : Իրեք տարիի չափ անանկ
 կեցաւ Սեմէին . ետև հեղ մը պատահեցաւ որ
 իր ծառաները Խորայեւացոց երկրէն փախան
 Ղեթացոց երկիրը գացին . Սեմէին ալ անոնց
 ետևէն գնաց՝ ու բռնեց Լըուսադէմ բերաւ . ան
 ատենը Սողոմոն առջևը կանչեց Սեմէին ու իրեն
 անհնազանդութիւնը և Ղաւթի դէմ ըրած ան-
 ոտրէնութիւնները երեսը տալով՝ հրամայեց Քա-
 նեային որ զան ալ սպաննէ :

Սողոմոն իր թագաւորութիւնը հաստատուե-
 լէն ետև՝ պինտ առաջ իշխանները ու բազմու-
 թիւն ժողովրդոց հետը առած ելաւ Ղաբաւոն
 ըսուած տեղը գնաց, (որ կ'ըսեն թէ Սոթեմի
 շինած վկայութեան խորանը հոն էր), որ Լը-
 տուծոյ ուխտ ընէ . և ան տեղը հազար ողջակէզ
 մատուց Լըտուծոյ : Լըտուած ալ ան գիշերը
 քնոյն մէջը Սողոմոնէի երևցաւ՝ ըսաւ թէ “Ինչ
 որ կ'ուզես նէ ինդրէ ինձմէ” . Սողոմոն ալ
 շնորհակալ ըլլալով Լըտուծոյ իր հօրը և իր վրոյ
 ցուցրցած բարիքներուն համար, որ անանկ պղծ-
 տրկուց զինքը թագաւոր ընտրեց զրաւ անհա-
 մար Խորայեւացոց ժողովրդոց վրայ, “Ուրիշ

բան, ըստ, չեմ ուզեր, միայն ինձի խնայողութեամբ աստուծոյ թիւն տաս որ՝ այսչափ ժողովուրդս կառավարեմ, ու արդարութեամբ անոնց դատաստանը տեսնեմ. ։ Ըստ Սողոմոնի ըրած խնդիրքը անանկ հաւնեցաւ Ըստուած, որ ըստ իրեն. “ Արդ՝ հեռե գուն ոչ երկայն կեանք, ոչ հարստութիւն, ոչ թշնամիներուդ դէմ յաղթութիւն, հապա միայն խնայողութիւն ինձմէ խնդրեցիր, անոր համար քեզի այնչափ խնայողութիւն կու տամ, որ քեզմէ առաջ այնպիսի խնայողուն մարդ աշխարհք եկած չըլլայ, ու քեզմէ ետե ալ պիտի չգայ. և ասկէ՛ ի զատ՝ ան որ գուն ինձմէ չխնդրեցիր՝ քեզ այնպիսի հարստութիւն տամ որ, քու օրերուդ թագաւորներուն մէջը քեզի պէս հարուստ մարդ չգտնուի. ու թէ որ իմ պատուիրանքներս աղէկ պահես, և քու հօրդ Գաւթի շխտակ ճամբէն դուրս չըլլես նե՛ք քեզի երկայն կեանք ալ տեսցնել կու տամ. ։ Ըստուն որ ելաւ Արուստակէմ քաղաքը դարձաւ Սողոմոն, հոն ալ նորէն Ըստուծոյ ողջակէզ ընելէն ետե՛ շուտ մը յայտնուեցաւ իր խնայողութիւնը պինտ առջի ըրած դատաստանովը, որ ասանկ եղաւ. ։

Արեւու աշխարհի կնիկ՝ Սողոմոնի առջեւ դատաստան ելան. ասոնցմէ մէկը կ'ըսէր թէ՛ “ Աս և աս կնիկը մէկ տուն կը կենայինք՝ ու մեզմէ՛ ի զատ ուրիշ մարդ չկար ան տանը մէջը. և ատղայ բերի. իրեք օրէն ետե աս կնիկս ալ իր տղան բերաւ. Աղաւ որ՝ մէկ գիշեր մը ասիկայ իր տղին վրայ ինկած պառկելնինի՛ տղան մեռցուցեր է, ու իմ քնոյս մէջը եկեր գաղտուկ իմ ողջ տղաս զրկես աւեր տարեր՝ իր հետ պառկեցուցեր է, ու իր մեռած տղան իմ քովս զրեր է. ։

առտուան դէմ ելլեմ ըսի կաթ տամ տղիս
 տեսնամ տղան մեռած է . ետքը աղէկ մը որ
 լուսցաւ , նայիմ որ ան իմ բերած տղաս չէ ,, :
 Սէկալ կնիկն ալ անոր դէմը ելեր կ'ըսէր թէ
 “ Ըտանկ չէ , հասցա մեռածը քու տղադ է , ու
 ողջը իմն է ,, . ու ասանկ մէյմէկու դէմ կեցեր
 կռիւ կ'ընէին : Սողոմոն ասոր ուրիշ ճար չգրա-
 նելով մայրական սիրովը ուզեց իմանալ աս բանիս
 ճշմարտութիւնը . ուստի հրամայեց որ թուր մը
 բերեն՝ ան ողջ տղան երկու կտոր ընեն , կէսը
 մէկուն՝ ու կէսը մէկաւին տան : Ըս որ լսեց ան
 ողջ տղին մայրը , սիրտը չդիմանալով իր հարա-
 զատ զաւկին վրայ՝ դարձաւ աղաչեց որ միայն
 թէ չմեռցնեն տղան , թող ողջ անոր տան . մէ-
 կալ կնիկը նորէն “ Ըէ , կ'ըսէր , ոչ ինձի ըլլայ
 ոչ անոր՝ թող կտրուի ,, : Ըս ատենը Սողոմոն բա-
 նը իմացաւ , հրամայեց որ տղան ան մեռցնել
 չուզողին տան , որ ասով իր անոր հարազատ մայր
 ըլլալը ցուցուց : Ըս Սողոմոնի ըրած խելացի դա-
 տաստանը որ Եսրայելացւոց ժողովուրդը լսեց ,
 ամէնքը անոր Ըստուծոյ տուած իմաստութեան
 վրայ զարմացան մնացին , և անկէ ետեւ սկսան
 Սողոմոնը մեծ սեպել , իրմէն սպատկաւիլ վախ-
 նալ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Սողումն տաճարը և իր պաշտօնը կը շինե : Սարս
քաղաքն իրեն տես կու գայ :

ԱՄ աշխարհի 2993 : (Գ . Թ ա գ . Ե . 2 . Ե . Ժ :)

Ինչպէս ըսինք՝ Գաւթի սրտին բաղձանքը՝
որ կ'ուզէր Բստուծոյ մէկ իրեն վայել փառաւոր
տաճար մը շինել, Բստուած Սողումնի յաջողու-
թիւն տուաւ որ գործքով կատարէ : Ուստի ա-
մէն զիէն խաղաղ ու հանգիստ ըլլալով Սողումն,
և անով հարստութիւնն ալ օրէ օր եւե՛ննալով
իր թագաւորութեան չորրորդ տարին մեծամեծ
պատրաստութեամբ ձեռք զարկաւ որ աս տա-
ճարս շինէ : անանկ որ՝ ութսուն հազար հոգի
դրաւ՝ որ լեռներէն ան տաճարին շինուածքին
պէտք եղած քարերը կտրեն, և ուրիշ եօթա-
նասուն հազար հոգի ալ՝ որ զանոնք կրեն բե-
րեն, ու աս բանուորներուս ալ վրակեցու՝ իրեք
հազար հինգ հարիւր հոգի կային : Թողունք ու-
րիշ վարպեա արուեստաւորները, որ Վիրամ
Տիրոսի թագաւորը, Փարաւոն Լչիպտացոց
թագաւորը՝ Սողումնի հետ բարեկամ ըլլալով
իրեն խրկեցին : Բս կերպովս տաճարը եօթը տա-
րիին մէջը շինուեցաւ, ու անանկ փառաւոր բան
եղաւ, որ աշխարհքիս վրայ անոր նմանը չգատ-
մուիր, թէ՛ հարստութեան զիէն, բոլոր մէջը
ազնիւ փայտերով շինած՝ ու արծաթով սկիտով
ծեփած էր, և թէ՛ վարպետաբան զարգարանք-
ներուն կողմանէ, իր ամէն պիտանաւորութեամբ
բը : Երբոր Սողումն ասանկ տաճարը լինցաւ,

ու Մատուծոյ տասարանակն ալ մեծ հանդիսաւո-
 թու թեամբ բերաւ ան տաճարին մէջը իր տեղը
 դրաւ, տասնըչորս օր բոլոր Երայելացիքը մէյ-
 տեղ ժողոված՝ մեծ տօնախմբութիւն կատարեց.
 և ան ատենը քսանուերկու հազար կով ու հա-
 րիւր քսան հազար ոչխար զօճ մատուց Մատու-
 ծոյ: Եւ ան տաճարը օրհնելու կամ Մատուծոյ
 նուիրելու ատենը՝ ինքը Սողոմոն ալ ամենուն
 առջևը թեւերը վեր տարածած սկսաւ աղօթք
 ընել, շնորհակալ ըլլալով Մատուծոյ բարեբա-
 թութեանցը, որ զինքը արժանի ըրաւ որ ան տա-
 ճարը շինէ՝ ի փառս Մատուծոյ. ու աս ալ խորն-
 դրեց որ անտեղը ժողովուրդը ինչ աղօթք և
 խնդրուածք ընէ՝ նէ, Մատուած լսէ՝ աղաչանքնին
 կատարէ: Մասնի երկայն աղօթք ընելէն ետև՝
 Մատուած ալ յայտնի հրաշքով ցուցնելով՝ որ
 աս տաճարս իրեն ընդունելի է, ան ատենը մէկ
 լուսաւոր ամսկ մը եկաւ բոլոր տաճարին մէջը
 լեցուեցաւ, ու երկինքէն կրակ ինջաւ ան ըրած
 ողջակէզները զօճերը երեց լափեց. աս բանս որ
 տեսաւ ժողովուրդը՝ ստեղծելով երեսնին վրայ ին-
 կան փառք կու տային Մատուծոյ: Ետքը ան
 գիշերը Մատուած մէյ մ՝ ալ երեցաւ Սողոմոնի,
 ու ըսաւ թէ՝ «Քու ըրած աղօթքներդ մտիկ
 ըրի, որ աս տաճարիս համար ինչ որ խնդրեցիր
 նէ կը կատարեմ. զանիկայ իմ տունս կը սե-
 պեմ, միայն թէ իմ տուած օրհնքներս և պա-
 տուիրանքներս պահես, ու Ղաւիթ հօրդ պէս
 հաւատարմութեամբ ինձի ծառայես. որ ան ա-
 տենը որդւոց որդի քու թաղաւորական աթոռդ
 կը հաստատեմ: Հասար թէ դուն կամ քու որ-
 դիքդ կամ ժողովուրդը դառնաք՝ կուրք պաշտե-
 լու որ ըլլաք, ձեզ կը ջնջեմ կը վերջընեմ աս եր-

կիրներէս, ու տա տաճարը երեսէ կը ձգեմ՝ կը
 թողում որ երթայ կործանի . . :

Տաճարը ընդնադէն ետև Սողոմոն սկսաւ իր
 թագաւորական պալատը շինել, անանկ հա-
 րուստ՝ մեծադէն ու փառաւոր՝ որ տեսնողին աչ-
 քը կ'առնէր. բովանդակ մէջի բանեցուցած փայ-
 տերը ու տախտակները սուղ և աղնիւ | Իրանան
 լերանը մայր ըսուած ծառերէն կտրուած էր. ա-
 նոր համար, ինչպէս որ կ'ըսեն, որոն անորոտին
 | Իհանան ըսուեցաւ ան պալատը : Այլ ասոր
 մէջը ամենէն փառաւոր բանը իր թագաւորական
 աթոռը (կամ թախտն) էր, որ փղոսկրէ (այս-
 ֆնքն Ֆիլափիէ) էր, սակի զարդեր անոր վրայ
 հաղուցած, վեց աստիճանով վեր կ'ելլուէր, ու
 ամէն մէկ աստիճանին վրայ երկու դիէն ալ մէյ-
 մէկ առիւծի կերպարանք շինած էր : Ասկէ 'ի
 զատ մէկ առանձին խիտ փառաւոր պալատ մըն
 ալ Սողոմոն շինեց Փարաւոն թագաւորին աղջը-
 կանը համար, որ իրեն կնիկ էր առեր. և աս
 բոլոր շինուածքներս քսան տարուան մէջը խա-
 լըսեցաւ : Ատրը ծովու վրայ նաւեր ալ շինել
 տուաւ Սողոմոն, ու Սովիեր ըսուած երկիրը
 խրկեց. ու իրէք տարին հեղ մը անկէց շատ ու-
 կի ու աղնիւ քարեր և ուրիշ հազար բարիք կը
 բերէին Սողոմոնի : Այսպիսի կերպով Սողոմոն
 իր մեծ իմաստութենէն 'ի զատ հարստութեան
 կողմանէ ալ մէկ հատիկ եղաւ, անանկ որ՝ չորս
 դին աշխարհքս իր անունը ելաւ. ու ան պատ-
 ճառով շատ մեծամեծ մարդիկ անոր տեսոյն կը
 կարօտէին :

Այսնցմէ մէկը, որ Սաբա ըսուած աշխարհ-
 քին թագուհին էր, իր զօրքերովը և ուղտերով
 ընծաներ վրան բեռցուցած Արուսադէմ եկաւ՝

որ Սողոմոնը տեսնէ, անոր խնայատու թիւնը փոր-
 ձէ նայի թէ լրացնելը իրան է մի: Աւստի եր-
 քոր ասիկայ Սողոմոնի առջևը ելաւ, ու իր միա-
 քը դրած բաները հարցուց, անկէց տեղն ՚ի տե-
 ղը ամենուն խնայատու թեամբ պատասխանը ա-
 ռաւ. ետև անոր պայտափն փառաւոր շնուածք-
 ները, ու իր սեղանին կերակուրները և հարիւ-
 րաւոր ծառաներուն կարգն ու կանոնը, ու տա-
 ճարը ըրած զոհերը, աս ամէն բաներն որ տե-
 սաւ՝ խելքը թաւաւ արմընցաւ մնաց, ու դարձաւ
 Սողոմոնի ըսաւ. « Այս հեռուանց քու խնա-
 տու թիւնդ և մեծու թիւնդ լսելով հաւտալս չէր
 ՚ի զար. բայց հիմա իմ աչքովս որ տեսայ, աս
 կ'ըսեմ որ՝ ան լրացներս կէսն ալ չէ եղեր աս ե-
 լելօք տեսածներուս. երանի, ըսաւ, անոնց որ
 միշտ քու հետդ են, ու քեզի կը ծառայեն, և
 քու խնայատու թիւնդ կը լսեն. օրհնեալ է տէր
 Աստուածը, որ Իսրայելացիները սիրելուն քեզի
 պէս մարդ վրանին թագաւոր դրեր է՝ որ արդա-
 ռու թեամբ կառախարես զիրենք: Ատորը ան
 հետը բերած պարգևները Սողոմոնի ընծայեց,
 հարիւր քսան տաղանդ ոսկի, (որ մէկ միլիոն մը
 քարա ղուռուշէն աւելի կ'ընէր կ'ըսեն), ու պա-
 տուական քարեր (այսինքն ճէվահիրներ), և
 կերպ կերպ անուշահոտ ազնիւ խունկեր (այս-
 ինքն պուհուրներ): Սողոմոն ալ աս ընծաները
 առաւ, ու ինքն ալ անոր տեղը ինչ որ ուզեց նէ
 տուաւ իրեն. ետքը անանկ ելաւ թագաւորին
 Սաբա իր երկիրը դարձաւ:

Գ Լ Ո Ի Խ Ի .

Սողոմոնի մեղքը՝ ու իրեն մահը :

Աժ աշխարհի 3029 : (Գ . Թագ . ԺԵ .)

Սողոմոն տարիքն որ առաւ՝ կամաց կամաց Մստուծոյ սիրուն պաղեցաւ , ու մարմնական ցանկութեան տուաւ զինքը . անանկ որ՝ Փարաւոնի ազջիկէն ՚ի զատ չափէն աւելի ուրիշ ալ շատ կնիկներ առաւ այլազգի կուսպաշտներէն . որ աս բանը Մստուած օրինաց մէջը Սորայելացւոց արգելէր էր : Ատքը այսպիսի անհաւատ կնիկներուն կամքը կատարելու համար՝ չէ թէ միայն անոնց կուռքերուն տաճարներ շինեց , հապա ինքն ալ սկսաւ ան սուտ աստուածները պաշտել՝ իրեն կնիկներուն հետք անոնց առջևը զոհ մատուցանել : Մտք համար Մստուած ալ սաստիկ բարկացաւ Սողոմոնի , ու ըրա՞ծ ասկերախտութիւնը երեսը զարնելով , (որ իրմէն այսչափ բարիք առած մէկդի ձգեց՝ դնաց սուտ կուռքերուն ետեւէն ինկաւ) իրեն ըսաւ որ՝ « Մհա քու մեղացող պատիժ՝ ձեռքէդ կը պատուեմ կ'առնեմ քու թագաւորութիւնդ , ու քու ծառայիդ ձեռքը կու տամ : Բայց աս բանս , ըսաւ , իմ հաւատարիմ Ղաւիթ ծառայիս սիրոյն համար քեզի իննայելով՝ քու օրդ չեմ ըներ , և բոլորովին թագաւորութիւնդ ալ քու ազգէդ չեմ առներ , հապա մէկ դաւաղան մը կամ ցեղ մը կը թողում քեզի » : Ատքը Մստուած ինչպէս որ ըսաւ՝ ընելիքը պատրաստեց . որ Սողոմոն աչքը չգոցած՝ երկու հողի այլազգիներէն , մէկը Մգեր ըսուած ,

մէկալը Սասան, իրեն դէմ գլուխ քաշեցին, ու
 թնամութիւն կ'ընէին Իսրայելացւոց հետ :
 Ասոնցմէ 'ի զատ՝ մէյ մըն ալ Հերոսովամոր
 դի՛ Եարատայ ըսուած, Իսրայելացւոց մէջէն Ե
 փրեմի ցեղէն՝ որ Սողոմոնի ծառայութեան մէջն
 էր, Ասուած Աբիա սիրճնացի մարդարէն ասոր
 խրկեց, որ նոր լաթ մը վրան առած եկաւ Հե
 րոսովամի քովը, ու ան լաթը սրատեց տասուեր
 կու կտոր ըրաւ : Ատե անոր տասը կտորը Հե
 րոսովամի ձեռքը տուաւ ըսաւ թէ՛ : « Ասուած
 պիտի այսպէս Սողոմոնի թագաւորութիւնը սա
 տուէ և անկէց տասը ցեղին տէրութիւնը հա
 նէ քեզի պիտոր տայ, ու միայն երկու ցեղը ա
 նոր տղին պիտի թողու, որ երթայ Երուսաղէմ
 թագաւորութիւն ընէ : ան ալ Վաւթի սիրոյն
 համար, և աս բանիս պատճառն որ՝ Սողոմոն ա
 պերախտութեամբ զԱսուած մէկ զի ձգեց՝ զը
 նաց գարշելի կուռքերուն ետեւէն ինկաւ : Ա
 դուն ալ, ըսաւ, թէ որ Ասուածոց պատուիրանք
 ները պահես, ինչպէս իմ Վաւթի ծառաս ը
 րաւ, քու վրայ ձեռք կը դնեմ, որ որդւոց որդի
 թագաւորութիւնը քու անկզ չորակսի : Ա
 բանս երբոր Սողոմոնի ահանջը հասաւ, ուզեց
 որ Հերոսովամը բռնէ մեռցընէ : ան ալ շուտ մը
 փախաւ Եգիպտացւոց թագաւորին քովը գնաց,
 ու անկէց չգարձաւ, ինչուան որ Սողոմոն մե
 աւ : որ բոլոր քառսուն տարի թագաւորութիւն
 քշեց : Ատ վարդապետներ կ'ըսեն՝ որ Սող
 մոն ետքերը խեղքը վրան ժողովեց ու ըրած մեղ
 քերը սպաշխարեց, և ան ատենը ան Սողովող
 ըսուած գիւրը գրեց աշխարհքիս ունայնութեա
 նը վրայ, որ ասանկ կը սկըսի : Սնայնութիւնն ու
 նայնութեանց՝ ամենայն ինչ ընդունայն է : Վայց ու

րովհետև աստուածաշունչը իր մեղքերը պատ-
մելէն ետև՝ անոր դարձին վրայ յայտնի բան մը
չլիչեր, անոր համար ինչուան աս օրս տարակու-
սանքի տակ կը սեպուի անոր փրկութիւնը կամ
դատապարտութիւնը, թէպէտ և իր զրաճները
աստուածաշունչ զրոյց կարգին մէջն է :

Գ. Լ. ՈՒԻՍ ԻԱ.

Իսրայելացոց քաղաքորսիներ երկուք կը բաժնուի :

Մատթ. 23 : 30 (Պ. թագ. ձԲ : — Բ. Մնաց. ձ.)

Սողոմոնի մեռնելէն ետև՝ անոր, ինչպէս կ'ը-
սեն՝ մէկ հատիկ մանչ զաւակը Սորովամ ը-
սուած, երբոր Սիկիմ քաղաքը գնաց, որ բոլոր
Իսրայելացոց մեծամեծները հոն ժողված՝ զին-
քը հօրը տեղը թաղաւոր դնեն, և ան վերը ը-
սուած Զերօրովամն ալ հետերնին, Իսրայելա-
ցիք պինտ առաջ Սորովամի աս խնդիրքս ըրին.
“Քիչ մը, ըսին, մեզ թեթևցուր ան հօրդ
զրաճ ծանր տուրքերէն, որ քեզ թաղաւոր ձանչ-
նանք՝ ու քեզի աղէկ ծառայենք” : Սորովամ
ալ “Իրեք օրէն ետև եկէք, ըսաւ, որ ատոր
պատասխանը ձեզի տամ” : ուստի գնաց առաջ
Սողոմոնի խորհրդատու ծերերուն հարցուց աս
բանս. անոնք ալ մէկ բերան իրեն խորհուրդ
տուին որ՝ անոնց ուղածը ընէ, առջի բերանը
հետերնին անուշութեամբ վարուի սրտերնին
վաստրկի, որ ետքը իր ուղածին պէս զանոնք կա-
ռավարէ : Բայց Սորովամ աս ծերերուն տուած
խելացի խորհուրդը հերիք չսեպեց, նորէն կան-
չեց խորհուրդ հարցուց իրեն բարեկամ տղոցը,
(կամ իրեն սոյտաշ ձահիլներուն). անոնք ալ

մէկալ ճերերուն ներհակ՝ տուն տուն որ ասանկ պատասխան տայ ժողովրդոցը . « Վիտնաբ ըսէ , որ իմ պինտ պզտի մատս հօրս մէջքէն հասա է . հայրս ձեր վրայ ծանր բեռ դրաւ , ես ան բեռանը վրայ նորէն պիտի եւեւեցնեմ . հայրս ձեզ գաւազանով կը ձեծէր , ես ձեզ քուքով (կամ փշոտ թօփուզով) պիտի ձեծեմ . » : Սորովամ ալ Մատուծոյ թոյլտուութենէն կուրցաւ՝ ճերերուն խորհուրդը մէկզի թողուց , աս անխելք խորհուրդիս հաւնեցաւ . ուստի խօսք դրածին պէս երրորդ օրն որ անանկ պատասխան տուաւ , ան ատենը Խորայեւացոց ժողովուրդը սարստամբած գլուխ քաշեց , ու ղինքը թօթվելով ըսին . « Մենք այսուհետեւ մասն բաժին չունինք Վաւթի տանը հետ . դուն զնա քու ցեղիդ վրայ թագաւորութիւն ըրէ . » : Մանկ Սորովամէն երեսնին դարձուցին՝ տասը Խորայեւացոց ցեղը մէկ եղած գացին իրենց զատ թագաւոր զրին ան Յերոբովամը որդին՝ Վարատայ , որ Մատուած ըսեր էր Մբիա մարգարէին ձեռքովը : Ետքը Սորովամ զասոնք խաղաղեցնելու վաստրկելու համար՝ ետեւնին մէկ իշխան մը խրկեց Մոսիրամ ըսուած . քայց ձար չեղաւ , անանկ որ՝ Խորայեւացիք զանիկայ բռնեցին քար կոծելով մեռցուցին . ու Սորովամ ալ վախցաւ՝ ելաւ Արուսաղէմ փախաւ : Մնկէ ետեւ երբոր Սորովամ նորէն հարիւր ութսուն հազար մարդ ժողվեց իր տակը եղած Յուդայի ու Քենիամինի ցեղէն՝ որ ան տասը Խորայեւացոց ցեղին վրայ պատերազմ ելլէ՝ իրեն հնազանդեցրնէ , Մատուած Սամէ անունով մէկ մարգարէ մը իրեն խրկեց , որ ըսէ թէ աս բաժանումս Մատուծոյ կամբովը եղած է , պարսոյ տեղը պատերազմ չը-

նէ, Եւ անանկ վերջացաւ բանը, որ Որբուլամ
 Թիայն Յուդայի ու Բենիամինի ցեղովը մնաց, ու
 Յերոբոլամ որդին Եսթատայ՝ զատ Թագաւո-
 թութիւն սկսաւ ընել մէկալ Եսթայեւացւոց տա-
 սը ցեղերուն վրայ: Եսթայն որ Եսթայեւացւոց
 մէկ տէրութիւնը երկուք բաժնուեցաւ, երկու-
 քին ալ ետեւէ ետեւ մէկ ատենի մէջ զատ զատ
 Թագաւորներ նստան: Ուստի մենք ալ զասոնք
 մէյտեղ չխառնելու համար՝ հիմա առաջ Ես-
 թայեւացւոց տասը ցեղին Թագաւորներուն վրայ
 կը պատմենք, ու ետքը Յուդայի Թագաւորնե-
 րուն պատմութիւնը կը գնենք:

Գ. Լ. ՈՒԽ ԻԲ.

Յերոբոլամի Եսթայեւացոց բազաւորին մեղքը, և
 իրեն չար յաշորդները:

ՍԵ՛ աշխարհի 3030: (Գ. Թագ. 3Բ. 3Գ. 3Դ. 3Ե. 3Զ.)

Յերոբոլամ ուղելով որ իր տէրութիւնը հաս-
 տատ պահէ, և վախնալով թէ չըլլայ որ Ես-
 թայեւացիք աստուած պաշտութեան համար՝ Յու-
 դայի երկիրը Երուսաղէմ տաճարը երթալով
 կամաց կամաց իրեն ձեռքէն ելլեն՝ ու անոնց տէ-
 րութեան ներքեւ մտնեն, անոր համար իր Թա-
 գաւորութեան երկու գլխաւոր տեղուանքը, մէկը
 Վան՝ մէկալը Բեթէլ ըստած քաղաքները՝ եր-
 կու տաճար շինել տուաւ, և երկուքին մէջն ալ
 մէյմէկ ոսկիէ Թափած հորթ դրաւ: Եւ արդի-
 լեց իրեն ժողովրդոցը՝ որ մէյ մ՝ ալ Երուսաղէմ
 չերթան, հասպա աս տաճարներուն մէկը երթան՝
 հոն իրենց զոհը Բստուծոյ մատուցանեն. նաև
 Եսթայն քարոզեց ըսաւ որ՝ Բստուծ-

ներն են, որ Խորայեւացիք Աղիստոսի գերութենէն ազատեր են: Ասկէ ՚ի զատ՝ լեռներուն գլուխը ուրիշ ուխտատեղիներ ալ սասմանեց, ու իր ուզածին պէս՝ Աւտացիներէն զուրս ուրիշ քահանաներ ալ դրաւ. անանկ որ՝ այսպիսի բաներով Խորայեւացոց մտցուց իրենց ճշմարիտ Մատուածը, որ ալ սկսան յայանի կուսարշաու-
թիւն ընել. և աս պատճառովս գրեթէ միշտ Մատուծոյ պատուհասն ալ վրաներնէն պահաս չէր ըլլար:

Այ՛ Յերոբոսլամ թագաւորը պինտ առաջ երբոր Աւթելը սեղանին վրայ ելած՝ ան իր դրած կուռքին առջևը ինքը իր ձեռքովը հանդիսաւոր զոհը կը մատուցանէր, անդիէն Յուդայի երկրէն Մատուած մէկ մարդարէ մը խրկեց, որ հոն եկաւ ան զոհին ատենը կանչեց ըսաւ. «Սեղան սեղան, Մատուած կ'ըսէ որ՝ Վաւթի ցեղէն մէկ մը պիտոր ըլլայ Յովսիա անունով, որ քու վրաց ատ քուրմերը զոհ պիտի ընէ, որ ատոնք հիմայ վրաց զոհ կը մատուցանեն: (Այ ըմես հարիւրաւոր տարիներէն ետքը կատարուեցաւ՝ երբոր Յովսիա Յուդայի թագաւորը ան քուրմերուն օսկորները գերեզմաններէն հանեց, ու ան սեղանին մնացած քարերուն վրայ երեց): Այ խօսքիս նշան որ ճշմարիտ կ'ըսեմ, ըսաւ մարդարէն, հիմա ատ սեղանը երկուք ձեռքով, ու վրայի եղածը թափի.», Յերոբոսլամ ատոր վրայ սաստիկ բարկացած՝ երբոր ձեռքը երկնցուց ըսաւ թէ «Վանեցէք ատ մարդը.», ան տեղը ձեռքը չորցաւ մնաց, ու իր առջևի սեղանը մարգարէին ըսածին պէս երկու կտոր եղաւ: Այն ատենը Յերոբոսլամ աղաչեց ան մարգարէին, ու անոր աղօթքովը բժշկուեցաւ. բայց անանկ ալ

խելքը գլուխը չժողվեց՝ չժողուց աս կռապաշտութեան մեղքը, որ անհամար ժողովրդոց ալ մեղաց պատճառ եղաւ : Աւստի Մատուած սաստիկ բարկանալով վրան՝ պատժեց իր Մ.բիա քսուած որդին, որ ծանր հիւանդութեան մէջ ինկաւ : Ինչ ժամանակը Յերոբոամ իր կնկանը ըսաւ որ լաթերը փոխէ՝ որ մարդ զինքը չճանչնայ, ու հետը ընծաներ առած ելլէ : Այլով երթայ ան Մ.բիա մարգարէին քով (որ առեւտով իր թագաւորութեանը համար մարգարէացի էր) ու տղին բժշկութեանը համար իրեն հարցունէ : Կնիկն ալ երբոր ստանկ եկաւ մարգարէին տունը մտաւ, թէպէտ մարգարէն ալ խիստ ծերութենէն աչքը չէր տեսներ, բայց շուտ մը Մատուած յայտնեց իրեն, որ անունը տալով քովը կանչեց կնիկը, և Մատուոյ կողմանէ՝ Յերոբոամի բրած ասերախտութիւնը ու կռապաշտութիւնը երեսը զարնելով ըսաւ որ՝ անոր համար Մատուած ալ զինքը իր սնով տեղովը և իր զաւկըններովը պիտի ջնջէ վերցրնէ՝ թագաւորութիւնը ձեռուրնէն առնէ. և « Հիմա դուն, ըսաւ, տունդ դառնալուդ պէս՝ ան Մ.բիա ձեր տղան պիտոր մեռնի, և Յերոբոամի տնէն միայն ասիկայ գերեզման պիտի մտնէ իր բարեգործութեանը համար. ինչու որ մէկալնոնց՝ քաղքին մէջ մեռածը չները պիտոր ուտեն, ու դուքս տեղ մեռածը՝ թռչունները » : Այլ անանկ մարգարէին ըսածին պէս բանը կատարուեցաւ :

Յերոբոամ ինչուան ետքը այսպիսի չարութեամբ քսանուերկու տարի թագաւորութիւն քշեց. և մեռնելէն ետեւ թէպէտ իրեն Մարատ քսուած որդին տեղը անցաւ, (որ ինքն ալ հօրը կռապաշտութեան ճամբան բռնեց), բայց երկու-

տարիէն աւելի չթագաւորեց : Պատճառն որ Ռաասա ըսուած զօրապետը իրմէ գլուխ քաշեց, ու վրան պատերազմ ելաւ սպաննեց՝ թագաւորութիւնը ինքը առաւ . ետքը Վրխա մարգարէին ըսածին պէս՝ բոլոր Յերոջուլամի տունը թրէ անցուց :

Վր Ռաասա ըսուածն ալ մէկ աղէկ մարդ մը չէր, ինքն ալ կուսապաշտութիւնը ձեռքէ չձողուց . անոր համար Վստուած Յէու մարգարէին բերնով յանդիմանեց զինքը, ու սպառնացաւ որ Յերոջուլամի պէս իրեն ցեղն ալ պիտի ոչնչացընէ : Այն անանկ ըսածին պէս կատարեցաւ . որ քսանուիրէր տարի թագաւորելէն ետքը երբոր մեռաւ, ու իր որդին Ալա ըսուածը սկսաւ թագաւորել, անոր թագաւորութեան երկրորդ տարին՝ իր զօրապետներուն մէկը Օամբրի անունով՝ երբոր աս Ալա թագաւորը կէր ու խուճի մէջ էր՝ մտաւ սպաննեց, ու ինքը թագաւորութիւնը յախշտակելով՝ մեռցուց ջնջեց բոլոր Ռաասայի ցեղին մարդիկը :

Վստապի անօրէն արիւնտէր մարդուս ձեռքն ալ քիչ՝ այսինքն եօթը որ միայն մնաց տէրութիւնը . ինչու որ՝ Վմրի ըսուած մէկալ զօրապետը անդին իր ներքեւի մարդիկը թագաւոր դրին, ու ինքն ալ շատ զօրքով ելաւ վրան եկաւ թմերսա ըսուած թագաւորական քաղաքը . Օամբրի երբոր տեսաւ թէ քաղաքը կ'առնուի կոր՝ ու ինքը իր թշնամիին ձեռքը պիտի իյնայ, իր պալատին կրակ տուաւ, ու անանկ ինքն ալ մէջը էր բոլոր բաներովը երեցաւ : Վստ որ եղաւ՝ նորէն ժողովուրդը երկուք բաժնուեցան . կէս մը Վմրի հետ եղան, ու մէկալ կէսը ելան մէկ ուրիշ մարդ մը թամնի ըսուած կ'ուզէին որ թագաւոր դը-

նեն . բայց վերջը յաղթեց Մերի ինքը թագաւոր մնաց , (Սերսա քաղաքը թողուց՝ գնաց իրեն ուրիշ թագաւորական քաղաք շինեց Սամարիա անունով : Մսիկայ ալ տասուերկու տարի Հեբորովամի պէս կռապաշտութեամբ թագաւորեւ լէն ետքը որ մեռաւ , ետեւէն թագաւոր նստաւ իրեն որդին՝ որ Մքայաբ կ'ըսուէր :

Գ Լ Ո Ի Խ Ի Գ .

Եղիա մարգարէն Սքայարի շարտիւնը կը յանդիմանէ՝ ու զինքը կը պատժէ :

Աժ աշխարհի 3092 : (Գ . Թագ . ԺԷ . ԺԸ . ԺԹ .)

Մքայաբ թագաւորին կռապաշտութիւնը և անօրէնութիւնը անցուց իրմէ առաջ նստող Սքայելացւոց թագաւորներուն ըրածը . պատճառն որ՝ Հեզաբէլ ըսուած իր կնիկը այլազգի թագաւորի ազջիկ ըլլալով , ան ալ զինքը կը յորդորէր այսպիսի շարագործութիւնները առաջ տանելու : Մնոր համար Մտուած ալ սաստիկ բարկանալով վրանին՝ Եղիա մարգարէն խրկեց որ Մքայաբի ըսէ թէ՝ Սքայելացւոց երկիրը տարիներով պիտի չոր ցամաքութեամբ պատժէ , անանկ որ՝ ամենեւին անձրև պիտի չգայ : Եղիայի ըսածին պէս որ եղաւ , ան պատճառովը սաստիկ սով մը ինկաւ Սքայելացւոց երկիրը :

Մն ատենը Մտուած հրամայեց Եղիա մարգարէին , որ ինքը անապատ տեղ մը՝ Քոտաթ ըսուած ջրին քովը երթայ բնակի . ու հոն ազնաւները (այսինքն խառղաները) առտու իրիկուն իրեն հաց ու միս կը բերէին , անով կ'ապրէր :

Լատքը ատենով երբոր ան ջուրն ալ ցտփեցաւ :
 Ըստուած նորէն հրամայեց Լղիայի որ անկէց
 ելլէ երթայ Սարեփթա ըսուած Սիրանացոց
 քաղաքը , որ հոն իրեն մէկ որբեւարի կնիկ մը
 կերակուր տայ : Ուստի ան սովուն ատենը Լղի
 ա ստարեփթացի կնկանը քով ապրեցաւ՝
 այլազգիներուն երկիրը . որ ան կնկանը քիչ մը
 ալիւրը ու եղը հրաշքով անանկ աճեցուց , որ
 որչափ կ'ուտէին նէ անկէց՝ չէր սպախեր : Ըս-
 կէ 'ի զատ մէկ ուրիշ հրաշք մըն ալ ըրաւ Լղի
 ա , որ ան որբեւարի կնկան տղան , որ պատահմամբ
 ինկաւ մեռաւ , Լղիա աղօթքով ողջընցուց
 զանկից :

Ըստ ատեններս Ըքայաբ ու Յեզարէլ սաստիկ
 սովէն նեղած կատողած՝ Լղիա մարգարէն կը
 փնտռէին որ սպաննեն , անանկ սեպելով թէ աս
 պատուհասը անոր խօսքովը եկած ըլլայ . ուստի
 Լղիան որ չգտան՝ իրենց կատաղութիւնը մէկալ
 աստուածապաշտ մարգարէներուն վրայ թափեցին ,
 ձեռու ընկն ինկածը կը մեռցընէին : Սովն
 իրեք տարին որ եղաւ , Ըստուած նորէն Լղիայի
 հրամայեց որ՝ երթայ Ըքայաբի երևնայ . ան
 ալ երբոր գնաց առջևը ելաւ , Ըքայաբ սրգո-
 ղելով իրեն ըսաւ թէ՝ « Դուն Իսրայելացոց
 խռովին ես մի » . Լղիան ալ առանց վախնալու
 պատասխան տաւ . « Վա՛ւ լիցի , ըսաւ , ես
 չեմ խռովեր Իսրայելացիները , հապա դուն , ը-
 սաւ , և քու հօրդ տունն է , որ թողուցիք տէր
 Ըստուածը՝ ու Բահաղ ըսուած կուռքերուն ե-
 տեէն դացիք » : Լատքը ասանկ խօսք զրաւ Ըքայաբի
 հետ , որ ան իր բոլոր կուռքերուն քորմերը
 ու թը հարկը յիսուն հոգի մէյտեղ զանձողվին ,
 երկու եղ կամ կով բերեն , ասոնց մէ-

կը որն որ կ'ուզեն իրենք առնեն կտրտեն՝ ու չոր փայտերու վրայ դնեն, և անոր վրան իրենք իրենց կուռքերը կանչեն. ու մէկալ մնացած եզր թողուն որ Աղիան առնէ, ինքն ալ իր տէր Աստուածը կանչէ իրենին վրայ. ան ատենը որուն վրան որ կրակ ինջնի երէ՛ նէ, անոր աստուածն է Ճշմարիտ Աստուած: Աս բանիս բոլոր ժողովուրդն ալ հաւնեցան. ու ըսածին պէս քուրմերը պինտ առաջ իրենց եզր չոր փայտերուն վրան դրին, և առտուանց ինչուան օհարասկ անոր քովը կը պտրտէին ու կը կանչէին Աստուածը. ու ձայն ձիւն չկար, բան մը չէր ըլլար. Աղիա ալ ան ատենը զիրենք ծաղր ընելով կ'ըսէր. «Ամուր կանչեցէք որ արթընայ լսէ, չըլլայ թէ քնացած է ձեր Աստուածը», և ասանկ ինչուան իրիկուն պարասկ տեղը կանչելէն ետքը, անոնց՝ «Մէկդի կեցէք», ըսաւ Աղիան, ու ինքը սկսաւ պատրաստել իր զօհը. մէկ խորունկ սեղանի մը մէջ չոր փայտեր շարեց, անոր վրայ եզր կտրտած դրաւ. ու վրան տասուերկու սափոր ջուր լեցընել տուաւ, անանկ որ՝ ան փայտերն ու միտը կը լողային ան ջրին մէջը. ու երբոր ատենը հասաւ, դէպ ՚ի երկինքը կանչեց Աղիա ըսաւ. «Տէր Աստուած Աբրահամ, Իսահակայ և Իսրայելի, աս կրակովս գիտցուր քեզ՝ որ դուն ես Իսրայելացոց Ճշմարիտ Աստուածը, և թէ քու հրամանովդ ես աս բանս ըրի», Աս որ ըսաւ Աղիա, ան տեղը շուտ մը երկինքէն կրակ ինջաւ՝ երեց լափեց օղջակէզը ան փայտերովը ու ջրովը. բոլոր ժողովուրդն ալ աս հրաշքս որ տեսան, ամենքը երեսի վրայ ինկան ու ըսին թէ՛ «Իրաւի աս է Ճշմարիտ տէր Աստուածը», Ան ատենը Աղիա ալ հրա-

մայեց ժողովուրդին որ ան Բահայի քուրմերը բռնեն որ չիախչին, ու զամէնքը ջարդեց: Եւ Եղիա աղօթք ալ ըրաւ Բստուծոյ որ անձրե տայ, և անձրեին նշանը մարդ կարծիք չգնացած՝ ինքը միայն գիտնալով Բքայաբ թագաւորին ըսաւ որ « Բնձրեւք քեզ չբռնած ելիր շուտով տուն գնա կերակուրդ կեր », ու անանկ եղաւ, որ ձորով Բքայաբը տուն հասաւ ան սատիկ անձրեւէն ճամբան չբռնուած: Բս Եղիայի ըրածները երբոր լսեց Յեզարէլ, մանաւանդ ան քուրմերուն ջարդը, վրան անանկ սաստիկ սրդողեցաւ որ՝ իր կուռքերուն վրայ երդում ընելով Եղիայի խրկեց ըսաւ որ Ս աղուան օրը իրեն ալ անանկ պիտոր ընեմ՝ ինչ որ ինքը ան քուրմերուն ըրեր է: Եղիա ան ժամանակը վախցաւ ուզեց երեսը ծածկել, ու ելաւ դէպ ի Յուդայի երկիրը անապատը փախաւ. բայց ճամբան շատ նեղութիւն քաշելով անօթի ծարաւ, հրեշտակ Բստուծոյ իրեն կերակուր բերաւ, որ անով ուժ առած՝ քառսուն օր քառսուն գիշեր՝ Վորեր սուրբ լեռը գնաց հասաւ. ու հոն մէկ քարոյրի (այսինքն մաղարայի մը) մէջ կեցած Բստուծոյ հետ կը խօսէր կը դանդաղութիւն աս Խորայելացոց կռապաշտութեանը համար: Ետքը Բստուած ալ իրեն սիրտ տալով հրամայեց որ՝ չիախնայ նորէն Խորայելացոց երկիրը դառնայ, երթայ Բղայէլ ըսուած մէյ մը Բսորոց թագաւոր օժէ, ու Յեու զօրապետն ալ Խորայելացոց թագաւոր շինէ, և Եղիսէն ալ առնէ իրեն տեղը մարգարէ գնէ, որ ասոնցմով Բքայաբ ու Յեզարէլ իրենց չարութեանը պատիժնին զրանեն: Եղիա ալ Բստուծոյ ըսածին պէս եկաւ պինտ առաջ Եղիսէն կանչեց իրեն աշակերտ ը-

բաւ, ու ետքը անոր ձեռքովը ան մէկալ երկուքն
ալ թագաւոր օծուեցան :

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Արայարի ոտիչ գործերը, և իր չար տատակումը :

Մտ աշխարհի 3103 : (Գ . Թագ . Ի . ԻՅ . ԻԲ :)

Որդի Մշերայ ըսուած Մտրւոց թագաւորը՝
ուրիշ այլազգի թագաւորներու հետ մէկ եղած՝
Խորայեւացւոց վրայ պատերազմ ելաւ, եկաւ
Սամարիա թագաւորական քաղաքը պաշարեց,
ու Մքայաբի գեասպան խրկեց՝ ըսաւ որ, «Քու
ունեցած արծաթներդ ոսկիներդ՝ կնիկներդ ու
զաւկրներդ բոլորը իմն են» : Մքայաբ ալ վա-
խէն իրեն պատասխան տուաւ թէ «Մանկ է՝
բոլոր ունեցածս հրամանոցդ է» : Մտրւոց թա-
գաւորը նորէն իրեն խրկեց ըսաւ թէ՝ «Մն-
պէս է նէ, վաղը իմ մարդիկս կը խրկեմ որ բո-
լոր ասոնք քովէդ ժողվեն առնեն ինձի բե-
րեն» : Մքայաբ ասոր վրայ խորհուրդ որ կան-
չեց Խորայեւացւոց ծերերը, ու անոնք ալ դէմ
կեցան ըսին թէ Մտ ըլլալու բան չէ, ան ատենը
Մտրիները ալ սկսան պատերազմի պատրաստու-
թիւն տեսնել : Մն ժամանակը մէկ մարդարէ
մը եկաւ Մտուծոյ կողմանէ Մքայաբի ըսաւ որ՝
չվախնայ պինտ առաջ ինքը վրանին քալէ, ու
տեսնէ որ ինչպէս Մտուած զանոնք իրեն ձեռ-
քը պիտի մատնէ : Այլ ըսածին պէս որ յանկար-
ծակի Խորայեւացիք Մտրիներուն վրան ելան,
անոնցմէ խել մը ջարդելէն ետեւ՝ ցիրուցան ըրին

զիրենք իրենց թագաւորներով, ու շատ կողմ
պուտ ձեռք ձգեցին :

Ետքը Մօորինները մտաւրնին ասանկի գնելով
թէ՛ « Իսրայելացւոց Մտուածը լեռներու Մտ-
տուած է, անոր համար անոնց բանը աջող
գնաց, ըսելով, անոր մէկալ տարին նորէն պա-
տերազմ բացին Իսրայելացւոց հեա Յափեկ Ը-
տուած դուր դաշտին վրայ : Իայց անտեղն ալ
Մտուած նորէն ան մարգարէն Մբայարի իրը-
կեց ըսաւ որ ինքը չէ թէ միայն լեռներու՝ հա-
պա դաշտերու ալ Մտուած է, ու այնպիսի
յաղթութիւն տուաւ Իսրայելացւոց՝ որ մէկ օ-
րուան մէջը ան Մօորիններէն հարիւր հազար հո-
գի կօտրեցին, ու ողջ մնացածները իրենց քա-
ղաքն որ փախան՝ անոնց վրայ ալ քաղցին պա-
րիսպր փլաւ՝ քսանըեօթը հազար ալ հոն մե-
ռան : Մն ատենը Մտուոց թագաւորն ալ մէկ
գաղտուկ տեղ մը փախստական եղած, իրեն իշ-
խանները՝ խոնարհութեամբ վրանին քուրճ հա-
գած ու գլուխնին չուան փաթթած՝ (որ աս յաղ-
թութեւն նշան էր) եկան Մբայարի ազաչեցին,
որ թողութիւն տայ թագաւորին՝ իրեն բան չը-
նէ : Մբայար ալ թողութիւն տալէն ետեւ, կան-
չեց մեծարեց անոնց թագաւորը՝ իր քովը հանեց
կառքը նստեցուց. ետքը հեան ալ ուխտ ու դա-
շինք ընելով՝ անանկ բարեկամութեամբ թողուց
որ երթայ : Իայց Մտուած աս ըրածին վրայ
սրգողելով՝ Մբայարի մարգարէ մը խրկեց, որ
եկաւ մէկ առակով մը երեսը զարկաւ իրեն ծուռ
բռնած ճամբան, ու ըսաւ որ՝ « Մն մահապարտ
մարդը չմեռցնելուդ և ազատելուդ համար բու-
կեանքդ անոր տեղը պիտի տաս, ու քու խղո-
վուրդդ անոր խղովրդին տեղը պիտոր ջար-

դուի , , Խնչպէս որ քիչ մը ետև ըսածին պէս
կատարուեցաւ :

Բսկէ ետքը Բքայաբ ու Յեզարէլ օրէ օր ի-
րենց անօրէնութիւնը և չարութիւնը եւեկըը-
նելով աս ալ վրան դրին : Վարովթ ըսուած մէկ
մարդ մը կար , որ այգի մը ունէր Բքայաբի պա-
լատին քովը . ասոր այգիին աչք տնկեց Բքայաբ ,
որ առնէ իրեն պարտեղին հետ խառնէ՝ մեծցը-
նէ : Վարովթ ոտք կոխեր էր չէ ուզեր տալ .
կ'ըսէր թէ « Իմ հայրենական ժառանգութիւնս
ձեռքէս չեմ հաներ » : Բն առեւնր աս բանիս
ճարը Յեզարէլ իր վրան առաւ որ հողայ . ուս-
տի սուտ վկաներով զբարտուածին (այսինքն
իֆաիրա) ընել տուաւ Վարովթի վրայ , ու քար-
կոծելով սպաննել տուաւ անմեղ մարդը . ու ա-
նանկ յափշտակեց Բքայաբ Վարովթի այգին :
Բայց աս անօրէնութեանս համար Բստուած
խրկեց Նզիա մարգարէն՝ որ Բքայաբի ըսէ թէ
« Ուր որ ան անմեղ Վարովթին թախած արիւ-
նը շները ու խողերը լափեցին նէ , անտեղը քու
արիւնդ պիտի անանկ լափեն , ու Յեզարայէլ քաղ-
քին սրատին տակը Յեզարէլի մարմինն ալ շնե-
րը պիտի ուտեն . և անկէ ետքը նաև Բքայաբի
ցեղն ալ բոլոր պիտի ջնջէ Բստուած , ինչպէս
իրմէ առջի նստած չար թողաւորներուն ը-
րաւ » . և Բստուծոյ ըսածին պէս շատ չանցաւ՝
ու աս սրատիճներս ասանկ կատարուեցաւ : Իրէք
տարիէն ետև Բստուած թոյլ տուաւ որ Բքայաբ
Սիբիա մարգարէին ըսածը մէկդի ձգէ , ու իրեն
սուտ մարգարէներուն խօսքովը նորէն պատե-
րաղմ բանայ Բսորիներուն վրայ՝ որ Ուամաթ
Պաղայաղու ըսուած քաղաքը անոնց ձեռքէն
առնէ : Եւ ան պատերազմին մէջը Բքայաբ չա-

բաշար վերաւորուած որ մեռաւ, իրեն նստած
կառքն ալ որ արիւնջուայ եղեր էր՝ Սամարիա
քաղաքը ան Վարովթի այգիին տեղը բերած
լուանալնինի՝ շները վրան թափեցան արիւնջ
կը լգէին: Ատքը Յեզաբելի պատիժն ալ վրան
հասաւ, ինչպէս տեղովը պիտի պատմենք:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Որոգիայի պատիժը, և Եղիա մարգարէին երկիւնքը
վերանայր:

Աժ՝ աշխարհի 3107: (Գ. Թագ. Ե. Բ. Գ.):

Մ. քայաք քսանուերկու տարի թագաւորելէն
ու չարաչար մեռնելէն ետքը՝ թագաւոր նստաւ
իրեն Որոգիա ըսուած տղան, որ ինքն ալ իր հօ-
րը ու մօրը չար ձամբէն դուրս չելաւ. և երկու
տարիէն աւելի չթագաւորած՝ ասանկ մեռաւ.
Մէկ օր մը ասիկայ յանկարծակի տանը սրատու
հանէն վար ինկած՝ չարաչար հիւլնոցաւ. անոր
համար շուտ մը մարդիկ խրկեց Վիկարոն քա-
ղաքը՝ որ հոն Ղանձիկ ըսուած կուռքին հարցը-
նէն իր հիւանդութեանը համար՝ թէ պիտի
բժշկուի մի, ինչպէս պիտոյր ըլլայ: Ըն ժամա-
նակը Մատուծոյ հրամանովը Վրիա մարգարէն
սա մարդիկներուն դիմնոցը հանդիպեցաւ, որ
յանդիմանելով իրենց ըսաւ. «Վեթ ձեզի՛ իբր
թէ Վարայեւացոց մէջէն Մատուած սրակեր է՝
որ դուք Վիկարոն կ'երթաք որ Ղանձիկ կուռ-
քին հարցնէք. չէ, ատանկ չէ, ըսաւ, հասա-
յապէս կը հրամայէ Մատուած, որ Որոգիա թա-
գաւորը պառկած տեղէն մէյ մ'ալ պիտոյր չելի՛:

Հոն պառկած տեղը պիտի մեռնի , : Երբոր աս
բանս ընց Ուրոզիա թագաւորը՝ և խնայաւ որ
Եղիա թեզբացին է աս ըսողը , ետեւէն յիտուն
զինուոր խրկեց իրենց զօրասլետովը՝ որ բռնեն
իրեն բերեն . զնայ յիմնասլետը Եղիան գտաւ՝
ու ըսաւ . “ Ով մարդ Մատուծոյ , թագաւորը
կը հրամանէ որ ելլես իրեն գաա , : Եղիա ալ ը-
սաւ . “ Թէ որ ես մարդ Մատուծոյ եմ նէ , հի-
մա երկինքէն կրակ կ'իջնայ՝ քեզ քու յիտունովդ
կ'երէ կը ըստի , : ու անանկ եղաւ , ըսածին պէս
հոն տեղը կրակը ինջաւ զիրենք երեց . ետեւէն
նորէն ուրիշ յիտուն ալ խրկեց թագաւորը , ու
անոնց վրայ ալ առջիններուն փորձանքը եկաւ ,
Մսկեց ետքը մէկ յիմնասլետ մըն ալ խրկեց իր
յիտունովը . որ ասիկայ իրմէ առջիններուն օրի-
նակը տեսնելով՝ եկաւ խոնարհութեամբ Ե-
ղիայի առջևը չորելով աղաչեց որ իրեն խնայէ՝
այնպիսի պատիժ չտայ : Մն առեւնը Եղիա Մ-
տուծոյ հրամանովը՝ հետը ելաւ թագաւորին
զնայ , ու համարձակ երեսն ՚ի վեր յանդիմա-
նեց իրեն հաապաշտութիւնը . ետքը ըսաւ թէ
“ Դուն պիտոր մեռնիս , : և անոր վրայ շատ
չանցաւ՝ մեռաւ Ուրոզիան :

Ետեւէն ինքը որդի չունենալով , իր Զովրամ
ըսուած եղբայրը թագաւոր նստաւ՝ տասուեր-
կու տարի . ասիկայ թէպէտ իր հօրը ու մօրը
չար ճամբէն քիչ մը դուրս էր , բայց Զերոբո-
վամի մեղքէն ազատ չեղաւ , ան երկու հօրթերը
պաշտելը չթողուց :

Մտոր օրը կամեցաւ Մտուած՝ որ Եղիա մար-
գարէն ողջ ողջ աշխարհքէս վերցընէ , ու յայտ-
նեց Եղիայի . ան ալ կ'ուզէր աս բանս գաղ-
տուկ պահել , որ մարդ չիմանայ : Բայց Եղիաէն

Աղիայի սիրելի աշակերտը՝ աս բանիս կռահ եր
 թալով՝ ուր որ Աղիան կ'երթար կ'առանձնա
 նար, ան ալ քովէն չէր զատուեր: Ատրբ տես
 նելով Աղիա որ ձար չկայ քովէն չբաժնուիր,
 Աղիսէն իր հետը առաւ, ու զնայ հրաշքով
 Յորդանան գետը պատուեց, մէջէն բայելով մէ
 կալ զին որ անցան, ալ յայտնեց Աղիսէի թէ
 «Աս պիտի աշխարհքէս վերնամ երթամ. ուս
 տի ինչ որ, ըսաւ, կ'ուզես նէ՛ խնդրէ ինձմէն
 որ քեզի տամ»: Աղիսէն ալ ըսաւ թէ՛ «Վա
 կրկին հոգիդ իմ վրաս ըլլայ, (այսինքն անոր
 մարգարէութիւնը և հրաշարործութիւնը կամ
 կրկին (այսինքն երկու խաթ) գորութիւնդ): Ա
 ղիա ալ պատասխան տուաւ թէ՛ «Վժուար բա
 է ուզածդ. բայց այսու ամենայնիս թէ՛ որ եր
 կինքը ելլելը տեսնես նէ, թող անանկ ըլլայ»:

Արբոր աս բաները մէկմէկու հետ խօսելով կ'եր
 թային, մէյ մըն ալ յանկարծակի հրեղէն կա
 քեր կրակ կտրած ձիերով եկան իրենց երկուքի
 մէջը մտան, ու Աղիա մարգարէն աւել յայտ
 տակեցին զէպ' ի վեր երկինքը կը տան ին: Ա
 որ տեսաւ Աղիսէն՝ սկսաւ ետեւէն կանչել
 «Հայր իմ, Հայր իմ, ուր կը թողուս կ'երթամ
 որ Իսրայելացւոց կառքը ու կառավարն ալ դու
 էիր»: Ինանկ տրամութեամբ Աղիսէն վրայ
 լաթերը պատուեց, ու Աղիայի վերաբերան ձեռ
 քը առած՝ (որ Աղիան վերէն իր վրայ ձգեր էր
 ինչպէս կ'ըսեն՝ նշան, թէ անոր ուզաւ խնդրել
 կը կատարէ) եկաւ զանիկայ Յորդանան գետի
 վրայ զարնելով մէջէն երկուք բաժնեց ջուրը,
 նորէն ասղիս անցաւ:

Գ Լ Ո Ի Խ Ի Զ .

Եղիսե մարգարէիև նրաշաղարհութիանները :

Մատենադարանի 3209 : (Դ . Թ ա գ . Բ . Դ . Ե . Զ . Ե :)

Երբոր Եղիսայէն դարձաւ՝ Երիբով քաղաքը եկաւ Եղիսէն , քաղքին մարդիկը իրեն եկան , կը դանդաղէին իրենց երկրին անբերութեանը (այսինքն խաւճութեանը) համար , որ լեղի ու անշահ ջրերէն առաջ կու գար . Եղիսէ ալ գնաց ան ջրերուն բխած տեղը աղ ձգեց , որ անով Երիբովի ջրերը անուշցան , ու երկիրը պտղաբեր եղաւ :

Միկէց ետեւ Եղիսէ երբոր Երիբովէն ելեր Բեթէլէ կերթար , ճամբան մանր տղաքներ իրեն առջևը ելան՝ զինքը ծաղր ընելով կ'ըսէին . « Ե՛լ կնտակ , ե՛լ կնտակ » , (այսինքն տազ գլուխ) . Եղիսէն ալ դանտնք անիծելուն պէս՝ անտեղը մտա անտառէն (այսինքն օռմանէն) երկու արջ փրթան վրանին՝ ու պատառ պատառ բրին ան տղաքները , որ քառսունուերկու հոգի էին :

Միկ օր մըն ալ բարեպաշտ որբւարի կնիկ մը եկաւ Եղիսէին առջևը ինկաւ , ու լալով իր խեղճութիւնը կը պատմէր թէ՛ այնչափ աղքատութեան մէջ ինկեր է որ , իրեն պարտքնատէրը եկեր երկու զաւակն ալ քաշել տանիլ կ'ուզէ կոր իր պարտքին տեղը : Եղիսէն ալ իրեն հարցուց թէ՛ « Տունդ բան մը չմնաց մի » . կնիկն ալ ըսաւ որ՝ « Ե՛լ ամենւին բան մը չկայ , միայն ամանով քիչ մը եղ մնաց » : Եղիսէ հրամայեց ի-

րեն որ երթայ իր դրացիներէն փոխ պարսպ ա-
մաններ ուզէ՝ որչափ որ կրնայ, ու տղոցը հեռ
իր տունը մտած՝ ան եղովը ան ամանները լեցը-
նէ: Վնաց անանկ ըրաւ կնիկը, ու հրաշքով
ան քիչ մը եղը շատ ամաններ լեցուց, անանկ որ
անոնցմէ աւելի ալ ամաններ գտուէր նէ՝ անոնք
ալ կը լեցուէին: Ատքը այնչափ եղը ծախելով
իր պարտքէն խալըսեցաւ:

Մտենալ Աղիսէի պէտք եղաւ որ շատ ան-
գամ Սոմնա ըսուած քաղաքը երթայ. և հան-
մէկ բարեպաշտ ամուլ կնիկ մը իր երկանը հրա-
մանալը սիրով պատուով իր տունը կ'առնէր կ'ըն-
դունէր մարգարէն: Աղիսէ ուզելով որ ասոր
բարի սրտին հատուցուի ընէ, Մտուծմէ խըն-
դրեց, որ անոր զաւակ մը եղաւ. և աս տղաս
մեծնալէն ետքը՝ յանկարծ որ խնկաւ մեռաւ,
Աղիսէն աղօթքով ողջնցուց տղան, ու կենդանի
մօրը ձեռքը տուաւ:

Կաւ ասոնցմէ ՚ի զատ ուրիշ հրաշագործու-
թիւններ ալ ըրաւ Աղիսէ մարգարէն. որ զվա-
ւորներէն մէկը եղաւ Վեէմանի բժշկութիւնը:
Մը Վեէման ըսածս Մտրուոց թագաւորին զօրա-
պետն էր, որ շատոնցմէ բորտուած եան աստով
կը տանջուէր. ասիկայ լսելով որ Մարայեւացոց
երկիրը մէկ հրաշագործ մարգարէ մը կայ, իր
թագաւորին հրամանով ու թղթովը հեռը շատ
ստակ և ուրիշ պարգևներ առած՝ եկաւ Մարայ-
եւացոց Յովրամ թագաւորին առջևը ելաւ,
թուղթը իրեն տուաւ, որ մէջը գրած էր թէ՛
«Մհա իմ՝ Վեէման ծառաս քեզի կը խրկեմ,
որ բորտուած ենէն բժշկես զինքը»: Արքոր աս
տեսաւ Մարայեւացոց թագաւորը, սիրտը զող-
ելաւ վախցաւ թէ՛ աս մէկ վարպետութիւն մը

է, որ իրեն վրայ Մտորւոյ Թագաւորը առիթ կը
 փնտռէ՝ որ սրատերազմ բանայ . ուստի ըսաւ
 թէ՛ « Ես Մտուած եմ մի, որ մարդ սպաննեմ
 կամ բժշկեմ » : Ետքը աս բանս բերնէ բերան
 անցնելով՝ Եղիսէի ականջը որ ինկաւ, Եղիսէ
 խրկեց Թագաւորին ըսաւ թէ՛ « Ի՞նչ սոսկացեր
 կը վախնաս . թող քովս դայ՝ Եւէման, ու ինքն
 ալ գիտնայ որ Խորայեւացւոյ մէջը մարգարէ
 մարդ կայ » : Եւէման ալ իր ձիերովը ու կառ-
 քերովը երբոր Եղիսէի դրան առջևը եկաւ, Ե-
 ղիսէն շերեցաւ իրեն, հասրա խրկեց ուրիշի բեր-
 նով իրեն ըսաւ որ երթայ Յորդանան գետը, ու
 հոն եօթը անգամ մտնայ լուացուի՝ որ բժշկուի :
 Մը որ լսեց Եւէման, Եղիսէի վրայ բարկանա-
 լով՝ « Ես, ըսաւ, կը կարծէի թէ աս մարդս պի-
 տոր ելլէ ձեռքը վրաս դնէ, ու իր Մտուծոյն
 կարգացմունքներ ընելով զիս բժշկէ . մեր Գա-
 մասկոսի գետերը Խորայեւացւոյ ջրերէն աղէկ
 չէն մի, ըսաւ, որ ես հոն չերթամ լուացուիմ
 ու անով բժշկուիմ » : Երբոր Եւէման ասանկ
 սրդողած թօթվեց Եղիսէն՝ ու կ'ուզէր որ ալ
 ետ դառնայ երթայ, իր ծառաները նորէն մէջ
 մտան յորդորեցին զինքը, թէ մարգարէին ըսա-
 ծը թեթեւ բան մըն է, թող փորձելու համար
 ընէ : Մն ատենը Եւէման ալ Յորդանան գետը
 գնաց, ու Եղիսէի աստպրրածին պէս հոն եօթը
 հեղ որ լուացուեցաւ՝ այնպէս կատարեալ բժը-
 կուեցաւ որ, վրայի միտը մէկ մատղաշ տղի մը
 մարմին դարձաւ :

Մը հրաշքս որ եղաւ, Եւէման ելաւ նորէն
 Եղիսէին քովը եկաւ, ու շնորհակալութեամբ
 փառք տալով Մտուծոյ կ'ըսէր որ՝ « Հիմա կը
 հաւատամ թէ աշխարհքիս վրայ ալ ուրիշ Մտ-

տուած չկայ՝ Իսրայելացւոց երկրի Բստուածէն
 'ի զատ . . . և իր բժշկութեանը համար երախ-
 տագիտութիւն ցուցնելով՝ ան հետը բերած
 ընծաներէն հանեց որ Լղիսէի տայ . բայց Լ-
 ղիսէն ամենեւին բան մը չուզեց առնել, Բն ա-
 տենը՝ Սէէմանն ալ կատարեալ դառնալով սա-
 տուածատալաշտ ըլլալով՝ բարի հաւատքով Լղի-
 սէէն խնդրեց որ՝ երկու ջորիի բեռ Իսրայելա-
 ցւոց երկրէն հող վերցընէ՝ առնէ, հետը իր երկի-
 ըր տանի, որ անոր վրայ՝ իբր թէ սուրբ երկրի
 վրայ կեցած՝ Ճշմարիտ Բստուծոյ իր աղօթքը ու
 բարեպաշտութիւնը ընէ :

Բայց մէկ զարմանալի դիպուած մ'ալ պա-
 տահեցաւ . աս Սէէմանի կեցիք բարով ընելու
 երթալու ատենը՝ Լղիսէն մէկ փոքրաւոր մը ու-
 նէր Վեէզի անունով, ասոր դժուարը եկաւ թէ՛
 ինչու Լղիսէ՝ Սէէմանէն բան մը չառաւ՝ որ մար-
 դը սիրով հաներ կու տար կոր . ուստի ինքը ե-
 տեւէն վաղեց գնաց Սէէմանի հասաւ, իրեն
 սուտ ըսաւ թէ՛ . « Երգապետս զիս քեզի խոր-
 կեց որ՝ բերած ընծաներէդ մէկ տաղանդ մը ար-
 ծաթ, ու երկու ձեռք հագնելու լաթ տաս,
 որ երկու աղքատ մարդիկներու պիտի տամ, որ
 խիստ կարօտութեան մէջ են . » : Սէէման ալ
 սիրով յօժարութեամբ հանեց իրեր տաղանդ
 արծաթ երկու պարկի (կամ չուվալի) մէջ լեցը-
 նել տուաւ և ան հագուստներն ալ մէյտեղ՝ ծա-
 ոաններուն կոնակը տուաւ՝ Վեէզիին հետը ճամ-
 բեց : Իրիկուան դէմ մթով մարդ չտեսած՝ Վեէ-
 ղին աս բաները զաղտուկ տունը առաւ խոթեց
 սրահեց . և մարդու բան չըսած, ատենն որ եղաւ
 կեղծաւորութեամբ երբոր Լղիսէին առջևը ե-
 լաւ որ իր ծառայութիւնը ընէ, Լղիսէն զար-

Ճառ իրեն Տարցուց թէ՛ « Ուսկից կու գաս
 'կոր ,, . ան ալ ըսաւ . « Դասապ հոս էի , տեղ
 մը չեմ գացեր ,, : Ըն ատենը Լղիսէն սրդո-
 ղելով երեսը տուաւ ըսաւ . « Գիտես թէ իմ
 հոգիս հան չէր մի՛ երբոր Եկեման արծաթները
 ու հագուստները հաներ քեզի կու տար , որ
 դուն անով գետիններ այգիներ ու կենդանիներ
 առնես , մեծնաս ծառաներու տէր ըլլաս . անոր
 համար քեզի կ'ըսեմ որ Եկեմանի բոլր քու
 վրայ և քու զուակներուդ վրայ անցնի ,, : Եւ
 Լղիսէի ըսածին պէս տեղը շուտ մը ձիւնի պէս
 Եկեղիին վրայ բոլր դուրս տուաւ :

Ըսկէ ետքը Ըսորուոց թագաւորը նորէն պա-
 տերազմ ուզեց բանալ Խորայեւրացուոց հետ , ու
 կը նայէր որ գաղտուկ վարպետ ճամբաներով
 Խորայեւրացուոց վրան ելլէ յաղթէ . բայց քանի
 անգամ որ կ'ընէր՝ չէր յաջողեր . ինչու որ Լղի-
 սէ մարգարէն անոր ըրածը կ'իմանար՝ Խորայե-
 վրացուոց թագաւորին կը յայտնէր , որ ան ալ
 զգաստ կենալով՝ փուճ կ'ըլլար թնամիին բռնած
 ճամբան : Ըս բանիս վրայ Ըսորուոց թագաւորը
 կը զարմանար , թէ ինչպէս կ'իմանայ Խորայե-
 վրացուոց թագաւորը : Ետքը երբոր ետևէ ինկաւ
 գիտցաւ որ՝ Լղիսէ մարգարէն է պատճառը ,
 վրան զօրքեր խաւրեց՝ որ երթան Գովթայիմ
 քաղաքէն բռնեն իրեն բերեն : Երբոր աս զօր-
 քերս եկան քաղաքը պաշարեցին , Լղիսէին փոք-
 բաւորը ահով գողով վազեց իրեն քովը՝ ըսաւ .
 « Տէր , մեր բանը ինչպէս կ'ըլլայ ,, : Լղիսէ ալ
 անոր սիրտ տուաւ թէ՛ « Մի վախնար , մեր
 հետի եղածները , ըսաւ , անոնցմէ շատ են ,, ,
 ու ինդրեց Ըստուծմէ որ տղին աչքը բանայ որ
 տեսնէ . ան ալ հրաշքով տեսաւ որ բոլոր լեռը

ձիւսոր զօրքերով ու հրեղէն կառքերով թըշնամիներուն դէմը կեցած՝ Աղիսէն կը սպասարհնէին : Ատրք երբոյ թշնամիներուն զօրքը եկան Աղիսէի մօտեցան որ բռնեն , աղօթքով անանկ կուրցուց զանոնք , որ առանց ձանձուելու ինքը ըսաւ անոնց թէ՛ « Ահէք ան ձեր փնտրուած մարդուն քով ձեզ տանիմ » . և անանկ առջենին ինկած Սամարիա քաղաքը բերաւ . ու հոն աչուրնին բացաւ , տեսան որ իրենց թշնամիներուն թագաւորական քաղքին մէջը գերի բռնուած են : Հովրամ Իսրայելացոց թագաւորը սոս բանս սր տեսաւ՝ հարցուց Աղիսէի թէ՛ « Օ ասոնք ջարդեմ սարաննեմ մի » : Աղիսէ ալ իրեն ըսաւ թէ՛ « Ինոնք որ քու թրովդ չես բռնած , իրաւունք չունիս մեռցնելու . հապա կերցուր խմցուր զիրենք , ու իրենց տիրօջը քովը ձամբէ » . ան ալ այնպէս ըրաւ :

Ատե շատ չանցաւ որ՝ Բսորոց թագաւորը նորէն եկաւ Սամարիա քաղաքը սպառնաց , ու այնպէս նեղը ձգեց , որ բօլորովին կերակուրնին հատած՝ սաստիկ սովէն ինչ որ կը գտնէին նէ կ'ուտէին . անանկ որ՝ մէկ օր մը Հովրամ թագաւորը յուսահատած քաղքին սարխապին վրայ ելած որ կը պտըտէր , վարէն մէկ կնիկ մը իրեն կանչեց ըսաւ թէ՛ « Թագաւոր , օգնէ ինձի » , ու սկսաւ մէկ ուրիշ կնկան մը վրայ պատմել թէ՛ « Ինչ կնիկս ինձի ըսաւ որ՝ Վու տղադ բեր որ այսօր ուտենք , ու իմս վաղը կ'ուտենք . ուստի իմ տղաս եփեցինք կերանք , և մէկալ օրն որ կարգը իր տղին եկաւ , պահեց խաբեց զիս » : Ինչ բանս որ ըսեց թագաւորը՝ Աղիսէին վրայ կատրած կրակ կտրեցաւ , (իրը թէ՛ անիկայ այն .

չափ հրաշքներ կ'ընէ՝ ու աս նեղութեանս ճարր
 չհոգար կոր), երդում բրաւ որ Մտոր գլուխը
 վրայէն կ'առնեմ, զինքը կը մեռցընեմ: Մտանկ
 սպառնալիքով երբոր անոր մարդ խրկեց՝ ետքը
 ինքն ալ ետեւէն դնաց Նդիսէի առջևը ելաւ, և
 աս բաներուս վրայ յուսահատած կը խօսէր, Ն-
 դիսէն մէկէն իրեն պատասխան տուաւ թէ՝
 «Մտուած ասանկ կ'ըսէ որ՝ վաղուան օրը աս
 ատենս այնպէս առատութիւն պիտոր ըլլայ, որ
 մէկ զրիւ (կամ քիչ) բարակ ալիւրը՝ մէկ սիկզ
 (իրը կէս զուռուշ) պիտի ընէ», և թագաւորին
 իշխաններուն մէկը ան ժամանակը դարձաւ իրեն
 ըսաւ թէ՝ «Նրկինքէն ալիւրը անձրևի պէս մի
 պիտի դայ, որ ատ ըսածդ ըլլայ», Նդիսէ ալ
 իրեն պատասխան տուաւ որ՝ «Մտ բանս դուն
 աչքովդ պիտոր տեսնես՝ ու անկէջ չուտես», ու
 Նդիսէին ըսածը այսպէս կատարուեցաւ:

Չորս հօգի խորայեւացի՝ բօրտութեան պատ-
 ճառով Սամարիայի քաղքէն դուրս կը կենային.
 ասոնք ալ ան սաստիկ սովէն ճարերնին հատած,
 յուսահատութեամբ՝ ան առտուն կանուխ մու-
 թուն ելան թշնամիներուն բանակը դացին, որ
 թէ չսպաննեն զիրենք՝ զոնէ ուտելու բան մը
 ձեռք ձգեն որ ապրին. և անոնց բանակին մէջը
 վեր վար պտըտին տեսնեն որ մարդ մարդաձայն
 չկայ. սպառնան որ ան գիշերը Մտուած անոնց
 մէջը մէկ սաստիկ ահ մը ձգեր էր, իրենց հե-
 առուանց զօրքերու ձիաւորներու ձայներ լսել տա-
 լով. անանկ որ՝ կարծելով թէ Սարայեւացիք ու-
 ըիշ թագաւորներու հետ մէկ եղած վրանին կը
 հասնին կոր, վախերնէն ամէն բաներնին հոն
 թողած՝ արտօրնօք փախեր էին: Աւստի աս բո-
 րտաները երբոր ասանկ ամէն բարիքով լեցուն

դտան բանակը, ան տեղը նստան աղէկ մը կերան
 խմեցին, ու արծաթով սակիով լեցուած՝ եկան
 Սամարիա քաղքին սահապաններուն աւետիս
 տուին աս բանս: Թագաւորն ալ լսելով առջի
 բերանը կարծեց թէ թշնամիները խաբեբայու-
 թեամբ ետ քաշուած ըլլան. բայց ետեւ երբօր
 մարդիկ խրկեց՝ նշաններէն իմացաւ որ՝ անանկ
 լեղատառտառ փախեր են, որ ճամբուն վրայ ալ
 լաթերնին և ուրիշ բաներնին թողուցեր են,
 անկէջ ետեւ՝ ալ բոլոր քաղաքը ելան թշնամիներուն
 բանակին վրայ վաղեցին, ու ժողովոյ ժող-
 վոյի անանկ լեցուեցան անոնց թողած բարիքնե-
 ըովը, որ Աղիսէի ըսածին սէս ցորենը ու գարին
 ոչինչ զնով կը ծախուէր: Ասե աս շիտթու-
 թեանս մէջը ան վերի ըսած թերեհաւատ իշ-
 խանն ալ, որ քաղքին դուռը թագաւորը զինքը
 վերակեցու դրեր էր՝ որ ժողովրդոց ազմուկը
 կարգաւորէ, անտեղը ան բազմութեան ելլողին
 մտնողին ոտքին տակը ինկաւ մեռաւ, ինչպէս որ
 Աղիսէ մարգարէացեր էր: — Ըսոնցմէ ի զատ
 ուրիշ հրաշքներ ալ ըրաւ Աղիսէ մարգարէն,
 ինչուան իր վախճաններէն ետքն ալ: Ար երբօր
 Յովաս թագաւորին օրերը մեռաւ ու թաղուե-
 ցաւ, անկէջ մէկ տարիէն ետեւ մէկ մեռել մը որ
 գերեզմանները թաղելու տարեր էին, աս թա-
 ղողներուն վրայ աւաղակներ հասան. անոնք ալ
 վախերնէն շուտ մը մեռելը հոն Աղիսէի գերեզ-
 մանը ձգելուն սէս՝ մեռելը ողջնցաւ ոտքի վրայ
 ելաւ կայնեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Է .

Յեւ Սքայարի ցեղը կը չնչն՝ ինքը կը բազաւորէ , և
անոր անունն նստած խորայեղացոց բազաւորները :

Աճ աշխարհի 3120 : (Դ . Թագ . Բ . Ժ . ԺԲ . ԺԳ . ԺԴ .)

Վորէն Մտուոց հետ պատերազմ որ քացին
Խորայեղացիք , ու Յովրամ Թագաւորը աս պա-
տերազմին մէջը վիրաւորուած երբոր Յեզրայէլ
ըսուած քաղաքը բերին՝ որ հոն իրեն պէտ ը-
նեն , ան ատենը Մտուոց հրամանովը Աղիսէն
իր աշակերաններուն մէկը հռամովթ Վաղայադ
խրկեց , որ հոն Յեու ըսուած իշխանը Խորայե-
ղացոց վրայ Թագաւոր օժէ , որ Վքայաբի տանը
վրայ շատոնցմէ Մտուոց սպաննացած պատի-
ժը կատարէ : Յեուն ալ Թագաւոր եղածին
պէս զօրքը ժողովեց՝ շուտ մը ելաւ Յեզրայէլ քա-
ղաքը Յովրամ Թագաւորին վրայ գնաց . Յով-
րամ որ փախչել կ'ուզէր , Յեուն ետեւէն հա-
սաւ՝ նետով զինքը հոնտեղը սպաննեց , և անոր
մարմինը Վաբովթի այգին՝ (որ ան տեղուանքը
կըլլար) ձգել տուաւ . որ ստով Աղիա մարդա-
րէին խօսքը կատարուեցաւ : Ատքը դարձաւ
Յեու Յեզրայէլ քաղաքն որ պիտի մտնէր , տե-
սաւ որ Յեզրայէլ հագուած կասուած աշուրնե-
րը ծարիր (այսինքն սիւրմէ) քաշած՝ աղուորցած՝
անանկ իր պալատին պատուհանը կեցած իրեն
խօսք կը նետէր . « Քարի եկար , կ'ըսէր , Օ ամ-
բրի տիրասպան » , իբր Թէ Յեուն ալ Օ ամ-
բրին պէս իր տէրը սպաններ՝ անոր Թագաւո-
րութիւնը ինքը յափշտակեր էր , ինչպէս որ վե-

ըր պատմեցինք : Յէուն ալ հրամայեց Յեզաբելի քովը եղած երկու ներքինիներուն՝ որ բռնեն զինքը անկէջ վար ձգեն . ու ձգածին պէս՝ անանկ կտոր կտոր ջախջախեցաւ՝ և ձիերու օտքի տակ ինկած կորսուեցաւ : Յեզաբելի մարմինը՝ որ ետքը թաղելու համար ձորով միայն զըխուն գաղաթը ու ձեռաց թաթերը դտան, ինչպէս Ադիա մարդարէին բերնովը աս պատիժս ալ ըսեր էր Մատուած : Լսիկէ ետքը Յէու բռնեց ջարդել տուաւ Մքայարի մնացած մէկալ եօթաւ նասուն որդիքը . նաև ձամբով մը խարեց՝ բոլոր Քահազ կուսքին քուրմերը մէկտեղ իր տաճարին մէջը ժողվել տուաւ, բռնեց զամէնքը թրի անցուց, ու Քահազի արձանը երեց, անոր տաճարը կործանեց, ոտից ձամբայ շինեց, Մ Յէու թագաւորին ըրած նախանձայուղութեանը՝ Մատուած վարձք տուաւ որ չորս պորտ իրեն զաւկէն թագաւոր նստի : Թէպէտ Յէու այսպիսի զովելի բան ըրաւ, որ Մքայարի կաապաշտ ցեղը բոլորովին աշխարհքէս ջնջեց վերուց, բայց ինքն ալ Յերոբոամի որդւոյ՝ Քաբատայ մեղքէն եօշկեցաւ՝ անոր դրած հարթերը պաշտելը չվերցուց . անոր համար Մատուած ալ իրեն պատիժ նորէն Մորուոյ Մգայէլ թագաւորը Քարայեղացուց վրայ հանեց, որ իրենցմէ շատ տեղուանք առաւ ու չարչարեց զիրենք :

Յէու քսանբութի թագաւորէն ետքը որ մեռաւ, ետեւէն իրեն Յովաքազ ըսուած որդին նստաւ տասնութթ օտարի . որ ինքն ալ ան Յերոբոամի կաապաշտութիւնը չվերցուց . և ան պատճառովը Մատուած ալ Քարայեղացիները երեսէ ձգեց, որ ուժերնին գնաց՝ ու Մորիները իրենց երկիրները եկան տիրապետեցին :

Յովաքայի ետեւէն թագաւորութիւնը առաւ իրեն որդին Յովասը : Ընտանիքը Լազիսէ մարգարէն որ հիւրնդոցեր մեռնելու մօտ էր , քովը գնաց Յովաս թագաւորը , ու սկսաւ առջևը լալ լալ ըսել թէ՛ « Դուք որ մեռնիս նէ , Խորայեւացւոց բանը ինչ պիտոր ըլլայ » : Լազիսէն ալ իրեն հրամայեց որ՝ աղեղը (այսինքն օք եայր) ձեռքը առնէ , ու իր ձեռքը անոր ձեռքին վրան դրած՝ ըսաւ որ պատահանէն դուրս գէպ ՚ի Լսորւոց երկիրը շտկէ նետէ , որ աս նշան ըլլայ Լսորինները կոտորելու : Թագաւորն ալ ասանկ իրեք հեղ նետելէն ետեւ կանկ որ առաւ , անտեւնը Լազիսէն ցաւեցաւ՝ « Անխախտս , ըսաւ , որ միայն իրեք անգամ պիտի Լսորինները ջարդես . չէ նէ՛ հինգ կամ վեց հեղ նետած որ ըլլայիր , բոլորովին կը ջնջիր զանանք » : Լազիսէի ըսածին պէս Յովաս ալ իրեք անգամ յաղթութիւն ընելով Լսորւոց դէմ , իր հօրը ատենը Խորայեւացւոց կորսնցուցած քաղաքները նորէն ետ առաւ : Ետքը Լմասիա ըսուած Յուդայի ցեղին թագաւորն ալ երբոր հպարտութեամբ Խորայեւացւոց վրայ պատերազմ՝ բացաւ , Յովաս զան ալ յաղթեց՝ զինքը պատերազմին մէջը բռնեց , ինչուան Երուսաղէմ գնաց առաւ , և անկեց շատ կողոպուտ վերցուց Սամարիա բերաւ : Ետիկայ ալ տասուերկու տարի թագաւորելէն ետեւ որ մեռաւ՝ տեղը իր տղան նստաւ Յերթոս վամ Բ ըսուած , որ քառսունըմէկ տարի թագաւորութիւն քշեց : Ընտանիքը ետեւէն իրեն որդին նստաւ Օպարիա անունով . ասիկայ Յէու թագաւորին ցեղին պինտ ետքինը եղաւ , որ միայն վեց ամիս թագաւորութիւն ըրաւ :

Ընտանիքն ալ առջի Յերթոս վամ թագաւորին

կուսարշտու թեան ճամբան զացին . անոր համար
 Լստուծոյ պատիժն ալ վրանէն պակաս չեղաւ .
 անանկ որ ան ետքի Օգրարիային վրան ելաւ
 Սեղղուժ ըսուած մէկ մը՝ սպաննեց զանիկայ ,
 ինքը անոր տեղը մէկ ամու մը շափ թագաւոր
 նստաւ : Ետև Սեղղուժի վրայ ալ ելաւ մէկ ա-
 լելի զօրաւոր մարդ մը՝ Սանայեմ անունով , ու
 Սեղղուժը սպաննեց՝ ինքը թագաւորութիւնը ա-
 ռաւ : Երկայ՝ թերսա ըսուած Իսրայելացւոց
 քաղքըններուն մէկը որ իրեն զէմ կեցաւ , երբոր
 վրան զնաց առաւ նէ՝ շատ անողորմութիւններ
 ըրաւ անտեղը : Ետքը ծանր տուրքեր ձգեց Իս-
 րայելացւոց ժողովուրդին վրայ , ու տարաւ Փուա
 ըսուած Եսորեստանի թագաւորին տուաւ՝ որ
 ձեռքէն խալըսի վրայէն երթայ , և իրեն կանակ
 կենայ : Եւ Սանայեմն ալ տասը տարի կու-
 սարշտու թեամբ թագաւորելէն ետև մեռաւ նէ՝
 իր տղան անցաւ տեղը , Փակէէ ըսուած . և անոր
 ալ թագաւորութեանը տասը տարին որ եղաւ ,
 իրեն իշխաններուն մէկը՝ որ Փակէէ որդի Սալ-
 մելայ կ'ըսուէր , ուրիշ ուժով մարդիկներու հետ
 խօսք դրած՝ ելաւ մեռցուց թագաւորը , ինքը
 յափշտակեց տէրութիւնը : Եւ ալ իրմէ առջին
 ներէն վար շինաց կուսարշտու թեան և ուրիշ ա-
 նորէնութեանց կողմանէ . ուստի ասոր օրերը ե-
 կաւ թագաւորութիւնաւոր ըսուած Եսորեստանի
 մեծ թագաւորը ու Իսրայելացւոց շատ տեղուան
 քը առաւ տիրապետեց , և անոնցմէ շատ գերի
 բռնեց՝ Եսորեստան տարաւ :

Ետքը Փակէի թագաւորութեանը քսանե-
 րորդ տարին՝ մէկ ուրիշ մը ելաւ Սալմէէ որդի
 Ելայի ըսուած , որ Փակէէն սպաննեց՝ ինքը
 յափշտակեց տէրութիւնը , և աս՝ Իսրայելացւոց

Թագաւորներուն վերջինը եղաւ : Ինչու որ՝ աս Ովսէէ թագաւորը ինքը հարկատու ըլլալով Մսորեստանի թագաւորին , խօսք դրաւ Ագիստացւոց թագաւորին հետ , որ իրեն օգնէ՝ ու ան մէկալին տակէն ելլէ : Ընոր համար Ովսէի թագաւորութեան եօթներորդ տարին՝ եկաւ Սաղմանասար Մսորեստանի թագաւորը , և իրեք տարի Սամարիա քաղաքը պաշարելէն ետքը՝ մտաւ առաւ , ու բոլոր Իսրայելացւոց տասը ցեղին երկիրներն ալ տիրապետելով՝ Ովսէէ թագաւորը շղթաներով կապած Իսրայելացւոց հետը Մսորեստան գերի տարաւ : Այս անոնց տեղը՝ Մսորեստանէն և ուրիշ երկիրներէն ասդիէն անդիէն մարդիկ ժողոված՝ բերաւ Սամարիայի կողմերը բնակեցուց . որ ասոնք ետքը մէկ զատ ազգի մը պէս եղած՝ Սամարացիք ըսուեցան : Ընչի բերանն որ աս կուսպաշտ մարդիկը եկան , Մսուած իրենց պատիժ խրկեց , որ առիւծներ վրանին կուգային՝ շատ մարդ կը մեռցնէին . իրենք ալ Մսորդան թագաւորին ասանկ հասկըցուցին բանը՝ թէ ան երկրին աստուծոյն օրէնքը չգիտնալով՝ կը պատժուին կոր : Ըն ատենը թագաւորն ալ Իսրայելացւոց բռնած գերի տարած քահանաներէն մէկը խրկեց իրենց , որ եկաւ Բեթէլ քաղաքը նստաւ , ու մովսիսական օրէնքները անոնց կը սորվեցնէր : Սամարացիներն ալ զանրնդունեցան , բայց իրենց ունեցած կուռքերն ալ ձեռքէ չթողուցին . անանկ որ՝ Մսուածմէ ալ կը վախնային , ու իրենց կուսպաշտութիւնն ալ կ'ընէին :

Ըստպիտի կերպով վերջացաւ Իսրայելացւոց տասը ցեղին թագաւորութիւնը , որ երկու հարիւր յիսուն տարիի չափ գիմացաւ , առջի Յերո-

բովանձն սկսած՝ ինչուան առ ետքի Ովսէէ Ը սուածը, որ տասնըիններորդ Թագաւոր եղաւ : Ըր բոլոր Խորայեւացոց Թագաւորները մէկ քան զմէկ չարանալով և կռապաշտութիւն ընելով ներքեւի եղած Ժողովուրդն ալ իրենց չար օրինակով զլխէ հանեցին . այնքան որ՝ մեղքերնուն չափը լցուելով՝ Մտուած ալ ձեռուրնէն առաւ Թագաւորութիւննին, ու երեսէ ձեկց Թողոց՝ որ երթան գերի ծառայ ըլլան ան Թագաւորներուն և ազգերուն, որ անոնց կռապաշտութեանը ետեէն ինկեր չէին զատուեր, ու ամենեկն չէին մներ այնչափ սուրբ մարգարէից խորատներուն, որ մէկմէկու ետեէ Մտուած իրենց կը խօրկեր՝ որ մտիկ ընեն դարձ գան : Եւ Թէպէտ Յուդայի ցեղին մէջն ալ պակաս չեղաւ կռապաշտութիւնը և չար Թագաւորները, բայց բարիներ ալ գտնուեցան՝ որ աստուածապաշտութիւնը ձեռքէ չթողուցին, որ անով քիչ մը աւելի քշեց իրենց տէրութիւնը . ինչպէս ալ հիմա պիտի դառնանք անոնց վրայ պատմենք :

Գ Լ Ո Ի Խ Ի Ը .

Յուդայի ցեղին բազաւորները՝ Ռայրովանէ սկսած ինչուան Յովրաւ :

Ա՛մ աշխարհի 3030 : (Գ . Թագ . ԺԲ . ԺԵ . ԻԲ : — Դ . Թագ . Գ : — Բ . Մնաց . ԺԲ . ԺԳ .)

Խորայեւացոց տասը ցեղն որ բաժնուեցան ինչպէս վերը պատմեցինք, միայն Յուդայի ու Բենիամինի ցեղին վրայ Թագաւոր մնաց Ռաբբ վամ Սողամնի որդին, որ քառսունըմէկ տարուան մարդ էր :

Ա. Բ՛րիկայ՝ առջի իրեք տարին աստուածայաչ տուժեամբ աղէկ անցուց . բայց անկէց ետքը իր հօրը չար օրինակին հետեւելով՝ ճամբան փոխեց , անանկ որ Բ՛ստուծոյ տաճարը մէկդի թողած՝ կուռքերու տեղուանք շինեց լեռներուն և անտառներուն մէջը , որ ասով իրեն տակը եղած Յուզայի ժողովուրդն ալ զլխէ հանեց : Բ՛նոր համար սաստիկ բարկացաւ Բ՛ստուած , ու Սոբովլամի թագաւորութեանը հինգերորդ տարին՝ թող տուաւ որ Սաւսակիմ՝ Ազխիտացուց թագաւորը անհամար զօրքով եկաւ իր երկիրները մտաւ՝ ինչուան Աջրուսաղէմ հասաւ , ու բոլոր տաճարին և թագաւորական պալատին ոսկեղէն ու արծաթեղէն բաները ժողվեց առաւ , և վրանին ալ ծանր տուրքեր դրաւ : Բ՛նոր վրայ քիչ մը խելուընին զլուխնին ժողվեցին՝ Սոբովլամ և իր մեծամեծքը , յայտնի տեսնելով աստուածային բարկութիւնը , որ Սամէաս մարգարէն իրենց առջևը դրաւ . ու ասով Բ՛ստուած ալ դադրեցուց պատիժնին , որ թշնամին զիրենք թողուց երաւ իր տեղը գնաց : Բայց այսու ամենայնիւ Սոբովլամ նորէն իր առջի չար ճամբան դարձաւ բռնեց ինչուան իր մահը , որ տասնըեօթը տարի թագաւորելէն ետեւ մեռաւ , Աջրուսաղէմ քաղաքը թաղուեցաւ :

Բ. Բ՛րիաս կամ Բ՛րիու՝ Սոբովլամի քանրութիւնը որդուց մէջ հօրը աւելի սիրելի զաւակը , իր ետեւէն թագաւորեց . որ ասոր չարութիւնն ալ կուսպաշտութեան դիէն՝ իր հօրմէն շատ վար չէր մնար : Աւ որովհետեւ միշտ թշնամութիւն և ներհակութիւն մը մնացեր էր՝ Յուզայի , ու Բորայելի տասը ցեղին մէջը՝ ան Սոբովլամի ատենին բաժնուելու պատճառովը , աս Բ՛րիայի

և Յերոբովամի Իսրայելացւոց Թագաւորին մէջը նորէն մէկ մեծ պատերազմ մը բացուեցաւ, Բժիսայի դիէն Յուդայի զօրքը չորս հարիւր հազար էին, ու Յերոբովամի դիէն Իսրայելացւոց զօրքը՝ ութը հարիւր հազար: Արքոր պատերազմ սկսելու եղան, Բժիսա ան ատենը ատուած սրաչառութեան կողմը բռնելով՝ ելաւ հանչելով Իսրայելացւոց յորդորանք մը ըրաւ՝ որ նորէն գան Ղաւթի Թագաւորութեան ներքեւ դառնան, ու զճշմարիտն Կտուած պաշտեն իրեն տաճարին մէջը. և աս ալ ըսաւ. « Իրաւ որ հիմա դուք մեզմէ շատուոր էք, բայց ձեր օգնականը Յերոբովամի շինած հորթէ սուտ աստուածները ըլլալով, և մեր հետը՝ մեր ճշմարիտ տէր Կտուածը, ինչպէս ձեր բանը պիտի աջողի, որ անանկ դուք Կտուծոյ դէմ ելեր կը պատերազմիք », Կտուած որ կ'ըսէր Բժիսան, Յերոբովամ անդիէն իր բանակը անանկ կարգաւորեց որ՝ Իսրայելացւոց ետեւէն գացին Յուդայի զօրքը մէջերնին առին: Կտուածը Բժիսան ալ իր զօրքով սաստիկ նեղը ինկած՝ սկսան Կտուծոյ աղաղակել օգնութիւն խնդրել. և այնպէս չարաչար մէկմէկու հետ պատերազմելով, քահանաներն ալ Կտուծոյ աղօթք ընելով փողերն որ կը լաւէին՝ Կտուած օգնութիւն հասաւ Յուդայի բանակին, որ անտեղը հինգ հարիւր հազար հողի Իսրայելացիներէն կտորեցին, (որ մէկ զարնուելով դեռ այսպիսի մեծ ջարդ աշխարհքի մէջը լուծ չէ), և մնացած իրեք հարիւր հազարին ետեւէն ինկան փախցուցին ցիրուցան ըրին, ու առաջ գացին Իսրայելացւոց երկիրներէն շատ տեղուանք առին: Կտուած աս բանս ըրաւ՝ որ իր ամենակարող զօրութիւնը ցուցնէ. բայց ա-

սով ալ չհասնուեցաւ Մբխայի սիրտը՝ որ կռապաշտու-
թիւնը թողու՝ Մտուծոյ դառնայ . անոր հա-
մար Մտուած ալ արժանի չտեսաւ որ ինքը իրեք
տարիէն աւելի թագաւորութիւն ընէ :

Գ. Մսա Մբխայի որդին իր ետեւէն թագաւոր
նստաւ : Մըջի բերանը շատ գովելի և բարեպաշ-
տական գործքեր ըրաւ ասիկայ . ջանաց որ կռա-
պաշտութիւնը բոլորովին վերցընէ իր տէրութե-
նէն , այնքան որ չխնայեց իր Սաքա ըսուած
մօրն ալ , որ կռապաշտութեան մէջ հաստատ
կեցեր էր՝ զինքը թագուհիութենէ վար ձգեց :
Մսա՝ իր հօրմէն աւելի զօրքը շատցուց , որ միայն
Հուդայի ցեղէն իրեք հարիւր հազար ունէր , ու
Թենիամինի ցեղէն՝ երկու հարիւր վաթսուս
հազար , բոլորը քաջ պատերազմող զինուորներ :
Օարեհ Նթովարացուց թագաւորը Մսայի վրան
եկաւ հազար հազարով (այսինքն միլիոն մը զօր-
քով) ու իրեք հարիւր պատերազմական կառքե-
րով . Մսա ալ Մտուծոյ օգնութիւնը խնդրելով
անոր դէմը ելաւ , ու մէկէն սաստիկ ջարդ մը
տարով՝ արեց ցիրուցան ըրաւ զանոնք , և ուրիշ
շատ կողոպուտներէն ՚ի դատ՝ եօթը հարիւր կով
ու ութը հազար ոչխար անոնցմէ ձեռք ձգեց , որ
աս յաղթութեանս համար ՚ի շնորհակալութիւն
Մտուծոյ բերաւ զանոնք տաճարը զոհ մատուց :
Նորը Մգարիա մարդարէին խրատովը ժողովուր-
դը մէյտեղ ժողովեց Մսա . նորէն ուխտ ու դա-
շինք ըրաւ Մտուծոյ հետ , որ բոլորովին կռա-
պաշտական բաները իր տէրութենէն մարդի-
կերցընէ , միայն Մտուծոյ ծառայէն : Մսա այս-
պիսի բարի բաները ընելէն ետեւ՝ իր թագաւո-
րութեան ետքի տարիները կամաց կամաց փո-
խուեցաւ , սկսաւ ծուռ ճանքայ երթալ , Մէյ

մը , որ իր մէջը ու Վաստա ըսուած Վարայեւա
ցոյ թագաւորին մէջ պատերազմ որ բացուե-
ցաւ , Մսա Մստուծոյ չդիմեց՝ ինչպէս առջի ան-
գամը , հապա մարդկային ճամբայ բանեցընելով՝
սակի արծաթ ժողովեց , նաև Մստուծոյ տաճարէն
ալ բան առաւ , Մսրեոց թագաւորին խրկեց՝ որ
իրեն կոնակ կենայ օգնէ . և իրեն այսպիսի թե-
րահաւատութեանը համար Մնանիա մարգարէն
երբոր զինքը կը խրատէր , Մսա վրան սրդողեցաւ՝
բոնեց մարգարէն բանտը դնել տուաւ , ու սս
բանիս ժողովրդոց մէջէն դէմ խօսողները՝ սրան-
նել տուաւ : Արկրորդ՝ երբոր Մսա իր ծերու-
թեան ատենը մէկ սաստիկ ոտքի ցաւով մը ին-
կաւ սպուկեցաւ , փոխանակ Մստուծոյ դիմելով՝
բժիշկներուն ինկաւ՝ անոնց վրայ իր յոյսը դրաւ ,
որ անոնք ալ իրեն ճար մը չկրնալով ընել՝ մեռաւ
իրեն թագաւորութեանը քառսունըմէկ տարին .
թէպէտ և շատ փառաւորութեամբ զինքը թա-
ղեցին :

Գ . Հովսափատ Մսային բարեպաշտ որդին
էտեւէն թագաւորեց , որ իր հօրմէն շատ աւելի
հոգ ու ջանք ցուցուց աստուածպաշտութեան և
արդարութեան կողմանէ . որ ղւտացի քահա-
նաներու հետ իշխաններ խրկեց ասդիս անդին իր
ներքեւը եղած բոլոր քաղաքները և գեղերը , որ
երթան աստուածային օրէնքները աղէկ մը սոր-
վեցընեն ժողովրդոցը : Մնոր համար Մստուած
ալ օրհնեց իրեն թագաւորութիւնը , որ իր օրե-
րը Հուդայի երկրին ամէն բանը աջող կ'երթար-
անանկ որ՝ տանըմէկ հարիւր վաթսուն հազար
(այսինքն մէկ միլիոն ու հարիւր վաթսուն հա-
զար) պատերազմող զօրքի տէր եղաւ , և իր բեր-
դերը ու քաղբքները անանկ ամբցուց , որ իրեն

Կաճմանակից այլադի տերութիւնները իրմէ կը վախճնային և տուրք ալ կու տային :

Բայտս որ մեծցաւ հարուստցաւ Յովսափատ, Բայաբ Խարայեւացւոց թագաւորն ալ Բորւոց դէմ պատերազմ ունենալով՝ Յովսափատ թագաւորին աղաչեց որ իրեն հետ ելլէ. ան ալ չէ չրսաւ, միայն թէ ուզեց որ մարգարէի մը ձեռքով Բատուծոյ կամքը խմանայ : Բայաբ առ բանիս վրայ իր սուտ մարգարէներուն աւելի հաւտալով՝ որ յաջողութիւն կ'ըսէին, քան թէ Սիբիա ճմարիտ մարգարէին՝ որ ձախորդ գուշակութիւն կ'ընէր ան պատերազմին, այնչափ յորդորեց Յովսափատը՝ որ իր հետ պատերազմ հանեց : Բայց առ պատերազմիս մէջը երբոր յաղթուեցան ու չարաչար մեռաւ Բայաբ, Յովսափատ ալ ճորով իր անձը խալրսեց Երուսաղէմ դարձաւ. և ասոր համար ծանր յանդիմանութիւն լսեց Յիւ մարգարէին՝ թէ « Եւն ինչո՞ւ Բատուծոյ ատելի մարդուն հետ բարեկամութիւն ըրիր ու անոր խօսքը մոռցիր. իրաւի, ըսաւ, առ բանիս պատիժը կը գտնէիր, եթէ Բատուած քու առջի բարեգործութիւններուդ համար քեզի չխնայէր », : Յովսափատ ալ ասոր վրայ զղջալով՝ նորէն հող տարաւ որ իր տերութեանը մէջ աստուածպաշտութիւնը զարդարուի, ու աստուածային օրէնքները ազէկ պահուին : Բսկէ ետքը Բմնացիք ու Սոլաբացիք և ուրիշ այլադիներ ալ մէկ եղա՞ծ՝ Յովսափատի վրայ պատերազմ բացին. Յովսափատ ալ աղօթքով ու պարով Բատուծոյ օգնականութիւնը խնդրեց՝ անոնց դէմ ելաւ. անոր համար դեռ պատերազմը չկսած՝ Բատուած թշնամիներուն բանակին մէջ անանկ մէկ վախ մը ու շփոթու-

Թիւն մը ձգեց՝ որ գրեթէ բոլոր մէկգմէկ շար-
 գելով հատուցին, ու այնչափ բարեք թողուցին
 հոնտեղը, որ ձորով իրեք օրուան մէջը կրեցին
 առին Արուսաղէմ բերին: Բնակ քաջութեամբ
 քաննըհինգ տարի թագաւորելէն ետքը մեռաւ
 Յովսափատ: Ինչպէս ըսինք, թէպէտ այսպիսի
 բարի թագաւոր մըն էր Յովսափատ, բայց ետ-
 քը աս պահասութեանս մէջն ալ ինկաւ, որ Ս-
 քողիայի Մքայաբի տղին հետ ալ բարեկամու-
 թենէ՛ ի զատ խնամութիւն ըրաւ, անոր քոյրը
 Յեզաբելի աղջիկը իր տղին կնիկ առաւ: Բնոր
 համար Մտուծմէ աս պատիժս եկաւ վրան, որ
 երբոր Սքողիայի հետ մէյտեղ ընկերութեամբ
 նաւեր խրկեր էին որ երթան Սոլիերէն ոսկի
 սոննէն բերեն, նաւերնին ճամբան կտորտե-
 ցան:

Ե. Յովրամ Յովսափատի անդրանիկ տղան,
 որ իր հօրը ատենէն թագաւորութեան բանե-
 թու մէջ էր, երբոր անոր մեռնելէն ետեւ ալ թ-
 քնազլուխ որ սկսաւ թագաւորութիւն ընել, ի-
 րեն մէկալ վեց եզրայրները, որ իրենց հօրմէ
 սագիս անգին քաղաքներու վրայ իշխան դրուած
 էին, բռնեց մեռցուց, և իր Վողոզիա ըսուած
 կնկանը չար խրատովը, որ Մքայաբի ու Յեզա-
 բելի աղջիկն էր, թողուց իր հօրը բարեպաշտու-
 թեան ճամբան, ու նորէն կաապաշտութիւն մտա-
 ցուց Յուդայի երկիրը՝ Վորայելացուց պէս: Բնոր
 համար սատուածային պատիժն ալ ետեւէն շատ
 չուշացաւ վրան հասաւ, որ ներքեւ եղած հար-
 կատու աղգերը իրմէն զլուխ քաշեցին, ու ուրիշ
 ներուն հետ մէկ եղած եկան իր երկիրը մտած
 կողոպտեցին յափշտակեցին. և իր կնիկները ու
 զաւակները բոլոր՝ որը սպաննեցին, որը գերե-

բանեցին տարին , անանկ որ՝ միայն պինտ պղտի որդին Ոքողիա ըսուածը մնաց իր մօրը հետ : Կտրը ինքը Յովրամ ալ չարաչար հիւրնդցաւ , փորհարութեամբ (այսինքն խալով) քիչ մը առնին մէջ ինկաւ մեռաւ , որ քառսուն տարուան կարիճ էր . անանկ որ բոլորը ութը տարի թագաւորութիւն ըրաւ :

Գ Լ Ո Ի Խ Ի Թ .

Յուդայի ցեղին քաղաքները Ոքողիայէ սկսած ինչուան Աքագ :

Սճ աշխարհի 3120 : (Գ . թագ . ժԵ . ժԳ . ժԵ . ժԶ : —
Բ . Մնաց . ԻԲ . ԻԳ :

Զ . Ոքողիա քսանուերկու տարուան էր՝ երբոր հայրը մեռաւ , անոր տեղը ինքը թագաւոր նստաւ : Եսիկայ ալ բողորովին Մքայաբի ցեղին կռապաշտութիւնները՝ ու Խարայեւացոց երկիրը եղած անօրէնութիւնները Յուդայի տէրութեան մէջը մտցուց՝ իրեն Վողողիա ըսուած մօրը խրատովր : Ենոր համար մէկ տարիէն աւելի չթագաւորած՝ Եստուծմէ առաւ իր արժանաւոր պատիժը . որ Խարայեւացոց Յովրամ թագաւորին քովը գտնուելով որ անոր հիւանդտես զացեր էր , հետը մէյտեղ սպաննեց զինքը Յէու թագաւորը , երբոր Եստուծոց հրամանովր ելաւ բոլոր Մքայաբի ցեղը թրէ անցուց : Վողողիա ալ երբոր տեսաւ որ Ոքողիան մեռաւ , ինքն ալ շուտ մը ջարդել տուաւ բոլոր թագաւորութեան մնացած ժառանգները , ու ինքը նստաւ բանեց

Յուդայի թագաւորութիւնը : Ըն ատենը Յովսափեթ Աքողիայի քոյրը ուրիշ մտրմէն եղած որ Յովիդայէ քահանայապետին կնիկն էր , Աքողիայի զաւկըներուն մէջէն պինտ պզտիկը Յովաս ըսուած՝ որ մէկ տարուան տղայ էր՝ աղատեց պահեց , ու Յովիդայէ քահանայապետին ձեռքը տուաւ , որ Վոդողիայէն գաղտուկ՝ առնէ քովը տաճարը պահէ :

Է . Ետքը աս Յովասը երբոր ալ մեծցաւ ու եօթը տարուան եղաւ՝ Յովիդայէ քահանայապետը ձեռաց տակէն խնացուց բոլոր թագաւորութեան մէջը խօսքի տէր մարդիկներուն ու զօրապետներուն , և մէկ շաբաթ տօնախմբութեան օր մը զասոնք ամէնը մէյտեղ կանչեց տաճարը բերաւ , ու հոնտեղը անոնց առջևը Յովասը գլուխը թագը դրած թագաւոր օծեց . որ ամէնն ալ ուրախութեամբ ծափ զարնելով ցնծումով ընդունեցան՝ Արցիտ արքայ ըսին : Վոդողիա որ բանը չէր գիտեր՝ աս ժողովրդոց իրար անցած որ լսեց , ինքն ալ իր մարդիկներովը վազեց տաճարը գնաց , ու երբոր տեսաւ թագաւորը նոր տաճ՝ ու անոր քովը իշխանները և բոլոր ժողովուրդը՝ որ խնտումով փողեր չալելով օրհնեցիկը կարդային , կատղեցաւ՝ վրայի լաթերը պատուեց , « Ըն ինչ դաւաճանութիւն է , ըսաւ , ձեր ըրածը » : Ըն ատենը ժողովուրդը անտեղը ուզեցին որ բռնեն սպաննեն զինքը . բայց Յովիդայէ չթողուց , ըսաւ որ տաճարէն դուրս հանեն՝ անանկ մեռցընեն Վոդողիան՝ իր խորհրդակիցներուն հետը մէյտեղ : Ընկէ ետեւ Յովիդայէ քահանայապետը նոր թագաւորին՝ և իշխաններուն ուխտ ու դաշինք ընել տուաւ , որ կուսաբար տական բաները մէջերնէն վերցընեն , ու աս

սրւածային օրէնքները աղէկ պահեն . ուստի
 շուտ մը դացին կործանեցին Քաջաղ կուռքին
 տաճարը՝ որ Վոդոզիան շինել տուեր էր, ու բո-
 լոր Յուդայի երկիրը կուռքերէն և կապալաշա-
 կան բաներէն սրբեցին մաքրեցին . ետքը Մատու-
 ծոյ տաճարը նորոգելու ալ ձեռք զարկաւ Յովաս,
 և զան ալ պէտք եղածին պէս շինեց կարգի դը-
 րաւ : Մանկ աստուածպաշտութեամբ ու ար-
 դարութեամբ աղէկ կ'երթար Յովաս թագաւո-
 րը՝ քանի որ Յովիդայէ քահանայապետը ողջ էր՝
 և անոր խրատներովը կը կառավարուէր . բայց
 երբոր Յովիդայէն մեռաւ, կամաց կամաց իրեն
 իշխաններուն ծուռ խորհուրդներուն մտիկ ընե-
 լով ինքն ալ զՄատուած թողուց, ու սկսաւ կռա-
 պաշտութիւն ընել : Մ'բանիս վրայ Յովաս թէ
 պէտ շատ խրատուեցաւ մարդարէններէն, բայց չէ
 թէ միայն շահ մը չեղաւ, հասլա Ղզարիան ալ Յո-
 վիդայէի որդին որ Մատուծմէ խրկած տաճարին
 սրահին մէջը իրեն խրատ որ տալու եղաւ՝ ըսաւ
 թէ «Մտանկ ընելով բանդ չյաջողիր», Յովաս
 այնպէս սրդողեցաւ վրան, որ անոր հօրը իրեն
 վրայ ըրած երախտիքը բոլորովին մոռնալով՝ ան-
 տեղը զինքը քարկոծել տուաւ մեռցուց . որ ան
 ալ մեռնելու ատենը ըսաւ . «Մտուած տեսնէ՛
 ու քու դատաստանդ ընէ», Մ'նոր համար ասոր
 մէկալ տարին թոյլ տուաւ Մատուած, որ Մտ-
 րինները քիչ մը զօրքով Յովասի վրայ եկան, ու
 իրեն շատուոր զօրքը ջարդելով, թագաւորական
 զանձը կողոպտեցին առին՝ անանկ ելան տեղեր-
 նին դարձան : Ատքը ինքը Յովաս ալ՝ որ աս բա-
 նիս համար սիրտը կոտրած հիւրնդցած պառկեր
 էր, ան ատենը քանի մը հողի իրեն ծառաներէն
 մէկ եղած, անտեղ Ղզարիա մարդարէին մա-

հուանը ոխը հանելու համար՝ դացին զինքը վր
մահիճին մէջը մորթեցին . որ քառասուն տարի
Թագաւորութիւն ըրաւ :

Ը . Մնասիա Յովնաի որդին քսանհինգ տա-
րուան՝ երբոր հօրը ետեւէն Թագաւոր նստաւ .
ան իր հայրը մեռցնողները բռնեց սպաննեց , ու
ինքն ալ առջի բերանը բարեպաշտութիւն ցու-
ցուց : Մտիկայ ուզեց որ Եղովնայեցիները որ
Յովնամ Թագաւորին ատենէն զուխ քաշե-
կին՝ նորէն իր տակը առնէ , և իրեն իրեք հա-
րիւր հազար զօրքը բաւական չսեպելով՝ Խորայե-
լացւոցմէ ալ հարիւր հազար զօրք՝ հարիւր տա-
ղանդ արծաթ վարձք տուաւ բռնեց , որ չօրս
հարիւր հազարով անոնց վրայ երթայ : Երբոր
Մնասիա ասանկ պատրաստուած պատերազմի պի-
տի ելլէր , իրեն մէկ մարգարէ մը եկաւ Մտու-
ծոյ կողմանէ ըսաւ որ , « թէ որ կ'ուզես յաղ-
թութիւն ընել՝ ան Խորայելացւոց զօրքը եւ
ճամբէ , որ Մտուած հետերնին չէ » : Մն-
սիան ալ պատասխան տուաւ թէ՛ « Հապա՛ս
տուած ստակս պարանպ մի երթայ » : Սորցա-
րէն ալ « Ս'ի վախնար , ըսաւ , Մտուած անոյ
տեղը քեզի աւելի շատը կու տայ » , Մն ատենը
ինքն ալ հնազանդեցաւ , ան Խորայելացիները
մէկդի թողուց՝ միայն իր զօրքովը Եղովնայեցի-
ներուն վրան զնայ , անոնց տասը հազարը ջար-
դեց , ու տասը հազարն ալ գերի բռնած չարա-
չար տանջանքով սպաննեց : Մայց աս յաղթու-
թիւնը իրեն գէշ դուռ մը բացաւ , որ Եղովնայե-
ցւոց կուռքերը առաւ Երուսաղէմ բերաւ , «
զՄտուած թողուց՝ սկսաւ զանոնք պաշտել
Ետքը երբոր Մտուծոյ կողմանէ մարգարէն է-
կաւ զինքը խրատեց՝ թէ « Դուն ինչպէ՛ս »

ապտուածները կը պաշտե՛ս՝ որ իրենց ժողովուրդը քու ձեռքէ՛դ չկրցան խալըսել, և ասոր համար պատիժ՛դ պիտի Մատուծմէ՛ գտնաս », Մնասիա վրան սրդողելով քովէն վաճնտեց զանիկայ ու ըսաւ . « Թէ՛ որ մէյ մ'ալ բերանդ բանաս նէ՛ քեզ կը մեռցնենմ » : Ատքը Մատուծոյ պատիժը ասանկ Մնասիայի վրան եկաւ , որ երբոր հը պարտացած և իր ուժին վրայ ապաւինած՝ Յովասի Խորայեւրացոց թագաւորին դէմն ալ պատերազմ՝ բացաւ , ան սրատերազմին մէջը անանկ չարաչար յաղթուեցաւ որ՝ ինքն ալ բռնուեցաւ , ու Խորայեւրացիքը ինչուան Արուսաղէմ՝ եկան առին , քաղքին սարխապները փլցուցին , ու բոլոր ոսկին արծաթը թալլեցին տարին : Այս ալ հերիք չէ , ետև Մնասիայի զօրքը իրմէ զլուխ քաշեցին . ինքն ալ որ վախցաւ երեսը ծածկեց Աքիա քաղաքը փախաւ , ետևէն գացին հոն սպաննեցին զինքը , ու ետքը անկէց մարմինը բերին Արուսաղէմ թաղեցին . որ բոլոր քսանըինը տարի թագաւորութիւնն ըրաւ :

Թ . Ազիա կամ Աքարիա Մնասիայի որդին տասնրկեց տարուան էր՝ երբոր թագաւոր դրին իր հօրը ետևէն : Այս ալ առջի տարիները բարեպաշտութեամբ ու աստուածապաշտութեամբ կը կառավարէր իր տէրութիւնը . անոր համար բանը կ'աջողէր , ու յաղթութիւններ կ'ընէր այլազգի թագաւորներուն դէմ . և իր երկիրն ալ շատ շինութիւններ ըրաւ , ու զինուորական բաները անանկ շտկեց կարգի դրաւ , քաղքներուն պարխապները նորոգեց ամրցուց որ՝ ուրիշ տէրութիւնները ամէնը իրմէ կը վախնային : Բայց ասանկ երջանկութեամբ թագաւորելէն ետքը՝ կամաց կամաց սիրտը այնչափ մեծցաւ հպարտա-

ցաւ որ, ուզեց քահանայական բաներու ալ խառնուիլ : Ընդհանուր մէկ որ մըն ալ երբոր Ըստուծոյ տաճարին մէջ՝ բուրվաոր ձեռքը սեղանը ելած քահանայի պէս խունկ որ կը ծխէր, Ընդհանուր քահանայապետը հետը ուրիշ քահանաներ առած՝ իրեն դիմացը ելաւ ու յանդիմանելով Ըստուծոյ թիւ « Ըստ քու բանդ չե՛, հապա Ընդհանուր քահանաներուն միայն տուած է՝ որ Ըստուծոյ առջևը խունկ մատուցանեն . ուստի նայէ չըլլայ թիւ տաճար Ըստուծոյ հաճոյ բան ընելու տեղը՝ զինքը բարկացընես » : Ազիս Թագաւորն ալ քահանայապետին դէմ սաստիկ սրդողենինի՝ յանկարծակի Ըստուծոյ պատիժը վրան հասաւ, որ հոնտեղը չարաչար մարմինը բորոտեցաւ . աս որ եղաւ՝ շուտ մը ձգեց տաճարէն դուրս ելաւ . և անկէ ետեւ իր տունը քաշուեցաւ, անանկ բորոտած կեցաւ ինչուան իր մահը, որ յետոյնուերիու տարի Թագաւորեց . և ան ատենէն իր Զովաթամ ըսուած որդին դրաւ՝ որ ժողովուրդը կառավարէ :

Ժ. Զովաթամ քսանըհինգ տարուան էր՝ երբոր հօրը մեռնելէն ետեւ սկսաւ ինքնագլխի Թագաւորութիւն ընել, ու տամնրվեց տարի աստուածապաշտութեամբ և խաղաղութեամբ կառավարեց իր տերութիւնը, և ինքն ալ շատ շինութիւններ ըրաւ իր երկրին մէջը : Ետքը մէկ պատճառով մը հետը պատերազմ որ բացին Ընդհանուրները, յաղթեց՝ զանոնք իրեն հարկաւ տու ըրաւ, որ տարին հարիւր տաղանդ արծաթ, տասը հազար քոս ցորեն, ու տասը հազար քոս դարի կը բերէր իրեն Ընդհանուր Թագաւորը : Զուգայի տերութեան վրայ կ'ուզէ ելլել Փակէէ որդի Ատմեղայ ըսուած Ընդհանուր :

լացւոց թագաւորը՝ Ռասան Մսորւոց թագաւորին հետ . բայց դեռ պատերազմը չսկսած՝ մեռաւ Յովաթամ ու Լըուսաղէմ թագուեցաւ .

ԺԱ . Մբազ Յովաթամի որդին իր հօրը ետեւէն թագաւորութիւնն որ առաւ , Մսուծոյ պատուհասէն չվահնալով՝ որ ժողովրդոց մեղացը համար՝ ինչպէս ըսինք ալ գալու վրայ էր , և ժողովուրդն ալ անոր հօտը առնելով՝ ահա դողի մէջ էր , (որ ան ատենը Լսայի մարգարէն զիրենք մխիթարելու համար՝ իրենց ետքի ազատութիւնը և ան թշնամիներուն կործանումը մարգարէացաւ) , այսու ամենայնիւ ինքը մտիկ չբրաւ՝ նորէն կռապաշտութիւն մնացոյց իրեն տէրութեան մէջը , Խորայեւացւոց թագաւորներուն օրինակը նայելով , ու այնչափ չարացաւ որ՝ ուրիշ այլազգի կռապաշտներուն պէս իր տղաքն ալ կուռքերուն առջեւ կ'երէր զոհ կ'ընէր : Ուստի Մսուած ալ վրան սաստիկ բարկանալով թող տուաւ , որ մէյ մը առաջ Ռասան Մսորւոց թագաւորը եկաւ , որ աղէկ մը զիրենք ջարդելէն ետեւ՝ խել մըն ալ գերի բռնեց Ղամասկոս տարաւ : Մնոր ետեւէն եկաւ Փակէէն որդի Ռովմեւայ Խորայեւացւոց թագաւորը , ու ինքն ալ անանկ ջարդ մը տուաւ իրենց , որ մէկ օրուան մէջը հարիւր քսան հազար հողի կտորուեցան Յուդայի դիէն , ու իրեք հարիւր հազար ալ իրենց կնիկներով տղաքներով Խորայեւացիները գերի բռնեցին , ուրիշ կողոպուաներուն հետը առին Սամարիա տարին , թէպէտ ետքը Ովգեդ մարգարէին խրատը մտելով՝ խղձացին վրանին , ու իրենց պիտանաւորութիւնը հողալով՝ անանկ ետ դարձուցին ան ողորմելի գերիները : Բայց ասով ալ երբոր Մբազ իրեն բռնած չար ճամբէն ետ

որ չկեցաւ, Մատուած նորէն Ռասոն Մտորոց
 Թագաւորը՝ ուրիշ պլազզիներուն հետք անոր
 վրան հանեց, որ եկան Յուդայի երկիրներէն
 շատ տեղուանք առին: Ինչ ատենը Մբազ ալ
 ճարը հատած՝ իր գանձը ու տաճարին գանձը
 Ժողովեց Թագազաթփաղասար ըսուած Մտրես
 տանի Թագաւորին խրկեց, որ դայ ինքը անոնց
 ձեռքէն խալըսէ: Բայց անանկ ալ ճար չեղաւ.
 Ինչու որ՝ Թագազաթփաղասարը ան մէկալ Թա-
 գաւորները յաղթելէն ետե՛ նորէն ինքն ալ Մ-
 քազին վրան եկաւ, ու իրեն և իր խխաններուն
 բոլոր մնացած ստակը քաշեց առաւ, զինքը հար-
 կատու ըրաւ: Մբազ աս ամէն Թշուառութիւն-
 ները տեսնելով՝ ճար չեղաւ խելքը գլուխը չժող-
 վեց, հապա իրեն կռասպաշտութեանը մէջ հաս-
 տատ կեցած՝ մտորած կ'ըսէր թէ՛ « Մտրեստա-
 նի աստուածները աւելի զօրաւոր են եղեր՝ որ
 զիս յաղթեցին. անոր համար ես ալ այսուհե-
 տե ան աստուածները կը սբաշտեմ՝ անոնց զո՛
 կ'ընեմ, որ ինձի ալ օգնութիւն հասնին », ու
 Պամասիոսի կռուքերուն սեղանին օրինակն որ
 հոն տեսեր էր, անոր պէս Արուսաղէմ Մտու-
 ծոյ տաճարին մէջը շինել տուաւ, և անոր վրայ
 ինքն ալ զոհ կը մատուցանէր. ետքը հոն հասաւ
 որ Մտուծոյ տաճարին դռներն ալ բոլորովին
 գոցել տուաւ: Ի՞նչպիսի անօրէնութեամբ տա-
 նըվեց տարի Թագաւորութիւն ըրաւ Մբազ՝ ու
 անանկ մեռաւ:

ԳԼՈՒԽ Լ.

Եզեկիա քաղաւորին պատուորիւնը, և իր ետեւեւ
 նստած Բուդայի ցեղին քաղաւորները՝ ինչուսե
 վերջը :

ԵՃ աշխարհի 3278 : (Գ . Թագ . ԺԸ . ԺԹ . Ի . ԻԵ :
 Բ . Մնաց . ԻԹ . Լ . ԼԵ :)

ԺԲ . Ըբազի ետեւէն՝ Եզեկիա անօր որդին
 Թագաւորութիւնը առաւ, որ քսանըհինգ տա-
 րուան էր : Ըսօր պէս բարեպաշտ ու աստուա-
 ծավախ Թագաւոր չեղաւ բոլոր Զուդայի ցեղին
 Թագաւորներուն մէջ, որ նստելուն պէս՝ իր հօր-
 մէն և անկէ առջի Թագաւորներէն մտած բոլոր
 կուռքերը ու կուսապաշտական բաները ջնջեց
 վերցուց, Ըստուծոյ տաճարին դուռը նորէն
 բացաւ՝ առջինին պէս մարբեց զարդարեց տաճա-
 րը, և քահանաները ու Ղ և տացիները իրենց
 կարդին կանոնին մէջ դրաւ, որ անպակաս զոհե-
 րը ու պատարագները ըլլան՝ ինչպէս որ Վաւիթ
 և Սողոմոն սահմաներ էին, ու աստուածային
 տօները իրենց ատենովը կատարուին : Վաւ իր
 նստած առջի տարին՝ բոլոր Խորայեւացւոց երկի-
 րը չորս դին Թղթով մարդիկ խաւրեց, ու յոր-
 դորելով մէկալ Խորայեւացւոց ցեղերէն ալ շատ
 մարդ ժողվեց Երուսաղէմ բերաւ, և անոնց
 հետ մէյտեղ անանկ փառաւոր զատկի տօնա-
 խմբութիւն մը ըրաւ, որ Սողոմոնի ատենէն ՚ի
 վեր՝ այնպիսի աստուածապաշտութեան հանդէս
 տաճարին մէջը եղած չէր . որ երկու հազար
 կով ու տասներեօթը հազար ոչխար Ըստուծոյ
 զոհ ըրին : Եւ տասներչորս օր աս տօնախմբու-

Թիւնը դիմանալէն ետև՝ ժողովուրդը իրենց տեղն որ դարձան, այնուհետև սկսան կուռքերը վերջնել, ու կատարեալ աստուածապաշտութիւն ընել: Ընտր համար Մտուած ալ Լզեկիա Թագաւորին բանը աջողեց, որ իր հօրը ժամանակէն կորսընցուցած տեղուանքը նորէն այլազգիներուն ձեռքէն ետ առաւ, սկսաւ իր տէրութեան սահմանը մեծցընել, ու ժողովուրդը:

Մյուս կերպով երբոր Մտրեստանի Թագաւորին տուրքն ալ չուզեց վճարել, որ ինչպէս ըսինք՝ իր հօրը ատենէն ՚ի վեր վրանին դրած էր, ան պատճառովը իրեն Թագաւորութեանը տասնըչորս տարին՝ Սենեքերիմ Մտրեստանի Թագաւորը սաստիկ ուժով Լզեկիայի վրայ պատերազմ ելաւ, ու ետևէ ետև քաղաքները անելով առաջ որ եկաւ՝ Վաքիա ըսուած քաղաքը որ հասաւ, ալ Լզեկիա վախցաւ թէ Լքուսաղեմ ալ կու դայ կ'առնէ: անոր համար շատ տուրք արծաթ ու ոսկի ձարեց ժողովեց իրեն խրկէ՞ որ հետը հաշտութիւն ընէ՞ վրայէն երթայ: Իսկ Սենեքերիմ զան հերիք չսեպելով՝ այսու ամենայնիւ հպարտութեամբ խրկեց Սափսակ ըսուած իր մեծ զօրապետը, որ երթայ Լզեկիայի լսել թէ՛ «Ղար չկայ պէտք է որ քաղքիդ դռները ինձի բանաս, որ դամ առանց մէկու մը զէն հասցընելու խաղաղութեամբ ներս մտնեմ»: Սափսակն ալ եկաւ, ու քաղքին պարսպին առջևը կեցած բոլոր ժողովրդոց կանուելով ըսաւ թէ՛ «Լզեկիայի բերանը նայելով՝ ձեզ Մտուածոյն վրայ յոյս մ'ունենաք՝ որ ձեզ իմ ձեռքէ խալըսէ: ո՞ր է, ըսաւ, ինձի կրցան մի դէմ կենալ այնչափ երկիրներուն աստուածները, որ ես իմ ուժովս զամէնը յաղթեցի ներքևս ասի

որ ձեր աստուածը Արուսաղէմը իմ ձեռքէս ազատէ : Եւ հայհոյական բաներս որ լսեց Ազգեկիա՝ սոսկալով վրայի լաթերը սպտուեց , ու մէկ քուրձ մը առաւ հագաւ՝ անանկ խոնարհութեամբ ելաւ Բստուծոյ տաճարը գնաց՝ սկսաւ աղաչել պաղատիլ , որ ասոր ճարը ինքն հոգայ իր անհուն ողորմութեամբը . նաև մարդիկ խրկեց Ասայի մարգարէին ըսաւ թէ՝ « Հիմա է նեղութեան և տառասանաց օրը . քու աղօթից կը կարօտինք , որ Բստուած աս Սատիսակայ հայհոյական խօսքերը լսէ՝ ու մեզի ողորմի : Եսայի մարգարէն ալ ան մարդիկը նորէն Ազգեկիայի դարձուց խրկեց , որ իրեն ըսեն թէ սիրտը ամուր բռնէ չլախնայ՝ Բստուած կեցեր է , որ Սենեքերիմ ոչ Արուսաղէմ մտնէ՝ և ոչ գայ պաշարէ , հագա խախը խայտառակ եղած ետ դառնայ ուսկից որ եկաւ նէ : Եւ շատ չուշացաւ՝ անանկ մարգարէին ըսածին պէս եղաւ . որ անոր ետևի գիշերը Բստուած մէկ հրեշտակ մը խրկեց Սենեքերիմի բանակը , ու հոնտեղը հարիւր ութսունըհինգ հազար հոգի սպաննեց գետինը փռեց : Սենեքերիմ առտուանց որ ելաւ աս բանս տեսաւ՝ ինքն ալ արտօրնօք մնացած ներովը փախաւ՝ Ահնուէ իր երկիրը գնաց , և հոն ալ շատ չանցաւ՝ որ իր երկու որդիքը մէկ սպտաճառով մը զինքը սպաննեցին , ու իրենք հայաստան փախան :

Ատքը ինչպէս կ'ըսեն ան սաստիկ նեղութեանէն՝ Ազգեկիայի մէկ ծանր հիւանդութիւն մը եկաւ , անանկ որ՝ Ասայի մարգարէն երբօր քովը գնաց տեսնելու , իրեն ըսաւ թէ՝ « Ատակըրբէ՝ դու կը մեռնիս չես խալլաիր : Եզգեկիան ալ ան ատենը լալով Բստուծոյ դիմեց որ իրեն

ողորմի . Մտուած ալ նորէն քովը խաւրեց Այսայի մարգարէն , որ իրեն ըսաւ թէ՛ « Քու ազօթքդ լսեցի . ուստի քեզի անանկ կատարեալ բժշկութիւն կու տամ , որ ասկէց իրեք օրէն կարող ըլլաս ոտքի վրայ ելլել՝ տաճարը երթալ , և Վաւ ասկէ՛ ՚ի զատ՝ Ազեկիայի խոտացաւ թէ տասնըհինգ տարի ալ պիտի ապրի , և Սենեքերիմի ձեռքէն բողորովին պիտոր խալթի ինքը՝ և Արուսաղէմ քաղաքը . ետքը աս ըսածներուս ճշմարտութեանը՝ Այսայի մարգարէն նշան ալ տուաւ իրեն , որ Մազու ըսուած արևի ժամացուցին շուքը հրաշքով տասը աստիճան ետ շարժի : Ազեկիա ալ անանկ ըսածին պէս կատարեալ որ ողջնցաւ՝ ՚ի շնորհակալութիւն Մտուծոյ ան օրհնութիւնը շինեց՝ որ կը սկըսի . Այս ասոցի՛ է վերանալ : Մն ատենը Մաբելացուոց թագաւորն ալ որ Ազեկիայի հետ բարեկամ էր , անոր հրաշքով եղած բժշկութիւնը լսելով ինքն ալ դեսպաններով իրեն աչքիլուօթ թուղթ խրկեց , ու ընծաներ ալ հետը : Ազեկիա շատ սիրով ընդունեց անոր դեսպանները , ու պարծենալով առջևնին բացուեցաւ՝ բողոր իր ունեցած մեծութիւնը և հարստութիւնը ցուցուց իրենց : Քայց աս բանս Մտուած հաւնեցաւ . ուստի խրկեց Այսայի մարգարէն , որ Մտուծոյ կողմանէ եկաւ յանդիմանեց զինքը , ու ըսաւ թէ՛ « Ա՛յկ օր մը ատ բողոր ցուցըցած բաներդ Քաբելոն պիտոր երթան , ու քու տղաքներդ ալ թուներդ ալ Քաբելացուոց թագաւորին քով պիտի ծառայ ըլլան » : Ազեկիա ալ աս չափիս շնորհակալ եղաւ Մտուծոյ , որ իր օրը պիտի չըլլայ ան թուառութիւնները : Մյայտի բարեպաշտութեամբ քսանըլինը տարի թագաւո .

բեկն ետքը՝ մեռաւ Եղեկիա, ու Երուսաղէմ
քաղաքը փառաւորապէս թաղուեցաւ :

ԺԳ. Եղեկիայի ետեւէն թագաւոր նստաւ
Սանասէ իր որդին, որ տասուերկու տարուան
տղայ էր. բայց վարքը ամենեւին չէր նմաներ
հօրը բարեպաշտութեանը : Մտոր համար տէ-
րութիւնը առածին պէս՝ փոխեց իր հօրը դրած
ճամբան, նորէն կուսապաշտութիւն դարձուց ժո-
ղովուրդը, ու անանկ ըրաւ որ՝ ալ այլազգիներ-
բուն մէջը կուռք չմնաց որ չառնէ պաշտել չտայ
ժողովրդոցը. նաև Մտուծոյ տաճարին մէջը
կուռք տնկեց՝ տաճարը պղծեց կուստուն ըրաւ,
ու իր տղոյմէն ալ ան կուռքերուն զոհ կը մատու-
ցանէր ուրիշ կուսապաշտներուն պէս. նաև կա-
խարդական՝ և ուրիշ այսպիսի կերպ կերպ չար
բաներու տուեր էր զինքը : Մ ալ հերիք չէ,
իրեն քարոզողները խրատ տուողները՝ որ ետ կե-
նայ այսպիսի անօրէնութեանէն՝ կը բռնէր կը
սպաննէր. որ անանկ շատ անմեղ մարդու արիւն
մտաւ, և ասոնցմէ մէկն ալ կ'ըսեն թէ Եսայի
մարգարէն եղաւ, որ զինքը խրատելուն համար՝
փայտէ սղոցով (այսինքն տէստէրէով) մէջքէն
երկուք կտրել տուաւ՝ այնպէս չարաչար սպան-
նեց : Մ Սանասէին ըրած անօրէնութիւննե-
րը, որ անցուց բոլոր իրմէ առջի եղած Յուդայի
և Իսրայելի չար թագաւորներուն ըրածները,
այնչափ սրդողցուց զՄտուած, որ ալ կատարեալ
վճիւր կտրեց ըտաւ թէ՛ « Ենչպէս Իսրայելա-
ցուոյ թագաւորութիւնը բոլորովին ջնջեցի վեր-
ցուցի, ասանկ Յուդայի տէրութիւնն ալ պիտի
ջնջեմ », : Բայց այսու ամենայնիւ իր անհուն ո-
ղորմութեամբը՝ ուզելով որ Սանասէ ապաշխա-
րութեան օրինակ մը ըլլայ բոլոր աշխարհքիս :

Թող տուաւ որ Մտրեատանի Թագաւորը դայ
 Լըրուսաղէմ առնէ, ու Սանասէն երկաթէ շրջ-
 Թաներով կապած Վաբելոն տանի, և հոն բան-
 տին մէջը Մտուած իրեն շնորհք տուաւ որ
 ճանչնայ իր ըրածները՝ ու մեղայ գոչէ Մտու-
 ծոյ, և ապաշխարելով, ինչպէս կ'աւանդեն՝ ան
 զղջական աղօթքը ընէ, որ կը սկսի. Տէր աֆնա-
 ՚աւ, Մտուած Մէրահամ : Լսողը ստանկ որ
 սրտանց դարձ եկաւ Սանասէն, Մտուած ալ
 իրեն ողորմեցաւ, որ ան գերութենէն ազատեց,
 նորէն իր առջի Թագաւորութիւնը դարձուց. ու
 ինքն ալ անկէ ետեւ Մտուծոյ առջևը խոնար-
 հած՝ վերցուց բոլոր իր դրած կուռքերը և կոա-
 պաշտական բաները, ու հրամայեց որ առջինն
 պէս աստուածապաշտութիւն ըլլայ, և մնացած
 կեանքը բարեպաշտութեամբ անցընելով յի-
 սունը հինգ տարի Թագաւորութիւն ընելէն ետ-
 քը խաղաղութեամբ մեռաւ :

ԺԴ. Մինն Սանասէի որդին քսանութրիտ
 տարուան Թագաւոր նստաւ իր հօրը ետեւէն.
 ասիկայ իր հօրը առջի չար ճամբուն հետեւե-
 ցաւ, նորէն կոապաշտութիւն մտցուց, բայց ա-
 նոր ապաշխարութեան շնայեցաւ՝ բարի օրինակ
 չառաւ : Մտր համար Մտուած ալ զինքը պատ-
 ժեց, որ Թագաւորութեանը տասութրիտ տա-
 րին իր ծառաները դացին տանը մէջ զինքը բռ-
 նեցին ստաննեցին՝ որ տեղը ուրիշ մը Թագաւոր
 նստեցընեն :

ԺԵ. Լսողը ժողովուրդը մէկ եկած՝ Թագա-
 ւորին սպաննողները մեռցուցին, ու Հովսիա ը-
 ստուած Մինի որդին (որ ութը տարուան անմեղ
 տղայ մըն էր) առին Թագաւոր նստեցուցին : Մ
 Հովսիան խիստ բարեպաշտ ըլլալով՝ բոլոր իր

հօրը դրած կուռքերը և անկէց առաջ ալ մնացած կռատաշտական բաները ուզեց որ վերջընէ մարբէ : Յուդայի երկրէն . նաև բոլոր Խորայեւացւոց երկրէն ձեռքը հասած տեղուանքը կուռքերը ու անոնց սեղանները կործանեց . ինչպէս որ իրեք հարիւր վաթսուէ տարիի չափ առաջ մարգարէն ըսեր էր : Յերոբոսիամի Խորայեւացւոց թագաւորին : Ընկէ ետքը Յովսիա երբոր ձեռք զարկաւ որ Բստուծոյ տաճարը նորոգէ զարգարէ , տաճարին մէջը քահանաները խառնել շրտկելնինի՝ օրինաց գիրք մը գտան հնուց՝ ինչպէս ոմանք կ'ըսեն Եւսէս մարգարէին ձեռքովը գրած . աս գիրքս երբոր թագաւորին առջև տարին կարդացին , և հոն հասան՝ որ մէջը աստուածային օրէնքները չպահողներուն պատիժները կը գրէր , ան ատենը թագաւորը միտքը բերելով թէ՛ իր հայրը և իրեն պատերը ինչէ՛ր ըրեր են Բստուծոյ դէմ , որով զԲստուած այնչափ սրգողցուցեր են , սաստիկ կսկիծէն վրայի լաթերը բռնեց պատուեց , ու շուտ մը մարդիկ խրկեց որ երթան մէկ մարգարէի մը հարցընեն թէ՛ ինտո՛ր պիտոր ըլլայ իրենց բանը : Մարդիկն ալ երբոր գացին Աղզան ըսուած մէկ կնիկ մարգարէի մը քով , անիկայ Բստուծոյ դիէն անոնց ըսաւ թէ՛ . « Բոլոր ան գրքին մէջի գրած պատիժները պիտի գան . բայց թագաւորին բարեպաշտութեանը համար Բստուած իրեն կ'ողորմի , որ ինչուան իր մահը խաղաղութեամբ ապրի , որ ան գալու վայերը չտեսնէ . » : Յովսիա թագաւորը աս բանս լսածին պէս՝ բոլոր իշխանները քովը ժողվեց , և անանկ միաբան ժողովուրդն ալ մէկտեղ գացին տաճարը , ու հոն նորէն ան գրքին բաները առջևնին կարդալէն ե-

տե՛ղ ուխտ ու դաշինք ըրին , որ անկէ՛ ետե Լստուծոյ պատուիրանքները բոլոր սրտով պահեն՝ ու կուսքերուն բաները մէջերնէն վերցընեն , և Լստուծոյ միայն հաւատարմութեամբ ծառայեն : Լսանկ պատուիրանապահութեամբ շտիպեցաւ բոլոր ժողովուրդը՝ Յովսիա թագաւորին բարի օրինակը միշտ առջեւնին ունենալով : Ասե տակէ՛ ՚ի զատ Յովսիա մէկ փառաւոր զատիկ մըն ալ ըրաւ բուն մովսիսական օրինաց ըսածին պէս , անանկ որ՝ նմանը իրմէ առաջ մէկ թագաւոր մը չէր ըրած , որ երսուն հազար ուխտար ու այծ , և իրեք հազար կով զոհեց ան ատենը . և Լստուծոյ տապանակն ալ մեծարանքով առաւ տաճարին մէջը իր տեղը դրաւ : Լս ամէն բարիքները Յովսիա ընէլէն ետքը՝ իր թագաւորութեան երսունըմէկ տարին կամեցաւ Լստուած որ ալ աշխարհքէս զինքը վերցընէ , ու ժողովրդոց վրան դալու պատիժները չտեսնէ՝ ինչպէս շատ անգամ սպառնացեր էր . անոր համար թոյլ տուաւ որ ինքիւրեն պատերազմ բանայ՝ Աերաւով ըստած Ազխպտացոց թագաւորին դէմ , որ Լսորեստանի վրայ ելեր էր պատերազմ կ'երթար : Լս պատերազմիս մէջը Յովսիա մէկ նետով մը չարաչար զարնուեցաւ , անանկ որ ինչուան Արուսաղէմ բերին նէ՛ մեռաւ . ու իրեն մահուանը համար սաստիկ սուգ մտաւ ժողովուրդը , և փառաւորապէս իր գերեզմանը տարին թաղեցին , ու Արեմիա մարգարէն ալ վրան ողբ մը շինեց :

Ժ. 2 . Յովսիայի ետեւէն ժողովուրդը անոր տղոցը մէկը Յովաբաղ ըստած քսանուիրեք տարուան՝ թագաւոր դրին վրանին , որ իրեն հօրը բարեպաշտութիւնը թողուց , անկէ առջի չար թագաւորներուն հետեւեցաւ : Լսոր համար Լս-

առաւ ալ իրեն թագաւորութիւնը կարճըցուց, անանկ որ՝ իրեք ամսէն ետքը երբոր ան վերը ըսուած Վերաւով Ազխատացոց թագաւորը Ասորոց պատերազմէն դարձաւ, Արուսաղէմ եկաւ՝ Յովարազ թագաւորը աթոռէն ձգեց, ու շղթաներով կապած՝ առաւ հետը Ազխատոս տարաւ, որ հոն մեռաւ: Այլ իր տեղը թագաւոր դրաւ անոր մեծ եղբայրը քսանըհինգ տարուան՝ Աղիակիմ ըսուած, որ ինքը փոխեց անունը Յովակիմ դրաւ, ու վրան ծանր տուրքեր կապեց որ տարիէ տարի իրեն վճարէ:

ԻԷ. Ըստ Աղիակիմ կամ Յովակիմ ըսուածս ալ՝ չէ թէ միայն իր Յովսիա հօրը նման չելաւ, հապա մէկալ եղբօրմէն ալ չար ու անօրէն ճամբայ բռնեց. և թէպէտ շատ անգամ կը խրատէր զինքը Արեմիա մարգարէն, բայց շահ մը չէր ըներ: Աւտի չորս տարիէն ետեւ՝ Վաբուզոդոնոսոր Վաբելացոց թագաւորը եկաւ Արուսաղէմ առաւ, ու Յովակիմ թագաւորը շղթաներով կապած բռնեց Վաբելոն տարաւ, և քիչ մը ատեն քովը պահելէն ետեւ՝ վրան ծանր տուրք դրած անանկ թող տուաւ: Յովակիմ ալ առջի բերանը աս տուրքս վճարեց. բայց ետքը գլուխ որ քաշեց ապստամբեցաւ Վաբուզոդոնոսորէն, ան ատենը նորէն վրան եկան Վաբելացիքը ու Վաղզէացիքը, և երկայն ատեն հետը պատերազմ ընելով՝ վերջը Արուսաղէմ առին մտան կողոպտեցին, ու Յովակիմ թագաւորն ալ՝ տասնըմէկ տարի թագաւորելէն ետեւ չարաչար սպաննեցին:

ԺԸ. Ատեւէն թագաւոր նստաւ իրեն որդին Յեքոնիա՝ որ Յովակիմ ալ կ'ըսուէր, տասնութ թը տարուան, ասոր չարութիւնն ալ իր հօրմէն

վար չէր մնար : Աստի շատ չանցաւ իրեք ամսէն , ետքը նորէն եկաւ 'Վարուգողոմոսոր' Արուսա-
ղէմը սրաչարեց առաւ , և բոլոր քաղքին ու տա-
ճարին ոսկին ու արծաթը կողոպտելով , նաև
Թագաւորն ալ իր բոլոր սպալաախ մարդիկներովը
ու իշխաններովը և ուրիշ հազարաւոր գերիներ-
ով Արուսաղէմէն հանեց Վաքելոն տարաւ , և
հոն մնացածներուն վրայ Թագաւոր դրաւ իրեն
իշխանութեան ներքեւը 'Սեղեկիա ըսուած ան
վերի ' Յովսիա Թագաւորին սղտի տղան ' քսանը-
մէկ տարուան :

ԺԹ . Ըս Սեղեկիայի չարութիւնները և ա-
նորէնութիւնները անցուց իր եղբայրներուն ը-
րածը , անանկ որ ' իր չար օրինակովը բոլոր տա-
կը մնացած ժողովուրդն ալ աւրեց , որ կա-
սրաշտներէն վար չէին մնար , և ամենեկին մար-
գարեից քարոզութիւնները չէին մուր , հապա-
ծաղը ալ կ'ընէին մարգարէները : Ընոր համար
Թոյլ տուաւ Մտուած , որ իրենց երդումին դէմ
նորէն գլուխ քաշեն 'Վարուգողոմոսոր Թագաւո-
րէն , որ անոր ձեռքովը ալ բոլոր բովանդակ ջըն-
ջէ վերջընէ աս ' Յուդայի ցեղի մնացած տերու-
թիւնը , ինչպէս Իսրայելացւոց տասը ցեղինը ա-
ռաջ ըրեր էր : Ըստպէս որ ըրին , Վարուգողո-
մոսոր ալ անհամար զօրքով նորէն հրէաստան
եկաւ , ու առաջ Ագիտացիքը յաղթելով որ
հրէից օգնական եկեր էին , ետքը դնաց Արու-
սաղէմի վրայ , և երկու տարի չարաչար սրաչարե-
լէն ետև ' սաստիկ ու ժով մը վրայ տուաւ սրբըս-
պին մէկ կողմէն փլցուց քաղաքը մտաւ : Ըն ա-
տենը զիշերանց քաղքի մարդիկը փախչող փախ-
չողի , անոնց հետ Սեղեկիա Թագաւորն ալ քաղ-
քէն դուրս սկրդեցաւ ելաւ որ փախչի . Վաղ-

գէացիքը զինքը ճանչցան՝ ու ետևէն ինկան բռնեցին՝ Վաբուգոգոնոսորի առջևը տարին . Վաբուգոգոնոսոր ալ իրեն ըրած անհաւատարմութիւնը երեսը զարնելով՝ հոն բերել տուաւ իրեն տղաքը և իր խորհրդակից իշխանները՝ ու աչացը առջևը զանոնք սպաննել տուաւ . ետքը իրեն երկու աչքն ալ հաննել տուաւ , ու շղթաներով կապած անանկ Վաբելոն տարաւ :

Ետև Վաբուգարդան դահճապետ ըսուած՝ Վաբուգոգոնոսորի իշխաններէն մէկը Երուսաղէմ եկաւ , Ստուծոյ տաճարը ու Թագաւորին պալատը Թալլեց՝ ամէն բանը վերցուց , ու կրակ տուաւ երեց , և քաղաքին պարիսպները հիմնայատակ փլցուց . ու բոլոր մեծամեծքը և ունեօր մարդիկը բռնեց Վաբելոն գերի տարաւ , անանկ որ՝ միայն աղքատները ու բանի չեկող անշահ մարդիկը և երկրագործները հոն մնացին , և ան մնացած Ժողովրդին վրայ Վաբուգոգոնոսորի հրամանովը չքէից ազգէն մէկ իշխան մը դրաւ՝ Վոգոգիա ըսուած օրդի Վքիկամայ , որ Սասեփա կը նստէր : Վքիկայ քիչ մը ատեն խաղաղութեամբ կառավարեց , ինչուան որ մէկ ուրիշ մարդ մը Յուդայի Թագաւորական ցեղէն Խամայէլ օրդի Վաթանայ ըսուած՝ գնաց խաբէբայութեամբ ան Վոգոգիան իրեն հետը միաբանած չքէաներովը սպաննեց , ու ետքը երբօր անկէց Թալլած բաներովը ելեր կը փախչէր , Յփնաթան օրդի Վարէի ըսուած մէկ մը՝ զօրքով անոր ետևէն ինկաւ , որ ան ալ Թալլած բաները Թողուց՝ ձորով զլուխը փրցուց Վմնացուց Թագաւորին քովը գնաց , որ իրեն զրդմամբը Վոգոգիան սպաննեք էր : Ետքը աս Յփնաթան ըսուածս , որ ան մնացած չքէաները քովը Ժող-

վաճ՝ ինքը անոնց իշխանութիւն կ'ընէր, իրեն սիրտն ալ վախ մտաւ թէ Վաղղէացիք նորէն իր վրայ ալ գան . և ասոր համար թէպէտ հարցուց Արեմիա մարգարէին, և անկէց ալ Մատթոյ հրամանովը լսեց, որ ըսաւ թէ չվախնայ տեղէն չջարժի, բայց այսու ամենայնիւ Արեմիայի խօսքը չմեղձ՝ բոլոր ժողովուրդը մէյտեղ առաւ Ագիտոս փախաւ . որ ետքը հոն իրեն պատիժնին տուաւ Մատթա՝ :

Մյայէս բոլոր Խորայեւացւոց թագաւորութիւնը Սաուղէն սկսած հինգ հարիւր ութ տարի քշելէն ետեւ, և իրեք հարիւր ութսունը ութ տարի՝ տասը ցեղին տէրութեանը բաժնուելէն, և հարիւր երսունըչորս տարի անոնց թագաւորութիւնը վերցուելէն՝ բոլորովին վերջացաւ Յուդայի թագաւորութիւնն ալ, ինչպէս շատ անգամ սպառնացեր էր Մատթա՝ իրենց մեղքերը և անօրէնութիւնները մարգարէնէրուն (և մանաւանդ Արեմիա մարգարէին) բերնովը երեսնին տալով, ու ըսելով որ թէ որ չդառնան նէ՝ զիրենք բոլորովին պիտի կործանէ, և այլազգիներուն ձեռքը գերութեան պիտոր մտնէ, ինտոր եղաւ : Մնկէց եօթանասուն տարիէն ետեւ թէպէտ նորէն ողորմեցաւ Մատթա՝ որ իրենց երկիրը դառնան, բայց միշտ ուրիշ տէրութեան ներքեւը եղան, և մէյ մին ալ ան իրենց առջի ինքնագլուխ ազատութիւնը ձեռք չձգեցին . ինչպէս որ կարգով իր տեղովը պիտի պատմենք : Հիմա ասկէ ետքը պատշաճ կ'երևայ որ՝ մասնաւոր անձանց վերաբերեալ պատմութիւնները գնենք, որ Խորայեւացւոց և Յուդայի թագաւորութեան, կամ ետքը՝ անոնց գերութեան ատենը եղեր են :

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԱՆՁԱՆՑ, ՈՐ
ԻՄԱՅՆԵԼԱՅԻՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ԵՏՔԸ՝
ԳԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԸ ԵՂԵՐ ԵՆ :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Պատմության Տորիայ :

ԱՄ աշխարհի 3290 :

ՏՈՐԻԹ իտրայելացի էր Վեփթաղիմի ցեղէն՝ թեզուէ ըսուած քաղքէն, Իտրայելացւոց տասը ցեղին կուսպաշտութեան ատենը, որ ինքը միշտ աստուածաշտութեամբ և բարեպաշտութեամբ ապրելով ան Յերոբոամի դրած հորթերը չէր պաշտեր, հապա մուխիսական օրինաց հետեւելով, ամէն աստուածային տօնախմբութեան օրերը կ'ելլէր Յուդայի երկիրը կ'անցնէր՝ Լըրուսաղէմ տաճարը կ'երթար, հոն իր ուխտը և ազօթքը կը կատարէր : Լըրոր Իտրայելացւոց տասը ցեղը գերի տարաւ Սաղմանասար Բորեւտանի թագաւորը, Տորիթ ալ հետերնին առնուեցաւ Վինուէ դնաց . ու հոն ալ իր Մնա ըսուած կնկանը հետ՝ մէկհասիկ Տորիա տղեկովը ան կուսպաշտներուն մէջը իր բարեպաշտութիւնը չթողուց, և իրեն ազգին գերիներուն

շատ օգնութիւն կը հասնէր : Անոր համար Ար-
 տուած ալ զինքը օրհնեց , որ Սաղմնասար թա-
 գաւորին այնչափ սիրելի եղաւ որ՝ իրեն վաճա-
 ռական (այսինքն վէքիլխարձ) ըրաւ , ու Տորի-
 թի ազատութիւն տուաւ՝ որ ուր ուզէ նէ եր-
 թայ քալէ : Սաղմնասարին ետեւէն երբոր Աե-
 նեքերիմ թագաւոր եղաւ , ու Ազգեկիային սա-
 տերազմէն (ինչպէս վերը ըսինք) յազթուած
 դարձաւ նէ՝ իր տակը եղած Իսրայելացւոց հետ
 սաստիկ թշնամութեամբ կը վարուէր , և շատ
 մարդիկ կը բռնէր կը սպաննէր : Տորիթ ալ զի-
 շերանց գաղտուկ կ'երթար ան մեռելները կը
 թաղէր . աս բանիս համար թագաւորը ուզեց
 որ Տորիթն ալ սպաննէ . ան ալ փախաւ երեսը
 պահեց . ուստի Տորիթի բոլոր բաները թագա-
 ւորական դիէն յափշտակեցին : Արբոր սպա-
 նուեցաւ Աեւեքերիմ , Տորիթ նորէն իր տունը
 դարձաւ , և իր առջի բարեպաշտական գործքերը
 ձեռքէ չէր թողուր կ'ընէր : Ինչպէս մէկ օր մըն
 ալ փառաւոր սեղան պատրաստած իր ազգական-
 ներուն հետ կերակուր որ սխափ ուտէր , սիրտը
 չդիմացաւ՝ իր Տորիա որդին խրկեց որ երթայ
 պարտի՝ Իսրայելացւոց ազգէն աղքատ ու կարօտ
 մը որ գտնէ նէ , բերէ իրենց հետ սեղան նստե-
 ցնէ . զնաց տղան ու շուտ մը դարձաւ հօրը
 պատմեց թէ՝ Իսրայելացւոցմէ մէկ մը սպաննած
 փողոցը ձգած է : Այս օր լսեց Տորիթ , առջևի
 կերակուրը թողուց՝ շուտ մը զնաց վերցուց ան
 մեռելը տուն բերաւ՝ գաղտուկ պահեց , ու ետքը
 զիշերանց մարդ չիմացած զնաց թաղեց զանի-
 կայ , և ան զիշերը մնախտական օրինաց ըսածին
 պէս՝ պիղծ սեպուելով՝ տունը չմտաւ պառկելու ,
 հասպա դուրսը պատին տակը յօգնած կանրկին

վրայ ինկաւ, ու աչքը բաց հոն քնանախնի վե-
 րէն ճնճղուկներն որ կը ծրտէին, ան ծիրտը
 տաք տաք Տորիթի աչացը մէջ երթալով ա-
 չուրները կուրցաւ, անանկ որ՝ ալ ճար չեղաւ
 բացուելու: Բայց Տորիթ աս նեղութիւնս ալ,
 որ եղբայրսիրութեան պատճառով իրեն հան-
 դրպեցաւ, զարմանալի համբերութեամբ կը քա-
 շէր, ու փառք կու տար Բստուծոյ. մանաւանդ
 երբոր անկէ ետեւ աղքատութիւնն ալ աւելի վը-
 րան կոխեց, անանկ որ միայն կնկանը ձեռքը կը
 նայէր, որ անիկայ մանած մանեւրով խղճաբար իր
 տունը կը պահէր: Բայ թշուառութեանս մէջը
 Տորիթ կարծելով թէ ալ ինքը պիտի մեռնի
 երթայ, քովը կանչեց իր մէկ հատիկ Տորիա
 որդին, անոր բարի բարի խրատներ կտակ ընե-
 լով աղօսարեց որ ելլէ Մարաց երկիրը երթայ,
 որ հոն Վաբայէլ ըսուած մէկ մարդէ մը իր ա-
 տենով տասը քանքար (կամ քէսէ) փոխ տուած
 ստակը առնէ իրեն բերէ. անոր ձեռաց դիրն ալ
 հանեց տղին տուաւ: Տորիան ալ աս ճամբոր-
 դութեանս ընկեր գտնելու համար անէն գուրս
 ելածին պէս՝ շուտ մը առջևը մէկ կտրիճ մը տե-
 սաւ ճամբորդի կերպարանքով, որ ան Սափայէլ
 հրեշտակն էր, որ Բստուած իրեն խրկեր էր.
 Ինքն ալ զանիկայ կանչեց առաւ իր հօրը քովը
 բերաւ: Տորիթն ալ հրեշտակին ըսածին պէս՝
 կարծելով թէ ինքը Բնանիայի իր բարեկա-
 մին որդին է, ուրախութեամբ Տորիան անոր
 յանձնեց՝ որ Մարաց երկիրը տանի, և հետը
 խօսք դրաւ որ իրեն օրը դրամ մը վարձք տայ,
 ու իր կերակուրը, և աս գործքս կատարելէն ու
 առողջութեամբ դառնալէն ետքը՝ խօսք տուաւ
 ուրիշ բան ալ իրեն տալու, ու այնպէս օրհնե-
 լով զիրենք ճամբայ դրաւ:

Արքոր ասոնք գացին Ափրատ գետը հասան,
 ու Տորիա գետին քովը գնաց որ քիչ մը լուացուի
 հանդէի, յանկարծակի անդիէն մէկ մեծ ձուկ
 մը վրան վազեց. ան ատենը Սափայէլ հրեշտա-
 կը իրեն ըսաւ թէ՛ «Մի վախնար՝ բռնէ դուրս
 քաշէ, . ան ալ ցամաքը քաշեց, ու հրեշտակին
 տուած խրատին պէս՝ ան ձկան սիրտը, լերդը ու
 լեղին հանեց մէկ դի դրաւ պահեց, ու ձուկը
 եփեցին կերան: Այնկէց ետքը երբոր ալ Այ-
 բատան ըսուած Սարայ երկիրը հասան, հրեշ-
 տակը դարձաւ Տորիայի ըսաւ թէ՛ «Ար-
 թանք աս գիշերս հոս հաղուելի տունը կե-
 նանք, որ օտար մարդ չէ՛ քու ազգականդ է. և
 աս մէկհատիկ Սառա աղջիկ մը ունի, խելօք ու
 իմաստուն. քեզի կը վայել որ դուն առնես զա-
 նիկայ. կ'ուզես նէ ես հօրը հետ կը խօսիմ՝ բա-
 նը կը շինեմ, . Տորիա ալ իրեն ըսաւ թէ՛ «Այ-
 կը վախնամ. լսեր եմ որ եօթը հօգի ան աղջիկը
 առնելու եղեր են, ու ան եօթն ալ հարսնիքին
 առջի գիշերը՝ մէկ դե մը եկեր մեռցուցեր է. ես
 հօրս ու մօրս մէկհատիկն եմ, թէ որ ինձի ալ
 անանկ պատահի նէ՛ մեղք է իմ ծնողացս, .
 հրեշտակը նորէն սիրտ տուաւ տղին որ չվախնայ,
 ու սորվեցուց իրեն թէ ինչպէս աս փորձանքէս
 պիտի խալըսի. ապրսպրեց որ առջի գիշերը հետը
 քիչ մը կրակ առնէ, և ան ձկան սիրտը ու լեր-
 դը անոր վրայ դնէ ծխէ, և հարսին հետ մէկ-
 տեղ աղօթք ընեն աղաչեն Աստուծոյ. «Այն
 հոտէն, ըսաւ, ան դեւը կը փախչի կը կորսուի, ու
 Աստուծոյ օրհնութեամբը մէկտեղ կը ծերանաք,
 զաւկընէրու տէր կ'ըլլաք. ինչու որ աս աղջիկս քե-
 զի միայն պահեր էր Աստուած, . Ատքը Այբա-
 տան հաղուելի տունը որ գացին, Սափայէլ

հրեշտակը ինչպէս որ ըսեր էր, մէջ մտաւ խօսեցաւ աղջրկանը հօրը մօրը հետ. անոնք ալ շատ ուրախացան ասոր վրայ որ աղջիկնին Տօբիայի պիտի տան, որ իրենց ազգական էր: Խօսքը դրածին պէս երբօր սկսան հարսնիքը ընել, և ան գիշերը Տօբիա ալ հրեշտակին ապրապրածը ընելով բանը որ յաջող գնաց, ամէնքը փառք տալով Մտուծոյ՝ տասներջօրս օր ալ երկնցուցին հարսնիքին ուրախութիւնը: Այլ ան օրերը գնաց հրեշտակը ու ստակն ալ (ինչ պատճառով որ ճամբայ ելեր եկեր էին) Վարայելի քովէն առաւ բերաւ, ու անանկ Տօբիայի հետ հարօր մէկտեղ առած իր օժիտներով բաներովը ելան որ դառնան Վինուէ գան. որ Տօբիթ ալ իրեն կնիկանը հետ աչուրնին ճամբան կը սպասէին, սրտերնին կը հաւէր կը մտէր՝ կը վախնային թէ այնչափ ուշանալով տղին փորձանք մը հանդրարած ըլլայ: Արբօր Վինուէ քաղաքը մօտիկցան, հրեշտակը Տօբիայի հետ առաջ անցան՝ տուն եկան, և ան ատենը Տօբիան հրեշտակին ըսածին պէս ան պահած ձկան լեղին հանեց հօրը աչքը քսեց, և անով շուտ մը բժշկուեցաւ Տօբիթ՝ աչուրները բացուեցան, ու ինքն ալ ուրախութեամբ իր սիրելի զուկին վիզը պլուելով փառք կու տար Մտուծոյ, մանաւանդ երբօր Տօբիայէ կը ըսէր թէ ան ճամբօրդութեանը ատենը ինչպէս ողորմեցաւ Մտուած, որ ամէն բանը աղէկ յաջողեցաւ, ու ինքը իր ազգէն հարս բերաւ իր տունը. անոր համար եօթը օր ալ Տօբիթ նորէն հարսնիքի ուրախութիւն ըրաւ: Ապքը Տօբիթ իր տղին հետ խորհուրդ ըրաւ որ, ան բերած ստրկին կէսը աս ճամբայ ցուցնող կտրիճին վարձք տան, որ իրենց այսպիսի ծա-

սայու թիւններ ըրաւ, հարսը բժշկեց, ստակը
 գնաց հաւատարմութեամբ առաւ բերաւ, ու ի-
 րեն կուրցած աչուրները բացուելու պատճառե-
 շաւ: Աստի երբոր զանիկայ առջևնին կանչե-
 ցին՝ ու ան բերած ստրկին կէսը իրեն վարձք տա-
 լու որ եղան, ան ատենը անիկայ ալ ըսաւ յայտ-
 նեց անոնց թէ ինքը Սափայէլ հրեշտակն է:
 Այ որ լեցին՝ սրտերնին վախ ինկաւ սաստիկ
 շփոթեցան. ան ալ իրենց ըսաւ թէ “Սի վախ-
 նաք, հասա փառք տուէք Աստուծոյ, որ ձեր ը-
 րած ողորմութիւնները և ուրիշ բարեգործու-
 թիւնները տեսնելով՝ զիս խրկեց որ ձեզի օգ-
 նեմ. և հիմա ալ ատենը հասաւ որ նորէն զիս
 խրկողին քովը դառնամ”, ու անանկ՝ անոնց ա-
 չացը առջևէն աներեւոյթ եղաւ հրեշտակը: Այ
 ատենը Տորիթ փառք տալով Աստուծոյ օրհնու-
 թիւն մը շարադրեց, որ անոր մէջը շնորհակալ
 կ'ըլլայ Աստուծոյ ըրած բարեբարութեանցը
 վրայ, ու կը մարգարէանայ թէ Սորայելացիք
 իրենց գերութեանէն պիտի դառնան, ու Աբու-
 սաղէմ նորէն պիտի շինուի: Այնկէ ետքը Տո-
 րիթ բարի ձերութեամբ ապրեցաւ ինչուան որ
 հարիւր յիսուն տարուան եղաւ, և մահուան ա-
 տենը Տորիայի զարմանալի խրատներ կտակ ընե-
 լով՝ անանկ հողին աւանդեց: Տորիա ալ հօրը
 սաղրսպրածին պէս՝ զինքը և իր Աննա մայրը Աե-
 նուէ քաղաքը թաղելէն ետե՛ իրեն Սառա կնի-
 կովը ելաւ Ակրատան աներոջը քովը գնաց. հոն
 ալ աներն ու զորանցը ինքը թաղեց, ու բոլոր
 անոնց ունեցածն ալ ինքը ժառանդեց. և իր
 հօրը խրատներովը միշտ բարեպաշտութեամբ
 ապրելով, ինքն ալ աստուածային օրհնութեամբ
 բը ձերացած՝ հարիւր քսանրեօթը տարուան
 վախճանեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Պատմութիւն Յուդիսայ :

Մտ աշխարհի իբր 3348 :

Վարուգողոնոսոր Մտրեստանի թագաւորը՝
 Մրփաբսադ ըսուած Մարաց մեծ թագաւորն
 որ յաղթեց, անով աւելի սիրտ առած՝ անանկ
 քիթը մեծցաւ հպարտացաւ, որ ալ կ'ուզէր ըս-
 լոր աշխարհքիս տիրապետել, և ամենէն Մ-
 տուծոյ պէս պաշտուիլ: Ուստի ընտրեց իր զօ-
 րապետներուն մէջէն մէկ մը աւելի քաջ ու զօ-
 րաւոր՝ Նողեփեռնէս անունով, և անոր ձեռքը
 հարիւր քսան հազար հետեակի (այսինքն եայան)
 զօրք տուաւ, այնչափ ալ ձիաւոր, որ ինչուան
 ուր որ հասնի նէ երթայ զամէնը իր իշխանու-
 թեան ներքեւը առնէ, ու դէմ կեցողին չինայէ,
 ջարդէ աւրէ ոչնչացնէ: Նողեփեռնէս այսպիսի
 մեծ պատրաստութեամբ Վինուէ քաղքէն ե-
 լաւ, առջևը հանդրդած տէրութիւնները և աղ-
 գերը անողորմաբար կոտորելով թալլելով ու իր
 տակը առնելով եկաւ հասաւ Նրէաստանի քո-
 վը, և հոն բանակը դրաւ կանկ առաւ ամնու մը
 չափ՝ որ զօրացը ուտելիք պատրաստէ: Նրէայ-
 քը երբոր աս իմացան՝ ու տեսան որ ալ կարգը
 իրենց հասաւ, մեծ վախի մէջ ինկան. մանա-
 ւանդ ան ալ կը լսէին թէ ամէն տեղաց կուռքե-
 րը չաստուածները Նողեփեռնէս կը վերջընէր,
 անոնց տեղը Վարուգողոնոսորը պաշտել կու-
 տար. անոր համար ըզոր սրտով պաքով աղօթ-

քով Մատուցոյ դիմեցին, որ իր տաճարը իրենց ազգովը խալըսէ, աս բռնաւորիս ձեռքէն, ու իրենք ալ ձեռուընին եկածին չափ իրենց տաճմանին բերդերը զօրք դրին ամրացուցին, Սեպի զուա ըսուած չրէից քաղաք մը կար՝ Յնամիներուն դրած բանակին առջևը, որ չրէաստանի դրան պէս էր. աս ալ աղէկ մը ամրացած դէմ կեցեր էր:

Չողեփեռնէս երբոր աս չրէից պատրաստութիւնը իմացաւ՝ կրակ կտրեցաւ վրանին, քովը կանչեց ժողովեց ան տեղացի իշխանները, ու զարմանալով պատճառը հարցուց թէ՛ «Մա իսրայելացի ըսուած պզտի ազգ մը՝ իրենց ինչ բանին վրայ յուսալով՝ սիրտ կ'ընեն կոր ինձի դէմ կենալու», ի Մն ատենը Մքիոր ըսուած Մմնացոց զլխաւոր իշխանը սկսաւ զրուցել թէ՛ ով են աս չրեաները և ինչպէս զօրաւոր Մստուած ունին, որ քանի որ անոր տուած օրէնքները կը պահեն նէ, մարդ զանոնք չկրնար յաղթել: «Մնոր համար հիմա հետեւինին իյնալու ժամանակը չէ, ըսաւ, որ աղէկ կ'երթան իրենց Մստուածոյն հետ. սպասենք որ մեղանչեն՝ հեռաւրուին, ան ատենը բան մը կը հոգանք. շէլայ թէ հիմա վրանին ելլենք նէ՛ խախտ ըլլանք», ի Մ որ լսեց Չողեփեռնէս՝ սաստիկ սրբոզողեցաւ Մքիորի վրայ, թէ ինչո՞ւ բանի տեղ չսեպելով՝ Աբուգողոմոսորի ուժը՝ անանկ յանդրգնութեամբ դէմ խօսեցաւ: Աւտի ասոր պատիժ՝ հրամայեց որ ոտքը ձեռքը կտարած տանին Մքիորը Սեպիզուայի բերդին տակը ձգեն, որ «Նրբոր, ըսաւ, գամ քաղաքը մանամ՝ նէ, դուն ալ անոնց հետ քու պատիժդ կատարեալ գտնես», ի Մանկ որ ըրին, Սարայելացոց պա.

Հապանները զան տեսնելուն պէս՝ բերդէն ելան վրան վազեցին, ու Մ.բխորը առին Ռետիղուա բերին. ան ալ հոնտեղը ամենուն առջևը պատմեց թէ՛ ինչ պատճառով Հողեփեռնէս իրեն ասանկ ըրաւ, և ինչպէս ինքը կը պատրաստուի կոր գալու զիրենք ջարդելու: Ետզովորդը աս լսելով ահաւեցան, ու սկսան պաղատիլ Մատուծոյ՝ որ նայի անոր հպարտութիւնը, ու իրենց ողորմի. մանաւանդ անկէց ետքը երբոր տեսան որ Հողեփեռնէս իր բոլոր անհուն զօրքով ալ եկեր բերդը չորս դին պաշարեր՝ քաղքին ջուրն ալ կտրեց: Արտունը չորս որ որ աս Ռետիղուայի պաշարումը քշեց, ալ ծարաւէն ճարերնին հատած՝ քաղքին իշխանները կը մոմտային որ, թէ հինգ օրէն ալ Մատուած իրենց չողորմի չաղատէ՛նէ, քաղաքը բանան թշնամիին ձեռքը տան:

Մ. Ռետիղուա քաղքիս մէջը մէկ ունեւոր որբւարի կնիկ մը կար Շմառնի ցեղէն: Հուզիթըսուած, խիստ աղուօր տեսքով, և անանկ զարմանալի պարկեշտ, աստուածալախ ու առաքինի որ՝ իր Մանասէ ըսուած երկանը մեռնելէն ետքը ալ չուզեց նորէն կարգուիլ, հապա առանձնացած իր տունը կը նստէր, ու պաքով աղօթքով այնպէս սրբութեամբ կ'ապրէր: Հուզիթ երբոր լսեց իմացաւ աս բաներս, և ինչպէս կը սեն՝ Մատուծմէ լուսաւորած, քովը կանչեց քաղքին իշխանները՝ յանդիմանեց զիրենք ան թեթեւատախան բանին վրայ, որ ըսեր էին թէ հինգ օրէն Մատուած մեզի չողորմի նէ՛ քաղաքը թշնամիին ձեռքը տանք: Ատքը ուրիշ խրատներով ու օրինակներով ալ յորդորեց զանոնք՝ որ Մատուծմէ յոյսերնին չկտրտեն, և իրենց ը-

սաւ թէ՛ « Միայն դուք աղօթից մի դադարիք, աս հինգ օրուանս մէջ կը յուսամ որ Մատուած իմ ձեռքովս ձեզի բարի ելք մը տայ . բայց դուք իմ ետեւէս մ'իյնաք խնանալու՝ թէ ես ինչ պիտոր ընեմ, » : Մանսկ գնաց Յուդիթ իր աղօթք ընելու տեղը, ու վրան քուրձ մը հագած և զըլուխը մոխիր ցանած՝ ասպախարութեան նշան, ինկաւ Մատուծոյ առջև, ու աղաչանքով պաղատանքով խնդրեց Մատուծոյ՝ որ ողորմի իր ժողովրդոցը, և իրեն ուժ տայ, որ ինչպէս լոյս տուեր է ընելու նէ՛ այնպէս բանը աջողութեամբ կատարէ : Ատքը ելաւ լուացուեցաւ սրբուեցաւ, մազերը հիւտեց շտկեց, ու իրեն փառաւոր հազուստները հանեց՝ գլխէն ինչուան ոտքը զաւ դարուեցաւ . և այնպէս հազուած կապուած՝ հետը առաւ ազախինը, ու անոր ձեռքը տուաւ իր կերակուրին ամանը՝ անանկ Աետիղուա քաղքէն դուրս ելան :

Արբոր քիչ մը առաջ գացին, շուտ մը վրանին հասան Հողեփեանեսի զինուորները, զարմանալով թէ այնպիսի կնիկ ինչ բան ունի հոն տեղուանքը, անանկ զինքը առին Հողեփեանեսի առջևը տարին : Հողեփեանէս երբոր Յուդիթը տեսաւ, խելքը գնաց օստտիկ սիրտը կապուեցաւ անոր աղուորութեանը վրայ . հարցուց իրեն թէ « Ո՞վ ես, ուսկից կու գաս » : Յուդիթ ալ խելացի կերպով անուշ շարժմունքներով, (որ անոր սիրտը եւելօք իրեն քաշէ՝ ու զինքը խաբէ) անոր պատասխան տուաւ . « Տէր իմ, ըսաւ, տեսայ որ Մատուած բարկացեր է մեր ազգին, ու Մատուծոյ երեսէն ինկած՝ պիտի չաբազար թշնամիներուն ձեռքը մատնուի մեր ազգը . անոր համար ես փախայ՝ քու քովդ եկայ

քեզի աղախին ըլլալու : Բայց աս ալ գիտնաս որ՝ ես աստուածապաշտ եմ . ուստի կը խնդրեմ որ ինձի հրաման տաս , որ մարդ չգաչի՝ գիշերները մինաւոր բանակէն դուրս ելլեմ , որ իմ ազօթքս առանձին կատարեմ , ու դառնամ . ու ես անանկ իմ Բստուծմէս ատենը խմանալով , առանց մէկ մը քու զօրքէդ կտորուելու՝ քեզ առնեմ Երուսաղէմի մէջը տանիմ , : Հողեփեռնէս աս բաներս լսելով սիրտը աւելի կապուեցաւ ու տարցաւ Յուդիթի վրան , և անոր բոլոր ըսածներուն հաւտալով՝ հրամայեց որ ներսը իր քովը առնեն բերեն զինքը , ու սալքսպրեց որ իր աղէկ կերակուրներէն և ազնիւ գինիներէն անոր տան . բայց Յուդիթ աղաչեց ըսաւ որ՝ « Ես ձեր կերակուրներուն չեմ կրնար դաչիլ . անոր համար հետս ինձի կերակուր բերեր եմ , կը հրամմես նէ՛ ես անկէց կ'ուտեմ , : Բսանկ իրեք որ իրեք գիշեր Յուդիթ Հողեփեռնեսի հետը անցուց , ու ըսածին պէս գիշերները մինաւոր բանակէն դուրս կ'ելլեր՝ Բստուծոյ առջև կ'իյնար ազօթքը կ'ընէր , որ ինչ բանի համար եկեր է նէ՛ աջողի : Չորրորդ իրիկունը Հողեփեռնէս ուղեց որ մէկ փառաւոր սեղան մը ուրախութիւն մը ընէ իր զօրապետներուն . Յուդիթն ալ հոն կանչեցին , որ հազուած կապուած եկաւ , ինքն ալ նստած՝ իր հետը բերածներէն կ'ուտէր . և ան ատենը Հողեփեռնէս Յուդիթի վրայ որչափ կը նայէր , այնչափ ցանկութիւնը աւելի շարժելով զինքը կը կորանցընէր՝ ու գինին կը խմէր : Երբոր սեղանը լմնցաւ՝ ամէն մարդ ելան իրենց տեղը գացին , միայն Յուդիթ ու Հողեփեռնէս հոն մնացին . Հողեփեռնէս ալ աստուածային նախախնամութեամբը՝ թմրած

ինկաւ իր մահիճին վրայ պառկեցաւ՝ առանց
 Յուդիթի դպչելու : Երբոր խորունկ քնոյն մէջն
 էր Նողեփեռնէս, ան ատենը Յուդիթ ըսաւ
 թէ Նինա է ժամանակը, ու քովը դնաց անոր
 թուրը հանեց՝ մէկ ձեռքովը մազերէն բռնեց՝
 «Տէր Բստուած, ըսաւ, դու ինձի օգնէ,», ու
 մէկալ ձեռքովը երկու հեղ զարնելուն պէս՝ Նո-
 ղեփեռնեսի գլուխը կտրեց վրայէն փրցուց . ա-
 նանկ առաւ դուրս ելաւ իր աղախինին տուաւ՝
 որ ան իրեն կերակրին ամանին մէջը դնէ : Եւ
 այսպէս մարդ չիմացած՝ (որ ամէնքը յոգնած
 քուն էին) զիշերանց անոնց բանակէն ելաւ՝
 Բետիղուային պարսպին տակն որ հասաւ, սկը-
 սաւ ուրախութեամբ պահապաններուն կանչել
 ըսել թէ՝ «Եւ դոները բացէք՝ Բստուած մե-
 զի հետ է,», : Պահապաններն ալ շուտ մը վա-
 զեցին բացին, և ան որ լսեցին՝ ամէնքը հոն ե-
 կան, ջահերով ճրագներով վրան թափեցան,
 որ տեսնեն թէ ինչ է : Յուդիթ ալ ամանէն
 հանեց ցուցուց իրենց . «ԲՏա, ըսաւ, Նողեփեռ-
 նեսի գլուխը, որ ամբարտաւանութեամբ մեր
 Բստուածը կը քամահրէր, որ ինձի պէս մէկ
 կնկան մը ուժ տուաւ որ ես իմ ձեռքովս զինքը
 սպաննեմ,», : Եողովուրդն ալ փառք տուին Բս-
 տուծոյ, ու ուրախութենէն շին գիտեր ինչպէս
 շնորհակալ ըլլան Յուդիթի՝ որ զինքը այսպիսի
 վտանգներուն մէջ ձգեց զիրենք ազատելու հա-
 մար : Հոնտեղը կանչել տուաւ Յուդիթ ան
 վերը ըսուած Երիտր Բմնացուոց իշխանը, որ
 երբոր եկաւ աս բաներս լսեց՝ ու Նողեփեռնե-
 սին գլուխը տեսաւ, զարմանալէն խելքը թռաւ,
 ու Յուդիթի ոտըր ինկած՝ դուխասանքներ կու-
 տար իրեն . և ան պատճառով ինքն ալ դարձաւ
 աստուածասպաշտ եղաւ :

Ետքը երբոր լուսցաւ առտու եղաւ, Յուդի-
 թի ըսածին պէս՝ առաջ ելան ան Տողեփեոնե-
 սի գլուխը իրենց բերդին վրայ կախեցին. ետքը
 դուրս վաղեցին գացին թշնամիներուն բանա-
 կին վրայ: Ենոնք ալ աս բանս տեսնելով՝ շուտ
 մը գացին Տողեփեոնեսի ձայն տալու, որ ել-
 լեն ինչպէս պէտք է նէ ասոնց դէմ պատե-
 րազմին: Երբոր Տողեփեոնեսի պառկած տեղը
 մտան, ու տեսան որ անիկայ արիւնթաթափս
 գետինը փռուած ինկած՝ գլուխն ալ վրան չէ,
 բանը իմացան, սկսան կանչել վայ տալ իրենց, որ
 մէկ խորայելացի կնիկ մը խախք խայտառակ ը-
 րեր է զիրենք, ու շփոթած ամէն բաներնին հոն
 թողուցին՝ ցիրուցան սկսան փախչիլ: Եւ ան ա-
 տենը Ետրայելացիք ալ ետենին ինկած՝ շատ
 մարդ ջարդեցին. ու բոլոր ունեցածնին թալլե-
 ցին առին, անանկ որ երսուն օր քշեց աս բոլոր
 թշնամեաց բանակին բաները վերցրնելը՝ քա-
 ղաքը բերելը. ու Տողեփեոնեսի խորանը (այս-
 ինքն չատրըր) իր բոլոր արծաթեղէն և ոսկեղէն
 բաներովը Յուդիթի հանեցին ընծայ տուին,
 որ ան ալ ետքը Երուսաղէմի տաճարին նուիրեց:
 Եւ ՚ի շնորհակալութիւն աս Յուդիթի ըրած
 քաջութեանը՝ չորս դիէն ամէն քաղքրներէն մե-
 ծամեծները՝ էրիկ մարդ կնիկ մարդ կու գային
 Յուդիթ տեսնելու, ու աչքիցոյս ընելու: Եւ և
 Երուսաղէմէն Յովակիմ քահանայապետն ալ
 եկաւ, ու օրհնէնքներ կարդաց վրան. Յուդիթ
 ալ աս իր ըրած քաջութիւնը և փառաւոր յաղ-
 թութիւնը Եստուծոյ նուիրելով՝ մէկ յորդորա-
 կան օրհնութիւն մը կարդաց աստուածային
 ամենակարողութեանը: Եւ յսպիսի ուրախու-
 թիւնս իրեք ամիս քշելէն ետքը, Յուդիթ նու-

րէն իր առջի ճամբան բռնեց՝ գնաց իր տունը
առանձնացած կը կենար, և անանկ բարի վար-
քով ապրեցաւ ինչուան հարիւրհինգ տարի, ու
հոն Եւտիղուա քաղաքը թաղուեցաւ իրեն եր-
կանը քովը:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Պատմորիս Եսրեթայ :

Մ ա շ խ ա ր հ ի 3448 :

Արտաշէս՝ մեծ ու զօրաւոր Պարսից թագա-
ւորը, իր թագաւորութեան երրորդ տարին եր-
բոր փառաւոր յաղթութիւն մը ըրաւ՝ որ հարիւր
քսանըեօթը դաւառ հնդկաստանի երկրէն իր
տակը առաւ, ուղեց մէկ մեծ կոչունք մը ուրա-
խութիւն մը ընել իր իշխաններուն՝ Սիսիս ը-
սուած թագաւորական քաղքին մէջը, որ վեց
ամիսի չափ ատեն քշեց. անկէց ետքը նմանա-
պէս վեց օր ալ ուամիկ (այսինքն պայազի) մար-
դիկներուն ըրաւ: Այս կոչունքներս այնչափ փա-
ռաւոր և ամէն դիէն զարմանալի եղաւ, որ չէ
լսուած թէ անոր նմանը եղած ըլլայ աշխարհիս
մէջ. և աս՝ չէ թէ միայն էրիկ մարդոց, հապա
անոր պէս զատ կոչունք ալ ըրաւ: Այսթինէ թա-
գուհին՝ կանանց կողմը (այսինքն հարէմը) բոլոր
մեծամեծաց կնիկներուն, Այս ուրախութիւննե-
րուա ետքի օրը Արտաշէս թագաւորը աւելի
զուարճացած (այսինքն քէֆ չաթմիշ ըրած)
խրկեց որ Այսթինէ թագուհին ելլէ ասդին գայ,
որ իր իշխաններուն և բոլոր մարդոց առջևը ե-
րևնայ ցուցնէ իր գեղեցկութիւնը: Երբոր Այ-

Թինէ չհազանդեցաւ Թագաւորին՝ ու չուզեց
 դալ, Թագաւորը շատ սրդողեցաւ վրան . ուստի
 իր իշխաններուն հետ խորհուրդ բրաւ ըսաւ որ՝
 « Ի՞նչ բանս առանց պատիժ տալու Թողունք նէ,
 ամենուն կնիկները ասկէց չար օրինակը կ'առ-
 նեն՝ իրենց էրիկնին չեն սեպեր՝ ոտից տակ կ'առ-
 նեն . » . անոր համար Իսթինէն Թագուհիու Թե-
 նէ վար ձգեց՝ հանեց . և բոլոր Պարսից տէրու-
 Թեան մէջ հրաման եղաւ որ՝ գեղեցիկ աղջիկ-
 ներ ժողվուին, որ անոնցմէ Իսթինէի տեղը ու-
 ըրի մը Թագուհի ընտրուի :

Ինչ ժամանակները Սիսիս քաղաքը հրէայ մը
 կար Սուրդբէ անունով՝ Ղենիամինի ցեղէն, որ
 Վաբուգողոնոսորի ատենին գերի եկածներէն էր .
 ասիկայ իր հօրը եղբօրը աղջիկը, որ որք մնացեր
 էր՝ Լսթեր ըսուած, պզտրկուցմէ քովը առած
 կը պահէր . աս Լսթերս ալ խիստ աղուոր ըլլա-
 լով Իրտաշէս Թագաւորին համար ընտրուած
 աղջիկներուն մէջը առին : Լքբօր ատենը եկաւ՝
 ան աղջիկները Թագաւորին առջևն որ հանեցին,
 մէջերնէն Թագաւորը Լսթերը հանեցաւ ընտ-
 րեց որ՝ իրեն Թագուհի ըլլայ Իսթինէին տեղը .
 և անոր համար փառաւոր Թագաւորական հարս-
 նիք բրաւ : Իայց Լսթեր Սուրդբէի խրատը պա-
 հելով առջի բերանը չյայտնեց իր ինչ ազգէ ըլ-
 լալը, ու գաղտուկ ներսուանց իր աստուածսաշ-
 տու Թիւնը ձեռքէն չԹողուց . ինչպէս Սուրդբէն
 ալ անանկ կ'ընէր, որ ինքն ալ Թագաւորական
 պալատին ծառայութեանը մէջ էր : Եւ ան ա-
 տենները աս ալ պատահեցաւ որ՝ երկու ներքի-
 նի (կամ Թագաւորական հարէմին վերակեցու-
 ներէն) մէկ պատճառով մը Թագաւորին վրայ զի
 պահելով գաղտուկ խօսք դրին որ Թագաւորը

մեռցընեն . Սուրդքէն երբոր աս խնացա՛ կա,
մայ մը հասկըցուց ներսը Լսութեր Թագուհին .
Թագաւորն ալ անկէց բանը խմանալով՝ բռնեց
կախել տուաւ ան ներքինիները , ու հրամայեց
որ Սուրդքէի ըրած աս հաւատարմութիւնը՝
յիշատակարանը գրուի :

Բայց Լստաչէս Թագաւորին իշխաններուն
մէջը գլխաւոր մէկ մը կար՝ Համան ըսուած ,
հպարտ ու ամբարտաւան մարդ մը . ասիկայ աւելի
երես գտնալով Թագաւորին առջևը , հրաման
հանել տուաւ որ՝ բոլոր պալատի մարդիկը
Թագաւորէն ետքը զինքը ձանձնան՝ և իրեն երկըրպազութիւն
ընեն . ամէնքն ալ հնազանդեցան անանկ կ'ընէին , ու միայն Սուրդքէն եղաւ
որ ինքը չուզեց Համանի գլուխ ծռել երկրպազութիւն
ընել : Համան աս բանիս վրայ այնչափ առնուեցաւ
ու կատղեցաւ , որ անոր սխը բոլոր շրեաներէն
կ'ուզէր հանել , գիտնալով թէ Սուրդքէն հրեայ է .
ուստի ասանկ հասկըցուց Թագաւորին՝ թէ « Լս շրէից ազգը
մէկ խաբեբայ խռովարար ու փռատակար ազգ
մըն է , պէտք է բոլորովին մեր մէջէն վերցուի , որ Պարսից
տէրութիւնը խաղաղութիւն գտնէ » : Լսնոր համար
Թագաւորական հրովարտակով (այսինքն ֆէրմանով)
հրաման հանել տուաւ որ շրէից ազար ամսուն տասուիրէքին
բոլոր Պարսից իշխանութեան մէջ եղած շրեաները , որ
բաղաք որ գտնուին նէ՛ էրիկ մարդ , կնիկ մարդ ,
ծեր , տղայ , ամէնքը ան մէկ օրուան մէջ Թրէ
անցընեն , ու բոլոր իրենց բաները Թագաւորին
գանձը առնեն . և աս հրովարտակս առաջ հան
Թագաւորական քաղաքը կարդացուեցաւ , ու
անկէց չորս ղին խրկուեցաւ՝ որ ան ըսած օրը ա

մէնը պատրաստ կենան : Տրեաները երբոր աս բանս լսեցին , ալ սաստիկ յուսահատած՝ չէին գիտեր ինչ ընեն , պարտիւ ու աղօթքով Մատու ծոյ կ'աղաչէին որ ան փորձանքէն զիրենք խաւրսէ :

Սուրդքէն ալ երբոր աս խնայաւ՝ խելքը դուխէն թուաւ . ուստի վրայի լաթերը պատառ պատառ ըրած , և մէկ քուրձ մը հագած՝ զլուխը մոխիր ցանած՝ փողոցները ինկեր ասդին անդին կը կանչէր կ'ըսէր թէ՛ « Ի՛նչ ըրաւ իմ ազգս , որ ասանկ պարապ տեղը պիտի կորսուի » : Ետքը մէկ ներքինի մը ձեռքով խրկեց ներսը Եսթերի հասկըցուց թէ՛ « Զիչէ զիս՝ և քու ազգդ , ու թագաւորին խօսք անցուր որ աս փորձանքէս ազատինք » : Եսթեր ալ պատասխան խրկեց թէ՛ « Ղեմ կրնար , ինչպէս դուն ալ գիտես օրէնքը , որ եթէ թագաւորը չկանչած առջևը մարդ ելլելու ըլլայ նէ՛ կը մեռնի , և աս պատճառովս , ըսաւ , երսուն օր է՝ որ ես ալ թագաւորին քով չեմ գացեր » : Սուրդքէ նորէն իրեն խրկեց ըսաւ թէ՛ « Եսթեր , չհարժես որ աս փորձանքէս դուն ազատ ես . հասցա թէ որ դուն անհոգ ըլլաս , գիտցիր որ Մատուած կարող է մեզ ամենքս ազատել , ու քեզ քու ազգականներովդ պատժել , որ ձեռքէդ կրնար գալ աս բանիս ճար մը հոգալու , ու չընես նէ » : Եւ որ լսեց Եսթեր՝ տակնուվրայ եղաւ , անձրկեցաւ չէր գիտեր որ զին դառնայ՝ ինչ ընէ . ուստի խրկեց ասքրսարեց Սուրդքէի , որ երթայ ան Սիսիա քաղքի Տրեաները մէկտեղ բերէ՝ և իրեք օր զիչեր ցորեկ ծոմ պահեն իրեն հետ՝ ու աղօթք ընեն , որ Մատուած իրեն ուժ կարողութիւն տայ՝ թագաւորին առջևը ելլելու . « Թէ

և, ըսաւ, ասով խմկենացս զէն մըն ալ հասնելու
 ըլլայ, : Աստի Աստիքը ալ ան ատենը իր թա-
 գաւորական փառաւոր լաթերը հանեց վրայէն,
 ու մէկ քուրձ մը հագաւ, և անուշահոտ եղերը
 խոնկերը քովէն վերցուց՝ մոխիր ու աղբ ցանեց
 գլուխը, ապաշխարութեան նշան. անանկ ինկաւ
 Աստուծոյ առջև, ու խոնարհութեամբ աղօթք
 ընելով կ'աղաչէր որ՝ իրեն լոյս տայ ցուցնէ թէ
 ինչ ընելու է :

Ասանկ երեք օր ապաշխարութեամբ աղօթե-
 լէն ետև՝ երրորդ օրը վրայէն հանեց ան քուր-
 ձերը, ու իր փառաւոր լաթերը հագած զարդա-
 րուած, հետը երկու աղախին առաւ՝ այնպէս
 սիրտ ըրաւ զնաց թագաւորին առջևը ելաւ :
 Այց երբոր թագաւորին երեսը սրդողածի պէս
 տեսաւ, որ առանց կանչելու իր առջևը ելեր է,
 Աստիքը սաստիկ վախէն մարեցաւ իյնալու պէս
 որ եղաւ, ան ատենը Աստուած թագաւորին
 սիրտը շարժեց, որ շուտ մը ցատքեց աթոռէն՝
 ելաւ եկաւ բռնեց վերցուց զինքը, ու անուշ
 խօսքերով սիրտ տալով իրեն ըսաւ. « Ի վախ-
 նար, Աստիքը տիկին, զիս քու եղբայրդ սե-
 պէ՛ ու անանկ համարձակ հետս խօսէ, » . սս ը-
 սելով ոսկիի գաւազանը առաւ վրան դրաւ : Աս-
 Թեր ասոր վրայ քիչ մը իրեն եկաւ. բայց խօ-
 սիլնինի մէյ մ'ալ սիրտը դող ինկաւ՝ ու մարե-
 ցաւ նէ, թագաւորը իր ծառաներուն հետ նո-
 ընն վրան գուրգուրալով բռնեցին վերցուցին,
 ու ըսաւ թէ՛ « Աստիքը տիկին, ինչ է քու ու-
 զածդ. գիտնաս որ կէս թագաւորութիւնս ալ
 ուզես նէ՛ քեզի կու տամ, » : Աստիքը ալ ան ժա-
 մանակը բերանը բացաւ ըսաւ. « Իմ ուզածս
 աս է. սյսօր ես մէկ սեղան մը պատրաստեք

քամ, կը խնդրեմ որ՝ Համանը հետո գառնես հրամ-
 մես իմ սեղանս դաս ,, : (Թագաւորն ալ « Խիստ
 աղէկ ,, ըսաւ . շուտ մը համանը կանչել տուաւ ,
 ու անանկ մէյտեղ ան օրը ելան Լյսթերի պատ-
 ըաստած սեղանը գացին . երբոր կերան խմեցին ,
 Թագաւորը նօրէն Լյսթերի ըսաւ որ՝ « Ինծմէ
 խնդրէ ինչ որ կ'ուզես նէ՝ որ քեզի ընեմ ,, : Լյս-
 թեր ալ ըսաւ . « Ար խնդրեմ որ հրամմես հա-
 մանի հետ վաղը նօրէն իմ սեղանս դաս ,, : Ըս-
 բանիս վրայ համանն ալ սաստիկ ուրախանալով՝
 երբոր ելաւ տուն կը դառնար , ճամբան պատահ-
 մամբ Սուրդբէն գիտնացը տեսնելով՝ որ իրեն
 երկրպագութիւն չըրաւ , նօրէն բարկութիւնը
 շարժեցաւ վրան : Լյսթը տուն օր գնաց , խըն-
 տումով իր փառքը պատիւը սկսաւ իր կնկանը և
 բարեկամներուն առջևը պատմել , ու պարծենա-
 լով աս ալ ըսաւ թէ՝ « Լյսթեր Թագաւորին Թա-
 գաւորին սեղան ըրաւ , ու անոր հետը ինծմէ 'ի
 դաս՝ ալ ուրիշ մարդ մը չկանչեց : Բայց ասոնք ,
 ըսաւ , առջևս բան մը չեն երևար՝ երբոր կը տես-
 նեմ ան Սուրդբէն , որ մէկ անշահ հրեայ մը
 Թագաւորին պաշտօր մտեր՝ զիս չտեսեր ,, : Ըս-
 նոնք ալ ըսին թէ՝ « Ըտ մէկ դժուար բան մը
 չէ . յիտուն կանգուն բարձր մէկ փայտ մը շինել
 տուր , վաղը գնա Թագաւորէն հրաման առ՝ ա-
 նանկ բռնէ անկէց կախել տուր Սուրդբէն ,, :
 Ըս բանիս համանի միտքն ալ պահկեցաւ . ուս-
 տի շուտ մը հրամայեց որ ան ըսած փայտը պատ-
 ըաստեն : Բայց տես Ըստուծոյ բանը , որ ան
 իրիկունը Թագաւորն որ Լյսթերի սեղանէն դար-
 ձաւ՝ ամենակին քունը չտարաւ , ելաւ նստաւ՝ ու-
 զեց որ անցած դացած բաներուն յիշատակա-
 բանները առջևը բերեն կարդան : Երբոր կը կար-

դային՝ ու հոն հասաւ որ զբաժ էր թէ երկու
 ներքինի կ'ուզէին թագաւորը մեռցնել, ու
 Սուրդբէն հաւատարմութեամբ թագաւորին
 յայտնեց անոնց խորհուրդը, ան ատենը թագա-
 ւորը դարձաւ հարցուց թէ՝ « Ի սորհամար մենք
 Սուրդբէնին ինչ վարձք տուինք », ծառաներն
 ալ ըսին թէ՝ « Ի ան մը չեղաւ իրեն », Իսորը
 թագաւորը աս բանիս վրայ ինքնիրեն մտմտալով
 առտուանց կանուխ ելաւ հարցուց թէ՝ « Ո՞վ
 կայ դուքսը եկած », (Համանն ալ ան վերը ըսա-
 ծին պէս կանուխ ելէր թագաւորին դուռը եկեր
 էր, որ հրաման առնէ Սուրդբէն կախելու),
 ծառաները նայեցան, ըսին թէ՝ « Համանը եկեր
 է », թագաւորն ալ Համանը ներս կանչել
 տուաւ, ու աս հարցուց իրեն. « Ի ան ըսէ, ը-
 սաւ, թէ որ ես մէկը ուզեմ փառաւորել նէ՞
 ինչ պէտք է որ անոր ընեմ », Համանն ալ միտ-
 մըտաց թէ՝ « Ինձ մէ՛ ի զատ ո՞վ պիտոյ փառաւո-
 րէ թագաւորը », ուստի սրտասխտան տուաւ
 թէ՝ « Ար վայէ որ ան մարդուն՝ թագաւորական
 հագուստը հագցնեն, ու թագաւորին ձին հեծ-
 ցնեն. ետքը թագաւորին խիստ սիրելիին ձեռ-
 քը տան, որ ան առնէ բոլոր քաղաքը քալեցը-
 նէ, ու անոր առջևէն քարոզ (այսինքն թէլլալ)
 կանչուի թէ Մանկ կ'ըլլայ ան մարդուն՝ ո՞վ որ
 թագաւորը ուզէ փառաւորել », Իս Համանի
 ըսածին թագաւորն ալ հաւնեցաւ. « Խիստ ա-
 ղէկ է, ըսաւ. գնա ատ բոլոր ըսածներդ Սուրդ-
 բէի ըրէ, որ ատենով մեզի անանկ հաւատար-
 մութիւն ցուցուցեր է », Համանն ալ այսու
 կերպով իր խօսքովը բռնուած՝ շուտ մը հնա-
 զանդեցաւ թագաւորին, գնաց ան բաները
 Սուրդբէնին ըրաւ. և ասոր վրայ սաստիկ սիրաբ

Կտորած՝ զլուխը կախ անամակ տուն դարձաւ :
 Ետքը երբոր ժամանակը եկաւ՝ Եսթեր թա-
 դուհին սեղանը դնաց, հոն թագաւորը ուտել
 խմելէն ետե՛ նորէն Եսթերի հարցուց թէ՛
 “ Ի՞նչ է քու խնդիրդ . զիտնաս որ՝ թագաւո-
 րութեանս կէսն ալ ուզես նէ , քեզի կու տամ , , :
 Եսթեր ալ ան ատենը սիրտ առաւ , ու բանը բա-
 ցաւ ըսաւ թէ՛ “ Տէր թագաւոր , ես իմ՝ և իմ
 ազգիս կեանքը միայն քեզմէ կը խնդրեմ , որ աս
 բանաստիճու ու խաբէբայ համանը քեզի ծուռ
 հասկըցընելով՝ ուզեց որ մեզ բոլորս ջարդէ՛ աչ-
 խարհքէս վերցընէ , , : Ի՞նչ որ լսեց թագաւորը ,
 ներքե վրայ եղաւ՝ սեղանը ձգեց դուրս ելաւ .
 համան ալ ան ատենը մինաւոր որ մնաց , ելաւ
 դողալով Եսթերի ստորը ինկաւ՝ կ'աղաչէր որ ի-
 րեն խնայէ : Ի՞նչ որ վրայ նորէն որ դարձաւ թա-
 գաւորը՝ ու զան տեսաւ , բարկութենէն կրակ
 կտրեցաւ , կարծեց թէ՛ թագուհին բռնաբա-
 րութիւն կ'ընէ . ուստի շուտ մը հրամայեց որ
 բռնեն տանին զինքը ան փայտէն կախեն , որ օ-
 ըրով առաջ ինքը Սուրդքէի համար պատրաստե-
 ր : Եւ ան օրը մէկէն թագաւորը բոլոր հա-
 մանի ունեցած բարիքը հանեց Եսթերի պարգև
 տուաւ . նաև աս ալ խմանալով որ Սուրդքէն
 Եսթերի ազգականն է եղեր , համանի իշխա-
 նութիւնը Սուրդքէին վրայ դարձուց . ու շուտ
 մը ան հրէից վրայ եղած հրովարտակին դէմ՝
 նորէն ուրիշ հրովարտակ շինեց՝ առջի ըսածները
 դարձուց ետ կանչեց , ներհակ հրաման հանեց
 որ՝ հրեաները իրենց թշնամիները ջարդեն ա-
 դար ամսուն տասուիրեքին , ան օրն որ իրենք
 պիտի ջարդուէին , ինչպէս որ համանը սահմա-
 ներ էր . անանկ որ՝ միայն Սիսի թագաւորա-

կան քաղաքը ան օրը հինգ հարիւր հողի սպան-
նեցին . ու համանի տասը զաւակներուն հետ
հարիւրաւոր հողի ալ հրէից թշնամիներէն կա-
խեցին . և բոլոր Պարսից տէրութեան մէջ աւ-
դին անդին աս պատճառովս հազարներով սպան-
նեցին : Ատրը աս ազատութեանս համար ի
չնորհակալութիւն Մտուծոյ հրեաներն ալ աօն
հաստատեցին աղար ամուռն տասնըջորսր, որ ին-
չուան այսօրս կը պահեն , ու իրենց լեզուովը
Փորհի՛՛հ կ'ըսեն , որ Ա իճակ ըսել է . պատճառն
որ՝ աս օրս վիճակ ձգելով հանեց սահմանեց
համան՝ որ հրէայքը ջարդէ , բայց իրենք Մ-
տուծոյ ողորմութեամբը ան օրը իրենց թշնամի-
ները կոտորել տուին :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Պատմորիւն մարգարեից :

Աժ աշխարհի 3246 . 3390 . 3410 . (Եսայ . 2 : — Երեմ.
Յ . 1Է : — Եզեկ . Յ . 1Է :))

Մտուածաշունչին մէջը շատ մարգարէներ կը
յիշուին , որ անոնցմէ ոմանք մենք ալ տեղովը
մէջ բերեր ենք . բայց մասնաւոր զիջքով մար-
գարէութիւն գրող, բաց ՚ի Սովսէս մարգարէէն,
որ աստուածաշունչը ծայրէն ինչուան իր ժամա-
նակի պատմութիւնը ինքը գրեր է, ու Սամուէլ
մարգարէէն , որ ան ալ ինչպէս կ'ըսեն՝ դատա-
ւորաց ատենէն ինչուան իր մահը եղած պատ-
թիւնները գրեց , մնացածը միայն տասնըվեց են՝
որ իրենց գրուածքը Սուրբ Գիրք սեպուեցան :
Ասոնց չորսը , այսինքն Ասայի , Արեմիա , Ազե-

կիէլ, Ղանիէլ, իրենց մարգարէական գրուածքին շատութեանը համար՝ Սեծ Սարգարէ ըսուեցան . իսկ մէկալ տասուերկուքը, որ մարգարէական գրուածքնին կարճկեկ է, Փոքր Սարգարէ ըսուեցան : Հիմա կարգը կը բերէ, որ ասոնց վրայ ալ համառօտ կերպով տեղեկութիւնը տանք, ու իրենց գրուածքէն երևելի պատմութիւնները հոս դնենք :

Եսայի մարգարէն որդի Ղամուսայ՝ Յուդայի ցեղին տէրութեան մէջը՝ Ազիա թագաւորին առ տենէն սկսաւ իր մարգարէութիւնը, և ինչուան Ազեկիայի ատենը քշեց, որ իրեն շատ օգնութիւն հասաւ Ղստուծոյ կողմանէն, ինչպէս տեղովը բտեր ենք : Եսայի մարգարէին մեսիային վրայ գրած մարգարէութիւնները անանկ տեղն ՚ի տեղը բաց ու յայտնի են, մանաւանդ անոր հրաշալի ծնունդը՝ ու նախատալից մահը, որ կարծես թէ աւետարանչի պէս եղածը անցածը կը պատմէ : Բար տեսիլքներուն մէջը դիտաւորը ան եղաւ որ՝ իր մարգարէութեան սկիզբը տաճարին մէջը տեսաւ զՂստուած՝ բարձր փառահեղ աթոռ նստած, և բոլոր տաճարը լուսաւոր հրեշտակներով լեցուն, սերօքէները՝ Ղստուծոյ չորս դին պատած վեց վեց թևերով (այսինքն քանատներով), որ Ղստուծոյ ահէն՝ երկու թևովը երեսնին կը գոցէին, երկուքովը օտուրնին կը ծածկէին, և մէկալ երկուքովը կը թռչրտէին, ու դաս դաս կանչելով կ'ըսէին . Սոբբ, սոբբ, սոբբ Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր քառօր նորա, և անոնց ձայնէն բոլոր տաճարը ահաւելով կը թնդար : Բար տեսաւ մարգարէն, ինքն ալ սոսկալով՝ « Այ ինձի, ըսաւ, որ ես ողորմելիս Տէր զօրութեանցը աչքիս առ-

ջեբ կը տեսնամ, ու ասանկ կապուած կեցեր եմ, պատճառն որ՝ պիղծ բերան մարդ եմ ես, ու պիղծ բերան ժողովրդոց մէջ կը կենամ», : Ընտանիքն սերօքէներէն մէկը ունելիով (այսինքն մաշայով) սեղանին վրայէն մէկ կրակի կայծ մը առաւ բերաւ մարգարէին բերանը մօտեցուց՝ ու ըսաւ . « Ըսիկայ քու բերնիդ զպէտլով կը սրբէ կը մաքրէ քու մեղքերդ ու անօրէնութիւններդ », : Ետքը Եսայի լսեց որ Ըստուած կը հարցընէր կ'ըսէր թէ՛ « Օ՛վ խրկեմ, ո՛վ երթայ ան ժողովուրդին քովը », . Ինքն ալ պատասխան տուաւ թէ՛ « Ըհա ես կեցեր եմ, զիս խրկէ », : Ըստուած ալ ան ժամանակին խրկեց զինքը, որ երթայ քարոզէ Եսայեւացուց : Եւ շատ տարի քարոզելէն ետե՛ ինչպէս վերը ըսեր ենք, Մանասէ թագաւորին հրամանովը սղոցուելով վախճանեցաւ :

Երեմիա մարգարէն որդի Վեղիկայ՝ ղետացի քահանայական ցեղէն Ընտանիքն քաղաքը ծնաւ, զոր մօրը փօրէն Ըստուած սրբեց՝ իրեն մարգարէ ընտրեց . ուստի պզտրկուց սկսաւ մարգարէութիւն ընել՝ Յովսիա Յուդայի թագաւորին ատենէն ինչուան որ բոլորովին կործանեցաւ Տրէից տէրութիւնը : Ըստուած Երեմիայի շատ տեսիլքներ ցուցուց, որով Տրէից վերջի գալու մօտ կործանումը կ'իմացընէր : Ընտանիքներուն մէջը մէկն ալ աս եղաւ որ՝ երկինքը հիսիսային դիէն մէկ կաթսայ մը (այսինքն քաղան մը) սաստիկ բոցով կրակի վրայ դրած կ'եռար կոր . և ասով Ըստուած իմացուց որ՝ ան կողմէն պիտոր Վաղդէացիքը Տրէից վրայ խրկէ իրենց մեղացը պատիժ : Երեմիա ամէն մարգարէներէն աւելի իր ազգին անօրէնութեանցը ու թը-

չուսառուծեանցը վրայ կը հալէր կը մաշէր ու կու-
լար, որ ետքը ալ յուսահատուծեամբ ան խրղ-
ճալի ողբը ըսաւ վրանին՝ որ կը սկսի . **Օ ի՛նչ**
պարտաւորաւ ձայնացիւ չաղաչն Բազմօճողով : **Ե-**
րուսաղեմի պաշարման ատենը Երեմիա այսպիսի
երած սրտով **Ըստուծմէ** իր բերանը դրած խօս-
քերը ու յանդիմանուծիւնները համարձակ որ
կը քարոզէր **Նրէից**, անոնք դառնալու ապաշ-
խարելու տեղը՝ սաստիկ կ'ատէին ու կը հալա-
ծէին զինքը . և աս հերիք չէ, ետքը խօսք ալ
դրին որ բռնեն սպաննեն, իբր թէ ինքը ասանկ
քարոզուծիւններով ժողովրդին ձեռքը կը թուլ-
ցընէ, որ թշնամիին դէմ չեն կրնար աղէկ պա-
տերազմ ընել : Աստի երբօր զինքը բռնեցին՝
Սեղեկիա թագաւորին առջևը տարին, և ան
ալ մեղքընցաւ բան չուղեց ընել, անոնք բռնու-
ծեամբ առին Երեմիան մահապարտներուն գու-
բը (այսինքն քանլը քույուն) ձգեցին՝ որ երթայ
մեռնի . և հոն կը մեռնէր, թէ որ **Ըբզամեղէք**
եթովպացի ըսուած իշխանը շուտ մը մէջ չմրտ-
նար՝ թագաւորին հասկըցընէր թէ՛ « **Ըսնեղու-**
ծեան ատենը այսպիսի սուրբ մարդ մեզի հար-
կաւոր է », ըսելով . ու անանկ Երեմիան գուբէն
հանեց, որ անկէ ետեւ ինչուան Երուսաղեմի ա-
ռումը բանտը կեցաւ : Ետքը երբօր Երբուզար-
դան դահճապետը եկաւ Նրէաները գերի բրո-
նեց Բաբելոն տարաւ, Երեմիան անկէց խըն-
զրեց որ ինքը իր Բարուք ըսուած աշակերտին
հետը՝ (որ ան ալ մարգարէութիւն կ'ընէր Երե-
միայի ձեռաց ներքեւը) երկուքնին Երուսաղէմ
մնան : Բայց անկէ ետեւ **Յոնթաթան որդի Աա-**
րէի ըսուածը երբօր տիրեց մնացած Նրէանե-
րուն վրայ, ու Երբուզոդոնոսորէն վախնալով

Ժողովուրդը մէյտեղ առած Եզիպտոս փախաւ,
 զԵրեմիա ալ ան ատենը անոնց հետ տարաւ,
 և հոն Եզիպտոս կ'ըսեն թէ՛ Հրեաները չգի-
 մանալով իրեն ըրած քարոզութիւններուն՝ վեր-
 ջը քարկոծելով մեռցուցին սուրբ մարգարէն :

Եզեկիէլ մարգարէն որդի ՚Սուզեայ՝ զևտացի
 քահանայ էր . որ ՚Կաբուզողոնոսոր երբոր եկաւ՝
 Յովակիմ կամ Յերոնիա թագաւորը Երուսա-
 ղեմէ բռնեց ՚Կաբելոն տարաւ , Եզեկիէլ ալ
 ուրիշ Հրեից դերիններուն հետը մէյտեղ հոն
 գնաց . ու բոլոր մարգարէութիւնները և աւ-
 տուածային տեսիլքները հոն իրեն յայտնուե-
 ցան : Ընթի տեսիլքը ՚Կստուած Եզեկիէլի այս-
 պիտի կերպով ցուցուց . որ երբոր մէկ անգամ մը
 ինքը ՚Քորար գետին քովը կեցեր էր , յանկար-
 ծակի երկինքը ամպերուն մէջը մէկ սոսկալի մեծ
 կառք մը տեսաւ՝ ամէն դիւն աչուրներով լե-
 ցուն , որ չորս կենդանի զանիկայ կը քաշէին կը
 տանէին , ու կենդանիներուն մէկը մարգու կեր-
 պարանք ունէր , երկրորդը՝ առիւծի , երրորդը՝
 կովու , ու չորրորդը արծուի , և ասոնց ամէնը չորս
 չորս երես ունէին , ու չորսական թևերով էին ,
 որ երկուքովը մարմիննին ծածկեր էին , ու մէ-
 կալ երկուքովը կը թռչէին , և անանկ լուսաւոր
 էին կը փայլէին ասոնք , որ աչք չէր դիմանար
 վրանին նայելու տեսնելու՝ կարծես թէ կայծակ-
 ներ կը ցատքեցընէին իրենց վրայէն : Եւ ասոնց
 վրան երկինքը սաստիկ պայծառ ու լուսաւոր բա-
 ցուած՝ մէջ տեղը տեսաւ որ մէկ փառասէղ մարգ
 մը աթոռը նստած , ու չորս դին բոլոր ծիրանի
 գօտիի պէս ճառագայթներով պատած՝ ինքը մէ-
 ջը արևու պէս կը փայլէր : Ըստ տեսիլքովս , ինչ-
 պէս կ'ըսեն ոմանք՝ Կստուած ուզեց Հրեից ցու-

չինել թէ իրենց շինած տաճարին՝ և հոն տեղը
 դրած քերթելից ինքը կարօտ չէ . որ իրենք ի-
 րենց տաճարին վրայ պարծենալով մարդարելից
 դէմ կ'ըսէին թէ « Վանի որ մեր տաճարը Ա-
 րուսաղէմ կեցեր է , մեզի թշնամին չկրնար մօ-
 տենալ . . որ ասանկ չէ , հասպա ամէն տեղ ան-
 կէց ալ շատ փառաւոր ու սքանչելի կերպով ին-
 քը կը սրաշուի իրեն ստեղծուածներէն . և թէ
 որ մեզքերնէն չդառնան նէ , չինայեր՝ ան տա-
 ճարը Աբուդոդոնտորի ձեռքը կու տայ , որ
 թէպէտ բնութեամբ մարդ է , բայց Աստուած
 իրեն անանկ զօրութիւն սկիտոր տայ որ՝ առիւծի
 պէս ուժով ըլլայ , արծուի պէս աչքերաց սրա-
 տես , ու կովու պէս ջարդ ու բուրդ ընող , որ այն-
 պէս հիմնայատակ ընէ զիրենք իրենց տաճարովը :
 Բայց Ազէկիէլ աս տեսածին պէս՝ սարսափե-
 լով երեսին վրայ որ ինկաւ , ան ատենը ձայն մը
 լսեց , որ իրեն կ'ըսէր . « Արդի մարդոյ , ելիր ո-
 տից վրայ կեցիր՝ որ ըսածիս լսես . . ու անանկ
 Աստուած սկսաւ իրեն գանգատիլ Իսրայելացւոց
 ըրած ապերախտութիւնը , ու հրամայեց որ եր-
 թայ քարոզէ իրենց , որ ծուռ ճամբանին թո-
 դուն՝ Աստուծոյ դառնան : Ատքը դէպ 'ի ինքը
 ձեռք մը երկնցաւ , որ մէկ զիրք մը բռներ իրեն
 կու տար ու կը հրամայէր որ բերանը դնէ ուտէ ,
 ու ան գրքին ներսը դուրսը ողբ ու վայ գրուած
 էր . մարգարէին ալ անանկ երեցաւ որ՝ ան ու-
 տելուն պէս բերանը անուշցաւ , ու Աստուած
 հրամայեց որ անով լեցուած՝ երթայ քարոզէ :

Այս Ազէկիէլ մարգարէս Իսրայելացւոց մեղ-
 քը և անօրէնութիւնները երեսնին տալով ի-
 րենց վրայ եկած և գալու թշուառութիւնները
 շատ առակներով ու օրինակներով քարոզելէն

ետե, Մատուած Իսրայելացւոց մէկ ուրախակիւն տեսիլք մըն ալ իրեն յայտնեց, որ ան իրենց գերութեամբը բողոքովին չյուսահատին. ու ասանկ եղաւ : Սէկ որ մը Մատուած Ազեկիելը մէկ դաշտ մը (այսինքն օվա տեղ մը) տարաւ, ու չորս դին պտըտցուց, տեսաւ որ բոլոր մեռելնէրու չորցած ոսկորներով լեցուն էր ան դաշտը. ու հոն Ազեկիելի ըսաւ որ կանչէ հրամայէ՝ որ ամէն մէկ մարդու ոսկորները իրենց տեղը դան շարուին, ջիւով (այսինքն սինյիրով) կապուին, միս դայ լեցուի, ու մորթը վրանին պատէ : Արբոր ըսածին պէս անանկ կատարեալ մարմիններ եղան, նորէն իրեն հրամայեց Մատուած որ « Մսէ որ չորս դիէն հով փչէ վրանին », ու ան հովէն ան մարմինները կենդանութիւն առին՝ ամէնքը ելան ոտքի վրայ կայնեցան, այնպէս որ բոլոր դաշտը անհամար մարդով լեցուեցաւ : Աստով հաստատեց Մատուած իր Իսրայելացւոց ըրած խոստումները, որ մէկ որ մը պիտի զանանք չորս դիէն գերութենէն ազատէ մէյտեղ բերէ՝ մեռնելէն յարութիւն առածի պէս : Մսիկ ՚ի զատ Մատուած Ազեկիել մարգարէին տեսիլքներուն մէջը Արուսաղեմի տաճարին մէկ նոր ձեմը ցուցուց, որ ինչպէս կ'ըսեն՝ Իսրայելացիք գերութենէն դառնալու ատենը անոր պէս նորէն շինեն Մատուածոյ տաճարը :

Գ Լ Ո Ի Խ Ե

Պատմութիւն Գանիելի մարգարեին :

Ըճ տշխարհի 3398 . 3401 : (Դան . Ե . ԺԳ . Բ .)

Վարուդողոնտար Վարելացոց թագաւորը երբոր եկաւ Երուսաղէմ առաւ , ու մէջի մարդիկը հետը քչեց Վարելոն գերի տարաւ նէ , իր իշխաններէն Վսփանէզ ըսուած մէկին յանձնեց , որ ան շքեից գերիներէն՝ շնորհալի , խելացի ու սրամիտ տղաքներ ընտրէ , թագաւորական ծախքով առնէ պահէ , ու իրենց Վաղգէացոց լեզուն՝ և ուրիշ ուսումներ սորվեցընէ : Ըս ընտրածներուն մէջէն էին՝ Գանիէլ : Յուդայի թագաւորական զեղէն , և իրեն իրեք ընկերները , Մանիա , Սիսայէլ ու Ղարիա , որ անոնց անունը Վսփանէզ փոխեց , Գանիէլի անունը Վաղտատար դրաւ , և մէկալնոնցը՝ Սեզրաք , Սիսաք , Էբեղնաքով : Թագաւորը ասորսպրեր էր , որ աս տղոցս կերակուրը իրեն սեղանէն էր թաց , աղէկ ուտելիքներ ու ըմպելիքներ տան : Բայց Գանիէլ և իրեն իրեք ընկերները մտախտական օրէնքը պահէլով՝ վերակեցուին աղայեցին որ իրենց միայն հնաօրէն տայ ուտելու , ու սուկ ջուր տայ խմելու : Ըն ալ առջի բերանը աս բանիս թող չտուաւ , վախնալով թէ տղաքը անանկ կը հալին կը մաշին , ու ետև ինքը թագաւորէն խօսք կը լսէ : Բայց ետքը փորձեց տեսաւ որ , ան չորսը անանկ ձգնաւորի պէս հունտ ուտելով՝ մէկալ տղոցմէն (որ թագաւորին փառաւոր կերակուրներէն կ'ուտէին) աւելի

գէր ու կայտառ էին : Արբոր աս տղոցը սորվելու ատեննին լմրնցաւ , և փորձելու տեսնելու համար թագաւորին առջևն որ ելան , Վանիէլ և իրեն իրեք ընկերները ամենէն աւելի գիտուն ու խնաստուն երևցան , որ ինչ որ կը հարցընէր թագաւորը , ամէն բանին պատասխան տեղն ՚ի տեղը կու տային , մանաւանդ Վանիէլ . անանկ որ՝ բոլոր Վաբելացոց կարդացողներուն բերանը բաց կը մնար , և իրենց չգիտցածները անիկայ կը զրուցէր , ու կը մեկնէր :

Եւ Վանիէլ մարգարէս , ինչպէս կ'ըսեն՝ տաւ ուերկու տարուան տղայ էր , որ իր խնաստու թեամբը Շուշան բարեպաշտ կինը մեռնելէն խալըսեց . որ ասանկ եղաւ բանը : Հրէից Վաբելոն եկած բնակած գերիներէն մէկ մարդ մը կար Յովակիմ անունով , որ մէկ Շուշան անունով կնիկ մը ունէր՝ տեսքով՝ խիտ աղուոր . և հոն պէտք եղած ատենը Հրէաներուն ծերերը ասոր տունը կու գային՝ իրենց մէջի դատաստանը կը տեսնէին : Եւ ծեր դատաւորներէն երկուքը՝ շատ գալով երթալով Յովակիմի տունը՝ Շուշանին աչք զարկին , ու դիպուկ ատեն կը փնտրուէին որ իրենց չար ցանկութիւնը կշտացընեն : Ուստի մէկ օր մը որ Շուշանը խիտ տաքէն նեղացած ելաւ իր պարտեղը գնաց , որ հոն աւազանը մտնայ լուացուի , ու երբոր իր աղախիւները քովէն խրկեց որ երթան օձառ (այսինքն սապոն) բերեն , ու ինքը մինաւոր մնաց , ան ատենը աս երկու դատաւորները որ ետևէն գացեր պարտեղին մէկ կողմը պահուըտեր էին , եկան Շուշանի վրայ հասան , ու կը բռնաբարէին որ իրենց չար կամքը կատարէ . « Հասա թէ քեք կը մատնենք , ըսին , թէ մէկու մը հետ

բանեցինք՝ որ մեզք կը գործէր , , : Ըս բանս որ տեսաւ Շ ուշան՝ “ Ը՛հ , ըսաւ , որ զին դառնամ նէ՛ գէշ է . առ բանը ընելը՝ ինձի մեռնելու չափ է , և թէ որ չընեմ՝ ձեր ձեռքէն պիտի չխալըսիմ . բայց այսու ամենայնիւ աւելի կ'ընտրեմ՝ առ չարութիւնը չընել՝ ու ձեր ձեռքը մատնուիլ , քան թէ Ըստուծոյ առջև մեղանշեմ , , : ասանկ ըսաւ Շ ուշան՝ ու սկսաւ կանչուրուտել : Ըն առենը անոնք ալ կանչուրուտեցին , ու երբոր մարդիկ վրայ հասան՝ անոնց ըսին թէ “ Սէնք պարտեզը ժուռ գայնինի տեսանք որ Շ ուշան մէկ կտրիձի մը հետ մեզք կը գործէր , և երբոր վրանին երթալու եղանք՝ մարդը ձգեց փախաւ , , : Ըսանկ զրպարտութիւն ընելով՝ մէկալ օրն որ դատաստան հանեցին անմեղ Շ ուշանը , ո՛վ որ զինքը կը ձանչնար նէ՛ կը զարմանար , որ ասանկ բանի՛ մարդ կարծիք չունէր Շ ուշանի վրան . բայց ետքը ան երկու ծերին հաւտալով՝ վճիռը կտրեցին թէ “ Սոյսիսական օրէնքով պէտք է որ մեռնի , , : Շ ուշանն ալ ան ժամանակը կանչեց . “ Ըստուած՝ յաւիտենական , ըսաւ , դուն որ ամէն գաղտուկ բաները ըլլալէն առաջ գիտես , աս ալ գիտես որ՝ ասոնք սուտ կը վկայեն կոր իմ վրաս , և այնպիսի անօրէնութեան համար կը մեռնիմ՝ որ չեմ ըրած , , : Ըստուած ալ լսեց Շ ուշանի աղօթքը . ուստի երբոր ալ մեռցընելու կը տանէին , ձամբան հողին սուրբ լոյս տուաւ Գանիելի , որ ժողովուրդին լէջէն ամուր ձայնով սկսաւ կանչել թէ “ Ես անպարտեմ ատոր արիւնը մտնալէն , , : Երբոր աս լսեց բոլոր ժողովուրդը՝ կանկ առին , ու հարցուցին թէ ինչ կ'ըսէ : Ըն ալ ըսաւ . “ Ըսանկ անխելք եղաք որ՝ առանց բանը իմանալու դատա-

պարտեցիք աս անմեղը . դարձիք նորէն դատաստան ըրէք . Վարձաւ բոլոր ժողովուրդը , նորէն դատաստան նստան , ու Վանիւիւր առին մէջ տեղերնին նստեցուցին , իրեն աղաչեցին որ ինքը աս դատաստանը նորէն տեսնէ . ան ալ կանչեց ան երկու շար դատաւորները , ու մէկիկ մէկիկ հարցընելով՝ անոնց ստուծիւնը և չարուծիւնը յայտնի ցուցուց . ու անանկ մեռնելէն խալըսեց անմեղ Շուշանը . և անոր տեղը սպաննեցին ան երկու ծեր դատաւորները : Ետով Վանիւիւր անունը շատ հռչակուեցաւ Հրէաներուն մէջը , և օրէ օր մեծնալով՝ Վաբեւըացոց առջևն ալ շատ անուն ստաւ , մանաւանդ երբոր ետքը Վաբուգողոմոսորի տեսիլքները կամ երազները մեկնեց . ինչպէս որ հիմա կը պատմենք :

Ընդամ մը՝ Վաբուգողոմոսոր թագաւորը քրնոյն մէջը երազ մը տեսաւ , ու երբոր արթնցաւ , անոր վախէն շփոթած՝ բոլորովին մոռցաւ մտքէն ելաւ տեսած երազը . ուստի շուտ մը հրամայեց՝ առջևը կանչել տուաւ բոլոր Վաբեւըացոց կարգացողները և իմաստունները , որ իրեն ըսեն թէ ինչ էր երազը , ու անոր մեկնութիւնը տան : Երբոր ասոնք չկրցան գիտնալ , Վաբուգողոմոսոր սաստիկ սրդողեցաւ վրանին , հրամայեց որ բոլոր Վաբեւըացոց կարգացողները սպաննեն : Ըս ըսնս Վանիւիւր և իրեն իրեք ընկերներուն ահանջը հասաւ , որ իրեքն ալ ան կարգացողներուն մէջը կը սեպուէին . ան ատենը Վանիւիւր ինզրեց որ մէկ օր մը ատեն տան իրեն , որ ան երազը ինքը զրուցէ թագաւորին , ուստի ան գիշերը Ետուծոյ գիմեց աղաչեց , որ աս ըսնս իրեն յայտնէ . ու առտուանց գնաց

Թագաւորին առջևը ելաւ, խնդրեց որ դադրին՝
 պարսոյ տեղը չսպաննեն ան կարգացողները .
 « Ինչու որ, ըսաւ, առ քու հարցուցած բանդ
 ազատորդի չկրնար գիտնալ, թէ որ Մատուած
 երկնքէն անոր չյայտնէ նէ, ինչպէս ինձի յայտ-
 նեց՝ որ քեզի ըսեմ : Այրազիդ մէջը, ըսաւ, թա-
 գաւոր, դուն մէկ մեծ արձան մը տեսար առջևդ
 կայնա՞ծ՝ ահաւոր կերպարանքով . ասոր գլուխը
 օսկիէ էր, ձեռուրները կուրծքը ու թևերը՝ ար-
 ծըթէ, մէջքէն ինչուան ծնկուրները՝ պղնձէ,
 սրունքները երկրթէ, և ոտուրներուն կէսը եր-
 կրթէ ու կէսը հողէ : Մը նայիլնինի՝ տեսար որ
 անդիէն լեռնէն մէկ քար մը փրթաւ՝ եկաւ անոր
 ոտուրներուն զարկաւ, ու ձգեց ջախջախեց փոշի
 դարձուց ան արձանը . ետքը փոշին ալ հալը փը-
 շեց տարաւ, ու ան քարը աճեցաւ՝ մէկ մեծ լեռ
 մը եղաւ, այնչափ որ՝ բոլոր աշխարհքս լեցուց . »
 Ատեւէն առ երազիս մեկնում թիւնն ալ գրուցեց
 Վանիէլ . « Մը արձանին, ըսաւ, օսկի գլուխը՝
 քեզ կը նշանակէ, որ թագաւորներուն թագա-
 ւորն ես . քու ետեւէդ ուրիշ թագաւորութիւն
 մը պիտոր ելլէ քեզմէ վար, որ ան արծաթը կը
 ցուցնէ . անոր ետեւէն մէկ ուրիշ մըն ալ աւելի
 տկար . ու անկէց ետքը չորրորդը՝ երկաթովը կը
 ցուցնէ որ՝ անիկայ իր ուժովը պիտոր մէկալ-
 նոնք կործանէ . բայց անոր կէսը հողէ ըլլալը՝
 անոր ալ տկարութիւնը կ'երեւցնէ : Ատեւ ասոր
 ատենը՝ Մատուած մէկ նոր թագաւորութիւն մը
 պիտոր հանէ, որ բոլոր թագաւորները պիտի
 կործանէ իր տակը առնէ . ինչպէս ան քարը՝ որ
 զամէնը ջախջախեց, ինքը միայն լեցուց բանեց
 բոլոր աշխարհքս, ու ինքը մինակ յաւիտեան
 պիտի մնայ . » (Մը ետքի ըսուած թագաւորու-

Թիւնը՝ Թէպէտ ուննք Հոսմայեցոց վրայ ու զեցին խմանալ, բայց ամէն կողմննէ աւելի յարմար կը մեկնեն Վիկեզեցոյ վարդապետները՝ մեծ սիայի Թազաւորութեան վրայ հոգևորապէս իմանալով աս բանս) :

Վարուգոզոնոսոր երբոր աս լսեց, շուտ մը ելաւ Վանիելի առջևը ինկաւ երկրպագութիւն քրաւ, ու հրամայեց որ անոր խունկ ու զոհ մատուցանեն, և ըսաւ իրեն Թէ « Հիմա խնացայ որ՝ ձեր Մտուածն է բոլոր աստուածներուն Մտուածը ու Թազաւորներուն Թազաւորը, որ ինքը միայն գիտէ բոլոր ծածուկ բաները՝ որ աս բանս ալ քեզի յայտնեց » : Եւ աս պատճառովս Թազաւորը Վանիելի շատ պարզէներ տալէն ետև՝ զինքը գլխաւոր դրաւ Վաբեւացոց իշխաններուն ու բոլոր կարդացողներուն վրայ : Վանիել ալ Թազաւորէն խնդրեց, որ իրեն իրեք ընկերները Մանիան, Սիայելը և Ղարիան առաջ քաշէ՝ Թազաւորական բանի վրայ դնէ :

Գ Լ Ո Ի Խ Զ .

Իրեր մանկանց պատմութիւնը :

Աժ աշխարհի 3434 : (Գան . Գ :)

Վարուգոզոնոսոր իր Թազաւորութեան տասնորութը տարին օսկիիէ արձան մը կամ կուռք մը շինել տուաւ, վաթսուն կանգուն երկայնքը, ու վեց կանգուն լայնքը, և զաս բերաւ կայնեցոց Վէերա ըսուած դաշտին մէջը Վաբեւացոց երկերը : Ետքը չորս գին իր տէրութեանը մէջ խրկեց հրաման հանեց, բոլոր մեծամեծները ու

իշխանները և զլիաւոր մարդիկը զան Տոն ժող-
 վուին, ու մեծ հանդեսով աս արձանը պաշտեն :
 Ըն արձանին քովն ալ մէկ հնոց մը կամ կրակի
 փուռ մը շինել տուաւ, որ ով որ չհնազանդի՝
 ան չորաշտէ նէ, հոն կրակը ձգեն զինքը : (Թա-
 գաւորին ըսածին պէս եկան ամէնքը, ու կերպ
 կերպ նուագարաններ (այսինքն չալղըներ) չալե-
 լով աս հանդէսը կ'ընէին, և ամէնքը երկրպա-
 գութիւն կը մատուցանէին ան արձանին : Ըս-
 բանին՝ Ղանիկէի իրեք ընկերները Ընանիան,
 Սիսայէլը, Ըջարիան չհնազանդեցան՝ չեկան
 պաշտելու . անոր համար Վաբուգողոմոսորը որ
 իմացաւ՝ սրդողելով զանոնք իր առջևը բերել
 տուաւ, ու հարցուց թէ՝ « Իրաւ է որ դուք չե-
 կար իմ արձանս պաշտելու . . . ետքը խրատ տուաւ
 յորդորեց որ իրենք ալ երթան երկրպագութիւն
 ընեն . . . Հապա թէ չէ, ըսաւ, զիտնաք որ՝ ձեզ
 ան կրակին մէջը ձգել կու տամ . ան ատենը
 տեսնենք թէ՛ որ աստուածը պիտոր զայ ձեզ
 իմ ձեռքէս խալըսէ . . . ըսաւ : Ընոնք ալ չվախ-
 ցան, համարձակ իրեն ըսին թէ՛՝ « Թագաւոր,
 աս բանիս համար աւերորդ է որ մենք քեզի պա-
 տասխան տանք . բայց նորէն քեզի կ'ըսենք որ՝
 մենք քու կուռքդ չենք պաշտեր, մենք մեր Ըս-
 տուածը ունինք երկինքը, մենք զան կը պաշ-
 տենք, որ քու կրակէդ մեզ կարող է ազատել,
 և քու ձեռքէդ ալ մեզ կը խալըսէ . . . Երբոր աս
 բանս լսեց Վաբուգողոմոսոր, սասաիկ բարկու-
 թեամբ կատեցաւ վրանին . շուտ մը հրամայեց
 որ՝ հնոցին կրակը չափէն աւելի վառեն, և զա-
 սոնք մէջը ձգեն՝ որ երթան երկն մոխիր դառ-
 նան . Թագաւորին տուած հրամանն որ կատարե-
 ցին, աս երեք կտրիճները իրենց վրայի լալթե-

բովը բանեցին կապեցին ան սուկալի կրակին մէջը որ ձգեցին, ետեւէ ետեւ այնչափ կոկծեցուցին կրակը որ՝ բոցը քառսունըինը կանգուն վեր կ'ելէր, ու չորս դին գտնուած մարդիկը կ'երէր կը լափէր: Ըն ատենը Մատուած հրեշտակ մը խորհեց կրակին մէջը, որ եկաւ զիրենք կրակէն պահեց, անանկ որ մէկ բաներնին չերեցաւ, և պաղուկ հով մըն ալ փչել տուաւ հնոցին մէջը, որ տաքէն ալ չէին նեղուեր. ու իրենք ան հրեշտակին հետը մէկտեղ կրակին մէջը ժուռ գալով ուրախութեամբ փառք կու տային ու կը գոհանային Մատուծոյ, և ան տեղը Մզարիան իրեն մէկալ ընկերներուն հետ ան օրհնութիւնը քսաւ, որ կը սկսի. () Բնեալ էս րէր Մատուած հարցն մերոյ. քովեալ էս քառասորեալ է անան քոյառիքեան: Մը ձայներս ու օրհնութիւններս երբոր թաղաւորին հասկըցուցին, ինքն ալ վազեց եկաւ որ նայի, ու զարմանալով կը հարցըներ թէ՛ « Մը ինչ բան է, մենք երէք հոգի կապած կրակին մէջը ձգեցինք, ու ես հիմա չորս մարդ կը տեսնեմ, որ արծակ հանդիսա ժուռ կու գան կոր, և ան չորրորդը, ըսաւ, Մատուծոյ որդի կը նմանի », (որ զան՝ ինչպէս կ'ըսեն, իր կուռքերուն տղոցը մէկը կարծեց). ետքը հնոցին բերանը գնաց ու կանչեց. « Աեգրաք, Ախաք, Մբեղնագով՝ ծառայք Մատուծոյ բարձրելոյ՝ ելէք դուրս եկէք », Մնոնք ալ երբոր ելան, ամէնքը եկան վրանին թափեցան՝ ու տեսան որ ամենեւին կրակը չէ թէ միայն իրենց զէն մը չէր քրած, հապա վրայի հաղուսաներուն ալ չէր դարձ՝ չէր խանձած: Ըն ատենը Վարուգոգոնտոր առ մեծ հրաշքը տեսնելով ինքն ալ զարմացաւ մնաց, ու սկսաւ փառք տալով Մատուծոյ

քսել թէ՛ “ Երաւի ամենէն մեծ Մտուածը ան
է՛ որ այսպիսի կարողութիւն ունի , և այսուհե-
տե , ըսաւ , ուլ որ անոր դէմ զբուցէ նէ՛ կը մեռ-
ցրնեմ զինքը , ” : Եւ աս պատճառովս Մաննիայի ,
Սիւսայելի և Մզարիայի՝ առաջինէն աւելի պա-
տիւ ու իշխանութիւն տուաւ :

Գ Լ Ո Ւ Խ Է .

Դանիէլ մարգարէիև ուրիշ պատմութիւնները :

ԱՄ աշխարհի 3434 . 3444 . 3449 : (Դան . Դ . Ե . 2 . Է .
Ը . ԺԴ .)

Մ քաներէս ետե՛՛ Կարուդողմնատը թագա-
ւորը նորէն ուրիշ տերութիւններու դէմ յաղ-
թութիւն ընելով , ու ասդիէն անդիէն շատ կո-
ղտուտներ ձեռք ձգելով , անով Մաբերոն քա-
ղաքը որ եւելօք հարստացուց՝ մեծցուց , իր սիրան
ալ չափէն աւելի մեծցաւ ու հպարտացաւ : Եւ
ան ատենը մէկ երազ մը տեսաւ , որ երկրիս մէջ
տեղը մէկ ծառ մը տնկուած կեցեր էր , անանկ
մեծ որ՝ անոր բարձրութիւնը երկինքը կը հաս-
նէր , ու լայնութիւնը աշխարհքիս չորս դին կը
տարածուէր . ասոր տերեւները շատ աղուոր լե-
ցուն , ու պտուղը այնչափ շատ էր՝ որ ամենուն
կ'օգտէր ուտելու . իր շուքին տակը կը բնակէին
բոլոր դադանները , և իր ճիւղերուն վրայ թա-
ւեր էին բոլոր թռչունները , ու անկէց կը կերա-
կրուէին բոլոր կենդանիները : Մակէ ետքը տե-
սաւ որ՝ երկինքէն մէկ հրեշտակ մը ինջաւ , կան-
չեց թէ՛ “ Կարեցէք ատ ծառը , իրեն տերեւնե-
րը թափեցէք , պտուղները ցիրուցան ըրէք , ա-

նոր ներքևէն ու վրայէն գազաններն ու թռչուն
 ները ելլեն, միայն անոր արմատը երկրիս վրայ
 թողէք՝ երկրթէ ու սղընձէ շղթայով կապած,
 որ երթայ բաց տեղը խոտերուն մէջը գազաննե-
 ռուն հետը կենայ, մարդկային սիրտը անկէջ
 վերցուի, ու անոր տեղը գազանի սիրտ արուի
 իրեն՝ ինչուան եօթը ժամանակ, : «Աբուգոր
 նստոր աս երազիս վրայ շատ շփոթեցաւ . ուստի
 բոլոր կարդացողները քովը կանչեց՝ որ խմանայ
 թէ աս ինչ պիտոր ըլլայ, ու մէկը չկրցաւ աս ե-
 րազս մեկնել, ինչուան որ Վանիէլը եկաւ՝ ու
 իրեն սկսաւ մէկիկ մէկիկ զրուցել . «Ըն ծառը,
 ըսաւ, մեծ ու բարձր՝ դուն ես, թագաւոր, որ
 այնչափ մեծցար ու ժովցար որ՝ քու տէրութիւնդ
 բոլոր աշխարհքիս վրայ տարածուեցաւ : Այս ան
 հրեշտակը որ եկաւ ըսաւ . Ատրեցէք ու ապակա-
 նեցէք ատ ծառդ, գիտնաս, տէր իմ թագաւոր,
 որ Մատուած քու վրադ ասանկ վճիռ կտրեր է,
 որ մարդիկներուն մէջէն դուն պիտոր վաճնտուիս
 ելլես, ու անբան անասուններուն հետ դուրս
 տեղը կենաս, եզան պէս խոտ ուտես՝ եօթը
 տարիի չափ, ինչուան որ խմանաս թէ Մատուած
 կը տիրէ աս մարդկային թագաւորութիւններուն
 վրայ, և ինքը որուն որ կ'ուզէ նէ՝ անոր կու
 տայ : Այս ան որ ըսաւ թէ՝ Միայն արմատը թո-
 ղէք, կ'խմացընէ թէ՝ Մատուծոյ կարողութիւ-
 նը խմանալէդ ետքը, թագաւորութիւնդ նորէն
 քու ձեռքդ պիտոր դառնայ : Ընոր համար աս
 խրատս քեզի կու տամ, ու թագաւոր . նայէ որ
 քու մեղքերդ և անօրէնութիւններդ՝ աղքատաց
 օղորմութիւն տալով սրբես . կարելի է որ Մ-
 տուած այսպիսի բարեգործութիւններ տեսնե-
 լով՝ քու մեղքերդ թողու : »

• Սրան շատ չանցաւ որ՝ աս բոլոր Վանիկէի ըսածները եկաւ ելաւ : Սէկ տարիէն ետքը որ մը երբոր աս Վաբուգողոմնոսոր թագաւորը իր պալատին վրան ելած՝ Վաբելոն քաղքին վրայ նայելով ու զուարճանալով կը քալէր , և հպարտութեամբ կ'ըսէր թէ՛ « Բայն Վաբելոնը չէ մի , որ ես իմ ուժովս՝ իմ փառացս և պատուոյս համար շինեցի , , , ան տեղը դեռ խօսքն որ բերանը կը զրուցէր՝ մէյ մ'ալ երկինքէն ձայն մը եկաւ թէ՛ « Վեզի կ'ըսեմ , Վաբուգողոմնոսոր թագաւոր . թագաւորութիւնդ քեզմէ վերցուած է , մարդոց մէջէն ելլես՝ ու գաղաններու և անասուններու հետ կենաս , , և ան վայրկենին մէջը Վաբուգողոմնոսոր գետինը ինկաւ , ինչպէս կ'ըսեն՝ մէկ եղան մը կերպարանք փոխուեցաւ , որ տարին ուրիշ անասուններուն քովը կապեցին , անոնց հետ խոտ կ'ուտէր : Բնանկ եօթը տարի կենալէն ետեւ , խելքը վրան եկաւ՝ ճանչցաւ Բստուծոյ կարողութիւնը և ինքնիշխան տէրութիւնը . ուստի Բստուած ալ նորէն իր առջի կերպարանքը դարձուց զինքը , որ եկաւ իր թագաւորութիւնը նստաւ :

Բայ Վաբուգողոմնոսորի , որդի մի կ'ըլլայ՝ կամ թողը ըսենք՝ Վաղտասար անունով , որ իրմէ ետեւ Վաբելոնոց թագաւոր նստաւ , անգամ մը մէկ մեծ սեղան մը ըրաւ իր մեծամեծ իշխաններուն հազար հոգիի չափ մարդու , և հոն ուտել խմելինի՛ Վաղտասար թագաւորը հրամայեց որ երթան ան ոսկիէ ու արծրթէ ամանները՝ որ ատենով Վաբուգողոմնոսոր Վրուսաղէմի տաճարէն կողոպտեւր առեր էր , հոն սեղանը բերեն՝ որ անով ալ խմեն : Երբոր աս Բստուծոյ նուիրած ամաններովը՝ ալ թագաւորը զուար-

Ճացած իր իշխաններուն հետ՝ իր կնիկներովը ու
 հարձերովը խնտու մով գինի կը խմէին իրենց
 կուռքերուն կենացը, և ճշմարիտ Մատուծոյ յի-
 շատակը ամեննին մտուրնէն չէր անցներ, ան ա-
 տենը յանկարծակի ասոնք գիմանցնին տեսան, որ
 մէկ ձեռք մը ելաւ՝ ու ճրագին լուսոյն առջևը
 պատին վրայ բան մը գրեց: Մը որ եղաւ՝ Թա-
 գաւորը ահուեցած խունկ կարեցաւ, ու կը գո-
 ղար. ուստի շուտ մը հան կանչեց բերել տուաւ
 բոլոր Մարեղացոյ մագերը ու կարգացողները,
 ու խոստացաւ իրենց թէ՛ «Մը որ աս գրուած
 քրս կարդայ նէ՛ իրեն մեծ պատիւ կ'ընեմ, ին-
 չուան Թագաւորութեանս երրորդ մասը իրեն
 կու տամ», կ'ըսէր. բայց մագրդ չգտնուեցաւ որ
 ան գիրը կարդայ, ուր մնաց որ մեկնէ. որ ա-
 նանկ շատ իրար անցում եղաւ մէջերնին: Մը
 չիթթաւ Թեանս մէջը յանկարծ Թագուհին միա-
 քը ինկաւ, Թագաւորին ըսաւ որ՝ Վանիէլը կան-
 չէն, որ Վաբուգոյնոսոսորի ատենը շատ այսպիսի
 խորհրդահամ թաներ մեկներ էր: Արքայ կան-
 չեցին՝ եկաւ Վանիէլ, Թագաւորը շատ մեծա-
 թանքով առաւ հետը խօսեցաւ, ու ան մէկայնոնց
 ըրած խոստումներները իրեն ալ ըրաւ, միայն թէ
 ան գիրը կարդայ՝ իրեն մեկնէ: Վանիէլ ալ ի-
 րեն պատասխան տուաւ թէ՛ «Մտ ընծաներդ
 քեզի ըլլայ, և ատ պատիւդ ուրիշի տուր. ես,
 ըսաւ, ան գիրը ձրի (այսինքն ճապա) կը կար-
 դամ՝ կը մեկնեմ քեզի», ու Թագաւորին երե-
 սը տալով Մատուծոյ գէմ ըրած ապերախտու-
 թիւնը, որ իր հօրը վրայ եկած պատիժներովը
 ինքը չխրատուելով՝ Մատուծոյ տաճարին սուրբ
 ամանները աւեր պղծեր է, ետքը դարձաւ գրին
 վրայ նայեցաւ ու ըսաւ. «Մանկ գրուած է.

Դ՝անէ . (Ժ)էէէէ . Փարէս : Դ՝անէ՛ ըսել է թէ ,
 համրեց Մստուած քու թագաւորութեանդ օ-
 րերը , ու վերջացուց : (Ժ)էէէէ , կշխոքով կշա-
 ուեցար , ու սրահաս ելար : Փարէս՝ երկուք
 բաժնուեցաւ քու թագաւորութիւնդ , կէսը
 Դ՝արաց տրուեցաւ , կէսը Պարսից , : Մս բա-
 նիս վրայ թագաւորը շուտ մը հրամայեց որ
 Վանիելի կապայ հազցրնեն , ոսկի շղթայ վիզը
 ձգեն , ու առջևէն քարոզ (այսինքն թէլլալ)
 կանչէ թէ՛ « Իշխան եղաւ Վանիել թագաւո-
 րութեանը երրորդ մասին , : Իայց Վանիելի
 տուած մեկնութիւնը շատ չուշացաւ՝ շուտով կա-
 տարուեցաւ . ինչու որ՝ Վարեհ Դ՝արաց թագա-
 ւորը որ եկեր Վարեհնը պաշարեր էր , ան գի-
 շերը մտաւ քաղաքը , ու Վաղտասարը սպաննեց՝
 անոր թագաւորութիւնն ալ ինքը առաւ :

Վանիել առ Վարեհ թագաւորին ալ շատ
 սիրելի եղաւ՝ իրեն խնամտութեամբք և հաւա-
 տարմութեամբք , այնչափ որ՝ թագաւորը զինքը
 իր իշխաններուն գլուխ էր ըրեր . և առ պատ-
 ճառովս բոլոր իշխանները կը նախանձէին վը-
 րան , ու ետևէ էին որ վրան մէկ պակասութիւն
 մը գտնեն՝ անով զինքը թագաւորին աչքէն հա-
 նեն : Աւաթի առ ճամբովս ուղեցին որ զինքը
 ձգեն . թագաւորին ասանկ հրաման մը հանել
 տուին , որ երսուն օր մարդ մէկէ մը խնդիրք չը-
 նէ , ոչ մարդէ և ոչ Մստուծմէ , հապա միայն
 թագաւորէն ըլլայ խնդիրքը , և ով որ ասոր գէմ-
 րնէ՛ առիւծներուն գուրը ձգուի : Մս հրամանիս
 Վանիել մտիկ չըրաւ , հապա ինչպէս սովորու-
 թիւն որ ըրեր էր՝ օրը իրեք անգամ իր տունը
 կ'երթար , ու վերնատունը կ'ելլէր պատուհա-
 նին առջևը՝ որ դէպ ՚ի Նրուսաղէմ կը նայեր՝

Մտուծոյ իր աղօթքը կ'ընէր : Ղանիկէի թըշնամիները աւ որ խմացան՝ շուտ մը գացին հասկըցուցին թագաւորին թէ « Ղանիկէ քու հրամանիդ չհաղանդեցաւ » . թագաւորն ալ շատ ջանաց որ Ղանիկէը աւ պատիժէս խալըսէ . բայց ետքը ձարը հատաւ՝ հրաման տուաւ որ ան առիւծներուն գուբը ձգեն . և իրեն ասանկ ըսաւ թէ՛ « Ղու Մտուածդ որ միշտ կը պաշտէ իր՝ քեզ կը խալըսէ » . ուստի երբոր անանկ տարին Ղանիկէը հոն ձգեցին , մեծ քարով մը խուբին բերանը գոցեցին՝ ու թագաւորին մատնիտը կընքեցին , որ մարդ չբանայ խալըսէ : Մն իրիկունը թագաւորը արտամութենէն ոչ բան կերաւ՝ ոչ քունը տարաւ . ուստի առտուանց կանուխ ելաւ գնաց՝ դբին բերանը բանալ տուաւ , ու տեսաւ որ Ղանիկէը ողջ առողջ կեցած՝ փառք կու տար Մտուծոյ , որ զինքը ազատ պահէր է ան առիւծներէն . ասոր վրայ թագաւորը խիստ ուրախացաւ . շուտ մը գուբէն հանել տուաւ Ղանիկէը , ու հրամայեց որ անոր տեղը իր թշնամիները իրենց տղաքներովը ու կնիկներով գուբը ձգեն . որ ասոնք դեռ վար դետինը չհասած՝ առիւծները վրանին ցատքեցին բզիկ բզիկ ըրին : Մասնկ Մտուծոյ օգնականութեամբը իր իշխանութեանը մէջը մնաց Ղանիկէ՛ բոլոր Ղարեհի թագաւորութեան ատենը . և անոր ետեւն Վերոսի ժամանակն ալ , որ Ղարսից թագաւոր ըլլալով՝ Ղարեհի մեռնելէն ետքը եկաւ Ղաբելացոց թագաւորութիւնն ալ ինքը առաւ :

Մը Վերոս թագաւորին ատենը Ղաբելացիք մէկ կուռք մը ունէին Ղէլ ըսուած , որ շատ մեծարանքով զասիկայ կը պաշտէին . անանկ որ ամէն օր կատուած (կամ թային եղած) էր անոր՝

արասուերիու արդու (կամ քիլէ) բարակ ալիւր ,
 քառասուն ոչխար , ու վեց մար (կամ մէտրէ)
 գինի : թագաւորն ալ կը սրաշտէր առ կուռքս .
 ուստի մէկ օր մը Ղանիելի հարցուց թէ՛ «Ղուն
 ինչու չես սրաշտեր Քէլ աստուածը» : Ղանիել
 ալ սրատասխան տուաւ թէ՛ «Ես մարդու ձեռ-
 քով շինուած կուռք չեմ սրաշտեր , հասցա կենդա-
 նի Ղստուածը կը սրաշտեմ , որ երկինքն ու երկիրս
 ինքը ստեղծեր է : Ես ատենը թագաւորը դար-
 ձաւ իրեն ըսաւ . «Ենչ , կարծե՞ս որ Քէլը կեն-
 դանի աստուած չէ՞ մի . չե՞ս տեսներ որ ամէն օր
 սրչափ կ'ուտէ կը խմէ» : Ղանիել ալ խնտա-
 լով իրեն ըսաւ . «Ո՛ր խաբուիր , թագաւոր ,
 ատ Քէլդ ներսէն հողէ է , ու դրսէն պղընձէ շի-
 նուած է . ամենեւին ատ ոչ կերեր է՝ ոչ խմեր է» :
 Ես բանիս վրայ թագաւորը սրդողելով՝ ան կուռ-
 քին քուրմերը կանչեց իրենց ըսաւ . «Թէ որ
 ինձի չրսէք որ՝ ո՛վ կ'ուտէ ան կերակուրները նէ ,
 ձեզ կը սպաննեմ . հասցա թէ յայտնի ցուցնէք
 որ ան բոլորը Քէլը կ'ուտէ՛ Ղանիելը կը մեռ-
 ցնեմ , որ ասանկ հայհոյանք ըրաւ Քելին գէմ» :
 Ղանիել ալ թագաւորին ըսաւ որ՝ «Ես անկ ը-
 սածիդ պէս թող ըլլայ» : Ուստի թագաւորը
 Ղանիելի հետ ելան եկան Քելին տաճարը , ու
 հոն քուրմերը դացին ըսին որ «Ե՛ս մենք դուրս
 կ'ելլենք , ու դուն , թագաւոր , Քելին առջևը
 կերակուրները ու գինիները դիր , դոները գոցէ՛
 մասնիտիդ կնքէ . ետքը աւտուն գանք տեսնենք .
 թէ որ Քէլը կերած չէ ատ բաներդ , ան ատենը
 մենք մեռնինք . հասցա թէ կերեր է , Ղանիելը
 մեռնի , որ մեր վրայ ատանկ սուտ բան զուր-
 ցեց» : Քուրմերը առ բանիս վրայ վախ չու-
 նէին՝ ապահով էին . պատճառն որ՝ սեղանին ներ

քեզն մէկ ծածուկ ճամբայ մը ըրեր էին, որ
միշտ անկէց կը մանկին ան դրած կերակուրները
կ'ուտէին: Արբոր դուրս ելան ասոնք, ու թա-
գաւորը ըսածին պէս ան կերակուրները Վելին
առջևը դրաւ, ան ատենը Վանիէլ մոխիր բե-
րել տուաւ, և ուրիշներէն գաղտուկ թագաւո-
րին աչաց առջևը բոլոր տաճարին գետինը ցա-
նել տուաւ. անանկ դուրս ելան դուռը գոցեցին
ու թագաւորին մասնիովը կնքեցին՝ ելան գա-
ցին: Ան գիշերն ալ քուրմերը, որ եօթանասուն
հոգի էին, իրենց սովորութեանը պէս կնիկնե-
րովը ու տղոցնովը ան ըսած գաղտուկ ճամբո-
վը տաճարը մտան, ու բոլոր բաները կերան
խմեցին՝ ելան գացին: Աստուանց կանուխ թա-
գաւորը Վանիէլը հետը առած եկաւ տաճարին
դուռը, ու Վանիէլի ցուցնելով որ ինչպէս ամ-
բողջ կեցեր է իր դրած կնիքը (այսինքն մէօհի-
րը) երբոր դուռը բացաւ տեսաւ որ կերակուր-
ները հատած են, ուրախութեամբ սկսաւ կան-
չել թէ՛ «Մեծ ես դուն, ով Վէլ, ամենեւին
խաբէբայութիւն չիայ եղեր քու վրայ»: Ան ա-
տենը Վանիէլ ծիծաղելով բռնեց թագաւորը
որ ներս չմանէ, ու իրեն ըսաւ. «Մէյ մը գե-
տինը նայէ, տես թէ ինչ ստուրներու նշան է
ատ»: (Թագաւորն ալ նայեցաւ, ըսաւ թէ
«Մարդու, կնիտոց, ու տղոց ոտքի նշաններ կ'ե-
րեայ կոր»: այսպէս որ խմացաւ քուրմերուն ը-
րած խաբէբայութիւնը, ետքը ան գաղտուկ շի-
նուած ճամբան ալ որ տեսաւ, սաստիկ սրդողե-
ցաւ վրանին՝ հրամայեց որ զանոնք ամենքը իրենց
տղոցնով և կնիկներովը մեռցնեն: Վելին կու-
բն ալ Վանիէլի ձեռքը տուաւ որ ջարդէ, ու
անոր տաճարն ալ կործանէ:

. Ըն ատենները Ռաբելագիրք մէկ ահաւոր վի-
 շապ մը (այսինքն աժտէր մը) կը պահէին, որ ա-
 մէնքը սոսկալով Մատուծոյ տեղ դրած զանիկայ
 կը պաշտէին : Ինչ կուռքին բանն որ ասանկ ե-
 զաւ, [Թագաւորը դարձաւ Վանիելի ըսաւ թէ
 “ Ըս վիշապիս համար ալ չես կրնար ըսել թէ
 պղընձէ շինուած է . ահա կենդանի է, կ'ուտէ կը
 խմէ . ուստի դուն ալ մեզի հետ ասոր երկրպա-
 դու թիւն ըրէ ” : Վանիելի իրեն պատասխան
 տուաւ թէ “ Ըս իմ Մատուծոյս երկրպագու-
 թիւն կ'ընեմ, որ կենդանի ու անմահ Մատուած
 է . և թէ որ, ըսաւ, ինձի հրամանն կու տաս նէ՞
 ես աս վիշապը քու առջևդ առանց [Թուր կամ
 գաւազան բանեցընելու սպաննեմ ” : [Թագաւորն
 ալ հրամանն որ տուաւ, Վանիելի՛ք ըլից մը եղ, ու
 ձիւթ (այսինքն զիֆթ) առաւ, մէջը ձարպ ու
 մազ դրաւ՝ մէկտեղ եփեց կունտ մը շինեց, ան
 վիշապին բերանը ձգեց, որ ուտելուն պէս ան
 տեղը ձաթեցաւ վիշապը . ու Վանիելի իրենց
 երեսը տուաւ ըսաւ թէ “ Երեցէք որ ինչ կը
 պաշտէիք ” : Ռաբելագիրքը աս բանին վրայ սաս-
 տիկ կատողեցան, ու Թագաւորին դէմ ելան կ'ը-
 սէին թէ “ [Թագաւորը հրէայ եղաւ, որ ինչը
 կործանեց, վիշապը սպաննեց ու քուրմերը ջար-
 գեց ” . ուստի դացին Թագաւորին քովէն Վա-
 նիելը քաշեցին առին տարին առիւծներուն դու-
 բը ձգեցին : Հոն եօթը առիւծ կային . ասոնց
 սովորութիւն էր որ օրը երկու մարդու մարմին
 ու երկու ոչխար կու տային . բայց երբոր Վա-
 նիելը առջևնին ձգեցին, ան ատենը բան մը
 չտուին՝ որ երթան շուտով մեացընեն ուտեն : Ըն
 օրերը Միբակում մարգարէն որ Հրէաստան կ'ըլ-
 լար, ապուր եփեր էր ու մէջը հաց ալ բրդած,

անանկ ամանի մէջ դրած առեր արտը կը տա-
 նէր որ իր բանուորներուն տայ . ճամբան իրեն
 հրեշտակ մը հանդրապեցաւ , ըսաւ որ՝ « Ըտ կե-
 ղակուրդ Տարեւոն Վանիելի տար, որ առիւծնե-
 րուն գուբը կ'ըլլայ » . Ըմբակում ալ անոր ըսաւ .
 « Տէր , ես Տարեւոն գնացած չեմ , ու գուբը
 չեմ գիտեր ուր է » : Հրեշտակը ան ատենը ա-
 նոր գլխուն մազերէն բռնեց վեր վերցուց , ու
 զինքը շուտ մը Տարեւոն տարաւ՝ առիւծներուն
 գուբը ինջեցուց , և ձեռքի եղած կերակուրը հոն
 Վանիելի տալէն ետքը՝ ան վայրկեանը նորէն
 Ըմբակում իր տեղը դարձուց : Վանիել անանկ
 վեց օր գուբին մէջը կենալէն ետեւ երբոր եօթ-
 ներորդ օրը թագաւորը գուբին բերանը գնաց՝
 որ ցաւակից ըլլայ Վանիելի վրան , ու նայեցաւ
 տեսաւ որ՝ հոն Վանիելը ողջ նստեր էր , պա-
 դեցաւ մնաց , ու կանչելով ըսաւ . « Սեծ ես ,
 տէր Ըստուած Վանիելի . իրաւ որ քեզմէ ու-
 թիշ աստուած չկայ » . և հրամայեց որ շուտ մը
 անկէց վեր հանեն խալըսեն , և անոր տեղը իր
 թշնամիները ձգեցին , որ ան գազաններուն առ-
 ջւը ինկածնին սէս բզիկ բզիկ եղան :

Վանիել մարգարէին՝ Ըստուած շատ խոր-
 հրրդաւոր տեսիլքներէն ՚ի զատ՝ մեծիային գա-
 լըստեանը վրայ ալ ստոյգ ատենովը յայտնեց :
 Որ ասիկայ երբոր անգամ մը ազգին գերութեա-
 նը վրայ տրտմած պար պահելով Ըստուծոյ ա-
 զօթք կ'ընէր , ու ինչպէս կ'ըսեն՝ ան Արեմիա
 մարգարէին ըսածին վրայ կը մտմտար թէ՛ երբ
 պիտի ըմնայ Հրէից գերութեանը եօթանա-
 սուն տարին , որ Ըստուած աս չտիս դրեր էր ,
 յանկարծակի Վարրիէլ հրեշտակը իրեն երե-
 ցաւ , ու սիրով բարեւելով՝ « Վանիել , այր ցան .

կալի, ըսաւ, Մատուած քու աղօթքդ ըսեց. ուստի եկայ որ քու ուզած խնդիրքդ քեզի հասկըցնեմ, : Այլ անանկ սկսաւ իրեն տեղն 'ի տեղը զուրցել՝ մեծիային դալը, և իրեն մահը, որ մինչև ան ատենը եօթանասուն եօթներորդ պիտի ըլլայ, որ ամէն մէկ եօթներորդը աստուածաշնչի ուժովը եօթը տարի խմանալով՝ կ'ընէ չորս հարիւր խնսուն տարի, ինտոր որ ճմարտապէս ատենովը կատարուեցաւ : Մտոր համար ետքէ եկած անհաւատ հրէաները՝ աս մարգարէական բանիս դէմ ուրիշ ձար չգտներով, սկսան Վանիէլ մարգարէն սուտ մուտ խաբերայ պատճառներով՝ մարգարէներուն կարգէն դուրս սեպել. իբր թէ՛ մէկ սուրբ պատմադիր մըն էր կ'ըսեն, որ եղած հանդրպած բաները գրեց :

ԳԼՈՒԽ Ը.

Երկոտասան մարգարէները :

Ինչպէս վերը ըսինք՝ չորս մեծ մարգարէներէն 'ի զատ տասուերկու մարգարէութիւն գրող ալ եղան, որ իրենց գրուածքին քիչութեանը համար՝ Փոքր Սարգարէ ըսուեցան. և ասոնք ալ մէկախոնց ատենները աստուածային յայտնութենէն մարգարէութիւն կ'ընէին Սարայեւացւոց մէջը, ու Մատուոյ հրամանովը շատէն քիչը գրելիքայ անցուցին իրենց մարգարէութիւնը. ու իրենց անունները աս են. Ովսէէ, Մամլս, Սէքիէ, Յովէլ, Մքդիու, Յովնան, Սաոււմ, Մաբակոււմ, Սովոնիա, Մնգէոս, Օպբարիա, Սաղարիա : Եսոնցմէ որովհետև միայն Յովնան մարգարէին Վնուէացւոց քարոզութեան պատ-

մութիւնը աստուածաշունչին մէջը տեղն 'ի տեղը երկայն գրուած է, (որով բոլոր իր մարգարէութիւնը կը բովանդակի), ուստի հիմա զան կը պատմենք :

Յովնան մարգարէին պատմութիւնը :

Ն՛ աշխարհի իբր 3197 :

Յովնան որդի Միւթեայ, որ Բ Յերոջովամի Խորայեւացւոց թագաւորին ատենը Հրէաստան մարգարէութիւն կ'ընէր, Մտուած հրամայեց իրեն՝ որ ելլէ Վինուէ ըսուած այլազգիներուն մեծ թագաւորական քաղաքը երթայ, ու հոն իրենց քարոզութիւն ընէ, որ մեղքերնէն դառնան սպաշխարեն, որ Մտուած չպատուհասէ՝ քաղաքնին վրանին չկործանէ : Յովնան մարգարէն ալ աս նոր կերպ Մտուծոյ հրամաննին վրայ զարմանալով, որ Խորայեւացւոցմէ դուրս զինքը այլազգիներուն կը խրկէ որ քարոզէ, ու նաև աս ալ մտմտալով որ Մտուած ողորմած է, անոնք որ սպաշխարեւու ըլլան՝ պիտի ըսած պատիժը չտայ, և ան ատենը ինքը սուտ մարգարէ պիտոր երևնայ Վինուէացւոց առջևը, ուստի՝ (ինչպէս կ'ըսեն՝ շփոթած ասանկ կարծիք երթալով թէ Մտուծոյ յայտնութիւնը միայն Խորայեւացւոց երկրին մէջը կ'ըլլայ, ու անկէց դուրս ելլէ նէ՛ կը խալըտի աս վտանգէս) ինքն ալ փախաւ ելաւ Յոսիպէ քաղաքը գնաց, ու անկէց նաւ մը մտաւ՝ որ թմարսիս ըսուած հեռու այլազգիներու երկիրը երթայ՝ երեսը Մտուծմէ ծածկէ : Բայց երբոր նաւը ծովը ելաւ քիչ մը առաջ գնաց, յանկարծակի Մտուած մէկ անանկ սաստիկ մըրիկ

մը (այսինքն քայ մը) հանեց ծովուն մէջը, որ ալ
 լեկոծութենէն նաւը կը ջարդուէր կոր. ուստի
 նաւարարները դողալով ամէնը իրենց աստուած-
 ները օգնութիւն կը կանչէին, ու բեռերնին ծո-
 վը կը ձգէին՝ որ թեթեւան խալլաին: Ըն ա-
 տենը Հոփնան մարդարէն ալ, վախէն մի կ'ըլլայ
 կամ սաստիկ տրտմութենէն՝ նաւուն մէկ կողմը
 քաշուած մտած խեղալով որ կը քնանար, նաւա-
 պետը գնաց չեխելով զինքը արթնցուց՝ « Ըտ
 ինչ է, ըսաւ, որ անհոգ պառկեր կը խռհաս-
 դուն ալ ելիր քու աստուծոյդ աղօթք ըրէ, կա-
 րելի է որ ան լսէ՝ մեզ աս փորձանքէս խալլ-
 սէ »: Ըսպէս որ ճար չէր ըլլար չէր դադրեր
 ան ծովուն ալեկոծութենը, նաւարարները ըսին
 թէ՝ « Ըրլլայ որ մէջերնիս մէկուն զաղտուկ
 մեղացը համար աս Ըստուծոյ պատիժը վրանիս
 եկաւ », ուստի խորհուրդ ըրին որ մէջերնին
 վիճակ ձգեն՝ տեսնեն թէ որուն համար է: Եր-
 բոր ձգեցին՝ ու վիճակը Հոփնանու վրայ ելաւ,
 սկսան իրեն հարցնել թէ՝ « Իուն ո՞վ ես՝ ինչ
 բան ունիս, ո՞ր կ'երթաս », ան ժամանակը Հո-
 փնան ալ իրենց յայտնեց թէ՝ « Ես Ըստուծոյ
 ծառան եմ, որ ծովն ու ցամաքը ինքը ստեղծեր
 է, և անոր ձեռքէն ուղեցի որ փախչիմ. անոր
 համար աս պատիժս դուք ալ հետս կը քաշէք
 կոր », Ըստնը ալ որ անձրկած չէին գիտեր ինչ
 ընեն, Հոփնան իրենց ըսաւ որ բռնեն զինքը ծո-
 վը ձգեն՝ որ ան ալեկոծութենէն խալլաին: Եւ
 ւարարները այսու ամենայնիւ մեղքընցան վրան,
 ու կը ջանային նաւը գէտ ՚ի ցամաքը դարձնել.
 Ետքը ալ բոլորովին որ ճարերնին հատաւ, առաջ
 Ըստուծոյ աղաչելով՝ որ ան բանը մեղք չսեպէ,
 և իրեն ըսածին պէս՝ երբոր բռնեցին Հոփնանը ծո-

վր ձգեցին, շուտ մը հովը դադրեցաւ՝ ծովը խաղաղեցաւ . մարդիկն ալ աս հրաշքը տեսնելով՝ փառք տուին Մատուծոյ ու զոհ մատուցին : Մնաւորները ծովուն մէջը Մատուած մէկ մեծ ձուկ մը խրկեց, որ եկաւ : Յոյնացի մարդարէն կլլեց . ու իրեր օր իրեր գիշեր անօր փորուն մէջը ողջ կեցաւ : Յոյնացի, և իր ըրած մեղացը թողուծիւն խնդրելով ան աղօթքը կ'ըսէր, որ կը սկսի . Ինչո՞ւնէն իմօ՞՞՞՞ աղաղակեցի առ արէր Մատուած իմ :

Ետքը Մատուծոյ հրամանովը մէկ ցամաքի մը քով գնաց ան ձուկը՝ ու հոն ողջ ողջ դուրս որ փոխեց : Յոյնացի մարդարէն, Մատուած նորէն իրեն հրամայեց որ ինչպէս առաջ ըսեր էր՝ Վինուէ քաղաքը երթայ քարոզէ : Յոյնացի ալ ան ժամանակը հնազանդելով Մատուծոյ՝ Վինուէ գնաց, որ աս անանկ մեծ քաղաք մըն էր որ՝ իրեր օր կ'ուզէր բոլորը քակելու . առջի օրն որ իրեն քարոզուծիւնը լսեցին՝ Վինուէացիքը, որ կը կանչէր թէ՛ Մատուած իրենց մեղացը պատիժ՝ իրեր օրէն ետեւ պիտի Վինուէ քաղաքը վրանին կործանէ, շուտ մը մարդարէին ըսածին հաւատացին, ու սկսան մեղայ գոչել : Ետեւ թագաւորն որ աս խմացաւ, ինքն ալ վրայի լաթերը հանեց՝ քուրձ մը հագաւ մոխիրի մէջը նստաւ, ու հրաման հանեց որ մեծ ու պզտիկ, ինչուան անբան անասունները՝ ամէնքը քուրձ հագած ծով պահեն ապաշխարեն : Վինուէացիքը ասանկ սրբտանց իրենց մեղացը վրայ որ զղջացին, Մատուծոյ գուծն ալ շարժեցին, որ ողորմեցաւ մեղքերնին թողուց, ու ըսած պատիժը չխրկեց : Ետք վրայ սաստիկ դժուարը եկաւ : Յոյնացի մարդարէն, որ սուտղուրուց երեցաւ անոնց առջևը . ուստի սկսաւ Մատուծոյ գանգըտիլ . « Ե՛ս

աս էր, ըսաւ, պատճառն որ ես փախայ՝ չուզեցի որ հոս գամ քարոզեմ. գիտէի որ դուն Մատուած ողորմած գթած երկայնամիտ ես, որ զղջացողներուն մեղացը թողութիւն կու տաս. անոր համար կը խնդրեմ, ըսաւ, որ հողիս առնես մեռնիմ երթամ», ։ Այլ ասանկ տրտմած զուխը քաշեց ելաւ Վինուէ քաղքին դիմացը իրեն մէկ տեղ մը շինեց՝ հոն պարտրկուեցաւ, որ անկէց տեսնէ թէ՛ այսու ամենայնիւ քաղքին պատիժ մը կու գայ մի, անոր վերջը ինչպէս պիտոր ըլլայ ։ Մատուած ալ ան տեղը մէկ դդմենի մը (կամ քապարի Ֆիտան մը) բուսցուց, որ շուտ մը մեծցաւ՝ տերեւներովը շուք ըրաւ ։ Յոյնանի վրայ՝ ան սաստիկ արեւուն տաքէն կը պահպանէր, որ ինքն ալ շատ ուրախացաւ ասոր վրայ ։ Բայց այսպէս հանդիստ մէկ որ մը կենալէն ետեւ՝ անոր մէկալ որը առտուանց Մատուած մէկ որդ մը խրկեց, որ գնաց ան դդմենին արմատէն կտրեց . ետքը արեւն որ ելաւ, տաք հով մըն ալ զարկաւ վրան՝ դդմենին չորցաւ . ան ատենը Յոյնան ան արեւուն տաքէն սաստիկ տանջուելով, նորէն սկսաւ Մատուծոյ գանգրտիլ թէ՛ «Սեռնէի ու աս տառապանքէս խաղրտէի», ։ Ան ժամանակը Մատուած ալ դարձաւ խրատուելով իրեն ըսաւ . «Ղուն այդչափ կը ցաւիս ու կը տանջուիս ատ մէկ դդմենիին համար, որ դուն չես աշխատեր անկեր մեծցուցեր, ինքիրեն մէկ գիշերուան մէջ բուսեր է՝ ու մէկալ գիշերը չորցեր է . հասրա ինչպէս կ'ուզէիր որ ես չողորմէի անանկ մեծ Վինուէ քաղքին՝ ու շուտ մը կործանէի, որ հարիւր քսան հազար հողիէն աւելի են՝ միայն անոր անմեղ տղաքը, որ չարը բարին չեն գիտեր . թող տուր իրենց անհամար անբան անասունները», ։



ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԶՐԱՄԱՅ ԵՒ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ
ԳՐԻՔԵՐՈՒՆ . ՀՐԷՒՑ ԳԵՐՈՒԹԵՆԷ ԳԱՌՆԱԼԷՆ
ԵՏԵՒ ՀԱՆԳՐՊԱԾՆԵՐԸ :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Հրեայք թարեւացոց զերտրեկեկ կր դասեալ :

ԱՄ աշխարհի 3468 . 3489 : (Ա . Եջր Բ . Գ : — Բ . Եջր
Ա : — Գ . Եջր Բ :)

Ա. ՍՏՈՒԾՈՑ բարկութեան չափը երբոր ար-
մընցաւ , որ եօթամասուն տարի ատեն սահմա-
ներ էր աս Իսրայելացոց զերութիւնը , Աիւ-
րոս ըսուած Պարսից թագաւորին սիրտը շար-
ժեց , որ Բաբելացոց վրայ թագաւոր նստելուն
ատենը հրաման հանեց որ՝ իր տէրութեան մէջ
գտնուած Հրէաները բոլոր իրենց բաներովը ել-
լեն Արուսաղէմ դառնան , և հոն երթան Մ.Ս.
տուծոց տաճարը նորէն շինեն , Մնոր համար որ-
չափ ոսկիէ ու արծաթէ ամաններ կար՝ որ ատե-
նով Վաբուզողմնոսոր Արուսաղէմէ կողոպտեր
առեր Բաբելոն տարեր էր , բոլորը հանեց Աիւ-
րոս Հրէից տուաւ , որ իր տեղը դարձրնեն . և աս
կէ՛ ՚ի զատ հրաման ալ տուաւ , որ ան տաճարը
շինելու համար որչափ ստակ կամ նիւթ (այսինքն

քերէստէ) պէտք ըլլայ նէ՝ Թագաւորական դան-
ձէն տրուի :

Աստի առջի բերանը աս հրամանիս վրայ յի-
սուն հազարի չափ Հրէայ՝ իրենց առաջնորդ ու-
նենալով Օ օրաբարէլը Սաղաթիւլեանց ը-
սուած , որ Երբնիս Զուգայի Թագաւորին
Թուն էր , և Եսուն Զօլսեղեկեանց , որ ան
ատենը Հրէից քահանայապետն էր , ելան Ե-
րուսաղէմ եկան , ու առաջ՝ սկսան քիչ մը քա-
ղաքը նորոգել , ետքը շուտ մը ձեռք զարկին տա-
ճարը շինելու : Բայց աս շինուածքներս առաջ
չգնաց ան ատենը . պատճառն որ՝ հոն իրենց մօտ
եղած Սամարացւոց ազգը՝ Հրէից դէմ թշնամի
ըլլալով , գրեցին՝ բան խառնեցին Թագաւորին
իշխաններուն հետ . որ անանկ՝ ուշացաւ շի-
նուածքը , ինչուան Վիւրոսի ետեւէն ուրիշ Թա-
գաւոր նստաւ , որ անոր օրը՝ աս Սամարացիքը
ալ կատարեալ հրաման հանել տուին որ տաճա-
րին շինուածքը խափանուի : Բայնպէս տանը-
հինգ տարիի չափ քոյորովին խափանուած մնաց ,
ինչուան Վարեհ Թագաւորին երկրորդ տարին ,
որ նորէն հրաման հանեց որ տաճարը ու Երու-
սաղէմ քաղաքին պարիսպները շինուին : Եւ աս
աղաառութեանս հրամանը այսպիսի կերպով ե-
ղաւ :

Վարեհ Թագաւորը մէկ մեծ փառաւոր սե-
զան մը ըրաւ իր իշխաններուն , և աս ուրախու-
թենէս ետքը երբոր ելաւ իր սենեակը գնաց որ
քիչ մը բուն ըլլայ հանդէի , ան ատենը Թագա-
ւորին իրէք սենեկապանները , այսինքն անմիջա-
պէս իր թովը ծառայողները , որ ասոնց մէկն էր
Օ օրաբարէլը , (կարելի է թէ նորէն Հրէաս-
տանէ դարձած եկեր Թագաւորին ծառայու-

(Թեանը մտեր էր), մէկտեղ խորհուրդ ըրին՝ որ
 ամէն մէկը զատ զատ մէյմէկ խելացի բան զը-
 րեն, ու որոնք բանին որ Թագաւորը աւելի հաւ-
 նի նէ՝ անիկայ մեծամեծ պարգևներ առնէ, ու
 մեծութեան հասնի. անանկ որ՝ Թագաւորէն ե-
 տե ինքը ըլլայ, ու Թագաւորին պինտ առջի բա-
 րեկամը սեպուի. ուստի անանկ իրերն ալ գրե-
 ցին իրենց կարծիքը, ու թղթերնին կնքած՝
 Թագաւորին բարձին ներքեւը դրին: Ըսոնց առ-
 ջինը գրեր էր թէ՛ ամէն բանէն յաղթողն ու
 զօրաւորը զինին է. երկրորդը թէ՛ ամենէն
 յաղթողն ու զօրաւորը Թագաւորն է, և երրոր-
 րդ՝ որ Օջրաբարէն էր, գրեր էր թէ՛ ամենէն
 յաղթող ու զօրաւոր կնիկ մարզիկն են, և ա-
 նոնցմէ ալ աւելի յաղթող՝ Ճշմարտութիւնն է:
 Թագաւորը երբոր արթնցաւ՝ ու ան թղթերը
 տեսաւ կարդաց, առջևը կանչել տուաւ իր բո-
 ւրք մեծամեծները ու իշխանները, և անոնց առ-
 ջևը հրամայեց աս իրերին՝ որ ամէն մէկը իր
 գրածը պատճառներով հաստատէ ցուցնէ: Եր-
 բոր ասոնք ելան մէյմէկու ետեւէ խօսեցան ի-
 րենց գրած բնաբանին վրայ, ամէնքը առհասա-
 րակ Օջրաբարէին ըսածին հաւնեցան, ու
 սկսան կանչել թէ՛՝ «Մեծ է Ճշմարտութիւնը,
 ու ամենէն յաղթողը և զօրաւոր ան է»: Ըս-
 տէս որ եղաւ, Կարեհ Թագաւորն ալ Օջրա-
 բարէի ըսաւ. «Ինչդրէ ինձմէ ինչ որ կ'ուզես
 նէ, որ գրածներէդ աւելի բան ալ կու տամ. ու
 ըսէ՛ տե՛ս ամենէն եւելի իմաստուն դուն գրա-
 նուեցար»: Ըն առենը Օջրաբարէն ալ ուրիշ
 բան չուզեց, որ Երուսաղէմի տաճարին շինուած-
 քը, որ Կիւրոս Թագաւորին ատենէն խափանուած
 կեցեր էր, հրաման տայ որ շինուի խալըսի:

Թագաւորն ալ շուտ մը հրաման հանեց չորս
 դին գրեց թէ՛ Թագաւորական գանձէն ինչ
 որ պէտք է նէ՛ տան , որ Արուսաղէմի մէջ Մ.
 տուծոյ տաճարը շինուի : Ալ անանկ ինքը
 Օրաբարէլը իշխան կեցած չրէից ազգին
 վրայ՝ չորս տարուան մէջ բանը գլուխ տարաւ՝
 շինեց լմնցաւ տաճարը , ու ետքը ուրախու
 թեամբ շատ զօհեր մատուցանելով նուիրեցին
 Մտուծոյ : Մնկէ ետեւ Ազրաս քահանան ալ
 Մարտաշէս Թագաւորին հրամանովը , որ Վարե-
 հի ետեւէն նստաւ , եկաւ Արուսաղէմ , ու չրէից
 (որ աստուածպաշտութեան ճամբէն թուլցեր
 էին) նորէն մովսիսական օրէնքները առջևնին
 կարդաց , սորվըցուց իրենց : Վաւ աւ Մարտա-
 շէս Թագաւորին ստենը՝ Աեւմիաս ըսուած
 չրէից զլիաւորներէն մէկը , որ Թագաւորին
 քովը կը ծառայէր , և իրեն շատ սիրելի էր ե-
 դեր , ասիկայ ալ նորէն հրաման առաւ Թագա-
 ւորէն , ու ինքն ալ գնաց Արուսաղէմ քաղքին
 պարիսպները վրայ կեցաւ շինել տուաւ : Թե-
 պէտ ասոր վրայ ալ նախանձելով Սամարացոց
 իշխանները՝ Սանաբաղատ ու Տուբիա ըսուած՝
 և Թագաւորին ծուռ բան հասկըցընելով շատ
 ետեւէ ինկան որ խառնանեն , բայց բան մը չկըր-
 ցան ընել . անանկ որ յաջողութեամբն Մտու-
 ծոյ քիչ ատենի մէջ կատարեց՝ Աեւմիաս , ու
 քաղաքական բաներն ալ կարգի դրաւ , ինչպէս
 Ազրաս քահանան՝ աստուածային օրինացը բա-
 ները : Մանկ Արուսաղէմը և ուրիշ չրէաս-
 տանի քաղքերն ալ կամաց կամաց շինուելով ,
 նորէն չրէայքը առդիէն անդիէն հոն եկան
 ժողովուեցան՝ Յուդայի և Վենիամինի ցեղէն ի
 զատ՝ նաև մէկալ Ասրայելացոց ցեղերէն ալ , որ

Սաղմանասար Թագաւորին առեւնէն 'ի վեր ուրիշ տէրութեանց մէջը ցրուած էին :

Գ. Լ. ՈՒԽ Բ.

Երոտադեմ նորէն շինուելէն ետե՛ Հրեից ազգիև
հանդրպածները :

ՍՄ աշխարհի 3684 . 3727 : (Յ . Մակ . Ե : — Դ . Մակ .
Ե . Բ . Գ .)

Հրէայք գերութենէն դառնալէն ետքն ալ քահանայապետէն 'ի զատ իրենց ազգէն ուրիշ ինքնագլուխ Թագաւոր մը կամ իշխան մը չունէին . հապա անանկ Պարսից տէրութեանը ներքեւը մնացին երկու հարիւր քսան կամ երսուն տարիի չափ , որչափ որ քչեց Պարսից տէրութիւնը . ինչուան որ մեծն Ղեբքանդը ելաւ Պարսիկները զարկաւ , ու բոլոր աշխարհքիս տիրապետեց : Ղեբքանդրի մեռնելէն ետե չորս կտոր որ բաժնուեցաւ իր տէրութիւնը , Հրէաստան Պաղովտոսի (որ Սոտեր ալ կ'ըսուէր) տակը ինկաւ , որ Լգիսպտացոց Թագաւոր եղաւ : Ետոր՝ ու իր երկու յաջորդ Թագաւորներուն օրերը Հրէայքը հանգիստ անցուցին :

Եւ այց անոնց ետեւէն՝ Պաղովտոս Փիլոպատոսը Ղնատիքոսի յաղթելէն ետքը երբոր Լքուտաղէմ եկաւ , Հրէայքը զինքը սիրով ընդունեցին . ու ինքն ալ ուրախութեամբ տաճարին մէջը զոհ մատուցանելէն ետե , ալ չափը անցրնելով՝ հետաքրքրութեամբ սրբութիւն սրբոցն ալ ուզեց մտնալ տեսնել , որ հոն քահանայապետէն 'ի զատ ուրիշ մարդ չէր կրնար մտնալ : Եւ բա-

նիս շատ դէմ կեցան Նրէայքը , բայց ճար չե-
 դաւ . ուստի երբոր գնաց ներս մտաւ , Մտուծ-
 մէ իր յանդգնութեան պատիժը գտաւ , որ ան
 տեղը դող մը եկաւ վրան՝ ու ասդին անդին զար-
 նուելով անդամալոյժ գետինը փռուած ինկաւ ,
 անանկ որ՝ վրան հասան իր ծառաները բռնեցին
 դուրս քաշեցին , և խել մը ատենէն ետեւ ճորով
 խելքը վրան եկաւ : Արբոր ասիկայ իր երկիրը
 դարձաւ , զղջալուն տեղը՝ չարաչար զիս պահելով
 Նրէից վրայ , հրաման հանեց որ բոլոր իր թա-
 գաւորութեան մէջը եղած Նրէաները իրենց
 հաւատքը թողուն՝ կուռք պաշտեն , և ով որ չհը-
 նազանդի նէ՝ բռնեն շղթաներով կապած Մշեք-
 սանդրիս քաղաքը բերեն : Եւ աս Նրէայ բռնե-
 ցին աս պատճառով՝ երիկ մարդ՝ կնիկ մարդ ,
 ծեր , տղայ , մարդու չէին խնայեր . ու թագա-
 ւորին հրամայածին պէս զասոնք ժողովեցին բե-
 րին մէկ մեծ տեղ մը դրին , ու հինգ հարիւրի
 չափ փիղեր պատրաստեցին՝ որ կատղեցուցած
 ասոնց վրայ թողուն , որ կոխկռտելով անանկ
 տանջանքով ան ողորմելիները սպաննեն : Արբոր
 աս բանիս պատրաստութիւնը կը տեսնէին ,
 Նրէայքն ալ մէկ գիւն Մտուծոյ առջեւ ինկած
 կանչուրտելով կու լային կ'աղաչէին որ ողորմի՝
 զիրենք աս փորձանքէս խալըսէ : Մն ատենը
 յանկարծակի երկինքէն երկու հրեշտակ ինջան ,
 ու թշնամիներուն մէջը մէկ անանկ վախ մը և
 շփոթութիւն մը ձգեցին , որ ան փիղերը իրար
 անցներով սկսան իրենց տերերը կոխկռտել սպան
 նել : Այւ ան ժամանակը թագաւորին սիրտն ալ
 կակղցուց Մտուած , որ սկսաւ մեղքըննալ ան
 խեղճ Նրէաները , ու հրամայեց որ արձրկեն
 թողուն զիրենք . և աս հերիք չէ՝ նաև ուր որ

պիտի ան ողորմելի սպանութիւնը ըլլար, հրամայեց որ թագաւորական ստրկով ան տեղը սեղան ըլլուի, որ եօթն օր ուտելով խմելով ուրախութիւն ընեն շրէայքը իրենց ազատութեանը համար: Ատե անոնց ճամբուն պիտանաւորութիւնը հոգալով անանկ մեծարանքով զամէն մարդ իրենց տեղը ճամբեց՝ ուսկից որ բերել տուեր էր:

Ընկէ ետքը աւելի սէր կապեց Պաղոմէոս շրէից վրայ, ու շրէայքն ալ հաւատարմութեամբ իրեն տակը կեցան. ինչուան որ անոր մեռնելէն ետեւ եկաւ Ընտիրոս Սեծ ըսուած Ընտրուոց թագաւորը, ու Աղիպտացուոց թագաւորութիւնը տակը առնելով շրէատանի վրայ ալ տիրեց. և տաիկայ ալ շատ սիրով բարեկամութեամբ գնաց շրէից հետ, այնչափ որ՝ տարեկան տուրք ալ կապեց տաճարին զօհերուն համար: Իր մեռնելէն ետեւ՝ իր որդին ալ Սելեկոս Փիլոպատոր ըսուածը, ինքն ալ առջի բերանը հօրը ճամբան բռնեց՝ բարեկամութեամբ կը վարուեր շրէից հետ: շրէաներն ալ ան աւտենները խիստ հանգիստ ու բարեկարգութեամբ կ'երթային՝ Սիւա ըսուած բարեպաշտ ու խոհեմ քահանայապետին կառավարութեան ներքեւ:

Գ. Լ. ՈՒԽ Գ.

Հեղինակութեան պատիժը :

ԱՄ աշխարհի 3828 : (Բ. Մակ. Գ.)

Ընդհանուր առաջին հերթից հանդատութիւնը տակնուվրայ ըրաւ Սիմոն ըսուած մէկ գլխաւոր հրէայ մը, որ իր անկարգութեանը համար Սնիա քահանայապետին յանդիմանուելով, և ան պատճառով քահանայապետին վրայ զայն պահելով զնայ Բարդուղիմէոսի (որ ան կողմերուն վերակեցու զօրապետն էր) մատնեց ահանջը լեցուց թէ՛ « Երուսաղէմ տաճարը անհամար գանձ պահուած կայ. թէ որ թագաւորին պէտք էր նէ, ըսաւ, կրնար անկէջ առնել » : Սեղիկիս թագաւորն ալ երբոր աս բանը խնայաւ, շուտ մը Երուսաղէմ խրկեց Հեղինակութեան ըսուած մէկը իր իշխաններէն, որ երթայ ան ըսած գանձը առնէ իրեն բերէ : Երբոր եկաւ Հեղինակութեան աս գանձս ուզեց, Սնիա քահանայապետը առջևը ելաւ ըսաւ թէ՛ « Իրան չորս հարիւր քանքար արծաթ՝ ու երկու հարիւր քանքար ոսկի կայ, բայց ասոնք որբերուն ու որբւարիներուն ապրուստն են, որ տաճարին հաստացեր տուեր են, ու անկէջ կ'ապրին ան ողորմելիները » : որ մեծ անիրաւութիւն կ'ըլլար աս յափշտակելը : Հեղինակութեան մտիկ չէր ընէր, կ'ըսէր թէ՛ « Պէտք է որ թագաւորին հրամանը առաջ երթայ, ու ատ գանձը իրեն հասնի » : ուստի որ սահմանեց որ, ինքը երթայ տաճարը

մտնէ՝ անկէց իր ձեռքովը առնէ : Մասնկ ատենն որ եկաւ՝ Հեղիոզորոս տաճարը մտաւ , քահանայապետը իր բոլոր քահանաներով , ու բոլոր քաղաքը իրար անցած՝ սկսան լալ ու աղաչել Մատուծոյ , որ աս բանիս ճարը ինքը հօգայ՝ ողորմի ան խեղճ որբերուն : Մտուած ալ լսեց անոնց աղաչանքը . ուստի հոն տեղը տաճարին մէջը Հեղիոզորոս իր հետը մարդիկիներովը թուլցած թմրած դետինը ինկան փռուեցան , ու յանկարծակի մէկ փառաւոր ձիաւոր մարդ մը հետը երկու աղուոր կտրիճներով (որ հրեշտակներ էին) Հեղիոզորոսի վրայ եկան՝ ու շարաչար ծեծելով զինքը մահուան դուռը հասուցին , որ ալ մեռելի պէս ինկած բան չէր իմանար , միայն շունչը վրան մնացեր էր . ու այնպէս վերցուցին տաճարէն դուրս հանեցին . ան ատենը Հեղիոզորոսի հետ եղողները Միտա քահանայապետին ոտքը ինկան՝ որ աղօթք ընէ վրան որ բժշկուի : Քահանայապետն ալ անոր համար Մատուծոյ զոհ մատուցանելու ատենը՝ նորէն ան փառաւոր կտրիճները ինջան եկան Հեղիոզորոսի ըսին թէ՛ . « Գնա չնորհակալ եղիր Միտա քահանայապետին , որ Մտուած անոր աղօթքովը քու կեանքդ քեզի դարձուց . և դուն ատ քաշած պատիժդ գնա ամենուն պատմէ՛ քարոզէ Մատուծոյ մեծ կարողութիւնը . , . ու անանկ աներեւոյթ եղան :

Հեղիոզորոս ալ ան ժամանակը բժշկուելով՝ ելաւ ինքն ալ զոհ մատուցանել տուաւ Մատուծոյ . ու չնորհակալութեամբ պարգևներ տալով Միտա քահանայապետին՝ դարձաւ թաղաւորին քովը եկաւ , և որուն որ կը հանդըպէր նէ՛ աս հրաշքները կը պատմէր : Իայց թաղաւորին միտքը աս բանիս վրայ աղէկ մը չպառկելով՝ եր-

բոր ուզէց որ նորէն մէկ ուրիշ մարդ մը խրկէ ,
ան ատենը Հեղիոգորոս երած սրտով իրեն ըսաւ
Թէ “ Օ՛րով որ քեզի Թնամի կը համարիս ,
կամ քեզի դէմ մեծ յանցանք մը ըրեր է , ու
դուն զինքը պատժել կ'ուզես նէ՛ զանիկայ աս
բանիս համար Արուսաղէմ խրկէ , ու կը տես-
նես Թէ ինչպէս չարաչար ծեծուած փետտուած
կը դառնայ , միայն Թէ չմեռնի ողջ մնայ . աս
ստոյգ է , ըսաւ , որ աստուածային զօրութիւն
մը կայ ան տաճարին մէջը , որ ով որ անոր գրպ-
էլու ըլլայ՝ չարաչար կը պատժուի ” :

Գ. Լ. ՈՒԽ Գ .

Հրէից խաղաղութիւնը ներքե վրայ կ'ըլլայ
Անտիոքոսիս ատենը :

Եմ աշխարհի 3829 . 3836 . (Բ . Մակ . Դ . Ե . 2 .)

Սելւկոսի մեռնելէն ետքը Մնտիոքոս Ապի-
փան կամ Արևելի ըսուած անոր եղբայրը յա-
փշտակեց Թագաւորութիւնը , որ սաստիկ Թըշ-
նամի էր հրէական օրինաց : Մն ատենը Հասան
Մնիա քահանայապետին եղբայրը՝ զնաց Թագա-
ւորին աւելի սուրբ ստակ խոստացաւ , և իրեն
խօսք տուաւ որ՝ Հրէից մէջը կուսպաշտական
բաներ մտցնել , կամաց կամաց զանոնք կուսպաշ-
տութիւն դարձնել . անանկ Մնիայի ձեռքէն քա-
հանայապետութիւնը ինքը առաւ յափշտակեց :
Բայց աս չար Հասանը՝ իրեք տարի իր ըսածին
պէս՝ Հրէից բարեկարգութիւնը ու աստուած-
պաշտութիւնը աւրելէն ետքը , երբոր Սենե-
զաւոս ըսուած մէկի մը ձեռքովը իր տարեկան

տուրքը Մատիորոս Թագաւորին խրկեց, Սենե-
ղաւորը զնաց Թագաւորին սիրտը իրեն դար-
ձուց, ու Յասոնի վրայ ինքը տարեկան տուրքը
եւելցընելով՝ եկաւ Յասոնի ձեռքէն յափշտա-
կեց քահանայապետութիւնը: Ատքը աս Սե-
նեղաւորը տեսնելով որ չկրնար այնչափ խոստա-
ցած Թագաւորին տուրքը լեցընել, գաղտուկ
տաճարին արծըթեղէններուն ձեռք զարկաւ, ու
անկեց խել մը Մնդրոնիկոսի կաշառք տուաւ
(որ Թագաւորին մեծ իշխաններէն մէկն էր)
ու կէս մըն ալ ծախեց: Ատեւ երբոր խմացաւ
որ՝ Սնիա քահանայապետը աս իր ըրած գողու-
թիւնը դուրս հանեց, Մնդրոնիկոսի ձեռքովը
անողորմաբար բռնեց մորթել տուաւ տուրք քա-
հանայապետը: Այս Մնդրոնիկոսի ըրած անօրէ-
նութեանը վրայ սաստիկ ցաւեցաւ Ժողովուրդը.
ուստի երբոր գացին Թագաւորին զանգրտելով
աս անողորմութիւնս որ հասկըցուցին, անոր ալ
անանկ գութը շարժեցաւ՝ սիրտը լեցուեցաւ ան-
մեղ մարդուն վրայ, որ շուտ մը հրամայեց որ
Մնդրոնիկոսի վրայէն իշխանական լաթերը հա-
նեն, ու անանկ խայտառակ բոլոր քաղաքը պը-
տըտընելէն ետեւ՝ ան Սնիայի սպաննուած տեղը
տանին՝ գլուխը կտրեն:

Այս ատենները Վիւսիմարոս Սենեղաւորի եղ-
բայրը, զոր Սենեղաւորս Թագաւորին քովը եր-
թալնինի՝ իր տեղը Արուսաղէմ քահանայապետ
դրեր էր, ու իրեն յանձներ էր որ տաճարին ար-
ծաթները կամաց կամաց կողոպտէ իրեն խրկէ,
Ժողովուրդն որ աս բանս խմացան՝ ոտք ելան զին-
քը ձգել կ'ուզէին: Վիւսիմարոս ալ անոնց վրայ
իրեք հազար հոգի հանեց. ու երկու դիէն իրար
անցած՝ մէկմէկէ շատ մարդ սպաննեցին. և աս

խոսիլու թիւններու սպառնալով թէպէտ Հրէից կողմանէ թագաւորին առջևը ամբաստանուեցաւ Սենեղաւոս, բայց ինքը թագաւորին բարեկամին մէկուն ստակ խոստանալով անոր ձեռքովը բանը անանկ դարձուց որ, իր տեղը ան ամբաստանողները յանցաւոր ինկան, ու սպաննուեցան: Աս Նրուսաղեմի խեղճութեանս ատենը Աստուած ալ վերէն նշան տուաւ՝ եղածները ու գալու թըշուառութիւնները յայտնելով. որ քառսուն օր Նրուսաղեմի վրայ երկինքը ձիաւոր մարդիկ կ'երևնային սպտերսպմական գործիքներ ձեռուր նին, ու մէյմէկու հետ կը զարնուէին, անանկ որ՝ ասոնց ձայնն ալ կը լսուէր. ու ժողովուրդը սոսկալով կ'աղաչէին Աստուծոյ, որ 'ի բարին կատարէ ան ցուցուցած նշանները:

Անկէ ետքը Անտիոքոս թագաւորը Նգիպտացւոց վրայ սպտերսպմ որ գնաց, ու հոն քիչ մը ուշացաւ, առկին Նրուսաղեմի կողմերը սուտ ձայն մը ելաւ թէ՛ թագաւորը մեռեր է. և ասոր վրայ Հրէայքը ուրախութիւն որ կը ցուցնէին, անդիէն Հասոնն ալ որ Ամոնացւոց երկիրը փախստական էր եղեր, ինքն ալ շուտ մը հազար մարդով եկաւ Նրուսաղեմ մտաւ՝ որ քահանայապետութիւնը նորէն ձեռք ձգէ, ու Սենեղաւոսը անկէց փախցընելով ինքը սկսաւ տիրապետել. և իր ազգին հայրութիւն ընելու տեղը՝ դահիճի պէս մարդու չէր խնայեր անողորմաբար կը ջարդէր: Այց շատ չբշեց՝ որ խնանալուն պէս թէ՛ Անտիոքոս թագաւորը ողջ է, նորէն ելաւ փախաւ, ու տեղէ տեղ փախստական ստրտելով և ամենուն ատելի ըլլալով ետքը անանկ օտար երկիրները չարաչար մեռաւ: Անտիոքոս երբոր աս Հրէից մէջը եղածները ի-

մնացաւ, կարծիր երթալով թէ Նրէայքը իրմէ
ապստամբիլ կ'ուզէն, Ազխատացւոց յաղթելէն
ետքը՝ գազանի պէս կատղած իր բոլոր զօրքով
Արուստղեմի վրայ եկաւ. ու քաղաքը մտածին
պէս՝ հրանայեց որ ամենեւին մէկու մը չմնայեն՝
բռնածնին ջարդէն. և անանկ՝ միայն երեք օ-
րուան մէջը ութսուն հազար հոգի կտարուեցան,
ու քառսուն հազար ալ բռնեցին գերիի պէս ծա-
խեցին:

Ատքը այսչափովս ալ չկշտացաւ, հասաւ Սե-
նեղաւոսի մասնութեամբը տաճարին ալ ձեռք
զարկաւ, յանդգնութեամբ տաճարը մտաւ՝ և
բոլոր բովանդակ արծաթեղէնները ու ոսկեղէն-
ները ուրիշ պահծու բաներու հետ՝ հազար եօ-
թը հարիւր քանքարի չափ ժողվեց առաւ՝ Մն-
տիոք իր թագաւորական քաղաքը տարաւ. ու
Արուստղեմ մնացած Նրէից վրայ մէկ Վիլիպ-
պոս անունով փոխգացի չար բարբարոս մարդ
մը իշխան դրաւ, որ անխնայ չարչարէ Նրէայ-
քը: Մնկէ ետեւ Մարտինիոս ըսուած մէկ զօրա-
պետ մը քսան հազարով Նրէից վրայ խրկեց, որ
երթայ թագաւորական տուրքերը ժողվէ անոնց-
մէ, ու չափահաս մարդիկը՝ որ զինուորութեան
կրնան գալ՝ ջարդէ, և իրենց մնացած կնիկները
ու տղաքները գերի ծախէ: Մարտինիոս առջի
բերանն որ եկաւ՝ սիրով վարուեցաւ Նրէից
հետ, սպասեց մինչև շաբաթ օրը, և ան ա-
տենը ապահով ըլլալով թէ Նրէայք շաբա-
թը սուրբ պահելու համար դէմ չեն կրնար
կենալ, յանկարծակի վրանին ելաւ՝ ու խել մը
մարդ ջարդեց: Ատքը շատ չանցաւ, որ Մնտի-
քոս թագաւորը մէկ ծեր իշխան մըն ալ Նրէաս-
տան խրկեց՝ Մթենորիոս անունով, որ ինչ կ'ը-

նէ ընէ՛ բոլոր Հրէաները կուսպաշտական օրէնքը դարձրնէ, վերջընէ զո՛հ մատուցանելը, շաբաթ պահելը, և Մատուցոյ տաճարը կուստուն շինէ, անանկ որ՝ «*Հրէայ անունը մէյ մ'ալ չըսուի, ըսաւ: Մն ալ եկաւ այնպիսի խտուածեամբ սկսաւ թագաւորին հրամանը առաջ տանիլ, որ ո՛վ որ չէր հնազանդեր՝ հրամանին դէմ կ'ընէր, ամենեւին առանց խնայելու կը սպաննէր: Մնոր համար երբոր լսեց թէ երկու կնիկ ան օրերը իրենց նոր ծնած տղաքը մովսիսական օրինաց սէս թշխատեր են, զասոնք բռնել տուաւ, տղաքնին ծծերնէն վար կախած՝ անանկ մերկ խայտառակ բոլոր քաղաքը պտրտցրնելէն ետե՛ք բարձր պարիսպէն վար ձգել տուաւ. ու ալ ուրիշ ասանկ անողորմ տանջանքներով կը սպաննէր՝ ո՛վ որ իր հրէութեան հաւատքը չէր ուրանար: Այլ աս պատճառով շատ մարդիկ ելան ասդին անդին անպավարի անապատ տեղուանք փախան, որ հոն դաղտուկ իրենց աստուածաշտութիւնը պահէն:*

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Նանատակութիւն Եղիազար ձերունիին, և եօրը եղբարց Մակարայեցոց՝ իրենց մօրը հետ:

Աժ աշխարհի 3837: (Բ. Մակ. 2. Ե.)

Մս սաստիկ հալածանացս ատենը քահանայ մըն ալ բռնեցին՝ Աղիազար անունով, որ մէկ տարիքը առած չնորհալի ու աստուածալախ իմաստուն վարդապետ մըն էր. ասոր բերանը գայլ (այսինքն քէլէփէլ) զրած՝ անանկ բռնի բացած՝

խողու միս կը խոթէին, որ օրինաց դէմ ընէ՝
 ուտէ: Ինչ ալ բողոր ուժովը ասոր դէմ կեցած՝
 կ'ըսէր որ « Ինչի կ'ուզեմ մեռնիլ՝ քան թէ օ-
 րինաց դէմ ընել », ու յօժարութեամբ տան-
 ջանաց տեղը կը վազէր կ'երթար: Տանողներուն
 մէջէն իր ճանչուորները վրան խղճալով՝ դադ-
 առակ խրատ կու տային՝ կը յորդորէին թէ
 « Քեզի ուրիշ միս կու տանք որ ուտես . միայն
 դուն երեցուր թէ թաղաւորին կը հնազանդիս
 խողու միս կ'ուտես, որ դոնէ ասանկ խաբելով
 մեռնելէն ազատիս », Բայց Լոյիազար « Քան-
 լիցի, կ'ըսէր, ատ բանդ ինձի չվայլեր՝ որ կեղ-
 ծաւորութեամբ խղճմտանքս մնալու պահելու
 համար՝ կտրիճ՝ մարդիկ դայթակղեցնեմ, որ
 ըսեն թէ՝ Լայէ Լոյիազարը իննսուն տարուան
 ծեր մը՝ ալ մահուն դուռը հասած՝ չհամբերեց
 զնաց այլազգի եղաւ . ասով իրենց չար օրինակ
 ըլլամ, և ծերութեանս ատենը աս գէշ անունը
 իմ ետեւէս թողում: Թէ որ, ըսաւ, ուրանա-
 լովս այնչափ տարի ալ տան ինձի, որ հանդիսա
 ասրիմ որչափ ապրեցայ նէ, այսու ամենայնիւ
 Բստուծոյ ձեռքէն ոչ կենդանութեանս ատենը՝
 և ոչ մեռնելէս ետքը կրնամ մէկ տեղ մը փախ-
 չիլ . ուստի աղէկը ան է, որ իմ ծերութեանս ինչ
 պէս կը վայլէ նէ՝ քաջութեամբ աս աշխարհքէս
 ելլեմ, ու բարի օրինակ թողում կտրիճներուն .
 որ անոնք ալ ինձի պէս առանց վախնալու սրբ-
 տանց մեր սուրբ օրինացը վրայ կեանքերնին
 տան », Իսանկ ըսելով սիրով զինքը տանջող-
 ներուն ձեռքը տուաւ . ետքը հոգին աւանդե-
 լու ատենը հառաչելով « Տէր իմ, ըսաւ, դու
 որ ամէն բանը դիտես, աս ալ կը տեսնես որ ես
 կրնայի մեռնելէս խալըսիլ, բայց քու արդար

դատաստանելի վախնալով՝ մարմնովս չարաչար
կը տանջուիմ, ու հոգւովս սիրով կը համբե-
րեմ,», և անանկ հոգին տուաւ ։

Ան առեւնները ուրիշ եօթը եղբայր իրենց մօ-
րը հետ մէյտեղ՝ բռնեցին թագաւորին առջևը
հանեցին . երբոր իրենց հաւատոյն վրայ ասանց
սկսան հարցընել, մեծ եղբայրնին առաջ ելաւ՝ ու
ըսաւ . « Անչ կեցեր պարսապ տեղը մեզի բան
կը հարցընէք . մենք պատրաստ ենք որ կեանքեր-
նիս տանք՝ քան թէ մեր հայրենասկան օրէնքնե-
րը թողունք,» ։ Ասոր վրայ սաստիկ սրդողեցաւ
թագաւորը , հրամայեց որ շուտ մը անոր լեզուն
ու ոտուըններուն ձեռուըններուն մատներուն ծայ-
րերը կտրբտեն , ու գլխուն կաշին քերթեն ե-
րեսին վրայ դարձընեն . աս տանջանքներէս ետև
երբոր տեսաւ որ դեռ ողջ է աղան , հրամայեց
որ կրակին վրայ դնեն տապկեն ։ Այնկալ եղ-
բարբը մօրերնուն հետ աս սոսկալի տանջանք-
ներս տեսնելով՝ սկսան մէկմէկու սկիտ տալ , ը-
սել թէ՛ « Անք ալ ասանկ քաջութեամբ մեռ-
նինք , ու մեր անունը՝ և հոգինիս փրկենք ՚ի
փառս Աստուծոյ,» ։ Ասոր ետևէն երկրորդ եղ-
բայրը առաջ քաշեցին , ասոր ալ գլխուն կաշին
մազերովք քերթեցին երեսին վրայ ձգեցին , ու
կ'ըսէին . « Հնազանդէ խողի միս կեր՝ բոլոր
մարմինդ կտոր կտոր չեղած,», և ան ալ հաստա-
տուն կենալով իր օրինացը վրայ՝ ան տանջան-
քով վախճանեցաւ , և հոգին տալու ատենը թա-
գաւորին ըսաւ . « Ավ հպարտ ամբարտաւան ,
գուն մեզ աս կեանքէս կը զրկես , բայց գիտնաս
որ՝ բոլոր աշխարհքիս թագաւորը Աստուած մե-
զի յարութիւն առնել կու տայ յախտենասկան
կենօք , որ հիմա իրեն օրինացը համար կը մեռ-

նինք կոր , , : Մնկէց ետև երրորդ եղբայրը կան-
 չեցին , և ասոր ալ երբոր լեզուն ուղեցին որ
 դուրս հանէ , շուտ մը հանեց . ու անանկ առանց
 վահնալու ձեռուրներն ալ երկնցուց որ կտրը-
 տեն , որ թագաւորն ալ զարմացաւ մնաց տղին
 քաջասրտութեանը վրայ : Մտոր մեռնելէն ետ-
 քը չորրորդ եղբորն ալ ան տանջանքը տուին , որ
 մեռնելուն ատենը թագաւորին ըսաւ . « Աքանի
 է մեզի , որ նորէն յարութիւն առնելու յուսով
 աս աշխարհքէս կը բաժնուինք կ'երթանք , քան
 թէ քեզի՝ որ կենդանի ես , ու ան յարութեանէն
 զրկուած ես , , : Աքբոր հինգերորդ եղբայրը ե-
 տեւէն սկսան տանջել՝ դէպ 'ի թագաւորը նայե-
 ցաւ ու ըսաւ . « Վուն մահկանացու մարդ մը
 ըլլալով մարդկային իշխանութեամբդ ինչ որ
 կ'ուզես նէ կ'ընես . բայց ասով չկարծես թէ մեր
 ազգն ալ Մտուծոյ երեսէն բոլորովին ինկած
 խեղճ մնացեր է . քիչ մը կեցիր որ տեսնես Մ-
 տուծոյ մեծ կարողութիւնը՝ թէ ինչպէս քեզ
 քու ազգովդ պիտի տանջէ , , : Ա եցերորդն ալ
 նոյն տանջանքով մեռնելու ատենը դարձաւ թա-
 գաւորին ըսաւ . « Մտով մի խաբուիր ու հպար-
 տանար՝ որ մեզի այսչափ բան կրցար ընել . մենք
 Մտուծոյ դէմ մեղանչելնուս համար աս չարչա-
 բանքներս կը քաշենք կոր . ուստի զարմանք չէ .
 բայց դուն ալ որ Մտուծոյ դէմ ելեր պատե-
 բազմ կ'ընես , չկարծես թէ ասոր պատիժը պի-
 տի չքաշես , , : Մտնք նահատակուելու ատենը
 երանելի մայրերնին քովերնին կեցած՝ իրենց լե-
 զուովը , որ ուրիշները չէին հասկընար , ամէն մէ-
 կուն սիրտ կու տար կը յորդորէր որ սիրով ու
 քաջութեամբ ան տանջանքներուն համբերեն 'ի
 փառս Մտուծոյ : Ատքը երբոր կարգը եօթնե-

բորդ եղբորը հասաւ, որ ամենէն պզտիկն էր, թագաւորը աս իրեն ամօթ սեպեց՝ որ դոնէ ա սոնցմէ մէկը իր տուած տանջանքներովը չկրցաւ դարձնել. անոր համար աս պզտիկիս ետեւէն շատ խնկաւ՝ քովը կանչեց անուշ անուշ խօսքերով յորդորեց զինքը, ու մեծամեծ պարգևներ և մեծութիւն իրեն խոստացաւ տալու, միայն թէ իր հայրենական օրինացը դառնայ. և ետքը տեսնելով որ անանկ ալ ձար չեղաւ տղին միտքը փոխելու, կանչեց մօրը տուաւ՝ որ ան ալ աս բանիս վրայ իրեն խրատ տայ: Մայրն ալ առջի բերանը չուզեց խօսիլ. բայց երբոր շատ վրայ տուաւ թագաւորը՝ ինքն ալ անոր դէմ սկսաւ տղան յորդորել ու ըսել. « Աղորմէ՛ ինձի, իմ սիրելի որդեակս, յիշէ՛ որ ինը ամիս քեզ արդանդս կրեր եմ, և իրեք տարի իմ գիրկս կաթով պահեր եմ, ատ հասակդ քեզ հասուցեր եմ. քեզ տեսնեմ, որդի. նայէ՛ երկինքը Մտուած կայ քեզի օգնական, չըլլայ որ ատ անողորմ դահիճը քեզ վախցընէ. դուն ալ մէկալ եղբայրներուդ ձամբան բռնէ, մեռնիլը աւելի լաւ սեպէ՛ քան թէ աս աշխարհքիս կեանքը. որ անդին Մտուծոյ ողորմութեան ատենը՝ քեզ ալ բու եղբայրներուդ հետ նորէն մէկտեղ ինձի առնեմ ընդունիմ. »: Ինչ ատենը դեռ խօսքը մօրը բերանն էր, որ տղան եւելօք սիրտ առնելով սկսաւ կանչել. « Արուն կը սպասէք, ինչ կ'ուշանաք կոր. թագաւորին հրամանին չեմ հնազանդիլ, հապա մեր օրինացը հնազանդեր եմ, որ Մտուած Մովսէսի ձեռքովը տուեր է. »: Ետքը դէպ'ի թագաւորը դարձաւ ու ըսաւ. « Դուն ալ, ով պիղծ անօրէն մարդ, որ Մտուծոյ ծառաները այսպէս կը տանջես, զիտնաս որ անոր արդար

դատաստանէն պիտի չխալըսիս, ու քու հպարտութեանդ և անգթութեանդ արժանաւոր պատիժը քաշելուդ ատենը՝ իմանաս որ ինքն է միայն ճշմարիտ Մատուածը. նաև աս ալ գիտնաս որ՝ ես իմ եղբայրներուս հետ մեր հայրենական օրինաց համար մարմիննիս ու կեանքերնիս աս չարչարանքներուս տալով, կը յուսանք յՄատուած՝ որ մեզի ասոր տեղը յաւիտենական կեանք կու տայ, և ասով՝ մեր բոլոր ազգին մեզացը թողութիւն ալ ընէ, : (Թագաւորը երբոր աս բաներս ընէ, եւելօք կատղեցաւ աս սղտիկին վրայ. ուստի աւելի սաստիկ տանջանքով զինքն ալ հոն տեղը սղաննել տուաւ : Ատքը ամենէն ետե՛սն եօթը երանելի տղոցը քաջասիրտ և երանելի մայրը, որ ամէն մէկ որդւոցը հետ կեցած՝ ինքն ալ սրտովը կը նահատակուէր, ու մէկիկ մէկիկ զանոնք Մատուծոյ ձեռքը կը նուիրէր, ինքն ալ նոյն տանջանքներով՝ չուշացաւ ետենին հասաւ, որ անոնց հետ մէկ տեղ վայելէ Մատուծոյ պատրաստած բարիքը :

Գ. Լ. ՈՒԽ Զ .

Մատարիս քանանային և իր որդւոցը քարեպաշտութիւնը
և անոնց քաշութիւնները :

Մ. աշխարհի 3837 : (Ը. Մակ. Բ.)

Նստիօքոսի սաստիկ հալածանաց ատենը՝ անուանի ու սրբակաց քահանայ մը կար Արուսաղէմ՝ Մատաթիա ըսուած, որ հինգ հատ հասած կարիճ որդիք ունէր. մէկուն անունը Յովհաննէս, երկրորդինը՝ Շմաւոն, երրորդինը՝ Յուզա

Սակարէ, չորրորդինը՝ Եղիազար Մատան, հինգերորդինը՝ Յովնաթան, Մսիկայ տեաներով բոլոր Հրէաստանի մանաւանդ Երուսաղէմի այսպիսի խեղճութիւնները, ալ չդիմացա՛ իր որդիքը առաւ զնաց Սովդիիմ ըսուած քաղաքը քաջուեցաւ. և հոն անոնց հետ անմխիթար կ'ողբային ու կու լային իրենց ազգին ողորմելի դեբութեանը վրայ. թէ ինչպէս Մսուծոյ տաճարը պղծուեր է, և իրեն սուրբ կահ կարասիքը կողոպտուեր են, և աս բաներուս համար սաստիկ սրտցաւէն վրայի լաթերնին պատուած քուրճ կը հագնէին, Մն ատենները Մնտիորոս թագաւորէն խրկուած մարդիկը Սովդիիմ քաղաքն ալ եկան, Հրէաները կը ստիպէին որ կուռք պաշտեն. ու շատ մարդ վախերնէն հնազանդեցան՝ կռակաշուռութիւն դարձան, Բայց Սատաթիա առանց վախնալու համարձակ իրենց պատասխան տուաւ ըսաւ թէ՛ « Մշտարհքիս բոլոր ազգերն ալ թագաւորին հրամանին հնազանդելու որ ըլլան, և բոլոր Եսրայելացիք ալ իրենց օրէնքը թողուն, այսպէս դիտնաք որ՝ ես ու իմ որդիքս և եղբայրներս մեր հայրենական օրէնքը չենք թողուր՝ կուռք չենք պաշտեր. »: Մնգամ մը աս բանս ըսելնինի՛ տեսաւ Սատաթիա որ անդիէն մէկ ուրացող հրէայ մը եկաւ հոն տեղը իր առջևը կուռքին զո՛հ մատուցանելու. ինքն ալ ան ատենը սաստիկ ատուածային նախանձայուղութենէն չդիմացաւ՝ անոր վրան վազեց ու ոտքով անանկ զարկաւ որ, ան տեղը կուռքին առջևը սաստիկեցուց զանիկայ: Եւ ան թագաւորական մարդը որ եկեր զինքը կը յորդորէր՝ զան ալ ան տեղը մեռցուց, զնաց կուռքը կործանեց. ու սկսաւ ամուր ձայնով կանչուրուտել թէ՛ « Ս'վ որ

Հայրենական աստուածային օրինաց կ'ուզէ տէր
 կայսիլ պահպանել իմ հետս դայ : Աւ անանկ
 ինքը իր տղոցմով իրենց ամէն բաները հոն թո-
 ղուցին , քաղքէն դուրս ելան մէկ լեռ մը գացին
 քաշուեցան . անոր նայելով շատ աստուածա-
 պաշտ մարդիկ իրենց տնով տեղովը ելան քովը
 գացին , ու մէկտեղ հոն լեռը այրերու մէջ անա-
 ռիկ տեղուանք կը բնակէին : Թշնամիները աս
 բանս որ իմացան , շաբաթ օր ելան վրանին եկան ,
 ու կը յորդորէին որ դառնան՝ թագաւորին հրա-
 մանին հնազանդին : Ատքը երբոր տեսան թէ
 շաբաթ օրուան պատճառով ան հրէաներէն ի-
 րենց դէմ կեցող չկայ , ալ համարձակ վրանին
 վաղեցին՝ ու հազար հոգի ջարդեցին անոնցմէ :
 Այս բանիս վրայ Սատաթիս շատ ցաւեցաւ .
 ուստի ժողովեց խորհուրդ բրաւ որ՝ անկէց ետե
 շաբաթ օր թէ որ վրանին թշնամի գալու ըլլայ
 նէ , առանց խղճմտանքի՝ աստուածային օրինացը
 համար պատերազմին : Անկէ ետե ուրիշ հրէա-
 ներ ալ Սատաթիսի քով եկան հետը միաբա-
 նեցան , ու այնչափ շատցան որ՝ ալ խումբ կապած
 կ'ելլէին կռապաշտից հետ կը պատերազմէին ,
 կուռքերուն նուիրուած տեղուանքը կ'աւրէին կը
 կործանէին , ուրացողները կը ջարդէին , և աս-
 տուածային օրէնքները պահել կու տային : Այս
 քաջութիւններս ընելէն ետքը՝ տեսնելով Սա-
 տաթիս որ օրէ օր ալ իր մահը կը մտենայ կոր ,
 առջևը կանչեց իր որդիքը , ու բարի խրատնե-
 րով յորդորեց զիրենք որ թշնամիներէն չլախ-
 նան , հապա սկսած բարին քաջութեամբ առաջ
 տանին , աստուածապաշտութիւնը նորէն հաստա-
 տեն . ու Շմաւոն եղբայրնին՝ իրենց գլխաւոր
 ու հօր տեղ դնելով , և Յուդա Սահարէն՝ ի-

ըենց զօրապետ, ասանկ իր հայրական օրհնութիւնը անոնց տալով՝ հոգին աւանդեց:

Գ. Լ. ՈՒԽ Է.

Յուդա Մակաբէին բաշտութիւնները:

ԱՄ աշխարհի 3838: (Ե. Մակ. 7: — Բ. Մակ. 2. 2.)

Յուդա Մակաբէն հօրը մեռնելէն ետև երբոր զօրապետութիւնը ձեռք առաւ՝ ջանաց որ իր զօրքը շատցընէ. ու զանոնք միայն կ'ընտրէր հետը կ'առնէր, որ միշտ աստուածային օրինաց մէջը հաստատ մնացեր էին: Ընչի բերանը բուրբ վեց հազարի չափ մարդով՝ Այդոդնիտսի դէմ ելաւ, որ աւելի զօրքով իրեն վրայ եկեր էր, ու Յուդա աստուածային օգնութեամբը անանկ յաղթեց զանիկայ՝ որ բռնեց իր ձեռքովը Այդոդնիտսը մեռցուց, ու ուրիշ շատ կողոպուտներէն 'ի զատ՝ Այդոդնիտսի թուրը որ վրայէն առաւ, անկէ ետքը զանիկայ ինքը սկսաւ բանեցընել: Ընչ յաղթութեամբ Յուդայի անունը որ մեծցաւ չորս դին տարածուեցաւ՝ Արէն կամ Սերոնը սուած Ասորեստանի կողմին մեծ զօրապետը՝ նորէն աւելի զօրքով Յուդայի դէմ ելաւ: Յուդայի զօրքը իրենց քիչութիւնը տեսնելով՝ վախցան դէմ դնելու. Յուդա ալ յորդորելով զիրենք որ չվախնան՝ Աստուծոյ ասպաւնին՝ անանկ քաջութեամբ վրանին վազեց, ու ութը հարիւր հօգի ջարդելով՝ թշնամիներուն բանակը ցիրուցան ըրաւ փախցուց: Ընչ ատենը Աստիտրոս թագաւորը աս Յուդայի ըրած յաղթութիւնները լսելով՝ շատ դժուարը եկաւ, մտմտաց որ իր բո-

լոր տերութենէն նորէն զօրք ժողովէ, ու ինքը իր բոլոր ուժովը անոր դէմ ելլէ, ջնջէ վերջընէ շրէից ազգը. բայց տեսնելով որ աս բանս առաջ տանելու բաւական ստակ չունի իր գանձին մէջը, անոր համար ուզէց որ առաջ Պարսից երկիրը երթայ զարնէ՝ անկէց ստակ հանէ: Ուստի երթալու ատենը՝ իր տեղը Վիւսիաս անունով մէկ իշխան մը թողուց, անոր յանձնեց աս սպա տերազմիս բաները. և իր Մնտիոքոս ըսուած որդին ալ անոր ձեռքը հաւտաց՝ որ ինքը պահէ մեծցընէ: Վիւսիաս ալ խորհուրդ ընելով Փիլիպպոսի հետ, (որ Արուսաղէմի քաղաքապետն էր, ինչպէս վերը ըսինք) աս շրէից դէմ պատերազմին վրայ իրեք հօգի զօրապետ ընտրեց՝ Պրազմէսը, Աիկանորը ու Վորդիասը. և ասոնց ձեռքը տուաւ քառսուն հազար հետեակ զօրք, ու եօթը հազար ձիաւոր, որ երթան բոլոր շրէաստանի երկիրը աւրեն, ու շրէպքը բոլորովին աշխարհչէս վերջընեն, ինչպէս որ Մնտիոքոս թագաւորը մտմտացեր էր: Եւ բանիս յաջողութեանը վրայ անանկ ստոյգ էր Աիկանոր՝ որ վաճառականներ կանչեր հետերնին խօսք կապեր էր, որ աս սպատերազմիս մէջ գերի բռնած շրէաները իրենց ծախէ՝ իննսուն մարդ մէկ քանքարի, ու կը կարծէր որ՝ միայն աս շրէից գերիներուն գնովը հռոմայեցւոց հարիւր կամ երկու հարիւր քանքարի տարեկան թագաւորական տուրքը վճարուի:

Յուզա Սահարէին հետ եղած զօրքը՝ որ միայն վեց հազարի չափ էին, երբոր թշնամիներուն պատրաստութիւնը խմացան՝ շատ վախ ինկաւ սրտերնին: Յուզա ալ քաջութեամբ սկսաւ իրենց սիրտ տալ, ու առջևնին դրաւ այն-

չափ մեծամեծ հրաշքները , որ Մատուած ատեն ատեն ըրեր էր՝ իրենց նախահարքը թշնամիներուն ձեռքէն խալըսելու համար : Ատքը բոլոր չրէից աղօթք ու պաք ապրասրելով՝ որ Մատուած աս սրատերազմիս բարի կատարումն տայ , զօրքը կարգի դրաւ , Մատուծոյ օգնութեամբք անանկ յաղթութիւն մը ըրաւ որ՝ ան պատերազմին մէջը չրէայքը ինը հազար հոգի թշնամիներէն ջարդեցին , ու մնացածէն ալ՝ որ ասդին անդին ջրուած կը փախչէին՝ իրեք հազարի չափ կտորեցին . և իրենց ամբարտաւան՝ Ախկանոր զօրապետը աղքատի լաթեր հազած՝ որ չձանչնուի ու ինքն ալ բռնուի , այսպէս խայտառակաբար Մատիոք փախաւ : Մսկէ ՚ի զատ չրեայքը թշնամիներուն բանակէն խել մը կողոպուտ ալ ձեռք ձգեցին . և ան վաճառականները որ շատ ստրկով՝ Ախկանորի ըսածին պէս զիրենք գնելու որ եկեր էին , զանոնք ալ բռնեցին՝ ու ստակնին ձեռուրնէն առին . և աս կողոպուտները Յուդայի հրամանովը զինուորաց ինկած բաժինէն ՚ի զատ՝ առատապէս աղքատաց ու որբոց բաժնեցին : Մսկէ ետեւ Յուդա նորէն յաղթութիւն մըն ալ ըրաւ մէկալ երկու զօրապետներուն՝ Տիմոթէոսի ու Րաբիդի դէմ՝ քսան հազար ալ անոնց զօրքէն ջարդեց , փախցուց զիրենք , ու անոնցմէ ալ շատ կողոպուտ առաւ :

Ախտիա , որ Մատիոքոսի տեղը կեցեր էր , Յուդա Սակաբէին յաղթութիւնները որ տեսաւ , ուզեց որ ինքն ալ դէմը ելլէ անոր ուժք փորձէ . ուստի մէկ տարիէն ետքը վաթսուն հազար հեռուակ զօրքով ու հինգ հազար ձիաւորով չրեաստան եկաւ : Յուդա ալ բոլոր տասնըմէկ հազարով միայն անոր դէմ ելաւ , ու ա-

դօժքով իր բոլոր յոյսը Մատուծոյ վրայ դնելով
 երբոր սկսան պատերազմիլ, մէկէն հինգ հազար
 հօգի ջարդեցին թշնամիներէն, և անով բոլոր
 բանակը ցիրուցան ըրին փախցուցին: Այսպէս
 որ յաջողեցաւ շրէից բանը՝ ու ալ գրեթէ բո-
 լոր այլազգիները շրէաստանէ հանեցին փախ-
 ցուցին, անկէ ետեւ Յուդա Սալաբէն՝ որ ալ
 բոլոր շրէից իշխան էր եղեր, Արուսաղէմ
 դնաց, որ իրեք տարի կուսպաշտ այլազգիներուն
 ձեռքը մատնուած էր. ու բոլոր կուռքերու և
 կուսպաշտական բաներու նշանները անկէց վեր-
 ցուց կործանեց, ու ձեռք զարկաւ Մատուծոյ
 տաճարը մարքելու նորոգելու: Անոր մէջը ամէն
 կահ կարասիները նորէն շինեց, ու քահանանե-
 րը զատեց իրենց կարգին կանոնին մէջը դրաւ. և
 աս յաջողութեանս համար ՚ի շնորհակալութիւն
 Մատուծոյ եօթը որ տօնախմբութիւն սահմա-
 նեց, որ բոլոր շրէայքը ուրախութեամբ կա-
 տարեցին: Այսպիսի շրէից յաջողութիւնները
 տեսնելով իրենց սահմանակից կուսպաշտ ազգե-
 րը, նորէն սկսան թշնամութիւն ընել շրէից
 դէմ: Յուդա ալ զատոնք ամէնը յաղթեց յայտ-
 նի Մատուծոյ օգնականութեամբ. անանկ որ՝
 անգամ մըն ալ կը պատմուի թէ հինգ փառա-
 ւոր ձիաւոր կորիճներ երկինքէն ինջած երե-
 ցան պատերազմին մէջը, որ Յուդան մէջերնին
 առած կը պահարանէին, ու թշնամիներուն վրայ
 նետ ձգելով կը կուրցընէին զանոնք, որ շիտթած
 իրար կ'անցնէին, ու անանկ կը յաղթուէին:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Անտիոքոս բազաւորին սատակումը , և սեփոյ ետեկն
 ևստած բազաւորներուն սրտերագւմը Հրէից դեմ :

Եւ աշխարհի 3840 : (Բ . Մակ . Զ . Ժ . ԺԵ . ԺԲ .)

Անտիոքոս թագաւորին միտքը դրածը՝ Պարս
 կաստան որ չյաջողեցաւ , և անկէց խայտառակ
 ետ դարձաւ Նաբիլունի կողմերն որ հասաւ , հան
 լեւով ան իր զօրապետներուն Հրէիցմէ յաղ-
 թուիլը , և Յուդա Սաիաբէին Հրէաստան
 տիրապետելը , սաստիկ կատղեցաւ աս բանիս
 վրայ . ուստի ուղեց որ այնուհետեւ ինքը իր զօր-
 քով Հրէից վրայ ելլէ՝ չինայէ զամէնքը թրէ
 անցընէ , Արուսաղէմ քաղաքը հիմնայտաակ ը-
 նէ : Արքոր ճամբայ ելլաւ՝ ու իր կառքը նստած
 սաստիկ արտօրնօք կրակի պէս քշել կու տար ,
 որ օր մը ժամ մը առաջ հասնի՝ աս միտքը դրած
 անօրէնս թիւնները կատարէ , ան ստեղծը Մը-
 տուծոյ պատուհասն ալ վրան հասաւ , որ յան-
 կարծակի կառքէն վար ինկաւ՝ Չարգուբուրդ ե-
 դաւ բոլոր մարմինը . ու ներսէն ալ աղիքներուն
 զէն դպաւ՝ որ խոցուեցան , և քիչ քիչ անանկ
 փտտեցաւ ներսի դին՝ որ չօրս դիէն որդեր
 դուրս կը թափէին , և սաստիկ զարշահոտու-
 թենէն մարդ քովը չէր կրնար մօտենալ : Ան-
 տիոքոս սասանկ մահուան դուռն որ հասաւ , ան
 ստեղծը խեղքը վրան եկաւ , իմացաւ որ աս պա-
 տիժս անմեղ Հրէից վրայ ըրած անողորմու-
 թիւններուն համար կը քաշէ . ուստի սկսաւ ա-
 ռաջադրու թիւն ընել թէ առողջանալու ըլլայ

նէ՛ Նրէից ամէն բաները իրենց դարձրնէ, և տաճարը իր ստրկով առջինին պէս ամէն կողմանէ զարդարէ. ու նաև ինքն ալ Նրէայ ըլլայ, և Մատուծոյ մեծ կարողութիւնը ամէն տեղ քարոզէ: Բայց Մատուծոյ ողորմութեան չափը լցուելով իր արդար դատաստանովը երեսն ձգեց թողուց, որ երթայ անանկ չարաչար սատկի օտար աշխարհքի մէջ:

Ի իւսիսս երբոր Մատիոքոսի մեռնիլը լսեց, շուտ մը անօր տղան Մատիոքոս անունով՝ հօրը տեղը թագաւորական ակօսք անցուց, և անօր մահանուն գրաւ՝ Նշարատոր կամ Նօրամոյն, այս ինքն ազնիւ հօրէ ծնած. ու ինքը ի իւսիսս՝ անօր փոխարքայ (այսինքն վէզիր) եղաւ: Բայ ալ իր հօրը ճամբան բռնեց՝ Նրէից դէմ թշնամութիւն ցուցրնելով. ուստի նորէն սրտերազմ բացաւ վրանին: Բայց Յուդա Սակարէին ըրած քաջութիւններէն յաղթուելով, (որ սահմանօտութեանս մէջը կը թողունք չենք երկրնցրներ), ետքը հաշտութիւն ըրաւ հետերնին: Բնկէ ետև շատ չանցաւ որ՝ Ղեմետրիոսը իրեն հօրեղբօրը որդին եկաւ Մատիոք քաղաքը մտաւ, ու սպաննել տարով աս Մատիոքոս թագաւորը՝ ի իւսիսսն ալ հետը, ինքը տիրապետեց անօր տերութիւնը:

Բն ատենը շուտ մը Մգկիմոս ըսուած մէկ հըրէայ մը՝ որ առջի պղտորութեան ժամանակը Արուսաղէմ քահանայապետութիւն էր ըրեր, ու ետքը բարեկարգութեան ատենը՝ ինկած անկէց վնասուած էր, զնաց թագաւորին սասանկ հասկըցուց թէ՛ «Քանի որ Յուդա Սակարէն կեցեր է, ոչ քու տերութիւնդ Նրէաստանի վրայ սպարհով է, և ոչ մեր ազգը հանդիստ

խաղաղ կ'ըլլայ : Ըստ ըստածիս ուրիշներն ալ վրայ
 տուին՝ թագաւորը զրդեցին որ Մշկխնոր մէկ
 Քարիդ ըսուած զօրապետի մը հետ Արուսա-
 ղէմ խրկեց, որ երթան աս հրէից բաները
 կարգի դնեն : Բայց երբոր ասոնք եկան խաբե-
 բայութեամբ խել մը մարդ Յուդայի բարե-
 կամներէն բռնեցին սպաննեցին, և Յուդայի
 ալ ետեւէն որ ինկան, ու տեսան որ Յուդան իր
 եղբայրներովը իրենց դէմ յայտնի պատերազմի
 պատրաստութիւն կը տեսնէ կոր, ան ասոնք
 թողուցին թագաւորին քով դարձան, ու նորէն
 Յուդայի վրայ անանկ գրգռեցին՝ սրդողցուցին
 թագաւորը, որ ան ալ անոնց տեղը մէկ երեւելի
 իշխան մը՝ Աիկանոր ըսուած՝ աւելի շատ զօր-
 քով խրկեց որ երթայ Յուդան բռնէ, ու իր
 զօրքը ցրուէ վերցընէ, Մշկխնոր հրէաստանի
 քահանայապետ դնէ : Արբոր եկաւ Աիկանոր
 տեսաւ որ Յուդա զօրքովը իրեն դէմ պատրաս-
 տուած կեցեր է, և անոր կտրձութիւնն ալ
 գիտնալով սիրտ չբրաւ հետը պատերազմ ը-
 նել : Հապա ուզեց որ խաղաղութեամբ բանը
 լծնցընէ : Բայց Յուդա միշտ իր զգուշութիւնը
 ընելով որ չըլլայ թէ խաբէութեամբ բան մը
 ընէ, թող տուին որ Աիկանոր Արուսաղէմ ե-
 կաւ, ու Յուդայի հետ սկսաւ անանկ սաստիկ
 սիրով բարեկամութեամբ վարուիլ, հետը ինա-
 մութիւն ալ ընել, որ Մշկխնոս կարծիք գնաց
 թէ Աիկանորի միտքը բոլորովին փոխուեցաւ :
 անոր համար ինքն ալ շուտ մը գնաց թագաւո-
 րին ամբաստանեց : Թագաւորն ալ շատ սրդ-
 ղեցաւ, զրեց Աիկանորի թէ՛ « Ըստ ձեր ըրած
 բարեկամութեանը չեմ հաւնիր : Հապա ինչպէս
 հրամայեցի նէ՝ օտուրները ձեռուրները կապած

Յուդան ինծի խրկես , . սո բանս որ խնացաւ
 Յուդա՛ երեսը ծածկեց : Միկանոր ալ ամենայն
 կերպով ետեւէ ինկաւ զինքը բռնելու . ուստի
 գնաց Արուսաղէմ տաճարը քահանաներուն կը-
 պաւ , “ թէ որ , ըսաւ , Յուդան պահէր էք նէ՛
 հանեցէք ձեռքս տուէք , . և ձեռքը Մատուց
 տաճարին վրայ զարնելով “ Չէ՛ նէ , ըսաւ , սո
 տաճարս հիմնայատակ կ’ընեմ՝ , և ասոր տեղը
 կուռքի մեհեան կը շինեմ , . : Քահանաները աս
 որ լսեցին , սոսկալով տաճարը մտան՝ ու լալով
 կ’աղաչէին Մատուց որ պահէ իր տաճարը , և
 անոր ըրած հայհոյանքը իրեն չթողու : Միկա-
 նոր ալ ասկէ ետեւ կատղած՝ մարդու չէր ողոր-
 մեր , չրէպքը սկսաւ տակնուվրայ ընել :

Մտառներս Արուսաղէմ՝ Նաքս ըսուած
 մէկ աստուածապաշտ ու խելացի անուանի ծեր
 մը կար . Միկանոր ասոր ետեւէն ինկած վրան
 հինգ հարիւրի չափ զինուոր խրկեր էր՝ որ ողջ
 բռնեն իրեն բերեն : Քայց ասիկայ աւելի ընտ-
 րեց քաջութեամբ մեռնիլ , քան թէ ան կուս-
 պաշտին ձեռքը իյնալ . ուստի երբոր ալ զինքը
 բռնելու եղան , ան ատենը իրեն ալ ձարը հա-
 տած՝ ինք իր ձեռքով թուրը փորը խոթեց ճղ-
 քեց , ու անանկ զինքը պարսպէն վար ձգեց , և
 հոն դեռ չմեռած՝ այնպէս արիւնշուայ ոտք ելաւ
 կայնեցաւ , փորտօխըր ձեռքը առած դէպ ՚ի վեր
 երկինքը վերցուց ցուցուց՝ ու ըսաւ . “ Տէր ,
 այսպէս դուն ալ իրեն հատուցանես , . ու ա-
 նանկ ինկաւ հողին աւանդեց :

Ետքը Միկանոր իմանալով որ Յուդա Սա-
 կարէն Սամարիայի կողմերը զօրք ժողված պատ-
 ըրատ կեցեր է , սպասեց ինչուան շաբաթ , և
 ան օրը ուզեց որ իր բոլոր ուժովը վրան վազէ :

Արիւանորի զօրաց մէջը շատ չրէայք ալ կային .
 ասոնք երբոր աղաչեցին որ ան օրը թողու՛ շա-
 բաթը սուրբ պահեն՝ ինչպէս Մատուած հրա-
 մայեր է , Արիւանոր ասոնց սրդողելով՝ Մատուծոյ
 դէմ հայհոյեց ու ըսաւ . « Մատուած թող եր-
 կինքը հրամայէ . երկրիս վրայ սլ որ ուժով է
 նէ՛ ան կը հրամայէ , որ զէնք վերցընեն պատե-
 ըազմին , » : Յուդա Սահաբէ ալ անդին իր զօրքը
 յորդորելու և սիրտ տալու ատենը՝ Մատուած
 իրեն մէկ տեսիլք մը յայտնեց , որ իր մարդոցը
 պատմելով աւելի զօրացան . ու տեսիլքը աս
 էր : Տեսաւ որ Սնիա սուրբ քահանայապետը
 իր շնորհալի կերպարանքով երեցած՝ ձեռուրնե-
 րը տարածած չրէից համար աղօթք կ'ընէր , ու
 ցուցընելով մէկ ուրիշ փառահեղ ծերունի մը
 անդին կեցած՝ կ'ըսէր թէ . « Մը Արեմիա մար-
 գարէն է , որ եղբայրսիրութեամբ միշտ և հա-
 նապաղ ձեզի համար կ'աղաչէ Մատուծոյ , » . աս
 ըսելնին՝ Արեմիան մէկ ոսկիով պատած թուր
 մը Յուդայի ձեռքը կու տայ ու կ'ըսէ . « Մը աս
 Մատուծմէ սարգեւած սուրբ թուրս , ու ասով
 քու բոլոր թշնամիներդ սպաննէ , » : Ատքը եր-
 բոր ալ Արիւանորի հետ դէմադէմ եկան , չրէայ-
 քը որ քիչուոր էին՝ իրենց Յուդա զօրապետին
 յորդորանքովը սիրտ առնելով՝ և բոլորովին Մ-
 տուծոյ ապաւինելով , անանկ քաջութեամբ պա-
 տերազմ ըրին , որ ան մէկ զարնուելուն մէջը
 երսուներհինգ հազար հոգի թշնամիներէն կո-
 տրեցին , Արիւանորն ալ անոնց մէջը , ու մնացա-
 ծը ցիրուցան ըրին : Ատքը ուրախութեամբ օր-
 հնէնք տալով Մատուծոյ՝ հրամայեց Յուդա ող
 Արիւանորի զուխը և աջ թևը կտրեն վերցընեն
 վրայէն . ու հետը առաւ Արուսաղէմ բերաւ ու

մենուն ցուցուց . և անոր հայհոյիչ լեզուն հանեց կտոր կտոր ջարդեց՝ թռչուններուն առջևը ձգեց , գլուխը բերդին վրայ կախել տուաւ , և ան ձեռքը որ տաճարին զարկեր սպառնացեր էր թէ Պիտի հիմնայատակ ընեմ՝ տաճարին առջևը կախեցին : Ատրը աս յաղթութեան օրս ալ՝ մեծ տօն սահմանեցին ՚ի շնորհակալութիւն Մատուցոյ :

Գ. Լ. ՈՒԽ Թ .

Յուդա Մակարեին ետեւեւ Յովնարսե անոր տեղը կ'անցնի :

Ե՛մ աշխարհի 3843 : (Յ . Մակ . Ը . Թ . Ժ .)

Սիկանորը յաղթուելէն ետքը՝ Հրէաստանի երկիրը քիչ մը ժամանակ խաղաղեցաւ . ուստի Յուդան ալ ատեն գտաւ Հոռմայեցւոց դեռսպան խրկելու , որ շատոնցմէ մէջերնին եղած ուխտ ու դաշինքը նորէն ամուրցընեն : Բայց Սիկանորը թագաւորը Սիկանորի մեռնելէն ետեւ՝ նորէն Բաբելոնը Ղզկիմոսի հետ քսան հազար հեռուակ զօրքով և երկու հազար ձիաւորով Յուդայի դէմ խրկեց : Յուդայի զօրքը , որ ան ատենը միայն իրեք հազար էին , երբոր թշնամիներուն շատուորութիւնը տեսան՝ սրտերնին կտորեցաւ յուսահատեցան , ու շատն ալ քովէն զատուեցան ցրուեցան , որ միայն ութը հարիւր ձիաւորով մնաց Յուդա , ու ասոնք ալ կը յորդորէին զինքը թէ՛ « Ըս անգամ որ ասանկ քիչուոր մնացինք՝ ետ կենանք , ինչուան որ նորէն մարդ ժողովենք » : Յուդա իրենց սրատասխան

տուաւ . Բնա լիցի որ ես թշնամիներէս երես
 դարձնեմ փախչիմ . հապա թէ որ ժամանակը
 հասեր է նէ՛քաջութեամբ մեռնինք մեր եղ-
 բայրները ազատելու համար . Բնանկ ըսաւ՝ ու
 ան ութը հարիւրով թշնամիներուն մէջը մտաւ ,
 և առտուանց ինչուան իրիկուն անանկ քաջու-
 թեամբ պատերազմեցաւ , որ բանակին աջ թևը
 զարկաւ յաղթեց : Բայց ետքը անոնց ետեւէն
 իյնալնինի , ձախ թևին զօրքը եկան զինքը իր
 մարդիկներովը մէջ առին , և ան ատենը Յու-
 դա ալ Բստուծոյ այնպէս կարգաւորելովը ինկաւ .
 ու մնացած զօրքը փախան ցիրուցան եղան : Ետ-
 քը Եմաւոն ու Յովնաթան իր եղբարքը՝ եկան
 Յուդայի մարմինը անկէց վերցուցին տարին ի-
 րենց հայրենական գերեզմանը թաղեցին . ու
 վրան մեծ սուգ ըրին Բարայելացիքը : Յուդայի
 մեռնելէն ետեւ անտեր որ մնացին չրեայքը ,
 շատ նեղութիւն կրելով Բաբելոնի ձեռքէն՝
 Յովնաթանը անոր եղբայրը իրենց քահանայա-
 պետ ու առաջնորդ զրին : Բաբելոն ետեւէն ին-
 կաւ որ բռնէ սպաննէ . Յովնաթան ալ հետը
 զօրք ժողված մէկ անապատ տեղ մը քաշուե-
 ցաւ . Բաբելոն վրան գնաց՝ ու շարաթ որ մը որ
 պատերազմ բացաւ հետը , Յովնաթան ասոր
 դէմ ելաւ , ու անանկ քաջութեամբ հետը պա-
 տերազմեցաւ , որ հազար հոգի կոտորեց Բաբելոնի
 զօրքէն՝ անանկ զինքը փախցուց : Բնիկ ՚ի զատ
 նաև ուրիշ անգամ մ՛ալ Բաբելոն Յովնաթա-
 նի թշնամիներէն գրգռուելով ու հետը պատե-
 րազմելով երբոր յաղթուեցաւ , ալ խելքը կրտ-
 րեց որ Յովնաթանի քաջութիւնն ալ Յուդայէն
 վար շմար . ուստի Յովնաթանի ուղած հաշ-
 տութեանը՝ Բաբելոն խօսք տալով , չրեւտտա .

նէն ելաւ՝ Մնտիօք քաղաքը դարձաւ . մանա-
 ւանդ որ հոն Վեմեար թագաւորն ալ նեղու-
 թեան մէջ էր Ղլեքսանդր Լպիտիան ըսուածին
 կողմանէ, որ նոր թագաւորութիւն հաստատեց
 իր սահմանին քովը : Մտր վրայ քիչ մը հան-
 գիտ գտաւ Յոննաթան, ու Մարմաս քաղաքը
 նստած՝ սկսաւ ժողովուրդը կառավարել . սպա-
 ճառն որ՝ Լքուսաղեմի բերդը դեռ Վեմեար
 թագաւորին զօրաց ձեռքն էր :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Յովնարան քանակայապետին ոչիչ պատմութիւնները :

(Ղ արշտարհ 3843 : (Ե . Մակ . Ժ . ԺԵ . ԺԲ .)

Յոննաթանի քաջութիւնը չորս դին հռչա-
 կուելով առ երկու Հրէաստանի սահմանակից
 թագաւորները Վեմեար ու Ղլեքսանդր, որ
 մէկմէկու դէմ էին, իրարու ձեռքէն Յոննա-
 թանը կը ջանային իրենց կողմը դարձնել՝ դիտ-
 նալով որ անոր օգնութիւնը իրենց շատ ուժ-
 կու տար : Բայց Յոննաթան խոհեմութեամբ
 երկու դին ալ հաւասար կը բռնէր, թէպէտ
 միտքը բերելով Վեմեարի Հրէից դէմ ըրած
 անօրէնութիւնները՝ անոր ըրած բարեկամական
 խոստումըներուն այնչափ չէր հաւատար . հստա
 Ղլեքսանդրին վրայ աւելի հաւատարմութիւն
 ունէր, որ զինքը քահանայապետ ճանչնալով ու-
 կի թագ ու ճիրանի կապայ իրեն խրկեց, որ
 մեծ սիրոյ ու բարեկամութեան նշան էր : Լա-
 քը Վեմեար ալ առ բանս լսելով թէպէտ նո-
 րէն բարեկամութեան թուղթ գրեց Հրէից :

որով շատ ազատութիւններ իրենց կու տար,
բայց այսու ամենայնիւ չրէպք իրեն չհատա-
ցին, հաստատ կեցան Մղեքսանդրի հետ:

Բսկէ ետքը Մղեքսանդրը պատերազմ ելաւ
Վեմեարի վրայ, ու քաջութեամբ յաղթելով
սպաննեց Վեմեարը. և երբոր անոր տէրու-
թիւնը բոլոր իր տակը առաւ, Պողոսմոս Ա-
գիստացւոց թագաւորին հետն ալ ուղելով բա-
րեկամանալ՝ անոր Աղէսպատրա ըսուած աղջիկը
իրեն կին առաւ: Երբոր աս թագաւորական
հարսնիքիս պատճառովը ան երկու թագաւոր-
ները մէյտեղ Պողոսմայիդ քաղաքն էին, Յով-
նաթան ալ Մղեքսանդր թագաւորէն հրաւի-
րուած՝ մեծ մեծ պարգևներով ան հարսնիքը
գնաց, ու հոն Մղեքսանդրը զինքը եւելօք մեծա-
րեց, ու նորէն ծիրանի կապայ հագցրնելով փա-
ռաւորեց. և ամէն ժիր մտիկ չգրաւ Յովնաթա-
նի թշնամիներուն՝ որ գացեր վրան ամբաստա-
նութիւն կ'ընէին. ու անանկ փառաւորապէս ե-
լաւ նորէն Արուսաղէմ դարձաւ: Եւ Մղեքսանդր
թագաւորը քիչ մը ատենէն ետքը՝ կամաց կա-
մաց թուլնալով և զինքը ուրախութեան (կամ
զէֆքի սէֆայի) տալով, անդիէն մեռած Վե-
մեար թագաւորին մեծ որդին Վեմեար Աիկա-
նովը ըսուած՝ ելաւ իր հօրը տէրութիւնը նորէն
ձեռք ձգեց, ու Մնտիոք քաղաքը եկաւ նստաւ:
Բսիկայ ոխ պահելով Յովնաթանի վրայ՝ թի-
խնու իր հօրմէն զատուեցաւ Մղեքսանդրի զին
եղաւ, անոր համար Մարդոսիոս մէկ մը զօրա-
պետ դրաւ, ու ութը հազար հետեակ զօրքով
և իրեք հազար ձիաւորով չրէաստան Յովնա-
թանի վրայ խրկեց: Ետք գէմ ելաւ Յովնա-
թան իր Մնտոն եղբորը հետը տասը հազար

զօրքով, ու անանկ քաջութեամբ պատերազմ
ըրաւ, որ անոր ութը հազարը ջարդեց, և Վա-
գոն հուռքին տաճարը՝ հոն փախչողներուն վրան
երեց, ու անոնցմէ շատ կողոպուտ առաձ՝ անանկ
Լըուսաղէմ դարձաւ: Ըս բանիս համար եւե-
լօք ուրախանալով Ղըէքսանդր թագաւորը, նո-
րէն Յովնաթանի թագաւորական նշան՝ պարգև
խրկեց, ու անոր իշխանութեան երկիրը մեծ-
ցուց: Ընկէ ետև շատ չանցաւ որ Ղըէքսանդրը
մեռացուցին, ու Պտղոմէոսն ալ մեռաւ՝ որ խա-
բերայութեամբ մտեր յափշտակեր էր Ղըէք-
սանդրի տէրութիւնը, և իր կղէոպատրա աղ-
ջիկը անկէց հաներ Վեմեար թագաւորին տուեր
էր: Աւստի երկուքին մեռնելէն ետքը Վեմեար
ըր աւելի զօրացաւ, ու բոլոր իր հօրը թագաւո-
րութիւնը տիրապետեց. և ան վերի ըսուած
պատերազմէն ետև ինքն ալ սկսաւ Յովնաթա-
նի հետ բարեկամութիւն ընել. Յովնաթան ալ
անկէ ետև զինքը գլուխ ձանձնալով՝ շատ պար-
զեներով գնաց առջևը ելաւ. ան ալ զինքը նո-
րէն մեծարելով՝ հրէից ազատութեան գիր
տուաւ:

Ըն ատենները Տրիփոն անունով մէկ զօրա-
պետ մը, մեռած Ղըէքսանդր թագաւորին օր-
դան Ղնտիոքոս ըսուած՝ կ'ուզէր որ հօրը տեղը
թագաւոր դնէ. անոր համար Վեմեարի վրայ
որ պատերազմ ելաւ՝ Յովնաթան Վեմեարի ու-
զածին պէս իրեն իրեք հազար Խարայեւացի զօրք
օգնական խրկեց, որ եկան քաջութեամբ տասը
հազար հոգի թնամիններէն ջարդելով՝ ձեռու-
նէն խալըսեցին Վեմեար թագաւորը: Բայց
Վեմեարը ինչ որ խոստացեր էր՝ աս բարերա-
րութեանս փոխարէն հրէից ընելու, ազատուե-

լին ետև՝ խօսքէն դարձաւ չկատարեց . անոր
 համար ինքն ալ սրտիժը դտաւ , որ ետքը բոլոր
 զօրքը զինքը թողուցին՝ ան Տրխիոնին հետ մէկ
 եղան , ու զինքը փախցընելով՝ Մատիոքոսը թա-
 գաւոր ճանչցան իր տեղը : Մն ալ երբոր աթո-
 սը նստաւ՝ ուխտ ու դաշինք հաստատեց Յով-
 նաթանի հետ , և զինքը Հրէից քահանայապետ
 ու գլուխ ճանչնալով իրեն թագաւորական ըն-
 ծաներ խրկեց , և անոր Շմաոն եղբայրն ալ
 զօրապետ դրաւ : Ատքը աս երկու եղբարքս ալ
 շատ քաջութիւններ ըրին՝ որ Մատիոքոս թա-
 գաւորը իրեն թշնամիներուն ձեռքէն պահեն .
 անոնցմէ մէկն ալ Տրխիոնն էր , որ Մատիոքոսը
 սպաննել կ'ուզէր՝ որ ինքը անոր տեղը թագա-
 ւոր ըլլայ . բայց երբոր տեսաւ որ Յովնաթան
 քառսուն հազար ուժով զօրքով կեցեր է , վախ-
 ցաւ դէմը սրատերազմ բանալու . ուստի սկսաւ
 խաբէութեամբ Յովնաթանի հետը բարեկա-
 մութիւն ցուցընել . ու անանկ զօրքը քովէն
 հեռացընելով՝ միայն հազար հօգի հետը առած
 Պտղոմայիս քաղաքն որ մտաւ Յովնաթան ,
 Տրխիոն քաղքին դռները վրան դոցել տուաւ .
 այնպէս զինքը բռնեցին կապեցին , հետի եղած
 մարդիկը բոլոր թրէ անցուցին . ու անկէ ետև
 Տրխիոն նորէն զօրք ժողովեց , պատրաստուեցաւ
 որ Հրէաստանին վրայ ելլէ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Շմառն կը յաչորցէ Բովնարանի տեղը :

Աճ աշխարհի 3860 . 3869 : (Յ . Մակ . 37 . 37 . 3Ե . 3Զ :

Լըբոր Զովնաթան ասանկ խաբուելով բըռնուեցաւ , Նրէաստան անանկ ձայն ելաւ թէ մեռած է . ուստի սաստիկ տրամած՝ և գրեթէ յուսահատած էին Նրէայքը : Ըն ատենը Շմառն՝ (որ ինչպէս ըսինք՝ Մատաթիայի Տինգ որդւոց մէջը պինտ մեծերնին էր) , Նրէայքը քովը կանչեց , մխիթարելով սիրտ տուաւ իրենց՝ ու ըսաւ թէ « Լչա ալ իմ եղբայրներուս պէս՝ Ըստուծոյ օրինացը և մեր աղգին ազատութեանը համար պատրաստ եմ իմ կեանքս տալու . : Ետդովուրդն ալ շատ ուրախացաւ ասոր վրայ , ու զինքը Զովնաթանի տեղը իրենց առաջնորդ ընտրեցին : Ետքը Տրիսիոն երբոր Նրէից վրայ եկաւ՝ տեսաւ որ Շմառնը ալ զօրապետ եղած պատերազմի աղէկ պատրաստութիւն տեսեր է , ինքն ալ խաբէբայութեամբ բանը փոխեց , Շմառնի դեսպան խրկեց ըսելու թէ՝ « Զովնաթանը հարիւր քանքար արծաթ տալիք ունէր թագաւորական գանձին , անոր համար քովս բռնուած կեցեր է . ուստի եթէ կ'ուզէք որ ազատի , աս ստակս խրկեցէք , և անոր երկու տղաքն ալ իմ ձեռքս պատանդ տուէք , որ զինքը թողում . : Շմառն թէպէտ իմացաւ անոր չար միտքը , բայց այսու ամենայնիւ ըսածին պէս խրկեց ան ստակը ու անոր տղաքը , մտմտաց որ՝ չըլլայ թէ ասղին Նրէաներէն ետքը զլիսացա-

ութիւն քաշէ, որ ըսեն թէ՛ ազահուծեամբ ստակը շուռաւ, ու ան պատուական մարդը կոր սընցուց: Բայց Տրիփոն աս բաներս առնելէն ետե՛ չէ թէ Յովնաթանը չխալըսեց, հապա բռնեց մեռցուց ալ. ու ինքը ելաւ իր տեղը դարձաւ: Ըն որ ըսեց Շ մաւռն, մարդիկ խրկեց անկէց վերցուց Յովնաթանի մարմինը Մովզիմ քաղաքը բերել տուաւ՝ իր հօրը և մէկալ եղբարց գերեզմանը դրաւ. և ան գերեզմաններուն վրայ փառաւոր քարաշէն շինուածք շինեց, որ յիշատակնին անմուաց մնայ: Ընկէց ետե ալ Շ մաւռն զգուեցաւ Տրիփոնէ, որ աս Յովնաթանի ըրած անգթութենէն ՚ի զատ գնաց գաղտուկ Ընտիոքոս թագաւորը սպաննել տուաւ, ու ինքը անոր թագաւորութիւնը յափշտակեց: Եւ ան ալ իմանալով Շ մաւռն՝ որ անդիւն Վե մետր թագաւորը նորէն իր տերութիւնը կուժուցընէ կոր, ինքն ալ անոր ընծաներով դեսպան խրկեց, և անկէց հրէից շատ ազատութիւններ առաւ:

Ըսոր վրայ խել մը ատեն խաղաղութեամբ վարեց Շ մաւռն իր իշխանութիւնը, ինչուան որ Ընտիոքոս ըսուած մէկ մը՝ թագաւորական ցեղէն, որ սկիզբը Շ մաւռնի բարեկամութիւն կը ցուցընէր, ետքը երբոր ելաւ Տրիփոնը յաղթեց ու անոր թագաւորութիւնը բոլորովին տիրապետեց, սկսաւ Շ մաւռնի հետ թշնամութեամբ երթալ, Շ մաւռնի տուած ընծաները և երկու հաղար իրեն օգնութեան համար խրկած զօրքը քամահրելով ետ դարձուց: Ետքը Ըթե նորիտ իր բարեկամը Շ մաւռնի խրկեց ըսելու թէ՛ « Իմ հայրենական քաղաքներս որ այսչափ տարի բանութեամբ տիրապետեր էք, և այնչափ

տեղուանք աւրեր էք նէ՛ անոնց գինը տուէք, ու
անկէ՛ ՚ի զատայտափատենի թագաւորական խա-
փանուած մնացած տուրքերը տուէք, թէ որ չէք
ուզեր որ բռնութեամբ վրանիդ ելլեմ, : Շ մաւ-
ւոն ալ չվախցաւ իրեն սպատասխան տուաւ՝ թէ
“ ()տարի երկիրը մենք յաիշտակած չենք, մեր
հայրենական երկիրները թշնամիներուն ձեռքէն
սուեր ենք. միայն Հոսպիէ ու Վազարա քաղաք-
ներուն համար որ դուք հարիւր քանքար կ'ու-
զէք, անոր ստակը կու տանք, : Ը սպատասխանն
որ լսեց Ընտիրոս թագաւորը, սաստիկ սրդո-
ղեցաւ. ուստի Վենդերոս ըսուած մէկ զօրապետ
մը շատ զօրքով հրէաստան խրկեց : Շ մաււոն
ալ ան ատենը քսան հազար զօրք տուաւ իր եր-
կու տղոցը ձեռքը, որ ասոնց մէկը Հուդա կ'ը-
սուէր ու մէկալը Հոհան, և իրենց սիրտ տուաւ
յորդորեց որ՝ այսուհետեւ իրենք հրէից ազգին
թշնամիներուն դէմ ելլեն սպառերազմին, որով-
հետեւ ինքը՝ ալ ծերացեր էր : Ընանկ Ըստու-
ծոյ օգնութեամբը որ ելան ասոնք, շատ ջարդ
տուին՝ թշնամիները յաղթեցին. ու Հոհան
փախստականներուն ետեւէն իյնալով տարաւ
Ըզովտոսի կողմերը մէկ բերդ մը հասցուց, և
ան բերդը վրանին երելով՝ երկու հազար հոգի
ալ հոն մեռցուց, և այսպիսի քաջութեամբ
հրէաստան դարձաւ :

Ըն ատենները Պտղոմէոս Ըբուբբենց ը-
սուած մէկ մը կար՝ որ Շ մաււոնի փեսայ էր ե-
ղեր, ու Լըրիքովի կողմերը իշխան դրուած էր :
Ըփիկայ Շ մաււոնի տերութեանը վրայ աչք տըն-
կելով՝ անգամ մը Շ մաււոն ան կողմերը տես
երթալնինի, Վուլք ըսուած քաղաքը՝ Պտղոմէոս
խաբէութեամբ զինքը սեղան մեծարեց՝ և իր եր-

կու տղաքն ալ հետը Սատաթի ու Յուդա . ու
 հոն տեղը ուրախութեամբ ուտել խմելէն ետ-
 քը՝ յանկարծ Պտղոմէոս , որ իր մարդիկներովը
 պատրաստուած էր , վրան վազեց՝ Շ մաւոնը իր
 տղաքներովը և ծառաներովը սպաննեց : Ատրը
 աս բանս շուտ մը խրկեց իմացուց Աստիղոս
 Թագաւորին որ՝ իրեն օգնական զօրք խրկէ , որ
 Նրէաստանը բռնեն տիրապետեն , Սակաբայե-
 ցւոց ձեռքէն հանեն . ու Վաղարա քաղաքն ալ
 մարդիկ խրկեց՝ որ Շ մաւոնի մէկալ Յովհան
 տղան ալ հոն բռնեն մեռցընեն : Բայց Յոհան
 աս բաներս առաջուց իմանալով՝ շուտ մը ան ե-
 կողները ձեռք ձգեց սպաննեց , և իր հօրը տեղը
 ինքը անցաւ քահանայապետ եղաւ :

Հոս կը վերջանայ Սակաբայեցւոց դիւրը , ու
 Նրէից բոլոր պատմութիւնը , որ հին կտակարա-
 նաց դրբերուն մէջ կը պատմուի : Բայց յարմար
 կերեայ որ ասկէց սկսեալ ինչուան Յիսուսի
 Վրիստոսի Տեառն մերոյ ծնունդը , այսինքն
 մնացած հարիւր երսունըմէկ տարուան ատենի
 գլխաւոր Նրէից ազգին հանդիպածները՝ համա-
 ոօտ պատմենք , որով շարունակեալ կը կաշի հին
 կտակարանին պատմութիւնը նոր կտակարանին
 հետ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Յաւելուած Հրէից պատմութեան՝ մինչև Քրիստոսի
ծնունդը :

ԱՄ աշխարհի 3869 : Եւ նախ քան զՔրիստոս 131 :
(Ի պատմագրութեանն Յովսէպոսի) :

Յոհաննէս մաւրնի որդին որ Հիւրկանոս ալ
կոչուեցաւ , ինչպէս կ'ըսեն՝ Հիւրկանիա դաւա-
ռը մէկ յաղթութիւն մը ընելու պատճառով ,
ասիկայ Պտղամէոսը յաղթելէն ետև սկսաւ բո-
լոր Հրէաստանի ինքը տիրապետել իրեն հօրը
տեղը : Եւ թէպէտ անկէ ետքը Մնտիոքոս իր
թշնամիներէն խաղաղանալով նորէն բոլոր ու-
ժովը եկաւ Արուսաղէմ պաշարեց , բայց Յո-
հաննէս քաջութեամբ պատերազմելով բանը հոն
հասցուց , որ ալ գրեթէ անոր ձայրը հատած հե-
տը հաշտութիւն ըրաւ : Ետքը աս Մնտիոքոս
այնչափ բարեկամացաւ Յոհաննի հետ , և քա-
ջութեան դիէն անանկ մեծ կը սեպէր զանիկայ ,
որ Պարսից դէմ պատերազմ ելլալու ատենը
Յոհաննէս ալ իր զօրքովը հետը առաւ , որ հոն
չատ յաղթութիւններ ըրաւ : Բայց ետև Մն-
տիոքոսի բանը ձախտող երթալով երբոր ինքը
զինքը սպաննեց , ու ան պատճառով զօրքն որ
ցրուեցան , ան ատենը Յոհաննէս փառաւորապէս
Հրէաստան դարձաւ , ու բոլորովին ազատու-
թիւն գտնելով Հրէաստանի սահմանը նորէն
մեծցուց , բոլոր քովը եղած մանր ազգերը քա-
ջութեամբ իր տակը առաւ : Սիայն թէ աս ալ
կը պատմուի որ՝ ան ատենները Հրէից մէջ Սա-

դուկեցիի ու Վարխսեցիի աղանդները տարածուած ըլլալով, Յոհան ետբերը զինքը Սաղուկեցիներուն կողմը ցուցուց . որով Սահաբայեցոց բարի անունը աւրեց, և ասով ինքն ալ իր զաւկըներովը Հրէից ատելի եղաւ :

Յոհանի հինգ տղոցը մէջէն Մրիստոբուղոս ըսուածը՝ հօրը մեռնելէն ետեւ առաւ իշխանութիւնը, ու ինքը զինքը Հրէաստանի թագաւոր անուանեց : Աւ աս անունս հաստատ պահելու համար՝ իր մայրը, որ ան ալ իշխանութեան ետեւէ էր, մեռցուց, ու իրեք եղբայրները բանտի մէջ դրեցէլ տուաւ . և մէկալ եղբայրը Մնտիգոնոս ըսուած, որ իրեն թագաւորութեան ընկեր էր առեր, անգամ մը պատերազմէն յաղթութեամբ դառնալինի, անոր վրայ ալ Մրիստոբուղոս կարծիք առնելով՝ թէ ինքը կ'ուզէ թագաւորութիւնը յափշտակել, անոր համար անողորմաբար զան ալ մորթել տուաւ : Բայց Մստուծոյ դատաստանն ալ շատ չուշացաւ՝ վրան հասաւ, որ մէկ տարիէն աւելի չքշեց իր իշխանութիւնը . հասպա ինչպէս կը պատմեն՝ ուր որ իր եղբօրը անմեղ արիւնը թափել տուաւ, ան տեղը իրմէ այնքան արիւն եկաւ՝ որ ալ խղզուած ինկաւ հողին փշեց :

Մրիստոբուղոսի կնիկը զաւակ չունենալով երկանը մեռնելէն ետեւ իր տագերը մէկը Մքեբսանդրոս Յաննէոս ըսուածը՝ բանտէն հանել տուաւ, ու հետը կարգուեցաւ, և առջի երկանը տեղը զանիկայ թագաւոր ընտրեց : Մտիկայ երբոր իշխանութիւնը ձեռք ձգեց՝ թէպէտ պատերազմական քաջութեամբ Հրէաստանի սահմանը շատ մեծցուց, բայց իր անկարգութեամբը և մանաւանդ անգութ անողորմութեամբը սաս,

տիկ ատելի եղաւ շրէից, անանկ որ՝ ալ սկսան
 գաղտուկ ետևէն պտըտիլ որ զինքը սպաննեն :
 Ղըքսանդրոս աս իմանալով աւելի կատղեցաւ,
 և ինչպէս կ'ըսեն՝ վեց տարուան մէջը յիսուն
 հազար հոգիի գլուխ կտրեց . և մէկ հեղ մ'ալ
 ութը հարիւր հոգի շրէից մեծամեծներէն, որ
 աս իրեն ըրած բռնակալութիւնները չէին հա-
 ներ՝ իրեն դէմ կը խօսէին, զանոնք բռնել տուաւ,
 ու ինքը սեղան նստած ուրախութեամբ ուտել
 խմելու ատենը՝ մէկէն զասոնք խաչի վրայ կախել
 տուաւ . և աս հերիք չէ, ան ողորմելիներուն
 կնիկները ու զաւկրները իրենց աչաց առջևը բե-
 րաւ մորթել տուաւ : Եւ Ղըքսանդրոս թա-
 զաւորը ետքերը չափէն աւելի զինքը զինի տա-
 լով, և ան պատճառովը իրեք տարի ալ հիւան-
 դութիւն քաշելէն ետև՝ իր իշխանութեանը
 քսանընթաց տարին մեռաւ : Ետևէն թէպէտ
 երկու որդիք թողուց, մէկը շիւրկանոս ու մէ-
 կալը Ղըրիստոբուղոս ըսուած, բայց ասոնք դեռ
 պզտիկ ըլլալով թագաւորութեան ժառանգու-
 թիւնը իր Ղըքսանդրոս ըսուած կնկանը յանձ-
 նեց . որ ան ալ քահանայապետութիւնը շիւր-
 կանոսի տուաւ, ու միայն թագաւորական կա-
 ռավարութիւնը ինքը կ'ընէր, Վարիսեցիները
 առաջ քաշելով և զանոնք իրեն կռնակ ընելով .
 որովհետև, ինչպէս կ'ըսեն, ան ժամանակները
 աս Վարիսեցիները բռներ էին, իրենց խօսքը
 խիստ անցուկ էր :

Ղըքսանդրոս թագուհին՝ որ Սողոմէ ալ կ'ը-
 սուի, ինը տարի խելօք ու խաղաղութեամբ կա-
 ռավարելէն ետքը երբոր մեռաւ՝ բողորովին
 շիւրկանոսի ձեռքը մնաց իշխանութիւնը : Բայց
 շիւրկանոս մէկ թոյլ ու անզօր մարդ մը ըլլա-

լով և Մ. Բխատորուղոս իր եղբայրը անոր ներ-
 հակ յանդուզն ու տաքարիւն՝ (որ իրեն մօրը ա-
 տենէն ինքը դուխ քաշեր էր), չիւրկանոսի վը-
 րան պատերազմ ելաւ . ու չիւրկանոսը յաղ-
 թուելով դէմ չկրնալով դնել, խոնարհեցաւ զը-
 նաց հաշտութիւն խնդրեց եղբօրմէն : Մ. Բխ-
 տորուղոս ալ աս դաշամբ հետը հաշտութիւնը
 ըրաւ որ՝ թագաւորական ու քահանայապետա-
 կան իշխանութիւնը ինքը ընէ, չիւրկանոս եր-
 թայ իր տունը հանգիստ նստի : Մ. անկ իրեք
 տարիի չափ խաղաղութեամբ կենալէն ետքը,
 մէկ Մ. սղխապարոս ըսուած ունեւոր մարդ մը եղո-
 մայեցի կամ ասկաղոնացի՝ նորէն չիւրկանոսը
 գրդեց, որ գնաց Մ. քետաս Մ. քաբացւոց թագա-
 ւորին ինկաւ՝ որ իրեն իրաւունքը պաշտպանէ .
 Մ. քետաս ալ զօրքով Մ. Բխատորուղոսի վրայ ե-
 կաւ, ու Մ. Բխատորուղոսը փախցընելով ինքը
 սկսաւ չրէաստանի վրայ տիրապետել . ինչուան
 որ Սկաւրոս ըսուած մէկ չռոմայեցւոց զօրա-
 պետ մը Մ. Բխատորուղոսէ չօրս հարիւր քանքար
 առաւ՝ Մ. քետասի աչքը վախցուց, որ Նրուսա-
 դեմէ ելաւ գնաց . ու նորէն Մ. Բխատորուղոս
 չիւրկանոսի վրան վազեց եօթը հազար հօգի
 ջարդեց, անանկ ինքը առաւ տէրութիւնը :

Բայց ան ատենները Պոմպէոս չռոմայեցւոց
 մեծ զօրապետը Մ. սորեստանի կողմերը գտնուե-
 լով, (որ Տիգրան չայոց թագաւորը չռոմայե-
 ցւոց հետ հաշտութիւն ընելով իրենց թողու-
 ցեր էր, որով բոլոր չրէաստանը չռոմայեցւոց
 տէրութեան ներքեւը անցեր էր), աս երկու եղ-
 բարքս՝ չիւրկանոս ու Մ. Բխատորուղոս՝ Պոմ-
 պէոսի պարզէնելով դեսպան խրկեցին, աղաչե-
 ցին որ իրենց դատաստանը ինքը կտրէ՝ իրաւուն-

բը ցուցրնէ : Պոմպէոս ալ երբոր Հրէաստան
 երթալու եղաւ որ աս բանս տեսնէ , Մըխատ-
 բուղոս իր վրայ վախ ունենալով սկսաւ բերդե-
 րը ամուրցընել ու պատերազմի պատրաստու-
 թիւն տեսնել : Բայց աս բանս աւելի դէշ ե-
 ղաւ . ինչու որ Պոմպէոս ալ թշնամութեամբ
 դնաց Երուսաղէմը զարկաւ առաւ , ու Հիւրկա-
 նոսը նորէն քահանայապետ ու թագաւոր դրաւ .
 և Հրէայքը Հռոմայեցւոց հարկատու ընելով ,
 աս տուրքերուս Մնդիսպատրոսը վերակէցու զը-
 բաժնիքը Մըխատբուղոսը իր զաւկըններովը կա-
 սրած հետը առաւ որ , անանկ յաղթութեամբ
 Հռոմ դառնայ : Եւ ձամբորդութեանս մէջը Մ-
 ղեքսանդրոս ըսուած Մըխատբուղոսի տղոց մէ-
 կը ձեռքէն փախաւ Հրէաստան եկաւ , ու իրեն
 հետ խել մը զօրք ժողովեց մէկ քանի բերդ մը
 առաւ՝ սկսաւ Հռոմայեցւոցմէ զլուխ քաշել տի-
 րապետել . անոր վրայ ալ Վարխանոս Հռոմայե-
 ցւոց զօրապետը հասաւ յաղթեց ցրուեց զիրենք ,
 ու Մղեքսանդրոսը փախցուց : Աւթը տարիէն
 ետքը Մըխատբուղոս իր մէկալ Մնտիգանոս ը-
 սուած տղովը Հռոմայի բանտէն ինքն ալ փա-
 խած Հրէաստան եկաւ , և երբոր Մղեքսանդրոս
 տղին հետ պատրաստութիւն կը տեսնէր որ նո-
 րէն զլուխ քաշէ , Հռոմայեցիք բռնեցին զինքը
 ու նորէն իր երկու տղաքներովը Հռոմ խրկե-
 ցին : Եւսկէ ետքն ալ թէպէտ Յուլիոս կայսեր
 հրամանովը ազատեցան , բայց ինքը Մըխատ-
 բուղոս մէյ մ'ալ ետ չդարձաւ , հասրա հոն Պոմ-
 պէոսի բարեկամներէն դեղով մեռաւ , ու Մղեք-
 սանդրոս ալ եկաւ Մնտիոք քաղաքը բռնուեցաւ՝
 հոն սպաննուեցաւ :

Եւ ատեններս Յուլիոս Հռոմայեցւոց կայս-

ըր՝ Պոմպէոսի թշնամին՝ Մտորեստանի կողմերը
 գտնուելով, թէպէտ Մնտիգոնոսը Մըխատորու-
 ղոսի որդին՝ գնաց լալով անոր ոտքը ինկաւ, ու
 իր հօրը և եղբօրը մահը առջևը դնելով, (որ
 միայն իրեն կողմը ըլլալուն համար՝ Պոմպէոսի
 բարեկամներէն սպաննուեցան), Նրէաստանի
 իշխանութիւնը ինքը ուզեց առնել, բայց բան
 մը չկրցաւ ընել. որովհետև Մնդիպատրոս (որ
 Նիւրկանոսի հետ խիստ բարեկամութեամբ
 կապուելով՝ մէյտեղ եղբօր պէս կը կառավա-
 րէին Նրէաստանը) Յուլիոսի աչքը անանկ մտած
 էր՝ որ նորէն անոնց իշխանութիւնը հաստատեց
 Յուլիոս : Ատքը Մնդիպատրոս կամաց կամաց
 կառավարութեան մէջ խոթեց իր երկու որդի-
 քը, մէկին անունը Պասայէլ ըսուած որ Արու-
 սաղէմ դրաւ, և մէկալը Ներովդէս՝ Վալի-
 լեայի կողմերը : Մը երկուքս ալ իրենց կառա-
 վարութեան մէջը շատ խելք և քաջութիւններ
 ցուցնելով՝ ամենուն սիրելի եղան, մանաւանդ
 Ներովդէսը. անանկ որ՝ Նիւրկանոսի անունը
 միայն կար, ու բոլոր կառավարութիւնը Մնդի-
 պատրոս իր տղոցմովը կը տեսնէր. ինչուան որ
 ինքն ալ մէկ ուրիշէ մը դեղուած մեռաւ. ու ան-
 կէ ետքը Ներովդէս ալ աւելի երես գտնելով
 Նոմայեցւոցմէ՝ սկսաւ ինքնիշխան թագաւորի
 պէս վարել իր տէրութիւնը :


Մն ժամանակը Մնտիգոնոսն ալ, ինչպէս ը-
 սինք՝ տեսնելով որ Նոմայեցւոց աղաչելով բան
 մը չկրցաւ ընել, դարձաւ Քարդափրան ըսուած
 հայոց մեծ զօրապետին դիմեց, (որ Տիգրան
 թագաւորը զինքը նորէն շատ զօրքով Նոմայե-
 ցւոց դէմ խրկէր էր), ու անոր խոստացաւ որ՝ ե-
 թէ Նիւրկանոսի տեղը զինքը Արուսաղէմի քա-

Հանայապետ ու Թագաւոր զնէ, իրեն Տաղար քանքար ասկի՝ և հինգ հարիւր ալ աղուոր կնիկներ տայ : Հիւրկանոս ու Փասայէլ տեսնելով Քարզափրանի մեծ ուժը, որ զօրքը Վնել զօրապետին ձեռքը տուած՝ վրանին խրկեց, ալ դէմ չդրին՝ հետը հաշտութիւն ըրին, սիրով ընդունեցան զիրենք . բայց հերովդէս աւելի շատգէտ փրթաւ, որ շուտ մը տունը տեղը ժողվեց զնաց մէկ անառիկ բերդ մը մտաւ, ու ետքը անկէց ալ մինաւոր ելաւ հռոմ փախաւ : Ետքը երբոր Հիւրկանոս ու Փասայէլը անանկ խաբուած ելան Քարզափրան զօրապետին քով դացին՝ որ իրենց բանը հոգայ, ան տոենը Քարզափրան երկուքն ալ կասպած Մնտիգոնոսի ձեռքը տուաւ : Մնտիգոնոս ալ մէկէն Հիւրկանոսի ականջները կտրեւ տուաւ, կամ ինչպէս կ'ըսեն՝ կատղած ինքը վրան վաղեց խածնելով փրցուց, որ Թէ մէկ մըն ալ բանը փոխուի նէ՝ քահանայապետ չկրնայ ըլլալ . ինչպէս մովսիսական օրէնքը կ'արգիլէ, որ այսպիսի պակասաւոր մարդ քահանայապետ չըլլայ : Փասայէլն ալ բանտը դըրուած՝ ձեռուրներն որ կապուած կեցեր էր, յուսահատութենէն ինք իրեն գլուխը քարի զարնելով՝ մեռցուց զինքը : Աւստի Քարզափրան՝ անանկ Մնտիգոնոսը Երուսաղէմ Թագաւոր ու քահանայապետ զնելով՝ Հիւրկանոսը բռնած ուրիշ հրէից գերիներուն հետը առաւ հայաստան Տիգրան Թագաւորին տարաւ : Ետքը աւտենով աս Հիւրկանոսը Թէպէտ գերութենէն դարձաւ, բայց մէկ մըն ալ քահանայապետութիւն չըրաւ :


Իսկ հերովդէս, ինչպէս ըսինք՝ հռոմ որ զնաց աս բաներս սրատմեց, անկէց Մնտոնինոսի

Հիւօրատօսին ձեռքովը (որ առաջուց իրեն հօրը
 և իր հետը շատ բարեկամ էր) Հռոմայեցւոց
 շատ տուրք խոստանալով, բոլոր Հրէաստանի
 Թագաւորութիւնը ինքը առած՝ Հռոմայեցւոց
 զօրքովը դարձաւ Մատիգոնոսի վրայ եկաւ: Մա-
 տիգոնոս ալ Հայոց մնացած զօրքը իրեն կանակ
 ունենալով՝ իրեք տարիի չափ անանկ դէմ դրաւ
 Հերովդէսի՝ որ բան չկրցաւ ընել: Վայց ետքը
 երբոր եկաւ Մատոնինոս Հռոմայեցւոց մեծ զօ-
 րապետը՝ ու Սոսիոս ըսուած զօրապետը վրան
 խրկեց, հինգ ամի չափ պաշարելէն ետև Ս-
 րուսադէմը առաւ՝ Հերովդէսը հոն Թագաւոր
 դրաւ, ու Մատիգոնոսը կապած Մատիոք քաղա-
 քը Մատոնինոսի խրկեց, որ Հերովդէսի ուզածին
 պէս ան տեղը խայտառակաբար գլուխը կտրել
 տուաւ: Եւ Մատիգոնոսը պինտ ետքի իշխանը
 եղաւ Սակաբայեցւոց ըսուած Վլատացի քա-
 հանայական ցեղէն. և անկէ ետև ալ մէյ մըն
 ալ Հրէից ազգէն իրենց իշխան ընտաւ. որով
 հետև Վրիտանոսի Սեսիային գալստեան ատև-
 նը ալ եկեր հասեր էր, որ ինքն էր Ճշմարիտ
 Թագաւոր և քահանայտպետ. որ ասկէ երսուն
 ու իրեք տարիէն ետքը ծնաւ, ինչպէս որ Հակոբ
 նահապետը մարգարէացեր էր, որ կ'ըսէ (Դնըն-
 գոց ԽԲ. 10). Ս'ի պահասեացի է շխան 'ի Հո-
 դայ, և մի պէտ քերանայ նորա՝ մինչև էկեացի նա,
 որոյ իւրն է հանդերձեալն, և նա է ակնալուսեան
 հեթանոսաց:





Erklärung der Weltkarte
im Evangelium



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒ ԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

ՆՈՐ ԿՏՍ. ԿԱՐԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՏԵԱՌԵՆ ՄԵՐՈՅ ՀԱՒԱՔԵԱԼ Ի ՉՈՐԻՑ
ԱՒԵՏԱՄԱՆՉԱՅ՝

ԳԼՈՒԽ Ա.

Կարրիէյ նրեշտակապետը աւետիս կառուց
Չարարիայի, և կուսին Մարիամու:

ԱՄ աշխարհի 3999: ԱՄ քրիստոսի 0: (Ղուկ. Ե.)

ԵՐԲՈՐ ալ Բարուծմէ սահմանուած ժամանակը
հասաւ, որ Մեսիան աշխարհքիս փրկիչ
խրկի, ինչպէս մարգարէին բերնովը շատ ան-
գամ խոստացեր էր, պինտ առաջ անոր կարա-
պետը (այսինքն քրիստոսը) Բարուած ուզեց որ
խրկի, այս կերպովս: Ա՛րքը ըսուած Հերով-
դեսի թագաւորութեան ատենը, իբր անոր եր-
սունքհինգ տարին, Հրէաստան մէկ քահանայ
մը կար Օւրարիա անունով, որ կնիկ մը ունէր
Եղիսաբէթ ըսուած. ասոնք երկուքն ալ սուրբ
ու արդար, ամուլ էին՝ որ ինչուան ծերութեան

ատեննին իրենց զաւակ չէր եղած : Բայ Օւաբարիաս անգամ մը Երուսաղէմի տաճարը խորանը մտած Բստուծոյ առջևը ինկարկեւնին՝ հրեշտակ մը իրեն երևցաւ , ու ըսաւ . “ Եթէ վախնար Օւաբարիա , բու աղօթքդ Բստուած լսեց , որ քու Եղիսաբէթ կնիկդ քեզի որդի մը պիտի ծնանի . անոր անունը Զովհաննէս դնես (որ կը նշանակէ՝ Շնորհք Բստուծոյ) , և ան զաւակը՝ քեզի և ուրիշ շատ մարդիկներուն ուրախութեան պատճառ պիտի ըլլայ . և Բստուծոյ խիստ սիրելի ըլլալով՝ դեռ մօրը փորէն Տոբայն Սրբոյ շնորհքովը պիտոր լցուի . որ Խորայելացւոցմէ շատ մարդիկ պիտոր դարձնէ իրենց տէր Բստուծոյն , ու անոր առջևէն երթալով՝ Եղիա մարգարէին պէս նախանձայոյզ քարոզութեամբ ժողովրդոց սիրտը անոր հետ պիտի կապէ , ” : Եւ աս ալ ասըստը հրեշտակը որ , աս զաւակս Բստուծոյ ուխտաւոր ըլլալուն համար՝ զգուշանայ որ գինի ու օղի չխմէ : Օւաբարիա երբոր աս լսեց , տարակուսեցաւ որ ըսաւ . “ Եթէ նշակէս կ'ըլլայ՝ որ ես ծերացեր եմ , ու կնիկս ալ տարիքը առած է , ” : Հրեշտակն ալ իրեն ըսաւ թէ՝ “ Ես Վարրիէլ հրեշտակն եմ , որ Բստուած զիս խրկեց աս բանս քեզի աւետիս տալու . բայց դուն որ ըսածիս չես հաւտար , անոր համար ահա քեզի պատիժ ըլլայ , որ համբ (այսինքն տիւրիզ) մնաս ինչուան ան օրը՝ որ ըսածս իր ատենովը կատարուի , ” : Եւ ըսածին պէս շուտ մը անտեղը Օւաբարիայի լեզուն կապուեցաւ պատանձեցաւ . ետքը երբոր ելաւ տուն գնաց , մէկ քանի օրէն ետեւ Եղիսաբէթը յղացաւ , ու ան ալ պատճառը իմանալով՝ փառք կուտար Բստուծոյ՝ որ աս շնորհքս իրեն ըրաւ :

Ըստ վրայ հինգ ամիս անցնելէն ետև՝ Ըստուած նորէն Վարդիէլ հրեշտակը խրկեց Վալիլեայի մէկ քաղաքը՝ Կազարէթ ըսուած, որ հոն կը բնակէր Աոյսն Սարիամ (որ նշանուած էր Յովսէփայ արդարոյն հետը՝ որ ան ալ իրեն պէս Վալիթ մարգարէին ցեղէն էր) . և Աուսին Սարիամու եկաւ հրեշտակը բարև տալով ըսաւ . Ուրախ եր, Բերդեւ, Տեր ընդ Կեղ : Աոյսն Սարիամ ան հրեշտակն որ տեսաւ, և աս բանս լսեց՝ շիտեցաւ, սկսաւ ինքիւրեն մտածել թէ՛ աս բարևս ինչ պիտոր ըլլայ : Հրեշտակն ալ նորէն դարձաւ ըսաւ . « Մի վախնար, Սարիամ, դուն Ըստուծոյ այնչափ սիրելի եղար՝ որ ահա պիտոր յղանաս որդի մը ծնանիս, ու անոր անունը՝ Յիսուս դնես (որ կը նշանակէ՝ Փրկիչ կամ Ըզատիչ), որ մեծ պիտոր ըլլայ, ու Որդի Վարձրելոյն պիտի ըսուի . և Ըստուած ալ անոր Վալիթ հօրը աթուր իրեն պիտի տայ, ու յաւիտեանս յաւիտենից թագաւորէ Յակոբայ՝ այսինքն Իսրայէլ լացոց ազգին վրայ » : Ըն ատենը Աոյսն Սարիամ ալ դարձաւ հրեշտակին ըսաւ . « Ինչ պէս ատ բանը ինձի պիտոր ըլլայ, որ ես էրիկ մարդ չեմ ձանձնար » : Հրեշտակն ալ պատասխան տուաւ . « Հոգին Սուրբ քեզի կու դայ, ու աստուածային ամենակարողութեամբը աս բանը կը կատարէ . որովհետև ան սուրբ զաւակը որ քեզմէ պիտոր ծնանի նէ՛ Որդի Ըստուծոյ պիտոր ըսուի : Եւ աս ալ գիտնաս որ, ըսաւ, քու Աղիտաբէթ ազգականդ ալ՝ որ ամուլ կ'ըսուէր, աս ծերութեան ատենը ան ալ վեց ամիս կ'ըլլայ որ յղի է . որովհետև Ըստուծոյ առջևը անկարելի բան չկայ » : Սարիամ ալ ան ժամանակը ըսաւ . « Ըհա ես Ըստուծոյ աղա-

խինն եմ, ինձի ինչպէս որ ըսիր նէ՝ անանկ
 թող ըլլայ, և աս խօսքս ըսելուն պէս՝ յղացաւ
 Վրիստոս տէրն մեր իր ամենասուրբ արդան
 դին մէջը: Եւ այնպէս հրեշտակը քովէն ելաւ
 գնաց:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Կոյսն Մարիամ ուշիոյս կ'երբայ Եղիսաբերի, ու
 Եղիսաբեր Յովնանէն Մկրտիչը կը ծնանի:

(Ղուկ. Ե.)

Ըւտուամը առնելէն ետքը՝ Կոյսն Մարիամ
 ելաւ որ Եղիսաբեթի աչքիւյս երթայ՝ տեսնէ,
 ու անոր տունը մտած զինքը բարեւելուն պէս,
 Եղիսաբեթի փորուն մէջը վեց ամսուան յղա-
 ցած տղան՝ շարժեցաւ. և ան ատենը շուտ մը
 Եղիսաբեթ հոգւով Սրբով իմացաւ թէ որպի-
 սի շնորհքով լցուած է իրեն քովը եկողը. ուս-
 տի կանչելով՝ Կուսին Մարիամու ըսաւ. «() Եհ-
 նեալ էս դոս՝ ի քանոյս, եւ օրհնեալ է պատու որ-
 շայնի քո. աս ինչ մեծ պատիւ է ինձի՝ որ իմ ըս-
 տուծոյս մայրը ելլէ իմօքս գայ. և աս բանով
 կ'իմանամ որ, քու բարեւելուդ ձայնը ըսելուս
 պէս՝ տղաս փորուս մէջը ուրախութենէն շար-
 ժեցաւ. և երանի ան մարդուն որ ըստուծոյ
 յայտնած խորհուրդներուն կը հաւատայ՝ թէ
 ատենովը պիտի կատարուի, և Կոյսն Մարիամ
 ալ ան ժամանակը շնորհակալութեամբ փառք
 տալով ըստուծոյ՝ սկսաւ ան խորհրդաւոր օրհ-
 նութիւնը ըսել. Սեծացոսցէ անքն իմ շնէր, և
 այն. ու անանկ Եղիսաբեթի քով իրեք ամիս
 կենալէն ետքը՝ նորէն իր տունը դարձաւ:

Եղիապրեթին ատենը երբոր հասաւ՝ որ տը-
 դան ծնաւ, իր ազգականները քովը ժողվեցան
 շատ ուրախութիւն ըրին՝ ու փառք կու տային
 Մատուծոյ : Ետքը ութերորդ օրը մովսիսական
 օրինաց պէս տղան թլիսատելուն ատենը ուզե-
 ցին որ անունը հօր պէս Օ աքարիա դնեն. մայրը
 “ Զէ, կ'ըսէր, հապա Յովհաննէս դրէք ”, ու-
 ըինները չէին ուզեր, կ'ըսէին թէ “ Զըլար, ձեր
 ազգին մէջ ատ անունը չկայ ”, ետե նշմարով հօրը
 որ հարցուցին թէ ինչպէս կ'ուզէ, ան ալ չկրնա-
 լով բերնով ըսել՝ երբոր տախտակ մը ձեռքը ա-
 ռաւ սկսաւ գրել թէ՛ “ Յովհաննէս է ատոր
 անունը ”, ան ատենը շուտ մը Օ աքարիայի լե-
 զուն արձրկուեցաւ, ու ինքն ալ հոգւով Արքով
 լցուած սկսաւ մարդարէանալով ան օրհնու-
 թիւնը ըսել. () Ենէալ Եր Մատուծ Իսրայելի,
 և այն : Ես հրաշալի բաներս ան կողմերը չորս
 դին որ հռչակուեցաւ, լսողները կը սոսկային ու
 զարմանալով մէյմէկու կ'ըսէին թէ “ Երդեօք
 որպիսի մեծ մարդ պիտոր ըլլայ աս տղան, որ Մ-
 տուծոյ շնորհքը միշտ վրան է ” : Յովհաննէս ալ
 անանկ սրբութեամբ մեծնալուն պէս՝ դնաց ա-
 նապատը քաշուեցաւ կեցաւ, ինչուան որ ժամա-
 նակը եկաւ՝ Մատուծ զինքը խրկեց որ երթայ
 Իսրայելացւոց մէջը քարոզութիւն ընէ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Յիսուսի Քրիստոսի ծնունդը :

Աժ աշխարհի 4000 : Քրիստոսի 1 : (Մատ. Ե. —
Ղուկ. Բ.)

Այսին Մարիամ երբոր Աղիտաբեթի քովէն ելաւ՝ Աազարէթ իր տունը դարձաւ , Յովսէփ իր նշանուածը անոր դրսի նշաններէն տեսնելով որ յղացեր է , և չգիտնալով թէ Հոգւով Սրբով եղած է բանը՝ շատ շփոթեցաւ վրան . բայց ինքը բարի ու արդար մարդ ըլլալով՝ չուզեց մովսիսական օրինաց ըսածին պէս բանը դուրս ձգել՝ խայտառակէ զինքը , հասաւ կը մտմտար որ առանց ձայն ձուն հանելու՝ քովէն զինքը ձամբէ : Արբոր Յովսէփ աս բանը ասանկ միտքը դրած կը քնանար , հրեշտակ Մատուծոյ երեցաւ իրեն ու ըսաւ . “ Յովսէփ որդի Աաւթի , մի վախնար Մարիամ հարսդ քովդ պահելու . գիտնաս որ անոր յղութիւնը Հոգւով Սրբով եղած է . ուստի անկէ ծնած աղին անունը՝ Յիսուս դնես , պատճառն որ՝ ան պիտոր ազատէ իրեն ժողովուրդը իրենց մեղքերէն : Այլ գիտնաս որ անոր վրայ կը կատարուի ան Մատուծոյ ըսածը Ատայի մարգարէին բերնովը , թէ՛ Ահա հոյսն յղացի եւ ծնի որդի , և հոյսնցին զանոան նորա Ամմանուէլ , որ Թարգմանի՝ Անդ Ռեչ Մարտած ” : Այ՛ բանիս վրայ Յովսէփ որ արթնցաւ , ալ սիրտը հանդէսեցաւ , հրեշտակին ըսածին պէս ըրաւ . իր քովը պահեց Մարիամ Այսը , ու միշտ հետը սրբութեամբ ապրեցաւ :

Երբոր Հիսուսի ծնանելուն ատենը եկաւ, որ մարգարէներուն ըսածին պէս Ռեթղէհէմ քաղաքը պիտոր ըլլար, Մատուած անանկ կարգաւորեց որ, () գոստոս ըսուած՝ ան ատենի Հոռմայեցոց կայսրը հրաման հանեց, որ բոլոր իր իշխանութեան ներքեւ եղած մարդոց անունները՝ իրենց ցեղովը և քաղաքներովը գրուին: Եւ պատճառովս Յովսէփ ալ Աղոյն Սարիամ հետը առած՝ Կաղարեթէն ելաւ Ռեթղէհէմ երթալու՝ իրենք ալ Վաւիթ մարգարէին ցեղէն ըլլալուն համար, որ բեթղէհէմցի էր: Հոն հասածնին պէս՝ Աուսին Սարիամու ատենն ալ եկաւ, որ իրեն առջինեկ մէկ հատիկ զաւակը ծնաւ. և ան իրենց մտած իջեանին (այսինքն քոնաքին) մէջը օրորոց (այսինքն պէշիկ) կամ ուրիշ յարմար տեղ չգտնալով, նոր ծնած տղան խանձարուրով փաթթած՝ մնուրը (այսինքն կենդանիներուն եկմիջը) դրաւ:

Վիշեր ատեն ըլլալով Հիսուսի ծնունդը՝ հովիւներ կային ան կողմերը, որ բացը արթուն կեցած իրենց ոչխարները կը պահէին. ան ատենը ասոնց սաստիկ լուսաւորութեամբ հրեշտակ Մատուծոյ երևցաւ, որ իրենք ալ ահռեցան մնացին: Հրեշտակը իրենց ըսաւ. «Մի վախնաք. ես եկեր եմ մէկ մեծ ուրախական բան մը ձեզի աւեախս տալու, որ ան՝ բոլոր աշխարհքի ալ ուրախութիւն է. գիտնաք որ Վաւթի Ռեթղէհէմ քաղաքը ձեզի այսօր փրկիչ ծնաւ, որ է օծեալ Տէր, կամ Վրիստոս Մատուած. ու նշանը աս ըլլայ ձեզի՝ որ դուք զանիկայ ճանչնաք. կ'երթաք մէկ տղեկ մը կը գտնէք խանձարուրով փաթթած՝ մնուրը դրած», Եւ ըսելուն պէս մէյ մ'ալ յանկարծակի ուրիշ անհամար

հրեշտակներ անոր հետը երևցան, ու սկսան Մատուծոյ օրհնութիւն կարդալով ըսել. Փառս 'ի Բարչառնս Մարտածոյ, և յերէիբ Խաղաղութիւն, 'ի Տարդիկ հաճութիւն : Ատքը երբոր ալ երկինքը ելան աներևոյթ եղան ան հրեշտակները, հովիւները շուտ մը ելան Ռեթղեհէմ եկան . ու հօն փնտռելով երբոր գտան Սարիամը ու Յովսէփը՝ և հրեշտակին ըսածին պէս ան տղեկը մտորը դրած, շնորհակալ ըլլալով փառք կու տային Մատուծոյ . և ով որ աս բաներս հովիւներէն կը ըսէր, ամէնքը կը զարմանային : Անկէ ետև ութը օր եղածին պէս՝ մովսիսական օրէնքը կատարելով աս տղեկս թլխատեցին, ու անունը Յիսուս դրին, ինչպէս որ հրեշտակը առաջուց իրեն սպրսպրեր էր :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Իրեք մոգերը Յիսուսի երկրպագութիւն կու գան, և սակ պատճառովը Հերովդես Քերոզենտի մակեռերը կը չարդէ :

(Մատթ . Բ .)

Յիսուսի ծնած ատենը՝ իրեք մոգ, կամ ինչպէս կ'ըսեն աստղաբաշխ (այսինքն մինէճիմ) թագաւորներ՝ արևելքի երկիրներէն մեկտեղ միաբանած՝ Արուստղէմ եկան, ու ասոր անոր կը հարցընէին թէ՛ « Ո՛ր է ան նոր ծնած շըրէից թագաւորը, որ մենք անոր աստղը տեսանք մեր երկիրը՝ որ զինքը կը ցուցընէր, անոր համար եկեր ենք որ իրեն երկրպագութիւն ընենք » : Ներովգէս (որ Նրէաստանի թագաւորութիւնը ինքը յափշտակեր բռներ էր) աս բանս

որ լեց՝ շատ վախցաւ , և բոլոր Արուսաղէմցիք
 ալ ան պատճառով տակնուվրայ եղան : Աւտի
 Հերովդէս քովը կանչեց բոլոր Հրէից քահա-
 նայապետները ու կարդացողները , հարցուց իրենց
 թէ՛ ան Քրիստոսը կամ զալու Սեսիան ուր տեղ
 պիտոր ծնանի : Ընտնք ալ ըսին թէ՛ “ Բեթ-
 ղեհէմ քաղաքը , ինչպէս որ Սիրիա մարգարէն
 կը գրէ , ” : Ընտնք ալ Հերովդէս գաղտուկ քո-
 վը կանչեց ան իրեք մոզերը , և տեղն՝ ի տեղը
 աստղին երևնալուն բանը անոնցմէ խմանալէն ե-
 տե՛ թող տուաւ որ Բեթղեհէմ երթան , ու
 իրենց ապրասրեց որ՝ աս ծնած տղան գտնելու
 որ ըլլան , անոր տեղը իրեն ալ խմացընեն , որ
 ինքն ալ երթայ անոր երկրպագութիւն ընէ :
 Արբոր մոզերը Հերովդէսի քովէն ելան , ան
 աստղը նորէն իրենց երևնալով՝ առջևնին ինկաւ
 ինչուան Բեթղեհէմ բերաւ , ու երթալով Յի-
 սուսի եղած տեղին վրայ կենալով , անանկ ի-
 րենց ցուցուց : Ընտնք ալ երբոր մտան տեսան
 Յիսուս տղեկը իր մօրը հետը , ու բախանալով
 անոր առջևը ինկան երկրպագութիւն ըրին , ու
 հանեցին իրեն պարգև տուին՝ ոսկի , կնդրուկ
 (կամ անուշահոտ խունկ) ու զմուռս (կամ ասըլ-
 պէնտ) : Ատե՛ ան զիշերը մոզերը հրեշտակէն
 խմանալով Հերովդէսի շար միտքը՝ ալ անոր
 քով չդարձան , հասպա մէկ ուրիշ ձամբով մը ե-
 լան իրենց տեղը դացին :

Հերովդէս երբոր տեսաւ որ մոզերը մէյ
 մ՝ ալ քովը չդարձան , շատ սրդողեցաւ . և
 վախնալով թէ չըլլայ որ՝ աս Բեթղեհէմ ծը-
 նած տղան մէկ որ մը ելլէ իր ձեռքէն թագա-
 ւորութիւնը առնէ , անոր համար զինուորներ
 խրկեց՝ ջարդել տուաւ բոլոր Բեթղեհէմի և

անոր քովի տեղերուն մանր տղաքը՝ երկու տարուընէ՛ ՚ի վար, որ անոնց մէջը Յիսուս ալ սպաննուի : Բայց խաբուեցաւ Ներովդէս . սատառնն որ՝ Յովսէփ առաջուց հրեշտակէն իմանալով Ներովդէսի չար կամքը, Յիսուսը առերմօրը հետ Եգիպտոս աշխարհքը փախուցեր էր . ու հոն կեցաւ՝ ինչուան որ Ներովդէսի մեռնելէն ետքը նորէն հրեշտակը երևցաւ ըսաւ որ Եգիպտոսը երկիրը դառնայ : Յովսէփ ալ երբոր եկաւ տեսաւ որ Եգիպտոսը Ներովդէսի տղան թաղաւոր նստեր էր, (որ անոր չարութիւնն ալ հօրմէն շատ վար չէր մնար), վախցաւ նորէն Եգիպտոսիմ կամ Եթովպիայիմ երթալ, հապա հրեշտակին առաջնորդութեամբը Բաղիլեայի կողմերը Եգիպտոսը դնաց բնակեցաւ, որ Եգիպտոսի իր եղբօրը՝ Եստիպաս Ներովդէս ըսուածին իշխանութեան տակն էր :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յիսուսի տաճարը բնծայուիլը, և տաճարիկոս տարուան տաճարիկն մէջը գտնուիլը :

Ըմ Բրիտանոսի 12 : (Ղուկ . Բ .)

Սոգերուն գալէն առաջ, կամ (ինչպէս կ'ըսեն ուրիշները) անոնցմէ քիչ մը ետքը՝ Եթովպիայի տղոցը կ'օտարուելէն առաջ, երբոր ալ Յիսուս մանուկը քառսուն օրուան եղաւ, մովսիսական օրինացը ըսածին պէս՝ երկու տատրակի (այսինքն քումրուի) կամ երկու աղաւնիի (այսինքն կէօվերձինի) ձաղ հետերնին առած՝ Յիսուս Ե-

ըուսաղէմի տաճարը տարին որ Մատուծոյ ըն-
 ծայեն : Ըն ատենը Արուսաղէմ մէկ սուրբ ու
 արդար ծերունի մարդ մը կար Սիմէոն անու-
 նով, որ մեծօրային կը սպասէր, ու Հոգին Սուրբ
 աւայտաներ էր իրեն թէ ինչուան որ զան չտես-
 նէ նէ՛ պիտի ինքը չմեռնի : Ըս ծերունիս ալ
 ան ժամանակը Մատուծմէ իրեն յայտնութիւն
 ըլլալով՝ տաճարը եկաւ, ու ուրախութեամբ
 զիրկը առաւ : Յիսուս մանուկը, փառք տալով
 Մատուծոյ՝ ըսաւ . « Տէր, ինչպէս ըսիր նէ՛ ալ
 ասկէ ետեւ թող տուր որ երթայ խաղաղու-
 թեամբ հանգչի քու ծառայ . որովհետեւ աս
 աչուրներս տեսան քու աշխարհք զալ փրկ-
 կելդ, հեթանոսները լուսաւորելով, ու Իսրայէ-
 լացիքը որ քու ժողովուրդդ են՝ աւելի փառաւո-
 րելով » : Ետքը դարձաւ զէպ 'ի Աոյան Սա-
 ռիամ, ու իրեն մարգարէանալով ըսաւ թէ՛
 « Ըսիկայ Իսրայէլացւոց շատին կործանում և
 շատին փրկութիւն պիտոր ըլլայ, և ասոր վրայ
 շատ ներհակութիւն պիտի ըլլայ, այնչափ որ՝
 քու սիրտդ ալ իբրև թէ սրով պիտի խոցուի աս
 բաներուս համար » . (ինչպէս որ ետքը հանդը-
 պեցաւ Յիսուսի չարչարանաց ատենը) : Ըն ժա-
 մանակը Մննա մարգարէն ալ, որ եօթը տարի
 երկանը հետ ապրելէն ետքը ինչուան ութսու-
 նըչորս տարին որբեւարի կեցեր էր, ու զիշեր ցո-
 րեկ պարով և աղօթքով տաճարէն չէր զա-
 տուեր, ինքն ալ ուրախութեամբ փառք տալով
 Մատուծոյ՝ Յիսուսի մեծօրայ ըլլալը սկսաւ քա-
 ղողել անոնց, որ յուսով կը սպասէին : Ընանկ
 օրինաց ըսածին պէս կատարելէն ետքը, մէյ-
 տեղ առին Յիսուսը՝ նորէն իրենց Վազարէթ
 քաղաքը դարձան : Յիսուս ալ աստուածային

Հնորհրովր օրէ օր սկսաւ աճիլ ու մեծնալ, և ի մաստուծեամբ զօրանալ:

Յովսէփ ու Արյան Մարիամ սուխորութիւն ունէին որ տարին հեղ մը զատկին՝ Արուսաղէմ տաճարը ուխտ կ'երթային. մէկ անգամ ալ երբոր Յիսուս տասուերկու տարուան էր՝ ասանկ որ ելան ուխտ դացին, անկէց դառնալինի՝ ինչպէս եղաւ որ առանց իրենց գիտնալու Յիսուսը Արուսաղէմ մնաց: Իրենք ալ կարծելով թէ ուրիշ ճամբորդներու հետ մէյտեղ կու գայ՝ առջի բերանը հոգ չբրին. ետքը օրուան մը ճամբայ ընելէն ետե՛ կ'երբոր ասդիս անդին փրնտուեցին՝ ու չգտան նէ, նորէն Արուսաղէմ դարձան, և հոն իրեք օր վեր վար պտրտելէն ետքը՝ տաճարը գտան, որ վարդապետներուն մէջը նըստած՝ անոնց ըսածները մտիկ կը դնէր, ու իրենց բաներ կը հարցընէր. անանկ որ՝ ամէն լսողները կը զարմանային իրեն խնատութեանը ու Հնորհալի կերպով զուրցուածքներուն վրայ: Ընտեներ Արյան Մարիամ զարմանալով դարձաւ իրեն ըսաւ. « Արդի, աս ինչ բան ըրիր մեզի, որ ինչուան հիմա կը չարչրկէինք՝ ետեւէդ ինչ կեր քեզ կը փնտուէինք », Յիսուս ալ ըսաւ. « Օ՛հա ինչո՛ւ ուրիշ տեղ կը փնտուէիր. չէիք գիտեր որ ես իմ հօրս տանը մէջ պիտի ըլլամ », Ատքը ելաւ հետերնին՝ Ազգարէթ եկաւ, ու անոնց ձեռաց ներքեւ հնազանդութեամբ կեցաւ, և օրէ օր աւելի աճելով հասակով ու իմաստութեամբ, և սաստուածային Հնորհրովր լցուած՝ անանկ մարդիկներուն ալ սիրելի կ'ըլլար:

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Յիսուսի մկրտութիւնը , ու սատանայէն փորձուիլը :

Ստ. Քրիստոսի 30 : (Մատ . Գ . Գ : — Ղուկ . Գ . Գ :)

Յիսուսի Վրիստոսի աշխարհքիս յայտնուելու
 ատենը հասնելով Յովհաննէս Սկրտիչ , որ ին-
 չուան ան ժամանակը անասպառը կը ճննէր , Ս-
 տուծոյ հրամանովը ինքն ալ եկաւ Յորդանան
 գետին քովերը , ու սկսաւ ժողովրդոցը ապաշ-
 խարութիւն քարոզելով ասանկ ըսել թէ “ Ս-
 պաշխարեցէք , մտակցաւ Ստուծոյ թագաւորու-
 թիւնը ” : Յովհաննու Սկրտչի քով ով որ
 կերթար՝ անոր քարոզութիւնը մտիկ կ'ընէր ու
 զեզջ կու գար ապաշխարելով մեզքը կը խոստո-
 վանէր , Յովհաննէս զիրենք կը մկրտէր ՚ի նշան
 ապաշխարութեան : Ատքը բոլոր ժողովուրդը
 տեսնելով իր բարի վարքը ու սրբակաց կերպը՝
 իմացան թէ Ստուծոյ խրկուած մէկ մարդ մըն
 է Յովհաննէս Սկրտիչը . նաև վրան կարծիք
 գնացին թէ՛ մեսիան ինքը ըլլայ : Ս բանիս հա-
 մար երբոր մէկալ հրէայքն ալ քահանաներ
 խրկեցին իրեն՝ որ հարցընեն թէ “ Դուն ով
 ես ” , Յովհաննէս Սկրտիչը պատասխան տուաւ
 թէ՛ “ Աս մեսիան չեմ , հապա անոր կարապե-
 տը (այսինքն քրլաւուզն) եմ , ինչպէս Ասայի
 մարգարէն ըսեր է ինձի համար . Չայն բարեա-
 յոյ յանապատի . որ ելեր մեսիային առջևէն կու
 գամ՝ ճամբաները շտկելու ու պատրաստելու ,
 որ իմ ետեւէս պիտոր ան ալ հասնի . որ ես ար-
 ժանի ալ չեմ ծառայի սէս անոր կօշիկները

(այսինքն ոտից փոստաները) քահեյլու կամ վեր-
ցնեյլու : Այս միայն ջրով ձեզ կը մկրտեմ՝ ի
նչան ապաշխարութեան . բայց անիկայ պիտի
ձեզ մկրտէ Տոգևով Արքով որ կրակի պէս ձեր
մեղքը կ'երէ , : Արքոր Յովհաննէս աս քարո-
զութիւնները ու մկրտութիւնները կ'ընէր , Յի-
սուս՝ ալ երսուն տարուան չափ եղած՝ Ազարե-
թէն Յորդանան գետը գնաց , որ ինքն ալ մկր-
տուի : Յովհաննէս երբոր զինքը տեսաւ , «Վա-
լիցի , ըսաւ , ինձի պէտք է որ քեզմէ մկրտուիս ,
ու դուն իմ ոտքս կու դաս որ քեզ մկրտեմ , : Յի-
սուս ալ իրեն պատասխան տուաւ . « Տիմակու
Տիմա թող տուր՝ որ ասանկ ըլլայ . որովհետեւ ,
ըսաւ , մեզի կը վայել որ բոլոր արդարութեան
պարտքը կատարենք , : Այսպէս ըսելով երբոր
մկրտուեցաւ Յիսուս , ու ջրէն դուրս ելած ա-
զոթք որ կ'ընէր , յանկարծ երկինքը պատուեցաւ
բացուեցաւ՝ լոյս ծագեց , ու Տոգին Սուրբ ա-
ղանիի կերպարանքով Յիսուսի գլխուն վրայ
ինջաւ . երկինքէն ալ ահաւոր ձայն մը եկաւ
թէ «Վաւ ես իմ սիրական որդիս՝ որ քեզի եմ
հաւնէր , :

Յիսուս մկրտուելէն ետքը անապատը գնաց
քաշուեցաւ . և հոն քառսուն որ քառսուն զի-
շեր ծով պահելէն ետեւ որ անօթեցաւ , ան ա-
տենը սատանան եկաւ որ զինքը փորձէ , ու ը-
տաւ իրեն . « Թիւ որ դուն Մատուծոյ որդին ես
նէ՞՝ հրամայէ որ աս քարերս հաց ըլլան , : Յի-
սուս ալ պատասխան տուաւ թէ «Մատուածա-
շունչին մէջը գրուած է որ՝ միայն հացով մարդ
չսարիւր , հապա բոլոր Մատուծոյ տուած պա-
տուիրանքներովը , : Ատքը սատանան Յիսու-
սը վերցուց Արուսաղէմ տարաւ , ու տաճարին

բարձր աշտարակին (սցսինքն քուլէին) վրայ կե-
ցուցած՝ իրեն ըսաւ . « [Թ]է որ Մատուծոյ որդին
ես նէ , քեզ ասկէ վար ձգէ . որովհետեւ զբուած
է (Սաղմոսին մէջը) [Թ]է Մատուած քեզի համար
իր հրեշտակներուն ապրասպրեր է՝ որ քեզ ձեռ-
քերնուն վրայ վերցընեն բռնեն , որ չըլլայ [Թ]է
ոտքդ քարի զարնես , » : Յիսուս ալ ըսաւ . « Մը
տեղ աս ալ զբուած է [Թ]է՝ Չըլլայ որ փորձես
քու տէր Մատուածդ , » : Մնկէ ետքը սատանան
առաւ Յիսուսը մէկ բարձր լեռան մը վրայ հա-
նեց , անկէց բոլոր աշխարհքիս [Թագաւորու-
թիւնները , փառք ու պատիւը ցուցնելով՝ իրեն
ըսաւ . « Մը ամէն բաներս քեզի կու տամ՝ [Թ]է
որ առջևս իյնիս ինձի երկրպագութիւն ընես , » :
Մը ատենը Յիսուս դարձաւ . « Վնաս , ըսաւ ,
քովէս , կորիւր սատանայ . զբուած է որ՝ քու տէր
Մատուծոյդ երկրպագութիւն ընես , ու զան միայն
պաշտես , » : Մը փորձութիւններէս ետեւ հրեշ-
տակները եկան Յիսուսի քովը , ու իրեն սեղան
դրած կը ծառայէին : Մնկէ որ ելաւ դարձաւ
Յիսուս՝ որ ալ աշխարհքիս յայտնուի , և նորէն
Յորդանան գետին քովէն անցնելինս՝ երբոր
տեսաւ զինքը Յովհաննէս Սկրտիչը , (որ միշտ
հոն կեցած կը քարոզէր Վրիստոսի աշխարհք
զալուն վրայ , ու իր քովը մարդիկ առած իրեն
աշակերտ ալ շիներ էր) , Յիսուսը իրեն աշա-
կերտներուն ցուցնելով ըսաւ . « Մհա սն է իմ
ձեզի քարոզած Վրիստոսը Մատուծոյ գառը , որ
աշխարհքիս մեղքը պիտի վերցընէ , » : Մը որ լե-
ցին՝ ան աշակերտներէն երկուքը ելան Յիսուսի
ետեւէն գացին . և անկէ ետքը ուրիշներ ալ սկը-
սան Յիսուսի աշակերտ ըլլալ :

Գ Լ Ո Ւ Խ Է .

Կանա Գալիլեացոց հարսնիրք , և անկէ ետե
Քրիստոսի հանգրգած բաներք :

(Յովհ . Բ . Գ . 1)

Կանա ըսուած Գալիլեայի մէկ քաղաքը՝
Հարսնիրք մը եղաւ , որ հոն Յիսուսի մայրը
Սոյան Սարիամ հարսնեօրնեքուն մէկն էր ,
Յիսուս ալ հոն կանչուեցաւ՝ իր աշակերտներու
վը դնաց : Արքայոր առ հարսնիրքիս մէջը գինին
պակսեցաւ՝ որ ալ չմնաց , Սոյան Սարիամ եկաւ
Յիսուսի ըսաւ թէ՛ « Գինի չունին » : Յիսուս
ալ պատասխան տուաւ . « Սէր ինչ վրան պէտք է .
իմ ատենս ալ չէ եկեր » : Բայց Սոյան Սարիամ
զիտնալով Յիսուսի միտքը՝ ծառաններուն ա-
պրտաբեց որ , Յիսուս ինչ որ ըսէ նէ՛ անանկ ը-
նեն : Աս հարսնիրքին տունը վեց քարէ թակոյկ
(այսինքն ջրի տէստի) կար , որ ամէն մէկը երկու
կամ իրէք մար (այսինքն քառսուն կամ վաթ-
սուն հոխայի չտի) քան կ'առնէր . Յիսուս հրա-
մայեց որ զասոնք ջրով լեցընեն , ու տաճարապե-
տին (այսինքն սյլաքճը պաշիին) բերեն ցուցը-
նեն : Ասոնք ալ անանկ ինչուան բերանը ջրով
լեցուցին , ու տաճարապետին բերին . ան ալ եր-
բոր համը առաւ նէ՛ տեսաւ որ պատուական զի-
նի է եղեր . և չզիտնալով թէ աս ուսկից է ,
(բայց ծառաները զիտէին , որ ջուրը իրենք լե-
ցուցին) , դարձաւ փետային ըսաւ թէ՛ « Սոյորու-
թիւնը չէս զիտեր՝ որ առաջ աղէկ գինին կը
բաժնեն կու տան , և ետքը երբոր ալ խմած
կ'ըլլան , ան ատենը գէշը կու տան . ու դուն ա-

սոր ներհակը՝ ինչուան հիմա ինչու սրահեցիր
 ատ սրատուական գինիդ ,, : Հիտուս աս հրաշ-
 քովս պինտ առաջ ան մարդիկներուն յայտնեց
 իր մեծութիւնը , և ասով աշակերտներն ալ ա-
 ւելի հաւատացին իրեն :

Ընկէ ելաւ Հիտուս՝ իր մօրը և աշակերտնե-
 րուն հետ Ասիատնաում եկաւ , ու անկէց ալ
 մէկ քանի օրէն ետքը՝ զատկին սրատուումը
 Արուսաղէմ գնաց : Արքոր տաճարը մտաւ տե-
 սաւ՝ որ հոն տեղը կով, ոչխար , աղաւնի կը ծա-
 խէին , ու լուսնայափոփները (այսինքն սառաֆ-
 ները) նստած առուտուր կ'ընէին , Հիտուս մէկ
 չուանէ խարազան մը (այսինքն քանի մը) շի-
 նեց , ու անոնց վրայ սրդողելով՝ զիրենք ձեծելով
 սեղաննին (այսինքն թէզկեահհին) կործանեց ,
 ստակնին ցրուեց , անանկ զամէնքը դուրս ըրաւ
 վաճառեց , ըսելով թէ՝ « Տարեք ասկէց կոր-
 սընցուցէք , իմ հօրս տունը առուտուրի տուն
 մի ընէք ,, : Ըն ատենը Հրէաները դարձան ի-
 րեն ըսին . « Ի՞նչ նշանով կրնաս հաստատել
 մեզի՝ որ դուն ատ բանը ընելու իրաւունք ունե-
 նաս ,, : Հիտուս ալ առակով իրենց սրատասխան
 տուաւ , (իբր թէ ըսելով՝ Աշանը աս ըլլայ) .
 « Քակեցէք , ըսաւ , ատ տաճարը , ու տեսնէք
 որ ես զան իրեք օրուան մէջը նորէն կայնեցը-
 նեմ ,, : Հրէաներն ալ ըսին թէ՝ « Քառսունը-
 վեց տարի շինուեցաւ աս տաճարս , դուն ինչ
 պէս իրեք օրուան մէջ պիտի շինես ,, : Ալ ա-
 նանկ խմացան որ Հիտուս իր մարմինը՝ տաճարի
 նմանցընելով աս բանը ըսաւ . ինչպէս աշակերտ-
 ներն ալ Հիտուսի մեռնելէն և իրեք օրէն յա-
 ըութիւն առնելէն ետքը՝ աս բանս մտուրնին
 բերին , ու ըսածը խմացան որ ճմարխտ է եղեր :

Ըստ զատկին ատենը շատ մարդիկ տեսնելով Յիսուսի բրած հրաշքները՝ իրեն հաւտացին . բայց Յիսուս չէր խաբուեր, ու զինքը իրենց չէր հաւտար, աղէկ գիտնալով մարդկային անհաստատութիւնը :

Ըստ ատենս հաւատացեալներէն մէկն ալ՝ Աիկոզեմուսը եղաւ՝ որ իշխան մին էր փարիսեցի ազանդով, որ ուրիշ հրէաներէն գաղտուկ զիշերով Յիսուսի քովը եկաւ, որ ճշմարիտ հաւատքին բանը խմանայ . ու Յիսուսէ նորովեցաւ որ մարդ չկրնար երկնային արքայութիւնը երթալ ինչուան որ մկրտուելովը անոր հոգին նորէն ջրծնանի . և ասկէ ՚ի զատ Յիսուսի մարդեղութեան խորհուրդը սորվեցաւ, ու խմացաւ թէ Մատուծոյ սիրելուն չափը հոն հասաւ որ՝ չբխնայեց իր մէկ հատիկ որդին անոնց սիրոյն համար տուաւ, որ երթայ խաչուի ու մեռնի . և ով որ անոր հաւատայ նէ՝ փրկուի, ու ով որ չհաւատայ նէ՝ դատապարտուի :

Ետքը Լիւուսաղեմէն գէպ՝ ի Յորդանանի կողմը դարձաւ Յիսուս, ու ինքն ալ իր աշակերտներուն հետ սկսաւ քարոզ տալ մկրտութիւն ընել : Ըստ վրայ Յոհաննու Սկրտչին աշակերտները նախանձութիւն ցուցնելով՝ երբոր գացին իրենց վարդապետին գանգրտեցան, Յոհաննէս անոնց խրատ տուաւ ցուցուց թէ՝ Յիսուս ճշմարիտ մեսիան է . ու « Ես, բաւ, անոր առաքեալը ըլլալով ինչպէս որ ձեզի քարոզեր էի, ալ հիմա ժամանակը եկաւ որ՝ ան աճի մեծնայ, ու ես քաշուիմ սղափկնամ » : Մատուծալ անանկ կարգաւորեց, որ ասկէ ետեւ շատ չանցաւ՝ Յովհաննէս Սկրտիչը հերովգէսը խրատելուն համար՝ բռնուեցաւ բանտը մտաւ :

ԳԼՈՒԽ Ը.

Սանարացի կնիսեր պատմութիւնը, ու բազաւորագիւ
տոյին բժշկարիւնը :

ԱՄ Քրիստոսի 31 : (Յովհ . Գ : — Ղուկ . Գ .)

Յիսուս երբոր լսեց թէ Յովհաննէս Մկրտիչ բռնուեցաւ, ու գիտնալով Փարիսեցւոց իրեն դէմ նախանձութիւնը՝ ան կողմերէն ուզեց հեռանալ նորէն Ղալիլեա երթալ . ճամբան Սանարացւոց երկրէն անցնելնինի, կէս օրուան դէմ յոգնած՝ մէկ հորու մը քով նստաւ որ քիչ մը հանգչի : Ըն առե՛նը Սամարիա քաղքէն մէկ կնիկ մը եկաւ որ ան հորէն ջուր առնէ : Յիսուս ալ անկէց խմելու ջուր որ ուզեց, կամաց կամաց մէջերնին խօսք բացուեցաւ մեծիայի աշխարհք գալուն վրայ, և բանը հոն հասաւ որ՝ կնիկը դարձաւ հաւատաց Յիսուսի, ու շուտ մը վազեց քաղաքը քարոզեց ըսաւ թէ՛ « Ըսանկ մէկ մարգարէ մարդ մը կայ, որ կ'երեւայ թէ Քրիստոսն է » : Արբոր կնիկը Յիսուսի քովէն գնաց, աշակերտները տեսնելով որ Յիսուս կերակուրը մոռցեր բան չուզեր կոր ուտելու՝ միտքը ձգեցին որ հաց ուտէ : Յիսուս ալ պատասխան տուաւ թէ՛ « Աս ուտելու կերակուր ունիմ, որ դուք չէք գիտեր » : Աշակերտները սկսան մէկմէկու հարցընել թէ՛ ո՞վ իրեն ուտելու բան բերաւ : Ըն ժամանակը Յիսուս ալ ըսաւ . « Իմ կերակուրս ան է՝ որ զիս խրկողին կամբը ընեմ ու անոր գործքը կատարեմ » : Արբոր աս բաներս կը խօսէին, մէյ մ'ալ տեսնեն

որ կնիկը անդիէն խել մը մարդիկ հետը առած
 Յիսուսի քով բերաւ . ու անոնք ալ Յիսուսի
 հաւատացին . ետքը աղաչելով Յիսուսը առին
 հետերնին տարին՝ երկու որ հոն քովերնին բռ-
 նեցին . և նորէն Յիսուսի տուած քարոզները
 լսելով ուրիշ ալ շատ մարդիկ Սամարացոցմէ
 հաւատացին , անանկ որ՝ ան կնկանը կ'ըսէին
 թէ “ Լսուհետեւ չէ թէ քու խօսքիդ հա-
 մար կը հաւատանք , հասցա մենք մեր ակընջովը
 լսեցինք , ու գիտցանք որ ան է Ճմարտա փրկիչը
 բոլոր աշխարհքիս ” :

Ընկէ ալ երբոր ելաւ Յիսուս Վալիլեա ե-
 կաւ՝ ու իր Վազարէթ քաղաքը գնաց , ան ատե-
 նը հանդրպեցաւ կ'ըսեն Յիսուսի՝ Հրէաներուն
 ժողովարանը կամ սինակոկան մտնելը , ու Լա-
 տայի մարգարէին գրածը կարդալը թէ՛ Հոգի
 Տեառն 'ի Վերայ է՛ : Եւ երբոր Յիսուս աս բանս
 իր վրայ մեկնեց , ու Հրէից կուրուծիւնը և ա-
 պերախտութիւնը երեսնին տուաւ , այնչափ նա-
 խանձեցան ու սրդողեցան Յիսուսի վրայ , որ
 բռնեցին զինքը քաղքէն դուրս լերան գլուխը
 հանեցին , որ անկէց վար ձգեն մեռցընեն . բայց
 Յիսուս հրաշքով մեջերնէն դուրս ելաւ խալը-
 սեցաւ :

Ետքը երբոր նորէն Կանա Վալիլեացոց գը-
 նաց , ան տեղը մէկ թագաւորական ցեղէ մարդ
 մը կար , որ լսելով թէ Յիսուս եկեր է՝ քովը
 գնաց կ'աղաչէր որ հետը Կափառնաում գայ իր
 որդին բժշկէ , որ մեռնելու վրայ էր . Յիսուս
 ալ իրեն պատասխան տուաւ թէ “ Ինչուան
 հրաշք մը չտեսնէք նէ՛ չէք հաւտար ” : Ինչ ալ
 կ'արտօրցընէր կ'ըսէր . “ Տէր , շուտ ըրէ հասի՛ր՝
 որդիս չմեռած ” : Յիսուս ալ ըսաւ . “ Գուն

դնա՛ք քու որդիդ ողջ է , : Մարդն ալ հաւտաց ,
 ու երբոր ճամբայ ելաւ երթալու , մէյ մ'ալ
 տեսաւ որ իր ծառաները դիմացը ելան՝ իրեն ա-
 ւետիս տուին թէ « Որդիդ ալ աղէկ է , : Հայրն
 ալ ան ատենը հարցուց իրենց՝ թէ երբ բժշ-
 կուեցաւ . անոնք ալ ըսին թէ՛ « Արեկ եօթը
 ժամին ջերմը դադրեցաւ , : Ըն ատենը ինքն
 ալ խնացաւ որ՝ Հիսուս ըսելուն պէս թէ Որդիդ
 ողջ է , ան վայրկեանը անդին տղան բժշկուե-
 ր է . ուստի աս բանիս վրայ ինքն ալ իր տնովը
 տեղովը դարձաւ հաւատաց Հիսուսի : Ընկէց
 ետքը Հիսուս երբոր Կափառնաում դնաց , հոն
 ալ քարոզութիւն ընելով շատ հիւանդներ ու
 դիւահարներ բժշկեց , որ ասով Հիսուսի անունը
 չորս դին հռչակուեցաւ :

Գ Լ Ո Ւ Խ

Ասարկոց՝ նրաչքով անկ բանկը , ծովին աշկոծարիւնը
 դադրիլը , և Գերգետացոց դիւանարեկրուն
 բժշկութիւնը :

(Ղուկ . Ե : — Մատ . Ը : — Մարկ . Գ :)

Ընդամ մը Հիսուս Գալիլեա զաւատին մէջ՝
 Գեննեսարէթ ըսուած սղտի ծովուն քովը
 գտնուեցաւ , ու հոն ժողովրդոցը բազմութե-
 նէն նեղուած՝ տեսաւ որ երկու ձկնորսի նաւ
 կար սարսուղ կեցած . ասոնց մէկը Սիմոն Պետ-
 ըոսին էր , և մէկալը Հակոբոսի ու Հոսաննու՝
 Օւբեդեայի որդւոցը . Հիսուս ալ Սիմոնին
 նաւը մտաւ , ու անկէց սկսաւ ժողովրդոցը քա-
 ըող տալ : Արբոր քարոզը ընցաւ , Հիսուս Սի-

մանի ըսաւ որ՝ զէպ'ի ծովը բացուի, ու ուռիանը
 ձգէ ձուկ բռնէ: Սիմոն Պետրոսն ալ գանդը
 տեցաւ թէ՛ « Սարդապետ, բոլոր գիշերս աշ-
 խատեր ենք՝ բան մը չենք բռներ. բայց հիմա,
 ըսաւ, քու ըսածիդ կը հնազանդինք », և ա-
 նանկ երբոր ուռիանը ձգեցին՝ այնչափ ձկներով
 լեցուեցաւ, որ եթէ մէկալ նաւը վրայ չհասնէր
 չօգնէր նէ՛ սլատառ սլատառ կ'ըլլար ուռիանը.
 և ան մէկ քաշելովը երկու նաւն ալ ձկով անանկ
 լեցուեցան՝ որ ալ քիչ մնաց կ'ընկղմէին: Երբոր
 Սիմոն Պետրոս աս հրաշքս տեսաւ, ահաւելով ե-
 կաւ Հիսուսի ոտքը խնկաւ ու ըսաւ. « Տէր,
 քովէս հեռու կեցիր. որովհետեւ ես մէկ մեղա-
 ւոր մարդ մըն եմ », այնպէս ալ վախոցան մէ-
 կալիր հետը եղողները Հակոբոսը ու Յովհան-
 նէսը: Հիսուս ալ ըսաւ. « Մի վախնար, այ-
 սուհետեւ քու արուեստդ ձկան տեղը մարդ բըռ-
 նել պիտի ըլլայ՝ որ արքայութիւն տանիս », և
 Ետքը նաւը ցամաքին քովը քաշեցին, և ամէն
 բաներնին հոն թողուցին՝ վաղեցին Հիսուսի ե-
 տեւէն դացին, ու մէյ մ'ալ ձկնորսութիւն ընե-
 լու չդարձան:

Ընկէ ետեւ շատ շանցաւ որ՝ մէկ օր մըն ալ
 Հիսուս ուղեց որ իր աշակերտներուն հետ նա-
 ւով ան Վալիլեայի ծովուն մէկալ դին Վեր-
 գեսացւոց երկիրը անցնի. երբոր նաւը մը
 տան սկսան բացուիլ երթալ, Հիսուս մէկդին
 նաւուն խելքին (այսինքն քրջին) վրայ գլուխը
 բարձին դրաւ՝ ու կը բնանար: Ըն ատենը յան-
 կարծ մէկ սաստիկ հով մը ելաւ անանկ ալեկո-
 ծեց ծովը՝ որ կարծէին թէ նաւը ընկղմելու
 վրայ է: Ըս որ տեսան աշակերտները՝ վախեր-
 նէն սրտերնին փրթաւ, ու Հիսուսը արթընցը-

ներով կ'ըսէին . “ Արդասպետ վարդապետ , կը
 կորսուինք կոր , ելլիր մեզ խալըսէ , ” : Յիսուս
 ալ արթընցաւ ու ըսաւ . “ Ի՞նչ կայ . ձեր հաւատ-
 քին սպակասութիւնն է որ այդչափ վախցաք , ” .
 ու ելաւ՝ ծովուն հրամայելուն պէս թէ՛ Վաղրէ՛
 պապանձէ՛ , շուտ մը հովը կտրեցաւ՝ ու ծովուն
 ալիքը դադրեցան , խաղաղեցան : Վաւին մէջը
 եղողները ամէնքը երբօր աս հրաշքս տեսան ,
 սոսկալով սկսան մէկմէկու նայիլ ըսել թէ՛
 “ Ըս ո՛վ պիտոր ըլլայ , որ ասանկ հոյն ու ծովը
 մէկէն հրամանին կը հնազանդին կոր , ” : Երբօր
 անդիի ցամաքը Վերդեսացոց երկիրը ելան ,
 մէյ մ'ալ գիմացէն գերեզմաններէն երկու
 կատղած դիւահարներ կու գային , որ անանկ
 ցուցանքաւոր բան էին՝ որ մարդ չէր կրնար ան
 ճամբէն անցնիլ . ու ասոնք մերկ հոն տեղուանքը
 կը կենային , գիշեր ցորեկ կանչուրուտելով քա-
 րերով կը ծեծկուէին , և մարդ կարող չէր զա-
 սոնք բռնել՝ շղթայով ալ կապել : Ըս դիւահար-
 ները հեռուանց Յիսուս տեսնելուն պէս վա-
 զեցին եկան առջևը ինկան , ու կանչուրուտելով
 կ'ըսէին . “ Յիսուս , Արդի Ըստուծոյ , մենք
 քեզի հետ ի՞նչ բան ունինք՝ որ եկեր ես ա-
 տենէն առաջ մեզ կը տանջես կոր , ” . սրատ-
 ճառն որ՝ Յիսուս կը հրամայէր սատանային որ
 անոնցմէ ելլէ : Հարցուց Յիսուս թէ՛ “ Ձեր
 անունը ի՞նչ է , ” . անոնք ալ ըսին . “ Սենք Ի-
 գէոն կ'ըսուինք , ” (որ կը ցուցնէ թէ շատ սա-
 տանաներ էին մէկտեղ եկած մտած) : Ետքը
 ելլելու որ եղան՝ Յիսուսի աղաչեցին որ զիրենք
 դժոխքը չխրկէ , հապա ան կողմերը խողեր
 կ'արծէին , իրենց հրաման տայ որ ան խողերուն
 մէջը մտնեն . Յիսուս ալ հրամայեց որ անանկ

ըլայ : Ըն ստենը աս սատանաները ան մար-
դիկներէն ելած խողերուն մէջ մտնելուն պէս ,
խողերը՝ որ երկու հազարի չափ կային , անանկ
դիւահարեցան որ՝ բարձր տեղաց զիրենք ծովը
նետեցին ու բոլորը խողուեցան . խողերուն պա-
հապաններն ալ սոսկալով փախան քաղաքը դա-
ցին աս բաներս պատմելու : Վաղքի մարդիկն
ալ երբոր եկան տեսան որ դիւահարին մէկը
խելօքցած է իսուսի առջև նստած էր , զարմա-
ցան մնացին եղած հրաշքին վրայ . ու վախնա-
լով է իսուսի զօրութենէն՝ աղաչեցին որ ելլէ
իր տեղը երթայ : Երբոր է իսուս ալ նաւ մտաւ
որ դառնայ , աս բժշկուած դիւահարն ալ իրմէ
չէր բաժնուեր՝ կ'ուզէր որ հետը երթայ . բայց
է իսուս շնորհուց , հասա՛ « Տունդ դարձիր , Ը-
սաւ , ու դնա՛ սրտով Ըստուծոյ քեզի ըրած ո-
ղորմութիւնը » :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Անդամարտիկ բժշկութիւնը , Մատրեոս աստրեոյն
կոչուելը , Յայրոսի աղբիւսներ ու տնտեսուս կնկանք
բժշկութիւնը :

(Ղուկ . Ե : — Մատ . Թ : — Մարկ . Բ :

Երբոր է իսուս Վերդեսացոցմէ ելաւ Ղա-
լիլեա դարձաւ , ու Վափառնաում քաղաքը մէկ
օր մը տանը մէջ կը քարոզէր հրեից վարդա-
պետներուն և կարդացողներուն առջևը , որ չորս
դիէն իր քովը ժողովուեր էին որ լսեն , ան ատե-
նը չորս հոգի մէկ անդամալոյծ մը իր մահիծովը
(այսինքն եւթաղովը) վերցուցած եկան որ՝ է ի-

սուսի առջևը դնեն որ բժշկէ : Բայց երբոր ասոնք տեսան որ այնչափ ժողովրդոց բազմութենէ ճար չկայ որ դռնէն ներս խոթեն , կերպով մը ան Յիսուսի կեցած տեղին տանիքին վրայ ելան , ու առաստաղը քակելով բանալով , ասկէջ վերէն 'ի վար կախած՝ անդամալոյծը իր մահճիճովը Յիսուսի առջևը ինջկցուցին : Յիսուս ալ տեսնելով ասոնց հաւատքը՝ դարձաւ անդամալուծին ըսաւ . « Արդի , թողութիւն ըլլայ քու մեղքերուդ » : Եւ որ լսեցին իր քովը եղած կարդացողները , սկսան մտքերնուն մէջը դատել թէ Յիսուս հայհոյական բան կ'ըսէ . որ՝ միայն Եստուած կրնայ մարդուն մեղացը թողութիւն տալ : Յիսուս ալ իմանալով ասոնց ծուռ մտքը՝ իրենց հարցուց . « Եւ ինչ է որ կը մտածէք . մէկ անդամալուծի մը որը դիւրին (այսինքն քօրայ) է ըսելը . ան թէ՛ թողութիւն ըլլայ քու մեղքերուդ , թէ ըսելը՝ Այլի կայնէ մահճիճի վերցնուր ասկէ դնա՛ : Բայց դուք , ըսաւ , ան ալ դիտնաք որ՝ ես երկիրս վրայ իշխանութիւն ունիմ մեղաց թողութիւն տալու . ահա կը հրամայեմ քեզի (ըսաւ անդամալուծին) որ ելլես մահճիճի առնես քու տունդ երթաս » : Եւ որ ըսաւ Յիսուս , անդամալոյծը շուտ մը ելաւ կայնեցաւ՝ ներքեւը եղած մահճիճը կռնակը զարկաւ , ու փառք տալով Եստուծոյ անանկ տունը դարձաւ : Ալ աս հրաշքս ամէն տեսնողները զարմացուց , որ իրենք ալ փառք տալով Եստուծոյ կ'ըսէին թէ՛ « Երանկ բան տեսնուած չէր » :

Ենկէ ետքը տնէն դուրս ելաւ Յիսուս , ու քարոզելով մաքսատան (այսինքն կէօմբիւկին) կողմերը քալելնինի՝ մէկ մարդ մը տեսաւ Սատ-

Թէոս անունով, որ մաքսաւորութիւն կ'ընէր. Յիսուս դարձաւ ասոր ըսաւ. « Ելիք իմ հետս եկուր . » : Եւ ալ շուտ մը ամէն բանը (Թողոց՝ Յիսուսի ետեւէն դնաց) Ետքը ասիկայ Յիսուսը առաւ իր տունը տարաւ, ու փառաւոր սեղան մը ըրաւ Յիսուսի՝ իր աշակերտներուն հետ, և աս սեղանս ուրիշ իրեն բարեկամ մաքսաւորներ ալ կանչուած էին : Ս'արքաւորութեան արուեստը հրէից մէջը գէշ անուն ունենալով, և պիղծ ու անօրէն սեպուելով մաքսաւորները՝ Փարիսեցիները ու կարդացողները երբոր աս խնացան, սկսան Յիսուսի և իր աշակերտացը վրայ մտմտաւ թէ՛ մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կը նստին . Յիսուս ալ անոնց պատասխան տուաւ թէ՛ « Աղջերուն բժիշկ պէտքը չէ, հապա՛ հիւանդներուն . ես ալ չե՛ թէ արդարներուն՝ հապա մեղաւորներուն համար եկեր եմ, որ զիրենք ապաշխարութիւն ընելու կանչեմ . » : Ետք վրայ մէկ խօսք մ'ալ ելաւ որ՝ Յովհաննու Ս'կրտչին ու Փարիսեցիներուն աշակերտները շատ պար կը պահէն՝ երկայն աղօթք կ'ընեն, ու Յիսուսինները՝ ուտելու խմելու հետ են : Յիսուս ալ աս բանիս առակով պատասխան տալէն ետքը՝ ըսաւ . « Ետներ կու գայ որ իմ աշակերտներս ալ ատանկ ճգնութիւններ պիտի ընեն . » :

Երբոր աս բաներս Յիսուս կը խօսէր, մէկ հրէից իշխան մը Յայրոս անունով եկաւ Յիսուսի ոտքը ինկաւ՝ կ'աղաչէր որ իր մէկ հասակ տասուերկու տարուան աղջիկը, որ ալ մահուան դուռը հասեր էր՝ շուտով գայ ձեռքը վրան դնէ բժշկէ : Յիսուս ալ երբոր իր աշակերտներով ելաւ՝ որ հետը երթայ, ճամբան բազմութեան

ժողովրդոց մէջը մէկ տեւաատես կնիկ մը , (որ ինեզձը տատուերկու տարի աս հիւանդութեամբս կը տանջուէր , ու բոլոր ունեցածը բժիշկներու տալով՝ իրեն ցաւուն ճար մը չէր տեսած , հասցա եւեցներ ալ էր) Զիտուսի ըրած բժշկութիւնները լսելով , հոն եկաւ՝ ու բարի հաւատքով կամացուկ մը ետևէն Զիտուսի լաթերուն դպաւ , ու շուտ մը կատարեալ բժշկուեցաւ : Ըն առեւնը Զիտուս ալ իր ամենագիտութեամբը աս բանս իմանալով՝ ետևը դարձաւ դէպ ՚ի ժողովուրդը , ու հարցուց թէ “ Ո՞վ իմ լաթերուս դպաւ .. ” Ըշակերտներն ալ ըսին որ “ Վարդապետ , այսչափ ժողովրդոց մէջը սխմուեր էս , ու կը հարցընես թէ Ո՞վ ինձի դպաւ .. ” Զիտուս ալ ըսաւ . “ Վիտեմ որ մէկը ինձի մասնաւոր կերպով մը դպաւ , և ինձմէ զօրութիւն մը ելաւ .. ” ու նորէն սկսաւ չորս դին նայիլ՝ որ աս բանս ընողը գտնէ : Ըն ժամանակը երբոր տեսաւ կնիկը որ ըրած բանը ալ չժածկուիր կոր , դադատուկ ընելուն համար վախնալով ու դողալով ինքիրեն եկաւ Զիտուսի ստորը ինկաւ , ու տեղն ՚ի տեղը պատմեց թէ՛ ինտոր իրեն զպելուն պէս բժշկուեցաւ : Զիտուս ալ ըսաւ իրեն . “ Վիրտդ ամուր բռնէ , աղջիկս , քու հաւատքդ քեզ բժշկեց , խաղաղութեամբ երթաւ .. ” Ըն կնիկանը բանը ըննցընելու վրայ էր Զիտուս՝ որ անդիէն Զայրոս իշխանին տնէն մարդիկ վրայ հասան , ու հօրը ըսին թէ “ Ըղջիկդ մեռաւ , ալ վարդապետը մի աշխատցըներ .. ” Զիտուս ալ երբոր աս լսեց , դարձաւ սիրտ տուաւ իշխանին որ չվախնայ . “ Թէ որ , ըսաւ , հաւատքդ ամուր բռնես նէ՛ ան կ'ողջըննայ .. ” Ըսանկ երբոր Զիտուս տունը հասաւ , ու տեսաւ բազմութիւն

Հոն ժողովուած՝ լալկաններով գոռում գոչումը,
 (ինչպէս սովորութիւն է Հրէից որ մեռելին
 վրայ կ'ընեն), անոնց ըսաւ . « Ի՛նչ շփոթած
 կու լաք . աղջիկը մեռած չէ , հասցա քուն է , :
 Ի՛նոնք ալ ըսածին վրայ կը խնտային , հաստատ
 մտուրնին դնելով թէ մեռած է : Ետքը Հիսուս
 միայն իրեք աշակերտը՝ ու աղջրկանը հայրը
 մայրը հետը առած՝ գնաց մօտեցաւ մեռելին
 քովը , ու անոր ձեռքէն բռնեց ըսաւ . « Ի՛նչիկ
 քեզի կը հրամայեմ որ ելլես կայնիս , : Ի՛ս ը-
 սելուն պէս շուտ մը ողջընցաւ աղջիկը , ու ցատ-
 քեց ելաւ սկսաւ քալել : Հիսուս ալ աս հրաչ-
 քըս հաստատ ցուցրնելու համար՝ հրամայեց
 ծնողացը , որ աղջրկանը կերակուր տան որ ու-
 տէ : Եւ անկէ ելլելէն ետքը՝ Հիսուս ուրիշ
 բժշկութիւններ ալ ըրաւ՝ կուրերու ու դիւա-
 հարներու :

Գ Լ Ո Ի Խ Ժ Ա .

Պրոպատիկէի անդամարածին , ու ձեռքը շորցած
 մարդուն , և ուրիշ ցուազարներուն բժշկութիւնը :

(Յովհ . Ե : — Մատթ . ԺԲ : — Ղուկ . ԺԳ :

Ի՛նչամ մըն ալ զատկի տօնին Հիսուս Երու-
 տաղէմ գնաց . հոն մէկ աւազան մը (այսինքն
 հաւուզ մը) կար Պրոպատիկէ կամ Իւթհեզ-
 դա ըսուած . աս աւազանին քովը կերպ կերպ
 ցուազարներ կեցած կը սպասէին , որ երբօր
 հրեշտակ Իստուծոյ ան ջուրը դայ խառնէ նէ՛
 զիրենք մէջը ձգեն . ու ո՛վ որ ան ջուրը խառնե-
 լու ատենը առաջ զինքը կը ձգէր նէ՛ ան միայն

կատարեալ կը բժշկուէր, ինչ ցաւի տէր որ ըլլար նէ : Յիսուս աս տեղս մէկ մարդ մը տեսաւ, որ երսունըութը տարի էր որ անանկ ցաւազար մնացեր էր. ասոր քովը գնաց հարցուց իրեն թէ « Ողջըննալ կ'ուզէս մի », : Ըն ալ ըսաւ. « Տէր, մէկ մը չունիմ որ զիս ատենովը բունէ աւազանը ձգէ, ու ես ինչուան որ շարժիմ՝ միշտ ուրիշը իմ կարգս կ'առնէ », : Ըն ժամանակը Յիսուս իրեն ըսելուն պէս թէ՛ « Այլիւ կայն, վերցուր մահիձգ ու գնա », : շուտ մը մարդը ըսնացաւ, ու իր մահիձը կռնակը առած ելաւ կը պտըտէր. բայց ան օրը շարաթ ըլլալով՝ շրէաները երբոր աս տեսան, սկսան մարդուն վրայ սրդողիլ ըսել թէ՛ « Ինչու շարաթ օր, որ արդեւուած է յօրինաց, մահիձգ վերցուցեր կը տանիս », : Ըն ալ իրենց պատասխան տուաւ թէ՛ « Օ իս բժշկողը ինձի ըսաւ որ այսպէս ընեմ », : շրէաներն ալ հարցուցին թէ՛ « Ըն ինչ մարդ է որ քեզի ատանկ ըսաւ », : Բժշկուածն ալ շէր գիտեր ո՞վ է. ինչու որ՝ Յիսուս բժշկելուն պէս անտեղէն գնաց երեսը պահեց : Բայց ետքը տաճարին մէջը աս մարդուս հանդրպեցաւ Յիսուս, ու ըսաւ իրեն. « Ըն ըսնացար, նայէ որ մէկ մին ալ չմեղանչես, որ աւելի գէշ չըլլայ բանը », : Ս'արդն ալ անկէ ետքը գնաց շրէաներուն պատմեց թէ՛ զինքը բժշկողը Յիսուսն էր, Ընոր համար շրէաներն ալ սկսան Յիսուսը հաւածել, որ շարաթ օր ասանկ բան ըրեր է : Յիսուս ալ իրենց պատասխան տուաւ թէ՛ « Ինչ պէս իմ չայրս միշտ գործք կ'ընէ, անոր հետ ես ալ կ'ընեմ », : Այլ աս բանիս համար աւելի կը կատողէին շրէաները՝ ու կ'ուզէին որ Յիսուսը սպաննեն, ինչու որ՝ չէ թէ միայն շարաթ օր

չէր պահեր, հասպա զՄատուած ալ իրեն հայրն է կ'ըսէր, ու ասով զինքը Մատուծոյ հետ հաւասար կ'ընէր: Մն ժամանակը Յիսուս ալ երկայն վարդապետութեամբ աս շրէից իրեն վրայ առած կարծիքնին հաստատեց թէ ինքը չօր Մատուծոյ հաւասար՝ Որդի Մատուծոյ է:

Միկէ ետև մէկ հեղ մ'ալ Յիսուս իր աշակերտներուն հետ շարաթ օր արտերուն մէջէն անցնելնինի, աշակերտները անօթենալով անկէց գարիի կամ ցորենի հասկեր փրցուցին, ու ատերնուն մէջը շփելով ստրկեցին ու կերան: Մտոր վրայ ալ երբոր Փարիսեցիքը սկսան մամբռալ թէ շարաթ օրը սուրբ չեն պահեր՝ կը բանին, Յիսուս Վաւիթ մարդարէին՝ ու քահանաներուն օրինակներովը զիրենք պատանձեցուց: Մայց անոնք կուրացեալ ըլլալով, մանուաւնդ Փարիսեցիները, նորէն անոր մէկալ շարաթը Յիսուս սինակոկային մէջը բարոզ տալնինի՝ և հոն ժողովրդոց մէջը մէկ մարդ մըն ալ կար որ աջ ձեռքը չորցեր էր, Յիսուսի վրայ ուղելով շարախօսութիւն ընել՝ փորձելով իրեն հարցուցին թէ՝ «Շարաթ օր բժշկութիւն ընել կ'ըլլայ մի ..»: Յիսուս ալ անոնց չար միտքը հասկընալով ան ձեռքը չորցած մարդը առջևը կանչեց կայնեցուց, ու դարձաւ անոնց հարցուց թէ՝ «Շարաթ օրը բարի բան ընելը մի աղէկ է՝ թէ չարութիւն գործելը. մէկին կեանքը, ըսաւ, ասպրեցընելը մի, թէ թողու որ կորսուի՝ ո՞րը աղէկ է ..»: Վաւ աս ալ հարցուց թէ՝ «Չեղմէ մէկը ոչխար մը ունենայ, ու անիկայ շարաթ օրը երթայ փոս մը խնայու ըլլայ նէ՝ չերթա՞ր մի ան ոչխարը բռներ անկէց հաներ. հասպա մարդը, ըսաւ, որ ոչխարէն շատ աւելի պիտուական

է, պէտքը չէ որ շաբաթ օր բժշկուի .: Այս աս
բաժնեկրօյն Յիսուս նորէն զանոնք պապանձե-
ցնելով՝ հրամայեց ան մարդուն որ ձեռքը եր-
կրնցնէ . ան ալ շուտ մը բժշկուեցաւ՝ ու ձեռ-
քը երկրնցուց, որ մէկալ ձեռաց պէս ողջ առողջ
եղաւ :

Ասոր պէս ուրիշ անգամ մ'ալ՝ Յիսուս շա-
բաթ օր սինակոկան քարոզելնինի, ան ժողովրդ
դոց մէջը մէկ կնիկ մը կար, որ տասնութը տա-
րի էր որ սատանան անոր մէջը մտեր էր, ու մէջ-
քը ծռած բռնուեր էր՝ որ վեր չէր կրնար նայիլ :
Յիսուս աս կնիկը առջևը կանչեց, ու ձեռքը
վրան դրած՝ բռնելուն պէս թէ՛ «Մնիկ, դուն ալ
հիւանդութենէդ խալլաւեր ես .», շուտ մը ան
ողորմելին բժշկուեցաւ շահուեցաւ, ու փառք
կու տար Աստուծոյ : Սինակոկային վերահեցուն
զաս երբոր տեսաւ, Յիսուսի բրածին վրայ սրբ-
դողելով՝ շեխեց ժողովուրդը ու ըսաւ . «Շաբ-
թուն մէջը վեց օրը գործք ընելու համար է . ան
օրերը եկէ՛ք որ բժշկուիք, չէ՛ թէ շաբաթ օ-
րը .: Յիսուս ալ ասանկ պապանձեցուց զինքը
թէ՛ «Շաբաթ օր օրէնքը թող կու տայ որ
ամէն մարդ իր սնասունը ախտէն արձրկէ տա-
նի ջուր տայ . հապա, ըսաւ, աս կնիկս որ Աբ-
րահամ նահապետին զաւակներէն ըլլալով՝ տաս-
նութը տարի է որ սատանայէն կապուած էր,
պէտքը չէր մի՛ շաբաթ օրը արձրկել ազատել .» :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Տասուերկուս առաքելոց ընտրութիւնք , յորտօին և
հարիւրապետին ծառային բժշկութիւնք :

(Դուկ . 2 : — Մատթ . Ե . Ը 1)

Յիսուս մէկ հեղ մը լեռը ելաւ՝ որ մինաւոր
աղօթք ընէ , և ան բոլոր գիշերը հոն անցնե-
լէն ետքը՝ առտուանց ինջաւ քօլը կանչեց իր
հաւատացեալները , ու անոնցմէ տասուերկու
հոգի ընտրեց՝ իրեն առաքեալներ անուանեց ,
որ միշտ հետը գտնուին՝ և պէտք եղած ատենը
զիրենք ասոխ անդին խրկէ քարոզելու ու բժշ-
կութիւն ընելու : Այլ ասոնց անունները կ'ը-
սուէին . Ա . Սիմոն , որ Յիսուս անունը փոխեց
Պետրոս զրաւ . Բ . Յակոբոս . Գ . Յովհաննէս
աւետարանիչը . ասոնք երկու եղբայր Օ երե-
գեայի որդիքն էին , և ասոնց անունն ալ Յիսուս
փոխեց՝ Բաներեգէս զրաւ , որ Որդիք Որոտ-
ման ըսել է . Դ . Լ'նդրէաս՝ Սիմոն Պետրոսի
եղբայրը . Ե . Փիլիպպոս . Զ . Բարդուղիմէոս .
Է . Մատթէոս մարտաւորը , որ աւետարանիչ ե-
ղաւ . Ը . Թովմաս . Թ . Յակոբոս Պղտի ըսուա-
ծը՝ Լ'լիէոսի որդին . Ժ . Թադէոս , որ Յուդա
ալ կ'ըսուէր . ԺԱ . Սիմոն Կանանացի կամ՝ Կա-
խանձայոյղ . ԺԲ . Յուդա Իսկարիովտացի , որ
ետքը Յիսուսը մասնեց : Լ'ս առաքեալները ըն-
տրելէն ետեւ՝ Յիսուս իրենց մասնաւոր խրատ-
ներ տուաւ . և ան ատենը երբոր ժողովուրդն ալ
վրայ եկան թափեցան , նստաւ իրենց ան երկայն
քարոզութիւնը ըրաւ , սկսելով ինը երանութե-

նէն : Ատքը երբոր լմընցաւ լեռնէն վար ինջաւ
 Յիսուս , առջևը մէկ բորոտ մարդ մը ելաւ , որ
 երկրպագութիւն ընելով կ'ըսէր . « Տէր , թէ
 որ կամենաս նէ՛ կարող ես զիս բժշկել . » : Յի-
 սուս ալ իրեն ըսելուն պէս թէ՛ « Առգեմ որ
 բժշկուիս . » , շուտ մը բորը վրայէն գնաց՝ օրբուե-
 ցաւ . ու ետքը Յիսուս իրեն ապրսպրեց որ աս-
 դիս անդին չձայնձընած՝ մովսիսական օրինաց ը-
 սածին պէս երթայ ինքրդինքը քահանային ցու-
 ցընէ , և աս բժշկութեանս նշան՝ Մատուցոյ զո՛հ
 մատուցանէ :

Մնկէ ետև Յիսուս երբոր Վափառնատում
 քաղաքը գնաց , հոն մէկ հարիւրապետ մը (այս-
 ինքն իւզոպաշի մը) կար , որ իրեն մէկ հատիկ սի-
 րական ու պիտուական ծառան սաստիկ հիւան-
 դութենէ պառկած՝ ալ մեռնելու վրայ էր . ասի-
 կայ այլազգի ըլլալով և ինքիւրեն սիրտ չընելով
 որ Յիսուսի դայ , հրէից խօսքի տէր մարդիկը
 խրկեց՝ որ երթան Յիսուսի աղաչէն , որ դայ
 բժշկէ : Յիսուս ալ անանկ երբոր ելաւ որ եր-
 թայ , ու ալ անոր տունը մօտեցեր էր , հարիւ-
 րապետը իր բարեկամները Յիսուսի դէմը խոր-
 կեց աղաչելու , որ չաշխատի՝ ինչուան տուն չգայ-
 որովհետև , ըսաւ , ինքը անարժան էր աս սր-
 տուոյս . անանկ որ՝ ինքն ալ սիրտ չըրաւ Յիսու-
 սի առջևը գալ երևնալ : Մայց այսու ամենայ-
 նիւ ետքը երբոր իմացաւ որ Յիսուս մտիկ չըներ
 առաջ կու գայ կոր , ան ատենը հարիւրապետը
 վազեց Յիսուսի առջև ելաւ , ու խոնարհու-
 թեամբ սկսաւ իրեն ըսել . « Տէր , մի աշխատիր
 ինձի գալու . ես արժանի չեմ որ իմ տունս մտ-
 նես , հապա մէկ խօսքդ միայն հերիք է իմ մարդս
 բժշկելու . » : Մը որ լսեց Յիսուս՝ վրան շատ զար-

մանք ցուցուց , ու դարձաւ իր հետը եղած ժո-
ղովրդոց ըսաւ . “ Ամարիտ կ'ըսէ՛մ ձեզի , որ
Իսրայելացւոց մէջն ալ այսչափ հաւատք չե՛մ
տեսեր . ուստի դիտնաք որ չորս դիէն արեւելքէն
ու արեւմտքէն սիտոր թափին արքայութիւնը՝
Բքրահամու , Իսահակայ ու Յակոբայ հեա . ու
անոնց որդիքը դուրս պիտոր իյնան դժոխք եր-
թան .” Ետքը հարիւրապետին ալ ըսաւ . “ Տե-
ղը դարձիր գնա՛ , ու ինչպէս հաւատացիր նէ
թող անանկ ըլլայ .” Եւ սա բանս ըսելուն պէս
հիւանդը բժշկուեցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Կային յաղթին մեռելիս ողջնեալը , մեղաւոր կեկաներ
դարձը , սերմանացանիկ ստակը :

(Ղուկ . Է : — Մատթ . ԺԵ . ԺԲ : — Մարկ . Գ .)

Ետք մէկալ օրը Յիսուս իր աշակերտներովը
ելաւ որ Կային ըսուած քաղաքը երթայ . ու եր-
բար քաղքին դրանը մօտիկցան , տեսնեն որ ան-
կէց մէկ մեռել մը կը հանէին , որ որբեարի կըն-
կան մը մէկ հատիկն էր , ու հետը շատ ժողո-
վուրդ ալ կային : Երբոր մօրը լացը տեսաւ Յի-
սուս՝ իր գութն ալ շարժեցաւ վրան , գնաց ձա-
ղին մօտեցաւ , ու մօրը ըսաւ թէ , “ Սի լար .”
ետքը դարձաւ մեռելին՝ ըսածին պէս թէ , “ Ս՛վ
պատանի , քեզի կը հրամայե՛մ որ ելլես .” , շուտ
մը մեռելը ողջնցաւ ելաւ նստաւ , ու սկսաւ խօ-
սիլ զուրցել : Եւ որ տեսան ժողովուրդը՝ զար-
մացան մնացին , ու Բստուծոյ փառք տալով սկը-
սան ըսել . “ Բստուած մեզ կը սիրէ եզեր՝ որ
մէջերնիս այսպէս մեծ մարդարէ մը հանեց .” :

Ըս բանս չորս դին Հրէաստանի մէջ տարածուելով, նաև բանտին մէջը Հիսուսն էր Վերաջին գացին պատմեցին թէ՛ Հիսուս այսպիսի մեծամեծ սքանչելագործութիւններ կ'ընէ. ան ալ իր աշակերտները Վրիստոսի հաւատքին վրայ հաստատելու համար՝ անոնցմէ երկուքը իրկեց Հիսուսի հարցընելու թէ՛ «Ղուսն դալու մեծիանն ես՝ թէ՛ ուրիշի սպասենք», : Հիսուս ալ ան ատենը անոնց առջևը հիւանդներու, կուրերու ու դիւահարներու բժշկութիւններ ընելով՝ իրենց ապրօսյրեց որ երթան տեսածնին Հիսուսն էր Վերաջին պատմեն : Եւ անկէ ետքը Հիսուս սկսաւ ժողովրդոց առջևը Հիսուսնու Վերաջին վրայ փառաւոր դոխասանքներ ըսել, թէ անոր պէս մեծ մարդարէ աշխարհքս եկած չէ, ու վայ տուաւ Հրէից, որ այսպիսի մարդութարողութեամբը չարժեցան՝ իրենց մեղքէն չգարձան :

Ընկէ ետև մէկ օր մը փարիսեցիին մէկը Անանն ըսուած՝ Հիսուս իր տունը հացի կանչեց. ու երբոր Հիսուս անոր սեղանը նստեր էր, ան քաղքին մէջը մէկ յայտնի մեղաւոր կնիկ մը կար, ասիկայ խմանալով որ Հիսուս հոն է, հետք ազնիւ անուշահոտ եղ առած՝ եկաւ Հիսուսի ոտքը ինկաւ, և այնպէս կու լար՝ որ արցունքովը Հիսուսի ոտուքները կը թրջէր, զըլխուն մազերովը կը սրբէր, ու ոտուքները պագնելով ան եղը վրան կը քսէր : Անանն փարիսեցին երբոր աս տեսաւ, ինք իրեն մտքին մէջը կ'ըսէր թէ՛ «Հիսուսը թէ՛ որ մարդարէ մարդ մը ըլլար նէ, կ'իմանար թէ՛ ատ մեղաւոր կնիկ մըն է որ իրեն կը դպչի կոր», : Հիսուս անոր միտքին դատողութիւնը խմանալով իրեն ըսաւ .

« Երևան , մէկ բան մը քեզի պիտոր հարցնեն .
 մէկ մարդու մը երկու հոգի պարտական էին ,
 մէկը հինգ հարիւր դահեկան տալիք ունէր ,
 ու մէկալը յիսուն . պարտքին տէրը տեսնելով որ
 ասոնք կարողութիւն չունին՝ երկուքին ալ նոր-
 հէց թողուց իրենց տալիքը . հիմա ինչ կ'ըսես ,
 ըսաւ . « աս երկուքէս ո՞րը աւելի կ'ըսիրէ ան պարտ-
 քը թողուցող մարդը . » Երևանն ալ պատասխան
 տուաւ թէ « Ինձի անանկ կ'երևայ թէ ան՝ որ
 շատ պարտք ունէր . » Զիտուս ալ իրեն ըսաւ .
 « Երեսն է ըրած դատաստանդ . » ու ետքը
 դէպ՝ ի կնիկը դարձաւ՝ նորէն Երևանին ըսաւ .
 « Ար տեսնես աս կնիկը ինչ ըրաւ . ես քու տու-
 նդդ եկայ՝ ու դուն (ինչպէս հիւրասիրութեան
 սովորութիւնն է) ջրով ոտքս չլուացիր , ասիկայ
 իր արցունքովը ոտքս թրջեց՝ ու մազերովը զրա-
 սրբեց . դուն մէկ սիրոյ համբոյր մը ինձի չտուիր ,
 ու աս քանի որ նստեր եմ՝ ոտուրներս պահնե-
 լէն չզայրիր . եղով դուն իմ գլուխս չօժեցիր ,
 ու ան անուշահոտ եղով օժեց . ուստի քեզի աս
 կ'ըսեմ որ՝ իր այնչափ ըրած մեղքերուն թողու-
 թիւն ըլլայ , պատճառն որ՝ զիս շատ սիրեց . »
 Ետքը կնիկանն ալ դարձաւ ըսաւ . « Ի՞նչ որ մեղ-
 քերուդ թողութիւն ըլլայ . » Ինչ որ ըսաւ , ան
 տեղը նորէն ուրիշները սկսան մտքերնուն մէջը
 դատել թէ՛ Զիտուս ո՞վ է որ մարդու մեղաց
 թողութիւն կու տայ : Ինչ ատենը Զիտուս ալ
 նորէն կնիկանը ըսաւ . « Ի՞նչ հաւատքդ քեզ
 փրկեց , խաղաղութեամբ ելիր տեղդ դնա . » :
 Զիտուս ասիկէ ետեւ քաղքերները ու գեղերը
 պտրտելով , և ժողովրդոց կերպ կերպ առակնե-
 րով քարոզութիւն ընելով , աս առակն ալ ըսաւ
 թէ « Ե՛կ սերմանացան մը (այսինքն էքինձի մը)

իր արտը որ կը ցանէր, ան հունտերէն մէկ մասը ճամբուն վրայ ինկաւ, որ կոխուեցաւ՝ ու թըռչունները եկան կերան. մէկ մասն ալ ապառաժ տեղուանք ինկաւ, որ հողուն մէջը արմատ չունենալով՝ ծլելուն պէս արեուն տարէն չորցաւ. և մէկալ մասը փուշերու մէջ ինկաւ, ու հոն բուսնելով խղզուեցաւ պտուղ չտուաւ: Բայց ան մասը որ աղէկ ու պարարտ տեղը ինկաւ, բուսաւ առեցաւ առատ պտուղ տուաւ, անանկ որ՝ ասոնցմէ ոմանք մէկին երսուն, ոմանք՝ վաթսուն, ու ոմանք ալ հարիւր տուին: Բայ առակս աշակերտները աղէկ մը որ չհասկըցան՝ ետքը նորէն հարցուցին, Յիսուս ալ մեկնեց իրենց. « հունտը, բուս, Բստուծոյ խօսքն է. ճամբան, ուր որ հունտը ինկաւ՝ լողներուն մէկ մասն է, որ շուտ մը կուզայ սատանան՝ անոնց մտքէն Բստուծոյ խօսքը կը վերցընէ, որ չըլլայ թէ հաւտան ու փրկուին: Բապառաժ երկիրը անոնք են, որ Բստուծոյ խօսքը լսելուն պէս՝ թէպէտ առջի բերանը մէկէն ուրախութեամբ կ'ընդունին, բայց արմատ չըձգելով՝ քիչ մը ատեն կը հաւտան, ու ետքը փորձութիւն մը կամ նեղութիւն մը վրանին գաղուն պէս՝ կը յաղթուին կ'իյնան: Փուշերու մէջ ինկած հունտը զանոնք կը նշանակէ, որ թէպէտ Բստուծոյ խօսքը կը լսեն, բայց աշխարհքիս զբաղմունքներով կամ հարստութիւններով և ուրիշ բաներով խղզուած՝ պտուղ չեն ՚ի տար: Իսկ աղէկ երկիրը ինկած հունտը զանոնք կը ցուցնէ, որ բարի սրտով Բստուծոյ խօսքը կ'ընդունին՝ կը պահեն, ու համբերութեամբ պտուղ կու տան, մէկին հարիւր՝ կամ վաթսուն՝ կամ երսուն . . :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ .

Յովնաննու Մկրտչի գլխատուճը , Յիսուսի մինց հացով ,
և կորը հացով հագարաւոր մարդ կշտացընելը ,
և ծովուն վրայ երեկայր :

Ըճ Քրիստոսի 32 : (Մատթ . 24 : — Մարկ . 2 : —
Ղուկ . 9 : — Յովհ . 2 :)

Հերովդէս Չորրորդապետ ըսուած Հրէաս-
տանի թագաւորը խել մը ատենէն ՚ի վեր Յով-
հաննէս Մկրտիչը բռներ բանտը գրեթէ . սլաւ
ճառն որ՝ Յովհաննէս կը յանդիմանէր ու կը
խրատէր զինքը իր գայթակղական պղծագոր-
ծութեանը համար , որ իրեն եղբօրը կնիկը Հե-
րովդիա ըսուածը՝ ինքը աւեր յափշտակէր էր :
Ըս բանիս համար թէպէտ Հերովդէս կ'ուզէր
որ Յովհաննէս Մկրտիչը սպաննէ , բայց ժողո-
վրդէն կը վախնար . որովհետեւ ամէնքը Յով-
հաննէսը մեծ մարգարէ կը սեպէին , այնչափ որ
Հերովդէս ալ սուրբ ու արդար մարդու տեղ
դրէր էր զինքը : Ըստ ամենայնիւ երբոր
Հերովդէսի ծննդեան օրը եկաւ , որ ան ատենը
Հերովդէս իր իշխաններուն թագաւորական
սեղան ըրաւ , անոնց առջևը Հերովդիայի աղ-
ջիկը երբոր ելաւ խաղաց , Հերովդէս այնչափ
հաճնեցաւ ասոր խաղը , որ երգում ըրաւ՝ աղջի-
կանը ըսաւ թէ « Ի՞նչ պարզեւ որ կ'ուզես նէ
կու տամ , թագաւորութեանս կէսն ալ ուզես
նէ . » Ըջիկը աս բանիս վրայ առաջուց իր մօր-
մէն խրատուած ըլլալով՝ ձեռքը մէկ սկուտեղ
մը (այսինքն թէփսի մը) բռնած Հերովդէսէն

ինդրեց որ Յովհաննու Մկրտչին գլուխը անոր վրայ դրած իրեն տայ : Հերովդէս առջի բերանը աս բանիս դժուարութիւն ցուցուց . բայց ետքը ըրած երգումը պատճառ բերելով՝ խրկեց բանախն մէջը գլխատել տուաւ , ու աղջրկանը ուզածին պէս սկուտեղով գլուխը բերին իր ձեռքը տուին . ան ալ տարաւ իր Հերովդիս մօրը տուաւ : Ետքը Յովհաննու Մկրտչին աշակերտները գացին մարմինը վերուցին , ու եկան աս բանս Յիսուսի պատմեցին :

Ըն ատենը Յիսուս ալ Հերովդէսի ըրած չարութիւնը լսելով , և գիտնալով թէ իր վրայ ալ խնացեր է , ու ետեւէ ինկեր կը փնտռէ թէ ո՞վ պիտոր ըլլայ Յիսուսը՝ ինքն ալ Հերովդէսի իշխանութեան տեղէն ելաւ , աշակերտներով նաւը մտաւ դէպ ՚ի Րեթսայիդա գնաց : Ժողովուրդն որ խնացաւ՝ չորս դիէն Յիսուսի վրան ժողվեցան . ինքն ալ անոնց հետ մէկ անտպատ լեռ մը ելաւ , ու հոն իրենց քարոզ կու տար , անոնց ցաւագարները կը բժշկէր : Երբոր ասանկ քարոզութիւնը երկնցաւ՝ որ կերակուրին ատենն ալ հասաւ , Յիսուսի դուժը շարժեցաւ ժողովրդոցը վրայ , ու փորձելով Փիլիպպոսի հարցուց թէ՛՝ “ Ես յաջափ մարդու ուսկից հաց պիտոր զնէնք որ ուտեն ” : Ըն ալ ըսաւ որ “ Երկու հարիւր դահեկանի հացը ասոնց հերիք չէ՛ մէկ մէկ պատառ ալ ուտելու որ ըլլան ” : Ընկէ ետեւ քիչ մ’ալ որ անցաւ , առաքեալները Յիսուսի ըսին թէ՛՝ “ Ը իրիկուն եղաւ . թնղ տուր որ ժողովուրդը ամէն մարդ իրենց տեղը երթան հացերնին ուտեն ” : Յիսուս իրենց ըսաւ . “ Պէտքը չէ՛ որ երթան , անոնց ուտելիքը դուք տուէք ” : Ընդրէաս ալ ըսաւ թէ՛՝ “ Սէնք քովերնիս բան

չունինք . հապա հոս մէկ մանչ մը կայ որ միայն
 հինգ դարիէ հաց՝ ու երկու ձուկ ունի . բայց
 ան ինչ պիտոր ըլլայ այնչափ մարդոցը .,՝ Յիսուս
 ալ անոր ըսածը առջևը բերել տուաւ , ու հրա-
 մայեց որ ժողովուրդը դաս դաս հարիւր հարիւր՝
 յիսուն յիսուն խտտերուն վրայ նստեցնեն . և
 ան հինգ հացը ու երկու ձուկը ձեռքը առաւ
 օրհնեց , ու մանրելով աշակերտներուն տուաւ՝
 որ ան մարդոցը բաժնեն , որ հինգ հազարի չափ
 էին՝ կնիկներէն ու տղաքներէն ՚ի զատ : Եւ տե-
 զը ասոնք ամէնը աղէկ մը կշտանալէն ետքը՝ Յի-
 սուս աշակերտացը ապրսպրեց որ եւելցուկ կտո-
 թուանքը ժողովէն մէկտեղ պահեն . որ տասուեր-
 կու սահառի (կամ սէփէթ) լեցուց , ու խել մըն
 ալ ձուկէն աւելցաւ : Եւ մեծ հրաշքս ժողովուր-
 զը տեսնելով՝ Յիսուսի վրայ խիստ սէր ձգեցին ,
 սկսան ըսել թէ՛ . « Եւ ճմարիտ մեսիան է ,, , ու
 անանկ մէջերնին խորհուրդ ըրին , որ երթան
 առնեն զինքը՝ իրենց թագաւոր դնեն : Բայց
 Յիսուս աս բանս որ իմացաւ , երեսը ծածկեց՝ ե-
 լաւ մինաւոր նորէն լեռը քաշուեցաւ , ու աշա-
 կերտաց ըսաւ որ՝ իրենք նաւով ծովին մէկալ
 դին անցնին , ինչուան ինքն ալ ցամաքէն քալե-
 լով ետենին գայ : Արբոր աշակերտները նաւը
 մտան՝ բացուեցան , ու գիշերն ալ վրայ հասած՝
 զիրենք մէկ սաստիկ հով մը առաւ՝ և անանկ
 ալեկօծելով որ կ'երթային , մէյ մ'ալ տեսնեն
 որ անդիէն ալիքներուն վրայ Յիսուս քալելով
 դէպ իրենց կու գար : Եւ ատենը ասոնք շփո-
 թած սկսան կանչուրուտել . Յիսուս ալ անդիէն
 իրենց կանչեց թէ՛ . « Այս եւմ , սրտերնիդ ամուր
 բանեցէք , մի վախնաք ,, , Պետրոս շուտ մը ցաւ-
 քեց ըսաւ . « Տէր , թէ որ դուն ես՝ հրամայէ՛

ինծի որ ջրին վրայ քայլելով քովդ գամ, : Յիսուս ալ ըսելուն պէս թէ “ Այլիւ եկուր ”, Պետրոս նաւէն վար ինջաւ, ու ծովուն վրայէն քայլելով դէպ ՚ի Յիսուս որ մտեցաւ, ան ատենը ան խոշոր ալիքներէն վախ մը ինկաւ Պետրոսի սիրտը՝ ընկզմելու պէս եղաւ, ու սկսաւ կանչուրուտել թէ “ Տէր, զիս խալքսէ ”. Յիսուս ալ շուտ մը ձեռքը երկնցուց բռնեց, “ Թերաշաւատ, ըսաւ, ինչո՞ւ տարակուսեցար ”: Ատքը Յիսուս հետերնին նաւը մանելուն պէս՝ ծովը ինջաւ խաղաղեցաւ, և նաւը եղողները աս հըրաչքս որ տեսան՝ ամէնքը Յիսուսի առջևը ինկան երկրպագութիւն ըրին, ու ըսին թէ “ Արշմարտապէս դուն Արդի Աստուծոյ ես ”:

Աւրիչ անգամ մըն ալ Յիսուս անանկ անապատ տեղ մը՝ վրան բազմութիւն ժողված, իրեք որ անդադար իրենց քարոզութիւն ընելէն ետե՛կրքոր տեսաւ որ անօթի են բան չունին ուտելու, գութը շարժեցաւ վրանին. ուստի աշակերտացը քովը գտնուած միայն եօթը հացէն ու քիչ մը ձկնեղէնէն՝ չորս հազար հոգի կշտացուց, կնիկներէն ու տղոցմէն ՚ի զատ, և հոն ալ եօթը զամբիղ լեցուն՝ ան հացին կտորուանքներէն եւելցաւ :

Գ. Լ. ՈՒ Խ Ս Ժ Ե .

Քանաւեացի կեկան աղչրիսեր բժշկութիւնը :

(Մատթ . Ժ Ե : — Մարկ . Ե 1)

Սէկ հեղ մը Յիսուս՝ իր նախանձոտ թշնամիներէն քիչ մը ատեն երեսը պահելու համար, հրէաստանէ ելաւ Տիւրոս Սիզոն ըսուած այ-

լազգիներուն կողմերը գնաց : Հոն իր առջևը մէկ քանանացի այլազգի կնիկ մը ելաւ , և դէպ 'ի ինքը կանչելով կ'աղաչէր ու կ'ըսէր . “ Տէր , որդի Վաւթի , ողորմէ՛ ինձի՛ որ աղջիկս սատանայէն բռնուած կը տանջուի . , , : Յիսուս ալ առջի բերանը անոր երեսը չնայեցաւ՝ սրտատախան չտուաւ . ետքը երբոր աշակերտները Յիսուսի աղաչեցին թէ՛ . “ Սա կնիկը ձամբէ՛ , որ ձայնը կարի . , , , ան առենը Յիսուս իրենց ըսաւ թէ՛ . “ Այս չէ՛ թէ՛ ուրիշի , հապա Սորայեւացոց կորսուած ոչխարներուն համար խրկուած եմ . , , : Անիկը նորէն եկաւ Յիսուսի առջևը ինկաւ , ու երկրպագութիւն ընելով կ'աղաչէր կ'ըսէր . “ Տէր , ինձի օգնէ . , , : Յիսուս ալ իրեն նորէն սրտատախան տուաւ թէ՛ . “ Սող որ առաջ աղաքը կըչտանան . չվայլեր որ աղոյքը առջևէն հացը առնուի՛ ու չներուն ձգուի . , , : Ան ալ ըսաւ . “ Տէր , ըսածդ ձգնարիս է . բայց չներն ալ իրենց տիրոջը սեղանէն ինկած փշրանքները կ'ուտեն . , , : Ան ժամանակը Յիսուս իրեն ըսաւ . “ Անիկ , բուհաւատքդ մե՛ծ է . անոր համար՝ ինչպէս որ կ'ուզես նէ անանկ ըլլայ . , , . և Յիսուս աս բանս ըսելուն պէս՝ անոր դիւահար աղջիկը բժշկուեցաւ :

Ատքը աս տեղուանքը Յիսուսի առջևը բերին մէկ խուլ ու համր (այսինքն տիլտիլ) մարդ մը որ բժշկէ . Յիսուս ալ բժշկեց , ու իրենց ապրուստից որ սաղին անդին չձայնձընեն , որ Փարիսեցոց նախանձը իր վրայ աւելի չզրոգեն . բայց ձար չէր ըլլար՝ բժշկուողները կ'ելլէին չորս դին կը զուրցէին : Անկէ ետքը երբոր նորէն Սորայեւացոց Քեթայիդա ըսուած երկիրը եկաւ , հոն Յիսուսի առջևը մէկ կոյր մը բերին , ու զան

ալ բժշկեց աչքը բացաւ : Եւ ասկէ ետե՛ ալ սկսաւ Յիսուս կամնաց կամնաց իր աշակերտնե-
րուն բանալ թէ ինքը շատ չարչարանքներ պի-
տոր քաշէ Տրէից քահանայապետներէն ու կար-
գացողներէն , և պիտի սպաննուի , բայց իրեք օ-
րէն ետքը պիտոր յարութիւն առնէ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Զ .

Յիսուսի այրակերպութիւնը , մէկ յուսնոտի մը
բժշկութիւնը , մանր տղոցը խոնարհութեան օրինակ
ըլլալը :

ԸՄ Քրիստոսի 33 : (Մատթ . ֆէ . — Մարկ . Թ . —
Ղուկ . Թ .)

Ըս բաներէս ետքը՝ Յիսուս իր հետը առած
միայն իրեք աշակերտները , Պետրոս , Յակոբոս
ու Յովհաննէս՝ մէկ բարձր լեռան մը վրայ ելաւ
(որ թափոր լեռն է կ'ըսեն) , ու հոն աղօթքը
նկենինի՝ Յիսուսի կերպարանքը բոլորովին փո-
խուեցաւ , անանկ որ՝ երեսը արեւու պէս կը ճա-
ռագայթէր , ու վրայի հագուստը ձիւնի պէս
ձերմակ լուսաւոր կը փայլէր : Ըս որ եղաւ , Յի-
սուսի քովը երկու փառաւոր մարդիկ եկան երե-
ցան , որ Սովսէս մարգարէն՝ ու Լաղիա մարգա-
րէն էր . և ասոնք սկսան Յիսուսի հետ խօսիլ
իրեն չարչարանացը ու մահուանը վրայ , որ Լա-
րուսաղէմի մէջ պիտոր ըլլար : Ըշակերտները
որ ան ատենը թմրած կը քնանային , երբոր ար-
թընցան աս բանս տեսան՝ զարմացան մնացին :
Լտքը երբոր ալ Սովսէս ու Լաղիա Յիսուսի
քովէն անցայտ եղան , Պետրոս սահմակած ու

չփոթած՝ ըսածը չգիտնալով, սկսաւ Հիսուսի
 աղաչել թէ՛ « Սարդապետ, աղէկ կ'ըլլար որ
 մենք ալ հոս մնայինք, ու իրեք տաղաւար (այս-
 ինքն չատրր) շինէինք, մէյ մը քեզի, մէյ մը
 Սոլսեսի, ու մէյ մ'ալ Աղիայի, որ մէջը կե-
 նայինք » : Եւ բանս որ կ'ըսէր՝ մէկէն ի մէկ
 լուսէ ամոլ մը վրօնին եկաւ ծածկեց զիրենք,
 ու անկեց ասանկ ձայն մը եկաւ թէ՛ « Եւ իմ
 սիրական որդիս է՝ որ իրեն հաւներ եմ, անոր
 ըսածին մտիկ ըրէք » : Եւ շակերտները աս ձայնս
 լսածին պէս՝ անտեղը վախերնուն երեսնին վրայ
 ինկան : Ատրը զիրենք ոտք հանեց Հիսուս, ու
 սիրտ տալով ապրսպրեց որ աս տեսիլքդ մարդու
 չպատմեն՝ ինչուան որ ինքը յարութիւն առնէ :

Եւ որ մէկալ օրը երբոր Հիսուս լեռնէն ինջաւ,
 տեսնէ որ՝ իր մէկալ աշակերտներուն հետ բազ-
 մութիւն ժողովրդոց իրար անցած կը զրուցէին
 ու հակաձառութիւն կ'ընէին : Հիսուս ալ երբոր
 ասոր պատճառը հարցուց, ան ատենը մէկը ե-
 կաւ Հիսուսի առջևը ինկաւ՝ ու ըսաւ . « Սար-
 դապետ, ես մէկ հատիկ տղայ մը ունիմ, որ չա-
 բաչար սատանան բռներ ասդին անդին՝ կրակ ըլ-
 լայ՝ ջուր ըլլայ՝ կը ձգէ զինքը, ու կը փրփրցնէ՝
 սաստիկ կը տանջէ զան ողորմելին . ես ալ առի-
 քու աշակերտներուդ բերի որ բժշկեն, բայց ա-
 նոնք բան մը չկրցան ընել » : Հիսուս մարդուն
 սրդողելով պատասխան տուաւ . « Ս'վ ազգ ան-
 հաւատ, ըսաւ, ինչուան երբ ձեզի հետ կենամ,
 ու ձեզի համբերեմ. առջևս բերէք, ըսաւ, որ
 տեսնեմ » : Արբոր բերին, ու դիւահարը Հի-
 սուսն որ տեսաւ, աւելի կատղեցաւ զինքը գե-
 տինը զարկաւ, ու բերնէն փրփուրներ կը վազ-
 ցնէր : Հիսուս ալ հօրը հաւատքը նայելով ու-

դորմեցաւ իրեն , ըսաւ . « Պիղծ սատանայ , քե-
 ղի կը հրամայեմ որ ատկէց ելլես , և մէյ մ'ալ
 հոտ չմոնես » : Ըն ատենը շուտ մը ստուարով
 դէը անանկ սաստիկ տանջեց տղան ու մեռելի
 պէս գեափնը ձգեց , որ տեսողները կ'ըսէին թէ՛
 Սեռաւ ողորմելին . բայց Յիսուս ձեռքէն բռ-
 նեց վերցուց , ու ողջաողջ հօրը ձեռքը տուաւ ,
 որ ամէնքը զարմացան մնացին սա մեծ հրաշքիս
 վրայ : Ատքը երբոր աշակերտները տուն դար-
 ձան , հոն առանձին Յիսուսի հարցուցին թէ՛
 « Սենք ինչու սա դիւահարը չկրցանք բժշկել » :
 Յիսուս ալ ըսաւ . « Չեր թերեհաւատութեանը
 համար եղաւ . և սա բանս ճշմարիտ ձեզի կ'ըսեմ .
 թէ որ մանանեխի (այսինքն հարտալի) հատի
 չափ պզտիկ կամ քիչ հաւատքով ալ ըսէք սա դի-
 մացի լերանս՝ որ անդին երթայ , հաւատքով ը-
 սածնիդ կը կատարուի , ու ձեր առջևը անկարելի
 բան չըլլար : Բայց ան ալ դիտնաք որ՝ այսպիսի
 սատանան միայն աղօթքով ու սպքով կ'ելլէ » :

Ընկէ ետքը՝ Յիսուս հեղ մը ճամբան եր-
 թափնի աշակերտներուն մէջը մէկ հակաձա-
 ութիւն մը եղաւ , թէ Յիսուս՝ որ (ինչպէս ի-
 րենք սա կարծիքս ունէին) թաղաւոր նստի նէ ,
 իրենցմէ որերնին առաջ պիտոր ելլէ՝ մեծնայ :
 Ըյսպէս խօսելով երբոր տուն հասան , Յիսուս
 իրենց հարցուց թէ՛ « Ճամբան ինչ կը զրու-
 ցէիք » . աշակերտներն ալ ամբնջախոսն ան ատե-
 նը սատասխան չկրցան տալ . ու ետքը նորէն Յի-
 սուսի հարցուցին թէ՛ « Արկնից արքայութիւնը՝
 մեր մէջէն մեծը ո՞վ պիտոր ըլլայ » : Յիսուս ալ
 ասանկ պատասխան տուաւ . « Չեզմէ՛ ո՞վ որ
 կ'ուզէ առջին ու մեծ ըլլալ , ամենէն ետքինը՝ ու
 ամենուն ծառան ըլլայ » : Աւ սա բանս Յի-

սուս օրինակով ալ ուզեց ցուցնել. ուստի քո վր մէկ պզտի տղայ մը կանչեց, զիրկը առաւ ու ըսաւ. «Չեզի ճշմարիտ կ'ըսեմ. թէ որ առ կարծիքէն չդառնաք, և աս պզտի տղիս պէս անմեղ ու խոնարհ չըլլաք նէ՛ երկնից արքայութիւնը չէք մտներ» :

Արի՛ ճեղ մըն ալ Յիսուսի առջևը մանր տղաք բերին՝ որ օրհնէ զիրենք, ու աղօթք ընէ վրանին : Եւ բանիս երբոր աշակերտները դէմ կեցան ու վաբնտեցին՝ կարծելով որ Յիսուսի նեղութիւն ըլլայ, Յիսուս իրենց ըսաւ. «(մ)տղ տուէք որ քովս զան. ինչ կը կարծէք, արքայութիւնն Եւստուծոյ այդպիօխներուն է» : և անանկ զիրկը առաւ օրհնեց զան տղաքը :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Պարտրիակին ու սամարացիին ստակները, և տասը բորտակներուն բժշկութիւնը :

(Մատթ. ԺԷ : — Ղուկ. Ժ. ԺԷ :)

Յիսուս մէկ ճեղ մը եղբայրական յանդիմանութեան վրայ քարոզ տալով ըսաւ թէ՛ «Այդ բայրդ եօթը անգամ ալ քեզի դէմ մեղանչէ, ու եօթն անգամն ալ դառնայ քեզի մեղայ ըսէ նէ, իրեն թողութիւն տուր» : Եւ բանիս վրայ Պետրոս տարակուսելով, և ուզելով իմանալ թէ աս եօթը համբանքին վրայ մի կապուած է թողութիւն տալը՝ երբոր հարցուց Յիսուսի, Յիսուս ալ սրատասխան տուաւ թէ՛ չէ՛ թէ միայն եօթը անգամ, հարա եօթը անգամ եօթանասուն ալ ըլլայ նէ, այսինքն առանց համբանքի՝ բանի ճեղ որ հանգրգի նէ, և աս բանս՝

աս առաւելիլ հաստատեց . “ Թագաւոր մը , ըսաւ , ուզեց հաշիւ ընել (այսինքն հիսապ տեսնել) իրմէ ծառաներուն վրայ անցածներուն . ու եղաւ որ ասոնցմէ մէկը Թագաւորին պարտական ելաւ տասը հազար քանթար (կամ քէսէ ստակ) . ասիկայ երբոր կարողութիւն չունեցաւ այսչափ ստակը վճարելու , Թագաւորը հրամայեց որ անեն զինքը իր կնիկանը ու որդիքներուն հետ ծախեն՝ և իր բոլոր ունեցածը , որ անանկ պարտքը վճարուի : Ըն ատենը աս պարտական ծառան Թագաւորին ոտքը ինկաւ աղաչեց որ իրեն քիչ մը ատեն տայ՝ որ կարող ըլլայ պարտքը վճարել . Թագաւորն ալ վրան գութը շարժեցաւ՝ ան պարտքը իրեն Թողուց , ու աղատեց որ երթայ : Ըսիկայ խալքսելուն պէս՝ ելաւ իրեն ընկերներէն մէկուն հանդրակցաւ , որ հարիւր դահեկան (կամ դուռուշ) իրեն պարտական էր . զնաց բռնեց ան իր պարտականը՝ ու կը խղզէր զինքը Թէ “ Ընելիքս ասուր , : Ըն ողորմելին ալ ասոր ոտքը ինկած կ’աղաչէր կ’ըսէր Թէ “ Վիշ մը համբերէ՛ կու տամ , : ան մտիկ չէր ըներ . այնչափ որ՝ տարաւ զինքը բանտը զնել տուաւ , ինչուան որ պարտքը վճարէ : Ըն անողորմութիւնս որ տեսան Թագաւորին մէկալ ծառաները , շատ ցաւեցան ան ողորմելի մարդուն վրայ , ու եկան Թագաւորին պատմեցին անոր բրածը . Թագաւորն ալ զինքը նորէն առջևը բերել տուաւ , ու վրան սաստիկ սրդողելով իրեն ըսաւ . “ Ա՛յ չար ծառայ , ես քու աղաչանքիդ նայելով քեզի ողորմեցայ՝ քու բոլոր պարտքդ Թողուցի . քեզի ալ պէտքը չէր որ ինձմէ օրինակ առնէիր՝ քու ընկերոջդ ողորմէիր , : Ընանկ նորէն բռնեց՝ զինքը դահիճներուն ձեռքը տուաւ ,

որ չթողուն ինչուան որ բոլոր պարտքը չվճարի նե , : Ետքը աս առակին Հիսուս աս պտուղը հանեց . “ Եյսպէս ալ , ըսաւ , խմ երկնաւոր հայրս ձեզի կ'ընէ՝ թէ որ դուք ալ ձեր եղբօրը մեղացը սրտանց թողութիւն որ չտաք , , :

Արիշ անգամ մըն ալ մէկ օրինազէտ վարդապետ մը փորձելով Հիսուսը՝ հարցուց թէ “ Ե՞նչ ընեմ որ արքայութիւն երթամ , , : Հիսուս ալ իրեն ըսաւ . “ ()րինաց մէջը ինչպէս գրուած է , , : Ե՞ն ալ պատասխան տուաւ . Արեւոյնս զտէր Եստասած թոյա՞ննայն սրտէ թոյմէ , և այլն . Ե զընէ՛ր թոյիքն զտէնն թոյ : Հիսուս ալ ըսաւ . “ Ե՞նչ պատասխան տուիր . աս ըսածդ կատարես նե՝ կը փրկուիս , , : Ե՞ն ալ հպարտութեամբ՝ ու պարծենալով ցուցնելով թէ այնպէս ըրեր է , ըսաւ . “ Արիշ ինձի ընկեր ո՞վ կը գտնուի , , : Ե՞ն ատենը Հիսուս զինքը յանդիմանելով՝ աս առակս պատմեց . “ Ա՛նկ հրէայ մը , ըսաւ , Երուսաղէմէ Երիւքով քաղաքը երթալնին՝ աւազակները ասոր վրայ եկան , և բոլոր բաները թալելէն ետե՛՛ զինքն ալ վիրաւորեցին , ու հոն ձամբուն վրայ մեռելի պէս թողուցին ձգեցին՝ ելան գացին : Ե՛ս ձամբէս՝ հանդրպէցաւ որ մէկ քահանայ մը անցաւ , և աս ողորմելին հոն տեղը տեսնելով՝ անհոգ եղաւ անոր ձօք մը չբրաւ , անանկ ելաւ բանը գնաց : Ետե՛ն մէկ զւտացի մըն ալ անցաւ անկէց , և ասոր ալ հոգը չեղաւ՝ ելաւ գնաց : Ե՞նկէ ետքը մէկ սամարացի մարդ մըն ալ անկէց անցաւ . երբոր աս խեղճ մարդս տեսաւ , վրան գութը շարժեցաւ , առաւ անոր խոցերուն վրայ ձէթ ու զինի քսեց փաթթեց որ բժշկուի . և անանկ զինքը իր ձիուն վրայ դրած , մէկ սամարոյ (այսինքն լօսեցիրիս

մը) տարաւ՝ որ երթայ հանգչի . և անոր մէկալ
օրը երբոր ինքը ալ ճամբայ ելլալու եղաւ , հա-
նեց երկու դահեկան ալ տուաւ պանդոկապե-
տին՝ որ անոր պէտ ընէ , և « Ըլ ինչ որ աւելի
ստակ երթայ նէ , ըսաւ , նորէն ասկէ դառնա-
լուս ասենք՝ բոլորը քեզի կը վճարեմ » : Ըս-
ուակս սրատեւէն ետքը՝ Հիսուս դարձաւ ան
վարդապետին հարցուց . « Հիմա , ըսաւ , աս
իրեքէս որք քեզի աւելի բարեկամ կ'երևնայ ան
խեղձ մարդուն » : Ըն ալ սրատասխան տուաւ
Թէ՛ « Ընիկայ , որ այսպիսի ողորմութեան գործ-
քեր ըրաւ » : Հիսուս ալ ըսաւ . « Գնա՛ դուն
ալ անանկ ըրէ » :

Մէկ անգամ մը Հիսուս Գալիլեայի ու Սա-
մարիայի մէջ տեղէն անցնիլ երթալնին՝ ճամ-
բան տասը բորոտ իրեն հանգըպեցան , ու հե-
ռուանց կեցած դէպ 'ի ինքը կը կանչէին . « Հի-
սուս վարդապետ , մեզի ողորմէ » : Հիսուս ալ
իրենց ըսաւ . « Գնացէ՛ք ձեզ քահանաներուն
ցուցուցէք » : երբոր ասոնք ելան որ երթան՝
չուտ մը ամէնքը բժշկուեցան : Ըսոնցմէ մէկը
որ հրէայ չէր՝ հապա սամարացի էր , երբոր
բժշկուեցաւ , փառք տալով Ըստուծոյ՝ շուտ մը
դարձաւ եկաւ Հիսուսի ոտքը ինկաւ , ու իրեն
չնորհակալ կ'ըլլար : Ըն որ տեսաւ Հիսուս՝ ը-
սաւ . « Տասը հոգի չէին մի բժշկուողները . հա-
պա մէկալ ինը ուր են , ինչո՞ւ չդարձան որ փառք
տան Ըստուծոյ , ու միայն աս այլազգի մարդս
ըրաւ » : ետքը իրեն ըսաւ . « Ելի՛ գնա՛ , քու
հաւատքդ քեզ ազատեց » :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Եօրանստուններկու աշակերտները , Մարթա ու Մարթամ , ՚ի ձևե կուրիև բժշկուրիներ , Յիսուսի իր աստուածուրիներ յայտնի քարոզելը :

(Ղուկ . Ժ : — Յովհ . Թ . Ժ :

Տասուերկու առաքեալներէն ՚ի զատ՝ Եօթա նասունուերկու աշակերտ ալ ընտրեց Յիսուս , և ասոնց խրատ տալով թէ ինչպէս պիտի վարին ժողովրդոց հետ , երկու երկու կը խրկէր ասոցին անդին Հրէաստանի քաղաքները , որ իրմէ առաջ երթան քարոզեն : Ըն աշակերտաները երբոր Յիսուսի հրամանը կատարեցին , ու քովը դարձան և սկսան ուրախութեամբ պատմել ու ըսել Յիսուսի թէ . « Տէր , սատանաներն ալ մեզի կը հնազանդին՝ երբոր քու անունդ կու տանք . » , Յիսուս իրենց ըսաւ . « Ըտոր վրայ պիտի չզարմանաք . որովհետև ձեզի իշխանութիւն տուեր եմ՝ որ զանոնք ոտքի տակ աւանէք . հապա աւելի անոր վրայ ուրախացէք , որ ձեր անունները երկինքը դրուած են . » : Ըն ատենը Յիսուսի սիրան ալ մասնաւոր ուրախութեամբ լեցուցաւ , ու երկինքը նայելով ըսաւ . « Գոհութիւն կը մատուցանեմ քեզի , ո՛վ Հայր , տէր երկնի և երկրի , որ աս խորհուրդս իմաստուններէն ու գիտուններէն դոցեցիր , ու միամիտ աղաքներուն յայտնեցիր . » :

Ընգամ մը Բեթանիա ըսուած գեղը գնաց Յիսուս , ու հոն Մարթա ու Մարթամ՝ Վաղարի քոյրերը Յիսուսը իրենց տունը ձայնեցին . Մարթան շուտ մը վազեց գնաց կերակուրներ

պատրաստելու, ու Սարիամ Յիսուսի առջևը նստած՝ խօսածներուն մտիկ կը զնէր: Ըստ որ տեսաւ Սարթա, եկաւ Յիսուսի դանդաղելով ըսաւ թէ՝ «Այլ քոյրս զիս մինակ թողեր է՝ որ կ'աշխատիս կոր, իրեն ըսէ որ ելլէ ինձի օգնէ»։ Յիսուս ալ պատասխան տուաւ. «Սարթա Սարթա, դուն, ըսաւ, շատ բաներու ետեւէն ինկած՝ պարտապ տեղը կը շարչրկիս, որ հօս քիչ մը բանն ալ հերիք է. Սարիամի ընտրած բաժինը աւելի ըսէ է, որ միշտ իր հետը կը մընայ»։

Ըսկէ ետեւ Յիսուս մէկ հեղ մը շաբաթ օրը Լըրուսադէմ ճամբան երթախնինի մէկ մուրացկանի մը հանդրպէցաւ, որ երկու աչքը կոյր էր: Ըշակերտները երբոր սա տեսան, Յիսուսի հարցուցին թէ՝ «Ըսոր կուրութեան մասը (այսինքն քապահաթը) որո՞ւնն է. իր հօրը մօրը՝ թէ իրենը, որ ասանկ կոյր ծնաւ»։ Յիսուս ալ ըսաւ թէ՝ «Սարգու մը չէ, հապա Մտուած այնպէս թոյլ տուեր է, որ ետքը բժշկուելով ինքը աւելի փառաւորուի»։ Ատքը Յիսուս անոր քովը զնայ՝ գետինը թքաւ, անով կաւ (այսինքն չամուռ) շինեց, առաւ կուրին աչքերներուն վրայ ձեռիեց, ու հրամայեց որ Սելովամ ըսուած աղբիւրը երթայ լուացուի: Այդն ալ անանկ ընելուն պէս՝ աչուրները բացուեցան, ըս կուրին գրացիները ու ճանչուորները երբոր զինքը տեսան, զարմացան, վրան տարակոյս կ'երթային թէ՝ սա ան մարդն է մի. ետեւ իրեն հարցընելով իմացան որ Յիսուս բժշկեր է զինքը: Բայց փարիսեցիները սա բանս լսելով սկսան Յիսուսի վրայ մամուլ թէ շաբաթ օրըրեր է. և սա բժշկութիւնս նորէն ստուգելէն

ետե՛ ան մարդն ալ առջևնին կանչեցին ու իրեն ըսին . “ Բստուծոյ փառք տուր որ քեզ բժշկեց . Յիսուս մեղաւոր մարդ մըն է , ան ի՛նչ կրնայ քեզի ընել , : Բն ալ ըսաւ . “ Ես անոր մեղաւոր ըլլալը չեմ գիտեր . աս միայն գիտեմ որ կոյր էի՝ ու ան դիս բժշկեց , որ հիմա կը տեսնեմ կոր . բայց աս ալ գիտենք որ Բստուած մեղաւորներուն աղօթքը մտիկ չընէր , հասլա սուրբ ու արդար մարդիկներունը . և աս բանս ալ ինչուան հիմա լսուած չէ՝ թէ մէկը ՚ի ծնէ կուրի աչք բացած ըլլայ . ուստի ան մարդը թէ որ Բստուծմէ եկած չըլլար նէ՛ զաս չէր կրնար ընել , : Փարիսեցւոց խիստ դժուարնին եկաւ աս խօսքս , ու չեխելով զինքը՝ ըսին . “ Դուն բոլորովին մեղաց մէջ ծներ ես , ու հիմա կեցեր մեզի վարդապետութիւն կ'ընես , , . անանկ բամահրելով քովերնէն վարնտեցին : Ետքը ան մարդուն հանդըպեցաւ Յիսուս , ու իրեն յայտնեց թէ ինքը Արդի Բստուծոյ է . ան ալ սիրով երկրպագութիւն ըրաւ : Յիսուսի , ու դարձաւ հաւատացեալ եղաւ :

Մէկ անգամ մը Յիսուս ձմեռ ատեն տաճարին նաւահատիքի տօնախմբութեան օրը՝ հոն սրահին մէջ քաղենինի , հրէաները վրան թափեցան , սկսան իրեն ըսել թէ՛ “ Ինչուան երբ մեզ տարակուսանքի մէջ ձգելով հողինիս կը հանես . թէ որ դուն Վրիստոսը կամ Մեսիան ես նէ , մեզի բաց ըսէ որ գիտնանք , , : Յիսուս ալ պատասխան տուաւ թէ՛ “ Չեզի ըսեր եմ , ու դուք ինձի չէք հաւատար . այնչափ գործքերը որ ես իմ հօրս անունովը կ'ընեմ՝ անոնք ինձի վկայ կ'ըլլան , ու դու չէք ուզեր հաւատալ . պատճառն որ՝ դուք իմ ոչխարներէս չէք : Իմ

ոչխարներս իմ ձայնս կը լսեն , ու ես զիրենք կը ձանձնամ . իմ ետեւէս կու գան , ես ալ իրենց յաւիտենական կեանք կու տամ , որ յաւիտեանս յաւիտենից շէն կորսուիր . և մարդ մը զանոնք իմ ձեռքէս պիտի չյափշտակէ . որովհետեւ իմ ձայրս որ զասոնք ինձի տուեր է՝ ամէն բանէ մեծ է , ու ամենեւին մէկը իմ ձօրս ձեռքէն ալ չկրնար յափշտակել . և աս ալ գիտնար որ՝ ես ու իմ ձայրս մէկ ենք , : Մը որ լսեցին շրէաները , շուտ մը ձեռուրնին քար առին որ զինքը քարկոծեն : Յիսուս ալ իրենց հարցուց թէ՝ « Իմ որ քրած բարի գործքերուս համար զիս քարկոծել կ'ուզէք , : Մոնք ալ ըսին թէ՝ « Բարի գործքերու համար քեզ չենք քարկոծեր , հապա հայհոյութիւն ընելուդ համար , որ դուն մարդ ես , ու քեզ Մատուծոյ տեղ կը դնես , : Յիսուս ալ աստուածաշունչի խօսքերովը անանկ պատգանձեցուց զիրենք , ու ցուցուց թէ՝ ինքը ձօր Մատուծոյ ձմարիտ Արդին Մատուած է , որ ալ շրէայքը կ'ուզէին զինքը բռնել , թէ որ Յիսուս քովերնէն չհեռանար երեսը ծածկէր :

Գ. Լ. ՈՒԽ ԺԹ .

Անասակ որդայն ասակը :

(Ղուկ . ԺԾ :)

Չրէից Փարիսեցիները և աւբրիները տեսնելով որ Յիսուս մաքսաւորները ու մեղաւոր մարդիկը վրան ժողված իրենց քարոզութիւն կ'ընէր , կը մուսուային թէ Յիսուս ինչու ասանկ մարդոց հետ կը վարուի : Յիսուս ալ անոնց աս

առակալս պատասխանս տուաւ . “ Չեզմէ մէկը որ , ըսաւ , հարիւր ոչխար ունենայ , և ասոնցմէ թէ որ միայն մէկ հատ մը կորսնցընէ նէ , ան իննըսուներինը ոչխարը լեռը մէկդի կը թողու , ու կ'երթայ ան մէկալ կորսուած ին կտակէն այնչափ կը պտըտի որ՝ ինչուան գտնէ : ու գտածին պէս ուրախութեամբ կ'անակը կ'առնէ , տուն կ'երթայ՝ կը տանի , իր բարեկամները դրացիները կը կանչէ , որ իր հետը խնտան ուրախութիւն ընեն՝ ան մէկ կորսուած ոչխարը գտնելուն համար : Այսանկ ալ , ըսաւ , երկինքը ուրախութիւն կ'ըլլայ մէկ մեղաւորի մը համար , երբոր դատնայ ասպաշխարելու որ ըլլայ , :

Ատքը աս ըսածիս վրայ աս առակս ալ պատմեց . “ Մէկ մարդ մը երկու որդի ունէր . ասոնցմէ պղտիկը՝ հօրմէն ուզեց առաւ իրեն ինկած ժառանգութիւնը , թողուց ելաւ մէկ հեռու երկիր մը գնաց . ու հոն տեղը շայլութեամբ (այս ինքն սէֆիհութեամբ) ապրելով՝ բոլոր ունեցածը հատցուց : Ատքը ան երկիրը մէկ սաստիկ սով մըն ալ որ ինկաւ , ան ատենը սկսաւ աս անառակ որդիս բոլորովին աղքատնալ , անանկ որ՝ ալ ձորը հատաւ զնայ մէկու մը քով ծառայութիւն մտաւ . ան ալ դրաւ որ երթայ իր խոզերը արծէ . և ան ժամանակը անառակին ալ անօթութեանն՝ ան խոզերուն կերածէն կ'ուզէր որ փորը լեցընէ , բայց ան ալ իրեն տուող չկար : Այսպէս որ եղաւ , յանկարծակի ասոր միտքը եկաւ թէ՛ անդին իր հօրը առնը քանի ծառաներ կան կերած կշտացած , ու ինքը հոս անօթութեանն կը մեռնի կոր . ուստի “ Այսանկ չըլլար , ըսաւ , կ'ելլեմ հօրս կ'երթամ , ու իրեն կ'ըսեմ . հայր , մեղայ յերկինս և առաջի քո . այսուհետեւ ես

արժանի չեմ որ քու որդիդ ըսուիմ, հասա զիս
 քու ծառաներէդ մէկը ըրէ, : Արբոր անանկ ե-
 լաւ իր հօրը քով եկաւ, հայրն ալ հեռուանց որ
 զինքը տեսաւ՝ շուտ մը տղին գէժը ելաւ, ու վա-
 զեց զնաց զինքը զրկեց սրագաւ : Տղան դեռ խօս-
 քը չմընցած՝ թէ “ Հայր մեզայ յերկինս ”,
 հայրը շուտ մը հրամայեց ծառաներուն, որ անոր
 առջի փառաւոր լաթերը բերեն հաղցընեն, մատ-
 նին ձեռքը դնեն, ու կօշիկները ոտքը . և պա-
 հած գիրցուցած եղն ալ բերեն մօրթեն՝ “ Ար-
 ուտենք, ըսաւ, ու ուրախանանք աս իմ տղին հա-
 մար, որ մեռած էր՝ ու հիմա ողջընցաւ, կոր-
 սուած էր՝ ու դանուեցաւ ” : Ըս ուրախութիւնս
 որ կ'ընէին՝ ան առենք մեծ որդին զրսէն տուն
 կը դառնար . երբօր հեռուէն խաղերուն ու պա-
 րերուն ձայնը լսեց, բանը չգիտնալով՝ ինքիրեն
 կը զարմանար . ետքը իմանալով որ իր անառակ
 եղբօրը դառնալուն համար է եղեր ան ուրա-
 խութիւնը՝ սաստիկ սրգողելէն տուն չէր ուզեր
 մտնել : Հայրը զնաց աղաչելու որ գայ . ինքն
 ալ հօրը պատասխան տուաւ թէ “ Այսչափ
 տարի է որ ես քեզի կը ծառայեմ, և ամենեւին
 խօսքէդ դուրս չեմ ելած . ու ինչուան հիմա դուն
 ինձի մէկ ուլ մը չե՛ս տուեր, որ երթայի իմ բա-
 րեկամներուս հետ ուրախանայի . և երբօր ան
 քու որդիդ եկաւ, որ գացեր պօռնիկներու հետ
 նստեր իր բոլոր ունեցածը կերեր է՝ դուն զիր-
 ցուցած եղբ անոր համար մօրթեցիր ” : Հայրն
 ալ ըսաւ թէ “ Արդի, դուն միշտ իմ հետս ես,
 և իմ բոլոր ունեցածս՝ քուկդ է . բայց աս ու-
 րախութիւնս ալ քու եղբօրդ համար պէտք է
 ընել, որ մեռած էր՝ ու ողջընցաւ, կորսուած
 էր՝ ու դանուեցաւ ” :

Գ Լ Ո Ւ Խ Ի .

Տնտեսիկն , ու անոպրմ մեծատան ասակները :

(Ղուկ . ԺԶ .)

Ըսկէ ետքը Հիսուս աս առակս պատմեց իր աշակերտներուն . “ Սէկ հարուստ մարդ մը մէկ տնտես մը (այսինքն վէճիլիտարձ մը) ունէր . ասոր վրայ լսեց թէ՛ իր բաները վատնելով (այսինքն իտրաֆ ընելով) կը փճացընէ կոր : Ըն ալ աս տնտեսս առջևը կանչեց ու ըսաւ . “ Ըս ինչ է որ քու վրադ կը լսեմ . նայէ՛ որ տնտեսութեանդ համարը (այսինքն հիսապը) տաս , և գիտնաս որ ալ ինծի տնտես չես կրնար ըլլալ . : Տնտեսն ալ ան ատենը ինքիբեն մտմտաց թէ ինչ ընէ՛ որ անկէ ետքը կարող ըլլայ ասրիլ . “ Արովհետեւ , ըսաւ , ես չեմ կրնար բանիլ որ վատարկիմ , ու կ'ամբընամ որ երթամ մուրամ ,” . ուստի ասանկ ըրաւ , որ երբոր տնտեսս թենէն ելլէ նէ , մարդիկ հետը բարեկամանալով զինքը իրենց տունը առնեն : Շ ուտ մը գնաց մէկիկ մէկիկ իր տիրոջը պարտրկանները առջև կանչեց . մէկուն հարցուց . “ Ի՞նչն իմ տիրոջս նրչափ պարտք ունիս ,” ան ալ ըսաւ թէ՛ “ հարիւր աման ձէթ ,” (այսինքն զէյթին եղ) . տնտեսն ալ ըսաւ . “ Ի՞նչն աս քու զիրդ (այսինքն թէ՛ մէսիկդ) , ու շուտ մը նստէ նորէն յիսուն աման զրէ ,” : Ըսանկ մէկալին ալ հարցուց . “ Ի՞նչ պարտք ունիս ,” ան ալ “ հարիւր քու (այսինքն քիլէ) ցորեն ,” ըսաւ . անոր ալ քսան վար ինջաւ՝ ու թսուն զրեւ տուաւ : Ըս ըրած բանը որ իմացաւ

տէրը , դովեց ան անիրաւ տնտեսը՝ որ խելքով
 իր բանը հողաց . : Ետքը Յիսուս աս առակէս
 այսպիսի պատուհ հանեց . “ Ըստ էրկրաւոր բարիք-
 ներովս , ըսաւ , որ անիրաւ (այսինքն լայրբարզ)
 մամոնայ կ'ըսուին , որչափ ձեր ձեռքն է նէ , ձե-
 ղի բարեկամ շինեցէք , որ ձեռուընէդ ելլելէն
 ետքը՝ անոնք ձեզի օգնեն որ արքայութիւն եր-
 թաք . : ”

Ըստ ետեկէն մէկ ուրիշ առակ մըն ալ պատ-
 մեց Յիսուս , ըսաւ . “ Ընկ հարուստ մարդ մը
 կար , որ բեհեզ ու ծիրանի (այսինքն բարակ
 թիւլակնաներ ու զէրպասներ) կը հագնէր , և
 ամէն օր սեղանը առատ ուրախութիւն կ'ընէր :
 Ըս մարդուս դրանը քով ինկած կը կենար մէկ
 Վաղարոս անուհով աղքատ մը՝ բոլոր մարմինը
 վիրաւորուած , ու ան հարուստին սեղանէն ին-
 կած փշրանքներուն կարօտ էր , տուող չկար . ու
 շներն ալ կու գային աս ողորմելիիս խոցերը կը
 լլգէին : Երբոր մեռաւ աս աղքատը , հրեշտակ-
 ները առին զինքը գոգն Ըբրահամու տարին .
 վրան շատ ջանցաւ որ՝ ան հարուստ մեծատունն
 ալ մեռաւ թաղուեցաւ , ու դժօխքը գնաց տան-
 ջանաց մէջը՝ աչքը բացաւ հեռուանց տեսաւ որ
 Ըբրահամ նահապետը Վաղարոսը գիրկը ա-
 ռած հանդիստ նստեր էր . ուստի կանչեց ըսաւ .
 “ Հայր Ըբրահամ , ողորմէ ինձի , Վաղարոսը
 խրկէ , որ գոնէ մատին ծայրը ջրով թըջէ՝ գայ
 իմ լեզուս պաղըշարկցընէ , որ աս տաքէս փրփրած
 սաստիկ կը տանջուիմ կոր . : Ըբրահամ ալ ի-
 րեն պատասխան տուաւ . “ Արդի , միտքդ բեր
 քու աշխարհքի վրայ ապրած ատենիդ ունեցած
 բարիքներդ , ու Վաղարոսի ալ իր չարչարանք-
 ները . անոր համար հիմա Վաղարոսը հոստեղը

Հանդիսատ կ'ուրախանայ, ու դուն առ տեղը կը տանջուիս . ասկէ 'ի զատ, ըսաւ, մեր մէջը ու ձեր մէջը մեծ վիհ (այսինքն հէնտէկ) կայ, որ մէկմէկու ջենք կընար անցնիլ, : Մն ալ ըսաւ . « Մնանկ է նէ, հայր, քեզի կ'աղաչեմ որ 'Պ ազարտը իմ հօրս տունը խրկես . հոն ուրիշ հինգ եղբայր ալ ունիմ, որ երթայ անոնց առ բաներս պատմէ քարոզէ, որ չըլլայ թէ անոնք ալ առ տանջանքս դան , : Մքրահամ ալ ըսաւ . « Մնոնք Սոլսեսի ու մէկալ մարդարէից զըբերը ունին քովերնին, թող անոնց մտիկ դնեն , : Մն ալ նորէն պատասխան տուաւ . « Մնանկ չէ, ըսաւ, հայր Մքրահամ . հապա թէ մեռելներէն մէկը դառնայ քովերնին երթայ նէ, ան առենը կ'ապաշխարեն , : Մքրահամ ալ ըսաւ . « Թէ որ Սոլսեսի ու ուրիշ մարդարէից մտիկ չեն ըներ նէ, մեռելներէն ալ որ մէկը յարուծիւն առնէ՛ անոր ալ չեն մներ , , :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա .

Դատաստրին, ու փարիսեցիին և մարտարին առակները :

(Ղուկ . ԺԷ .)

Ուրիշ հեղ մըն ալ Հիսուս մէկ առակ մը պատմեց ան բանին վրայ թէ՛ աղօթքէն պէտքը չէ ձանձրանալ (այսինքն պէզար ըլլալ), հապա միշտ պէտք է աղօթք ընել . « Ինչպէս, ըսաւ, դատաւոր մը կար մէկ քաղաք մը, որ Մստուծմէ վախ չունէր ու մարդիկներէն ալ չէր ամրջնար : Մք քաղքիս մէջը մէկ որբւարի մըն ալ կար, որ

անդադար կու գար աս դատաւորիս կ'աղաչէր՝ որ իրեն դատաստանը տեսնէ, և իր սասխին (այսինքն տաւաճիին) ձեռքէն զինքը խալըսէ: Վատաւորն ալ ասոր դատաստանը խել մը ատեն երկընցընելէն ետքը՝ ալ ձեռքէն ձանձրացած ինք իրեն մոմտաց ըսաւ թէ՛ « Իրաւ ես մէկ մարդ մըն եմ որ Մատուծմէ վախ չունիմ ու մարդիկներէն ալ չեմ ամբնար, բայց աս որբեւորիս ձեռքէն խալըսելու համար, որ միշտ կու գայ զլուխս կ'ուտէ, իրեն դատաստանը տեսնեմ »: Ատքը աս առակէս Յիսուս աս պտուղը հանեց. « Թէ որ, ըսաւ, մէկ անիրաւ դատաւոր մը ասանկ ըրաւ նէ, հապա Մատուած ինչպէս պիտոր չսէ տէր չկենայ՝ իրեն ծառաներուն, որ զիշեր ու ցորեկ իրեն կը դիմեն կ'աղաչեն »:

Մտր ետեւէն մէկ ուրիշ առակ մ'ալ Յիսուս պատմեց անոնց վրայ, որ հպարտութեամբ կը պարծենան թէ իրենք արդար են, ու ուրիշները բանի տեղ չեն սեպեր. « Աչրիւ հողի, ըսաւ, տաճարը գացին որ աղօթք ընեն. ասոնց մէկը փարիսեցի մարդ էր, (որ բարեպաշտ կը համարուէր շքեից մէջը), ու մէկալը՝ մաքսաւոր (այսինքն կէօմբիւկճի, որ մեղաւոր կը սեպուէր ան ատենը): Փարիսեցին մէկ կողմը կայնած՝ ինքիւրեն ասանկ սկսաւ աղօթք ընել. « Մատուած իմ, քեզի զոհութիւն կը մատուցանեմ, որ ուրիշ մարդիկներու պէս յափշտակող, կամ անիրաւ, կամ շնացող չեմ, ինչպէս աս մաքսաւորն է. հապա՝ շաբաթը երկու անգամ պար կը պահեմ, և իմ բոլոր ունեցածներուս տասանորդը կու տամ Մատուծոյ »: Մաքսաւորն ալ մէկալ զին քաշուած՝ Մատուծոյ ահէն կը վախնար աչուրները վեր վերցընել, հապա գետինը նայե-

լով՝ կուրծքը կը զարնէր ու կ'ըսէր . « Բնուած ,
 թողու թիւն տունը իմ մեղքերուս , , : Բն առակը
 պատմելէն ետքը ըսաւ Յիսուս . « Աշմարիտ
 կ'ըսեմ որ՝ աս մարտաօրս շատ արդար տաճարէն
 տուն զարձաւ , քան թէ ան փարիսեցին . ինչու
 որ՝ ո՛վ որ զինքը վեր կը վերցընէ նէ , վար կ'ըլ-
 նայ կը խօնարհի , և ո՛վ որ կը խօնարհի նէ՝ վեր
 կ'ելլայ կը բարձրանայ , , :

Գ Լ Ո Ի Խ Ի Բ .

Հարուստ մարդուն դժուար է արքայութիւն երբայր , և
 մշակներուն ստակը :

(Մատթ . ԺԹ . Ի : — Մարկ . Ժ .)

Սէկ հեղ մը Յիսուս իր աշակերտներուն
 հետ ճամբան երթալնինի՝ մէկ հարուստ կտրիճ
 մարդ մը իրեն գէմը ելաւ եկաւ առջևը չորեցաւ՝
 ու հարցուց . « Արդասպէտ բարի , ըսաւ , ինչ
 բարի գործք ընեմ՝ որ արքայութիւն երթամ , , :
 Յիսուս ալ պատասխան տուաւ թէ՝ « Ինչո՞ւ ին-
 ծի բարիին համար կը հարցընես . շէս գիտեր որ
 բարին մէկ մըն է՝ որ է Բնուած . ուստի թէ
 որ արքայութիւն կ'ուզես երթալ նէ , անոր պա-
 տուիրանքները պահէ , , : Բն ալ հարցուց թէ
 « Ո՞ր պատուիրանքները , , : Յիսուս ալ ըսաւ .
 « ԲՏա ասոնք . Բի սղանանէր , Բի շնոր , Բի գողանար , ,
 և այլն : Ատրիճն ալ ըսաւ . « Բն ամէնը պղ-
 տրկուցմէ՛ ի վեր պահէր եմ . ալ ինչ ինծի կը
 պակսի , , : Բն ատենը Յիսուս մարդուն վրայ սէր
 մը կապեց՝ ու ըսաւ իրեն . « Սէկ բան մըն ալ
 քեզի կը պակսի . թէ որ կ'ուզես կատարեալ ըլ-

լալ՝ զնա՛ ինչ որ ունիս նէ ծախէ, անոնց գինը աղքատներուն տուր, որ անանկ քու գանձդ երկինքը զնես, ու ելիր իմ հետս եկուր ., : Եւ բանս որ կտրիձը լեց՝ տրտմած երեսը կախեց սկսաւ քովէն բաժնուիլ երթալ . պատճառն որ՝ ինքը շատ ունեւոր էր : Յիսուս ալ ան ժամանակը դարձաւ աշակերաններուն ըսաւ . « Տեսէք, որդիք, թէ որչափ դժուար է՝ որ հարուստը, որ իր ունեցածներուն հետ սիրտը կապուած՝ վրան յոյսը գրեթէ, արքայութիւն երթայ . աւելի հեշտ է որ մալուխը (կամ տէվէն) ասեղին բարակ ծակէն անցնի, քան թէ հարուստը Եւտուծոյ արքայութիւնը մտնէ ., : Եւ աշակերաններն ալ աս բանիս վրայ շատ զարմացան, ու մէկմէկու սկսան ըսել թէ՛ « Եւանկ է նէ՛ ո՛վ կրնայ փրկուիլ ., : Յիսուս ալ նայեցաւ իրենց՝ ու ըսաւ . « Մարդուն մնայ նէ՛ իրան որ անկարելի բան է, բայց Եւտուծոյ առջև ամէն բան կարելի է ., : Եւ ասեմը Պետրոս ալ դարձաւ Յիսուսի ըսաւ . « Հապա մեզի ինչ պիտոր ըլլայ, որ ամէն բաներնիս թողուցինք՝ ու քու ետեւեդ եկանք ., : Յիսուս ալ պատասխան տուաւ թէ՛ « Ձեզի ճշմարիտ կ'ըսեմ որ՝ երբոր նորէն աշխարհքս դառնալու ըլլամ, որ փառաւորասիւս աթոռ նստած դատաստան տեսնեմ, դուք ալ որ իմ ետեւս եկաք՝ պիտոր իմ հետս տասուերկու աթոռ նստիք՝ տասուերկու Եւրայելացւոց ազգին դատաստանը տեսնելու ., : Եւտրը աս ալ ըսաւ թէ՛ ան վերջին դատաստանին օրը շատ մարդիկ որ հիմա մեծցեր առաջ ելեր են՝ թէ որ բարի գործք չունենան նէ, ետ կը ձգուին, ու ետ ձգուածները՝ իրենց բարեգործութեամբը առաջ պիտի ելլեն :

Ետև աս բանիս վրայ մէկ առակ մըն ալ պատ-

մեց . “ Ըրբայուծիւնն Ըստուծոյ , ըսաւ , մէկ տանուտէրի մը կը նմանի , որ առտուանց կանուխ կ'ելլէ իր այգիին մշակ (կամ պաղձի) բունելու . ու հետերնին աւուրչէք՝ օրը դահեկան մը խօսք դնելով (կամ պազար ընելով) իր այգին կը խորհէ : Ետքը ժամը (այսինքն սահաթը) իրեքին նորէն կ'ելլէ ուրիշ պարապ մարդիկ կը գտնէ , անոնց ալ կ'ըսէ թէ “ Կուք ալ այգիս գացէք բանեցէք . ետե ինչ որ պէտք է նէ ձեզի կը վըձարեմ ” : Ըսանկ ժամը վեցին ալ , իննին ալ մարդ կը գտնէ՝ ու ետեէ ետե այգին կը խրկէ : Ընկէ ետե իրիկուան դէմ ժամը տասնըմէկին ալ ելած՝ պարապ մարդիկ կը տեսնէ , ասոնց կը հարցընէ թէ՝ “ Ինչու բոլոր օրը հոս պարապ կեցեր էք ” . անոնք ալ կ'ըսեն թէ՝ “ Հապա մեզ մարդ չբռնեց ” . ան ալ զիրենք մէկախոնց պէս այգին կը խրկէ , ու իրենց խօսք կու տայ թէ “ Ինչ որ պէտք է նէ՝ դուք ալ կ'աւնէք ” : Երբոր ալ իրիկուն եղաւ , տանուտէրը իր գաւառապետին (այսինքն վէքիլխարձին) ըսաւ որ ան բանուորները առջևը կանչէ , ու ետքիններէն սկսի կարգով ինչուան առջինը աւուրչէքնին վըձարէ : Աւստի եկան տասնըմէկ ժամին բանուորները՝ ու մէյմէկ դահեկան առին . անոնցմէ ետե առջի բանուորները , որ իրենք մտուրնին զրեք էին թէ աւելի աւնեն , ու երբոր տեսան թէ իրենց ալ ան մէկախներուն պէս մէկ մէկ դահեկան տուաւ , սկսան տանախրոջը վրայ առտուալ թէ “ Ըս ինչ արդարութիւն է որ՝ անոնք միայն մէկ ժամ մը բանեցան , ու մեզի հետ հաւասար վարձք վճարեցիր անոնց , որ մենք բոլոր օրը ան տարին դատեր ենք ” : Տանուտէրն ալ ասանկ պատասխան տուաւ ասոնց մէկուն . “ Եղ-

բայր , ըսաւ , քեզի ինչ զրկանք ըրի . հետս մէկ
 դահեկան մը խօսք չդրիր մի , առ անիկայ՝ ու բանդ
 գնաց . ես իմ ստրկիս տէր չեմ մի՝ որ ինչպէս ու
 զեմ նէ անանկ ընեմ . ինչ կը նախանձիս իմ ան
 մէկալնոնցը ըրած բարերարութեանս վրայ .
 Այսպէս ալ , ըսաւ Հիսուս , ետքինները առջին
 պիտի ըլլան , ու առջինները ետքին . որտաճառն
 որ կոչուածները շատ են , բայց անոնցմէ ընտ-
 րուածները քիչ են . :

Գ. Լ. ՈՒ Խ Ի Գ .

Ղազարոսի բարեկամին Քրիստոսի յարարիւնք :

ԸՍՏ Քրիստոսի 33 : (Յովհ . ԺԵ .)

Ղազարոս ըսուած մէկ մարդ մը կար Հիսու-
 սի բարեկամ , որ երկու քոյր ունէր՝ Սարիամ
 ու Սարթամ , որ մէյտեղ Մեթանիա ըսուած
 գեղը կը բնակէին : Ըստ Ղազարոսը երբոր ինկա-
 հիւ ընդցաւ , իր քոյրերը Հիսուսի խրկեցին ըսե-
 լու թէ՝ « Բա սիրականդ հիւանդ է , » : Հի-
 սուս ան ատենը շրէաստանէ դուրս հեռու տեղ
 մը քաշուեր էր՝ նախանձոտ շրէաներուն ձեռ-
 քէն , որ զինքը քարկոծել մեռցընել կ'ուզէին :
 Երբոր սա լսեց Հիսուս , երկու օր ալ հոն տեղը
 կեցաւ , ու ետքը աշակերտներուն ըսաւ թէ՝ « Այ-
 ընք նորէն շրէաստան դառնանք , » : Աշակերտ-
 ները զեմ կեցան կ'ըսէին . « Ետ չէ որ շրէա-
 ները քեզ քարկոծել կ'ուզէին , ու հիմա ինչ-
 պէս հոն կ'երթաս , » : Հիսուս ալ անոնց առա-
 կով ըսաւ թէ՝ « Ղազարոս մեր բարեկամը քնա-
 ցեր է , կ'երթամ որ զինքը արթնցընեմ , » . ա-

նոնք ալ բանք չհասկընալով՝ կը զարմանային թէ
 ինչ կ'ըսէ : Ատքը ալ բանց ըսաւ Յիսուս . « Կ'ա-
 զարտար մեռաւ . բայց ես ուրախ եմ որ ձեր հա-
 լատքը ասով աւելի պիտի հաստատուի իմ վը-
 բաս » : Ընանկ երբոր եկաւ Քեթանիա հասաւ
 Յիսուս , Կ'ազարոս չորս օրուան մեռած ու գե-
 րեզմանը դրուած էր . Սարթա որ իմացաւ թէ՛
 Յիսուս կու գայ կոր , ելաւ առջևը վազեց ու ը-
 սաւ . « Տէր , թէ որ հոս գտնուած ըլլայիր նե՛-
 եղբայրս շէր մեռնէր . բայց այսու ամենայնիւ կը
 հաւատամ որ՝ ինչ որ Ըստուծոյ խնդրես նե՛ ,
 Ըստուած քեզի կու տայ » : Յիսուս ալ ըսաւ .
 « Սի վախնար՝ եղբայրդ յարու թիւն կ'առնէ » .
 ու անտեղը Յիսուս Սարթայի միտքը շինելով
 անոր աղէկ մը հաւտացուց թէ ինքը Քրիստոս
 Արդի Ըստուծոյ է : Ատքը երբոր գնաց Սար-
 թան՝ որ իր քոյրը Սարիամը Յիսուսի քուր
 կանչէ , ան ատենը բոլոր անոր քովը եղած սգաւոր
 բարեկամներն ալ հետ եկան՝ Յիսուսի վրայ թա-
 փեցան , ու ամէնքը մեռելին վրայ կու լային : Յի-
 սուսի ալ խիստ գուժը շարժեցաւ , հարցուց թէ՛
 ո՛ւր է անոր գերեզմանը , ու գերեզմանին քովն որ
 գնաց՝ Յիսուսի ալ լացը եկաւ , ու հրամայեց որ
 վրայի դրած քարը վերցընեն : Սարթա ալ ըսաւ .
 « Տէր , ինչպէս կ'ըլլայ , չորս օրուան է մեռելը ,
 ալ կը հոտի » . Յիսուս ալ ըսաւ . « Քեզի չտի
 թէ հաւատք որ ունենաս նե՛ , Ըստուծոյ հրաշքը
 կը տեսնես » : Ատե վրայի քարը մէկ դի առնել
 տաւա , ու հօր Ըստուծոյ աղօթք ընելով եր-
 բոր ամուր ձայնով մը կանչեց . « Կ'ազարոս , ե-
 լի՛ր դուրս եկուր » , ան ատենը շուտ մը մեռելը ,
 որ սոսուրները ու ձեռուրները պատանքով փաթ-
 թած կապուած էր , ողջընցաւ կայսեցաւ , ու

Յիսուս հրամայեց որ արձըկեն թողուն որ ելէ քալէ :

Ըս բանս տեսնողներէն շատը Յիսուսի հաւատացին , ու ոմանք ալ գնացին Փարիսեցիներուն պատմեցին , որ Յիսուսի սատիկ թնամի էին : Ուստի քահանայապետները և Փարիսեցիները մէկ տեղ եկան ժողովք բրին , ու նախանձով կուրցած աս պատճառս բերին թէ “ Յիսուսը սասնկ որ թողունք , իր հրաշքներովը բոլոր ժողովուրդը իրեն կը դարձնէ հաւատացեալ կը շինէ . և ան ատենը Հռոմայեցիք կու զան մեզ հիմնայատակ կ'ընեն ” . անոր համար Այլիափա քահանայապետն ալ խորհուրդ տուաւ ըսաւ . “ Ըլեւի լաւ է որ մէկ հողի մը մեռնի՝ քան թէ բոլոր ազգերնիս կորսուի ” . ու անանկ մէջերնին խօսքը հաստատեցին որ Յիսուսը բռնեն սպաննեն : Յիսուս ալ աս լսելով , նորէն երեսը ծածկեց՝ գնաց քիչ մը ատեն Արիւայիմ՝ ըսուած մէկ զեղ մը կեցաւ :

ԳԼՈՒԽ ԻԳ .

Զարեոսի դարձը , սգնուակակին առակը , և Մարիամու Յիսուսը եղով օծելը :

(Մատթ . Ի . ԻԶ : — Ղուկ . ԺԹ : — Մարկ . ԺԳ :)

Օտակին տօնը երբոր մծտեցաւ , անկէց ելաւ Յիսուս որ նորէն Արուսաղէմ երթայ . ու ճամբան աշակերտաց յայանեց թէ աս տօնախմբութեանս ատենը մարդարէից իր վրայ դրածները պիտի Արուսաղէմի մէջ կատարուի . որ պիտոր չարչարեն զինքը՝ ու խաչ հանելով սպան .

նեն, և ինքն ալ իրեք օրէն կտրը նորէն յարու-
 թիւն պիտոր առնէ: Ըն առենը Յակոբոս ու
 Յովհաննէս Օ երեղեայի օրդիրը, իրենց մայ-
 րը՝ որ Յիսուսի ազգական էր) բերան ըրին, ու
 Յիսուսի խնդրեցին որ՝ (ինչպէս կարծիք ունէին)
 ինքը թագաւոր նստի նէ, զիրենք առաջ քաշէ:
 Յիսուս ալ խրատեց զանոնք ու ըսաւ թէ՛ «Իմ
 թագաւորութիւնս աշխարհքիս թագաւորաց
 պէս չէ, որ հպարտութեամբ մեծութեան ե-
 տակ իյնալով ըլլայ, հասցա խոնարհութեամբ
 ու համբերութեամբ»:

Կտրը երբոր Յիսուս Կրիքով քաղաքը մե-
 տեցաւ, ճամբուն վրայ մէկ մուրացկան կոյր մը
 բռնեց: Ըն քաղաքս մէկ գլխաւոր խիստ հա-
 բուստ մաքսապետ մը (այսինքն կէօմրիւհիճի պա-
 շի մը) կար՝ Օ արէս ըսուած, որ Յիսուսի անու-
 նը լսեր էր, ու շատ կ'ուզէր որ զինքը տեսնէ. ա-
 նոր համար երբոր Յիսուս Կրիքով գնաց, ու
 սկսաւ քալել՝ բազմութիւն վրան ժողոված որ հե-
 տը կ'երթային, աս Օ արէսը կարճ մարդ մը
 ըլլալով՝ ժանտաթղէնի ըսուած ծառը ելաւ, որ
 բարձրէն աղէկ մը տեսնէ: Յիսուս ալ անոր
 առջեկէն անցնելու առենը վեր նայեցաւ ու ը-
 սաւ. «Օ արէս, շուտ ըրէ՛ վար ինձիր. այսօր
 պէտք է որ ես քու տունդ դամ հանգչիմ»:
 Ըն ալ շուտ մը ինձաւ ուրախութեամբ առաւ Յի-
 սուսը իր տունը տարաւ. ասոր վրայ ժողովուր-
 դը սկսաւ մնամալ թէ՛ ինչպէս մեղաւոր մարդու
 քով գնաց Յիսուս: Բայց Օ արէս Յիսուսի
 առջեր ելաւ ու ըսաւ. «Տէր, ահա իմ բոլոր ու-
 նեցածիս կէտը աղքատաց կու տամ, և որուն որ
 զրկանք ըրեր եմ՝նէ՛ չորս անգամ աւելի հատու-
 ցումն կ'ընեմ իրեն»:
 Ըն առենը Յիսուս ալ

ըսաւ . “ Ըստ որ աս տունս փրկուեցաւ , որ ասի-
 կայ ալ Ըբրահամու զաւակ էր . և ես անոր հա-
 մար եկայ որ կորսուածները փնտրուեմ , ու փրկ-
 կեմ . : Ետքը Հիսուս մէկ առակ մը ըսաւ իր Ե-
 բրուսաղէմ երթալուն վրայ , որ իր թագաւորու-
 թիւնը յայտնէ . “ Սէկ աղնուահան (այսինքն
 պէշղատէ) մարդ մը մէկ հեռու երկիր մը եր-
 թալու եղաւ , որ ան տեղի մեծէն իր թագաւո-
 րական իշխանութիւնը առնէ , ու դառնայ : Ըսի-
 կայ իր ծառաները կանչեց քովը , ու մարդ գը-
 լուխ՝ տասը տասը մնաս (կամ քէտէ ստակ) տուաւ ,
 ու ըսաւ որ՝ զատոնք բանեցընեն ինչուան ինքը
 դառնայ : Երբոր ելաւ դնաց , իր քաղքի մար-
 դիկը որ զինքը չէին սիրեր՝ ետեւէն խրկեցին ան
 մեծին հասկըցընելու թէ : “ Ըսիկայ մենք չենք
 ուզեր որ վրանիս թագաւոր ըլլայ . : Բայց այ-
 սու ամենայնիւ երբոր ասիկայ թագաւորութիւ-
 նը ձեռք առած դարձաւ , առջևը կանչեց ան
 ծառաները՝ որ նայի տեսնէ թէ ինչ վաստակ
 ըրին : Ընոնցմէ առջինը եկաւ ըսաւ թէ “ Տէր ,
 քու տուած տասը մնասը՝ վրան տասը շահ տը-
 ւաւ . : Ըն ալ դովեց զինքը ու ըսաւ . “ Բարի
 ծառայ , որովհետեւ աս քիչ բանիս վրայ հաւա-
 տարիմ եղար , քեզ տասը քաղաքներու վրայ իշ-
 խան կ'ընեմ . : Սէկալն ալ եկաւ ըսաւ թէ
 “ Տուածէդ հինգ մնաս շահ ելաւ . : ան ալ զին-
 քը հինգ քաղաքներու վրայ իշխան դրաւ : Ե-
 տեւէն երրորդ ծառան եկաւ՝ ու զանգըտելով
 սկսաւ ըսել . “ Տէր , ես վախնալով որ դուն մէկ
 անանկ ստամբակ (այսինքն ետուամաղ) մարդ մըն
 ես , որ ձեռքովդ տեղ մը չդրած բանը՝ կը վերցը-
 նես կ'առնես , ու չցանաճդ կը հնձես (այսինքն
 պիլմիշ կ'ընես) , անոր համար ահա սո քու մը

նասնեղդ որ ծրարեր պահեր էի , : Լ'ն ատենը տէրն ալ սրդողելով ըսաւ . “ Քու խօսքովը քեզ կը դատասպարտեմ , ով անհաւատ ծառայ . թէ որ դուն զիտելիր որ ես ասանկ մարդ մըն եմ նէ , ինչո՞ւ իմ ստակս սեղանաւորի (այսինքն սառաֆի) չտուիր , որ ես հիմա դայի անկէց շահովը առնէի , : Ուստի հրամայեց որ շուտ մը ան ստակը առնեն , առջի տասը շահեցընողին տան , ու ըսաւ թէ “ Ով որ ունի նէ՝ արժան է որ անոր եւելովը տրուի , ու չունողին քովէն ան քիչ մը ունեցածն ալ ետ առնուի , : Լ'նկէ ետեւ իրեն թշնամիները , որ իր թագաւոր ըլլալը չէին ուզեր , զանոնք ալ առջևը կանչեց սպաննել տուաւ .”

Լ'սկէ ետքը Յիսուս Երիբովէ ելած Երուսաղէմ երթալնի ճամբան նորէն Լեթանիա որ հանդըպեցաւ , հոն Սիմոն Բարոտ ըսուած մէկ մը զինքը հացի կանչեց . ու աս սեղանիս ինչպէս կ'ըսեն կը ծառայէր Սարթան , և իր Կազար եղբայրն ալ , որ քիչ մը առաջ Յիսուս յարուցեր էր , ան ալ սեղանը նստողներէն մէկն էր : Լ'սոնց Սարիամ ըսուած քոյրերնին ան ատենը ձեռքը ամանով լիտր մի (կամ հոխա մը ըսենք) աղնի անուշահոտ եղ առած , եկաւ Յիսուսի ոտերները լուաց՝ ու իր գլխուն մաղերովը բռնեց սրբեց . ետքը ան ամանն ալ կոտրեց բացաւ՝ Յիսուսի գլուխը ու ոտերները օձեց ան պատուական եղովը , որ բոլոր տունը անոր անուշ հոտը բռնեց : Հոն նստողները՝ ասոր վրայ մեմնացին . “ Լ'քան , ըսին , ատ եղիդ , որ իրեք հարիւր դենարէն (կամ զուռուշէն) աւելի կրնար ծախուիլ , ու աղքատներուն ողորմութիւն տրուի , : Յիսուսի աշակերտաց մէջէն Յուդան ամենէն աւելի ցաւ ցուցուց աս բանիս վրայ . պատճառն որ՝

Յիսուսի գանձանակը (որ աղքատաց համար ստակ
կը ժողովէին) ինքը կը պահէր, ու անկէջ ալ ին-
քը ուզած ատենը կը գողնար: Բայց Յիսուս
կնկանը տէր կենալով՝ ըրածը գովեց, « Խորհրդ-
դաւոր բան է, ըսաւ. նաև աղքատները ամէն
իժիւր ձեր հետ են, ըսաւ. երբոր ուզէք նե՛ ա-
նոնց որորմուծիւն կրնաք ընել. բայց ես միշտ
ձեր հետը չեմ »:

Գ. Լ. ՈՒԽ Ի Ե .

Յիսուս փաստադրապէս Երուսաղեմ կ'երթայ, ու նոն
նորէն հրաշքներ կ'ընէ:

(Մատթ. ԻԵ: — Մարկ. ԺԵ: — Ղուկ. ԺԹ:)

Նոր մէկալ օրը՝ որ ինչպէս կ'ըսեն կիրակի
օր կ'իշխայ, Յիսուս Բեթանիայէ ելաւ որ Լ-
րուսաղէմ երթայ. ու Չիթենեաց լերան տա-
կը հասաւ նե՛ աշակերտներէն երկու հօդի խոր-
կեց, որ իրենց դիմացի գեղը երթան, « Աւ հոն,
ըսաւ, դուքը մէկ էջ մը իր քուռակովը կապած
կը գտնէք, որ դեռ մարդ վրան նստած չէ, զա-
նիկայ արձրկեցէք ինձի բերէք. ու թէ որ մարդ
արդիւլեւու ըլլայ նե՛ ըսէք թէ Խրենց տիրոջը
պէտք են »: Աշակերտներն ալ Յիսուսի ըսածին
պէս գացին ան էջը գտան, ու իր քուռակովը առին
Յիսուսի բերին. ետքը ասոնց վրայ իրենց լաթեր-
նին ձգեցին, ու Յիսուսը՝ ինչպէս կ'ըսեն՝ քիչ մը
մէկին քիչ մը մէկալին վրան հեծցուցած, ելան
ամէնքը մէկ տեղ դէպ 'ի Լրուսաղէմ եկան. •
Ան ատենը Լրուսաղէմի ժողովուրդն ալ ըսելով
թէ Յիսուս կու գայ կոր՝ ամէնքը թափեցան

դէմը երան, ու ձեռու ընկն արմուկն իի և ձիթե
 նիի կանանց ձիւղեր առած՝ սնանկ մեծ ցնծու
 մով ուրախութեամբ Յիսուսի առջևէն ինկած՝
 մէկ թաղաւորի մը պէս զինքը կը բերէին, Մ
 նոնցմէ ոմանք վրայի հազուսանին ստրին տակը
 գետինը կը փռէին, ոմանք ծառերու ձիւղերով
 ձամբաները կը զարդարէին, և ամէնը մէկ բե
 րան աշակերտներուն հետ ուրախութեամբ կ'եր
 գէին. () Եհնու-նի-ն որդոյ Սա-նի, օրհնեալ է.
 Էեալ յանուն Տէառն. օրհնու-նի-ն ի Բարչուան. և
 ասով Օարարիա մարդարէին ըսածը կատա
 բուեցաւ թէ՛ Մայէ՛ր դստեր Սիոնի. Միա Ռա
 ֆա-որ բո փայ իեղ, հեծեալ յեղ և յա-անախի իշոյ,
 Փարիսեցիները ու կարդացողները՝ որ Յիսուսի
 թշնամի էին, երբոր աս բաներս տեսան՝ սաս
 տիկ նախանձէն չէին զիտեր ինչ ընեն. մանա
 ւանդ երբոր կը լսէին ան օրհնութեան ձայնե
 րը, որ մեծ ու պզտիկ կը կանչէին. () Եհնեալ որ
 փայ Ռաֆա-որդ յանուն Տէառն. ուստի եկան Յի
 սուսի ըսին որ՝ ինքը անոնց արգիլէ որ ասանկ
 չկանչեն, Յիսուս ալ իրենց պատասխան տուա
 ըսաւ. « Թէ որ ատոնք ձայն չհանեն նէ՛ ան ա
 տենը քարերը կը սկսին կանչու ըստել, : Ատքը
 Յիսուս երբոր Արուսաղէմի քաղքին ալ մօտե
 ցաւ, վրան նայեցաւ ու արցունք թափելով սկը
 տաւ ըսել. « Կոնէ հիմն խեղդ վրադ ժողովիք
 ու զգաստանայիր. հապա թէ չէ՛ զիտնաս որ
 քու թշնամիներդ վրադ պիտի հաննին, ու քեզ
 պաշարեն և անանկ հիմնայատակ ընեն որ՝ քար
 քարի վրայ պիտոր չթողուն. որովհետե զոն
 • Զանցար Մտուծոյ ողորմութեան տառնը որ ի
 րեն դանայիր, : Մյսպիտի փառաւորութեամբ
 թաղաւորի պէս Յիսուս Արուսաղէմ մտնէին

Ետքը՝ տաճարը գնաց, ու հոն՝ ինչպէս մէկ ուրիշ անգամ մըն ալ հանգըրպեր էր, տեսնելով որ մարդիկ նստեր բան կը ծախէին առուտուր կ'ընէին՝ վրանին սրգողելով զամէնքը անկէց դուրս վաընտեց, ու իրենց ըսաւ թէ՛ «Մարդարէից զբերուն մէջ Մատուած կը հրամայէ որ՝ իր տունը աղօթքի տուն ըլլայ, որ դուք աւազակներու այր (այսինքն ձէլալիներու մաղարա) էք ըրեր »: Աւ հոն տաճարին մէջը նորէն կոյրեր ու կաղեր բժշկելէն ետքը՝ իրիկուան դէմ քաղքէն դուրս ելաւ, աշակերտներուն հետ անտեղը մօտ Մեթանիա գեղը գնաց որ հանգչի:

Մէկալ օրը առտուանց նորէն Յիսուս աշակերտներուն հետ Արուսաղէմ դառնալինի՝ անօթեցաւ, ու ճամբուն վրայ մէկ թղենի մը (այսինքն ինձիրի ծառ մը) տեսաւ բոլոր տերևներով լեցուած. երբոր ասոր քովը մօտեցաւ ու նայեցաւ որ վրան ամենեւին պտուղ չունի՝ որ փրցընէ ուտէ, ան ատենը զանիկայ անիծելով ըսաւ. «Մէյ մ'ալ ասկէ ետե քեզմէ մարդ պտուղ չուտէ »: և աս ըսելուն պէս՝ շուտ մը ան թղենին սկսաւ չորնալ, (որ Հրէից սինակոկային օրինակը եղաւ): Միւս օրը մէկ մ'ալ նորէն Յիսուս աշակերտներով անկէց անցնելինի, զարմացան աշակերտները՝ ու Յիսուսի ցուցուցին թէ՛ «Այլ ինչպէս շուտ մը բոլոր արմատէն չորցեր է ծառը »: Յիսուս ալ իրենց պատասխան տուաւ թէ՛ «Ղշմարիտ կ'ըսեմ ձեզի. թէ որ կատարեալ հաւատքով չէ թէ միայն թղենիին, հապա ատ լերանդ ալ ըսէք թէ Ալիբ ծովը ինկիր, անանկ կ'ըլլայ. և ինչ որ հաւատքով ձեր աղօթքին մէջը խնդրէք նէ՛ կ'առնէք »:

Գ Լ Ո Ի Խ Ի Չ .

Յիսուս նորէն առակներով կը խորատե՛ ու կը
պատգանակեցրնէ Հրեայքը :

(Մատթ . ԻԵ : — Ղուկ . Ի)

Երկու օրէն կտու երբոր Յիսուս նորէն առ-
ձարը գնաց , կերպ կերպ հարցմունքներով քա-
հանայապետները ու կարգացողները սկսան փոր-
ձել զինքը : Յիսուս ալ այսպիսի առակներով
յանդիմանեց զիրենք . « Սէկ մարդ մը , ըսաւ ,
երկու որդի ունէր . առիկայ մէկուն ըսաւ թէ
« Տղայ , այսօր այգին դնա՛ բանէ » : Ըն ալ
« Հրամար ես կ'երթամ » , ըսաւ , ու չգնաց : Եր-
բոր տեսաւ թէ անիկայ չգնաց , դարձաւ մէկալ
տղին ըսաւ որ ինքը երթայ : Ըն ալ առջի բե-
րանը պատասխան տուաւ թէ « Այ՛նք եր-
թար » . բայց ետքը զղջացաւ՝ ու գնաց այգին
բանեցաւ » : Ըս պատմելէն ետքը Յիսուս հար-
ցուց թէ՛ « Ըս երկուքէն որը իր հօրը կանխը
կատարեց » . անոնք ալ ըսին թէ ետքինը : Յի-
սուս ալ ըսաւ . « Ղմարիտ կ'ըսեմ որ՝ ասանկ
ալ մարտաւորները և պոռնիկները ձեզ մէկզի կը
թողուն , ու իրենք արքայութիւն կ'երթան » :

Ընոր կտուէն՝ Յիսուս « Ըս առակս ալ ըսե-
ցէք , ըսաւ : Սէկ տանուտէր մը այգի տնկեց ,
ու ամէն կողմանէ աս այգիս հողալէն՝ պէտ ը-
նելէն ետքը , մշակներուն ձեռքը տուաւ , ու ին-
քը ելաւ մէկ հեռու տեղ մը գնաց : Երբոր ալ
այգին կ'ընելու ժամանակը մտտեցաւ , իր ծառա-
ները անոնց խրկեց , որ այգիին պտուղը ժողովեն

առնեն : Մշակներն ալ բռնեցին աս ծառաներու մէկը տանջեցին , մէկը սպաննեցին , ու մէկալը քարկոծեցին : Տանուտէրը նորէն առջինէն շատ ուրիշ ծառաներ խրկեց . մշակները ասոնց ալ անանկ ըրին : Ատքը տանուտէրը իր մէկ հատիկ սիրական որդին խրկեց . « Աարելի է որ , ըսաւ , մշակները ասկէց ամբնան » : Բայց մշակները ան որդին որ տեսան , մէջերնին ըսին որ « ԲՏա աս տանուտիրոջը ժառանգն է . զատիկայ սպաննելու է , որ ասոր ժառանգութիւնը մեզի մնայ » . ուստի անանկ սյգիէն դուրս հանեցին՝ ու զան ալ սպաննեցին : Հիմա , ըսաւ Յիսուս , ինչ կը կարծէք . երբոր այգիին տէրն որ դառնայ՝ ինչ կ'ընէ անոնց » : Ասողներն ալ պատասխան տուին թէ « Բն անորէն մշակները չարաչար կը սպաննէ , ու այգին կ'առնէ ուրիշ մշակներու ձեռքը կու տայ , որ ատենովը պտուղը իրեն հասցնեն » : Ատքը երբոր իմացան հրէայքը աս առակիս միտքը՝ որ իրենց սինակոկային վրայ է , « Վաւ լիցի , ըսին , Բստուած չընէ որ ատանկ ըլլայ » :

Սէկ ուրիշ առակ մըն ալ Յիսուս անոնց պատմեց . « Բըբայութիւնն երկնից , ըսաւ , կը նմանի մէկ թագաւորի մը , որ իր տղին ուղեց հարսնիք ընել , ու ծառաները խրկեց որ երթան հարսնելորները կանչեն : Արբոր տեսաւ որ անոնք զալ չուղեցին , նորէն ուրիշ ծառաներ խրկեց իրենց ըսաւ թէ « ԲՏա սեղանիս ամէն բաները պատրաստ է , զիրցուցած կենդանիներս մօրթուած կեցեր են , ելէք հարսնիքս եկէք » : Բայց այսու ամենայնիւ անոնց հոգը չեղաւ մտիկ չըրին . հապա ամէն մարդ զրուեցան երան իրենց բանը զացին , մէկը իր արտը , մէկալը իր առուտուրին ետեւէն . նաև անոնցմէ ոմանք ալ բռնեցին աս

Ճառանները քամահրելով սպաննեցին : Ըստ որ լսեց թագաւորը , սաստիկ սրդողեցաւ վրանին՝ զինուորներ խրկեց ան սպաննողները մեռցուց . ու իրենց քաղաքը վրանին երել տուաւ : Կտքը դարձաւ ըսաւ իր ճառաներուն . “ Հարսնիքս պատրաստ էր , ու հարսնեւորները անոր արժանի չեղան . ուստի դուք ալ գնացէք փողոցներէն (այսինքն սօխախներէն) մարդիկը հարսնիքս կանչեցէք ,” : Ըստնք ալ ելան՝ ու որ գտան նէ չար ու բարի ժողվեցին բերին , ու անանկ բոլոր նրստելու տեղուանքը հարսնեւորներով լեցուեցաւ : Կտքը երբոր ասոնց քով եկաւ թագաւորը , ու մէջերնին մէկը տեսաւ որ հարսնիքի լաթ չէր հագած , դարձաւ ասոր ըսաւ . “ Գու՛ն ինչպէս հոս եկար մտար՝ որ հարսնիքի լաթ չունէիր ,” : Ըն ալ պատանձեցաւ՝ չկրցաւ պատասխան տալ : Թագաւորն ալ շուտ մը հրամայեց ճառաներուն որ անոր ոտքը ձեռքը կասպած դուրս ձգեն զինքը : Արովհետեւ կոչուածները շատ են . բայց անոնցմէ ընտրուածները քիչ են ,” :

Ըսկէ ետքը մէկտեղ խօսք դրին Փարիսեցիքը՝ որ Հիսուսը իր բերնովը թագաւորական բանի վրայ յանցաւոր (այսինքն սուչլու) ձգեն , ու բռնել տան . ուստի կեղծաւորութեամբ եկան ըսին թէ՛ “ Արդապետ , դիտենք որ դուն ճշմարտախօս մարդ մըն ես , ու մարդու երեսպաշտութիւն չես ըներ շիտակը կը գրուցես . ուստի մեզի ըսէ՛ . բեզի ինչպէս կ'երևայ , պէտք է որ մենք հոռմայեցուց կայսերը հարկ (այսինքն հարաճ) տանք՝ թէ չէ ,” : Հիսուս ալ իմանալով անոնց սատանութիւնը՝ իրենց ըսաւ . “ Կեղծաւորներ , ինչո՞ւ զիս կ'ուզէք փորձել . հարկին ստակը ինձի ցուցրցէք որ տեսնեմ ,” : Ըստնք ալ

Հանեցին ձեռքը մէկ դահեկան մը տուին : Յիսուս
 ալ հարցուց անոնց թէ : « Ըստ Վարդապետի պատկերքը
 ու գրուածքը որո՞ւնն է , , անոնք ալ ըսին . « Հոռ-
 մայեցուց կայսերն է , , : Ըստ աստե՛նը Յիսուս ալ
 անոնց պատասխան տուաւ . « Ըստնի է նէ , ըսաւ ,
 զնացէք կայսերը բանը՝ կայսեր տուէք , ու Ըս-
 տուծոյ բանը Ըստուծոյ , , : Ըստ որ լսեցին՝ զար-
 մացան , ու պատահանձած թողուցին երան գացին :

Ըստնց ետեւէն Սաղուկեցիները Յիսուսի քով
 եկան , (որ անանկ աղանդ կամ մէսօսէս ունէին՝
 որ յարու թիւն մեռելոց չէին ընդուներ) , ասոնք
 ալ փորձելով՝ աս տարակուսանքս Յիսուսի առ-
 ջևը գրին . « Սարգապետ , ըսին , Սոլսէս մար-
 դարէն օրինաց մէջը գրեր է . թէ որ մէկ կար-
 դուած մարդ մը առանց զաւկի մեռնելու ըլլայ
 նէ , եղբայրը՝ անոր որբւարի կնիկը առնէ , ու
 անիկէց իր եղբօրը զաւակ թողու : Գանք որ , ը-
 սին , ատենով եօթը եղբայր կային . ասոնց առ-
 ջինը կարգուեցաւ , ու առանց զաւկի որ մեռաւ ,
 զան կնիկը՝ երկրորդ եղբայրը առաւ , ու ան ալ
 անիկէց զաւակ չունեցաւ , և ասանկ ան եօթը
 եղբայրն ալ մէկմէկու ետեւէ աս կնիկը առին՝ ու
 առանց զաւկի մեռան . ետքը անոնց ետեւէն կը-
 նիին ալ մեռաւ . Հիմա ըսէ՛ , ըսին , վերջի դա-
 տաստանի երբոր ամէնը յարու թիւն առնելու
 ըլլան նէ , աս եօթը եղբայրներէն որո՞ւն պիտոր
 ըլլայ աս կնիկը , որ առաջ եօթն ալ անոր հետը
 կարգուած էին , , : Յիսուս ալ իրենց օրատա-
 խան տուաւ թէ : « Գուք մոլորեալ էք , անոր
 համար չէք գիտեր սուրբ գիրքը ինչ գրած է , ու
 չէք իմանար Ըստուծոյ կարողութիւնը : Ըստ աշ-
 խարհքիս մարդիկը , ըսաւ , կը կարգուին . բայց
 ո՛վ որ արժանի կ'ըլլայ անդիի աշխարհքը երթաւ .

լու՝ հոն կարգուիլ չկայ, ու մեռնիլ չկայ, հա-
պա հրեշտակաց պէս ամէնքը Մատուծոյ որդի
կ'ըլլան : Բայց մեռելոց յարուժեան վրայ չէք
կարդացեր Սոլսեսի գիրքը՝ որ կ'ըսէ . Եւ ի՞նչ
Մարտած Մարտահոս, Մարտած Մահաճայ, և
Մարտած Յակոբայ . ուստի թէ որ ասոնք հո-
գւով կենդանի չըլլային նէ՛ ասանկ չէր ըսեր
Մատուծ . որովհետեւ ինքը չէ թէ մեռած ու
չընչացածներուն, հապա կենդանիներուն Մ-
տուած է 77 :

Գ Լ Ո Ւ Խ Ի Լ

Յիսուսի ետքի վարդապետութիւնները և ստակ մը :

(Մարկ . ԺԲ : — Ղուկ . ԻԵ : — Մատթ . ԻԾ :

Յիսուս ետքի ատենները մէկ հեղ մը տա-
ճարը գանձանակին դիմացը կեցեր՝ կընայէր թէ
ինչպէս Ժողովուրդը գանձանակը ստակ կը ձգէ .
ու տեսաւ որ՝ շատ հարուստ մարդիկ եկան՝ ա-
ռատ տուրք ձգեցին . ետքը տեսնէ որ մէկ որ-
բեւարի աղքատ կնիկ մըն ալ եկաւ՝ երկու լու-
մայ (այսինքն մանդրը) ձգեց ան գանձանակը :
Ինչ ատենը Յիսուս դարձաւ իր աշակերտներուն
ըսաւ . “ Ձեզի ճշմարիտ կ'ըսեմ՝ որ աս աղքատ
որբեւարիս ամենէն շատ ձգեց գանձանակը . ին-
չու որ՝ մէկայնոնք ամէնքը իրենց եւելցած սոր-
կէն Մատուծոյ ընծայ տուին . բայց աս կնիկս
բոլոր իր ունեցածը, որ իրեն ապրուստիին էր,
հանեց տուաւ . ” : Ետեւ երբոր Յիսուս տաճա-
րէն դուրս ելլելու եղաւ, աշակերտները ան տա-
ճարին փառաւոր շէնքին վրայ զարմանալով սկը-

տան իրեն ցուցնել : Յիսուս ալ անոնց պատաս-
խան տուաւ թէ “ Ըտ որ հիմն ատանկ կը տես-
նէք , պիտոր ատեն զայ՝ որ ատոր մէկ քարը մէ-
կալին վրայ պիտի չթողուն , , : Ընկէ ետքը եր-
բոր գնացին Չիթենեաց լեռը նստան՝ որ տա-
ճարին դիմացն էր , Յիսուս նորէն աս բանիս
վրայ երկայն խօսեցաւ՝ թէ ինչպէս սոսկալի
պատերազմներով Արուսաղէմ պիտի կործանի ,
և իրեն հաւատացեալները ինչ նեղութիւններ
պիտի քաշեն , ու թէ աշխարհքիս ետքը ինչպէս
պիտի մարդիկ իրար անցնին , և ինքը ինչպէս
փառաւորութեամբ պիտոր զայ՝ որ վերջին դա-
տաստանը բնէ :

Ը բաներուս ետեւէն՝ աս առաւիս ալ պատ-
մեց . “ Ըն ատենը , ըսաւ , արքայութիւնն երկ-
նից կը նմանի տասը կուսանքներուն , որ իրենց
լապտերները (այսինքն Փէնէոները) ձեռուը-
նին առած զացին որ փեսան ու հարսը զի-
մաւորեն : Ըոնցմէ հինգը յիմար (այսինքն ան-
խելք կամ խենթ) էին , ու մէկալ հինգը իմաս-
տուն էին : Յիմարները լապտերնին վառած ձե-
ռուրնին որ առին , չմտածեցին որ՝ հետերնին
ուրիշ եղ ալ առնեն . բայց իմաստունները իրենց
լապտերներուն հետը ուրիշ ամանով եղ ալ ա-
ռին : Ըռջի բերանը փեսան երբոր ուշացաւ չե-
կաւ , ասոնց ամենուն քունը տարաւ քնացան .
ետքը կէս գիշերուն յանկարծ ձայն ելաւ թէ
“ Ըհա փեսան կու զայ կոր , շուտ ըրէք առջևը
եղէք , , : Ըն ատենը աս ամէն կուսանքը ելան՝ ու
սկսան լապտերնին շինել : Ըայց յիմարները տես-
նելով որ եղերնին կարճ կու զայ կոր , իմաս-
տուններուն ըսին թէ “ Ըեր եղէն քիչ մը մե-
զի տուէք , որ լապտերնիս չմարի , , : Ըմաստուն-

ներն ալ ըսին . “ [Ժ]է որ մեր եղէն ձեզի ալ տալու ըլլանք նէ , ան ատենը ոչ մեզի՝ ոչ ձեզի կ'օգտէ . ուստի կ'ուզէք նէ գնացէք ձեզի համար խանութէն եղ գնեցէք . ” Երբոր անոնք գնելու գացին , ան ատենը փեսան ալ եկաւ հասաւ , ու ուլ որ պատրաստ կար նէ՝ հետը հարսնիքին տունը մտան , դուռը գոցուեցաւ : Ետքէն երբոր եկան ան յիմարները՝ ու դուռը զարնելով կ'ըսէին . “ Տէր , տէր , դուռը բաց մեզի . ” ներսէն պատասխան տուաւ [Ժ]է . “ Նմարիտ կ'ըսեմ որ ես ձեզ չեմ ճանչնար . ” Ետքը ըսաւ Յիսուս . “ Ուրեմն պէտք է որ միշտ արթուն ու պատրաստ կենաք . ինչու որ չէք գիտեր անոր գալու օրը ու ժամը . ”

Ետքէ ետքը Յիսուս ան ալ ըսաւ [Ժ]է ինքը վերջի դատաստանին ինչպէս փառաւորապէս պիտի դայ՝ բոլոր հրեշտակներն ալ իր հետը , ու յա[Ժ]ոս փառաց նստած՝ բովանդակ աշխարհքիս մարդիկը առջևը պիտի ժողվին . և զանոնք երկու դաս պիտի բաժնէ , արդարները աջ դին՝ ու մեղաւորները ձախ դին : Երգարներուն ըրած բարի գործքերը իրենց առջևնին դնելով պիտոր ըսէ . “ Եկէք , իմ հօրմէս օրհնուածները , մտէք վայելեցէք արքայութիւնը՝ որ ձեզի համար պատրաստուած էր . ” Եւ մեղաւորներուն չար գործքերը երեսնին տալով՝ անոնց ալ պիտի ըսէ . “ Բովէս գնացէք կորիք , անիծեալներ , յախտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սա դայելի ու իր սատանաներուն . ” Եւ “ Ըն ատենը , ըսաւ , անոնք յախտենական տանջանքը կ'երթան , ու արդարները յախտենական կեանքը . ”

Եւ քարոզներս տալէն ետքը , Յիսուս յայանեց իր աշակերտացը՝ [Ժ]է ասկէ երկու օրէն զատիկ

կըլլայ, ու ան զատկին ատենը զինքը սկիտի
 Հրէաները բռնեն խաչ հանեն :

Գ. Լ. ՈՒԽ Ի Ը .

Յիսուսի մատուցիւնը, և վերջին ընթրիքը :

(Մատթ. ԻԶ : — Մարկ. ԺԳ : — Դուկ. ԻԲ : —
 Յովհ. ԺԳ :)

Օ՛րատկէն երկու օր առաջ՝ Յիսուս աս վերի
 բաները ժողովրդոց կը քարոզէր, Հրէից քահա-
 նայապետները ու ուսուցիչները ան ատենը մէկ-
 տեղ ժողովեցան Այսիափա քահանայապետին
 քովը, ու խօսք դրին որ՝ Յիսուսը մէկ կերպով
 մը բռնեն սպաննեն . բայց աս ալ մտմտացին որ՝
 ան տօնին օրերը չընեն . չըլլայ թէ ըսին ժողո-
 վուրդին մէջը մէկ շիտթու թիւն մը ելլէ : Ըն-
 ատենն ալ Յիսուսի աշակերտներուն մէկը, որ
 Յուդա Իսկարիովտացի կ'ըսուէր, սատանան ա-
 սոր փորը մտաւ, որ գնաց անոնց ըսաւ թէ « Ին-
 ծի ինչ կու տաք որ ես Յիսուսը ձեր ձեռքը
 մատնեմ » : Ընծիք ալ շատ ուրախացան ասոր
 վրայ, ու իրեն խոստացան որ երսուն արծաթի
 (կամ զօլթաթա) տան, թէ որ աս բանս գլուխ
 տանի : Յուդա ալ ան ատենէն ետեւէ եր որ ա-
 ոանց ժողովուրդը ոտք հանելու՝ Յիսուսը մատ-
 նէ՝ անոնց ձեռքը տայ :

Բաղարջակերաց (այսինքն համուրսուզի) առ-
 ջի օրը աշակերտները Յիսուսի միտքը ձգելով
 հարցուցին թէ « Ո՛ր կ'ուզես որ երթանք ստա-
 րաստենք զատկական գառը ուտելու » : Յիսուս
 ալ ան ատենը Չիթենեաց լեռը գանուելով

Պետրոս ու Յովհաննէս առաքեալը խրկեց որ
 աս բանս տեսնեն, իրենց ըսաւ. «Վնացէք Լա-
 թուսաղէմ, ու քաղաքը մտնելնուդ պէս մէկ մարդ
 մը դիմացնիդ կ'ելլէ, որ սափորը կանակը ջուր էր
 տանի. ասոր ետեւէն գացէք, ու մը տունը որ ան
 մտնէ նէ՛ անոր տանախրոջը ըսէք թէ՛. «Վար-
 դապեալը մեզ քեզի խրկեց ըսելու, որ Մալիմա-
 տէնս մօտեցեր է, կ'ուզեմ որ զատիկը քու քովդ
 ընեմ իմ աշակերտներուս հետ», . ան ալ ձեզի
 մէկ մեծ զարդարած վերնատուն մը (այսինքն
 տիվանհանէ մը) կը ցուցնէ. ու հոն, ըսաւ,
 սեղանը պատրաստեցէք», : Մտնեք ալ գացին ը-
 սածին պէս ամէն բանը անանկ գտան, ու պատ-
 ըսատեցին : Իրիկուան դէմ Յիսուս ալ ելաւ
 հոն եկաւ, ու երբոր սեղան նստաւ տատերիկո
 աշակերտներուն հետ՝ Յիսուսի առջի խօսքը աս
 եղաւ. «Խիստ կը բաղձայի, ըսաւ, որ աս զա-
 տիկս իմ չարչարուելէս առաջ՝ ձեզի հետ ու-
 տեմ», : Ետքը ուտելու ատենը դարձաւ աշա-
 կերտներուն ըսաւ թէ՛. «Չեղմէ մէկը պիտոք
 դիս մատնէ», : Մտր վրայ անոնք ալ իրար ան-
 ցան, ու ցաւելով սկսան մէկը մէկալը իրեն հար-
 ցնեւ թէ՛. «Մտրեօք ես եմ մի», : Յիսուս ալ
 պատասխան տուաւ թէ՛. «Մն է, որ իր ձեռքը
 իմ հետս սկաւառակը (այսինքն թասօքը) եր-
 կընցուց, խոթեց», : Մն ատենը Յուդա որ աս
 բանս կ'ընէր՝ ինքն ալ հարցուց թէ՛. «Մտրեօք
 ես եմ վարդապետ», : Յիսուս ալ իրեն ըսաւ.
 «Ղուն ըսիր», : Վերահուրը ալ լմննալու ա-
 տենը՝ Յիսուս ձեռքը հաց մը առաւ օրհնեց,
 զօհոթիւն տուաւ Մտուծոյ, ու զան մանրեց
 աշակերտացը բաժնելով ըսաւ. «Մտէք կերէք,
 աս իմ մարմինս է որ ձեզի կը տրուի. ետքը

դուք ալ ասանկ ըրէք զիս յիշելու համար, ։ Մնոր ետեւէն բաժակը (այսինքն զինիով զաւաթը) ձեռքը առաւ օրհնեց, ու երկնցուց աշակերաններուն ըսաւ թէ “Մէնդ ասկեց խմեցէք, որ իմ արիւնս է՝ նոր ուխտի, որ ամենուդ մեզացը թողութեան համար պիտի թափուի, ։ Այլ աս բանովս՝ Հիսուս Պատարագին սուրբ խորհուրդը հաստատեց ։

Արքայ ալ սեղանը խալըսելու եղաւ՝ Հիսուս վրայի լաթերը մէկ դի գրաւ, ու մէկ ղենջակ մը (այսինքն փէշտիմալ մը) առաւ վրան, ու կոնքին (այսինքն լէնին) մէջը ջուր լցած՝ սկսաւ աշակերաններուն ոտքը լուանալ, և ան ղենջակովը օրբել ։ Առացուելու կարգը երբոր Պետրոսի հասաւ, Պետրոս ետ քաշուելով ըսաւ . “Տէր, առ ինչ է, դուն իմ ոտքս պիտոյ լուանաս . քան լիցի, առ բանը չեմ թողուր որ ընես, ։ Հիսուս ալ իրեն ըսաւ . “Այս ինչ որ կ'ընեմ՝ նէ՛ դուն հիմա չես զիտեր, բայց ետքը կ'իմանաս . թէ որ քեզ չլուանամ՝ նէ՛ հետս մասն ու բաժին չես ունենար, ։ Մն ատենը Պետրոս ալ ըսաւ . “Տէր, անանկ է՝ նէ՛ չէ՛ թէ միայն ոտքս, հապա ձեռքս ալ զլուխս ալ լուս, ։ Հիսուս ալ ասոր պատասխան տուաւ թէ “Արան զլուխը լուացուած մարդուն՝ օտուրներէն՝ ի զատ պէտքը չէ որ ուրիշ տեղն ալ լուացուի, որ անով բոլորովին մաքուր կ'ըլլայ, ։ Մասնկ ամէն աշակերտաց ոտքը լուանալէն ետեւ՝ Հիսուս նորէն լաթերը վրան առաւ նստեցաւ, ու ըսաւ իրենց . “Վիտէք ինչու համար ձեզի ասանկ ըրի . դուք զիս վարդապետ կ'ըսէք, տէր կը կանչէք, և շիտակը կ'ըսէք՝ ինչպէս եմ՝ նէ . ուրեմն թէ որ ես ձեր տէրն ու վարդապետը ըլլալով՝ ձեր ոտքը լուա-

եմ քեզի հետ բանաբը երթալ՝ ու մեռնիլ ալ . . .
 Հիտուս ալ իրեն պատասխան տուաւ թէ՛ « Ի՞նչ
 կ'ըսես ինձի համար մեռնիլ . ճշմարիտ կ'ըսեմ
 քեզի , Պետրոս , որ աս գիշեր դուն դեռ հաւը
 (այսինքն հօռօզը) երկու հեղ չկանչած՝ իրեք
 հեղ պիտի զիս ուրանաս . . . Ի՛նչպց Պետրոս իր
 խօսքին վրայ կեցած կ'ըսէր թէ՛ « () Իս մեռցը-
 նելու ալ ըլլան նէ՛ քեզ չեմ ուրանար . . . և ա-
 սանկ մէկալ աշակերտներն ալ ըսին :

Գ Լ Ո Ւ Խ Ի Թ .

Յիտասի պարտեզը աղօթելը , ըմբռնումն ,
 դատապարտանիլը , և Պետրոսի ուրանալը :

(Մատթ . ԻԶ : — Մարկ . ԺԳ : — Ղուկ . ԻԲ : —
 Յովհ . ԺԸ :)

Ի՞նչ բաներէս ետքը՝ գիշերանց ելաւ Հիտուս
 իր աշակերտներովը դէպ'ի Չիթենեաց լեռը եր-
 թալու . ու Ալեգրոն ըսուած ձորէն (այսինքն տէ-
 րէյէն) որ անդիի կողմը անցաւ , հոն մէկ Գեթ-
 սեմանի ըսուած գեղ մը աշակերտները թողուց ,
 ու միայն անոնցմէ իրեքը , այսինքն Պետրոսը ,
 Յակովբոսը ու Յովհաննէսը հետը առած՝ քիչ
 մը առաջ գնաց մէկ պարտեզ մը մտաւ , և դար-
 ձաւ անոնց ըսաւ թէ՛ « Ե՛տա մեծ տրտմու-
 թեան ու նեղութեան մէջ եմ . դուք հոս տեղս
 արթուն կեցէք սպասեցէք ինձի . . . Եւ ինքը
 անոնցմէ քիչ մը առաջ գնաց հեռացաւ , ու ե-
 րեսին վրայ ինկաւ . հօր Իստուծոյ աղօթք ընե-
 լով ըսաւ . « Հայր , թէ որ կարելի է նէ՛ աս
 իմ վրայ դալու շարձարանքներէն զիս խալըսէ .

Հասար թէ չէ՝ ինչպէս որ կը կամենաս նէ, անանկ թող ըլլայ,» • ու ան ատենը սաստիկ նեղութենէն արիւն քրտինք սկսաւ թափել. և ան տեղը երկինքէն մէկ հրեշտակ մը եկաւ քովը՝ որ մխիթարէ սիրտ տայ իրեն : Ատքը ելաւ եկաւ տեսաւ որ՝ ան իրեք աշակերտները սաստիկ տրտմութենէն ինկած կը քնանային • արթնցոյ զանոնք, ըսաւ որ ելլեն աղօթք ընեն որ փորձութեան մէջ չիյնան • ու ինքը նորէն զնաց աղօթելու : Ատքը մէկ մ'ալ դարձաւ քովերնին՝ նորէն արթնցուց, ու զնաց : Արրորդ անգամը որ եկաւ, « Մ. յուհեաւ, ըսաւ, պառկեցէք ու հանգչեցէք • ահա ժամանակս հասաւ որ թընամիներուս ձեռքը մատնուիմ • անանկ է նէ ելլենք առջևնին երթանք,» :

Մ որ կ'ըսէր՝ մէյ մ'ալ տեսնես որ անդիէն խել մը մարդիկ՝ բռնող զինուորներ ալ հետերնին, Յուդա առջևնին ինկած, Ջահերով (այսինքն մաշալաներով), որը թուր ձեռքը առած, որը բիր (այսինքն սովա), եկան Յիսուսի մօտեցան : Մն ատենը Յուդա՝ ինչպէս որ անոնց նշան տուեր էր Յիսուսը ճաննալու ու բռնելու, զնաց Յիսուսը պազնելով ըսաւ • « Բարե քեզ, վարդապետ,» : Յիսուս ալ պատասխան տուաւ • « Յուդա, ըսաւ, զիս պազնելով եկեր կը մատնես,» : Ատքը Յիսուս ան բաղմութեան առջևը ելաւ կեցաւ, ու իրենց հարցուց թէ « Օ՛րկ կը փնտաւք կ'ուզէք,» : Մնոնք ալ ըսին • « Յիսուս Ասղովբեցին կ'ուզենք,» : Յիսուս ալ անոնց ըսելուն պէս թէ « Մն կ'ս եմ,» : Յուդայի հետ ան ամէնքը սուսալով ետ ետ դացին ու դետինք զարնուեցան : Մ որ եղաւ, նորէն մէյ մ'ալ Յիսուս անոնց հարցուց թէ « Օ՛րկ կ'ուզէք,» :

անանք ալ նորէն ըսին . “ Զիտուս Կաղովրեցին , Զիտուս ալ պատասխան տուաւ թէ : “ Չեզի ըսի որ ես եմ : ուստի թէ որ զիս միայն կ'ուզէք նէ , թ'ոչ տուէք , ըսաւ մէկալ աշակերտներուն համար , որ բաներնին երթան , : Ըն ատենը երբոր Զիտուս ասանկ թոյլ տուաւ , զինքը բռնեցին կասեցին . բայց աշակերտները աս բանիս շղիխնալով սկսան դէմ կենալ , ու Զիտուսէն հրաման ուզեցին որ դանակով զանոնք զարնեն . և ան շիտթու թեան մէջը շուտ մը Պետրոս մէկուն վրայ թուրը ինջեցուց , ու աջ ախանջը թուոց վրայէն , որ աս՝ քահանայապետին ծառաներէն մէկն էր՝ Սաղբոս ըսուած : Բայց Զիտուս հոն տեղը վրայ հասաւ ախանջը բժշկեց , ու Պետրոսի ըսաւ թէ “ Թուրդ տեղը դիր , հոր Ըստուծոյ ինծի տուած չարչարանայ բաժակը պիտի ես չխմեմ մի . ինչ կարծես , ըսաւ , չեմ կրնար իմ հորս աղաչել , որ հիմա հոս եօթանասուներկու հազարէն աւելի հրեշտակ խրկէ՝ որ զիս ասոնց ձեռքէն խալըսէ . բայց ան ատենը , ըսաւ , չէր կատարուեր ան գրուած մարգարէութիւնները , որ ըսեր են թէ՛ պէտք է որ ասանկ ըլլայ ” :

Ետքը Զիտուսը անանկ բռնած կապած՝ առաջ առին Ըննա քահանայապետին տարին , որ Զիտուսի սկսաւ հարցնել փնտուել իր աշակերտներ ժողովելուն՝ և ըրած քարոզութիւններուն վրայ . Զիտուս ալ իրեն պատասխան տուաւ թէ “ Ես ծածուկ բան չեմ խօսած , իմ տուած քարոզներս ամենքը լսեր են . ինծի ինչ կը հարցնեն , լսողներուն հարցուր ” : Ըս որ ըսաւ Զիտուս , ան ատենը քահանայապետին ծառաներէն մէկը՝ ապտակ մը (այսինքն շամառ մը) զարկաւ

Յիսուսի, « **Մտանկ**, ըսաւ, քահանայապետին պատասխանս կու տաս », : **Յիսուս** ալ իրեն ըսաւ . « **Թէ** որ ծուռ բան մը խօսեցայ նէ՛ ըսէ ինչ է . հապա **Թէ** ըսածս շիտակ է նէ, ինչու ինձի կը զարնես », : **Լաբը** **Յիսուսը** անկէց ալ հանեցին **Սայիափա** քահանայապետին առջևը բերին, և հոն ալ բոլոր քահանաները ու կարգացողները մէյտեղ եկեր էին՝ որ **Յիսուսի** դատաստանը տեսնան . ասոնք սկսան սուտ վկայ փնտռել, որ անով **Յիսուսը** դատապարտեն ու սպաննեն . բայց ճորով երկու հոգի գտան, որ աս բանս վրանս վկայեցին **Թէ** « **Ս**ենք մեր ականջովը ասկէց լսեցինք որ կ'ըսէր **Թէ** « **Լ**ս կրնամ **Մտուծոյ** տաճարը քակել, ու իրեք օրուան մէջ նորէն շինել », : **Բայց** այսու ամենայնիւ աս վկաներու ըսածն ալ մէկմէկու նման չէր : **Մ**ն ատենը քահանայապետը ելաւ կայնեցաւ **Յիսուսի** ըսաւ **Թէ** « **Ինչու** ասոր պատասխանը չես ի տար », : **Յիսուս** ամենեւին լուռ կեցաւ բան չըսաւ : **Քահանայապետը** նորէն **Յիսուսի** ըսաւ . « **Քեզ** **Մտուծոյ** անունովը կ'երգուընցրնեմ որ ըսես **Թէ**՝ դուն **Քրիստոսն** ես **Մտուծոյ Որդին** », : **Մ**ն ժամանակը **Յիսուս** պատասխան տուաւ **Թէ** « **Դ**ուն կ'ըսես որ ես եմ, որ վերջին դատաստանին օրը աստուածային կարողութեամբս երկինքին ամպերուն վրայ պիտոր իմ գալս տեսնէք », : **Մ** որ լսեց քահանայապետը, կատղեցաւ վրայի ըսմերը պատուեց ու ըսաւ . « **Տեսէք** սրւոր ըրած հայհոյանքը . այսուհետեւ վկայ ալ պէտքը չէ, որ ամէնքդ լսեցիք . ուրեմն ինչպէս կ'երեւնայ ձեզի », : **Մ**նոնք ալ պատասխան տուին **Թէ** « **Ս**եռնելու արժանի է », . և անտեղը շուտ մը մէկը մէկալը սկսան

նախատելով Հիսուսի երեսը թքնել, զարնել, ու
 հազար քամահրանք նախատինք ըսել իրեն, և
 ոմանք ալ գլուխը լաթ մը ձգեցին որ չտեսնայ,
 ու անանկ կը զարնէին՝ ծաղր ընելով կը հարցը-
 նէին. « Թէ որ Վրխատան ես նէ՞ մարդարեա-
 ցիր գիտցիր թէ ո՞վ է քեզի զարնողը » :

Ես ատենս Պետրոս՝ որ ինքն ալ Հիսուսի ե-
 տեւէն քահանայապետին տունը եկեր էր, երբոր
 դուրսը ծառաներուն հետ կրակին քովը նստեր
 կը տաքնար, ան տեղը քահանայապետին աղա-
 խինը եկաւ՝ իրեն նայեցաւ ու ըսաւ. « Հա՛ դուն
 ալ Հիսուս Վազովրեցիին հետ էիր » : Պետրոս
 ալ ամենուն առջևը ուրացաւ ըսաւ թէ « Ես
 զան չեմ ճանչնար, չեմ գիտեր դուն ինչ կ'ը-
 սես » : ու աս որ եղաւ՝ ետեւէն մէկ մը հաւը
 կանչեց : Ետքը երբոր նստած տեղէն ելաւ
 դուրս եկաւ, ուրիշ կնիկ մըն ալ զինքը տեսաւ,
 ան ալ անտեղը եղած մարդիկներուն ըսաւ թէ
 « Ես ալ Հիսուս Վազովրեցիին հետ էր » : ա-
 նոնք ալ վրայ տալով որ հարցուցին, Պետրոս
 մէկ մ'ալ ուրացաւ երդում ընելով ըսաւ թէ
 « Ես զան մարդը չեմ գիտեր չեմ ճանչնար » :
 Ենկէ ետքը քիչ մըն ալ որ անցաւ՝ քահանայա-
 պետին ծառաներուն մէկը, որ ան ահանջը կրա-
 րուած Սաղքոսին ազգական էր, ասիկայ ալ Պե-
 տրոսը տեսածին պէս ըսաւ թէ « Եուն ան չեմ
 մի, որ ես քեզ սպարտեղը տեսայ Հիսուսին հե-
 տը » : աս բանիս ուրիշներն ալ տէր ելան, ըսին
 թէ « Իրան որ աս ալ Հիսուսի հետ էր, որ ինքն
 ալ գալիլէացի է՝ ինչպէս իր լեզուն կը ցուցնէ » :
 Են ատենը Պետրոս երբորդ անգամ սկսաւ նզո-
 վելով (այսինքն նալլէթ տալով) երդուննալ
 թէ « Ես զան մարդը չեմ ճանչնար չեմ գիտեր » :

ու շուտ մը ըսածին պէս՝ հաւն ալ երբորդ ան
 դամ կանչեց : Յիսուս ալ ան ատենը որ անդին
 չարչարանաց մէջ էր՝ գլուխը վերցուց դէպ ՚ի
 Պետրոսը նայեցաւ . և աս նայելովս՝ Պետրոսի
 միտքը ինկաւ : Յիսուսի ըսածը , ու շուտ մը ինք-
 իրեն դալով՝ սաստիկ զղջացաւ , ձգեց անկէջ
 դուրս ելաւ , ու սկսաւ լալ ողբալ իր ըրած ու-
 ըրացութիւնը :

Գ Լ Ո Ւ Խ Լ .

Յիսուսը Պիղատոսի դատաստանը կր հանեն , և
 չարչարելէն ետև կը դատապարտեն որ խաչուի :

(Մատթ . ԻԷ : — Մարկ . ԺԾ : — Ղուկ . ԻԳ : —
 Եովհ . ԺԹ :

Յիսուս այսպէս ան հինգ շաբթի զիշերը տան .
 ջուելէն ետքը՝ ուրբաթ օրը առտուանց կանուխ
 նորէն մէկտեղ ժողվեցան բոլոր քահանաները
 ու կարգացողները՝ խօսք դրին որ ալ չուշացընեն
 զինքը շուտով սպաննեն : Բայց հրէաները իշ-
 խանութիւն չունենալով աս բանս գլուխ տանե-
 լու՝ աւին Յիսուսը Պիղատոսի տարին , որ հռո-
 մայեցւոց դիէն դատաւոր դրուած էր Ալբուսա-
 դեմի վրայ : Ըն ատենը Յուդան ալ տեսնելով
 որ Յիսուս դատապարտուեցաւ որ մեռնի՝ իրեն
 մէկ զղջում մը եկաւ . ուստի տարաւ քահանայա-
 պետներուն ետ տուաւ ան իր առած երստն ար-
 ծաթը ու ըսաւ թէ « Սեղայ որ ասանկ ար-
 դար մարդու արիւնը մտայ » : Ընոնք ալ ըսին
 թէ « Սեր ինչ հոգն է , դուն գնա մտմտա՛ » :
 Յուդա ալ ան ստակը տարաւ տաճարը ձգեց ,

ու յուսահատութենէն զնաց ինք զինքը կախեց խողզեց : Վահանայապետներն ալ՝ ան ստակը աբխնի գին է ըսելով՝ արժանի չտեսան որ տաճարը առնեն , հաստա խորհուրդ ըրին՝ անով մէկ բրտի ազարակ մը (այսինքն չէօմիէկճիի թաուլա մը) զնեցին , որ օտարականներու (այսինքն զարիպներու) գերեզմաննոց ըլլայ . և աս պատճառովս ետքը ան տեղը՝ Վրիւնի Վցարակ ըսուեցաւ :

Հիմա զանք որ՝ երբոր Հիսուսը Պիղատոսի առջև հանեցին , սկսան վրան սուտ բաներ ըսել թէ՝ « Վս մարդս մեր ազգը կը մօլորցընէ , ու թող չտար որ Հռոմացեցւոց կայսերը դրած հարկը կամ տուրքը վճարենք տանք , և կ'ըսէ թէ ինքը Վրիստոսը՝ այսինքն Սեսիան է , ու թագաւոր է , » : Պիղատոս ալ Հիսուսը առանձին քովը կանչեց առաւ , ու իրեն հարցուց թէ՝ « Վուն Հրէաներուն թագաւորն ես մի , » : Հիսուս ալ պատասխան տուաւ թէ՝ « Վնանկ է ինչպէս որ ըսիր . բայց իմ թագաւորութիւնս աս աշխարհքիս վրայ չէ . հաստա թէ անանկ ըլլար նէ՝ իմ ծառաներս չէին թողուր , որ աս Հրէաներուն ձեռքը իյնամ . հաստա ես աշխարհք եկեր եմ որ ճշմարտութիւնը քարոզեմ , » : Պիղատոս նորէն տարաւ Հիսուսը ան Հրէաներուն առջևը հանեց , ու ըսաւ թէ՝ « Վս աս մարդուս վրայ քնաս (այսինքն սուչ) չեմ գտնար , որ զինքը սպաննել տամ , » : Վն առենը անոնք նորէն կատաղած՝ սկսան կերպ կերպ բաներ ըսել Հիսուսի վրայ : Հիսուս ալ ամենեւին պատասխան չէր ի տար , այնչափ որ՝ Պիղատոս ալ զարմացաւ թէ Հիսուս ինչպէս բերանը չբանար իրեն անմեղութիւնը ցուցընէր : Ետքը անոնց ըսածէն երբոր իմացաւ Պիղատոս որ Հիսուս գալիլեացի է , որ

ասով Հերովդէսի իշխանութեան ներքեւ կ'իյնար, վրայէն թռած վեց՝ Յիսուսը Հերովդէսի խրկեց, որ ան ալ ան օրերը Լըբուսաղէմ եկեր էր: Հերովդէս առջի բերանը երբոր Յիսուսը տեսաւ, շատ ուրախացաւ. ինչու որ՝ շատնցմէ լսեր էր Յիսուսի վրայ, ու հետաքրքրութեամբ կ'ուզէր որ մէկ հրաշք մըն ալ Յիսուս իր առջևը ընէ. ուստի սկսաւ շատ բաներ Յիսուսի հարցնել: Բայց Յիսուսէն ամենեւին մէկ պատասխան մը որ չսէց, անոր համար Հերովդէս ալ զինքը քամահրելով ու ծաղր ընելով՝ վրան ձերմակ լաթ մը ձգել տուաւ, ու նորէն Պիղատոսի դարձուց, որ երթայ ինքը Յիսուսի դատաստանը տեսնէ:

Ըն առենը Պիղատոս Յիսուսի ամբաստանողներուն յայտնի ըսաւ թէ՝ «Ղուք զասիկայ ինծի բերիք ըսիք թէ՝ մէկ խոսվարար մարդ մըն է. բայց ինչպէս դուք ալ տեսաք՝ ես վրան աս ձեր ըսածներէն բան մը չեմ գտներ. ինչպէս Հերովդէս ալ տեսաւ որ անանկ բան մը չէր եր՝ որ մեռնելու արժանի ըլլայ. ուրեմն քիչ մը պատիժ տանք ասոր՝ ու թողունք որ երթայ, ինչպէս դուք ալ սովորութիւն ունիք՝ որ զասիկն մէկ բանտարկեալ մը ազատէք, թող աս՝ Յիսուս Վրիստոս ըսուածը ըլլայ անիկայ», Ըն առեն ներս բանտը մէկ չարագործ մարդասպան աւազակ մը կար՝ Յեսու Բարաբբա անունով. ուստի երբոր Պիղատոս աս բանս առջևնին դրաւ, քահանայապետները և իշխանները ժողովուրդը յորդորեցին, անանկ ամէնքը մէկ բերան կանչեցին թէ՝ «Մուզենք որ Բարաբբան արձրկես, ու Յիսուսը մեռցնես», Ըսոր վրայ Պիղատոս ալ աղէկ հասկընալով Յիսուսի անմեղութիւնը՝ ու

անոնց չար նախանձը, և ուզելով որ Յիսուսը խալըսէ՝ բանը ուշացուց, նորէն իրենց հարցուց թէ՛ « Հասա ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեր Հրէից թագաւորը », և Մանք ալ կանչեցին թէ՛ « Խաչը հանէ, թո՛ղ խաչուի », և Մն ալ ըսաւ . « Ինչո՞ւ, ի՞նչ չար բան գործեց. ես մեռնելու փրաս մը անոր վրայ չտեսայ », և Մանք ալ ամէնքը աւելի կատաղած ոտք կոխեր՝ կը կանչուըռտէին թէ՛ « Մ'ուզենք որ խաչ հանես », և Պիղատոս ան աւտենը ջուր ուղեց առջևնին ձեռքը լուաց՝ ըսաւ թէ՛ « Ես իմ ձեռքս ատ արդար մարդուն արիւնովը չեմ պըրշարկեր, դուք գիտէք », և Մտոր կրքոր բոլոր ժողովուրդն ալ սպատասխան տուաւ թէ՛ « Թո՛ղ մեր վրայ և մեր տղոցը վրայ ըլլայ ատոր արիւնը », ան աւտենը Պիղատոս ալ Յիսուսը իր զինուորներուն ձեռքը տուաւ որ տանջեն, Օ ինուորները ան աւտենը նորէն Յիսուսը աղէկ մը ծեծելէն ետեւ, մէջերնին առին՝ լաթերը վրայէն հանեցին, ու ծաղը ընելով վրան մէկ կարմիր լաթ մը ձգեցին, մէկ փուշէ ոլըրած պըսակ մը՝ թագի տեղ զլուխը անցուցին, ու ձեռքը մէկ եղէգ մը (այսինքն քամըշի մը կտոր) տուին գաւազանի տեղ. և զինքը անանկ նստեցուցած՝ կու գային, առջևը ծունկ կը չորէին, ու ծաղը ընելով կ'ըսէին . « Ողջ լեր, թագաւոր Հրէից », ետքը կ'ելլէին երեսը թքնելով ան եղէգը ձեռքէն կ'առնէին՝ անով զլխուն կը զարնէին. ու ոմանք ալ երեսը ապտակ (այսինքն շամառ) կը զարնէին :

Ետքը Պիղատոս Յիսուսը այսպիսի ողորմելի կերպարանքով նորէն Հրէաներուն առջևը հանեց ու ըսաւ . « Վիտնաք որ ես ասոր վրայ գատապարտելու բան չգտայ, ահա ձեր մարդը ձեզի՛,

դուք առէք ինչպէս կ'ուզէք նէ խաչեցէք , : Ընտրեալ պատասխան տուին թէ “ Մեր օրէնքը կ'ըսէ որ այդպիսի մարդը պէտք է որ խաչուի . ինչու որ՝ ինքը զինքը Ըստուծոյ որդւոյ տեղ կը դնէ , : Ըստ որ ըսեց Պիղատոս՝ սիրտը վախ մը ինկաւ . ուստի նորէն Յիսուսը առանձին առաւ , սկսաւ իրեն հարցընել թէ “ Դուն ինչ ես , ուսկից եկեր ես , : Յիսուս ալ աս բանիս ամենեւին պատասխան չտուաւ : Պիղատոս ալ ըսաւ . “ Ըստ ինչ է , հետո շէս ուզեր խօսիլ . շէս դիտեր որ իմ ձեռքս է իշխանութիւնը քեզ խաչ հանելու կամ թէ խաղըսելու , : Ընտրեալ Յիսուս ալ ըսաւ . “ Դուն իմ վրայ իշխանութիւն չէիր ունենար՝ թէ որ վերէն քեզի տուած չըլլար նէ . անոր համար ո՛վ որ զիս քեզի մատնեց նէ՝ մեծ յանցաւորը (այսինքն սուչուեն) ան է , : Ըստ բանիս վրայ Պիղատոսի խղճմտանքը աւելի զարկաւ , կ'ուզէր որ Յիսուսը ազատէ . բայց շրէաները նորէն սկսան կանչուրուտել , ու Պիղատոսի ասանկ ըսել թէ “ Ըստ մարդը ազատես նէ՝ Հռոմայեցւոց կայսերը բարեկամը շէս . ինչու որ՝ ո՛վ որ զինքը թաղաւոր կ'ըսէ նէ , անիկայ կայսերը դէմ գլուխ կը վերցընէ , : Ընտրեալ Պիղատոս նորէն Յիսուսը շրէից առջևը հանեց ու ըսաւ . “ Ըհա ձեր թաղաւորը ձեզի կու տամ , : Ընտրեալ նորէն սկսան կանչել . “ Սերցներ վերցներ մեր մէջէն աս մարդը , ու խաչ հանէ , : Պիղատոս ալ հարցուց ըսաւ թէ “ Ընչ է՝ կ'ուզէք որ ես ձեր թաղաւորը խաչ հանեմ , : Քահանայապետներն ալ ասոր պատասխան տուին թէ “ Մենք կայսերմէն ՚ի զատ թաղաւոր չունինք , : Ըտքը երբոր ալ ուրիշ ձար չտեսաւ Պիղատոս , ինքն ալ վճիռը կտրեց

ան ուրբաթ օրը Հրեից պատրայի տօնին կէս
աւուր ատենը, ձեռուրնին տուաւ որ առնեն
տանին ուղածնին պէս Յիսուսը խաչը հանեն,
ու Յեսու Քարաբքա աւազակը ազատեն:

Գ. Լ. ՈՒԽ ԼԱ.

Յիսուսի խաչերութիւնը ու քաղաքը:

(Մատթ. ԻԵ: — Մարկ. ԺԵ: — Ղուկ. ԻԴ: —
Յովհ. ԺԹ:)

Պիղատոսի զինուորները ան ատենը Յիսուսը
բռնեցին մէջերնին առին, ան կարմիր լաթը
վրայէն հանեցին՝ ու իր լաթերը նորէն հազու-
ցին, անանկ խաչը ուսը (այսինքն օմուզին վրայ)
դրած սիտան դէպ ՚ի Վողգոթա լեւը տանիլ:
Նաճբան երթալնին մէկ մարդ մը դիմացնին
եղաւ, որ Սիմոն կիւրենացի կ'ըսուէր. զասիկայ
ալ բռնեցին որ Յիսուսի հետ վերջընէ տանի
ան խաչափայտը: Յիսուսի ետեւէն շատ ժողո-
վուրդ էրիկ մարդ կնիկ մարդ կ'երթային, ու
դութերնին շարժելով կու լային Յիսուսի խեղ-
ձութեանը վրայ: Յիսուս ալ դարձաւ անոնց ը-
սաւ. «Վատերը Երուսաղէմի, իմ վրաս մի
լար, հասրա ձեր վրայ և ձեր որդւոցը վրայ լա-
ցէք. ատեն պիտօր գայ որ՝ երնեկ ըսեն ամու-
նեբուն որ զաւակ չն բերեր, և սաստիկ նեղու-
թենէն լեռներուն պիտի ըսեն թէ՛ Վրանիս
փլէք մեզ ծածկեցէք, որ աս խեղձութիւններս
չտեսնենք. թէ որ դալար կամ կանանչ ծառին
այսպէս կ'ընեն՝ ինչպէս կը տեսնէք իմ վրաս,
հասրա չօրցած ծառին ինչ պիտի ըլլայ»:

Երբ որ ալ Վողգոթա լեռը հասան, Յիսուսի լեղիով խառնած գինի տուին . ան ալ համբ առաւ նե՛ չուզեց խմել : Ետքը լաթերը վրայէն հանած անանկ մերկ Յիսուսը խաչին վրայ հանեցին զամեցին . ու իրեն երկու դին մէկ մէկ աւաղակ մարդիկ ալ շրէաները ան օրը բերին խաչել տուին , որ ասով աւելի նախատինք ըլլայ Յիսուսի : Յիսուս օր խաչին վրայ ելաւ , առջի խօսքը իր խաչ հանողներուն վրայ աղօթելը եղաւ՝ որ ըսաւ . “ Նայր իմ, ասոնց թողութիւն տուր որ չեն գիտեր ինչ կ'ընեն ” : Պիղատոս մէկ տախտակի մը վրայ՝ Յիսուսի վրան դրած յանցանքները (այսինքն սուշը) ասանկ գրել տուաւ՝ թէ Մսիկայ է Յիսուս՝ Վազովրեցի թաղաւոր շրէից . և աս բանս իրեք ազգի լեզուով այսինքն հրէարէն , հռոմայեցիերէն ու հուներէն ըրաւ , անանկ խաչին վրայ դնել տուաւ , որ ամէնքը կարգան ու իմանան : Մն օր տեւան շրէաները , Պիղատոսի աղաչեցին որ անանկ չգրէ՝ թաղաւոր շրէից , հապա ատանկ թէ՛ Մնքը ըսաւ որ թագաւոր եմ շրէից : Պիղատոս ալ իրենց պատասխան տուաւ թէ՛ “ Վրածս գըրուած է , փոխել չըլլար ” : Մն ատենը զինուորները Յիսուսի լաթերը առին չորս բաժին ըրին՝ մէջերնին բաժնեցին , ու պատմուճանք կամ կապան վերէն ՚ի վար բոլորը հիւսուածքով գործուած ըլլալով մեղքընցան կտրբուել . ուստի վրան վիճակ ձգեցին , որ անանկ մէկուն ինկաւ : շրէից քահանայապետները ու իշխանները իրենց մարդիկներովը՝ ան ժամանակը Յիսուսի առջեւ եկած՝ ճի կանչելով հազար նախատանք ու հայհոյանք կու տային Յիսուսի , ու քամա հրելով կ'ըսէին . “ թէ որ ըս ըսածիդ պէս

դուն Մատուծոյ Որդին ես նէ՝ քեզ հիմա խալը-
սէ, առ խաչէդ վար ինջիր՝ որ քեզի հաւա-
տանք . տեսէք սրւոր, կ'ըսէին, որ ուրիշները ա-
զատեց, ու ինքը զինքը չկրնար ազատել . թէ
որ իր յոյսը Մատուծոյ վրայ դրեր է նէ, թող
Մատուած հիմա զինքը ասկէց ազատէ . Օ ի-
նուորներն ալ անոնց ըրածը տեսնելով՝ իրենք ալ
ծաղր ընելու բաներ կ'ըսէին : Այս աս հերիք չէ՝
նաև ան Յիսուսի քով խաչուած աւազակներուն
մէկը դարձաւ ինքն ալ Յիսուսի ըսաւ . « Թէ
որ դուն Վրիտաոսն ես նէ, քեզ ալ մեզի հետ
ասկէց ազատէ . Քայց ան ժամանակը մէկալ
աւազակը զանիկայ չեխեց թէ « Մատուծ մէ չես
վախնար, որ դուն ալ ան սրատիժը կը քաշես
կոր . մենք, ըսաւ, արժանապէս մեր ըրածին
սրատիժը առեր ենք, բայց ասիկայ մէկ չար բան
մը չէ՛ գործած . Ատքը դարձաւ Յիսուսի ը-
սաւ . « Տէր, յիշէ զիս երբոր քու թագաւորու-
թեամբդ գալու որ ըլլաս . Յիսուս իրեն սա-
տասխան տուաւ թէ « Նշմարիտ կ'ըսեմ՝ քեզի՝
որ այսօր զրախտը իմ հետս մէյտեղ սխտի ը-
լլաս . » :

Յիսուսի խաչելու թեան ատենը իրեն ազգա-
կաններէն ալ քովը եկեր կեցեր էին . ասոնց մէ-
ջը Յիսուս իր մայրը Աղոյն Սարիամ տեսնելով,
և իր սիրական Յովհաննէս աշակերտը, մօրը
ցուցնելով ան աշակերտը՝ ըսաւ թէ « ՄՏա՛ քու
որդիդ . » , ու աշակերտին ալ իր մայրը ցուցնե-
լով ըսաւ . « ՄՏա՛ քու մայրդ . » . և անկէ ետքը
Յովհաննէս ալ զԱղոյն Սարիամ որ Յիսուսէ
որք մնացած էր՝ իր տունը առաւ սրահեց : Յի-
սուս կէս օրուան դէմ վեց ժամին (այսինքն սա-
հաթին) խաչին վրայ բռնուելուն պէս՝ արեւ

խաւարեցաւ, և բոլոր աշխարհք մթընցաւ իրեք
 ժամի չափ, ու ինը ժամին ատենները՝ կէսօրը
 իրեք ժամ անցած՝ Հիսուս ամուր ձայնով կան-
 չեց. Եւ ի էլ լաճա սաբաբանի, որ ըսել է. Ըս-
 տուած իմ, Ըստուած իմ, ինչու զիս երեսէ թա-
 ղեր ես, ։ Ետքը երբոր ըսաւ թէ՛ «Նարուեր
 եմ», ։ շուտ մը մէկը վազեց՝ սպունդը (այսինքն
 սիւնկերը) հոն քացախը թաթխեց՝ ու եղեգի
 մը վրայ անցուցած դէպ ՚ի Հիսուսի բերանը եր-
 կընցուց. Հիսուս ալ երբոր ան քացախը բերա-
 նը առաւ, ըսաւ. «Ըստ ամէն բան լմընցաւ», ։
 ու նորէն ամուր ձայնով կանչեց ըսաւ. «Տայր,
 քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս», ։ անանկ
 գլուխը վար ծռեց՝ հոգին տուաւ. Ըն ատենը
 Երուսաղէմի տաճարին վարագոյրը վերէն ՚ի
 վար երկուք ձգքուեցաւ, երկրաշարժութիւն ե-
 ղաւ, որ սպառաժ քարեր պատուեցան, գերեզ-
 մաններ բացուեցան, ու շատ արդար մարդիկ
 ներ յարութիւն առած՝ Երուսաղէմի մէջը շատ
 մարդոց երեցան՝ Հիսուսի ճշմարիտ յարութիւ-
 նը հաստատելու համար. Ըն տեղը հարիւրա-
 պետն ալ իր զինուորներուն հետ աս հրաչքները
 տեսնելով, սոսկացին՝ ու Հիսուսի համար ըսին
 թէ՛ «Ճշմարիտ աս մարդս Ըստուծոյ Արդի
 էր», ։ Եմանապէս քովը գտնուած ժողովուրդն
 ալ Հիսուսի վրայ խղճալով՝ կուրծքերնին զար-
 նելով ելան ետ դարձան. Երբոր ալ իրիկունը
 մտտեցաւ, Հրէաները խղճմտանք ընելով թէ՛
 օրինաց դէմ՝ չըլլայ որ ան խաչուածներուն մար-
 մինները ինչուան մէկալ օրը խաչին վրայ մնան,
 որ ան շաբաթն օրը իրենց մեծ տօնախմբութիւն
 էր, գացին Վիզառտոսէն ուղեցին որ անոնց ճըն-
 կուրները ջարդեն՝ որ շուտով մեռնին, ու անկեց

վերջումն : Աւստի եկան զինուորները առաջ ան
երկու աւազակներուն ճակուղները ջարդելով մե-
ռուցին . ետքը երբոր Հիսուսը տեսան որ հոգին
աւանդեր է, անորը ջարդեցին . հապա զինուոր-
ներուն մէկը ձեռքի տէգովը (այսինքն մըրաքովը)
Հիսուսի կողը խոցեց . ու շուտ մը արիւն ու ջուր
բղխեց կողէն :

Ինչ ատենը Հովսէփ արեմաթացին , որ ինքն
ալ Հրէից իշխաններէն մէկն էր , և զաղտուկ
Հիսուսի աշակերտութիւն կ'ընէր՝ գնաց Պիղա-
տոսէն հրաման առաւ , որ ինքը երթայ Հիսուսի
մարմինը խաչէն ինջեցընէ գերեզման դնէ : Աւ-
տի Վիկտորեմոս ըսուած իշխանին հետ (որ ան
ալ ծածուկ Հիսուսի աշակերտներէն էր) եկան
խաչէն ինջեցուցին Հիսուսի մարմինը, մեծարան-
քով զմրուսեցին , ու մաքուր կտաւով սրտած՝
հոն խաչելութեան տեղին մօտ մէկ սարտեղի
մը մէջ՝ նոր քարէ փորած գերեզմանը դրին , ու
մէկ մեծ քարով մը գերեզմանը գոցեցին՝ ելան
զացին : Բայց շարաթ առտուանց քահանայա-
պետները ու Փարիսեցիները նորէն Պիղատոսի
զացին ըսին թէ՝ « Ար յիշենք որ ան խաբերան
ողջ էր նէ կ'ըսէր թէ Իրեք օրէն ետե յարու-
թիւն պիտի առնեմ . ուստի հրաման տուր որ՝
գերեզմանին քով աս իրեք օրս սրահասպան կե-
նայ , որ չըլլայ թէ իր աշակերտները գիշերանց
դան մարմինը գողնան , ու ժողովրդին մէջը ձայն
հանեն թէ յարութիւն առաւ . և ասով ետքի
մոլորութիւնը առջինէն գէշ ըլլայ » : Պիղա-
տոս ալ ըսաւ թէ՝ « Գացէք ինչպէս կ'ուզէք նէ՝
անանկ ըրէք » : Ինչոնք ալ զացին գերեզմանին
քարը աղէկ մը ամրցուցին , կնիք (այսինքն մօ-

հիւր) զարկին վրան, ու անանկ քովը զինուորներ
պահապան դրին :

Գ Լ Ո Ի Խ Լ Բ .

Յիսուսի փառաստոր յարուրիւնը, աշակերտաց
երևումը :

(Մատթ . ԻԸ : — Մարկ . ԺԶ : — Ղուկ . ԼԴ : —
Յովհ . Ի . ԻԾ .)

Շարաթ իրիկունը իւղաբեր կանայքը, այս
ինքն՝ Մարիամ՝ Մագդաղէնացին, Մարիամ
Յակոբայ ըսուածը, Յոհաննա ու Սողոմէ՝ մէկ
տեղ եկան, խունկեր ու անուշահոտ եղեր առին,
պատրաստեցին՝ որ երթան Յիսուսի մարմինը նո
րէն օժեն՝ աւելի պատիւ ընեն : Աւստի աւ
տուանց կանուխ երբոր ելան որ գերեզմանը
երթան, ճամբան անձրիկեր էին թէ՛ ան գերեզ
մանին մեծ քարը վրայէն սլ պիտոր վերցընէ .
բայց հոն հասնելուն պէս՝ յանկարծակի մէկ
շարժ մը եղաւ, ու երկինքէն լուսաւոր ձիւնի
պէս ճերմակ լաթերով հրեշտակ մը ինջաւ, ու
ան դրանը քարը մէկ դի դրած վրան նստաւ :
Ըս բանս որ եղաւ, ան զինուոր պահապանները
վախէն մեռելի պէս հոն տեղը գեօխնը ինկան .
ե անոնցմէ ոմանք ալ քաղաքը վազեցին քահա
նայապետներուն աս հրաշքս պատմեցին . անոնք
ալ մէյտեղ խորհուրդ ըրին, ու շատ ստակ
տուին անոնց, որ աս բանս դադտուկ պահեն՝
մարդու չզրուցեն, հասպա անանկ ձայն հանեն
թէ՛ գիշերանց իրենք որ քուն էին, Յիսուսի
աշակերտները եկեր անոր մարմինը գողցեր են .

և իրենց աս ալ ըսին . “ [Թէ որ ձայնը դատաւորին ականջը հասնի նէ, դուք մի վախնաք անհոգ կեցիք, մենք բանը կը շինենք ” : Եւ անանկ Հրէաներուն մէջը աս սուտ խօսքս փրուեցաւ :

Հիմա դանք որ, երբոր աս իւղարեր կանայքը գերեզմանին դուռը ասանկ բայց գտած ներս որ մտան, հոն Հիսուսի մարմինը չգտան . հասցա անոր տեղը երկու լուսաւոր հրեշտակ տեսան, որ մէկը դարձաւ ասոնց ըսաւ . “ Մի վախնաք, դուք եկեր եք Հիսուսը կը փնտաւք . բայց հոս չէ՝ ինքը յարութիւն առեր է, ինչպէս որ ձեզի առաջուց ըսեր էր ” . և իրենց աս ալ ըսաւ որ՝ երթան Հիսուսի աշակերտացը աս բանս աւետիս տան : Բայց ասոնցմէ Սարիամ Սաղաղենացին, ինչպէս կ'ըսեն՝ առջի բերանը շուտ մը տեսածին պէս որ Հիսուսի մարմինը գերեզմանին մէջը չէ՝ վազեց եկաւ Պետրոսն ու Յովհաննէսը գտաւ, իրենց ըսաւ թէ “ Մեր տէրը գերեզմանէն վերցուցեր են, չենք գիտեր ո՞ր դրեր են ” : Բնոնք ալ ելան հետը գերեզմանը եկան՝ տեսան որ իրաւ ըսածին պէս Հիսուսի մարմինը հոն չկայ . ուստի իրենք ալ թողուցին նորէն դարձան որ մէկալ աշակերտներուն աս բանս սրտովն : Բն ատենը Սաղաղենացին որ մինակ գերեզմանին քովը կեցած կու լար, ան հրեշտակները իրեն հարցուցին թէ “ Անիկ, ինչու կու ըսաս ” : Բն ալ ըսաւ թէ “ Հասցա իմ տէրս աս գերեզմանէս վերուցեր են, ու չեմ գիտեր ո՞ր տարեր դրեր են ” . աս ըսելինի՝ ինչպէս եղաւ որ՝ գէպ ՚ի ետքը դարձաւ մէկ մարդ մը տեսաւ, որ Հիսուսն էր . ու ինքը շնորհակարծեց թէ սրտեղզական մին է : Հիսուս ալ

Հարցուց իրեն . “ Կնիկ , ինչո՞ւ կու լաս , զո՞վ կը
 փնտռես ” : Ըն ալ պատասխան տուաւ թէ
 “ Տէր , թէ որ դուն առիր նէ , ինչպէ՞ս որ ինծի
 ըսես՝ ո՞ւր տարիք դրիր , որ ես երթամ անկէջ
 վերցընեմ ” : Ըն ատենը Յիսուս ալ իր սովա-
 րական ձայնովը զինքը կանչածին պէս՝ “ Մա-
 թիամ ” : Մագդաղէնացին շուտ մը իմացաւ , ու
 իրեն պատասխան տուաւ . “ Բարբառնի ” , այս-
 ինքն Նրամմէ , Արդապետ , ու վաղէց որ ու-
 տուրները պլլուի . բայց Յիսուս չթողուց որ ան
 ժամանակը իրեն մտտենայ , հապա սպրսպրեց
 որ երթայ աշակերտներուն պատմէ , ու ըսէ թէ
 ինքը առ Ըստուած պիտի համբառնայ : Ատքը
 Յիսուս ան տեղէն անյայտ եղածին պէս՝ Մագ-
 դաղէնացին ալ շուտ մը վաղէց գնաց աս բանս
 աշակերտներուն պատմելու :

Ըն օրը Յիսուսի մէկալ աշակերտներէն եր-
 կու հոգի՝ Լամնաուս գեղն որ կ'երթային աս
 բաներս մէջերնին խօսելով , Յիսուս առանց զին-
 քը անոնց յայանելու՝ քովերնին եկաւ , ու հե-
 տերնին երթալով ինքն ալ հարցուց իրենց թէ
 “ Ըտ ինչ բանի վրայ է ձեր խօսքը , ինչո՞ւ ա-
 տանկ տրտում կ'երթաք ” : Ըսոնցմէ մէկը որ
 կղէտպաս կ'ըսուէր՝ դարձաւ իրեն ըսաւ թէ
 “ Ի՞նչ միայն մնացեր ես Կրուսաղէմ՝ որ աս
 օրերս հոն եղած բաները չես իմացեր . որ ին-
 տոր ան Յիսուս Կաղովրեցին սուրբ ու արդար
 մարդը՝ մեր իշխանները բռնեցին խաչին վրայ
 սպաննել տուին . որ մենք յոյսերնիս վրան դրեր
 էինք թէ ան պիտի Երայէլացիքը փրկէ ” . ու
 ետքը աս ալ ըսին թէ՝ ինչպէ՞ս ան կնիկները
 հրեշտակներէն լսեր են թէ Յիսուսը ողջ է :
 Ըս բաներս լսելով Յիսուս ալ երեւնին տուաւ

որ ինչպէս մտուրնին շէն բերեր մարգարէից
 Քրիստոսի վրայ ըսածները՝ որ կատարուեցաւ .
 ետքը մէկիկ մէկիկ անոնց անօրինական խոր-
 հուրդները մեկնելով՝ երբոր ալ իրիկուան դէմ
 Ամնառուս գեղը հասան , Հիսուս անանկ ցու-
 ցուց թէ ինքը ալ առաջ պիտոր երթայ . անոնք
 ալ իրիկուան է ըսելով շթողուցին՝ հոն հետեր-
 նին բռնեցին , Ատրը երբոր մէկ տեղ սեղան
 նստան որ ուտեն , Հիսուս հացը ձեռքը առաւ
 օրհնեց , ու կտրրտելով իրենց ձեռքը տալուն
 պէս՝ աշուրնին բացաւ , որ ճանչցան զինքը . ու
 ինքը շուտ մը առջևնէն աներեւոյթ եղաւ : Ա-
 նոնք ալ ելան նորէն Արուսաղէմ մէկախոնց քով
 եկան , ու դեռ իրենք իրենց հանդրոպած բանը
 չըսած՝ լեն որ մէկալ առաքեալները իրենց կը
 պատմէին թէ՝ Հիսուս յարութիւն առեր է , ու
 Պետրոսի երեցեր է :

Հոն առաքեալքը մէկտեղ ժողված՝ Հրէա-
 ներուն ահէն դռները դոց , երբոր աս բաներուս
 վրայ շփոթած կը զրուցէին , Հիսուս նորէն յան-
 կարծ մէջերնին երեցաւ . « Աղջոյն ձեզ , ըսաւ ,
 ես եմ՝ մի վախնաք , » . անոնք ալ որ ահաւած կե-
 ցեր էին , Հիսուս « Այկէք , ըսաւ , ձեռքս ու
 օտքս բռնեցէք որ իմանաք թէ ես եմ , » : Ատե-
 աս բանս հաստատելու համար՝ իրենցմէ կերա-
 կուր ուղեց . անոնք ալ քիչ մը խորված ձուկ՝ ու
 մեղր ունէին , ան տուին . Հիսուս ալ առաւ առ-
 ջևնին կտոր մը անկէց կերաւ . ու ետքը իրենց
 հողոյն Արբոյ շնորհքը սրարգևելով՝ հրաման
 տուաւ որ ալ երթան չորս զին աշխարհք քարո-
 ղեն . անանկ աներեւոյթ եղաւ : Այս ատենը
 Սուրբառ առաքեալը հոն չէր . ուստի ետքը եր-
 բոր դարձաւ առաքելոց քով եկաւ , և անոնցմէ

լսեց որ կ'ըսէին թէ «Մենք հիմա Յիսուսը տեսանք», թու՛մաս ըսաւ որ «Ես ինչուան որ իմ աչքովս անոր ձեռացը մէջի դամին նշանը չտեսնեմ, ու ձեռքովս չբռնեմ, և ձեռքս խցուած կողը չխօթեմ նէ՛ չեմ հաւտար» : Ընոր համար ասկէ ութը օրէն ետքը երբոր բոլոր աշակերտները նորէն հոն տեղը ժողոված՝ թու՛մաս ալ մէջերնին էր, Յիսուս մէկ մ'ալ երեցաւ իրենց, ու ողջոյն տալէն ետև՝ դարձաւ թու՛մասի ըսաւ . «Եղիւր ձեռքովդ իմ ձեռուրներուս խցերուն տեղը բռնէ նայէ, ու ձեռքդ կողս խօթէ, անանկ անհաւատ մ'ըլլար, հասցա հաւտացեալ եղիր» : Ըն ժամանակը թու՛մաս ալ հաւատալով կանչեց ըսաւ . «Տէր իմ և Ըստուած իմ» : Յիսուս ալ իրեն սրտասխան տուաւ թէ «Դուն զիս տեսար՝ ու անանկ հաւատացիր . երանի անոնց որ զիս չտեսած՝ ինծի հաւատան» :

Ըսկէ ետքը անգամ մըն ալ աշակերտները Տիբերայ ծովուն քովը ձուկ բռնելու ատենը՝ իրենց երեցաւ Յիսուս . և անոնք որ բոլոր զիշերը դատեր էին՝ ու բան չէին բռնած, Յիսուս իրենց ծովուն մէկ կողմը ցուցուց որ ուռկաննին հոն ձգեն . երբոր անանկ ըրին, շուտ մը հարիւր յիսունի չափ խոշոր ձկներ ուռկաննին մէջը առին, անանկ որ՝ ձորով առանց սրտուելու վեր քաշեցին : Ըս հրաշքիս վրայ աշակերտներն ալ իմացան որ ինքը Յիսուսն է . ուստի քովը եկան ժողովեցան, ու մէյտեղ նստան ան ձկները եփեցին կերան : Աւտելէն ետքը Յիսուս Պեարոսի իրէք հեղ հարցուց թէ «Օ իս կը սիրես մի» : Պեարոս ալ որ սրտով սրտասխան տուաւ որ՝ «Ըս, Տէր . դուն ալ զիտես որ քեզ կը սի-

րեմ , , Յիսուս ալ իրեն ըսաւ . “ Ըտանկ է նէ՞
 դուն ալ իմ գառներս ու իմ ոչխարներս արա-
 ծէ , , : Եւ Յիսուս ասով Պետրոսի իրեք ան-
 դամ ուրացու թեան մեղաց դեղը դրաւ , ու իրեն
 թողութիւն տուաւ՝ հետը հաշտուեցաւ : Ետքը
 Յիսուս Պետրոսի վրայ աս մարգարէութիւնս
 ալ ըրաւ՝ որ ծերութեան ատենը իր ճշմարիտ
 հաւատոյն համար մարտիրոսութեամբ կեանքը
 պիտի տայ :

Ըս մէկ քանի պատմածներէս՝ ի զատ Յիսուս
 յարութիւն առնելէն ետե ուրիշ շատ անգամ
 (ան քառսուն օրը՝ որ աշխարհքիս վրայ կեցաւ)
 իր աշակերտացը երեցաւ , ու քրիստոնէական
 հաւատքին բաները իրենց սորվըցուց : Ետքի
 անգամ որ երեցաւ , իրենց ապրօսպրեց որ սպա-
 սեն ինչուան ինքը հողին Սուրբը խրկէ , որ դայ
 զիրենք շնորհքով լեցընէ , ու անկէ ետքը ալ
 երթան իր աւետարանը բոլոր աշխարհքիս քա-
 ռոզեն : Ընկէ ետե Յիսուս մէյտեղ ժողովեց իր
 աշակերտները ու առաւ զանոնք Բեթանիայի
 քովը Չիթենեաց ըսուած լեռը ելաւ , և հոն
 օրհնելով զիրենք՝ անոնց աչաց առջևը դէպ ՚ի
 երկինքը համբարձաւ գնաց : Երբոր ալ ամպե-
 թուն մէջը մտաւ աներևոյթ եղաւ , ան տեղը եր-
 կու հրեշտակ ճերմակ լաթեր հագուած եկան
 աշակերտներուն երեցան ու ըսին . “ Ավ գալի-
 լեացիք , ինչ զարմացեր դէպ ՚ի երկինքը կը
 նայիք . աս Յիսուսը որ հիմա ձեզմէ զատուեցաւ
 երկինքը գնաց , նոյն կերպովը փառաւորապէս
 պիտի մէկ օր մը նորէն դառնայ գայ , , : Ըշա-
 կերտներն ալ անանկ Յիսուսի երկրպագութիւն
 ընելով՝ և ուրախութեամբ փառք տալով Ըստու-
 ծոյ Երուսաղէմ դարձան :



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա .

Հոգոյն Սրբոյ գարուտը՝ ու հաւատացեալոց
շատնայր :

ԱՄ Քրիստոսի 32 . (Գործ . Ա . Բ .)

ՔՐԻՍՏՈՍ տէրն մեր երկինքը համբառնալու
ատենը ինչպէս որ ապրապրեր էր՝ բոլոր առա-
քեալները և աշակերտները մէյտեղ՝ մէկ տուն
մը ժողվեցան , Արցան Սարիամ ալ հետերնին ,
ու անդադար աղօթք ընելով կը սպասէին Հո-
գոյն Սրբոյ գալուն որ իրենց խոստացեր էր խըր-
կելու . որ ան դայ զիրենք աստուածային ճարհքով
լուսաւորէ , որ Քրիստոսի նոր եկեղեցոյն առջի
հիմունքը պիտի ըլլային , Ան օրերը Ալեքսոս ա-
ռաքեալը մեջերնին ելաւ ըսաւ որ՝ Յուդայի մա-
տնիչին տեղը , որ կորեր գացեր էր , մէկ ուրիշ
մը ընարեն , որ տասուերկու առաքելոց համբան-
քը լման մնայ : Աւտի երկու հոգի , որ ինչպէս
կ'ըսեն՝ ան Քրիստոսի աշակերտներէն էին , ըն-
արեցին առաջ բերին , մէկին անունը Յովսէփ
կամ Յուստոս ըսուած , մէկալինը՝ Սատաթիա .
և աղօթք ընելով վիճակ որ ձգեցին ասոնց վրայ ,

Մատաթիայի էլաւ վիճակը, ու անանկ ինքը
 օտառուերկու առաքելոց համբաները մտաւ :

Համբարձմանէն տասն օր օր անցաւ՝ որ Պեն-
 տեկոստէ կ'ըսուէր, այսինքն զատկէն յիսուն օր
 էտե, առտուան դէմ՝ յանկարծակի երկինքը գո-
 ռալով մէկ սաստիկ հով մը ելաւ՝ եկաւ ան տու-
 նը մտաւ թնդացուց, ուր օր ասոնք ժողոված կե-
 ցեր կը սպասէին. ու իրենց ամէն մէկուն զլիսուն
 վրայ մէկմէկ կրակի բոցի պէս լեզուի ձեւով լոյս
 երեցաւ, (որ ան գրսուանց նշան եղաւ թէ՛ Հո-
 գւոյն Արբոյ շնորհքը եկեր է վրանին) : Եւ ե-
 զածին պէս, ամէնքը հողւով Արբով լեցուած՝
 սկսան կերպ կերպ լեզուներով համարձակ զրու-
 ցել ու քարոզել Վրխատոսի հաւատքը : Եւ ատե-
 նը գրսի ուրիշ երկիրներէն շատ հրէաներ օր
 Արուսաղէմ ուխտ եկեր էին՝ երբոր աս բանս
 իմացան, վազեցին հոն եկան, տեսան որ ասոնք
 իրենց գիտցած լեզուները համարձակ կը զրու-
 ցեն կոր, մէկը պարսկերէն, մէկը պարթեւերէն,
 մէկը հռոմերէն, մէկը արապերէն, ու ալ ու-
 րիշ շատ կերպ լեզուներ. պաղեցան մնացին,
 “ Եւ ինչ զարմանալի բան է, ըսին, որ աս միա-
 միտ գալիլէացի մարդիկը այսպիսի լեզուներ կը
 խօսին ” : Եւ մարդիկներէն ոմանք ալ եղան որ՝
 սկսան քամահրելով ըսել թէ՛ “ Եսոնք գինով-
 ցեր են ” : Պետրոս առաքեալը ան ատենը մէ-
 կալ առաքեալներուն հետը մէկ բերան եղած՝
 ասոնց սրատասխան տուաւ թէ՛ “ Վաւ լիցի,
 գինով չենք. դեռ առտու է, աս ատենը գինի
 չիմուիր. հասցաւ հողւով Արբով լցուած ենք,
 ինչպէս Յովելեայ մարգարէին բերնովը Եւ-
 տուած առաջուց ըսեր էր թէ՛ հեղից յոգոյ իմէ
 ի վերայ ամենայն մարմնոյ, եւ մարգարէասցին ոստերտ

քեր և Գառնի քեր, և այլն : Ատրքը Յիսուսի վրայ
 խօսքը դարձրնելով՝ համարձակ առջևնին դրաւ
 անոնց քարոզեց թէ « Այ՛ Յիսուս Ազգովե-
 ցին , որ այնչափ հրաշքներովք (որ դուք ալ տե-
 սեր էք) հաստատեր է թէ ինքը ձմարիտ մե-
 սիան է , ու դուք երբոր զանիկայ բռնեցիք խա-
 ջին վրայ մեռցուցիք , ինքն ալ մարգարէից լաւ-
 ծին պէս որ մեռնելէն յարութիւն առաւ եր-
 կինքը համբարձաւ , անկէց հոգին Սուրբ խրկեց
 մեզի , որոյ նշանը դուք հիմա մեր վրայ կը տես-
 նէք և մեզմէ կը լսէք » : Այսպիսի քարոզու-
 թեամբք ան լողներէն իրեք հազար հոգիի
 չափ զղջացան՝ դարձան , և ան օրը մկրտուե-
 ցան՝ Վրիստոսի հաւատացեալ եղան : Այլ ա-
 սոնք ամէնը առաքելոց քովէն չէին բաժնուեր ,
 միշտ անոնց քարոզները մտիկ կը դնէին . հացեր-
 նին , աղօթքնին , ամէն բաներնին մէյտեղ . ա-
 նանկ որ՝ մէջերնին իմս քուկդ չկար . Աստուած
 ալ առաքելոց ձեռքովք շատ հրաշքներ գործե-
 լով՝ մէկալ ժողովուրդն ալ իրենցմէ կը պատկա-
 ոէր , և ասով օրէ օր հաւատացեալքը կը շատ-
 նային :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Ի ձեռն կապիւն բժշկութիւնք :

(Գործ . Գ .)

Առաքեալները ան օրերը շատ անգամ տաճա-
 րը կ'երթային աղօթք ընելու . անգամ մը հան-
 դրպեցաւ որ Պեարոս ու Յովհաննէս առաքեա-
 ւը մէյտեղ իրիկուան ժամուն երթալնին՝ տե-

սան որ տաճարին դուռը մէկ կաղ (կամ քէօթ-
 րիւմ) մարդ մը քառսուն տարեկան, որ միշտ
 հոն կը բերելին կը դնելին որ ողորմութիւն մու-
 րայ, իրենցմէ ալ ողորմութիւն ուզէց: Պետրոս
 առաքեալն ալ զարձաւ ըսաւ իրեն. «Վայէ ինչ
 կ'ըսեմ. ես արծաթ ու օսկի չունիմ, հասցա՛ ունե-
 ցածս ան է որ քեզի կու տամ: Հիսուսի Վերիսու-
 սի Վազովրեցիին անունովը կ'ըսեմ որ՝ ոտքի վրայ
 ելլես քալես երթաս», . այսպէս ըսելով անոր
 ձեռքէն որ բռնեց վեր վերցուց, շուտ մը մարդը
 բժշկուեցաւ, ելաւ վազելով ինքն ալ հետեւնին
 տաճարը մտաւ, ու շնորհակալ ըլլալով փառք
 կու տար Մատուծոյ: Մը հրաշքիս պատճառովը՝
 շատ ժողովուրդ զարմանալով եկան առաքեալնե-
 րուն վրան թափեցան, մանաւանդ տեմնելով որ
 ան բժշկուած մարդն ալ որ իրենք ալ աղէկ կը
 ճանչնային՝ եկեր քովերնին կեցեր ամենուն
 կը ցուցնէր զանոնք: Պետրոս առաքեալն ալ ան-
 տեղը նորէն անոնց Հիսուսի վրայ քարոզելով՝ որ
 անոր անունովը աս բժշկութիւնս կատարուե-
 ցաւ, և յորդորելով զիրենք որ դառնան Հիսուսի
 գէմ ըրած անօրէնութիւննին ապաշխարեն, ան-
 նանկ զղջում բերաւ որ՝ ան օրն ալ հինգ հազար
 հոգի զարձան հաւատացեալ եղան: Մայց ա-
 ռաքեալներուն դեռ աս քարոզութիւնը բերան-
 նին էր, որ Հրէից քահանայապետները և տա-
 ճարին իշխանները սրդողելով՝ եկան վրանին հա-
 սան, ու երկուքն ալ բռնեցին ան զիշերը բանտը
 դրին. և մէկալ առտուն Մննա ու Վայիափա քա-
 հանայապետներուն առջևը ժողով ժողված՝ հոն
 բերին զասոնք, ու իրենց սկսան հարցնել թէ
 «Վուք օրուն ու ժովը կամ անունովը աս կաղը
 ոտք հանեցիք», Մնն առեւնը Պետրոս հոգւոյն

Սրբոց շնորհքով լցուած՝ պատասխան տուա-
 թէ՛ « Ըս ի՛նչ զարմանալի բան է, որ դուք որ
 Խորայերացւոց իշխաններն էք մեզ դատադար-
 տել կ'ուզէք ան ողորմելի մարդուն աս բարիքս
 ընելուս համար, որ Հիսուսի Վրիստոսի անու-
 նովք բժշկուեցաւ, ան որ դուք խաչ հանեցիք,
 ու Մատուած իրեն յարութիւն առնել տուաւ,
 և զինքը բոլոր ստեղծուածոց զլուխ դրաւ, ա-
 նանկ որ՝ առանց Հիսուսի Վրիստոսի մարդ
 չկրնար փրկութեան հասնիլ, » ։ Շքեցի իշխան-
 ներն ալ տեսնելով առաքելոց այսպիսի խորունկ
 բաներով համարձակ զրուցուածքը՝ կը զարմա-
 նային վրանին . զիտէին կը ճանչնային որ ասոնք
 ռամիկ տգէտ մարդիկ էին՝ որ Հիսուսի հետը կը
 քայլէին . և մէկալ դիէն ալ ան բժշկուած մար-
 դը առջևնին տեսնելով՝ պատանձեցան մնացին ։
 Աւստի խորհուրդ ըրին որ բանը ժողովրդոց մէջ
 շատ չտարածուած՝ իրենց աղէկ մը ապրասպրեն
 որ, մէյ մըն ալ Հիսուսի անունը բերաննին չառ-
 նեն, անոր վրայ մարդու բան չխօսին ։ Ըսա-
 քեալներն ալ ասոր պատասխան տուին թէ՛ « Ըս
 ըլլալու բան է որ Մատուծոյ հրամանը թողունք՝
 ու ձեզի հնազանդինք . մենք չենք կրնար մեր
 տեսածը և լսածը պահել չգրուցել, » ։ Ըսոնք ալ
 ճարերնին հատած, որ չըլլայ թէ՛ ասոնց պատիժ
 տան նէ՝ ժողովուրդը ոտք ելլէ, անանկ թող
 տուին որ երթան . և երբոր եկան մէկալ առա-
 քելոց ու հաւատացելոց աս բաները պատմեցին՝
 ամէնքը մէյակալ փառք տուին Մատուծոյ ։ Ատ-
 քը միաբան աղօթք ըրին աղաչեցին Մատուծոյ,
 որ իրենց ուժ կարողութիւն տայ համարձակ
 Վրիստոսի աւետարանը քարոզել, ու հրաչքնե-
 թով հաստատել . Մատուած ալ նշան թէ՛ իրենց

աղօթքը ըսեր է՝ ան կեցած տեղերնին շարժ մը
 հանեց, ու հոգւոյն Սրբոյ նոր ուժ զօրութիւն
 եկաւ վրանին :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Անանիայի ու Սափիրայի պատիժը, և առաքելոց
 բարոգոսքիւնը :

(Գործ . Դ . Ե .)

Ըստ նոր Վերիտասի հաւատացեալներն որ ը-
 սինք ամէնքը միաբան առաքելոց հետ մէկ սիրտ
 մէկ հոգի եղած՝ իրենց ունեցած ստակնին և
 ուրիշ բաներնին կը բերէին առաքելոց ձեռքը
 կու տային, որ անոնք ամենուն հաւատար բաժ-
 նելով բոլոր հաւատացելոց պիտանաւորութիւնը
 թէ հոգևոր թէ մարմնաւոր՝ իրենք կը հոգային :
 Ընանկ որ գետին կամ տեղ ունեցողներն ալ
 տեղերնին կը ծախէին, ու անոր ստակը ընան ա-
 ռաքելոց կու տային . ինչպէս որ ասանկ ըրաւ
 Յովսէփ ըսուած մէկը՝ որ ետքը անունը Ղաա-
 նաբաս կոչուեցաւ : Բայց ասոնցմէ մէկ մարդ
 մը Ղնանիա անունով իր Սափիրա ըսուած կրն-
 կանը հետ մէյտեղ խօսք դրած՝ երբոր իրեն ա-
 գարակը (այսինքն չիֆտլիկը) որ ծախեց, անոր
 ստակը առաւ իր քովը վար դրաւ . ու միայն քիչ
 մը բան հանեց տարաւ առաքելոց ձեռքը տուաւ,
 անանկ ցուցընելով թէ՛ այնչափ է եղեր ան ա-
 գարակին գինը : Պետրոս առաքեալը իմանալով
 աս մարդու խաբէրայութիւնը՝ քովը գնաց յան-
 դիմանելով իրեն ըսաւ . « Ղնանիա, ինչու դուն
 սատանայի մուշկեր, ու հոգին Սուրբը խաբէ-

լով՝ ան ստրկին խորեցիր . ասանկ զիտնաս որ՝
 դուն ասով չէ՛ թէ մարդ՝ հասպա զ՛ստուած ու-
 ղեցիր որ խաբէս . ։ Ինանիան աս լսածին պէս՝
 անտեղը Իստուծոյ պատիժը վրան եկաւ գետի-
 նը ինկաւ հողին տուաւ . ու շուտ մը եկան իր ծա-
 ռաները անկէց վերցուցին տարին զինքը թաղե-
 ցին : Իսոր վրայ իրէք ժամ որ անցաւ , կնիկը իր
 երկանը զլուխը եկածը չգիտցած՝ երբոր ինքն
 ալ եկաւ Պետրոսի առջևը ելաւ , Պետրոս անոր-
 ալ նորէն հարցուց . « Իրաւ , ըսաւ , դուք այնչափ
 ստրկով ծախեցիք ան տեղը . » . կնիկն ալ ըսաւ
 թէ՛ « Հրամար ես այնպէս է . » : Ին ատենը
 Պետրոս անոր ալ երեսը տուաւ թէ՛ « Ի՛տ ինչ է
 որ դուք երկուքդ ալ մէյտեղ խօսք զրեր էք որ
 հողին Սուրբ փորձէք . ահա , ըսաւ , անոնք որ
 քու էրիկդ դրանը առջևը թաղեցին՝ քեզ ալ հոն
 տանին թաղեն . » : Կնիկն ալ շուտ մը հոն յան-
 կարծակիի եկաւ , ինքն ալ ինկաւ մեռաւ . ու ը-
 սածին պէս զան ալ տարին երկանը քովը թա-
 ղեցին . և աս պատիժներս շատ ահ ու սոսկում
 ձգեց լսողներուն սիրտը :

Ինկէ ետեւ առաքեալները հողուով Սրբով
 լցուած՝ շատ հրաշքներ բժշկու թիւններ սկսան
 ընել . այնչափ որ՝ աս բաներս ձայնձրնուելով
 ուրիշ քաղքրներէն ալ հիւանդներ ու ցաւագար-
 ներ կ'առնէին Նշուսաղէմ կը բերէին . ու պա-
 ըսով ատեն չգտնալով որ ամէնը առաքելոց քովը
 տանին՝ ոմանք ալ անանկ իրենց հիւանդները
 պատգարակով (այսինքն թէ՛ ձիւրէտով) ձամբուն
 վրայ կը դնէին , որ Պետրոս անկէ անցնի ինի
 գոնէ շուքը վրան զարնէ՝ ու անով բժշկուին :
 Իս հրաշքները տեսնելով և քարոզու թիւններ
 լնելով շատ մարդ կը դառնային հաւատացեալ

կ'ըլլային . և անով բոլոր ժողովուրդը առաքեալ
 ներէն կը պատկառէին , որ իրենց թշնամիներն
 ալ սիրա չէին ընէր առաքելոց զպէլու : Մայց
 ետքը քահանայապետը Սաղուկեցոց հետ մէկ
 եղած՝ սաստիկ նախանձէն ալ չդիմացան , առա-
 քեալները բռնել տուին բանաբ գրին . և ան դի-
 շերը հրեշտակ Տեառն՝ մարդ չիմացած եկաւ
 բանաբ բացաւ , ու իրենց ըսաւ որ չվախնան եւ
 լեն տաճարը երթան առջինին պէս քարոզու-
 թիւննին ընեն : Բնտուանց քահանայապետը
 մարդիկ խրկեց՝ որ բանաբն առնեն իրենց սին-
 դոսին առջևը բերեն . անոնք ալ դացին հոն մարդ
 չգտան , ու դարձան ըսին թէ « Գացինք տեսանք
 որ բանաբ աղէկ գոց էր , ու պահապանները դրա-
 նը քով կեցեր կը պահպանէին . ետքը բանաբ
 բանանք նայինք որ մէջը մարդ չկայ » : Բն բա-
 նիս վրայ սինոդոսն ալ շփոթած որ կը զարմանար ,
 ան ատենը մէկ ուրիշ մը եկաւ իրենց պատմեց
 թէ « Բն ձեր բանաբ դրած մարդիկը հիմա տա-
 ճարը կեցած ժողովրդոց քարոզ կու տան » : Բն
 նոր համար նորէն ետեւնին մարդ խրկեցին , որ
 զնաց ժողովուրդին վախէն անուշութեամբ կան-
 չեց բերաւ առաքեալները . ու քահանայապետը
 վրանին սրդողելով ըսաւ թէ « Չեղի չապրս-
 պրեցինք չբսինք որ մէյ մ'ալ ան Յիսուսին վրայ
 բերաննիդ չբանաբ , որ դուք բոլոր Երուսաղէմ
 քաղաքը ատ ձեր աղանդովը լեցուցիք . և անով
 մեզ ալ անիրաւ կ'ուղէք երեցընել թէ՛ մենք
 պարսպ տեղը ան մարդուն արիւնը մտած ըլ-
 լանք » : Պետրոս ալ մէկալ առաքեալներուն
 հետ իրեն պատասխան տուին թէ « Պէտք է որ
 մենք աւելի Բնտուծոց հնազանդինք՝ քան թէ
 մարդու » . և անանկ համարձակ խօսեցան Յի-

տուտի վրայ, ու իրենց ըրած անօրէնութիւնը երեսնին տուին, որ անոնք ալ աս բաներս լսելով նօրէն աւելի կատղեցան, ու ալ սկսան խորհուրդ ընել որ առաքեալները մեռցընեն: Բայց ան ատենը մէջերնին Վամաղիւի ըստած մէկ ռարբի մը, որ օրինագէտ ու խօսքի տէր մարդ էր, ասիկայ ելաւ իրենց խորհուրդ տուաւ ըսաւ որ « Բա մարդիկը թող տուէք, դուք բան մ'ընէք ատոնց ատեններ, թէ որ մարդկային է ատոնց բռնած ճամբան նէ՝ ինքիւրեն կ'օչընչանայ կ'երթայ. ինչպէս որ, ըսաւ, քիչ մը առաջ ելաւ լիւսար, և անոր ետեւէն մէյ մ'ալ Յուզա գալիլեացին, որ խել մը մարդիկ գլխէ հանեցին, ու ետքը ցիրուցան եղան կորան գացին. հապա թէ, ըսաւ, Բստուծ մէ է, գիտնաք որ ատոնք չէք կրընար աւրել՝ վերցընել. և անով աստուածամարտ ալ կը սեպուիք », Բս Վամաղիւի ըսածին թէպէտ ամէնքը հաւնեցան, բայց այսու ամենայնիւ մէկ ծեծ մը քաշեցին առաքելոց, նօրէն ասքրսպրեցին որ մէյ մ'ալ Յիսուսի վրայ քարոզչտան, ու անանկ թողուցին որ երթան: Բսնք ալ եւելօք ուրախութիւն ցուցուցին ասոր վրայ՝ որ Յիսուսի համար նախատուելու արժանի եղան. ու մտիկ չըրին՝ նօրէն իրենց քարոզութիւնը չէին դադրեւր կ'ընէին:

Գ. Լ. ՈՒԽ Գ.

Ստեփանոսի Նախավիպային պատմութիւնք :

ԸՄ Քրիստոսի 34 : (Գ. որժ . 2 . է .)

Երբոր ալ օրէ օր շատցան հաւատացեալքը , անոնց մարմնաւոր հոգն ալ եւելցաւ առաքելոց վրայ . ուստի աս բանիս համար առաքեալքը ժողովք ըրին՝ սահմանեցին որ աշակերաներէն եօթը հոգի ընտրեն դնեն , որ ասոնք հաւատացելոց մարմնաւոր պիտանաւորութիւնը հոգան , ու իրենք բոլոր հոգևորին և քարոզութեան հետ ըլլան : Եւ ան ընտրուածները ասոնք էին . Ստեփանոս , Փիլիպպոս , Պրոքորնս , Կիկանովբա , Տիմոթէա , Պարմենա , Կիկողայոս : Ըս եօթը հոգիիս մէջ (որ սարկաւազ ըսուեցան) զլիաւորը Ստեփանոս՝ մէկ բարի հոգւոյն Սրբոյ շնորհքով լցուած մարդ մըն էր , որ ըստուած անոր ձեռքովը շատ հրաշքներ կ'ընէր , ու քարոզութեամբ և վիճաբանութեամբ անանկ կը պապանձեցրնէր հրէայքը , որ ալ ճար չունենալով անոր դէմ բերան բանալ բան զրուցել , սկսան վրան զրպարտութիւն (այսինքն իՖաիրա) ընել՝ թէ ինքը ըստուծոյ ու Սուրբի դէմ միշտ հայհոյանք կը խօսի : Ընանկ բանեցին զինքը քահանայապետին առջևը դատատան քաշեցին . ու երկու սուտ վկայ դրին , որ կ'ըսէին թէ՝ « Սրեք ընեցինք որ աս մարդս կ'ըսէր թէ՝ Յիսուս Կազովրեցին աս տեղս պիտի կործանէ , ու Սուրբի մեզի տուած օրէնքը պիտի փոխէ » : Կահահայապետը երբոր հարցուց իրեն թէ անանկ է

մի, ան ատենը Ստեփանոս բերանը բացաւ ու
 շնորհալի կերպով սկսաւ իրենց տեղն 'ի տեղը
 երկայն աստուածաշունչէն ցուցնել՝ թէ իր ը-
 րած քարոզութիւնը Հիսուսի վրայ ճշմարիտ ու
 շիտակ է, ու երեսնին տուաւ շրէից ազգին
 խտաարտութիւնը և չարութիւնը, որ այնչափ
 սուրբ մարգարէներ հալածէր մեռցուցեր են, որ
 ամէնը Հիսուսի Վրիստոսի դալուսար կը մար-
 գարէանային, ու ետքը ելան զան ալ մատնեցին
 սպաննեցին :

Ըստ բաներս խօսելէն ետև՝ Ստեփանոս երբոր
 դէպ 'ի երկինքը նայեցաւ ու ըսաւ . “ Ընա եր-
 կինքը բացուած կը տեսնեմ որ՝ Հիսուսը Ըստու-
 ծոյ աջ դին կեցեր է ,, , ան ատենը լսողները իբր
 թէ Ըստուծոյ դէմ հայհոյանք ըրածի պէս ա-
 կանջնին գոցեցին, ու կանչուրտակով կատղած
 Ստեփանոսի վրան վաղեցին բռնեցին՝ սկսան
 զինքը քարկոծել : Ըն շրէից մէջը մէկ մարդ
 մըն ալ կար Սաւուղ անունով, (որ ետքը Պողոս
 ըսուեցաւ՝ ու ինքն ալ առաքելոց կարգը մտաւ),
 ասիկայ ալ ան ժամանակը անանկ թշնամի էր
 հաւատացելոց որ՝ ան Ստեփանոսը քարկոծող-
 ներուն վրայի լսթերնին ինքը ապեր կը պահէր,
 որ անոնք հանգիստ բաներնին տեսնան : Երբոր
 այսպէս կը քարկոծէին, Ստեփանոսը կանչելով
 կ'ըսէր . “ Տէր Հիսուս, հոգիս քեզի կը յանձ-
 նեմ, դուն առ ,, : Ետև ալ հոգին տալու ատե-
 նը ծունկ չօրեցաւ ու ամուր ձայնով կանչեց .
 “ Տէր, ասոնց ըրածը մեղք մի սեպեր ,, . ու աս
 ըսածին պէս անտեղը ինկաւ վախճանեցաւ :
 Ետքը բարեպաշտ հաւատացեալքը եկան, ու
 ողբով լացով մարմինը անկէց վերցուցին՝ տարին
 թաղեցին :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Սիմոն մոզք առաքելականներէն կը նշուի . ներքինին
հաւատացեալ կ'ըլլայ :

(Գ.ործ . Ը .)

Հրէաները Ստեփանոսը մեռցընելէն ետե՛նտ
րէն անանկ սաստիկ հաղածանք հանեցին հաւա-
տացելոյ վրայ , որ աշակերտներէն շատը Արու-
սաղեմէն ելան՝ ասդին անդին ցիրուցան եղած
այնպէս իրենց քարոզութիւննին կ'ընէին : Ը-
տոնցմէ մէկն ալ Փիլիպպոս ըսուած՝ Սամարա-
ցոց քաղաքը գնաց քարոզելու . ու հոն հրաչք-
ներ գործելով , և ցաւազարներ բժշկելով շատ
մարդ զարձուց մկրտեց՝ հաւատացեալ ըրաւ :
Ըս Սամարացոց մէջը Սիմոն անունով մէկ կա-
խարդ մարդ մը կար , որ իր կախարդական գործ-
քերովը մեծ անուն ունէր մէջերնին . ստիկայ
ալ հոնտեղը մկրտուեցաւ , ու Փիլիպպոսի քովէն
չէր զատուեր , և անոր ըրած հրաչքները տես-
նալով շատ կը զարմանար : Ըն ատենները Պե-
տրոս ու Յովհաննէս առաքեալներն ալ Սամա-
րիա եկան , որ մկրտուածներուն (ինչպէս կ'ըսեն՝
զրոյժ ընելով) հոգին Սուրբ տան : Սիմոն մե-
զը տեսնելով որ աս առաքեալները ձեռուրնին
մարդու վրայ դնելով հոգւոյն Արքայ շնորհքը
յայտնի կ'երևայ կոր մկրտելոց վրայ , ինքն ալ
հանեց անոնց ստակ տուաւ՝ ըսաւ որ իրեն ալ աս
խխանութիւնս տան , որ որուն վրայ ձեռք դնե-
նէ՝ հոգին Սուրբ առնէ : Ըսոր՝ Պետրոս առա-
քեալը սաստիկ սրդողելով տուած ստակը երեսը

զարկաւ ու ըսաւ . “ Քու ստակդ քեզի հետ
երթայ հորսուի , որ կարծեցիր թէ Մատուծոյ
պարզէր ստրկով պիտի գնես . դուն առ բանիս
մէջը մասն ու բաժին չունիս , որովհետեւ սիրտդ
Մատուծոյ հետ շխտակ չէ . ուստի աչքդ բաց ա-
պաշխարէ որ Մատուած քու մեղացդ թողու-
թիւն տայ , ,

Անկէ ետքը հրեշտակ Մատուծոյ Փիլիպպոսի
հրամայեց որ՝ երթայ Արուսաղէմի ու Վազա
քաղքին ձամբուն վրայ : Փիլիպպոս ալ հոն հա-
սածին պէս՝ տեսաւ որ կառքով մէկ ներքինի մը
կ'երթար հոր , որ Աթուլպացոց թագուհին
դանձապեան էր՝ որ Արուսաղէմ ուխտ էր գա-
ցեր . Փիլիպպոս հոգւոյն Արքոյ զրդմամբը ասոր
քովը մօտեցաւ , տեսաւ որ ասիկայ Ասայի մար-
դարէին զիրքը կը կարգար . իրեն հարցուց թէ
“ Արդացածդ կը հասկընամ մի , , : Ան ալ ը-
սաւ . “ Ինչպէս պիտի հասկընամ ինչուան որ
մէկը ինձի չմեկնէ , , . ու Փիլիպպոսի աղաչեց որ
ելլէ հետը կառքը քովը նստի . և Մատուծոյ
կարգաւորութեամբը անոր կարգացածն ալ Ա-
սայի մարդարէին ան խօսքն էր , որ Քրիստոսի
վրայ կ'ըսէ թէ “ Կէկ ոչխարի մը պէս զինքը
մօրթելու տարին , ու մէկ գառի մը պէս իր
բուրդը կտրողին առջէր բերան չբացաւ ձայն
չհանեց , , և այն : Ուստի ներքինին Փիլիպպոսի
հարցուց թէ “ Կարգարէն առ բանս որուն հա-
մար ըսեր է , , : Փիլիպպոս ալ ան ժամանակը
սիսաւ տեղն՝ ի տեղը Քրիստոսի վրայ իրեն քա-
րող տալ՝ ու քրիստոնէական հաւատքը սորվըր-
նել : Ատքը ձամբան առաջ որ գացին , և երբոր
մէկ ջրի մը քով հասան , ներքինին ալ կատա-
րեալ սրտով հաւատարով Քրիստոսի՝ Փիլիպ-

պոսի աղաչեց որ զինքը մկրտէ : Եւ հոնտեղը
մկրտուելէն՝ և հոգին Սուրբ ալ վրան ինջնա-
լէն ետե, հրեշտակը յանկարծակի քովէն փի-
լիպպոսը յափշտակեց վերցուց՝ ուրիշ տեղ տա-
րաւ որ քարոզէ . ու անանկ ներքինին ալ ուրա-
խութեամբ փառք տալով Բստուծոյ ելաւ իր
ճամբան առաջ զնաց :

Գ Լ Ո Ի Խ Զ .

Ստույի կամ Պօղոս ասարեկոյն դարձուեր :

ԸՄ Քրիստոսի 35 : (Գործ . Բ 1)

Բն ատենները Սաուղը ինչպէս վերը ըսինք՝
ամենէն աւելի մովսիսական օրինաց ջատագով
ըլլալով սաստիկ ետեւէ էր Վրիստոսի հաւա-
տացեալները հալածելու . ուստի երբոր իմացաւ
Թէ հաւատացեալքը Ղամասկոս քաղաքը փա-
խած՝ հոն կը շտնան կոր, Լքուսաղէմ քահա-
նայապետէն թուղթ (կամ Ֆէրման մը) հանել
տուաւ, ու ինքը առաւ ելաւ որ Ղամասկոս եր-
թայ՝ աս Վրիստոսի հաւատացեալները բռնէ
կապած Լքուսաղէմ բերէ : Բայց ճամբան եր-
թալնինի երբոր Ղամասկոսի մօտեցաւ, մէյ
մ՝ ալ տեսնէ որ յանկարծակի երկինքէն մէկ սաւ-
տիկ լոյս մը ինջած չորս զին պատեց ու զինքը
ձգեց գետինը զարկաւ . և ան ատենը ստանկ ձայն
մը եկաւ իրեն . « Սաուղ, Սաուղ, դուն ինչու
ետեւէս ինկեր զիս կը հալածես . » : Սաուղն ալ
ստակալով հարցուց թէ « Տէր, դուն ո՞վ ես . » :
Կորէն իրեն ձայն եկաւ թէ « Ես Յիսուս Վա-
ղովրեցին եմ, որ դուն զիս կը հալածես . » : Սա-

ւուղ ալ հարցուց . “ Տէր , ինչ կ'ուզես որ ես
 ընեմ ” : Ըն ալ ըսաւ . “ Ոտք ելիր կայնէ քա-
 ղաբը գնա , ու հօն քեզի կ'ըսուի թէ ինչ պի-
 տոր ընես ” : Սաւուղի հետ եղած մարդիկն ալ
 զարհուրած մնացեր էին՝ չէին տեսներ թէ խօ-
 սողը ո՛վ էր : Ըս որ եղաւ , Սաւուղը այնպէս
 կուրցաւ որ՝ աչուրները բաց բան չէր տեսներ .
 ուստի հետի մարդիկը իրեն ձեռքէն բռնած ա-
 սին զինքը Ղաամասկոս տարին : Հօն անանկ կոյր՝
 սիրտը կտորած իրեք որ անօթի կենալէն ետքը ,
 Ըստուած հրամայեց Ընանիա ըսուած մէկ աշա-
 կերտին՝ որ Ղաամասկոս էր , որ երթայ Սաւուղը
 գտնէ՝ բժշկէ ու մկրտէ զինքը : Ընանիան առջի
 բերանը վախցաւ՝ ետ կեցաւ շուղեց երթալ , գիտ-
 նալով որ ինչպէս հաւատացելոց թ ճնամի մարդ
 է ան Սաւուղը : Բայց Ըստուած իրեն սիրտ
 տուաւ ըսաւ թէ “ Գնա՛ մի վախնար . ես ան
 մարդը ինձի առեր եմ , որ իմ անունս բոլոր աշ-
 խարհք պիտի քարոզէ , ու ինքն ալ ինձի համար
 շատ չարչարանք պիտի քաշէ ” : Ըն ատենը Ը-
 նանիան եկաւ զինքը գտաւ , ու ձեռքը վրան
 դրաւ ըսաւ . “ Սաւուղ եղբայր , Տէր Հիսուսը
 որ ճամբան քեզի երեցաւ՝ ան զիս խրկեց որ
 քու աչուրներդ բժշկուի և Հոգւով Սրբով լե-
 ցուիս ” : Ըս որ ըսաւ , շուտ մը Սաւուղի աչուր-
 ներէն կճեպի պէս բան թափեցան բացուեցան ,
 որ սկսաւ տեսնել . ու ելաւ մկրտուեցաւ : Ընկէ
 ետե Սաւուղ հաւատացելոց մէջը մտաւ . ու
 շուտ մը ինքն ալ սկսաւ քարոզել , և Հրէից
 դէմ հակաձառութիւն ընել ցուցնել թէ՛ Հի-
 սուս Քրիստոս ճշմարիտ մեսիան է . անանկ որ՝
 ով որ կը տեսնէր ու կը լսէր , կը զարմանար թէ
 աս մարդս հաւատացեալները հալածելուն տե-

դը՛ ինչպէս հիմա ինքը անոնց հաւատքը առեր
 կը քարոզէ : Ընոր համար անոնք ալ այնչափ
 կատողեցան Սաւուղի գէմը , որ կ'ուզէին բռնել
 սպաննել , թէ որ աշակերտները գիշերանց զին-
 քը Վամասիոսէ Լըրուսաղէմ չփախցընէին նէ :
 Սաւուղ ալ երբոր ասանկ նորէն Լըրուսաղէմ
 դարձա՛ւ ու հաւատացելոց մէջը ուզեց մաննել ,
 առջի բերանը անոնք բանը չգիտնալով իրմէ
 վախցան քաշուեցան , ինչուան որ Մառնարաս
 աշակերտը առաւ զինքը առաքեալներուն քովը
 տարաւ , ու տեղն 'ի տեղը հասկըցուց որ ինչպէս
 Յիսուս իրեն երևցեր է , ու հետը խօսեր է , և
 ինքն ալ Վամասիոս ինտոր քարոզութիւն կ'ընէ
 եղեր : Ետքը Սաւուղ Լըրուսաղէմ ալ սկսաւ
 համարձակ Յիսուսը քարոզել , ու Հրէից հետ
 հակաճառութիւն ընել : Մայց քիչ մը օրէն ե-
 տե՛ կրբոր խնայան հաւատացեալքը որ Հրէա-
 ները հոն ալ մէկտեղ խօսք դրեր են որ զինքը
 մեռցընեն , անկէց փախցուցին Տարսոն քաղաքը
 խրկեցին :

Գ Լ Ո Ւ Թ Է .

Կրտսնեկիոս հարիւրապետին դարձումը :

(Գ. օրծ . 2 . ԺԵ .)

Պետրոս առաքեալը սո ժամանակս Լիզիա
 ու Յուդիւ ըսուած քաղաքները կը քարոզէր , և
 շատ բժշկութիւններ կ'ընէր . ասոնց մէջը մէկ
 ութը տարուան անդամալոյծ մը Լչնա ըսուած՝
 բժշկեց ոտք հանեց . ու մէկ բարեպաշտ հաւա-
 տացեալ կնիկ մը Տարսիթա անունով որ հիւրնդ-

ցեր մեռեր էր, հրաշքով ողջընցուց: Ըն ա-
տենը Աեսարիա Պաղեստինացւոց քաղաքը՝ հա-
րիւրապէտ մը կար Աուանելիոս անունով, որ
թէպէտ հրէայ չէր՝ այլազգի էր, բայց մէկ բա-
րեպաշտ ու աստուածալախ մարդ մը ըլլալով
անպակաս ողորմութիւն կու տար, և ամէն օր
ատենովը իր աղօթքը աղաչանքը Ըստուծոյ կ'ը-
նէր: Սէկ օր մը ասիկայ աղօթք ընէնինի՝
հրեշտակ Ըստուծոյ երևցաւ իրեն ու ըսաւ թէ
«Վա աղօթքդ և ըրած ողորմութիւններդ
Ըստուծոյ ընդունելի եղան. ուստի Յօսպէ քա-
ղաքը մարդ խրկէ՝ ու անկէց Պետրոս առաքեալը
կանչէ, որ դայ քեզի սորվըցընէ թէ՛ ինչ պիտոր
ընես որ փրկուիս »: Աուանելիոս ալ շուտ մը իր
ծառանքէն իրեք հոգի խրկեց, որ երթան Պե-
տրոս առաքեալը անկէց առնեն իրեն բերեն: Ը-
նոնք ալ երբոր դային Յօսպէ մօտեցան, ան ա-
տենը Պետրոս կէս օրուան դէմ տանիքը ելեր
աղօթք կ'ընէր. ու ալ կերակուրին ատենը ըլլա-
լով՝ որ անօթեցեր էր, յանկարծակի մէկ տե-
սիլք մը տեսաւ, որ երկինքը բացուեցաւ, ու
անկէ մէկ կտաւ մը (կամ չարշաֆի սկէս լաթ մը)
չորս ծայրէն բռնուած կախուած առջևը ինջաւ.
և ասոր մէջը կերպ կերպ կենդանիներ՝ օձեր ու
թռչուններ կային: Պետրոս ալ աս բանիս վրայ
զարմացած որ կընայէր, երկինքէն իրեն ձայն մը
եկաւ թէ «Պետրոս, ելիր մօրթէ ու կեր ա-
սոնք »: Պետրոս պատասխան տուաւ թէ «Վաւ
լիցի որ ընեմ, որ ես դեռ իմ բերանս պիղծ բան
դրած չեմ »: Ետքը մէյ մըն ալ ձայն եկաւ թէ
«Ըստուծոյ սրբած բանը դուն պիղծ մի սե-
պեր »: ու ասանկ իրեք հեղ ըսելէն ետե՛ վեր-
ցաւ անյայտ եղև ան տեսիլքը: Ըստ տեսիլիս

վրայ Պետրոս ալ որ սկսաւ մտմտալ, ան առեւնը
 Կուռնելիոսի խրկած մարդիկն ալ հոն հասան,
 որ փնտրուելով տունը գտան՝ քովը գացին, ու
 Կուռնելիոսի հանդրպաճ տեսիլքը իրեն պատ-
 մեցին, և աղաչեցին որ ելլէ հետերնին զայ :
 Հողին Սուրբ ալ տուն տուաւ Պետրոսի, որ ա-
 նանկ անոր մէկալ օրը հետը Հրէաներէն մէկ
 քանի հողի մը առած՝ ելաւ Կեսարիա Կուռնե-
 լիոսի քով եկաւ, որ ան ալ բոլոր իր ազգական-
 ները ու բարեկամները մէկ տեղ ժողված կը
 սպասէր : Երբոր Պետրոս տունը մտաւ, Կուռ-
 նելիոս առջևը վաղէց ոտքը ինկաւ : Պետրոս ալ
 բռնեց զինքը վերցուց, « Ի՞նչ կ'ընես, ըսա-
 ես ալ քեզի պէս մարդ մըն եմ », ու ետքը ի-
 թէն բանը բացաւ թէ « Դուն ալ զիտես որ
 Հրէաներուն օրինաց դէմ է՝ այլազգիներուն
 քովը երթալը հետերնին խառնուիլը, բայց Ը
 տուած ինձի տեսիլք ցուցուց յայանեց որ այսու-
 հետեւ սա խտրանքները (այսինքն այրը սէչին)
 պիտի մեր մէջը չըլլայ. անոր համար ես ալ դէմ
 չկեցայ ելայ քովդ եկայ. ուստի ինձի ըսէ՝ պատ-
 ճառն ինչ է որ զիս կանչեր ես », : Կուռնելիոս
 ալ սկսաւ կարգով իրեն երեցած հրէշտակին
 տեսիլքը Պետրոսի պատմեց, ու ետքը ըսաւ թէ
 « Ըհա մենք ամէնքս քու առջևդ ժողվեր ենք՝
 որ քեզմէ Ըստուծոյ հրամանը լսենք », : Ըն ժա-
 մանակը Պետրոս առարեալն ալ բերանը բացաւ,
 ու սկսաւ իրենց տեղն ՚ի տեղը : Յիսուսի Վրիտ-
 տոսի վրայ քարոզել. ետեւ տեսնելով որ յայանի
 Հողոյն Սուրբ շնորհքն ալ անոնց վրան ինձա-
 շուտ մը զամէնքը հանտեղը մկրտեց, Վրիտտոսի
 հաւատացեալ եղան : Ը բանս կատարելէն ետ-
 քը մէկ քանի օրէն ետեւ Պետրոս Երուսաղէմ

որ եկաւ, Հրէաներէն դարձած հաւատացեալ-
ները Պետրոսի վրան գայթակղած սկսան իրեն
ծուռ ծուռ նայիլ թէ՛ գացեր այլազգիներուն
մէջը մտեր է ու հետերնին ալ նստեր հաց կե-
րեր է: Բայց ետքը խնանալով Պետրոսի Լս-
տուծմէ եղած յայտնութիւնը և Կուռնելիոսի
տեսիլքին բանը՝ ամենուն միտքը շինուեցաւ,
սկսան փառք տալ Լստուծոյ, որ անով յայտնեց
թէ՛ այլազգի կուստրաշտներուն մէջն ալ Լստուած
կ'ուզէ որ Քրիստոսի հաւատքը տարածուի:

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Պետրոս առաքելոյն բանակն ազատուիր :

Ըմ Քրիստոսի 44 : (Գործ . 48) :

Լս բաներէս ետև Հերովդէս Բզրիպպա Ը-
տուած Հրէաստանի թագաւորը ուզելով որ ա-
ւելի Հրէից աչքը մտնայ սիրելի ըլլայ՝ հալա-
ծում հանեց հաւատացելոց վրայ, ու առաջ Յա-
կոբոս առաքեալը՝ Յովհաննէս աւետարանչին
եղբայրը՝ բանեց զլուխը կտրել տուաւ: Ետքը
տեսնելով որ աս բանս Հրէայք շատ հաւնեցան՝
ետևէն Պետրոս առաքեալն ալ բանել տուաւ
բանտը դրաւ, որ զատկէն ետև զան ալ սպան-
նէ: անոր համար բոլոր Երուսաղէմ եղած հա-
ւատացեալքը աղօթք կ'ընէին՝ որ Լստուած զին-
քը խաղըտէ: Եկաւ ան գիշերն՝ որ ալ առտուանց
Հերովդէս պիտի բանտէն հաներ մեռցընէր . և
Պետրոս շղթաներով կապած՝ սրահապանները
չորս զին առած որ կը քնանար, լուսաւոր հրեշ-
տակ մը եկաւ Պետրոսի քով, ու մշտելով զին-

քր արթնացուց ըսաւ . “ Շնորհաւ ըրէ ելիր կայ-
 նէ ,” . ան ատենը յանկարծակի բոլոր շղթաները
 վրայէն արձրկուեցան գետինը ինկան , Հրեշ-
 տակն ալ ըսաւ . “ Պատիզ կապէ հողաթափ-
 ներդ հազիր՝ լաթդ վրագ առ , ու ետեւէս ե-
 կուր ,” . Պետրոս ալ զարմացած շփոթած չէր
 գիտեր թէ աս իրան բան է մի՛ թէ երազ է , ու
 աս պահապաններուն մէջէն անցնելով հրեշտա-
 կին ետեւէն կ'երթար . երբոր բանտին երկրթէ
 դուռը հասաւ , ան ալ ինքիբն բացուեցաւ , ու
 դուրս ելածին պէս հրեշտակը քովէն աներեւոյթ
 եղաւ : Ըն ատենը Պետրոսի խելքը վրան եկաւ ,
 իմացաւ որ Ըստուած հրեշտակ խրկեր է որ զին-
 քը խալըսէ . ուստի Ըստուծոյ փառք տալով ե-
 լաւ ան տունը եկաւ , ուր որ հաւատացեալքը
 մէկտեղ ժողոված իրեն համար աղօթք կ'ընէին
 կոր : Դուռն որ զարկաւ , շուտ մը մէկ աղախին
 մը վազեց որ նայի . ու երբոր լսեց ձայնէն ձանչ-
 ցաւ թէ Պետրոսն է , ալ ուրախութենէն շփո-
 թած՝ դուռը չբացաւ , ներս վազեց ըսաւ թէ
 “ Պետրոսը դուռն է ,” : Ընոնք ալ սաստիկ զար-
 մանալով և ամենեւին կարծիք չունենալով “ Բա՛
 խենթեցար ,” ըսին . Պետրոս անդին դուռը ակ-
 առեր կը զարնէր . ետքը՝ ինչ և իցէ վազեցին
 բացին , ու երբոր զինքը տեսան՝ ամէնքը ան տե-
 զը պաղեցան մնացին : Պետրոս ալ Ըստուծմէ
 իր վրայ եղած հրաշքը անոնց պատմելէն ետքը՝
 Արուսաղեմէն ելաւ գնաց Աեսարիա քաջուե-
 ցաւ : Բայց առտուանց երբոր Հերովդէս Պե-
 տրոսը ուզեց , ու չգտաւ նէ՛ պահապանները
 բռնեց սպաննել տուաւ , վրանին անանկ կար-
 ծիք երթալով թէ՛ իրենք Պետրոսը փախուցած
 ըլլան :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Պօղոս առաքելոյն շարոզարիւնները :

(Գործ . ԺԳ . ԺԴ . ԺԵ .)

Ստեփանոսի հալածման ատենը, ինչպէս ըսինք՝ շատ հաւատացեալներ Արուստղեմէն եւ լան ասդին անդին ցրուեցան . ասոնցմէ Մնատիոր քաղաքն ալ գնացին, և հոն կամաց կամաց շատ մարդիկ վաստրկեցան հաւատացեալ ըրին . անոր համար ետքը Քառնաբաս աշակերտն ալ ելաւ հոն գնաց, որ ինքն ալ շատ պտուղ ըրաւ : Ատքը Տարսոն քաղաքը գնաց, անկէց առաւ հետը բերաւ Սաւուղը կամ Պաւղոսը, ու երկուքը մէկտեղ տարիի մը չափ Մնատիոր քարոզելով՝ կուսպաշտներէն ալ խել մը հոգի շահեցան . և աս Քրիստոսի հաւատացեալները հոնտեղը պինտ առաջ Քրիստոնեայ ըսուեցան : Մնկէ ետեւ մէկ օր մը հոն աշակերտները մէյտեղ աղօթք որ կ'ընէին, հոգին Սուրբ յայտնեց որ՝ աս երկուքս, Քառնաբաս ու Պաւղոս, ելլեն կուսպաշտից երկիրները քարոզութիւն երթան . ուստի իրենք ալ առաջ՝ նաւով Ախարոս (այսինքն Վրայրըղ) գացին, ու հոն սկստան քարոզել շատ հոգի շահել : Ախարոսի մէջ Պափոս ըսուած քաղաքը մէկ կախարդ սուտ մարգարէ մը կար՝ Քարեյեսու անունով . ասիկայ իր խարեբայութեամբը ետեւէ եր ինկեր՝ որ Սերգի Պաւղոս ըսուած փօխանակ բղէշխին (կամ վէզիր քեահեասին ըսենք) հաւատքէն հանէ, զոր Սաւուղը ինքը դարձուցեր քրիստո-

նեայ էր ըրեր, (և ինչպէս կ'ըսեն՝ անկէջ առաքելոյն անունն ալ փոխուեցաւ՝ ետքը Սաուզ ըսուելուն տեղը Պաւղոս կամ Պօղոս ըսուեցաւ): Ընոր համար Պօղոս առաքեալը յանդիմանելով ան կախարդը ըսաւ. «Ո՛վ խաբէրայ սատանայի որդի, որ միշտ ետևէ ես՝ որ Ըստուծոյ շիտակ ճամբան ծռես. ուստի Ըստուծոյ սրատիժը վրայ ըլլայ, որ կուրնաս լոյս չտեսնես՝ ինչուան որ խելքդ գլուխդ դայ. »: Այլ ըսածին պէս եղաւ շուտ մը կուրցաւ. Սերգի իշխանն ալ աս հրաշքս որ տեսաւ, աւելի հաստատուեցաւ իր հաւատքին վրայ:

Ատքը Պօղոս Բառնաբասի հետ Ախպրոսէ ելաւ Ընտիոք Ախսիգեայ ըսուած քաղաքը եկաւ, ու հոն Հրէից սինակոկան մտաւ քարոզելու: Արքոր ասոնք իրեն քարոզութիւնը չընդունեցան և մանաւանդ անտեղի կուսպաշտներն ալ ոտք հանեցին որ քաղաքէն հալածեն դուրս ընեն, առաքեալները անկէջ ելան Իկոնիոն եկան. և հոն ալ Հրէից ձեռքովը հալածուելով՝ նորէն փախան Ի իւստրա գացին: Ըստեղս Պօղոս՝ մէկ մօրէ ծնած կաղ մարդու մը հանդրակցաւ, որ սիրով մօտիկ կ'ընէր իր քարոզութիւնը. Պօղոս ալ ան կուսպաշտ ժողովրդոց առջևը աս մարդուս կանչեց՝ ըսաւ. «Քեզի կ'ըսեմ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անունովը, որ ելլէս ոտքի վրայ շիտակ կայնիս. » ու անանկ շուտ մը մարդը բժշկուեցաւ՝ ոտք ելաւ սկսաւ վազելով քալել: Ըր հրաշքս որ տեսան ան կուսպաշտները, կարծելով թէ Բառնաբասը ու Պօղոսը իրենց կուրքերն են՝ զարմանալով սկսան կանչել թէ «Ըստուածները մարդու կերպարանքով երկինքէն ինջեր եկեր են. » ու շուտ մը իրենց քուր

մը կամ հուսքերուն քահանան վաղեց հոն տեղը կոյներ բերաւ, որ զո՛հ մատուցանէ առաքելոց առջևը: Ըն առենը Պօղոս ու Ռաճնաբաս սրբ-դողերով՝ վրայի լաթերնին սրտուեցին, ու կան-չուրստելով անոնց կ'ըսէին թէ՛ «Մարդիկ, ատ ինչ է որ կ'ընէք. մենք ալ ձեզի պէս մահկա-նացու մարդ ենք, որ եկեր ձեզի կը քարոզենք որ՝ այդպիսի փուճ բաները թողուք, ու դաճնաք կենդանի Մատուածը ճանչնաք, որ աս բոլոր աշ-խարհքս ինքը ստեղծեր է»։ Բանի ըսելով ճո-րով դադրեցուցին ժողովուրդը՝ որ իրենց զո՛հ չը-մատուցանեն ։

Բայց ան մէկալ ըսած քաղաքներուն Հրեա-ները երբոր խնացան թէ՛ հոս առաքեալները քարոզելով ժողովուրդ կը շահին կոր, ելան ե-կան, ու այնչափ ըրին զրդեցին ժողովուրդը, որ քարկոծելով չարչարելով անանկ քաղքէն դուրս ըրին Պօղոս առաքեալը: Ըն ալ նորէն Ռա-նաբասի հետ անկէց ելաւ ուրիշ շատ Զոնաս-տանի քաղաքները ստորտելով քարոզութիւն կ'ը-նէր, և ամէն տեղ շատ մարդիկ դարձուց քրիս-տոնեայ ըրաւ ։

Ըս առեններս հաւատացելոց մէջը մէկ կռիւ մը վէճ մը ինկաւ, որ Հրեաներէն դարձածնե-րը՝ կռապաշտներէն դարձածներուն կ'ըսէին թէ՛ «Եւզուան որ դուք ալ մովսիսական օրինաց պէս չթլխատուիք նե՛՛ չէք փրկուիր»։ ուստի Պօղոսը ու Ռաճնաբասը Երուսաղէմ խրկեցին, որ մէ-կալ առաքելոց հետ աս բանիս վրայ մամտան՝ խօսքը կտրեն ։ Ընանկ երբոր առաքելոց ժողովն եղաւ, ուրիշ բաներու հետ աս ալ սահմանուեցաւ որ՝ կռապաշտներէն դարձածները չթլխատուին . ու ետքը նորէն Պօղոս Ընտիրք դարձաւ ։

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Պօղոս ասարհիոյն քարոզորեան պատճառով
քաջած նեղութիւնները :

(Գ. որժ . ԺԶ . ԺԷ . ԺԸ . ԺԹ .)

Ընկէ ետքը Պօղոս Շ իզայի հետ նորէն քա-
ղաքէ քաղաք քարոզելով, և շատ մարդիկ դար-
ձընելով՝ Ըստուած յայտնեց իրեն որ Յունաս-
տան Սակեդոնիայի կողմերը երթայ քարոզէ :
Հոս պատահեցաւ որ մէկ դիւահար աղախին մը՝
քանի անգամ որ ճամբան Պօղոսը իր աշակերտ-
ներուն հետ մէյտեղ կը տեսնէր, ասոնց ետեւէն
կը կանչէր թէ « Ըս մարդիկս Ըստուծոյ ծառա-
ներն են, որ ձեզի փրկութեան ճամբան կը քա-
րոզեն » : Սէկ որ մը Պօղոս դարձաւ սատա-
նային ըսաւ . « Յիսուսի Վրիստոսի անունովը
քեզի կը հրամայեմ որ ատկէց ելլես » . ու շուտ
մը դէր անկէց ելաւ՝ աղատեցաւ կնիկը : Ըսոր
վրայ շատ սրդողեցան անոր տիրուրտանքը . պատ-
ճառն որ՝ աս դիւահարը սատանային դրդամամբը
գաղտուկ բաներ իրենց կը զրուցէր, ու իրենք
ալ ան ճամբով ստակ կը վաստըկէին . ուստի
տեսնալով որ իրենց շահը կտրեցաւ՝ իրենք ալ
ըսին թէ « Ըս մարդիկս եկեր շփոթութիւն կը
ձգեն մեր քաղաքը, նոր հաւատք մեզի կը քա-
րոզեն » , ու անանկ չարաչար ծեծելով առա-
քեալները՝ ոտուրնին կռձեղը (այսինքն թօմար-
քը) զարկած բանտը դրին : Ըայց կէս գիշերուն
երբոր առաքեալները ելեր աղօթք կ'ընէին,
յանկարծակի բանտը շարժ մը եղաւ՝ բոլոր դրո-

ները բացուեցան, ու իրենց ալ վրայի կապերը արձրկուեցան: Բանտին վերակեցուն ալ ան ձայնէն արթնցաւ՝ ու տեսաւ որ բանտին դռները բաց են. կարծելով որ բանտարկեալները փախեր են, ինքն ալ յուսահատութենէն երբոր թուրը քաշեց որ ինքը զինքը սպաննէ՝ Պօղոս անդիլէն աս տեսնալուն պէս շուտ մը կանչեց թէ՛ « Ի՞նչ կ'ընես. մի վախնար՝ մենք ամէնքս հոս ենք »: Ինքն ալ ան ժամանակը ճրագով ներս գնաց քովերնին, ու երբոր տեսաւ զիրենք, և խնայաւ ան եղած հրաշքը՝ ահով դողով առաքելոց ոտքը ինկաւ. անանկ ետքը առաւ զանոնք մեծարանքով իր տունը տարաւ, վրանին լուաց սրբեց, և ինքն ալ բոլոր իր տնով տեղովը ան գիշերը մկրտուեցաւ քրիստոնեայ եղաւ: Ըստուանց կանուխ երբոր դատաւորները բանտը մարդ խրկեցին որ ալ ազատեն առաքեալները, Պօղոս ան ատենը իրենց պատասխան տուաւ թէ՛ « Սեղի պէս ազատ հռոմայեցի գրուած անմեղ մարդիկ՝ հրապարակաւ (այսինքն հալքին առջևը) ծեծելով բանտը դրին, ու հիմա գաղտուկ կը հանեն. ատանկ չըլլար, ըսաւ, հարա թող իրենք գան իրենց ձեռքովը հանեն »: Ընտնք ալ խմանալով որ ասոնք հռոմայեցի են եղեր՝ շատ վախցան, ու ետքը եկան թողութիւն խնդրելով ազաւեցին որ ելլեն անկէց երթան:

Ետքը Պօղոս ալ իր ընկերներովը անկէ ելաւ Սեսաղոնիկէ (այսինքն Սելանիկ) եկաւ, ու հոն ալ շատ մարդիկ շահեցաւ: Բայց աս տեղի հրէաներն ալ վրան նախանձելով, ու զինքը քաղաքէ քաղաք հալածելով այնչափ ըրին որ, վերջը ելաւ զնաց Պօղոս Լ. թէնք (այսինքն Լ. թինա) քաղաքը: Ըս Լ. թէնք քաղաքը որ փ-

լիստիաններուն տեղն էր, հետաքրքրութեամբ
 ասոնք Պօղոս առաքելոյն վրան եկան թափե-
 ցան, որ անոր բրած քարոզութիւնը իմանան թէ
 ինչ է: Պօղոս ալ թէպէտ իրենց ինչպէս պիտը
 էր նէ խօսեցաւ զբուցեց քրիստոնէական հա-
 ւատքին վրայ, բայց անոնցմէ քիչ մարդ շահե-
 ցաւ. որ աս հաւատացեալներէն մէկն ալ Դիո-
 նեսիոս արիստարղացին եղաւ: Եւ յետեւ Պօղոս Բ
 թեմբէն ելաւ Վորնթոս (այսինքն Վէօրտէս)
 քաղաքը գնաց. և հոն ալ տարի ու կէս կենա-
 լով շատ մարդ դարձուց քրիստոնէայ բրաւ,
 մանաւանդ կուպաշտոններէն քան թէ շրէանե-
 րէն. որ աս շրէաները թէպէտ իրեն դէմ ալ
 կեցան՝ ու Կաղիսոն ըսուած փոխանակ բռնչիսին
 մատնեցին, բայց ետքը խախը եղան անոր քան
 մը չկրցան ընել: Եւ յետ անկէջ ալ ելաւ Պօղոս,
 ու ասոցիս անդին ուրիշ շատ տեղ պտրտելով և
 անդադար քարոզելով նորէն Յունաստան դար-
 ձաւ՝ Կիփեսոս քաղաքը գնաց: Եւ հոն երկու
 տարիէն աւելի կեցաւ. ու քարոզութեամբ և
 հրաշքներ գործելով՝ եւելօք պտուղ բրաւ. ա-
 նանկ որ՝ Պօղոսի քրտինքը սրբելու թաշկինակը
 կամ վարչամակը երբոր կը տանէին ցաւագար-
 ներուն ու դիւահարներուն կը դպցնէին նէ՛ ա-
 նով կը բժշկուէին: Բայ Կիփեսոս քաղաքս մէկ
 Սկեա ըսուած հրէայ քահանայապետի մը եօթը
 տղաք կային, որ երդմնեցուցիչ կ'ըսուէին՝ մար-
 դէ դե հանելու ետեէ էին. ասոնք Պօղոս ա-
 ռաքելոյն նայելով որ Յիսուսի անունովը դե կը
 հանէ, կոր՝ իրենք ալ յանդգնեցան ուզեցին որ
 անանկ ընեն: Աւտի մէկ հեղ մը երբոր գիւա-
 հարի մը ըսին թէ՛ «Վեզ կ'երդուընցնենք Յի-
 սուսի անունովը՝ որ Պօղոսը կը քարոզէ», շատ

մը ան դիւահարը ասանկ պատասխան տալով թէ
 «Յիսուսը գիտեմ ու Պօղոսն ալ կը ճաննամ,
 բայց դուք ո՞վ էք», ըսելով կատղած ասոնց վրան
 վազեց, ու անոնց երկուքը բռնեց անանկ չար-
 չարեց որ՝ ճորով սղորմելիները մերկ ու վիրա-
 ւորուած անէն դուրս դուխնին փրցուցին ձեռքէն
 փախան ազատեցան : Ետը վրայ բոլոր ժողո-
 վուրդը ահաւեցան, ու երկիւղածութեամբ կ'եր-
 թային մեղքերնին կը խոտաուլանէին՝ և կախար-
 դական գրուածքնին կրակը կը ձգէին կ'երէին .
 և այսպիսի բաներով Քրիստոսի հաւատքը ան-
 քաղբին մէջը եւելօր տարածուեցաւ : Բայց
 մէկ Վեմեարիոս ըսուած արծաթագործ մը որ
 կուսքեր կը շինէր, երբոր տեսաւ որ ասանկ քրի-
 տոնէութիւն մոնաղով ան կողմերը՝ իր շահը կը
 դադրի կոր, բոլոր իր արուեստին մարդիկը (այս-
 ինքն էսնաֆը) դրդեց Պօղոսի դէմ սաք հանեց,
 այնչափ ըրաւ որ՝ Պօղոս ալ թողուց Եփեսոսէ
 ելաւ . և նորէն ան առջի քարոզած տեղուանքը
 պտրտելով, ու աշակերտած հաւատացեալները
 իրենց հաւատքին վրայ հաստատելով՝ ետքը նա-
 ւով ճամբայ ելաւ որ Երուսաղէմ դառնայ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Պօղոս Երուսաղէմ կը բռնուի, ու անկեց Հոմ կ'երբայ
 որ իր պատասխանը նոն տեսնուի :

Սմ Քրիստոսի 60 : (Գործ . ԻԱ . ԻԲ . ԻԳ . ԻԴ . ԻԵ . ԻԶ .)

Պօղոս առաքեալը երբոր Վեարիա հասաւ,
 որ անկեց ալ Երուսաղէմ պիտոր երթար, հոն
 տեղի Ղազարոս ըսուած մէկ աշակերտ մը՝ հո-

4. Եւ յի վրայ մարգարէացաւ Պօղոսի վրան, թէ
 Լըրուսաղէմ շրէաները զինքը կապած կռա-
 պաշտներուն ձեռքը պիտի մատնեն: Բայ որ լե-
 ցին ան տեղի հաւատացեալքը, լայով սկսան ի-
 րեն աղաչել որ Լըրուսաղէմ չերթայ. Պօղոս
 ալ անոնց պատասխան տուաւ թէ՛ « Լս Յիսու-
 սի Վրիստոսի համար պատրաստ եմ չի՛ թէ
 միայն բռնուելու կապուելու, հասա Լըրուսա-
 ղէմին մէջը մեռնելու ալ: »: Ուստի անանկ եր-
 բոր Լըրուսաղէմ գնաց հասաւ, շրէաները որ
 միշտ իր վրայ կը նախանձելին ու կը մեմնային,
 մէկ որ մը տաճարին մէջ Պօղոսի վրան թափե-
 ցան՝ իբր թէ հեթանոս մարդ հեար առեր օրի-
 նաց դէմ տաճարը մտցուցեր է. և աս պատճա-
 րիս համար կանչուըռտելով աղմուկով բոլոր քա-
 ղաքը վրան ժողոված՝ ծեծելով առաքեալը հոն
 կը սպաննէին, թէ որ շոտմայեցւոց դատաւորին
 մարդը չգար բռնութեամբ անոնց ձեռքէն առ-
 ներ: Ետքը երբոր Պօղոսի ոտխներովը (այս-
 ինքն տաւաճիներովը) դատաւորին դիմացը որ
 ելան, Պօղոս ամենուն առջևը իր նիլ ըլլալը՝ և
 բոլոր գլխէն անցածները մէկիկ մէկիկ կարգով
 պատմեց, թէ ինչպէս ինքը հրէայ ըլլալով՝ Բս-
 տուած հրաշքով իրեն դարձ տուաւ, ու խրկեց
 զինքը որ երթայ աշխարհքիս քարոզէ մեսիային
 ճշմարիտ հաւատքը: Իր թշնամի շրէաներս աս
 բաներս լսելով՝ աւելի կատղեցան, ու մէկ բե-
 րան սկսան դատաւորին դէմ կանչել թէ՛ « Բայ-
 պիտի մարդը արժանի չի՛ որ աշխարհքիս վրայ
 ապրի, հասա՛ վերցուը աշխարհքէս: »: Դա-
 տաւորն ալ կռապաշտ ըլլալով՝ և շրէից օրինաց
 բաներէն չհասկընալով՝ Պօղոսի դատաստանը
 շրէից քահանայապետին ձգեց, որ անոր առ-

Ջեր տեսնուի : Պօղոս ալ աս դատաստանին մէջը երբոր տեսաւ որ անոնց կէսը Սաղուկեցի ազանդէն էին ու կէսը Փարիսեցի, ինքն ալ կանչեց թէ « Սիւնաք որ ես փարիսեցիի որդի փարիսեցի եմ, որ հանդերձեալ կեանք ու յարութիւն քարոզելուս համար՝ ես բռնուած հիմա ձեր առջևը կը դատուիմ կոր » : Բսանկ ըսելով թէպէտ իր կողմը շահեցաւ բոլոր Փարիսեցիքը, որ ըսին թէ « Բսանկ է նէ աս մարդս մեղք չունի », բայց Սաղուկեցիքը աւելի կատաղեցուց, այնչափ որ՝ ալ մէջերնին երդումով խօսք դրին որ չուտեն չամեն ինչուան որ Պօղոսը մեռցընեն : Բս բանս որ դատաւորին ահանջը հասաւ՝ շուտ մը անոնց մէջէն Պօղոսը առաւ, ու զգուշութեամբ Աեսարիա քաղաքը Փելլիքս բուռած մեծ դատաւորին խրկեց, որ չքէպքը հոն երթան՝ ու անոր առջևը Պօղոսի դատաստանը տեսնուի : Երբոր եկան՝ ու երկու դիէն ալ խօսուեցաւ, ան ատենը Փելլիքսն ալ իմացաւ որ Պօղոս անմեղ է . բայց այսու ամենայնիւ չքէից երեսպաշտութիւն ընելու համար՝ չազատեց առաքեալը, հապա բանտը դրաւ պահեց, ինչուան որ ինքը փոխուեցաւ՝ իր ետեւէն Փեստոս անուով ուրիշ դատաւոր մը տեղը եկաւ :

Բս Փեստոսը երբոր Երուսաղէմ գնաց, Պօղոսի թշնամիները չարութեամբ գացին իրեն ազալեցին որ Պօղոսը Աեսարիայէ վերջընէ Երուսաղէմ բերէ . ինչու որ՝ մէջերնին խօսք դրեր էին որ բերեւնին ճամբան բռնեն Պօղոսը սպաննեն : Բայց Փեստոս ասանկ չուզեց, հապա անոնց հրամայեց որ իրենք ելլեն Աեսարիա գան, ու հոն նորէն իր առջևը Պօղոսի դատաստանը տեսնուի : Բս դատաստանիս մէջը երբոր

տեսաւ Պօղոս որ Վեստոսն ալ Հրէից երեսպաշտու թիւն ընելով զինքը չազատեր՝ ու բանը կերկրնցընէ կոր, ինքն ալ Հառմայի կայսերը դատաստանին բողոքեց. ուստի բանը անանկ կրտուեցաւ որ Պօղոսը Հառմ խրկեն: Ընկէ ետքը Հերովդեսի որդին Մարիապաս ըսուած Հրէաստանի թագաւորը՝ իր կնիկովը ու իշխաններովը երբոր կեսարիա Վեստոսի քով եկաւ բարեւելու, Վեստոս ուզեց որ Պօղոսը ասոնց առջնն ալ հանէ. ան ատենը Պօղոս իր անմեղութիւնը ցուցընելով՝ այնպիսի շնորհալի քարոզութիւն մը ըրաւ Վերիստոսի վրայ, որ Մարիապաս ըսաւ թէ՝ «Վիչ մնաց որ զիս ալ քրիստոնեայ ընես»: Ետքը ասոնք սկսան մէջերնին ըսել. «Թէ որ կայսերը բողոքած չըլլար նէ՝ պէտք էր որ աս մարդս ազատուեր»:

Երբոր Պօղոս առաքեալը աս պատճառով Հառմայեցոց կայսեր առջևը խրկելու որ եղան, բռնեցին մէկ Յուլիոս ըսուած հարիւրապետի մը ձեռքը տուին, որ ինքը առնէ նաւով Իտալիա տանի առաքեալը: Ետտ երկայն քշեց աս Պօղոսի ճամբորդութիւնը՝ խառնակ ու ներհակ հալերուն պատճառով: Ըն նաւարկութեանս ատենը շատ անգամ աստիկ փորձանքաւոր նաւակոծութեան հանգըպելով՝ ուրիշ ճամբորդները ՚ի կենաց որ կը յուսահատէին, Պօղոս վրանին կեցած միշտ իրենց սիրտ կու տար կը յորդորէր, որ չվախնան կերակուրնին ուտեն որ ուժ առնեն. և մէկ հեղ մը աս ալ պատմեց որ «Հրէշտակ Մատուծոյ ինծի երեցաւ, ըսաւ թէ՝ «Պօղոս, մի վախնար՝ դուն կայսերը գիմնոցն ալ պիտոր ելլես. անոր համար բոլոր նաւիդ մէջը եղած մարդոց կեանքն ալ Մատուած քեզի շնոր-

Տեց, որ քու պատճառովդ իրենք ալ զենի չը-
 դան : Պինտ ետքը նաւը սաստիկ ալեկոծու-
 թեամբ մէկ ցամաքի մը զարնելով երբոր սկսաւ
 քայքայիլ, ան ատենը պահապան զինուորները
 մէջերնին խորհուրդ ըրին՝ որ իրենց հետի բը-
 նած կապածները սպաննեն, որ չփախչին աղա-
 տին : Բայց հարիւրապետը ուզելով որ Պօղոս
 առաքելալը խալըսի՝ աս բանս թող չտուաւ,
 հրամայեց որ ով որ կրնայ նե՛ թող լողալով ցա-
 մաք ելլէ : և այնպէս ամէնքը աղատեցան ցա-
 մաքն որ ելան, տեսան որ ան՝ Մեղիախնէ, ը-
 սուած կղզին է եղեր :

Ըս կղզիս բնակիչքը թէպէտ լեռնցի կոսլիտ
 մարդիկ էին, բայց սիրով առին ընդունեցան աս
 նաւաբեկու թէնէն խալըսած ճամբորդները, որ
 Պօղոս ալ հետերնին էր, և անձրևին ու ցրտուն
 առին կրակ ըրին անոնց, որ վրանին զուխնին
 չորցրնեն՝ տաքնան հանդստանան : Ըն ատենը
 Պօղոս ալ կրակին վրայ խաիւ (այսինքն չալըչըր-
 փը) դնելնին՝ մէջէն օձ մը ելաւ, Պօղոսի ձեռ-
 քէն բռնած խածած կախուեցաւ : Ըս որ տե-
 սան մարդիկը, սկսան ըսել թէ՛ « Ընանկ է նէ
 աս մէկ չարագործ մըն է եղեր, որ Ըսուած
 զինքը ծովու ու ցամաքի վրայ կ'ուզէ պատժել
 մեռցրնել » : Բայց ետքը Պօղոս շուտ մը ձեռքը
 կրակին վրայ թոթովելուն պէս՝ օձը փրթաւ կրա-
 կին մէջը ինչաւ, ու իրեն ամենևն զէն մը չե-
 դաւ : անոր վրայ մարդիկն ալ խօսքերնին փոխե-
 ցին, ու նորէն զարմանալով կ'ըսէին թէ՛ « Ըս
 մեր աստուածներէն մէկը պիտոր ըլլայ » : Ըս
 Մեղիախնէ կղզին Պօղոս իրեք ամիս կեցաւ, և
 շատ հիւանդներ բժշկեւէն ետե՛ նորէն նաւ
 մտաւ : ու երբոր ալ հոտ գնաց հասաւ, ան

տեղը եղած Հրէաներուն հասկըցուց իր հոտ
երթալուն պատճառը : Այլ ան տեղը երկու տա-
րիի չափ իր դատաստանին բանը որ երկընցաւ ,
մէկ առանձին տուն մը բռնած՝ հոն կը նստէր ,
և քովը եկողներուն համարձակ կը քարոզէր ու
կը սորվըցընէր Վրիստոսի հաւատքը :

Ինչուան հոս կը պատմէ Վործք Առաքելոց
գիրքը . որով կը լմննայ նոր կտակարանին պատ-
մութիւնը :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Յանդուած պատմութեան ստաքելոց Վրիստոսի :

Վործք Առաքելոց գրքին մէջը եղած Վրիս-
տոսի Տեառն մերոյ առաքելոց և աշակերտաց
պատմութիւնները կարգով համառօտ պատմե-
լէն ետև , պատշաճ կ'երևայ որ սուրբ գրքին ու-
րիշ տեղերէն առած՝ քիչ մըն ալ տեղեկութիւն
տանք անոնց գրուածքներուն վրայ : Վրիստոս
Տէրն մեր՝ ինչպէս աւետարանը կ'ըսէ , տասուեր-
կու առաքեալ և եօթանասունուերկու աշակերտ
իրեն ընտրեց առաւ . և իր նոր օրինաց հաւատ-
քը պինտ առաջ ասոնց սորվըցընելով , (որ ասով
իրենք՝ նոր եկեղեցւոյ առջի հիմունքը եղան)
հրամայեց որ երթան չորս դին բոլոր աշխարհքս
քարոզեն իր սուրբ հաւատքը : Ատքը տասուեր-
կու առաքելոց մէջէն Հուդան որ պակսեցաւ ,
աստուածային կամօքը անոր տեղը ուրիշ երկու
հոգի ընտրուեցան մտան առաքելոց կարգը , մէ-
կը՝ Սատաթիա , ու մէկալը՝ Պօղոս , ինչպէս որ
վերը պատմեր ենք :

Ի՞նչ բոլոր առաքելոց և աշակերտաց մէջէն

միայն ութը հոգին Մատուած ընտրեց, որ զը-
 բուածքով ալ իրեն քրիստոնէական քարոզու-
 թիւնը թողուն ետքէն եկող հաւատացելոցը .
 անանկ որ՝ ասոնց գործքը աստուածաշունչի կամ
 սուրբ գրոց կարգը անցաւ : Պինտ առաջ՝ ասոնց-
 մէ չորսը, այսինքն Սատթէոս առաքեալը, Սար-
 կոս աշակերտը, Ղուկաս աշակերտը ու Յով-
 հաննէս առաքեալը՝ Յիսուսի Վրիստոսի բուն
 համառօտ վարքը և վարդապետութիւնները
 գրեցին, ու անոր համար իրենց գրուածքն ալ
 Մտարան կոչուեցաւ, որ ըսել է՝ Ուրախական
 բանի (կամ միւճտէի) գիրք, որ մարդուն կը
 ծանուցանէ կամ սուեախս կու տայ իր Մտուծոյ
 հետ հաշտուիլը և փրկութիւնը : Արհուբը աս
 չորս աւետարանիչներէս ասկէ՝ ի զատ ուրիշ բան
 ալ գրեցին : Սէկը Ղուկաս՝ Վործք Մարե-
 լոցը գրեց, որ Վրիստոսի համբարձմանէն ետե-
 նոր եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը կը պատմէ,
 ինչպէս աս վերջի մասիս մէջը տեսանք : Սէկա-
 լը Յովհաննէս՝ իրեք թուղթ ալ գրեց, որ առ-
 ջինին մէջը Վրիստոսի Րանն Մտուած ըլլալը
 հերեախոտաց դէմ հաստատելէն ետե՝ բոլորը
 սիրոյ կամ եղբայրսիրութեան վրայ կը քարոզէ :
 Ասե ասոնցմէ ի զատ Յայտնութեան գիրքն ալ
 գրեց, որ ինչպէս կ'ըսեն՝ աւետարանը գրելէն
 առաջ երբոր աս սուրբ առաքեալը քրիստոնէու-
 թեան համար Պատմոս ըսուած Յունաստանի
 կղզին պատրուեցաւ, Մտուած անտեղը յայտ-
 նեց իրեն ան տեսիլքները, որ բոլորը առակով
 մարգարեութիւն են՝ ինչ որ Վրիստոսի առջի
 գալտենէն ինչուան վերջի գալուստն որ պիտոր
 կատարուի եկեղեցւոյ մէջը : Ոմանք աս տեսիլք-
 ներս ալ սուրբ գրոց պատմութեան ետեէն զը-

բաժ՝ կարգով կը պատմեն . բայց մենք տեսնե-
լով որ՝ ըստ ինքեան անոնք եղած պատմութիւն
չեն . մէյ մըն ալ որ՝ անանկ առանց մեկնու-
թեան զնելը՝ անպտուղ բան մը մեզի երևնա-
լով, իսկ մեկնութեամբը՝ եւելօք կ'երկընցընէր
զրուածքնիս . և ան ալ շատ անգամ անորօչ պի-
տոր ըլլար, (որովհետեւ խիստ խրթին ու անանկ
խորհրդաւոր են ան տեսիլքները, որ ինչուան
աս օրս վարդապետները կը տառապին՝ և անոնց
բուն մեկնութիւնը չեն կրնար տալ) . անոր հա-
մար մենք ալ զանց ըրինք՝ աս համառօտու-
թեանս մէջը չգրինք :

Մեատարանիչներէն 'ի զատ՝ Պետրոս առա-
քեայն ալ երկու թուղթ գրեց Հրէից ազգին
հաւատացելոցը, որ բոլոր աշխարհք ուրիշ կա-
պաշտ ազգերուն մէջը ցրուած էին : Աւ անոնց
մէջը կը ցուցնէ թէ՛ Քրիստոսի տնօրէնու-
թիւնները մարդարէք առաջուց քարոզեցին, ու
հոգեշարժ յորդորանքներով մեծ ու պզտիկ կը
խրատէ՝ որ ամէնքը իրենց պարտքը ընեն, և հե-
րետիկոսներէն զգուշանան, անոնց խօսքին մտիկ
չընեն՝ չխաբուին : Մտոր պէս նաև Յակոբոս ա-
ռաքեալը, որ Աղբայր Տեառն կոչուեցաւ, ինքն
ալ թուղթ մը գրեց Հրէայ հաւատացելոց՝
կերպ կերպ երկայն զարմանալի խրատներով :
Ինչպէս իր եղբայրը Յուդա առաքեալն ալ, որ
Թադէոս ալ կ'ըսուի, ան ալ մէկ համառօտ
թուղթ մը գրեց անտոր հաւատացելոցը, որ ա-
չուրնին բանան չխաբուին հերետիկոսաց ըրած
ծուռ վարդապետութենէն : Այ ըսած չորս ա-
ռաքելոց եօթը թուղթը՝ Սեբաստիանոս ըսուե-
ցան, որ կը նշանակէ ընդհանրական . որովհետեւ
ինչպէս կ'ըսեն, աշխարհքիս չորս զին ուր որ

Հրէից ազգէն հաւատացեալ կար՝ անոնց զը-
րուեցաւ :

Իսկ Պօղոս երեքտասան առաքեալը , որ աշ-
խարհքէ աշխարհք պտըտելով՝ զրեթէ իր բոլոր
քարոզութիւնը կուսպաշտից ըրաւ , որ ան սպառ-
ճառով ալ Սարդապետ Հեթանոսաց կուուե-
ցաւ , տասնըջորս թուղթ զրեց՝ ասդիս անդին
մասնաւոր հաւատացելոց եկեղեցիներուն , որ
մեծ մասը ինքը իր քրտինքովը հինը զրեք հաս-
տատեր էր : Աւստի իր թղթին մէկը՝ խրկեց
Հռոմայեցւոց , երբոր ինքը Կորնթոս էր . և աս
թուղթս՝ ինչպէս կ'երեւայ , ինքը տուն կու տար՝
ու Տերտիոս ըսուած իրեն մէկ աշակերտը կը
զրէր : Եւ աս թղթովս առաքեալը՝ կը ջանայ
որ խաղաղեցնէ դարձած Հրէից և հաւատա-
ցեալ Հեթանոսաց կուիւր , որ մէյմէկու վրայ կը
պարծենային՝ ու մէկզմէկ վար կը զարնէին :
Երկու խրատական թուղթ ալ զրեց Կորնթա-
ցւոց , որ ատենով Յունաստանի մեծ քաղաքնե-
րէն մէկն էր . ասոնց առջինը Եփեսոսէ կամ
Փիլիպպէէ հոն խրկեց , ու մէկալը՝ Սահեղո-
նիայէն : Երրորդ թուղթը զրեց Կաղատա-
ցւոց , որ Փոքր Բսիային (այսինքն Բնատօլուի)
մէջը կ'իյնայ . ու աս թուղթը Հռոմայէ , կամ
ըստ այլոց՝ Եփեսոսէն հոն խրկեց : Հինգերորդ
թուղթն ալ Հռոմայի բանտէն զրեց՝ Եփեսա-
ցւոց , որ հին ատենը Եփեսոս՝ ծովեզերեայ մայ-
քաքաղաք էր Փոքր Բսիայի , ու Տիւբիկոս աշա-
կերտին հետ խրկեց իրենց : Սեցերորդ թուղթը
Փիլիպպեցւոց զրեց , որ Սահեղոնիայի (կամ
Սուամիլի) կողմը մէկ ծովեզերեայ քաղաք մըն
էր , և ինչպէս կ'ըսեն՝ զաս ալ Հռոմայի բանտէն
խրկեց Եպափրոդիտէս ըսուած մէկու մը ձեռ-

քովը : Այս թներորդը՝ Արղոսացւոց գրած թուղ-
 թըն է՝ Հռոմայէ խրկած , որ հին ատենը աս ալ
 Փոքր Միտայի քաղաքներէն մէկն էր : Աւթե-
 րորդը և իններորդը՝ (Թեսաղոնիկեցւոց գրած եր-
 կու թղթերն են . առջինը Աւթէնք քաղաքէն խրը-
 կած է կ'ըսեն , ու երկրորդը՝ Աորնթոսէ կամ
 Հռոմայէ . աս (Թեսաղոնիկէ ծովեզերեայ քա-
 ղաքը՝ հին ատենը մայրաքաղաք էր Սակեդոնիա
 գաւառին , որ հիմա Սելանիկ կ'ըսուի : Տասնե-
 րորդը՝ Աքրայեցւոց թուղթն է , որ ինչպէս կ'ը-
 սեն Պօղոս Խտալիայէ գրեց՝ ու գէպ 'ի Հրէաւ
 տան խրկեց հաւատացեալ Հրէից , սիրտ տալով
 իրենց՝ որ հեթանոսաց ու անհաւատ Հրէից
 ձեռքէն քաշածներուն սիրով համբերեն : Պօ-
 ղոս առաքեալը որ մէկալ ամէն թղթերուն ծայ-
 րը իր անունը կը դնէ , միայն աս թղթիս վրայ
 չդնէր : Ասոր պատճառը կարելի է թէ ան է
 կ'ըսեն , որ գիտնալով թէ ինքը նախանձու-
 թեամբ ատելի ըլլալով իր ազգին մէջը , անով
 ըսածն ալ մէկալ լողներուն ընդունելի չըլլայ .
 կամ թէ՛ ինքը զինքը աւելի վարդապետ հեթա-
 նոսաց կ'ըսէր՝ քան թէ առաքեալ Հրէից . անոր
 համար մէկալ թղթերուն վրայ որ հեթանոսաց
 դարձածներուն խրկուեցաւ՝ յայանի գրեց իր
 անունը , ու ասոր վրայ զանց ըրաւ : Տասնըմէկ
 և տասուերկուերորդը՝ Տիմոթէոսի գրած երկու
 թուղթն են , որ իրեն սիրելի աշակերտն էր , ու
 ինքը զանիկայ Ափեսոսի եպիսկոպոս ձեռնադրեր
 էր . ասոնց մէկը Սակեդոնիայէն գրեց , ու մէ-
 կալը Հռոմայէն : Տասուերեքերորդ թուղթը
 Տիտոսի գրեց որ , աս ալ իրեն աշակերտն էր , ու
 ինքը եպիսկոպոս ըրեր էր Արեւտացւոց (այսինքն
 Արիտի) . և աս թուղթս իրեն խրկեց՝ Արիտա-

լիս ըսուած Մակեդոնացւոց քաղքէն : Տասնը-
 չորսերորդ վերջին թուղթը՝ զրեց իր Փիլիսոն
 ըսուած բարեկամին , անոր Մեկսիմոս ծառային
 սրատճառովը , որ յանցանք ըրած տիրոջը քովէն
 փախեր Հռոմ եկեր էր . Պօղոս ալ զինքը խրա-
 տով ճամբայ բերելով՝ զանիկայ աս թղթովս նո-
 րէն իր տիրոջը կը յանձնէ : Ըս Պօղոս առաքե-
 լոյն զրած տասնըչորս թղթերուն մէջը՝ բոլոր
 քրիստոնէական հաւատոյ ուսումը , ու բարոյա-
 կան և հոգևոր վարդապետութիւնը այնպիսի
 զօրաւոր կերպով զրուած է , որ կարդացողին
 միտքը կը կապուի . մանաւանդ անոնց մէջը յայտ-
 նի տեսնելով Ըստուծոյ մեծագործութիւնը ,
 որ իրեն հաւատքը հալածողը և իր անունը հայ-
 հոյողը՝ անանկ քարոզութիւն ընէ աւետարանին
 վրայ , որ չէ թէ միայն կենդանութեան ատենը ,
 հապա ինչուան այսօրս իր զրած թղթերովը
 սրտպանձեցրնէ հաւատոյ թշնամիքը :





Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ

Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.	Ստեղծուելը աշխարհքիս՝ և առաջին մարդուն	7
Բ.	Նախահարց մեղքը ու պատիժը	9
Գ.	Կայենի և Աբելի պատմութիւնը	11
Դ.	Աստուած մարդոց շարութիւնը ջնջելով կը պատժէ	13
Ե.	Բարեւոյնի աշտարակը	16
Զ.	Հայր Աբրահամու կոչուելը, ու իրեն ուրիշ գործքերը	18
Է.	Աբրահամու հետ Աստուած ուխտ ու դաշինք կ'ընէ, և իրեն իսկայեւր զուակ կու տայ	20
Ը.	Աբրահամու և Ղովոյայ հիւրասիրութիւնը, ու Սողոմոնոսոց պատիժը	22
Թ.	Իսահակը ծնանելէն ետև՝ Աբրահամ իսկայեւր քովէն կը շտափէ	25
Ժ.	Աստուած կը հրամայէ Աբրահամու՝ որ իսահակը իրեն ողջակեղ ընէ	26
ԺԱ.	Աբրահամ իսահակը կը կարգէ, և այնպէս կը վախճանի	28
ԺԲ.	Իսահակոյ որդիքը՝ Եսաւ ու Յակոբ	30
ԺԳ.	Յակոբ հօրը սրհնութիւնը եղբորը մեռնելէ կը յափշտակէ, ինքը կ'առնէ	32
ԺԴ.	Յակոբ Միջագետք երթալովնի տեսիլք կը տեսնէ, ու հոն կ'երթայ կը կարգուի տուն աեղ կ'ըլլայ	35

ԺԵ. Յակօբ կ'ելլէ իր երկիրը դառնալու 38

ԺԶ. Յակօբայ ճամբորդութեան մէջ ուրիշ հանգի-
պած բաները 39

ԺԷ. Յակօբայ մեկաւ տղոցը նախանձը և դաւաճանու-
թիւնը Յովսէփ գեղեցկին վրայ 43

ԺԸ. Յովսէփ Եգիպտոսի մէջ կը ծախուի, ու հոն
զրպարտութեամբ բանտ կը մանկ 46

ԺԹ. Յովսէփ փարաւոնի երազները մեկնելով բան-
տէն կը խալցոսի, և իշխանութեան կը հասնի 50

Ի. Յովսէփայ եղբայրները սովին պատճառովը ի-
րեն որ կը դիմեն, Յովսէփ զանոնք կը փորձէ 53

ԻԱ. Յովսէփ իր եղբայրները քիչ մըն ալ փորձելէն
ետև՝ զինքը անոնց կը յայանէ 57

ԻԲ. Յակօբ բոլոր ընտանեկովը կ'ելլէ Եգիպտացւոց
երկիրը կ'երթայ. և հոն իր զաւկրները օրհ-
նելով բարի ձերութեամբ կը վախճանի 61

ԻԳ. Յովսէփ իր հայրը կը լծաղէ, և եղբայրներուն
թողութիւն տալէն ետև՝ ինքն ալ կը վախճա-
նի 64

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Իօրայելացւոց հալածումը և նեղութիւնը Եգիպ-
տացւոց ձեռքէն 67

Բ. Փարաւոնի ազգիկը՝ Մովսէսը դետէն կը խալցոսի՝
իրեն որդեգիր կ'առնէ 69

Գ. Մովսէս աղջտախրութեան պատճառով Մադիա-
նացւոց երկիրը կը փախչի, և մօրենւոյն հրաշ-
քը կը տեսնէ 70

Դ. Մովսէս Եգիպտոս կը դառնայ, որ Իօրայելա-
ցիկը Եգիպտացւոց ձեռքէն խալցոսի 74

Ե. Եգիպտացւոց տասը հարուածները կամ պա-
տիժները 77

Զ. Տաներօրդ Եգիպտացւոց հարուածը, ու Իս-
րայելացւոց Եգիպտոսէ ելլելը 83

Է. Իօրայելացիք Վարմիր ծովէն կ'անցնին, ու Փա-
րաւոն իր շրջովը հոն կը խղզուի 86

Ա. Անաստաս Առաքառ խորայեւացւոց ջրին պահասութիւնը կը հոգայ, և ժամանան իրենց կերակուր կու տայ 88

Թ. Անաղեկացիքը կը ջարդուին խորայեւացիներէն, Յովթոր կու դայ Մովսէսը բարեկէտ. 91

Ժ. Առաքառ Սինա լեռը տասնհարանեաց պատուիրանքները կու տայ խորայեւացւոց 93

ԺԱ. Խորայեւացիք զԱռաքառ կը թողուն՝ հօրթ կը պաշտեն 96

ԺԲ. Խորանին՝ ու տասպանակին շինելը, և ուրիշ տառուած պաշտութեան ծէսերը 99

ԺԳ. Նարազ ու Աբիուդ, և ուրիշ յանցաւորները կը պատժուին 102

ԺԴ. Խորայեւացիք Առաքառոյ գէմ՝ կը պահանջան, ու կը պատժուին 103

ԺԵ. Ահարոն ու Մարիամ կը պատժուին 105

ԺԶ. Մովսէս լռուսներ կը խրկէ աւեակաց երկիրը, և խորայեւացիք նորէն կը պատժուին 107

ԺԷ. Կորիք, Դաթանը և Աբիրոնը կը պատժուին, ու Ահարոնին գաւաղանը կը ծաղկի 111

ԺԸ. Խորայեւացւոց ճամբորդութեան վերջն տարին հանգրգաճ բաները 115

ԺԹ. Բաղասամու պատմութիւնը 117

Ի. Մովսէս մարգարէն կը վախճանի, Յեսու որդի Նաւեան անոր տեղը կ'անցնի 122

ՅԵՆԵԼՈՒՆԸ. Յոր երանելոյն պատմութիւնը 125

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա. Յեսու կ'առաջնորդէ խորայեւացւոց, որ Յորգանան գետը կ'անցնին 131

Բ. Երկրով ու Գայի ըստառ քաղցրներուն առուի 134

Գ. Գարաւոնացւոց խորեքայութիւնը, և Քանա նայւոց հինգ թագաւորներուն ջարդուիլը 138

Դ. Յեսու բոլոր աւեակաց երկիրը տիրապետելով

զանկիայ խորայնացւոց կը բաժնէ, ու անանկ
կը վախճանի 141

Ե. Յետուայ ետև՝ գառաւորաց աստեղի խորայնա-
ցւոց որպիսութիւնը 145

Զ. Դերտրայի, Բարակայ, Սիսարայի և Յայելի
պատմութիւնը 149

Է. Գեղէնն զօրապետ կ'ընտրուի՝ խորայնացիքը
Մաշիամացւոց ձեռքէն կ'ազատէ 151

Ը. Արիստէլէքոյ բանակալութիւնը 157

Թ. Յեփթայի պատմութիւնը 161

Ժ. Սամփանի պատմութիւնը 164

ԺԱ. Մէքայի պատմութիւնը, և Բենիամինի ցեղին
Նարգուիլը 172

ԺԲ. Հուսթայ պատմութիւնը 175

ԺԳ. Աննայի աղօթքով Սամուէլը կը ծնանի՝ ու Աս-
տուծոյ կը նուիրուի 177

ԺԴ. Հեղի իր աղաքներովը կը պատժուի՝ քահանայու-
թեանէն կ'իյնայ, անոր ակօղը Սամուէլ կ'ըն-
տրուի 179

ԺԵ. Այլաղգիները տասպանակին պատճառով կը պատ-
ժուին՝ ու զան նորէն խորայնացւոց կը դար-
ձնեն 183

ՄԱՄՆ ՉՈՐՐՈՐԴ

Ա. Խորայնացիք իրենց թագաւոր կ'ուզեն զնել-
Աստուած ալ Սաւուղը առջի թագաւոր կ'ըն-
տրէ խորայնացւոց 187

Բ. Սաւուղ մեծ յաղթութիւն մը ընելէն ետև՝ նո-
րէն թագաւոր կ'օժուի 190

Գ. Սաւուղ նորէն այլաղգիները կը յաղթէ, ու
անհաղանդութեանը համար Աստուծոյ աչ-
քէն կ'իյնայ, Յոփթամի իր ըրած քաջու-
թեամբը մնանլէն կ'ազատի 192

Դ. Սաւուղ Ամաղեկացւոց խնայելով բոլորովն Աս-
տուծոյ աչքէն կ'ելայ 195

Է.	Դաւիթը Թադաւոր կ'օծուի	197
Զ.	Դաւիթ Գողթաթը կը սպաննէ, և անով բողոք այլազգիները կը յաղթուին	198
Է.	Սաւուզին նախանձութիւնը Դաւիթի վրայ	202
Ը.	Դաւիթ Սաւուզի ձեռքէն կը հալածուի՝ փա- խուտական կը ստանի	205
Չ.	Նարազի ու Արիգեայի պատմութիւնը, և Դաւ- թի ուրիշ գիպուածները	210
Ճ.	Սաւուզի մահը, ու Դաւիթի անոր վրայ ըրած բարի հասուցումը	214
ԺԱ.	Սաւուզի տունը կը մարի, ու Դաւիթի Թադաւո- րութիւնը կ'աջողի	217
ԺԲ.	Դաւիթ Ատուծոյ տապանակը կը վերջնէ Ե- րուսաղէմ կը ասնի	220
ԺԳ.	Դաւիթի ուրիշ յաղթութիւնները, ու իր մեծ մեղքը՝ և ապաշխարութիւնը	223
ԺԴ.	Արիստղամի ձեռքէն Դաւիթի քաշած նեղութիւն- ները՝ իրեն մեղաքը ստափ	229
ԺԵ.	Արիստղամ կը սպաննուի, ու Դաւիթ նորէն իր տեղը կը դառնայ	234
ԺԶ.	Իսրայելացիք մահաբաժանով կը ստափուին	238
ԺԷ.	Դաւիթ իր ետեւէն Սողոմոնը Թադաւոր կը դնէ՝ ու ինքը կը վախճանի	240
ԺԸ.	Սողոմոնի Թադաւորութիւնը	243
ԺԹ.	Սողոմոն տօճարը և իր սրալապը կը շինէ՝ Սա- րա Թադաւիին իրեն տես կու գայ	247
Ի.	Սողոմոնի մեղքը՝ ու իրեն մահը	251
ԻԱ.	Իսրայելացոց Թադաւորութիւնը երկուք կը բաժ- նուի	253
ԻԲ.	Յերոբոամի Իսրայելացոց Թադաւորին մեղքը, և իրեն չար յաջորդները	255
ԻԳ.	Եղիա մարգարէն Աքայարի շարութիւնը կը յան- գիմանէ՝ ու զինքը կը ստափէ	259
ԻԴ.	Աքայարի ուրիշ գործքերը, և իր չար ստա- կումը	263
ԻԵ.	Ոքոզայի ստափիւր, և Եղիա մարգարէին երկին- քը վերանայը	265

ԻԶ. Եղիսէ մարգարէին հրաշագործութիւնները . . . 249

ԻԷ. Յեու Աքայարի ցեղը կը ջնջէ՝ ինքը կը թագաւորէ, և անոր ետեւէն նստած Եսայելացաց թագաւորները 277

ԻԸ. Յուգայի ցեղին թագաւորները՝ Ռոտուամէ սկսած ինչուան Յովթամ 282

ԻԹ. Յուգայի ցեղին թագաւորները Ուրոզիայի սկսած ինչուան Աքազ 289

Լ. Եզեկիա թագաւորին պատմութիւնը, և իր ետեւէն նստած Յուգայի ցեղին թագաւորները՝ ինչուան վերջը 297

ՄԱՄՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա. Պատմութիւն Տորիթայ 309

Բ. Պատմութիւն Յուգիթայ 315

Գ. Պատմութիւն Եսթեբայ 322

Դ. Պատմութիւն Մարգարէից 330

Ե. Պատմութիւն Դանիէլի մարգարէին 337

Զ. Իրեք մանկանց պատմութիւնը 342

Է. Դանիէլ մարգարէին ուրիշ պատմութիւնները . 345

Ը. Երկոտասան մարգարէնները 355

Յովթան մարգարէին պատմութիւնը 356

ՄԱՄՆ ՎԵՅՆԵՐՈՐԴ

Ա. Հրէայք Բաբելացաց գերութենէն կը դառնան . 361

Բ. Երուսաղէմ նորէն շինուելէն ետե՛ հրէից ազգին հանդըպածները 365

Գ. Հեղիոգորտի պատիժը 368

Դ. Հրէից խաղաղութիւնը ներքե վրայ կ'ըլլայ Անտիոքոսի ատենը 370

Ե. Նահաաակութիւն Եղիազար Տերուսուոյն, և ետեւ թը եղբարց Մակարայեցաց՝ իրենց մօքը հետ . 374

Զ. Մատաթիա քահանային և իր որդւոցը բարեպաշտութիւնը, և անոնց քաջութիւնները 379

Է. Յուգա Մակարէին քաջութիւնները 382

Ը. Անտիոքոս Թաղաւորին սատակումը, և անոր ետեւն նստած Թաղաւորներուն պատերազմը Հրեից զեմ 386

Թ. Յուդա Մակարէին ետեւն՝ Յովնաթան անոր տեղը կ'անցնի 391

Ժ. Յովնաթան քահանայապետին ուրիշ պատմութիւնները 393

ԺԱ. Շմաւոն կը յաջորդէ Յովնաթանի տեղը 397

ԺԲ. Յաւելուած Հրեից պատմութեանը՝ մինչև Քրիստոսի ծնունդը 401

ՆՈՐ ԿՏԱ, ԿԱՐԱՆ

ՄԱՄԷ ԱՌԱՋԻՆ

Ա. Գարրիէլ Հրեշտակապետը աւետիս կու տայ Զաքարիայի, և Կուսին Մարիամու 409

Բ. Կոյսն Մարիամ աջբերուսի կ'երթայ, ու Եղիսարէթ Յովհաննէս Մկրտիչը կը ծնանի 412

Գ. Յիսուսի Քրիստոսի ծնունդը 414

Դ. Իրեք մտերը Յիսուսի երկրպագութեան կու գան, և ան պատճառովը Հերովդէս Բեթղէհէմի մանկուծիքը կը ջարդէ 416

Ե. Յիսուսի տաճարը ընծայուիլը, և տասուերկու տարուան տաճարին մէջը գանուիլը 418

Զ. Յիսուսի մկրտութիւնը, ու ստատանայէն փորձուիլը 421

Է. Կանաք Գալիլեացոց հարսնիքը, և անկէ ետեւ Քրիստոսի հանգրսզած բաները 424

Ը. Սամարացի կնիանը պատմութիւնը, ու Թաղաւորացին տղին բժշկութիւնը 427

Թ. Առաքելոց՝ հրաշքով ձուկ բռնելը, ծովն աղկածութիւնը դաղբիլը, և Գերգեաացոց զեւազարներուն բժշկութիւնը 429

- յ. Անգամադուծին բժշկութիւնը, Մատթէոս առա-
 քելոյն կոչումը, Յայրոսի աղջրկանը ու աե-
 առակս կնկանը բժշկութիւնը 432
- յԱ. Պրոսպափկէի անգամադուծին, ու ձեռքը չոր-
 ցած մարդուն, և ուրիշ ցաւադարներուն բժըշ-
 կութիւնը 436
- յԲ. Տառուերկու առաքելոց ընտրութիւնը, բորո-
 տին և հարկուսպետին ծառային բժշկու-
 թիւնը 440
- յԳ. Նային քաղքին մեռելին ողջըննալը, մեղաւոր կըն-
 կանը դարձը, սերմանացանին առակը . . . 442
- յԴ. Յովհաննու Մկրտչի գլխատումը, Յիսուսի հինգ
 հացով, և եօթը հացով հազարաւոր մարդ
 կտացընելը, և ծովուն վրայ երկնալը . . . 446
- յԵ. Քանանացի կնկան աղջրկանը բժշկութիւնը . . 449
- յԶ. Յիսուսի սլշակերպութիւնը, մեկ լուսնտօսի մը
 բժշկութիւնը, մօներ աղսցը խննարհութեան
 օրինակ ըլլալը 451
- յԷ. Պարաղկանին ու սամարացիին առակները, և առ-
 սը բորտաներուն բժշկութիւնը 454
- յԸ. Եօթանասունուերկու աշակերտները, Մարթա
 ու Մարիամ, ՚ի ծնէ կուրին բժշկութիւնը,
 Յիսուսի իր աստուածութիւնը յայտնի քա-
 ղողէլը 458
- յԹ. Անառակ որդւոյն առակը 461
- Ի. Տնտեսին, ու անողորմ մեծատան առակները . . 464
- ԻԱ. Դատաւորին, ու փարիսեցիին և մարսաւորին ա-
 ռակները 566
- ԻԲ. Հարուստ մարդուն դժուար և արքայութիւն եր-
 թալը, և մշակներուն առակը 468
- ԻԳ. Ղաղարոսի բարեկամին Քրիստոսի յարութիւնը . 471
- ԻԴ. Զաքեոսի դարձը, ազնուականին առակը, և Մա-
 լիամու Յիսուսը եղով օժէլը 473
- ԻԵ. Յիսուս փառաւորապէս Երուսաղէմ կ'երթայ,
 ու հոն նորէն հրաշքներ կ'ընէ 477
- ԻԶ. Յիսուս նորէն առակներով կը խրատէ՝ ու կը պա-
 պանեկցանէ հրեայքը 480

ԻԷ .	Յիսուսի ետքի վարդապետութիւնները և Տէկ ա- ռապէ	484
ԻԸ .	Յիսուսի մատնութիւնը, և վերջին ընթերցը	487
ԻԹ .	Յիսուսի սարսուղը աղօթելը, ըմբռնումն, զա- տապարտուիլը, և Պետրոսի ուրանալը	491
Լ .	Յիսուսը Պիղատոսի դատաստանը կը հանեն, և չարչարելէն ետև կը դատապարտեն որ խա- չուի	496
ԼԱ .	Յիսուսի խաչելութիւնը՝ ու թաղումը	501
ԼԲ .	Յիսուսի փառաւոր յարութիւնը, և աշակերտաց երևումը	506

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա .	Հաւուոյն Սրբոյ դաշուսը՝ ու հաւատացելոց շա- նալը	513
Բ .	Ի ծնէ կազին բժշկութիւնը	515
Գ .	Անանիայի ու Սափիրայի պատիժը, և առաքելոց քարոզութիւնը	518
Դ .	Ստեփանոսի նախաձեռնութիւնը	522
Ե .	Սիմոն մոզքը առաքելներէն կը նշովուի, ներ- քինին հաւատացեալ կըլլայ	524
Զ .	Սաուուղի կամ Պողոս առաքելոյն դարձումը	526
Է .	Կուստանդնուս հարիւրասդեան դարձումը	528
Ը .	Պետրոս առաքելոյն բանակն ազատուիլը	531
Թ .	Պողոս առաքելոյն քարոզութիւնները	533
Ճ .	Պողոս առաքելոյն քարոզութեան պատճառով բաշած ներգութիւնները	536
ՃԱ .	Պողոս Երուսաղեմ կը բռնուի, ու անկեց Հռոմ կերթայ՝ որ իր դատաստանը հոն տեսնուի	540
ՃԲ .	Յաւելուած պատմութեան առաքելոց Քրիս- տոսի	544





10000
10000



